Несмотря на то, что свадьба рассматривается как важнейшее событие в жизни каждого человека, которое полагается достойно отметить, и поэтому к ней готовятся заранее, пышность той или иной свадьбы во многом зависела от благосостояния людей, особенно переживших тяжелые военные и послевоенные годы. Мне встречались семьи, которые не в состоянии были отметить весь свадебный цикл, в частности обручение, дать дочери хорошее приданое, преподнести невесте дорогие украшения.

В отношении похоронно-поминальной обрядности следует отметить, что если с конца 1970-х гг. в здешних селах, как и в селах Армении, наметилась тенденция к сокращению числа поминальных дней, в частности к объединению некоторых из них, то затем, вследствие большого числа жертв пережитой войны весь поминальный цикл был восстановлен. Поминки вновь стали в обязательном порядке проводить в день похорон, на следующий день (инкнаһог), на 7-й, 40-й дни после смерти и в годовщину, когда на

кладбище устанавливают памятник. При этом похороны, включающие целый ряд традиционных элементов, в послевоенный период стали еще более многолюдными и требуют еще больших материальных затрат (в частности, поминальный стол почти перестал отличаться от свадебного), что вызывало обоснованное недовольство со стороны стариков.

К числу официальных праздников, отмечаемых сейчас в Нагорном Карабахе, относятся, помимо новогоднего, праздник Материнства и Красоты - 7 апреля, День Победы и День освобождения Шуши - 9 мая, День провозглашения Нагорно-Карабахской республики - 2 сентября, День независимости Республики Армения - 21 сентября. Постепенно восстанавливаются и такие забытые здесь в советский период (к 1930 г. в Карабахе были закрыты все церкви) христианские праздники, как Рождество и Пасха, а также обряды венчания и крещения. Прежде всего, это происходит в селах, находящихся поблизости от действующих церквей, особенно в расположенных недалеко от храма XIII в. Гандзасар. Уже к 2001 г. в Нагорном Карабахе были отреставрированы и открыты 17 церквей, в том числе одна новая, ведутся работы по восстановлению и строительству других.

Одновременно среди карабахских армян, как и в Армении, по-прежнему бытует дохристианский обряд жертвоприношения - *матах*. Его совершают как около старых церквей и часовен, так и около имеющегося в каждом селе священного места - *сурба*. Это могут быть священные, по народным представлениям, камень, дерево, родник, гора. Жертвенное мясо (сейчас, в основном, петуха) полагается затем сварить дома и разделить на семь домов. Голову и лапки петуха, а также красные ленточки привязывают к ветвям находящегося у сурба дерева.

Во время поездки я посещала школы, клубы, библиотеки, детские сады, больницы. Особенно благоприятное впечатление производили школы. Несмотря на то, что школьные здания и имеющийся в них инвентарь нередко еще оставались старыми, они по возможности отремонтированы (в том числе и спортивные залы), в помещениях очень чисто, школьники аккуратно и даже нарядно одеты; практически все учителя с высшим образованием; более половины выпускников продолжают учебу в вузах и техникумах Карабаха и Армении. Конечно, в школах еще многого не хватает, в частности

не везде есть современное лабораторное и компьютерное оборудование, не во всех школах имеются учителя иностранных языков, не везде работают финансируемые прежде колхозами школьные столовые.

В то же время если в 2001 г. ни в одном из обследованных сел не было детского сада, то в 2007 г. детские сады работали в 8 из 10 сел.

В с. Тог на средства благотворителей в течение нескольких последних лет действует музыкальная школа. В ней 30 учеников, пять педагогов, все с высшим образованием. Занятия проводятся по классам фортепиано, скрипки и народного музыкального инструмента канон; есть также хор.

В заключение отмечу, что собранные мною в 2000-х гг. полевые материалы показывают, что в целом на сохранение карабахскими армянами этнокультурных традиций война фактически не столь уж сильно повлияла, за исключением того, что народ стал жить беднее, поэтому многие обряды проводятся, по словам местных жителей, «по сокращенной программе».

Разумеется, в Нагорном Карабахе еще многое предстоит сделать и по лечению губительных ран, нанесенных войной, в том числе и тяжелейших травм в душах людей, и по развитию социально-экономической и культурной жизни, а для этого важно мирное политическое урегулирование застарелого карабахского конфликта. Если в регионе будет стабильный мир, то вполне обоснованна надежда на его экономическое, культурное и демографическое процветание, поскольку для этого уже имеются определенные предпосылки: наметившееся оживление экономики, приостановление миграции молодежи, сокращение доли однопоколенных семей, состоящих из лиц пожилого возраста, тенденция к повышению уровня рождаемости. Немаловажную роль играет и такой фактор, как высокий моральный дух карабахцев, присущий им на протяжении всей их многовековой истории, их безграничная любовь к своей земле и стремление к свободе.

*"Вестник РГНФ", Москва, 2009, N1, с. 163-171*

## ԱՐՑԱԽԻ ՀԱՏՈՒԿ ԽՈՐՀՐԴԻՄԱՍՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՈՒՂԵԳՈՐԳԵՐԸ

1. Արցախի ուղեգորգերը որպես բնակչության կենցաղի անքակտելի մաս, ունեցել են վաղնջագույն արմատներ, ենթարկվել գորգային հիմնական հորինվածքների զարգացմանն ուղեկցող բնաշրջման: Դրանց երկարուկ, նեղ չափերը ստեղծել է զարդանկարի կազմակերպման ուրույն տրամաբանություն, որի շնորհիվ գորգերի հորինվածքների որոշ համազարդեր ավելի են անհատականացվել ու ընդգծվել՝ շարադաս կրկնման շնորհիվ հաստատելով իրենց խորհրդիմաստները:

2. Ուղեգորգերի բազմաթիվ խմբերի սկզբունքորեն անհաշիվ տարբերակների ու փոփոխականների միջից առանձնանում են համազարդ կազմությամբ, ինչպես նաև ներքին զարդագոտիներով միավորված մանրանախշերից բարդված հորինվածքները: Մեծադիր համազարդերում է, որ առկա են հնագույն հավատալիքների հետ կապված խորհրդիմաստները: Ուղեգորգերի այդ խմբում խորհրդիմաստը որոշակիորեն ունի նաև սրբացման կամ նվիրագործման երանգներ: Հատուկ խորհրդիմաստներով օժտված մեղալիոնների շարքին պետք է դասել, օրինակ, այն հորինվածքները, որտեղ համազարդը բաղկացած է հակամետ զարդանախշերից /արծիվ-վիշապ, կրակ-ամպ և այլն/, ինչպես նաև առասպելական կենդանակերպ տարրերից:

3. Մի կողմից՝ ուղեգորգերի զարդանախշերի խորհրդիմաստները, մյուս կողմից՝ դրանց բուն կիրառումը կենցաղում /հատուկ առիթներով՝ հարսանիք, հոգեհաց, աչքալուսանք և այլն/ հուշում են, որ առանձին վարդյակներ և մեղալիոններ պետք է որ ունեցած լինեն տոհմանշանի դեր: Եթե այդպես է, առավել պարզ է դառնում դրա ռիթմիկ կրկնությունը՝ ամեն մասնակցի «հասնում է» մեկ մեղալիոն, իսկ շատ հնում դրա վրա նստելու իրավունքը, բնականաբար, կարող էին ունենալ միայն այդ տոհմանշանով կապված ազգակիցները, բարեկամները, դաշնակիցները համայնքի անդամները: Խորհրդիմաստների մոզական ուժը կարող էր ուղեգորգին հաղորդել բազմակողմանի բնույթ, և վրան նստած անգամ չար մտադրություններ ունեցող հյուրը կարող էր վնասազերծվել անկվածի չարխափան

հատկությունների շնորհիվ: Օժիտի հետ տրվող հարսանեկան ուղեգորգերի մեծ խմբում առկա են նաև պտղաբերքի գաղափարը խորհրդանշող զարդանախշեր:

4. Տակավին XIX դ. վերջերին- XX դ. սկզբներին գործածված գորգերում գիտակցված էր զարդանկարի սեմանտիկ, սրբացված բնույթը, որը, ազգագրական փաստերից բացի, վկայվում է նաև հետևյալ հանգամանքով՝ Արցախում և Սյունիքում հատկապես սիրված մի քանի բարդ մեղալիոն, ըստ որում Արծվագորգինը և կեռիսաչով գորգերինը, երբեք չեն հանդիպում ուղեգորգերում: Առավել սրբացված, համազգային բնույթի հերալդիկ մեղալիոնները, ըստ երևույթին, ավանդաբար փոխանցված արգելքի թելադրանքով չեն ընդգրկված ուղեգորգերի հորինվածքում: Դա է հաստատում Արծվագորգի ուղեգորգային տարբերակը, որտեղ մեղալիոնը խիստ փոփոխված է, ընդ որում անհետացել են հորինվածքի հիմքում ընկած հակիմաստ, կենդանակերպ զարդանախշերը, մնացել են միայն բուսական տարրերը և ճաճանչները: Հետևապես կարելի է ենթադրել, որ նվիրագործումը կապված է եղել հենց դուրս մնացած զարդանախշերի հետ:

5. Վերջապես, կարևոր են ոճական և իմաստային այն բազմաթիվ օղակները, որոնցով ուղեգորգերն անմիջականորեն կապվում են միջնադարյան վիշապագորգերի և այլ գորգերի հետ: Վերջիններիս բնորոշ շատ զարդագոտիներ պահպանվել են հիմնականում ուղեգորգերի հորինվածքում:

Այս բոլոր հանգամանքներն ուղեգորգերը դարձնում են գորգարվեստի և առհասարակ ժողովրդական արվեստի ուսումնասիրության համար արտակարգ շահեկան, ուրույն մի ճյուղ և կարևոր դարձնում դրանց բոլոր տարբերակների վավերագրումն ու հավաքումը:

*«1978-1979 թթ. ազգագրական և բանահյուսական  
դաշտային հետազոտությունների արդյունքները:  
Զեկուցումների թեզիսներ. մայիսի 5-7, 1980», Երևան, էջ 13-14*

## ԽԱՂԼԱՑԱՎԻ (ԴԻՎԱՀԱՐՈՒԹՅԱՆ) «ԲՈՒԺՈՒՄԸ» ՊԱՐՈՎ

Գորիսի, Միսիանի, Ղափանի, Մեղրիի և Լեռնային Ղարաբաղի հայերին հայտնի է *խաղլացավ* կոչվող մի հիվանդություն, որի բուժման միակ միջոցը եղել է պարը: Հիվանդությունը համարվել է «դիվահարություն»<sup>1</sup> և հայ իրականության մեջ ընդունվել ու գիտակցվել է որպես ոգեպաշտություն՝ անխիստական հասկացողությունների մնացորդներ, ավելի ուշ՝ վերապրուկներ:

Հայերի<sup>2</sup> և շատ ժողովուրդների մեջ հիվանդություններ հարուցող ոգիների գոյության տեսությունը<sup>3</sup> հավատալիքներում կարևոր և հաստատուն տեղ է ունեցել: Անսահմանափակ թվով ոգիների ընդունումը, դրանցով բռնվածությունը՝ դիվահարությունը, ժողովրդական փիլիսոփայության մեջ պարզություն բերող մի տեսություն է, որը բացատրել է, մի կողմից, հիվանդությունների կատարած ավերածությունները, մյուս կողմից՝ բնության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ անհասկանալի երևույթներ: Մարդու մարմինը որպես ոգիների բնակատեղ հայտնագործմամբ<sup>4</sup> ոգեպաշտությունը հասել է իր գագաթնակետին, նոր ճանապարհներ են բացվել նաև հիվանդություններ հարուցող ոգիների առջև: Մարդը սկսել է այնպես հավատալ իր իսկ ստեղծած ոգուն, որ նրան սովել է անուն, անհատականություն, արտաքին կերպարանք, և ենթարկվել նրա կամքին<sup>5</sup>: Նրանց անունից գուշակություններ է արել, ցանկություններ հայտնել և այդ ամենը վերածվել է թատերականացված գործողությունների: Մինչև հիմա էլ Ցեյլունում *Յակու Նատանավա* կոչվող ծիսական արարողության ժամանակ երթի գլխավոր մասնակիցներից մեկը տասնութ հիվանդության դիմանկա-

<sup>1</sup> Մ. Աբեղյան, *Երկեր, Ա*, Երևան, 1966, էջ 29: Մ. Աբեղյանը հիվանդությունն անվանում է *հանդեպը, քաջքակալ, քաջքակոխ, որոնք, ըստ էության, համապատասխանում են դիվահարության բովանդակությանը: Հայտնի են նաև այսահարություն, չարոց, ընկնավորություն տերմինները (Անատունի, Բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 540)*

<sup>2</sup> Մ. Աբեղյան, *ԵԶՎ. աշխ.*, էջ 29

<sup>3</sup> Э. Тейлор, *Первобытная культура*, М., 1939, с. 352

<sup>4</sup> Л. Штернберг, *Первобытная религия*, Л., 1936, с. 233-234

<sup>5</sup> Э. Тейлор, *ԵԶՎ. աշխ.*, էջ 353



րը կրող դերակատարն է, որը պարելու և ներկայացնելու հատուկ պարտականություններ ունի<sup>1</sup>:

Հնագույն ժամանակներից բազմաթիվ տեղեկություններ կան հիվանդություններ հարուցող ոգիների, նրանցով բռնվածության, այսինքն՝ դիվահարության մասին: Առաջին տեղեկությունները պատկանում են ասորաբաբելական նշանագրերին: Հումերոսը վկայում է, որ Հին Հունաստանում գոյություն են ունեցել դիվահարությունից առաջացած հիվանդություններ, որոնք ընդհանուր անունով կոչվել են *էպիլեպսիա*: Մոկրատեսը դների ժխտումը հենց դիտել է իբրև դիվահարություն, իսկ հռոմեացիք խելագարների համարել են «ոգիներով լցվածներ»<sup>2</sup>:

Քրիստոնեության ընդունման վաղ շրջանում դիվահարության գաղափարն ավելի է խորացել<sup>3</sup>: Հոգևոր հնագույն գրքերում դիվահարների մասին բազմաթիվ տեղեկություններ կան, որոնց համաձայն նրանք պետք է արժանանային հատուկ վերաբերմունքի և եկեղեցական հսկողության: Հիվանդությունը համարվել է սուրբ կամ հրաշալի<sup>4</sup>: Քրիստոնեության տարածման հետ հոգեկան հիվանդությունները որպես դիվահարություն հիմնավորապես ընդունվել ու տարածվել են Եվրոպայում<sup>5</sup>: Հոգևոր գրքերում և Աստվածաշնչում հաճախ կարելի է հանդիպել չարքերով և քաջքերով բռնվածների բուժման նկարագրության և նկարների: Արևելքում այն կարծիքն էր տիրում, որ այդպիսի հիվանդներին պետք է սիրաշահել ու հարգել<sup>6</sup>, որովհետև նրանց մեջ դներ են նստած<sup>7</sup>: Հնդկաստանում<sup>8</sup>, Ցեյլոնում, Մալայան կղզիներում<sup>9</sup>, Նոր Զելանդիայում<sup>10</sup>, Աֆրիկայում, Ավստրալիայում և Ամերիկայում<sup>11</sup> վաղուց ընդունվել է դիվահարության տեսությունը: Դիվահարությունը բուժելու ամենաուժեղ միջոցներից մեկը ժողովուրդը համարել է պարը: Գաղափարն առաջացել է այն մտածողությունից, թե

<sup>1</sup> А. Авдеев, *Происхождение театра*, М.—Л., 1959, с. 146. *Հայերը ևս հիվանդություններ հարուցող ոգիներին պատկերացրել են որպես երաժշտության, երգ ու պարի մեծ սիրահարներ (Մ. Աբեդյան, նշվ. աշխ., էջ 155)*

<sup>2</sup> Э. Тейлор, *նշվ. աշխ.*, էջ 359

<sup>3</sup> *Նույն տեղում*, էջ 359-360

<sup>4</sup> Л. Հովհաննիսյան, *Կրոնը և բժշկությունը*, Երևան, 1954, էջ 22

<sup>5</sup> В. Баншиков, Т. Незорова, *Психиатрия*, М., 1969, с. 9

<sup>6</sup> *Նույն տեղում*

<sup>7</sup> Э. Тейлор, *նշվ. աշխ.*, էջ 355-356

<sup>8</sup> *Նույն տեղում*

<sup>9</sup> *Նույն տեղում*, էջ 354

<sup>10</sup> С. Токарев, *Религия в истории народов мира*, М., 1963, с. 32

<sup>11</sup> Э. Тейлор, *նշվ. աշխ.*, էջ 355-356

պարել ոգու կերպարանքով՝ նշանակում է նրան ենթարկել իր ազդեցությանը<sup>1</sup>:

Եվրոպայի պատմությանը հայտնի են դիվահարությունը պարով բուժելու փաստեր. առաջինը վերաբերում է 1237թ.: 1374-1410 թվականների Եվրոպայում մոլեզնոդ ժանտախտի ժամանակները հայտնի են որպես խելագար պարերի համաճարակի շրջան<sup>2</sup>: Ժանտախտից փրկված մարդկանց ներվային համակարգի խախտման պատճառով հիստերիայի և էպիլեպսիկ հիվանդությունների մեծ ալիք էր բռնկվել, որի վերացմանը ինչ որ չափով կարող էին օգնել հուզական ուժեղ ցնցումները: Այդպիսի ցնցումներ առաջացնում էին խելահեղ պարերը: Այդ էր պատճառը, որ միջնադարում հիստերիկները, էպիլեպսիկները, դիվահարվածները մեծ ամբոխով, փրփուրը բերաններին, աչքերն արնակալած, երաժիշտների ուղեկցությամբ, խելագար պարով անցնում էին քաղաքից քաղաք, թավալվում գետնին, պահանջում իրենց ծեծել շղթաներով, զարկվում էին պատերին մինչև ուժասպառ լինելը<sup>3</sup>: Նմանօրինակ մի համատարած դեպք գրանցվել է նաև Շվեյցարիայում 1861թ.: XIV դ. սկսած Եվրոպայում տարածված այս հիվանդությունը ստացել է «պարացվածություն» կամ «պարային խելագարություն» անունը: Իտալիայում այն կոչվել է «մորմացավ»<sup>4</sup>: Մինչև օրս էլ շատ երկրներում հայտնի է պարով բուժումը (էկզորցիզմը)<sup>5</sup>:

Պարով, երաժշտությամբ և նման միջոցներով դիվահարության դարմանումը գտնվել է քրմերի, ավելի ուշ հոգևոր դասի հատուկ ներկայացուցիչների իշխանության տակ: Նրանք եղել են ներվային ուժեղ համակարգի և հոգեկան կառուցվածքի տեր մարդիկ, որոնք, թմրեցնող դեղերի օգնությամբ գրգռվելով, «բանակցությունների և փոխհարաբերությունների» մեջ են մտել հիվանդության դևերի հետ և խնդրելու, համոզելու, չար հմայության ու բանադրանքի օգնությամբ<sup>6</sup> «դուրս են քաշել» նրանց մարդկանց միջից<sup>7</sup>: Ազգագրագետներից շատերի կարծիքով այդ անհատների հիմնա-

<sup>1</sup> А. Авдеев., *նշվ. աշխ.*, էջ 144

<sup>2</sup> С. Худеков, *История танцев*, т. II, СПб., 1914, с. 58

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 68

<sup>4</sup> Նույն տեղում

<sup>5</sup> А. Вельская, *Изгоняют злых духов* («Литературная газета», 18.VI, 1975)

<sup>6</sup> Այս միջոցը հայտնի է նաև հայերին (Ս. Հարությունյան; *Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ*, Երևան, 1975, էջ 121)

<sup>7</sup> В. Богораз-Тай, *Чукчи*, т. II, Л., с. 83, 121

կան պարտականությունը հենց դներին ու չարքերին մարդկանց միջից հանելն էր<sup>1</sup>, որը կատարվում էր բեմական արվեստի մեծ տաղանդով<sup>2</sup>:

Դեռևս V դ. դիվահարություն հիվանդության մասին վկայել է Եզնիկ Կողբացին: Միջնադարյան բժշկարաններում<sup>3</sup>, եկեղեցական գրքերում ու համայնիներում<sup>4</sup> կան նկարներ ու վկայություններ դների, տարբեր անուններ կրող չար ու բարի ոգիների (շեղարք, ճիվաղք, շվոդք, ալք, թպղա, քաջք, չարք և այլն), նրանց պատճառած վնասների ու կոնկրետ հիվանդությունների մասին: Քիչ չեն նրանցից զանազան միջոցներով ազատվելու, պաշտպանվելու և բուժվելու առաջարկները: XIII դ. Կիրակոս Գանձակեցին նկարագրում է դիվահարվածի պարով բուժումը ուն Դավթի կողմից՝ Ամբերդի մոտերքում<sup>5</sup>:

Հայ ազգագրության մեջ ծիսական պարերը պահպանակներ են դարձել հարսանեկան և այլ արարողությունների ժամանակ<sup>6</sup>, իսկ պարով ու երաժշտությամբ դիվահարությունը դարմանելու գաղափարը<sup>7</sup> հայ ժողովրդական մտածողությամբ հնուց համարվել է բնական ու կենցաղային երևույթ: Ազգագրության<sup>8</sup> և գեղարվեստական<sup>9</sup> գրականության մեջ դիվահարությունը բնութագրվում է քրճկուտված, ցավաքյար, քրճքոտված, խաղլացավոտ, խրզլացավոտ տերմիններով: Ըստ Ստ. Մալխասյանի՝ խաղլացավ նշանակում է պարելու, խաղալու ցավ՝ մի հիվանդություն, որով բռնվածը ուզում է անընդհատ պարել<sup>10</sup>:

<sup>1</sup>С.Рагнер-Штернберг, *Музейные материалы по тлингитскому шаманству* («Сборник Музея антропологии и этнографии», Л., 1927, с. 85)

<sup>2</sup>В. Харузна, *Примитивные формы драматического искусства* («Этнография», 1928, №1, с. 36-41, 486)

<sup>3</sup> Ա. Կծոյան, *Բժշկագիտությունը Հայաստանում XI-XIV դարերում*, Երևան, 1968, էջ 396: Մատենադարանի՝ 8382 ձեռագրի 69ր էջում նկարագրվում է ընկնավորի, ուխտավորի հիվանդության ընթացքը

<sup>4</sup> Մատենադարանում պահվող՝ 124, 36, 42, 58, 67, 79, 86, 116, 127, 262 և այլ համայնիներում

<sup>5</sup> Կ. Գանձակեցի, *Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի*, Երևան, 1961, էջ 322, 324

<sup>6</sup>С. Лисициан, *Старинные пляски и театральны е представления армянского Народа*, Т. I, Ереван, 1958, с. 130, Ժ. Կ. Խաչատրյան, *Ջավախքի հայ ժողովրդական պարերը* («Նյութեր հայ ազգագրության և բանահյուսության», Հ. 7, Երևան, 1975, էջ 47, 73), «Традиционные свадебные пляски армян» («Советская этнография» . 1975, № 2, с. 87), Э. Х. Петросян, Ж . К. Хачатрян, *Собрание произведений армянского танцевального фольклора* («Советская этнография», 1965, № 1, с. 155)

<sup>7</sup> Գ. Գասպարյան, *Ժողովրդական բժշկությունը հայ բանահյուսության և դիցաբանության մեջ* (ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր, 1978, № 1, էջ 86»)

<sup>8</sup>Տ. Նավասարդյան, *Հայ ժողովրդական հեքիաթներ*, գիրք 7, Թիֆլիս, 1891, էջ 27

<sup>9</sup> Ա. Բակունց, *Երկեր*, հ. 1, Երևան, 1976, էջ 107-112

<sup>10</sup> Ստ. Մալխասյան, *Հայերեն բացատրական բառարան*, Երևան, 1944, հ. II, էջ 232, խաղլացավ

Մեր իրականության մեջ, հատկապես Ջանգեգուրում<sup>1</sup> ու Ղարաբաղում, խաղաղացավի արմատներն այնքան խորն են եղել, որ պահպանվել են մինչև XX դ. առաջին կեսերը<sup>2</sup>: Ըստ եղած տեղեկությունների՝ հիվանդությունը և նրա՝ պարով բուժելու մտածողությունը նորոգվել ու տարածվել է հատկապես քառասնական թվականներին, Հայրենական պատերազմից առաջ, պատերազմի տարիներին և ետպատերազմյան ժամանակաշրջանում: Հիմա էլ այն շրջաններում պարել շատ սիրողներին կատակով անվանում են «խաղաղացավոտ»<sup>3</sup> կամ «քըշկուտված»<sup>4</sup>: Մարդկանց դիտողություն անելիս ասում են. «Ի՞նչ է, խաղաղացավ ե՞ս ընկել»<sup>5</sup>: Խաղաղացավը համարվել է անպատվաբեր ու վիրավորական, որի պատճառով էլ հիվանդությունը գաղտնի է պահվել բարեկամներից ու ծանոթներից:

Խաղաղացավի հարուցիչը համարվել է մի անանուն որդ, որը մարդու «մարմինն ընկնելով» անվերջ շարժվել է, մեկ մտել ծնկան մեջ, մեկ էլ բարձրացել դեպի վեր՝ «սրտի տակ»<sup>6</sup>: Հիվանդը գանգատվել է մարմնի ցավերից, ոսկորների կոտրատվելուց<sup>7</sup>: Խաղաղացավոտը ծափ տալու, երգելու (բայաթի կանչելու), պարելու, լաց լինելու և ողբալու ցանկություն է ունեցել<sup>8</sup>: Հիվանդությունն առաջացել է վախից, գիշերով ճանապարհ կամ մթնով ջրի գնալուց<sup>9</sup>, մրսելուց, վշտից, հոգեկան ծանր ապրումներից ու ցնցումներից<sup>10</sup>: Ոմանք խաղաղացավը հեշտությամբ տարբերել են այլ հիվանդություններից, իսկ եթե դժվարացել են, ապա ստուգել են ավելի բացահայտ միջոցներով: Նախ հետևել են՝ եթե երաժշտություն լսելիս հիվանդն ինքնակամ պարել է, ապա նրան համարել են խաղաղացավոտ: Բայց

<sup>1</sup> Ստ. Լիսիցյան, *Ջանգեգուրի հայերը*, Երևան, 1969, էջ 289

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 288-289

<sup>3</sup> *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվ, պարարվեստի ֆոնդ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ ՊՖ): Տե՛ս Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղի բնակիչ՝ Թամո Գալուստի Խաչատրյանի վկայությունը*

<sup>4</sup> ՀԱԻԲԱ ՊՖ, *Մարդակերտի շրջան, Հաթերք գյուղից Մաշի Պետրոսյանի վկայությունը*

<sup>5</sup> Նույն տեղում, տե՛ս Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի բնակիչ՝ Գուրգեն Օրդյանի վկայությունը

<sup>6</sup> Ա. Բակունց, *Երկեր*, հ. 1, էջ 85, Գ. Գասպարյան, *Նշվ. հոդվ.*, էջ 86

<sup>7</sup> ՀԱԻԲԱ ՊՖ, *Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի բնակիչ Մանուչարյան Արևհատի և Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի բնակիչ՝ Գ. Օրդյանի վկայությունները*

<sup>8</sup> Ստ. Լիսիցյան, *Նշվ. աշխ.*, էջ 289

<sup>9</sup> Ա. Օձաբաջյան, *Народны е верования армян («Кавказский этнографический сборник»), Т. IV, 1976, с. 117. Ժողովրդական հավատալիքների համաձայն ոգիներն ապրում են ջրերի հատակում, փերին, տան անկյուններում, դռների տետում և գոմերում*

<sup>10</sup> ՀԱԻԲԱ ՊՖ, *Մեղրիի շրջան, Լեկվազ գյուղի Հովսեփյան Պետրոսի վկայությամբ մարդիկ զգուշանում են, որ «կարողը քար չգցեն», թե չէ խաղաղացավով կհիվանդանան*

պատահել է, որ հիվանդը դարձել է մելանխոլիկ, ինքն իր հետ խոսել է, մարդկանցից խուսափել, էպիլեպսիայի նույնպիսի նույնացել: Այդպիսի դեպքերում որսացել են մի կաշաղակ և տաք վիճակում կապել հիվանդի թևին, եթե թևը սևացել է, ապա հիվանդությունը հաստատվել է: Խաղլացավը հիմնականում համարվել է կանանց հիվանդություն, բայց եղել են նաև տղամարդկանց ու երեխաների հիվանդանալու դեպքեր: Դիվահարվածին բուժելու՝ պարեցնելու ընթացքում, տան դռան առաջ, շեմքի լայնությամբ մետաղյա օղակավոր հաստ շղթա են գցել, որպեսզի պատահաբար ներս մտնողը «չբռնվի» հեռացող չարքերով կամ դրսից ներս եկողի հիվանդությունները չփոխանցվեն մյուսներին<sup>2</sup>: Շղթան հիվանդության և չար ոգիներին բռնելու ժողովրդական մտածելակերպի արտահայտություն է, որը լայնորեն գործածվել է կենցաղում, ապա և ցանցի, շրջանագծերի, օղակների ու վանդակների ձևով տեղ գտել համայնիներում:

Դիվահարության բուժումը կատարել են աշնանը, ասելով, թե «ցուրտն ընկնելիս որդն սկսում է շարժվել»: Տարեց կանայք, հիվանդի հարազատները հավաքվել են ու սկսել պատրաստությունները, մորթել են կով, եզ կամ մի քանի ոչխար, հաց թխել: Ապա պատգամավոր են ուղարկել երաժիշտների, հատկապես գուռնաչիների<sup>3</sup> մոտ՝ խաղլացավի բուժման համար նվագելու առաջարկով: Բոլորին չէ, որ հրավիրել են, և բոլորը չէ, որ համաձայնվել են գալ: Եղել են հատուկ համբավավոր գուռնաչիներ, որոնց նվագը միայն կարող էր բուժիչ լինել: Այդպիսի գուռնաչիները հազվադեպ են հրաժարվել, որովհետև դա համարվել է պատվավոր ու բարի գործ: Սովորաբար հրավիրել են երաժիշտների առնվազն երկու խումբ, որպեսզի հոգնելիս փոխարինեն իրար: Խաղլացավի բուժման համար նվագելը վճարովի չի եղել, բայց բարձր է գնահատվել (թանկարժեք նվերներ են տվել): Հրավիրել են նաև լալկան՝ ողբասաց կանանց, երկու կամ երեք լավ

<sup>1</sup> Նույն տեղում, Գորիսի շրջանի Վերիշեն գյուղից Գուրգեն Օրոյանի և Մեղրիի շրջանի Ագարակ գյուղից Աղավելոց Համբարձումի պատմածները

<sup>2</sup> ՀԱԻԲԱ ՊՅ, Մեղրիի շրջանի Լեհվազ գյուղից Գոհար Ասլանի Գաբրիելյանի վկայությունը: Մ. Արեգյան, նշվ. աշխ., էջ 37, 154, Ամստոնի, նշվ. աշխ., էջ 540: Մետաղն ուշղթան պահպանակ են համարվել շատ ժողովուրդների մոտ, իսկ դիվահարվածին ճիշտ նույն ձևով բուժելը ընդունված է եղել նաև ուլգուրների, բաշկիրների ու չերքեզների մոտ, *И. И. Лепехин, Продолжение записок путешествия по разным провинциям Российского государства в 1770 г., СПб., 1802, с. 73-76 ; Л. И. Назеева, Башкирские народные танцы (автореферат кандидатской диссертации, М., 1977, էջ 78), «Մուսա լեռան ժողովրդական հեքիաթներ», Բեյրութ, 1973, էջ 682-683*

<sup>3</sup> Ստ. Լիսիցյան, *նշվ. աշխ.*, էջ 289

պարող, ուժեղ տղամարդ, հարևաններին ու մոտ ազգականներին: Կահույքից ազատված տան դռներն ու օդանցքներն ամուր փակել են և զուռնաչին սկսել է դանդաղ ու տխուր պարեղանակներ նվագել: Տան մի անկյունում անկողնու մեջ պառկած հիվանդն անհանգստացել է: Լալկան կանայք սկսել են իրենց ողբը: Պարող տղամարդիկ օգնել են հիվանդին վեր կենալու և պարելու: Ըստ ականատես ասացողների, հիվանդն աստիճանաբար տրամադրվելով պարի՝ դանդաղ տեմպն արագացրել է, ռիթմը փոխել և անընդմեջ պարել: Խաղլացավի բուժման հատուկ պարեր ու պարեղանակներ չեն եղել. պարը կազմվել է սովորական պարաքայլերի էլեմենտներից: Պարելու ժամանակ հիվանդին թույլ չեն տվել ո՛չ թռչկոտել, ո՛չ էլ նստել<sup>1</sup> (չաթմա զարկել): Եղել են պարեղանակներ, որոնց ռիթմը փոխելով, նվագել են խաղլացավի բուժման ժամանակ: Խաղլացավի պարեղանակները տարբերվել են հարվածային գործիքների վրա զարկվող յուրահատուկ ռիթմով:

Խաղլացավի բուժման ժամանակ թե՛ նվագողները, թե՛ պարողները, թե՛ ողբացող կանայք ժամանակ առ ժամանակ հանգստացել են, իսկ հիվանդին թույլ չեն տվել հանգստանալու, որովհետև ժողովրդի կարծիքով, հոգնեցնելով հիվանդին՝ հոգնեցրել են և հիվանդության հարուցիչին, որը բնակվել էր մարդու մեջ՝ որպես կենդանի էակ<sup>2</sup>: Միայն երբեմն (օրը երեք անգամից ոչ ավելի) կարճ ժամանակով պառկեցրել են և թեթև կերակրել: Եթե հիվանդն ուժասպառ է եղել, ապա նրան պառկեցրել են կարպետի մեջ<sup>3</sup> և օրորել երաժշտության ռիթմով: Եթե դա էլ չի օգնել, կրառել են ավելի «ուժեղ» միջոցներ: Նախ ստիպել են ավելի արագ և խելահեղ պարել, հետո՝ ուժասպառ լինելիս, զցել են գետնին, խփել պատերին, երակներից, ջլերից, փափուկ մսերից քաշել, մատները, ոսկորները կոտրատել: Ջուռնաչիները զուռնան դրել են հիվանդի ականջներին, իսկ դիողը գլխին և ամբողջ ուժով զարկել են ու փչել: Միաժամանակ լալկան կանայք բարձրաձայն ողբացել են, գոռացել, երեսները չանգոռոտել<sup>4</sup>: Բոլորը համոզված են եղել, որ ծեծում,

<sup>1</sup> ՀԱԻԲԱ ՊՖ, *Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղից Սեդրակ Սահակյանի (զուռնաչի բախշու հետ զարկող նաղարաչի) նյութերը*

<sup>2</sup> Ստ. Լիսիցյան, *նշվ. աշխ.*, էջ 289

<sup>3</sup> ՀԱԻԲԱ, Ս. *Վարդանյանի նյութեր*

<sup>4</sup> Չար ուժերին հեռացրել են սպառնալիքների, ճիչերի և աղմուկի միջոցով: Բուժման մեթոդ է համաչվել նաև մասաժը, կտրումներն ու արյան առումը (Լ. Ա. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, էջ 13): Ղարաբաղում

չարչարում ու տանջում են ոչ թե հիվանդին, այլ նրա մեջ բուն դրած որդին՝ չար ոգիներին կամ դևերին: Հնում, այս ամենի հետ միասին, օդանցքները փակած բնակարանում աթար են ծխեցրել՝ վրան դառնահոտ, կծու յուղեր լցնելով: Նպատակն այն էր, որ հիվանդը շատ արցունք թափեր, փռշտար ու հազար, որպեսզի հիվանդությունը «թափվեր», դուրս գար: Առողջանալու նախանշան համարվել է այն, որ հիվանդը սկսել է գանգատվել ձեռքերի, ոտքերի, գլխի ցավից ու մրսելուց: Բուժման արարողությունը տևել է երկուսից յոթ օր ու զիշեր. եթե հիվանդը չի առողջացել, ապա նույնը կրկնել են տարին մեկ անգամ:

Ամբողջ գործողության ընթացքում կարևոր է համարվել գունաչառ, հիվանդին պարել օգնող տղամարդկանց ու ողբասաց կանանց դերը, որոնք հավանաբար, հին քրմերի վերափոխված ժառանգներն են, որոնց ֆունկցիաները սահմանափակվել են արարողությունը ղեկավարելու, գործողությանը տոն տալու և օգնելու պարտականությունների մեջ:

Բժշկությանը հայտնի է, որ հոգեկան որոշ խանգարումներ ուժեղ ցնցումների արդյունք են, և երբեմն դրանք կարգավորվում են նոր, ավելի ուժեղ ցնցման միջոցով: Տվյալ դեպքում երկար ու համառորեն պարելը կարող էր նոր ավելի ուժեղ ցնցում առաջացնել և վերականգնել նյարդային համակարգում տեղի ունեցած խանգարումները: Այս մեթոդը նյարդային և հոգեկան հիվանդությունների բուժման շատ հին ձև է և իր մեջ պարունակում է մյուզոթերապիային անհրաժեշտ մի գործոն, այն է՝ հիվանդին պասիվ վիճակից դնել խիստ ակտիվ ու հուզական հոգեվիճակի մեջ, ապա տրամադրության բարձրացման ու ներշնչման օգնությամբ վերականգնել հավասարակշռությունը<sup>1</sup>:

Եղած բազմաթիվ տեղեկություններից կարելի է ենթադրել, որ խաղլացավ հիվանդության մի տեսակ են համարվել նաև ռևմատիկ, ոսկրային հիվանդությունները<sup>2</sup>: Պարից մարդու հողերը տաքացել են, դրան գումարվել է ներքին հավատքը և հիվանդին թվացել է, թե տեղի է ունենում ցավերի մեղմացում:

---

*կամթում են դալաղը՝ թիկունքի երկու շիլերը: Այս մասին վկայում է հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ լաբորանտ Ժաննա Բոգդանի Խուրշուդյանը*

<sup>1</sup> Գ. Գասպարյան, *նշվ. հոդվ.*, էջ 86

<sup>2</sup> Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի բնակիչ Գուրգեն Անդրեյի Օրոյանի վկայությամբ հիվանդությունը նման էր ռևմատիզմի

Հայ իրականության մեջ ներկայումս չարքերով բռնվածությունը դիտվում է որպես սահմանափակ մտածողություն, որն աստիճանաբար նահանջել է և բժշկության զարգացման ու կիրառության շնորհիվ իր տեղը զիջել գիտությանը: Թեև դեռևս բուժումը հիշողության ձևով պատմվում է, ու նույնիսկ երբեմն առաջարկվում է մեթոդի կիրառությունը, սակայն շրջապատի կողմից այն չի ընդունվում:

*«Լրաբեր հասարակական գիտությունների»,  
Երևան, 1980, N10, էջ 89-96*



## ԴԻԶԱԿԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ողջ տարածքում, այդ թվում նաև պատմական Արցախում ջրամատակարարումը բացառիկ դեր է խաղացել տնտեսական կյանքում: Ջուրը եղել է գոյության առաջնագույն հիմքը: Ռոտզման, ինչպես նաև բնակչությանը խմելու ջուր մատակարարելու նպատակներով կատարվում էին ինժեներական աշխատանքներ: Ցայժմ երկրամասի ամբողջ տարածքով ի հայտ են գալիս միջնադարյան և ավելի ուշ շրջանների ջրանցքների և ստորգետնյա կավե ջրմուղների մնացորդներ: Ցանկացած բնակավայրի ստեղծման նախնական պայմանը խմելու ջրի առկայությունն է: Արցախի հայերը արհամարհանքով էին վերաբերվում գետերի և առուների ջրերի օգտագործմանը և նախընտրում էին միայն աղբյուրի ջուրը: Ուստի, աղբյուրների սպառման կամ բնակավայրից դրանց հեռու գտնվելու դեպքում ջուրը ջրմուղով հասցնում էին գյուղեր:

Աղբյուրների նկատմամբ Արցախի հայերի հատուկ վերաբերմունքը՝ պաշտամունքը, ընդգծում են բազմաթիվ ազգագրագետներ ու հետազոտողներ: Աղբյուրի պաշտամունքը կապվում է ոգեպաշտության հետ, որի հիմքում ընկած են ոգի-նմանակների մասին պատկերացումները (դևեր, հերոսներ և այլն): «Սուրբ աղբյուրներն ամենից հաճախ կապված են այլ սրբությունների հետ. այդպիսիների առկայության դեպքում սովորաբար կառուցվում են փոքրիկ քարե ջրավազաններ՝ երբեմն կանգնեցնելով խաչքարեր, որոնց շուրջը կարելի է տեսնել ուխտավորների մոմերի հետքեր: Սուրբ աղբյուրների կողքին գրեթե միշտ կարելի է հանդիպել նաև սուրբ ծառերի»<sup>2</sup>: Հայ նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանը նկատում է. «Մեղք են համարում (Արցախի հայերը – Մ. Ս.) ջրի վրա թքել կամ նախաստինքով վերաբերվել: Նորահարսը, առաջին անգամ աղբյուրների մոտ գալով, զոհ է բերում նրան ցորեն: Կիրակի օրերը մոմեր են վառում սուրբ համարված

<sup>1</sup> И. Петрушевский, *О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха*, Баку, 1930, с. 15-18

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 18

աղբյուրների առաջ: Առողջություն հայցող հիվանդը մոմեր է վառում, արքադաղներ գոհում, երկրպագում և աղոթում աղբյուրին:

Աղբյուրներից մի քանիսը ամենայն տեսակ, իսկ մյուսները մի-մի որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարում»: Եվ ապա՝ «Հիվանդները այստեղ կատարում էին հատուկ սուրբ լվացումներ և սուրբ ծառերի ճյուղերին էին կապում սեփական հագուստից որևէ կտոր»<sup>1</sup>: Աղբյուրներից մի քանիսի անվանումներում իսկ արտացոլվում է դրանց սուրբ էությունը: Այսպես, օրինակ, Վերին Սգնեք գյուղի աղբյուրն անվանվում է «Կանաչ խաչի աղբյուր»: Ի դեպ, շատ եկեղեցիներ ու մատուռներ կառուցվել են ուղղակի աղբյուրների վրա, ինչպես, օրինակ, Խաչմաչ գյուղի մատուռը, Գետաշեն գյուղի եկեղեցին: Շատ աղբյուրների մասին ստեղծվել են լեգենդներ:

Ջրի վերցման հանգույցը, դեռևս միջնադարից եկող սովորույթի համաձայն, ստանում էր ճարտարապետական յուրօրինակ լուծում, և, բնականաբար, Արցախում աղբյուրների նկատմամբ հատուկ վերաբերմունքը այս կամ այն կերպ արտացոլվում էր դրանց ճարտարապետության մեջ: Շատ տեղերում աղբյուրները հաճախ հանդես են գալիս որպես գյուղի հատակագծային լուծման տիրապետող առանցք, ոչ թե եկեղեցին, այլ աղբյուրն է դառնում գյուղի հորինվածքային կենտրոնը, ուր գնում են գյուղական նեղ, ոլորուն փողոցները: Որոշ գյուղերում աղբյուրների և մեծ ջրամբարների ու գյուղացիների հավաքատեղիների տարածական, հորինվածքային և հատակագծային լուծումը հասցված է ներդաշնակ կատարելության, և աղբյուրները իրավամբ դառնում են գյուղի հասարակական կենտրոնը (Տյաքի, Վանքի):

Պատմական Արցախի հարավային Դիզակ գավառի (այժմ՝ Ադրբեջանական ՄՍՀ, Հադրութի շրջան) ուշ միջնադարյան և XIX դ. աղբյուրները (միջնադարյան նմուշներ չեն հայտնաբերվել) ժողովրդական ճարտարապետության նմուշներ են: Նախ նշենք, որ ճարտարապետորեն են ձևավորվել ինչպես գյուղերում գտնվող, այնպես էլ դաշտավայրերի ու լեռնալանջերի լայնարձակ տարածություններով ցրված աղբյուրները: Գյուղական աղբյուրները սովորաբար ունենում են պատկառազորու ծավալներ: Իսկ անտառներում և դաշտերում դրանք բնութագրվում են անասունների ջրարբեցման համար գոյություն ունեցող քարե տաշտերով ու քարե ավիսեաձև

<sup>1</sup> Ե. Լալայան, *Վարանդա*, «Ազգագրական Հանդես», գիրք Թիֆլիս, 1897, էջ 196-197

ծորակներով և հաճախ կրում են նվիրատվական բնույթի արձանագրությամբ սալիկներ: Արձանագրությունները սովորաբար տեղադրված են ծորակից ոչ հեռու՝ ամենաերևացող տեղում, և հետաքրքիր տեղեկություններ են պարունակում, ինչպես, օրինակ, Կեմրակույչի, Թաղոթի, Հաղբուրի և այլ աղբյուրները: Բնորոշներից է Տոդ գյուղի ուշ միջնադարյան աղբյուրը: Այն, գտնվելով գյուղի վերին մասում, օրգանապես ձուլվում է բնակելի կառուցապատման համակարգին: Այս աղբյուրը խոշոր, խորանարդաձև ծավալ ունի, որի կողմերից մեկում անտե-ելուստներ կան: Վերջիններիս միջև ընկած տարածությունը ծածկված է կիսաշրջանաձև թաղով, որը, հենվելով ելուստներին, կազմում է կառույցի գլխավոր ճակատը: Անտե-ելուստների միջև ընկած տարածության խորքում պատի երկարությամբ տեղադրված է քարե տաշտակը՝ անասունների ջրարբեցման համար: Աղբյուրի մնացած ծավալը զբաղեցնում է թաղակապ ամբարը, որը ջուրն ամբարում է և ապա սպառողին է հանձնում: Ջրամբարի պատին արված է ոչ մեծ, ուղղանկյունաձև բացվածք, որը թույլ է տալիս ներս մտնել: Բացվածքի բավականին ցածր տեղադրությունը ցույց է տալիս, որ ջրամբարը հիմնականում կատարել է պարզարանի դեր: Այն հաճախ մաքրել են՝ նշված անցքից ներս մտնելով: Տոդի աղբյուրը կառուցված է մեծ խնամքով, վարպետորեն: Սրբատաշ քարերով են իրականացված գլխավոր ճակատի ներսի պատն ու աղբյուրի անկյունները, իսկ մնացած մասերը շարված են կոպտատաշ քարերով, կրաշաղախով: Տանիքը հարթ է, հողածածկ, ունի փոքրիկ թեքություն մթնոլորտային ջրերի հոսքի համար: Ջրամբարը ներսից սվաղված է, ճակատի աջ կողմում, պատին ագուցված է մետաղական կեռ՝ ձիերին և ջորիներին կապելու համար (սա անհրաժեշտ տարր էր, որովհետև ջուրն աղբյուրից տեղափոխվում էր ունկատակառներով բեռնված կենդանիների օգնությամբ): Ավելի ուշ աղբյուրին է հասցվել նոր ջրմուղ: Տոդի աղբյուրի շինարարության մասին տեղեկություններ չկան: Սակայն, նկատի ունենալով գյուղում պահպանված մելիքական ապարանքի՝ XVIII դ. I կեսով թվագրված շինությունների քարի մշակման եղանակի ընդհանրությունները աղբյուրի քարամշակման հետ, վերջինս ևս կարելի է թվագրել նույն ժամանակաշրջանով: Աղբյուրի այս տիպը ձևավորվել է դեռևս միջնադարում<sup>1</sup>: Նրա տարբերիչ գիծը համաչափ

<sup>1</sup> О. Халпахчян, *Родники Армении*, «Архитектурное наследство», Москва, 1957, N 8, с. 95-96

լուծումն է: Տվյալ դեպքում աղբյուրի ծավալի հետ ջրամբարի համատեղումը, այն տարբերակում է նույնատիպ հուշարձաններից: Այնուհանդերձ, Տոդի աղբյուրի ճակատով մեկ ձգվող տարածության խորությունը հասցված է նվազագույնի: Ընդհանրապես ուշ շրջանի Դիզակի աղբյուրները այս հնարքով տարբերվում են միջնադարյաններից, որոնց ճակատով ձգվող թաղակապ տարածությունը եղել է բավականին ընդարձակ<sup>1</sup>:

Բացառիկ ինքնատիպ լուծում ունի Կեմրակույչ գյուղի աղբյուրը, որը կառուցվել է XIX դ.: Մա «սուրբ» կոչված աղբյուրների ճարտարապետական մարմնավորումն է: Աղբյուրն օրգանապես ձուլված է մոտակայքում հոսող գետակի և ավելի բարձրից անցնող գյուղական փողոցի միջև առաջացած եռանկյունաձև հողակտորին: Այն, կարծես թե, աննկատ ծնունդ է առնում բարձունքից դուրս եկող մեծ ժայռակտորներից, որոնց երկարությամբ ձգվում է բավականին երկար, քարե տաշտակը: Ծորակը ծածկված է նեղ թաղով, որը հենվում է նեցուկների դեր կատարող երկու լայնակի պատերին: Յուրատեսակ ձևով է կառուցված ճակատից աջ գտնվող հենապատը, որը բարձրանում է տաշտակի լայնքով տարածվող հզոր պատնեշի վրա՝ տաշտակի ամբողջականությունը պահպանելու նպատակով: Ջրամբարն այստեղ բացակայում է, աղբյուրը գտնվում է հենց տեղում: XX դ. Սկզբին՝ աղբյուրի վերակառուցման ժամանակ, խողովակներով հեռվից աղբյուր է հասցվել լրացուցիչ քանակության ջուր, որովհետև տեղական աղբյուրն առանձնապես ջրառատ չի եղել: Ունենալով աղբյուրներին բնորոշ և հայտնի տարրեր (քարե տաշտակ, թաղակապ ծածկ)՝ հորինվածքն այստեղ ներառում է առաջին հայացքից, կարծես, անբացատրելի պատը, որն ունի սրբատաշ հատված կիսաշրջան ավարտով և կանոնավոր երիզվածքով: Մրբատաշ հատվածում է տեղադրված փոքրիկ ուղղանկյուն խորը խորշը: Հատակագծում պատը ասես հեռանում է քարե տաշտակի ուղղահայաց գծից: Նույն վայրում՝ մի փոքր ավելի ներքև, պահպանվել է համեմատաբար վաղ շրջանի փոքր քարե տաշտակով մի այլ աղբյուր: Երկու աղբյուրների միջև ընկած տարածքը սալարկված է լայն, անկանոն ձևի սալերով: Բոլոր պատերը, բացի անկյունային մասերից և նշված սրբատաշ մասից, կոպտատաշ քարերից են՝ կրաշաղախով: Տաշտակները կարծր, սպիտակ քարի խոշոր ուղղանկյուն բլոկներով են. Եր-

<sup>1</sup> Նույն տեղում

կուսն էլ մի կողմից ունեն նեղ ջրհոս փորակներ, որոնցից դուրս է թափվում ավելցուկը, և կարգավորվում է ջրի մշտական մակարդակը: Ինչպես տեսնում ենք, աղբյուրն իր շրջակայքով ներկայացնում է մի ամբողջ համալիր, և միջնադարյան աղբյուրներին բնորոշ համաչափ լուծումը այստեղ լրիվ բացակայում է: Տվյալ դեպքում աղբյուրի առջևում ընկած տարածության կազմակերպումը ունեցել է կիրառական նշանակություն, քանի որ վերոհիշյալ պատի սրբատաշ հատվածը եղել է ոչ այլ ինչ, քան, պատկերավոր ասած, «սուրբ խորան», որը, ի դեպ, քրիստոնեական կանոններին հակառակ, կողմնորոշված է ոչ թե աշխարհի կողմերով, այլ մի պատահական դիրքով: «Խորանի» խորշը ծառայել է մոմեր վառելու համար: Հնում նրանում ագուցված է եղել խաչքար (այժմ տեղում չէ): Իհարկե, չենք պնդում, որ աղբյուրների ճարտարապետության մեջ տարածված այս տարրը միայն պաշտամունքային դեր է կատարել: Այն ծառայել է նաև ճրագը տեղադրելու համար, երբ անհրաժեշտ է եղել մութ ժամանակ աղբյուրից օգտվել:

Այսպիսով, ամբողջ համալիրը խստորեն ենթարկված է հնուց ի վեր եկող պաշտամունքային նպատակների և գյուղացիների կենցաղային բազմաթիվ պահանջների կատարմանը: Հակառակ Տոդի աղբյուրի, այստեղ աղբյուրի ծավալը ոչ թե հակադրվում է շրջակա միջավայրին, այլ, ընդհակառակը, առավելագույնս կապվելով բարդ ռելիեֆին, ընդգծում է հենց տարածությունը՝ իրեն համապատասխանաբար հարող պահանջներով:

Ճարտարապետական-հորինվածքային լուծման այսպիսի մոտեցումն ավելի հստակ է արտահայտված Տյաք (Տանկ) գյուղի աղբյուր-համալիրում, որն ուղղակի հանդես է գալիս որպես գյուղի հասարակական կենտրոն: Գտնվելով գյուղի հյուսիս-արևելքում՝ աղբյուրը գյուղական փողոցների ելակետ է դառնում: Համալիրի մեջ մտնում է բնդարձակ ջրամբարը՝ բանջարանոցները ջրելու համար: Ողջ համալիրն առնված է երեք հսկա, բազմադարյան սոսիների հովանու տակ: Աղբյուրը, պահպանելով թաղածածկ, քարե տաշտակի ճարտարապետական անխախտելի սկզբունքը, կառուցվածքային և ծավալային առումներով ձևավորվել է հուշարձանի կիրառական նշանակությանը համապատասխան լավագույն լուծմամբ: Ետին պատով հենվելով զառիթափին՝ աղբյուրի ծավալը ճակատից աջ (փողոցի

<sup>1</sup> Այդ կողմնորոշման մասին հետաքրքիր կարծիք ունեն գյուղի մեծահասակները: Ըստ նրանց՝ «Խորանը» նայում է դեպի «սուրբ կարմիր քարը»՝ գյուղից 1 կմ հեռու գտնվող հսկա ժայռաբեկորը, որը տեղանքի ամենահզոր» սրբավայրն է

կողմից) ունի որմանցք՝ ներս մտնելու համար, քանի որ ճակատի կողմից աղբյուրին մոտենալը ջրի առատության պատճառով դառնում է անհնար: Ճակատի ձախակողմյան պատը, զառիթափին հենվելով, բավականին առաջ է եկել: Պատի մեջ տեղադրված է փոքրիկ, ուղղանկյուն խորշ: Թաղի մեծ թեքության պատճառով, այստեղ աջ հենարանը հարկադրաբար լայնացվել է հզոր որմնահեցի տեսք ընդունելով: Քարե տաշտը անկյունավոր ձևով տեղադրված է պատի երկարությամբ: Աղբյուրը ջուր է ստանում զառիթափում թաքնված նեղ ու երկար ջրամբարի մի քանի կետերից միաժամանակ: Կառույցն իր վերջնական տեսքը ստացել է XX դ. սկզբին, երբ աղբյուրը ծածկվել է միաթեք կղմինդրե տանիքով: Աղբյուրն այս կերպ ավելի է ներդաշնակվում շրջակա բնակելի կառուցապատմանը, քանի որ բոլոր երկհարկ տներն էլ ծածկված են երկթեք, կղմինդրե տանիքներով: Աղբյուրի առջևի տարածքը բարեկարգված է: Խոշոր բլոկներից կանգնեցված ոչ բարձր պատը այդ տարածքից առանձնացնում է սուսիների տակ ընկած, ջրամբարին մոտեցող հատվածը, ուր գյուղացիները հավաքվել են (հավաքվում են մինչև այժմ)՝ կարևոր խնդիրներ քննարկելու և, պարզապես, զրուցելու: Յուրօրինակ է մտածված առանձնացված հատվածի մուտքը, այն իրականացվել է դրսից և ներսից պատին հենված երկուական աստիճաններով: Այս ձևով հասարակական տեղամասը զերծ է մնացել կենդանիների մուտք գործելուց: Ջրամբարը, ռելիեֆին ձուլվելով և պարագծով երեսապատված լինելով խոշոր սալերով, վերջնականապես ավարտուն է դարձնում հորինվածքը: Ջրի հոսքը չափավորվում է հատակին գտնվող բացվածքից, որը խցվում է հաստ ձողով: Ջուրը նախ անցնում է վարակ ունեցող ստորգետնյա ջրանցքով, որի միջոցով էլ կարելի է կարգավորել ջրի հոսքաչափը՝ չհեռանալով ջրամբարի եզրից:

Ողջ համալիրը, որտեղ աղբյուրը օրգանապես միահյուս, ներդաշնակ ամբողջության մի տարրն է միայն, հարակից բնակելի տների հետ միասին հիացնում է ձևերի կատարելությամբ:

Քննարկված աղբյուրների տիպերը առավել խոշորներն ու լավագույններն են: Դրանց մեծ մասը կառուցված է առանց ծածկի և սկզբունքորեն ներկայացնում է երեք կողմերից պատերով ներփակված քարե նավ (օրինակ, Վանքի, Հաղորթի Հեռու ջուր աղբյուրները): Բնորոշ առանձնահատկություններ ունեն գյուղերից դուրս կառուցված աղբյուրները: Ինչպես

արդեն նշվեց, դրանց գերակշռող մասը բաղկացած է քարե տաշտակներից և մեկ կամ երկու կողմերում եղած ցածրիկ հենապատերից: Տաշտակը կարող է հանդես գալ ուղիղ կամ բեկյալ գծի տեսքով: Հատկապես հետաքրքիր են մեկ քարից արված ափսեաձև ծորակները, որոնց հաղորդված է քանդակի պլաստիկություն: Այս աղբյուրներում, ջրամբարի բացակայության պատճառով, ջուրը սպառողին է մատակարարվել հենց բնահողից, ուստի, տիղմագատիչը դարձել է անհրաժեշտ տարր՝ ջուրը կեղտամասերից մաքրելու առումով: Նման քարե ծորակները բնութագրիչ են շատ աղբյուրների համար (ի դեպ, այն մինչև վերջերս պահպանվում էր Կեմրակույզ գյուղի աղբյուրում, որը ջրամբար չունի):

Այսպիսով՝

ա) Դիզակի աղբյուրների XIX դ. ճարտարապետությունը ծագումնաբանորեն բխում է միջնադարյան Հայաստանում մշակված հորինվածքային ձևերից:

բ) Եթե միջնադարյան և ուշ միջնադարյան Հայաստանի աղբյուրների՝ մեզ հասած օրինակները համաչափ հորինվածքներ ունեն, ապա XIX դ. նախապատվությունը արվում է ոչ համաչափ հորինվածքներին:

գ) Դիզակի՝ XIX դ. աղբյուրների լավագույն օրինակներում միջնադարյան հորինվածքային կանոններից շեղումը, որը թելադրված էր նոր աշխարհայացքային դրույթներով և աղբյուրներին ներկայացվող նոր պահանջներով, հանգեցրեց ճարտարապետական նոր որակի: Տարածության կազմակերպումը աղբյուրի որոշակի ծավալի նկատմամբ ձեռք բերեց գերիշխող նշանակություն: Աղբյուրի ծավալը առավելագույնս հարմարեցվեց միջավայրին, և նրա ձևերը ծնվեցին այդ միջավայրի կիրառական վերախմաստավորմամբ: Տվյալ դեպքում դասական չափորոշ տարրերի պահպանումը հնարավորություն ընձեռեց ստեղծելու ոճական որոշակի ամբողջություն և հասնելու գեղարվեստական բարձր արժեքների:

դ) Դիզակի յուրաքանչյուր աղբյուր, կազմելով ծագումնաբանորեն ազգակից կառույցներից բաղկացած համալիրի անխախտելի մասը, նորմատիվության և անհատականի հարաբերության դիալեկտիկայի մարմնավորման պերճախոս օրինակ է, որի վերլուծությունը կարող է անգնահատելի ինֆորմացիա տալ նախագծող ճարտարապետին:

*«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1986. № 11, էջ 59-64*

## НАГОРНЫЙ КАРАБАХ

(Размышления над статистикой)

Как гласит Декрет Азербайджанского ЦИК Советов от 7-го июля 1923 г., Нагорно-Карабахская Автономная область была образована «из армянской части Нагорного Карабаха»<sup>1</sup>.

Территория - около 4,4 тыс. кв. км. Численность населения в конце 1923г.-157,8 тыс. человек. Армяне составляли 94,4%<sup>2</sup>. В автономную область умышленно не была включена часть территории Нагорного Карабаха с армянским населением, в частности, нынешний Шаумянский район Азербайджана. Численность и национальный состав населения НКАО изменились следующим образом.

Таблица 1

(по данным переписей населения, тыс. чел.)<sup>3</sup>

	1926 г.	1939 г.	1959 г.	1970 г.	1979 г.
Все население	125,3	150,8	130,4	150,3	162,2
В том числе:					
армяне	111,7	132,8	110,1	121,1	123,1
азербайджанцы	12,6	14,1	18,0	27,2	37,2
русские	0,6	3,2	1,8	1,3	1,3
другие	0,4	0,7	0,5	0,7	0,6

В 1913 г. в Н. Карабахе (в современных границах) проживало 176 тыс. человек<sup>1</sup>. Резкое сокращение численности населения Н. Карабаха за 1913-

<sup>1</sup> НКАО 50 лет в дружной советской семье (1923-1973), Степанакерт, 1973, с. 4

<sup>2</sup> Там же, с. 11

<sup>3</sup> Там же, с. 33. Переписные данные 1979 г. приведены по: Народное хозяйство Азербайджанской ССР за 60 лет, юб. стат. сборник (далее - НХА за 60 лет). Баку, 1980, с. 350. В этом, а также в других официальных источниках и публикациях по НКАО коренной национальностью армянской автономной области стали называть азербайджанцев. Между тем в статистическом ежегоднике - Народное хозяйство Азерб. ССР в 1972 г. Баку, 1973 (далее - НХА в 1972 г.) - в списке национального состава населения НКАО на первом месте, в качестве коренной национальности, еще назывались армяне, затем азербайджанцы, русские и т. д.



1926 г. (на 28,8%) происходило преимущественно за счет армян (погромы, миграция). Тем не менее по переписи 1926 г. более 89% жителей автономной области составляли армяне. Миграция армянского населения усиливается в послевоенные годы. Сопоставление данных переписей 1939 и 1959 гг. показывает, что Великая Отечественная война и ее последствия пагубно сказались на численности карабахских армян (за 20 лет их численность сократилась на 17,1%) и, наоборот, благоприятствовали росту азербайджанского населения (оно увеличилось на 27,7%). Напомню, что за 1940-1959 гг. «население страны в целом возросло на 7,6%, АзССР - на 13%, АрмССР - на 33,6%. Чем это объяснить? В годы войны были мобилизованы и отправлены на фронт 45 тыс. карабахцев, в т. ч. около 2 тыс. женщин - армянок<sup>2</sup>. Лишь 3% мобилизованных составляли азербайджанцы (при их 10% уд. весе в составе населения области). На фронтах погибло 22 тыс. воинов из Н. Карабаха. Потери армян НКАО на войне составляют более 15% их численности перед войной, что почти в 2 раза выше данных в среднем по стране. Более 15 тыс. карабахских воинов были награждены орденами и медалями, 21-стали Героями Советского Союза, из которых 20-армяне, а прославленный летчик Н. Степанян удостоился этого высокого звания дважды. Все закавказские маршалы и адмиралы (И. Х. Баграмян, А. Х. Бабаджанян, С. Ф. Худяков - Хамферянц, И. С. Исаков) являются выходцами из Н. Карабаха и прилегающих к нему армянских районов. Волей судьбы большинство вернувшихся с войны вынуждено было снова покинуть свои родные края, на этот раз в поисках работы. Кроме того, в 1949 г. принудительно были депортированы многие армянские семьи Н. Карабаха и других районов Азербайджана.

Из данных переписей населения видно, что миграция армянского населения из Н. Карабаха (и из Азербайджана в целом) принимает более интенсивный и необратимый характер с конца 60-х годов. Это был период, когда АзССР считалась «образцом» решения национального вопроса и НКАО была тому «ярким примером». Тем временем АзССР единственная в числе советских республик установила своеобразный рекорд: за 9 лет (между переписями 1970 и 1979 гг.) абсолютная численность национальных меньшинств

---

<sup>1</sup> Здесь и далее все цифровые данные, охватывающие 50 лет (1923-1973 гг.) социально-экономического развития НКАО и ее районов, рассчитаны по: НКАО 50 лет в дружной советской семье

<sup>2</sup> «Вестник архивов Армении», 1985, № 1, с. 112

здесь в целом сократилась на 1,7%, в т. ч. русских - на 6,8%, армян-1,7%, грузин-16,2%, украинцев-9,6%<sup>1</sup>. Численность азербайджанцев возросла на 24,7%, в т. ч. в Н. Карабахе - на 36,8%. В целом за 40 лет, между переписями 1939 и 1979 гг., число азербайджанцев в НКАО возросло в 2,6 раза, а армян - сократилось на 7,3%. Доля других национальностей в НКАО, как видно из вышеприведенной таблицы, незначительна и также имеет тенденцию к уменьшению, главным образом за счет русских, число которых с 3,2 тыс. (1939 г.) сократилось до 1,3 тыс. (1979 г.).

Азербайджанская ССР была образована на территории, где сами азербайджанцы составляли чуть больше половины населения республики. По переписи 1921 г. их насчитывалось 994,1 тыс.<sup>2</sup>, а -1979 г.-4708,8 тыс. чел., т. е. их численность возросла в 4,7 раза. За этот же период численность всех «других наций и народностей», проживающих в АзССР, возросла в целом только на 69%, вследствие чего их удельный вес с 44% снизился почти до 20%. За 20 лет (между переписями 1959 и 1979 гг.) численность населения республики возросла на 63%. в т. ч. Азербайджанцев - на 88,8%, остальных национальностей - на 9,5%, в т.ч. армян - на 7,5%, русское же население сократилось на 5,2%. В результате доля азербайджанцев в республике возросла почти на 11 пунктов (с 67,5% до 78,2%). Такого крутого сдвига в сторону национальной однородности не наблюдалось ни в одной республике даже с еще более высоким уровнем рождаемости и значительным удельным весом национальных меньшинств. Так как указанная тенденция в АзССР усиливается и официально поощряется, то нетрудно предвидеть, что процесс окончательной консолидации одной нации в этой союзной республике завершится уже в начале XXI в. Для сравнения укажем, что за те же два десятилетия доля коренных национальностей в четырех среднеазиатских республиках (узбеков, киргизов, таджиков, туркменов) повысилась в целом на 7,5 пунктов (с 56,8% до 64,4%). При этом численность этих национальностей увеличилась в 2,1 раза, а национальных меньшинств-па

---

<sup>1</sup> Здесь и далее данные переписей населения 1959 и 1970 годов рассчитаны по: Народное хозяйство СССР в 1970 г. (далее - НХСССР 1970 г.), М., 1971, с. 18-20. Данные переписи населения 1979 г.: Народное хозяйство СССР 1922-1982 гг., М., 1982, с. 34-40

<sup>2</sup> Здесь и далее данные переписи населения 1921 г. приводятся по: Дж. Б. Гулиев, Борьба Коммунистической партии за осуществление ленинской национальной политики в Азербайджане, Баку, 1970, с. 573-574

58%, в т. ч. русских - на 47%. Почему за те же два десятилетия численность русских в АзССР сократилась более чем на 5%? Казалось, должно было быть наоборот: АзССР развивалась наиболее быстрыми темпами и 12 лет подряд (с 1971 г.) становилась победителем всесоюзного соц. соревнования. Совершенно очевидно, что все это не имеет ничего общего с присущими СССР закономерностями миграционных процессов. Наоборот, как отмечалось на XXVI съезде КПСС, за указанный период происходило нежелательное движение народов «с севера на юг и с востока на запад»<sup>1</sup>.

АрмССР расположена на небольшой вулканической и гористой территории. Несмотря на огромный приток армян извне и несравненно высокую плотность населения, национальный состав АрмССР не претерпел значительных изменений. По переписи 1926 г. доля армян здесь составляла 84,6%<sup>2</sup>, в 1959 г.-88%, а в 1979 г.-89,7%. Между переписями 1959 и 1979 гг. численность населения республики увеличилась на 72,3%, в т. ч. армян - на 75,6%, а национальных меньшинств - на 48%- азербайджанцев - на 49%, русских - на 25,6%, курдов-96,4%. За 20 лет (1959-1978 гг.) прирост армян в целом по стране составлял 48,9%, азербайджанцев-86,3%, русских-20,4%. За этот период одна треть прироста населения АрмССР- результат притока армян из соседних республик (400 тыс. чел.).

Разрушенные армянские деревни только в 4-х уездах имели следующую земельную обеспеченность:

Агдашский уезд	24.896 десятин,
Нухинский уезд	30.754 десятин,
Геокчайский у-д	26.431 десятин,
Шемахинский у-д	10.000 десятин,
<b>Всего</b>	<b>92.081 десятин</b>

(см.: «Известия Аз. ЦСУ», 1922, '1 (3), с. 6).

В Нухинском уезде, по сравнению с 1917 г., население уменьшилось на 30 тыс. человек, или 29%. Решающую роль в этом процессе сыграли армянские погромы. В момент переписи 1921 г. уже не существовали ниже следующие армянские села, которые в 1917 г. имели:

1. Чартаг (581 чел.), 2. Дашбулаг (1672 чел.), 3. Тарака (362 чел.), 4. Зараф (637 чел.), 5. Ягублы (1229 чел.), 6. Топ (132 чел.), 7. Ахпилакенд (899 чел.), 8. Енгикенд (121 чел.), 9. Джуджамыш (186 чел.), 10. Салибейли (469 чел.), 11. Козлы (766 чел.), 12. Меджлис (311 чел.), 13. Джафар-Абад-Хой (510 чел.), 14. Айдин-Булаг (431 чел.), 15. Сабатлы (1954 чел.). Всего 10260 человек.

Кроме того, армянское население было частично или полностью вытеснено и в подавляющем своем большинстве погибло или же рассеялось

по Закавказью, Сев. Кавказу и другим местам из следующих смешанных и чисто армянских населенных пунктов:

	1917г	1921 г
Мирзабейлы	420 армян	занято тюрками и дагестанцами
Гейбулаг	1153 армян	возвратилось 104 армян
Джорлы-арм.	398 армян	
Гейбейлы	244 армян	проживает 77 тюрков
Алиар	313 армян	проживает 61 тюрков
Султан-Нуха	1114 армян	армян совершенно нет
Малых	194 армян	возвратилось 41 армян
Варданлы	66 армян	армян не имеется
Вардашен	ок. 1600 армян	армян осталось 692 ч.
Нидж	ок. 3000 армян	армян осталось 447 ч.

Можно считать, что в 10-ти селах к 1921 г. стало меньше на 1350 армянских дымов, или 7200 человек (подробно см.: «Известия Аз. ЦСУ», 1922 '3 (5), май-август, с. 51-52).

Перепись показала, что армяне больше не возвращались в армяно-тюркские смешанные села. Армянами частично были заселены только села Нидж и Вардашен, населенными удинами. С другой стороны, села, покинутые армянами, были заселены дагестанскими народами, нухинскими тюрками и тюрками из Армении. Например, села Мирзабейлы, арм.- Джорлы, Гейбейлы, Алиар и Нидж, в последнем из которых в 1921 г. уже проживало около 580 тюрков из Армении (см.: там же).

Материалы азербайджанской сельскохозяйственной переписи 1921г. представляют бесценный материал для изучения этнической структуры населения Нагорного Карабаха.

Кроме всех изданий, в 1924 г. отдельной книгой вышел также материал о Нагорном Карабахе: «Азербайджанская сельскохозяйственная перепись 1921 г. Итоги по сельским обществам во вновь образованных уездах АССР, Нагорного Карабаха и по тем (основным) уездам, в которых произошли изменения границ». Т. III, вып. XVII, Баку, 1924, изд. Аз. ЦСУ, УП+261 с., 400 экз. Фактически книга была опубликована раньше, чем были сформированы

точные границы НКАО. Этим и обусловлено то количество ошибок и недоразумений, которые бросаются в глаза.

Издатель книги И. Резников в предисловии отмечал: «Публикуемые таблицы по отделам: а) население, б) скотоводство, в) землепользование, г) мертвый с.-х. инвентарь составлены по материалам всеазербайджанской с.-х. переписи 1921 г. отбор селений, вошедший в ту или другую административную единицу, произведен по пятиверстной карте, руководствуясь границами, взятыми, как уже отмечено: по Бакинскому у. в Баксовете и по всем остальными- в НКВД... Не сомневаемся, что в сводках могут оказаться некоторые дефекты в том отношении, что в единичных случаях, пограничные села могли быть включены не в соответствующее административное новообразование. Это объясняется, сравнительно, грубой наноской на карту границ последних в НКВД» (там же, с. VII). Эти ошибки в свое время были отмечены и исправлены Г. А. Кочаряном в своей книге «Нагорный Карабах» (Баку, изд. Общества обследования и изучения Азербайджана, 1925, с. 52-53).

Составляя таблицы этнического состава населения, нами были учтены как исправления Г. А. Кочаряна, так и списки населенных пунктов Нагорного Карабаха, установленные «Положением об автономной области Нагорного Карабаха» изданным ЦИК Азербайджана 26-го ноября 1924 г. (см. Бакинский рабочий, 26 ноября 1924 г.; переиздание см.: «К истории образованию Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925. Документы и материалы. Баку, Азерб-е гос. изд., 1989, с. 268-270).

Плотность сельского населения НКАО по сравнению с другими уездами согласно переписи характеризуется следующей табличкой:

(на 1 км<sup>2</sup>.)

НКАО	31,6 человек
Кубинский уезд	29,1 »---»
Агдамский у-д	20,2 »---»
Джебраильский у-д	16,7 »---»
Гянджинский у-д	16,7 »---»
Шамхорский у-д	16,4 »---»
Бакинский у-д	15,1 »---»
Курдистанский у-д	10,2 »---»



Состав средней семьи выражается следующим образом:

Агдамский уезд	5,0 человек
НКАО	4,9 »---«
Гянджинский уезд	4,7 »---«
Шамхорский уезд	4,6 »---«
Курдистанский уезд	4,3 »---«
Кубинский уезд	4,3 »---«
Бакинский уезд	4,1 »---«

Грамотность сельского населения возрастных групп определяется следующим образом:

Гянджинский уезд	11,17%
НКАО	8,93%
Бакинский уезд	5,20%
Шамхорский уезд	4,94%
Джебраильский уезд	2,37%
Кубинский уезд	2,30%
Агдамский уезд	1,84%
Курдистанский уезд	0,68%

(более подробно см.: Итоги по сельским обществам во вновь образованных уездах АССР, Нагорного Карабаха..., с. III-V).

По словам издателей материалов переписи «национальный признак регистрировался по принципу самоопределения, т. е. регистратор фиксировал ответы на вопросы так, как получал их от опрашиваемых. Разработку же материалов ЦСУ правел в двух вариантах: а) по признаку самоопределения и б) по признаку национально-племенному, руководствуясь, в последнем случае, литературными источниками (работа производилась б. членом коллегии Аз. ЦСУ М. Н. Авдеевым)».

Нижеследующая таблица составленная специалистами Аз. ЦСУ дает ясную картину этнического состава населения рассматриваемых уездов Азербайджана по вышеуказанным двум признакам.

Таблица 1

Административные единицы	Относительные показатели по признакам															
	а) Национального самоопределения								б) Национально-племенному							
	Азерб. турки	Армяне	Вост. Кав. горцы	Курды	Таты	Русские	Немцы	Прочие	Азерб. турки	Армяне	Вост. Кав. горцы	Курды	Таты	Русские	Немцы	Прочие
	В процентах															
Автономная область Нагорного Карабаха	5,60	94,40	-	-	-	-	-	-	5,60	94,40	-	-	-	-	-	-
Курдистанский уезд	19,30	-	-	80,70	-	-	-	-	19,30	-	-	80,70	-	-	-	-
Агдамский	100	-	-	-	-	-	-	-	100	-	-	-	-	-	-	-
Джебраильский	99,50	-	-	0,50	-	-	-	-	99,50	-	-	0,50	-	-	-	-
Ганджинский	59,80	35,40	-	-	-	1,40	3,40	-	59,80	35,40	-	-	-	1,40	3,40	-
Шамхорский	75,00	16,60	-	-	-	7,10	1,30	-	75,00	16,60	-	-	-	7,10	1,30	-
Бакинский	85,59	-	-	-	10,21	4,10	-	0,10	12,30	-	-	-	83,50	4,10	-	0,10
Кубинский	50,73	0,40	33,82	-	13,25	1,70	-	0,10	38,78	0,40	33,82	-	25,20	1,70	-	0,10

Как видно из таблицы, если по двум признакам в Нагорном Карабахе преобладают армяне (94,40%), в Курдистанском уезде – курды (80,70%), то в Бакинском уезде по первому признаку преобладают азербайджанские турки (85,59%), а по второму – таты (83,50%).

По численности армяне составляли значительное количество также в Гянджинском (35,40%) и в Шамхорском (16,60%) уездах.

Считаем целесообразным привести здесь неполный список армянских сел этих двух уездов: Бадакенд (2188 чел.), Барсум (1220 чел.), Барсум отс. Солер (1837 чел.), Джагир (1584 чел.), Чардахлы (2762 чел.), Нузгер (1211 чел.), Голицино (593 чел.), Ахкенд (Аджикенд (216 чел.), Бананц (2522 чел.), Човдар (1571 чел.), Зурнабад (1295 чел.), Каракешеш (587 чел.), Мирзик (1093 чел.), Морут (472 чел.), Дашкесан верх. (952 чел.), Дашкесан нижн. (343 чел.), Заглик (3414 чел.), Куши (1659 чел.), Сеидкенд (918 чел.), Ковалевка (1694 чел.), Аллах (267 чел.), Адджикенд (394 чел.), Азат (633 чел.), Михайловка (336 чел.), Геташен (4264 чел.), Агджакенд верхн. (1928 чел.),

Агджакенд нижн. (1477 чел.), Борисы-армянские (601 чел.), Гахтут (127 чел.), Гюлистан (721 чел.), Еншикенд (542 чел.), Карачинар (1253 чел.), Харханут (296 чел.), Армавир (470 чел.), Бузлук (371 чел.), Карабулаг (741 чел.), Манашид (782 чел.), Эркеч (1172 чел.), (см.: «Известия Аз. ЦСУ», 1923, '1 (7), с. 106-111).

Ниже приводится таблица этнического состава населения НКАО по данным сельскохозяйственной переписи Азербайджана.

Таблица составлена на основании следующих источников:

Азербайджанская сельскохозяйственная перепись 1921 г., Баку, 1922.

Т. 1. вып. 5. Джебванширский уезд.

вып. 6. Карягинский уезд.

вып. 8. Шушинский уезд.

вып. 9. Кубатлинский уезд.

вып. 10. Гаджинский уезд.

Т. 3. вып. XVII. Итоги по сельским обществам во вновь образованных уездах АССР, Нагорного Карабаха и по тем (основным) уездам, в которых произошли изменения границ. Баку, 1924.

Как видно из таблицы все население НКАО в 1921 г. составляло 129243 человек, из которого 122426- армяне (94,73%), 6560 азербайджанских тюрок (5,07%), 267 человек – греки, русские, курды (0,20%).

В городе Шуши проживало 9223 человек (4374 мужчин и 4849 женщин) или 8894 азерб. Тюрок, 289 армян, 40 человек – др. национальностей (русских, украинцев, грузин, евреев). (см. «Известия Аз. ЦСУ», 1922, '2 (4), с. 100). Для сравнения добавим, что в 1914 г. в городе проживало 42 130 человек, из которых одних только армян- 22 004 (т. е. 52,3%) (см. Кавказский календарь на 1915 год. Тифлис, 1914).

Таблица II

№	Уезды участки сельские общества и селения	Общее число хозяйств				По народностям							
						Тюрки Азербайджанские				Армяне			
		хоз.	м.	ж.	всего	хоз.	м.	ж.	всего	хоз.	м.	ж.	всего
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		
<b>ХАЧЕНСКИЙ РАЙОН</b>													
<b>I</b>	<b>Дашбулагская волость</b>	2554	6010	5769	11779	95	218	224	442	2454	5771	5532	11303
1	Степанакерт (с. Ханкенди)	311	683	696	1379	85	194	204	398	226	489	492	981
2	Пахлюль	Жители живут в Степанакерте											
3	Джамилли	29	68	57	125	-	-	-	-	29	68	57	125
4	Ханазах	139	307	291	598	-	-	-	-	139	307	291	598
5	Баллуджа	244	619	589	1208	-	-	-	-	244	619	589	1208
6	Мехтикенд	150	320	288	608	-	-	-	-	150	320	288	608
7	Каябаши (Дагряв) с 2 от.	229	528	489	1017	-	-	-	-	229	528	489	1017
8	Бадара (Птреек) с хут.	347	693	687	1380	-	-	-	-	347	693	687	1380
9	Сарукешиш (Хаск)	106	266	250	516	-	-	-	-	106	266	250	516
10	Дашбулаг	243	657	601	1258	-	-	-	-	243	657	601	1258
11	Каракетук (Илис)	61	152	158	310	-	-	-	-	61	152	158	310
12	Хинзиристан с 3 хут.	230	546	550	1096	-	-	-	-	230	546	550	1096
13	Кишлакенд с 2 хут. (Гишлах)	164	420	401	821	-	-	-	-	164	420	401	821
14	Сейдибеклу с хут. (Сейдишен)	106	296	273	569	-	-	-	-	106	296	273	569
15	Шальва (Рев) с хут.	98	200	218	418	-	-	-	-	98	200	218	418
16	Урачач (Улубаб)	33	104	90	194	-	-	-	-	33	104	90	194
17	Каракышлаг (Ходжалы русск)	54*	127*	111*	238*	-	-	-	-	49	106	98	204
18	Исмаилбеклы	10	24	20	44	10	24	20	44	-	-	-	-
<b>II</b>	<b>Каладарасинская вол.</b>	512	1131	1122	2253	176	440	403	843	336	691	719	1410
	а) Каладараси Новое	336	691	719	1410	-	-	-	-	336	691	719	1410
	б) Канач Тала	176	440	403	843	176	440	403	843	-	-	-	-
	в) Херхан												
	г) Чобан Гоне												
	д) Коризерк												
<b>III</b>	<b>Красносельская вол.</b>	2698	6206	5854	12060	-	-	-	-	2698	6206	5854	12060
1	Трнаваз (Красное село)	197	476	465	941	-	-	-	-	197	476	465	941
2	Гарав	135	325	310	635	-	-	-	-	135	325	310	635
3	Хачмач	102	269	276	545	-	-	-	-	102	269	276	545
4	Сизник верхний	68	192	177	369	-	-	-	-	68	192	177	369
5	Сизник нижний	162	369	343	712	-	-	-	-	162	369	343	712
6	Дагдаган	114	296	289	585	-	-	-	-	114	296	289	585

\* остальные русские - 5 хоз. - 34 чел.

7	Шушикенд	600	1153	1000	2153	-	-	-	-	600	1153	1000	2153
8	Дашалты (Каринтак)	224	492	497	989	-	-	-	-	224	492	497	989
9	Мхитаракенд	60	135	133	268	-	-	-	-	60	135	133	268
10	Гюног (Гюног Дашалты)	37	86	75	161	-	-	-	-	37	86	75	161
11	Дашкент (Дашушен)	55	150	143	293	-	-	-	-	55	150	143	293
12	Чанахчи (Ленинакерт)	323	772	776	1548	-	-	-	-	323	772	776	1548
13	Карабулах	127	286	259	545	-	-	-	-	127	286	259	545
14	Мадаткенд	60	133	120	253	-	-	-	-	60	133	120	253
15	Тухнакал	17	45	37	82	-	-	-	-	17	45	37	82
16	Дамурчилар	74	186	161	347	-	-	-	-	74	186	161	347
17	Кущи-баба (Мошх-Мгат)	64	148	139	287	-	-	-	-	64	148	139	287
18	Сарушен	151	416	390	806	-	-	-	-	151	416	390	806
19	Сигнах (Схнах)	128	277	264	541	-	-	-	-	128	277	264	541
<b>IV</b>	<b>Аскеранская волость</b>	1856	4334	3929	8263	-	-	-	-	1856	4334	3929	8263
1	Ханабад Верхний	143	411	369	780	-	-	-	-	143	411	369	780
2	Ханабад Нижний	30	96	86	182	-	-	-	-	30	96	86	182
3	Хорамурт	122	275	238	513	-	-	-	-	122	275	238	513
4	Дашбаши (Аравюсь, Караглух)	178	309	302	611	-	-	-	-	178	309	302	611
5	Кешишкенд (Норагюх)	202	452	413	865	-	-	-	-	202	452	413	865
6	Енгиджа (Сардарашен) с хут.	105	262	218	480	-	-	-	-	105	262	218	480
7	Кличбаг Верхний	67	149	133	282	-	-	-	-	67	149	133	282
8	Кличбаг Нижний	84	189	161	350	-	-	-	-	84	189	161	350
9	Пирджамал	143	341	355	696	-	-	-	-	143	341	355	696
10	Нахчиваник с хут.	210	427	401	828	-	-	-	-	210	427	401	828
11	Аранзамин с хут. (Варазбюн)	241	592	510	1102	-	-	-	-	241	592	510	1102
12	Агбулаг (Мирушаллу)	98	266	205	471	-	-	-	-	98	266	205	471
13	Даграв	95	251	240	491	-	-	-	-	95	251	240	491
14	Кягук (Агдар)	138	314	298	612	-	-	-	-	138	314	298	612
	<b>ВСЕГО</b>	7620	17681	16674	34355	271	658	627	1285	7344	17002	16034	33036
<b>ВАРАНДИНСКИЙ РАЙОН</b>													
<b>I</b>	<b>Тагавертская волость</b>	1095	2733	2445	5178	-	-	-	-	1095	2733	2445	5178
1	Тагаверт (Нижний)	419	982	914	1896	-	-	-	-	419	982	914	1896
2	Шехер	105	279	267	546	-	-	-	-	105	279	267	546
3	Занданашен (Тагаверт верхний)	161	390	356	746	-	-	-	-	161	390	356	746
4	Саркисашен (Джагадуз)	136	371	354	725	-	-	-	-	136	171	354	725
5	Схторашен	188	502	370	872	-	-	-	-	188	502	370	872

6	Билбияк	27	71	61	132	-	-	-	-	27	71	61	132
7	Мавас	59	138	123	261	-	-	-	-	59	138	123	261
<b>II</b>	<b>Сусская волость</b>	1207	2921	2696	5617	-	-	-	-	1207	2921	2696	5617
1	Сус	224	537	535	1072	-	-	-	-	224	537	535	1072
2	Амарас (Аг-оглан)	21	48	34	82	-	-	-	-	21	48	34	82
3	Машади-Калер	58	126	119	245	-	-	-	-	58	126	119	245
4	Машадишен (Арбадуз)	203	420	402	822	-	-	-	-	203	420	402	822
5	Мысмна (Агбулах)	65	205	173	378	-	-	-	-	65	205	173	378
6	Хирхан	118	316	293	600	-	-	-	-	118	316	293	609
7	Караундж	46	108	108	216	-	-	-	-	46	108	108	216
8	Керт (Кузумкенд)	189	478	409	887	-	-	-	-	189	478	409	887
9	Завадых (Цоватех)	119	277	242	519	-	-	-	-	119	277	242	519
10	Гергер	164	406	381	787	-	-	-	-	164	406	381	787
<b>III</b>	<b>Чартазская волость</b>	1971	5071	4595	9666	-	-	-	-	1971	5071	4595	9666
1	Гюней Чертаз	113	256	253	509	-	-	-	-	113	256	253	509
2	Гюзей Чертаз	305	698	621	1319	-	-	-	-	305	698	621	1319
3	Гюней Калер	236	665	623	1288	-	-	-	-	236	665	623	1288
4	Гюзей Калер	200	502	456	958	-	-	-	-	200	502	456	958
5	Хунашинак (Испаганджук)	207	535	477	2012	-	-	-	-	207	535	477	1012
6	Гиши	296	802	749	1551	-	-	-	-	296	802	749	1551
7	Мушкапат	196	536	466	1002	-	-	-	-	196	536	466	1002
8	Гавахан	118	367	326	693	-	-	-	-	118	367	326	693
9	Кендхурд	300	710	624	1334	-	-	-	-	300	710	624	1334
<b>IV</b>	<b>Норпенская волость</b>	2036	4971	4672	9643	-	-	-	-	2035	4971	4672	9643
1	Норшен (Еншкенд)	214	499	463	962	-	-	-	-	214	499	463	962
2	Мюришен (Мирикенд)	125	361	301	662	-	-	-	-	125	361	301	662
3	Авдур (Такир)	128	360	343	703	-	-	-	-	128	360	343	703
4	Каракенд (Гызгала)	303	744	677	1421	-	-	-	-	303	744	677	1421
5	Емица (Емиджа)	95	195	203	398	-	-	-	-	95	195	203	398
6	Спитакашен (Ахкенд)	126	294	256	550	-	-	-	-	126	294	256	550
7	Ашан (Гешан)	214	530	523	1053	-	-	-	-	214	530	523	1053
8	Кагардза	281	661	623	1284	-	-	-	-	281	661	623	1284
9	Барабатум (Параватумб)	77	206	183	389	-	-	-	-	77	206	183	389
10	Карадахлу (Варандалу)	Разрушено											
11	Ннги (Джамиат)	303	682	669	1351	-	-	-	-	303	682	669	1351
12	Ннгиджан (Малый Джамият)	21	46	54	100	-	-	-	-	21	46	54	100
13	Гацы	148	393	377	770	-	-	-	-	148	393	377	770
<b>V</b>	<b>Хонашенская волость</b>	66	164	145	309	66	164	145	309	-	-	-	-
1	Хонашен (Николаевка)	Не переписано											
2	Скобелевка	Жители переселились в Россию											

3	Котляревка	»	»	»	»								
4	Муганлы	66	164	145	309	66	164	145	309	-	-	-	-
5	Ходжавенд	Не переписано											
6	Амираллар	Не переписано											
7	Куропаткино	Жители переселились в Россию											
	Всего	6374	15860	14553	30413	66	164	145	309	6308	15696	14408	30104
<b>ДИЗАКСКИЙ РАЙОН</b>													
<b>I</b>	<b>Эдиллинская волость</b>	741	1832	1719	3551	26	73	47	120	715	1759	1672	3431
1	Агбулаг	86	218	202	420	-	-	-	-	86	218	202	420
2	Ахиллу и Кюгулу	118	253	245	498	3	6	9	15	115	247	236	483
3	Булутан	60	157	144	301	-	-	-	-	60	157	144	301
4	Дудукчин	102	266	222	488	19	54	28	82	83	212	194	406
5	Эдиллу	141	478	410	888	4	13	10	23	137	465	400	865
6	Хрманджук	95	172	184	356	-	-	-	-	95	172	184	356
7	Гога (арм.)	139	288	312	600	-	-	-	-	139	288	312	600
8	Гога (мусульм.)	Не переписано											
<b>II</b>	<b>Гадрутская волость</b>	1557	4026	3815	7841	-	-	-	-	1557	4026	3815	7841
1	Банк	79	206	196	402	-	-	-	-	79	206	196	402
2	Гадрут	404	1106	1079	2185	-	-	-	-	404	1106	1079	2185
3	Кемракуч	122	302	290	592	-	-	-	-	122	302	290	592
4	Кочбек	45	134	123	257	-	-	-	-	45	134	123	257
5	Кушилар	28	83	72	155	-	-	-	-	28	83	72	155
6	Меликджанлу	65	162	175	337	-	-	-	-	65	162	175	337
7	Норашен	49	113	116	229	-	-	-	-	49	113	116	229
8	Сур (Цор)	207	506	521	1027	-	-	-	-	207	506	521	1027
9	Таанк и Тааны	92	265	202	467	-	-	-	-	92	265	202	467
10	Шагах	185	497	397	894	-	-	-	-	185	497	397	894
11	Тагасыр	150	330	350	680	-	-	-	-	150	330	350	680
12	Эдиша	131	322	294	616	-	-	-	-	131	322	294	616
<b>III</b>	<b>Аракюльская волость</b>	940	2602	2440	5042	-	-	-	-	940	2602	2440	5042
1	Аракюль	180	550	522	1091	-	-	-	-	180	569	522	1091
2	Баназур	288	604	650	1254	-	-	-	-	288	604	650	1254
3	Биняты	53	196	173	369	-	-	-	-	53	196	173	369
4	Дашбаши (Караглух)	80	239	206	445	-	-	-	-	80	239	206	445
5	Джилан	58	213	211	424	-	-	-	-	58	213	211	424
6	Мюлкудара	90	270	233	503	-	-	-	-	90	270	233	503
7	Замзур	191	511	445	956	-	-	-	-	191	511	445	956
<b>IV</b>	<b>Хозабюртская волость</b>	546	1672	1448	3120	-	-	-	-	546	1672	1448	3120
1	Хозабюрт	110	374	327	701	-	-	-	-	110	374	327	701
2	Старый Таг	120	418	371	789	-	-	-	-	120	418	371	789
3	Доланлар	200	504	447	951	-	-	-	-	200	504	447	951
4	Агджакенд (Асрик б.)	107	347	277	624	-	-	-	-	107	347	277	624
5	Арфа-Гедук	Не переписано											
6	Спитакашен	Не переписано											
7	Петршашен	Не переписано											
8	Тесхараб	Не переписано											
9	Гарар (Гарал)	9	29	26	55	-	-	-	-	9	29	26	55
<b>V</b>	<b>Тутская волость</b>	2119	5286	5086	10372	-	-	-	-	2119	5286	5086	10372
1	Тут	353	800	789	1589	-	-	-	-	353	800	789	1589
2	Домы	319	888	834	1722	-	-	-	-	319	888	834	1722
3	Сусалых	92	274	242	516	-	-	-	-	92	274	242	516

4	Акаку	31	139	123	262	-	-	-	-	31	139	123	262
5	Атагут	128	308	317	625	-	-	-	-	128	308	317	625
6	Цакуры	76	214	180	394	-	-	-	-	76	214	180	394
7	Мамедацор	93	231	224	455	-	-	-	-	93	231	224	455
8	Чиракуйс	114	296	273	569	-	-	-	-	114	296	273	569
9	Таг	618	1432	1429	2861	-	-	-	-	618	1432	1429	2861
10	Азох	217	511	498	1009	-	-	-	-	217	511	498	1009
11	Драхтик	78	193	177	370	-	-	-	-	78	193	177	370
12	Салакатын	Не переписано											
	ВСЕГО	5903	15418	14508	29926	26	73	47	120	5877	15345	14461	29806
<b>ДЖРАБЕРДСКИЙ РАЙОН</b>													
<b>I</b>	<b>Маргушеванская волость</b>	1598	4062	3854	7916	-	-	-	-	1598	4062	3854	7916
1	Маргушеван	273	672	676	1348	-	-	-	-	273	672	676	1348
2	Марага	198	513	490	1003	-	-	-	-	198	513	490	1003
3	Гасан Гая (Брудж)	109	241	241	482	-	-	-	-	109	241	241	482
4	Сейсулан	60	159	154	313	-	-	-	-	60	159	154	313
5	Яримджа	20	44	43	87	-	-	-	-	20	44	43	87
6	Маралян Саров	72	163	160	323	-	-	-	-	72	163	160	323
7	Чайлу Верхний	147	364	310	674	-	-	-	-	147	364	310	674
8	Чайлу Нижний	76	160	160	320	-	-	-	-	76	160	160	320
9	Талыш	325	859	863	1722	-	-	-	-	325	859	863	1722
10	Мадагиз	53	185	162	347	-	-	-	-	53	185	162	347
11	Дамирляр (Хорузлу)	52	141	129	270	-	-	-	-	52	141	129	270
12	Тонашен	100	243	212	455	-	-	-	-	100	243	212	455
13	Дастагир	31	91	64	155	-	-	-	-	31	91	64	155
14	Тирус (Егакер)	59	165	135	300	-	-	-	-	59	165	135	300
15	Леонарх	23	62	55	117	-	-	-	-	23	62	55	117
16	Красное село (Кармираван)	Образов. после переписи 1921 г.											
<b>II</b>	<b>Оратагская волость</b>	2147	5913	5371	11284	106	272	242	514	2023	5598	5081	10679
1	Оратаг	165	441	366	807	-	-	-	-	165	441	366	807
2	Мардакерт (Агдара)	450	1263	1166	2429	-	-	-	-	450	1263	1166	2429
3	Дамирлу	43	100	93	193	-	-	-	-	43	100	93	193
4	Касапет	178	454	403	857	-	-	-	-	178	454	403	857
5	Гюлятаг	192	473	438	911	-	-	-	-	192	473	438	911
6	Джанятаг	204	584	508	1092	-	-	-	-	204	584	508	1092
7	Казанчи	73	199	179	378	-	-	-	-	73	199	179	378
8	Мохратаг (Кичик-Карабек)	225	653	603	1256	-	-	-	-	225	653	603	1256
9	Мец Шен (Улу-Карабек)	176	527	499	1026	-	-	-	-	176	527	499	1026
10	Магавуз (Чардахлу)	220	625	575	1200	-	-	-	-	220	625	575	1200
11	Люлясаз (Енгиджа)	97	279	251	530	-	-	-	-	97	279	251	530
12	Мингрельское	Русские переселенцы покинули сел. в 1917-18гг.											
13	Мехмана	18*	43*	48*	91*	-	-	-	-	-	-	-	-
14	Геравенд (Аджи Геравенд)	Не переписано											
15	Манык (Срхавенд)	106	272	242	514	106	272	242	514	-	-	-	-

\* Греки



III	<b>Довшанлинская волость</b>	1478	3806	3495	7301	68	192	218	410	1410	3614	3277	6891
1	Довшанлу (Арчадзор) с хуторами: Погосагомер, Гасарагач, Ахперахач, Врсыкюмер, Правенцор	428	1113	1043	2156	-	-	-	-	428	1113	1043	2156
2	Ванк	234	689	622	1311	-	-	-	-	234	689	622	1311
3	Цмакаох (Базаркенд)	117	324	273	598	-	-	-	-	117	324	274	598
4	Шахмасур	38	93	79	172	-	-	-	-	38	93	79	172
5	Гарнакар (Горманлу)	44	112	100	212	-	-	-	-	44	112	100	212
6	Дагмаллу (Тыбуллу)	63	139	145	284	-	-	-	-	63	139	145	284
7	Колатак	122	265	273	538	-	-	-	-	122	265	273	538
8	Баллу-кая (Кичан)	59	122	105	227	-	-	-	-	59	122	105	227
9	Аяд (Ахмахлы)	64	161	126	287	-	-	-	-	64	161	126	287
10	Оратаг (Нижний отс. с Ванк)	38	87	78	165	-	-	-	-	38	87	78	165
11	Айвалы (Тромбон)	93	214	186	400	-	-	-	-	93	214	186	400
12	Норишлар (Коджа-Гурт)	13	44	49	93	13	44	49	93	-	-	-	-
13	Яйджа (Коджагот)	110	295	246	541	-	-	-	-	110	295	246	541
14	Срховенд (Балукая)	55	148	169	317	55	148	169	317	-	-	-	-
IV	<b>Атеркская волость</b>	830	2494	2288	4782	129	310	336	646	679	2102	1892	3994
1	Арутюна-гомер (Кизил-кая)	73	217	193	410	-	-	-	-	73	217	193	410
2	Вагуас (Козлу)	100	295	246	541	-	-	-	-	100	295	246	541
3	Чафар (Усаджик)	105	322	294	616	-	-	-	-	105	322	294	616
4	Черектар	22*	82**	60**	142**	-	-	-	-	-	-	-	-
5	Иммарат Геравенд	27	61	83	144	27	61	83	144	-	-	-	-
6	Керамлу	33	96	102	198	33	96	102	198	-	-	-	-
7	Зардахач	58	167	122	289	-	-	-	-	58	167	122	289
8	Умутлу (Архана)	69	153	151	304	69	153	151	304	-	-	-	-
9	Заглик (Новый Фиф)	104	345	376	721	-	-	-	-	104	345	376	721
10	Атерк (Гасан-Риз) с отсельями: Джахен, Хламджур; Ветац-Ахпюр и Так-Джур.	239	756	661	1417	-	-	-	-	239	756	661	1417
	ВСЕГО	6053	16275	15008	31283	303	774	796	1570	5710	15376	14104	39480
<b>ШУШИНСКИЙ РАЙОН</b>													
I	<b>Малибеклинская</b>	705	1608	1658	3266	705	1608	1658	3266	-	-	-	-

\*\* курды

	<b>волость</b>												
1	Малибеклу	202	499	443	942	202	499	443	942	-	-	-	-
2	Куцилар	57	126	113	239	57	126	113	239	-	-	-	-
3	Керпа Апатли	Кочевники											
4	Фараджалу	Возникло после 1921 г.											
5	Даралагез	Возникло после 1921 г.											
6	Ходжалу (мусульм.)	70	128	190	318	70	128	190	318	-	-	-	-
7	Джангасан	Пропущено при переписи											
8	Кесалар	Пропущено при переписи											
9	Халифалу	198	509	564	1073	198	509	564	1073	-	-	-	-
10	Кейбалы	Жители живут в Степанакерте											
11	Кириджан	103	179	152	331	103	179	152	331	-	-	-	-
12	Зарыслы	75	167	196	363	75	167	196	363	-	-	-	-
	<b>ВСЕГО</b>	<b>705</b>	<b>1608</b>	<b>1658</b>	<b>3266</b>	<b>705</b>	<b>1608</b>	<b>1658</b>	<b>3266</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>СВОДНАЯ ТАБЛИЦА</b>													
1	<b>Варандинский район</b>	6374	15860	14553	30413	66	164	145	309	6308	15696	14408	30104
2	<b>Дизакский район</b>	5903	15418	14508	29926	26	73	47	120	5877	15345	14461	29806
3	<b>Джрабердский район</b>	6053	16275	15008	31283	303	774	796	1570	5710	15376	14104	29480
4	<b>Хаченский район</b>	7620	17681	16674	34355	271	658	627	1285	7344	17002	16034	33036
5	<b>Шушинский район</b>	705	1608	1658	3266	705	1608	1658	3266	-	-	-	-
	<b>ВСЕГО</b>	<b>26655</b>	<b>66842</b>	<b>62401</b>	<b>129243</b>	<b>1371</b>	<b>3277</b>	<b>3273</b>	<b>6550</b>	<b>25239</b>	<b>63419</b>	<b>59007</b>	<b>122426</b>

*Ереван, 1991, 21 с.*

## ՄԵՏՔԱՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 19-ՐԴ ՂԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Լեռնային Ղարաբաղում շերամապահության և մետաքսագործության զարգացման մասին վերջին հարյուրամյակում կատարվել են որոշ ուսումնասիրություններ: 19-րդ դարի 80-ական թվականներին Ղարաբաղում մետաքսամշակման «գործարանների» մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Ա. Արասխանյանի աշխատության մեջ<sup>1</sup>:

Լեռնային Ղարաբաղում շերամապահության զարգացման առանձին դրվագներ քննարկվել են Գ. Սեյրանի, Ար. Առաքելյանի և Ա. Չաքարյանի ուսումնասիրություններում<sup>2</sup>:

Առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում Ա. Պետրոսյանի մենագրությունը<sup>3</sup>: Հեղինակը անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում շերամապահության տնտեսական օգտավետությանը, որդերի կերակրման նոր մեթոդների կիրառմանը, դրանց հետ կապված ազգագրական բնույթի բազմաթիվ հարցերի: Ա. Պետրոսյանը Լեռնային Ղարաբաղում շերամապահության և մետաքսագործության հետ կապված հարցերը հասցրել է մինչև 1914թ. իրողությունները:

Սույն հոդվածի նպատակն է հրապարակի վրա եղած, մանավանդ ԼՂՀ պետական արխիվում և պատմաերկրագիտական թանգարանում պահպանված և չհրատարակված նյութերի հիման վրա բացահայտել Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը մետաքսագործության զարգացման փուլերը, դրանց առանձնահատկությունները, վեր հանել Լեռնային Ղարաբաղի մետաքսագործության տեսակարար կշիռը, ինչպես ռուսական կայսրության, այնպես էլ ԽՍՀՄ տարածքում, ցույց տալ նրա տեղն ու դերը Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության

<sup>1</sup> А. Арасханиян, *Закавказские шелкоматальные заводы*, Тифлис, 1883

<sup>2</sup> Գ. Սեյրան, *Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները*, Թիֆլիս, 1928, Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում*, Ստեփ., 1939, А. Захарян, *Шелковая промышленность Нагорного Карабаха*, Баку, 1970

<sup>3</sup> Ա. Պետրոսյան, *Հայոց շերամապահության մշակույթը*, Եր., 1987

մեջ, հանգամանորեն քննարկել մետաքսի մեծ ճանապարհի հետ Արցախի ունեցած կապերը և դրա վերականգնման, մետաքսագործության հետագա զարգացման անհրաժեշտությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման և տնտեսության բուռն վերելքի պայմաններում հայկական գյուղը իր նահապետական սովորություններով հանդերձ, ներքաշվեց ընդհանուր համառուսական շուկայի մեջ: Անձրևից հետո աճող սնկերի նման Արցախի բնակավայրերում մեկը մյուսի հետևից երևան էին գալիս առաջին մասնավոր ձեռնարկությունները, որոնք երբեմն աղբյուրներում հիշատակվում են «ֆաբրիկաներ», «գործարաններ» անուններով: Դրանք հիմնվում էին գլխավորապես առավել մարդաշատ բնակավայրերում: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Մետաքսի մեծ ճանապարհին մոտ լինելով՝ Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ: Այն նոր ընթացք ու թափ ստացավ 19-րդ դարի 80-90-ական թվականներին: Հունդը Ղարաբաղ է հասել մի շարք երկրներից՝ տարբեր ճանապարհներով: Այսպես, օրինակ, խորասան (դեղին ցեղի), խանջան (սպիտակ ցեղի) հունդը բերվել է Կոստանդնուպոլսից, գառիֆյան սպիտակ և դեղին ցեղի հունդը Թբիլիսիից, պասխալդի սպիտակ և դեղին ցեղի հունդերը Կոստանդնուպոլսից և Իտալիայից: Մինչև 1890 թվականը Ղարաբաղում լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մանր բոժոժ ունեցող հունդը, որին տեղացիները յապոն էին անվանում: Այն ծովային ճանապարհով Չինաստանից տեղափոխվել է Հունաստան, իսկ այնտեղից Ղարաբաղ<sup>1</sup>: Հարկ է նշել, որ 1870-ական թվականներին Ղարաբաղում շերամի հունդը հիմնականում տարածում էին ֆրանսիացիները<sup>2</sup>: Ներմուծվող հունդի քանակը չէր բավարարում տեղական պահանջները: Դրա հետևանքով շերամապահները տեղում սկսեցին հունդ աճեցնել: 19-րդ դարի վերջերին Անդրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացված էր երեք ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները, Ղարաբաղցի էին:

<sup>1</sup> Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում*, Ստեփ., 1939, էջ 12

<sup>2</sup> *Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 91*

Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բռնաբերում էին արտադրում, այլև տանը պարզունակ եղանակով ոտնաչափում մանուկ էին թելը: Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ:

Արցախի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: 1882թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն-Հաղրութի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ 1883թ., ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները<sup>1</sup>:

19-րդ դարի 50-ական թվականներին Արցախում գտնվող մետաքսագործարանները տնայնագործական տիպի մանր ձեռնարկություններ էին՝ խարսխված բացառապես ձեռքի աշխատանքի վրա: Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Ղարաբաղում կատարել են 19-րդ դարի կեսերին Ղարաբաղի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուրադյանը:

1856-1857 թվականներին Ստեփանակերտում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխուց եկած 25-30 հայ բանվորներ: Այդ կիսատնայնագործական բնույթի ֆաբրիկայի բոլոր հաստոցները պատրաստել էին Ղարաբաղի հմուտ վարպետները: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ, Ջենովա քաղաքներում, արտասահմանից օրինակում են մանաբանը, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելլիվախ» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ Ղարաբաղի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: Այս հանգամանքը նպաստում է, որպեսզի երկրամասում զարգանա շերամապահությունը: Այսպես, եթե Վարանդայի գավառում 1890թ. արտադրվում էր 2,138 փութ բռնած, ապա 1895թ. այն հասցվեց 9000 փութի, որից 4300 փութը արտահանվել է եվրոպական երկրներ<sup>2</sup>:

Նման պայմաններում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեցին Ղարաբաղում նոր մետաքսագործարանների կառուցման ուղղությամբ: Ժա-

<sup>1</sup> Ե. Մկրտչյան, *Արցախ*, Երևան, 1991, էջ 46

<sup>2</sup> *Ազգագրական հանդես*, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 91-92

մանակակցի վկայությամբ 1888թ. Արցախում կար 18 մետաքսագործարան, որոնք բոլորը պատկանում էին հայերին: Դրանք տեղակայված էին Շուշի քաղաքում, Ստեփանակերտում, Կրկժան, Քարին-տակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլաղ, Ղշլաղ, Թաղուտ, Տող, Հաղրուֆ, Շուշիքենդ, Բալլուջա, Խանաձախ, Գիշի գյուղերում:

Արդեն 1896թ. Լեռնային Ղարաբաղում 26 մետաքսակարժական ֆաբրիկա կար<sup>1</sup>, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին դրանց թիվը հասավ 36-ի՝ 1590 հաստոցներով, միաժամանակ կառուցվեցին թեև ուրոող 10 նոր գործարաններ<sup>2</sup>, որտեղ տարեկան արտադրվում էր մինչև 8000 փուֆ մետաքս<sup>3</sup>: Միայն Վարանդայի գավառում 1895թ. արտադրվում էր 1100 փուֆ մետաքս և 280 փուֆ ֆրիզոն<sup>4</sup>: Շուշին հանդիսանում էր բոժոժի խոշոր շուկա Անդրկովկասում: 1894թ. Շուշիում հիմնադրվեց կովկասյան մետաքսագործական կայան: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի 85 բնակավայրերում շերամապահությամբ զբաղվում էր մոտ 12000 տնտեսություն, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 45 տոկոսը: Բոժոժի արտադրության համար անբարենպաստ տարիների դեպքում գործարանների համար հումք Լեռնային Ղարաբաղ է ներմուծվել ներկայիս Ադրբեջանի շրջաններից, Վրաստանից, հատկապես Քութահիսի գավառից, ինչպես նաև Միջին Ասիայից և Պարսկաստանից:

Վերոհիշյալ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում բնական մետաքսի արտադրության բուռն վերելքը պայմանավորված է մի շարք բարենպաստ գործոնների առկայությամբ.

1. Տարանցիկ առևտրական ճանապարհների հանգուցակետում գտնվելը:
2. Լեռնային Ղարաբաղի վաճառականների և գործարանատների սերտ կապերը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանների հետ:
3. Այս բնագավառում հնուց եկած ավանդույթները, որին գումարվեց նաև դարաբաղցիների աշխատասիրությունը և հակումը դեպի արհեստը:
4. Էժան և որակյալ աշխատուժի գոյությունը:

<sup>1</sup> Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1987, էջ 99

<sup>2</sup> Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում*, Աստի., 1939, էջ 15

<sup>3</sup> ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 401, ց. 1, գ. 23, թ. 3

<sup>4</sup> Ազգագրական հանդես, էջ 99

5. Վառելանյութի՝ անտառների մոտ լինելու հանգամանքը:

Լեռնային Ղարաբաղի մետաքսաթելը մեծ համարում ունեւ Եվրոպայի և Ասիայի երկրներում: Մինչև 1883 թիվը երկրամասում արտադրված թելը ուղարկվում էր Մարսել, հետագա տարիներին առավել շատ՝ Մոսկվա, իսկ ֆրիգոնը՝ Ֆրանսիա<sup>1</sup>:

Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը բռնում էր 2-րդ տեղը և տալիս էր Անդրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը<sup>2</sup>:

Ժամանակի ընթացքում Լեռնային Ղարաբաղի մի շարք ֆաբրիկաներ հազեցվեցին նոր տեխնիկայով: Ռուսաստանում առաջին անգամ Շուշիում գտնվող Գ. Հարությունյանցի ֆաբրիկայում կիրառվեց բոժոժը չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում:

20-րդ դարի սկզբին ստեղծվեց Գ. Հարությունյանցի՝ Կովկասի մետաքսագործական և մետաքսառտրման արդյունաբերական ընկերությունը, որը միավորեց 6 մետաքսագործարան, 2 մետաքսառտրման և 3 բոժոժաչորացման ֆաբրիկաներ:

Քաղաքական գործընթացները, սակայն, շուտով ընդհատեցին շերամապահության և մետաքսագործության զարգացման բնականոն ընթացքը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ազգամիջյան ընդհարումների հետևանքով ավերվեցին Լեռնային Ղարաբաղի մետաքսագործարանները: Խաթարվեցին եվրոպական և ասիական երկրների հետ տնտեսական կապերը: Ճանապարհների անապահովությունը դժվարացրին գործարանների արտադրած թելի սպառումը: Անտառներից փայտ բերելու խնդիրը կապված էր կյանքի վտանգի հետ, և, որպես վառելափայտ օգտագործում էին թոխմաչարի տունկը:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումը ինչ-որ չափով համընկավ խորհրդային Ռուսաստանում վարվող ՆԷՊ-ի ժամանակաշրջանին: Երկրամասի արդյունաբերությունը, հատկապես մետքսաի արտադրությունը վերջնական կործանումից փրկելու նպատակով ազգայնացված ձեռնարկությունները վարձակալման կարգով հանձնվեցին մասնավոր մարդկանց:

<sup>1</sup> «Մշակ», 1888, N 100

<sup>2</sup> *Заря Востока*, 1927, N 1527

Անցումը ՆԷՊ-ի նպաստեց, որպեսզի Լեռնային Ղարաբաղի մետաքսագործությունը նոր թափ ու զարգացում ունենա: Համառ աշխատանքի շնորհիվ արդեն 1922թ. գործի դրվեցին հինգ ֆաբրիկաներ, որոնցից մեկը պետական էր, չորսը՝ վարձակալված<sup>1</sup>: Մեկական մանածագործարան գտնվում էր Սեյդիշեն, Խնձրիստան, Բաղարա, Ղշլաղ գյուղերում, իսկ Քարին-տակ գյուղում գործում էր թել ոլորող մեկ գործարան, որը ժամանակի ընթացքում կառուցվել էր Ֆրանսիայի մասնագետների կողմից<sup>2</sup>: Գործարանների պարապուրդը կանխելու նպատակով բոժոժը ներմուծվում էր Ադրբեջանի և Վրաստանի շրջաններից<sup>3</sup>: Ֆաբրիկաները որակյալ բոժոժով ապահովելու նպատակով 1924թ. Հադրութում հիմնադրվեց իտալական Չիչե հունդային ընկերությունը<sup>4</sup>:

1925թ. շերամապահության զարգացումը մարզի գյուղացիական տնտեսությունների ավելի քան 45 տոկոսին հնարավորություն էր տալիս ստանալու մեծ քանակությամբ շահույթ:

ԼՂԻՄ մետաքսակարծական ֆաբրիկաների պետական տրեստը՝ Ղարմետաքսաարդյունաբերությունը, ստեղծվեց 1925թ. օգոստոսին: Այն նոր հնարավորություններ ստեղծեց մարզի մետաքսարդյունաբերության հետագա զարգացման համար: Նորաստեղծ տրեստը նյութական մեծ օժանդակություն ստացավ մետաքսի միութենական տրեստից: Մարզային ժողտնտիխորհի 1925-1926 թթ. տնտեսական տարվա զեկուցագրերից մեկում ասված է, որ այդ տարի, շնորհիվ Մոսկվայի մետաքսատրեստի ֆինանսական օգնության, հաջողվեց գործի զգել երեք ֆաբրիկա և<sup>5</sup>: Ղարմետաքստրեստը ամեն կերպ ձգտում էր վերացնել աշխատանքի պրոցեսում գոյություն ունեցող տնայնագործությունը, արմատավորել աշխատանքի առաջավոր ձևերը, պլանավորել արտադրանքի իրացումը և Ստեփանակերտում կառուցել նոր ֆաբրիկա:

Տարեցտարի ավելանում էին մետաքսարդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները: Եթե 1926թ. այն կազմում էր 296 հազար ռուբլի, ապա 1928թ. հասավ 500 հազար ռուբլու: 1927թ. օգոստոսի 11-ին Ստեփանա-

<sup>1</sup> Г. Кочарян, *Нагорный Карабах, Баку, 1925, с. 92*

<sup>2</sup> Ար. Առաքելյան, *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփ., 1939, էջ 32*:

<sup>3</sup> *Կոմունիստ, 1967, N 126*

<sup>4</sup> *ԼՂՀ պետարխիվ, ֆ. 23, ց. 1, գ. 68, թ. 20-21*

<sup>5</sup> *ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 18, թ. 6*



կերտում սկսվեցին մետաքսագործական նոր ֆաբրիկայի աշխատանքները, որի համար նոր սարքավորումներ պատվիրվեցին իտալական «Բատալիա» ֆիրմային: Ֆաբրիկայի առաջին մասնաշենքը շահագործման հանձնվեց 1929թ. սեպտեմբերի 20-ին: Շերամապահության զարգացման նպատակով նախատեսվում էր ունենալ 4000 հեկտար թոխմաչար: Դրա համար դեռևս 1926թ. մարզում ստեղծվել էր փորձնական տնտեսություն, որի ջերմոցներում աճում էր 600 հազար թթենի<sup>1</sup>: Այստեղ աճեցվել էին հունգարական, իտալական և ֆրանսիական տեսակի թթենու սերմեր:

Լեռնային Ղարաբաղի մետաքսագործները սերտ կապեր ունեին Վրաստանի Սամտրեդի և Ադրբեջանի Նուխու մետաքսագործների հետ: Բավականաչափ բարելավվեց մետաքսագործարանների բանվորների սոցիալական վիճակը: Նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ 1931թ. բանվորների աշխատավարձն աճեց 17 անգամ<sup>2</sup>: Ստեփանակերտի ֆաբրիկային կից գործում էր մսուր-մանկապարտեզ, 5 լիկկայան<sup>3</sup>:

Ղարմետաքսկումբինաստը որակյալ կադրերով ապահովելու նպատակով տասնյակ երիտասարդներ ուղարկվեցին Խորհրդային Միության տարբեր ֆաբրիկաներ՝ մասնագիտական կարողությունները կատարելագործելու: Երկրի տարբեր վայրերից՝ Մոսկվայից, Թբիլիսիից, Լեռնային Ղարաբաղ եկան բարձր որակի ինժեներներ:

Լեռնային Ղարաբաղում գտնվող մետաքսի ֆաբրիկաների աշխատանքի արդյունաբերության բարձրացման և նրանց ինքնուրույնությունը մեծացնելու նպատակով 1934թ. ապրիլին Ղարաբաղի մետաքսի տրեստը վերակազմվեց Ղարաբաղի մետաքսի արդյունաբերության վարչության:

Լուրջ ուշադրություն էր դարձվում շերամապահ մասնագետների պատրաստման գործին: Եթե 1934թ. կար 3 խմբակ, որտեղ սովորում էին 220 աշակերտներ, ապա 1936թ. դրանց թիվը համապատասխանաբար հասավ 47-ի և 1870-ի<sup>4</sup>: Շերամի բերքի բարձրացման նպատակով կիրառվում էին ագրոմիջոցառումներ:

Լեռնային Ղարաբաղում շերամապահությունն ու մետաքսի արտադրությունը նոր թափ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հե-

---

<sup>1</sup> *Заря Востока, 1927, N 1407*

<sup>2</sup> *ԼՂՀ պետարխիվ, ֆ. 3, ց. 1, գ. 62, թ. 47*

<sup>3</sup> *Նույն տեղում*

<sup>4</sup> *Ս. Առաքելյան, նույն տեղում, էջ 42*

տո: Եթե 1940թ. մարզում արտադրվել է 98 տոննա մետաքսի հումք և 120 հազար գծամետր մետաքսի գործվածք, ապա 1973թ.՝ համապատասխանաբար 135 տոննա և 11508 հազար գծամետր<sup>1</sup>: 1987թ. Ղարմետաքսկոմբինատը՝ Խորհրդային Միությունում բնական մետաքս արտադրող երեք խոշորագույն ձեռնարկություններից մեկը, արտադրում էր տարեկան շուրջ 16 մլն. մետր մետքասեղեն: Սակայն ստացված եկամուտը լրիվ չէր մնում մարզում, որովհետև մետաքսաթելի ներկումը կատարվում էր Շաքիի մետաքսագործարանում, և հիմնական շահույթը մնում էր Ադրբեջանում:

ԽՍՀՄ փլուզման, Ադրբեջանի կողմից ԼՂՀ շրջափակման հետևանքով ինչպես տնտեսական մի շարք ոլորտներ, այնպես էլ բնական մետաքսի արտադրությունը անկում ապրեց: Սակայն մետաքսի մեծ ճանապարհը կյանքի կոչելը ոչ միայն կնպաստի ԼՂՀ-ում մետքասագործության զարգացմանը, այլև նոր թափ կհաղորդի աշխարհի մի շարք երկրների հետ տնտեսական, մշակութային և քաղաքական բազմապիսի կապերի ստեղծմանը: Լիարյուն կգործեն համագործակցության նախկին ձևերը:

*«ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ,  
2000, N1, էջ 88-92*

---

<sup>1</sup> ԼՂԽՄ-ը 50 տարում, Ստեփանակերտ, 1974, էջ 28

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Այսրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո ցարիզմը ձեռնամուխ եղավ նաև նրա տնտեսական յուրացմանը: Ցարական կառավարությունը ձգտում էր Այսրկովկասը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա:

Դրան հասնելու համար ցարական կառավարությունն իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ սկսեցին աշխուժացնել տնտեսական կյանքը: Առաջին հերթին անհրաժեշտ եղավ պարզել և ճշտել, թե ինչ եկամուտներ էր ստանում խանը Ղարաբաղից, որոնք հետագայում պետք է մտնեին պետական գանձարան: Այդ նպատակով 1822-23թթ. երկրամասում անցկացվեց աշխարհագիր, ցուցակագրվեցին բոլոր բնակավայրերը, ընտանիքի անդամները, հավաքվելիք հնարավոր տուրքերի չափը<sup>1</sup>:

Նոր գրավված տարածքների տնտեսական հնարավորությունները օգտագործելու համար 1836թ. ստեղծվեց «Կովկասյան արդյունաբերական ընկերությունը»<sup>2</sup>:

1861թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումից հետո՝ 19-րդ դարի 60-70-ական թվականներին, ցարական կառավարությունը կայսրության ծայրամասերում անցկացրեց նաև գյուղացիական բարեփոխումներ:

Արևելյան Հայաստանում, այդ թվում նաև Ղարաբաղում, գյուղացիական բարեփոխումը անցկացվեցին 1870թ. մայիսի 14-ի օրենքով: Նոր օրենքով վերացվեց հողերի օգտագործման համայնական եղանակը և այն փոխարինվեց անհատական եղանակով: Հստակեցվեց յուրաքանչյուրի հողաբաժինը, իրավունք տրվեց գյուղացիներին վաճառելու, նվիրելու կամ գրավ դնելու իրենց հողակտորներն ու այգիները: Որոշ բնատուրքեր վերածվեցին դրամականի: Այս ամենը նպաստեց ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը: Ապրանքային դարձավ առաջին հերթին

<sup>1</sup> Լիսիցյան Ստ., *Ձանգեզուրի հայերը*, Երևան, 1969, էջ 50

<sup>2</sup> *Обозрение Российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, Топографическом и финансовом отношениях, Москва, 1836, ч. I, стр. 63*

հողագործությունը: Ղարաբաղը մնում էր որպես հետամնաց ագրարային երկիր, որտեղ արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Տարեցտարի ընդարձակվում են մշակովի հողատարածությունները: Երկրագործության մեջ գերակշիռ տեղ ուներ հացաբույսերի մշակությունը: 1883 թվականից մինչև 1896 թվականը Ելիզավետպոլի նահանգում հացազգիների ցանքատարածություններն ու բերքատվությունը ավելացավ 2-ից մինչև 2,5 անգամ<sup>1</sup>: Եթե Շուշու գավառում հացահատիկի մշակաբույսերից 1886 թ. ստացել են 424,566 քառորդ բերք, ապա 1895 թ. դա հասցվել է 620,700 քառորդի<sup>2</sup>, որի մեծ մասը սպառվել է քաղաքի շուկաներում:

Ներքին շուկայի ընդլայնումը և Ռուսաստանում արդյունաբերության զարգացումը խթանում էր Այսրկովկասի տարբեր գավառների գյուղատնտեսական ապրանքների արտադրության մասնագիտացմանը: Եթե Շուշու գավառում ավելի շատ զարգացած էր շերամապահությունը, ապա Ջիվանշիրի գավառում՝ բամբակագործությունը և խաղողագործությունը:

Շուշու գավառում 1890թ. ստացվել է 2, 138 փուլթ բոժոժ, իսկ 1894թ.՝ 17,000 փուլթ, որից 4, 300 փուլթը ուղարկվել է արտասահման<sup>3</sup>:

Երկրագործական մշակաբույսերի համար կարևորություն էր ներկայացնում ոչ միայն ցանքատարածությունների ընդարձակումը, այլև հումքի որակի բարձրացումը և հողագործության կատարելագործումը: Ուստի երկրամասում մեծ ուշադրություն դարձվեց ոռոգման ցանցի կատարելագործմանը, առանձնապես քյահրիզների կառուցմանը: Համարյա Ղարաբաղի բոլոր գյուղերում նման ջրագծեր կառուցվեցին, որոնք առայսօր օգտագործվում են:

Հանդես եկան կազմակերպություններ, որոնք արտասահմանից ներ էին մուծում բարձրորակ սերմեր՝ խաղողի և բամբակի՝ Բրազիլիայից, Հյուսիսային Ամերիկայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, տեխնիկական մշակաբույսերի վերամշակման համար մեքենաներ՝ Հյուսիսային Ամերիկայից, Ֆրանսիայից:

Անասնապահությունը ևս շարունակում էր մնալ բնակչության զբաղմունքի հիմնական տեսակներից մեկը:

<sup>1</sup> *История Азербайджана, т.2, Баку, 1960, с. 164*

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, 1897, էջ 81

<sup>3</sup> «Ազգագրական հանդես», էջ 91-92

1891թ. Շուշիի գավառում եթե պահում էին 69 161 գլուխ խոշոր և 144 865 գլուխ մանր եղջյուրավոր անասուն, ապա 1895թ. համապատասխանաբար՝ 76 180 և 164 080 գլուխ<sup>1</sup>:

Առաջընթաց կատարվեց նաև գյուղատնտեսական արտադրանքի մշակման գործում: Դեռևս 60-ական թթ. վերջերից սկսեց զարգանալ օղու և գինու արտադրությունը: Շուշու գավառում գինեգործական կենտրոններ էին համարվում Գիշի և Ղզղալա գյուղերը: Գավառում 1884-1894 թվականներին գինու արտադրությունը 95 406 դուլլից հասավ 186000 դուլլի<sup>2</sup>:

Ղարաբաղի թթի այգիներից ստացվում էր մեծ քանակությամբ օղի:

1872թ. տվյալներով Ելիզավետպոլի նահանգում գործում էր 3624 օղու թորման գործարան, որտեղ տարեկան արտադրվում էր 75000 դուլլ օղի<sup>3</sup>: Այս բնագավառում Ելիզավետպոլի նահանգը ամբողջ Անդրկովկասում առաջին տեղն էր զբաղում: Միայն Շուշու գավառում 1895թ. թորվել է 300000 դուլլ օղի: Գինու և օղու արտադրանքից Շուշու գավառում ստացվել է 1323270 ռուբլու եկամուտ<sup>4</sup>, որը բավականին մեծ գումար էր:

Հայ դրամատերերից շատերը սկսեցին իրենց միջոցները տեղափոխել արտադրության առավել շահավետ ոլորտներ՝ ստեղծելով զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ: 1880-ական թթ. Աղդամում մեծահարուստներ Խուբլարյաններն ու Սողոմոնյանները հիմնում են սպիրտի գործարաններ: Դրա հիմքերի վրա Աղդամում ստեղծվում է նաև կոնյակի փոքր գործարան<sup>5</sup>:

19-րդ դարի վերջին տասնամյակներում ռուսական կայսրությունում շուկայական հարաբերությունների զարգացման և տնտեսության բուռն վերելքի պայմաններում հայկական գյուղը իր նահապետական սովորություններով հանդերձ, ներքաշվեց ընդհանուր համառուսական շուկայի մեջ: Անձրևից հետո աճող սնկերի նման Ղարաբաղի բնակավայրերում մեկը մյուսի ետևից երևան էին գալիս մասնավոր նոր ձեռնարկություններ: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Մետաքսի մեծ ճանապարհին մոտ լինելով, Ղարաբաղի հայությունը հնուց

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 89

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», գիրք F, էջ 86

<sup>3</sup> *История Азербайджана*, т. 2, с. 227

<sup>4</sup> «Ազգագրական հանդես», 1897, էջ 87

<sup>5</sup> *История Азербайджана*, т. 2, с. 227

ի վեր զբաղվում էր շերամապահությամբ: Այն նոր ընթացք ու թափ ստացավ 19-րդ դարի 80-90-ական թվականներին: Շերամի հունդը Ղարաբաղ է հասել մի շարք երկրներից, տարբեր ճանապարհներով:

Մինչև 1890թ. Ղարաբաղում լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մանր բոժոժ ունեցող հունդը, որին տեղացիները յապոն էին անվանում: Այն ծովային ճանապարհով Չինաստանից տեղափոխվել է Հունաստան, իսկ այնտեղից Ղարաբաղ<sup>1</sup>: 19-րդ դարի վերջերին Անդրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացված էր 3 ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները, ղարաբաղցիներ էին:

Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բոժոժ էին արտադրում, այլև տանը պարզունակ եղանակով ոտնաչարխով մանում էին թելը: Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ: Ղարաբաղի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: 1882թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հոնաշեն-Հադրութի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները<sup>2</sup>:

19-րդ դարի 50-ական թվականներին Ղարաբաղում գտնվող մետաքսագործարանները տնայնագործական տիպի մանր ձեռնարկություններ էին՝ խարսխված բացառապես ձեռքի աշխատանքի վրա: Միայն 1868թ. Շուշու գավառում կար 490 մետաքսակարժական արհեստանոց, որտեղ թողարկվում էր 76 000 ռուբլու արտադրանք<sup>3</sup>:

Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Ղարաբաղում կատարվել են 19-րդ դարի կեսերին: Ղարաբաղցի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուրադյանը 1856-1857թթ. Ստեփանակերտում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխուց եկած 25-30 հայ բանվորներ: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ, Ջենովա քաղաքներում, արտասահմանից օրինակում են

<sup>1</sup>Առաքելյան Ա., *Շերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփանակերտ, 1939, էջ 12*

<sup>2</sup>Մկրտչյան Շ., *Արցախ, Երևան, 1991, էջ 46*

<sup>3</sup> *История Азербайджана, т.2, с. 237.*

մանարանը, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելլիվախ» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ Ղարաբաղի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: Այս հանգամանքը նպաստում է, որպեսզի երկրամասում զարգանա շերամապահությունը:

1873 թ. Շուշեցի առևտրական Գ. Հարությունյանցը քաղաքում հիմնեց մետաքսաօլորման առաջին ֆաբրիկան, որտեղ Ռուսաստանում առաջին անգամ կիրառվեց բոժոժ չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում:

Գ.Հարությունյանցի ֆաբրիկան սերտորեն կապված էր «Ա և Վ. Սապոժնիկովներ», «Ա. Իլին որդիների հետ և Կ.», «Ե. Ա. Սոկոլիկովա» մետաքսի առևտրով զբաղվող խոշորագույն ընկերությունների հետ<sup>1</sup>:

Վարանդայի գավառում 1890թ. արտադրվող 2138 փուլ բոժոժից, 1895թ. հասցվեց 9000 փթի, որից 4300 փուլը արտահանվել է եվրոպական երկրներ<sup>2</sup>: Նման պայմաններում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեց Ղարաբաղում նոր մետաքսագործարանների կառուցման ուղղությամբ: Ժամանակակցի վկայությամբ 1888թ. Արցախում կար 18 մետաքսագործարան, որոնք պատկանում էին հայերին: Դրանք տեղակայված էին Շուշի քաղաքում, Ստեփանակերտում, Կրկժան, Քարին տակ, Սղնախ, Չանախչի, Ղարաբուլախ, Ղշլաղ, Թաղուտ, Տող, Հադրութ, Շոշ, Բալուջա, Խանաձախ, Գիշի գյուղերում<sup>3</sup>: Դրանց տերերը հիմնականում տեղացի կապիտալիստներ էին՝ Հարունովներ, Ներսեսովներ, Տեր-Գրիգորյաններ, Տեր-Մկրտչյաններ, Քամայաններ:

Արդեն 1896թ. Լեռնային Ղարաբաղում 26 մետաքսագործական ֆաբրիկա կար<sup>4</sup>, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին դրանց թիվը հասավ 36-ի<sup>5</sup>: Շուշին հանդիսանում էր բոժոժի խոշոր շուկա Այսրկովկասում: 1894թ. Շուշիում հիմնադրվեց Կովկասյան մետաքսագործական կայանի մասնաճյուղը: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի 85 բնակավայրերում շերամապահությամբ զբաղվում էին մոտ 12000 տնտե-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 224

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 91-92

<sup>3</sup> Гулишамбаров Ст., *Обзор фабрик и завод Закавказского края*, Тифлис, 1894, с. 320

<sup>4</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 99

<sup>5</sup> Առաքելյան Ա., *Նշվ. աշխ.*, էջ 15

սություններ, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 45 տոկոսը: Վերոհիշյալ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում բնական մետաքսի արտադրության բուռն վերելքը պայմանավորված էր մի շարք բարենպաստ գործոնների առկայությամբ. տարանցիկ առևտրական ճանապարհների հանգուցակետում գտնվելը, Լեռնային Ղարաբաղի վաճառականների գործարանատերերի սերտ կապերը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանների հետ, այս բնագավառում հնուց եկած ավանդույթները, որին գումարվեց նաև դարաբաղիների աշխատասիրությունը և հակումը դեպի արհեստը, էժան և որակյալ աշխատուժի գոյությունը, վառելանյութի՝ անտառների մոտ լինելու հանգամանքը:

Լեռնային Ղարաբաղի մետաքսաթելը մեծ համարում ուներ Եվրոպայի և Ասիայի երկրներում: Մինչև 1888թ. երկրամասում արտադրված թելը ուղարկվում էր Մարսել, հետագա տարիներին առավել շատ Մոսկվա, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա<sup>1</sup>:

Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը բռնում էր 2-րդ տեղը և տալիս էր Այսրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը<sup>2</sup>: 20-րդ դարի սկզբին ստեղծվեց Գ. Հարությունյանցի Կովկասի մետաքսագործական և մետաքսառլորման արդյունաբերական ընկերությունը, որը միավորեց 6 մետաքսագործարան, 2 մետաքսառլորման և 3 բոժոժ չորացման ֆաբրիկաներ:

Քաղաքական գործընթացները սակայն շուտով ընդհատեցին շերամապահության և մետաքսագործության զարգացման բնականոն ընթացքը:

<sup>1</sup> Նույն տեղում, II, էջ 192

<sup>2</sup> «Քարը ձգում են ջրի մեջ և նրա մեջ թողնում մի նկատելի տեղ, որ էրբ արդեն հարկավոր չի լինի տանեն ետ, դնեն հին տեղը, թե չէ սաստիկ անձրևը կարող է սրբել, տանել բոլոր ցանքերը:» (Ստ. Լխիցյան . **Ջանգեգուրի հայերը**. Երևան, 1969, էջ 129): "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", с. 115, Պ. Պոռչյան. **Երկերի ժողովածու**. հ. 1, Երևան, 1953. էջ 93

<sup>3</sup> Գ. Սրվանձտյան. **Մանանա**, էջ 116

<sup>4</sup> ԱՀ, IV, 1898, էջ 107

<sup>5</sup> Անձրև բերելու այս սովորությունը հայտնի էր նաև հույներին ու սլավոններին, արխագների, Կախեթի վրացիներին, տես՝ Մ. Աբեղյան. *նշվ. աշխ.*, էջ 77: Д ж. Фрезер. Золотая ветвь. I, М.-Л., 1931, с. 88-89; Г. Ф. Чурсин. Праздник "выхода плуга" горских народов Дагестана. Тифлис, 1927, с. 17

<sup>6</sup> ԱՀ, XVII, էջ 97

<sup>7</sup> ԱՀ, VI, էջ 347, Ն. Նաղարեանց. **Նախասպաշարմունք**. հ. I, Տիփլիս, 1878, էջ 44

<sup>8</sup> Նույն տեղում

<sup>9</sup> Նույն տեղում

<sup>10</sup> Նույն տեղում

<sup>11</sup> Նույն տեղում

<sup>12</sup> Ստ. Լխիցյան. *նշվ. աշխ.*, էջ 129



Բանահյուսական և ազգագրական նյութը վկայում է այն անձրևաբեր ծեսերի ու երգերի բազմազանության մասին, որոնք առնչվում են Նուրինի<sup>1</sup> հետ: Անձրևաբեր և անձրևախափան երգերը, լինելով հակադիր նշանակությամբ ծիսական երգեր, միաժամանակ ունեն որոշակի ընդհանրություններ:

Փորձենք համեմատել Ա. Ղազիյանի կողմից Արցախում գրառված անձրևախափան Գողիի<sup>2</sup> և Տ. Նավասարդյանի հրատարակած անձրևաբեր Նուրինի<sup>3</sup> փոփոխակներից մեկը: Շրջայցերի ժամանակ ծույլ ու անբան<sup>4</sup> Գողիի «ծվժվոցից, կըթկթոցից» հոգնած ծիսական թափորը, երգի առաջին տողերից սկսած անիծում է ալարկոտ Գողիին անդադար անձրևը խափանող իր կախարդական հնարքները չգործադրելու համար: Գողին իզական սեռին պատկանող անձրևախափան խրտվիլակ է (անեծքն է հուշում Գողիի սեռը՝ «Մարդը մեռած, այ Գողի, տղան մեռած, այ Գողի» և երգի «փուշի տվեք վարսը քսիմ» տողը): Արարողության մասնակիցները, դժգոհելով Գողիից, «ցորտ-ցորտ ըխպրեք, կարմիր արև ու կանաչ սարեր» են ուզում տիրոջից:

Տեղին է փաստել, որ թեև Գողին ընդունված է համարել անձրևախափան երգ, սակայն Գողիի Արցախում գրառված մեկ այլ տարբերակում նույն ծիսական տիկնիկից ժողովուրդն արևի փոխարեն անձրև է հայցում «Թոռն ըմ օգում աշխարքը թըրջի», որն էլ վկայում է Գողիի երկակի և՛ անձրևախափան, և՛ անձրևաբեր գործառույթի մասին<sup>5</sup>:

<sup>1</sup> Նուրինի նկարագրությանը ծիսական երգով հանդերձ առաջինը հանդիպում ենք Պ. Պոռչյանի «Սոս և Վարդիթեր» վեպում (1860), իսկ իբրև ազգագրական երևույթ Նուրինի փոփոխակները գրի են առնվել 1870-ական թվականներից սկսած: Առաջինը գրի է առել Գ.Սրվանձտյանը՝ առանց ծիսական երգի: Ըստ այդ հարողման, «փայտածողի վրա լաթեր էին փաթաթում և մարդու ձև տալիս» (Գ. Սրվանձտյան . Մանանա, էջ՝ 116): Ամբողջ Հայաստանում անձրևաբեր ոգի համարվող Նուրինն ուներ իր անվան տարբերակները՝ Խուրձկուրուլա, Խուչկուրուրա, Խուչկուրուրիկ, Ուրբաթեկին, Պուրպատիկին, Մանկակուրա, Ուշխուրուճի, Շերեփ տիկնիկ, Չամչախաթուն, Մամա-Չթթիկ և այլն: Մ. Աբեղյանը խուրձկուրուլա բառի սկզբնամասի մեջ տեսնում է խրձիկ բառի արմատը՝ խուրձ տիկնիկ նշանակությամբ (Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 169)

<sup>2</sup> Ա. Ղազիյան. **Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն** (այսուհետև՝ չԱԲ). 15, Երևան. 1983, էջ 156

<sup>3</sup> Տ. Նավասարդյան. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, գիրք VI, Թիֆլիս, 1890, էջ 107

<sup>4</sup> Ս. Ամատունի. **Հայոց բառ ու բան**. Վաղարշապատ, 1912, էջ 146

<sup>5</sup> ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ չԱԻԲԱ) FFVII : 6189,01 – 6189,01, 6197, 02 – 6198,00 (Մ. Վարդանյանի հավաքածու), Արցախ, 1970: Այս աղբյուրի համար իմ երախտագիտությունն էմ հայտնում բանագետ Սվետլանա Վարդանյանին

Ի հակադրություն Գողիի, անձրևաբեր Նուրինին ուղղված երգը սկսվում է հուրի- փերի տիկնիկի փառաբանությամբ.

*Նուրին, Նուրին էկել ա,  
Աջբահուրին էկել ա,  
Շիլա շապիկ հագել ա՛:*

Ծիսական շրջիկ խումբը ժողովրդի փափագը ամփոփում է հետևյալ աստվածահաճո տողերում.

*Բարով Աստծով անձրև գա.  
Ձեր Հոր արտեր կանաչնա՞:*

Գողիի նման Նուրինը նույնպես իգական սեռի հատկանիշներ ունի՝ «Եղ բերեք մաղը քսենք»: Մամա – Չթթիկը, Չիչի Մաման և Չամչա Խաթունը Նուրինի տարբեր անուններն են՝ տատ, մեծ մայր նշանակությամբ<sup>3</sup>:

Փաստորեն և՛ Գողին, և՛ Նուրին մարդակերպ տիկնիկներ են և հատկապես Նուրինը (փառաբանված լինելու շնորհիվ) կարող էր միջնորդ դիտվել մարդկանց և աստվածների միջև: Անձրևաբեր և անձրևախափան գործությամբ օժտված ժայռերը բարձրանալու մոգարգելքը (տաբուն), անտարակույս, հուշում է Նուրինի աստվածային ծագման մասին<sup>4</sup>: Նախնական պատկերացումների համաձայն ժայռը (սարը) երկինքն ու երկիրը կապող միջանկյալ օղակ է, և սարերի ու ժայռերի վրա էին բնակվում մի շարք հնդեվրոպական ժողովուրդների աստվածներ ու աստվածուհիներ ևս<sup>5</sup>:

Փաստական նյութի տրամաբանությամբ մեզ առավել հետաքրքրում են ավելի կամ փայտածողի վրա լաթեր հագած արցախյան և զանգեզուրյան ծիսական խամաճիկի՝ ճոլիի անձրևաբե՞ր, թե՞ անձրևախափան բնույթը, նրա բանահյուսական և ազգագրական արմատները:

<sup>3</sup>Տ. Նավասարդյան. *նշվ. աշխ.*, էջ 491

<sup>2</sup> Նույն տեղում

<sup>3</sup> Վ. Բրոյան. *նշվ. աշխ.*, էջ 491

<sup>4</sup> Ջրային տարերքի աստվածուհին Հայաստանում Համարվում է Նարը, որի արձանը Նուրինն է: Այդ մասին ավելի մանրամասն տես Գր. Ղափանցյան. *Ջրահարսի պաշտամունքը հայերի մոտ.*— «Խորհրդային գրականություն», 1940, թիվ 6, էջ 124-135: «Մի անգամ մի տղա ծաղրել է այդ քարը և վեր կացել կանգնել վրան, բայց անմիջապես ոտներ կուչ են էկել» (Եր. Լալայան. *Երկեր. հ. 2, Երևան, 1988, էջ 156*

<sup>5</sup> В. Иванов, В. Топоров. *Исследование в области славянских древностей. Лингвистические и фразеологические вопросы реконструкции текстов. М., 1974, с. 7; они же. Перкунас. - "Мифы народов мира" (далее-МНМ). Т. 2, М., 1998, с. 303-304*

Ի տարբերություն Գողիի և Նուրիհի ծիսական երգերի, որ սկսվում են համապատասխան խրտվիլակների նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքով, Ճուլին առաջադրում է բանաձև.

*Ճուլի-վալի՝ ճուլ չի կա,  
Խավիժ անիւ՝ եղ չի կա՛:*

Բանաձևի տակ թաքնված խորհուրդը հայտնի է եղել արարողության մասնակիցներին, թեև բացահայտ չի խոսվել այդ մասին<sup>2</sup>: Ամենայն հավանականությամբ, ծեսի բուն նպատակը գաղտնագրվել է խորհրդանշային ցուցիչով (կողով), որպեսզի չարքերը չկարողանան խափանել այն<sup>3</sup>:

Ծիսական թափորը ուղիներ է որոնում Ճուլին ծովից դուրս բերելու համար և պատահական չէ, որ դիմում է պարանի օգնությանը.

*Քյանդիր պերեքյ՝ տյուս օնինք,  
Չուվան պերեքյ՝ կցան տանք՛:*

«Քյանդիրն ու չուվանը», ըստ երևույթին խորհրդանշում են պարանի հմայական հատկությունը, որին հայոց մեջ վերապահված է չար ուժերին հալածելու ծիսական գործառույթ:

«Հայերեն գավառական բառարանում» ճուլը համարվում է դարաբաղյան անհայտ իմաստով բառ, որը գործածվել է Ճուլի ծիսական երգում<sup>5</sup>:

<sup>1</sup> ՀԱԲ, 15, էջ 156

<sup>2</sup> ՀԱԲԲԱ, Բարխուդար Ղազիյանի ֆոնդ, Արցախ, N1 տետր, 1973

<sup>3</sup> Խորհրդանշային ցուցիչն առկա է նաև Նուրիհի տարբերակներից մեկի «երթըրկեն կուզե՞ք, թե՞ դռնեն» հարցման մեջ: Երբ ծիսական թափորը դռնից է ջուր ուզում՝ Նուրիհի վրա երդիկից են լցնում և, ընդհակառակը, դռնից են լցնում, էթե նրանք երդիկից են ուզում (ԱՀ, I, Շուշի, 1896, էջ 360)

<sup>4</sup> ՀԱԲ, 15, էջ 156

<sup>5</sup> Հր. Աճառյան. **Էփնեան ազգագրական ծողովածու** (այսուհետև ԷԱԾ). Հ. Թ (Հայերեն գավառական բառարան). Թիֆլիս, 1913, էջ 729: Մեր կարծիքով, Ճուլին թե՛ նկարագրական, թե՛ ազգագրական, և թե՛ իմաստաբանական մակարդակներում ընդհանրություններ ունի գյուղատնտեսության մեջ լայնորեն տարածված նախնական գործիքներից մեկ՝ ցաքանի (ձեռքի փոցիս) հետ: Ցաքանն իր արտաքին տեսքով նման է լաթեր հագած ավելին (ճուլի ծիսական տիկնիկին) և հաստ ճյուղին փաթաթված բարակ ճյուղերն ամբողջությամբ համապատասխանում են գավառական բառարանի ճուլակ բառի բացատրությանը՝ «պոչի պես ետևեն կպած ու կախված» (Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. IV, Երևան, 1979, էջ 446, Ստ.Լիսիցյան. նշվ. աշխ., էջ 128): Մերմը հողով ծածկելիս ցաքանը կալվում է լծին և շարժվում՝ անցնելով ուղիղ ճանապարհ: Արցախում և Ջանգեզուրում ճուլ նշանակում է ճանապարհ, ուղի: «Ճուլան տյուս եկած» նշանակում է՝ ուղուց շեղված, ծուռ, անկառավարելի: Ակներն է, որ ճուլի բառը ստուգաբանորեն առնչվում է ցաքանի և լծի անցած ուղիղ ճանապարհի հետ: Կարծում ենք՝ ցաքանի և լծի կապը համադրվել է երկնքի և երկրի՝ իբրև երկու տարբեր՝ արական և իգական հասկացությունների հետ, և դեպի երկնք տանող ուղիղ ճանապարհը հետագայում խորհրդանշվել է գուրանին լծված կանանց կողմից գետի հոսանքին հակառակ վար անելու ծեսով, քանի որ մարդու վաղնջական առասպելաստեղծ մտածողության երկյակ համատեքստում «հակադրությունները կարող են զարգանալ տարբեր կողային համկարգերում» (В. Н. Топоров. Модель мира, - МНМ. Т. 2, М., 1982, с. 162)

Ճոլի ծիսական երգի անձրևաբե՛ր, թե՛ անձրևախափան լինելու վերաբերյալ գոյություն ունեն տարբեր աղբյուրներ և գիտական տարբեր կարծիքներ.

1. Ըստ Գր. Ղափանցյանի անձրևաբեր ծիսական ճոլի երգը ջրի աստվածության հնագույն պաշտամունքի հիշողությունն է՝ պահպանված Ղարաբաղի հայոց կենցաղում<sup>1</sup>:

2. Բանահավաք Կ. Մելիք-Շահնագարյանը (Տմբլաչի Խաչան) ճոլին համարում է անձրևաբեր երգ, որը կատարվել է երաշտ տարին աստծո գուրջը շարժելու և անձրև բերելու նպատակով<sup>2</sup>:

3. Ճոլիի անձրևաբեր նմուշներ են պահպանվում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում<sup>3</sup>:

4. Էմիլյան ազգագրական ժողովածուն ճոլին նույնացնում է անձրևաբեր Նուրիհի և նրա տարբերակների հետ իբրև նմուշ մատնացույց անելով «Բյուրակնում» լույս տեսած անձրևաբեր «Պուպլատրկին»<sup>4</sup> երգը:

5. Վերոհիշյալ աղբյուրի հետ համերաշխ է նաև Մ. Աբեղյանը. «Նուրիհը կոչվում է, նայելով բարբառներին՝ Ճոլի...»<sup>5</sup>:

Խնդրո առարկա հարցի շուրջ տրամագծորեն հակառակ կարծիք է հայտնում ազգագրագետ Ստ. Լիսիցյանը: Ցանքսերի ծլելու համար վտանգավոր տևական և հորդ անձրևները դադարեցնելու նպատակով դարաբաղցի կանայք ու աղջիկները խաչաձև կապված փայտիկներից տիկնիկ էին պատրաստում, կնոջ շորեր հագնում և բակից բակ ման ածելով երգում էին «Չոլի» երգը<sup>6</sup>:

Վ. Բոդյանը ևս նախապես ճոլին համարում է հարատև անձրևը դադարեցնող խրտվիլակ և ապա, շարադրանքի ընթացքում, ճոլին դիտում իբրև Նուրիհի տարբերակներից մեկը՝ հանգելով դրանց նույնացմանը, «ճոլին, ինչպես տեսանք, կապված է խոնավության, անձրևաջրով շաղախված հողի հետ: Այս իմաստով էլ Նայ>Նար>Նուրիհն – Ճոլի նույնն են»<sup>7</sup>:

<sup>1</sup>Г. Капанцян. *Историко - лингвистические труды*. Т. II, Ереван, 1975, с. 321-322

<sup>2</sup>Տմբլաչի Խաչան. *Ջուռնա – Տմբլա*, գ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 67

<sup>3</sup>ՀԱԻՔԱ, FFIV: 5173,01 - 5173,01, 5091,01 - 5094,00 (Մ. Վարդանյանի հավաքածու)

<sup>4</sup>ԷԱԺ. էջ 729, 816, Սրապեան. *Պուպլատրկին*.-«Բիւրակն», 1899, էջ 441

<sup>5</sup>Մ. Աբեղյան. *նշվ. աշխ.*, էջ 169

<sup>6</sup>Ստ. Լիսիցյանը ճոլին անվանում է Չոլի (Ստ. Լիսիցյան. *Լեոնային Ղարաբաղի հայերը*. ՀԱԲ, 12. 1981, էջ 62):

<sup>7</sup>Վ. Բոդյան. *նշվ. աշխ.*, էջ 496

«Նուրին» իր փոփոխակներով հանդերձ անձրևաբեր երգ է, և եթե ազգագրագետը «ճուլին» համարում է գտարյուն անձրևախափան երգ, ուրեմն անձրևախափան ճուլին չէր կարող համարվել անձրևաբեր Նուրինի տարբերակներից մեկը, որովհետև դրանք ծիսական հակադիր գործառույթ են կատարում (մեկն արև է կանչում, մյուսն՝ անձրև): Այս կարծիքը, ըստ էության, որոշակի հակասություն է պարունակում իր մեջ, որը կփորձենք հանգուցալուծել բանահյուսական նյութի օգնությամբ: Եթե ճուլիի գաղտնագրված նմուշները կարող են կասկած հարուցել նրա անձրևաբեր կամ անձրևախափան լինելու վերաբերյալ, ապա մեր ձեռքի տակ եղած տպագիր և ձեռագիր աղբյուրները ցրում են այդ կասկածները: Հովհ. քահանա Մանդակունու Առաջածորում գրառած ճուլիի փոփոխակը բացահայտ անձրևաբեր երգ է՝ «Ջուր բերեք գլխին անձինք»<sup>1</sup>, իսկ ճուլիի Գորիսի տարբերակն ունի ընգգծված անձրևախափան բնույթ. «Ծրլծրլօցան էք բըզարալ, կըթըլըթօցան էք բըզարալ»<sup>2</sup>: «Ճուլի» ծիսական երգի թե՛ անձրևաբեր և թե՛ անձրևախափան նմուշներ են պահվում (ասացողների ընդարձակ բացատրություններով հանդերձ)՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում<sup>3</sup>:

Դիտարկված նյութը հաստատապես համոզում է, որ Նուրինի տարբերակներից մեկը համարվող ճուլին նույնպես հանդես է եկել որպես ծիսական կրկնակի գործառույթի կրող: «Ճուլի» ծիսական երգի Գորիսի տարբերակը սկսվում է սգավոր տիկնիկի նկարագրությամբ.

*Ճօլի, Ճօլի, մեր Ճօլի,*

*Մըվը քեթկալ, մեր Ճօլի,*

*Մըվը լէչակ մեր Ճօլի...<sup>4</sup>*

Ըստ երևութին, ճուլին ժողովրդական հավատալիքներում առկա արեգակ - աղջիկն է, որը հալածվելով վիշապից՝ ընկել է ծովը: «Ճօլին յենկավ ծօվը...» տողը, ամենայն հավանականությամբ, աղերսներ ունի երկնքի և երկրի երկհակադիր միասնության ամենանախնական պատկերացումների հետ,

<sup>1</sup> ՀԱԻԲՍ, FBI: 1075, 01 - 1075,01 (Տ. Նավասարդյանի ֆոնդ, Հովհ. քահ. Մանդակունու հավաքածու)

<sup>2</sup> Ստ. Լիսիցյան. **Ջանգեզուրի հայերը**. Երևան, 1969, էջ 130

<sup>3</sup> Բացատրությունները գաղտնագրվածում են ծիսական երգի բնույթը:

<sup>4</sup> ՀԱԻԲՍ, FFIV: 5173, 01 - 5173,01, 5067,01, 5067,01, 5067,02 - 5067,02, 5091,01-5094.00 (Ս. Վ. արդանյանի Հավաքածու), Արցախ

<sup>5</sup> Ստ. Լիսիցյան. **Ջանգեզուրի հայերը**, էջ 130

ըստ որի ծովը համարժեք է ստորին աշխարհին և, իբրև, քառասային ջրերի տարերք, սահմանափակում է տիեզերքը բոլոր կողմերից<sup>1</sup>:

«Ծովը ծիրանի դառավ, չորս կողմը հիլի դառավ...» արտահայտությունը քննարկվող ծիսական երգերում հանդիսապող եզակի պատկեր է, որի երկրորդ մասը՝ շուրջբոլորը հայելու վերափոխվելը, համարժեք է մահվան: Եվ որովհետև դիալեկտիկայի կանոններով գործող առասպելական մտածողության համաձայն յուրաքանչյուր արտացոլում երևույթի հակոտնյա հայելային երկվորյակն է<sup>2</sup>, ուրեմն ջրային հայելու մեջ արտացոլված անկենդան արևը (Ճուլին) երկնային լուսատուի ծիսական կրկնորդն է, որն էլ ընդգծում է հակադիր աշխարհի առկայությունը<sup>3</sup>: Քանի որ ըստ նույն դիալեկտիկայի կանոնների կենդանի և անկենդան երեկույթների միջև գոյություն ունի մի ինչ-որ չափակցելի բան (ժառանգորդում) և հայոց տիեզերածին պատկերացումներում երկիինքը հաճախ դիտվում է իբրև ծով («ծիրանի ծով»), որտեղից սկսվում է ծնունդը<sup>4</sup>, հետևաբար ծովն ընկած Ճուլին կարող է վերածնվել, վերականգնել աշխարհի խախտված կարգուկանոնը, ինչը և կազմում է ծիսական արարողության խորհուրդը:

Ծիսական երգի ավարտին Նուրինի և Գողիի պես Ճուլին ստանում էր իր բաժինը՝ յուղ, ձու, այլուր և այլն, ու «Ճուլիի» գրեթե բոլոր նմուշներն ավարտվում են հասարակական նվիրատվությամբ կազմակերպված ցասման հացով (մատաղ), որովհետև դարեր շարունակ ժողովուրդը տիրոջ գուրջը շարժելու ամենավստահելի միջոցը համարել է զոհաբերությունը.

*Օու պերեքյ թաթին տինինք,  
Եղ պերեքյ վարսը քսինք,  
Մեր Ճուլու փայը տվեք,  
Օտինք, խսինք, քեֆ անինք<sup>5</sup>:*

<sup>1</sup>В. Топоров. *Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции*, - "Историко-филологический журнал", 1977, № 3, с. 102

<sup>2</sup>Л. Абрамян. *Первобытный праздник и мифология*. Ереван, 1983, с. 149- 150

<sup>3</sup> Հայելու միջոցով այս աշխարհից հեռանալու մոտիվն առկա է հայկական հեքիաթներից մեկում, որտեղ թագավորի աղջկա ուղարկած խոշորացնող հայելու մեջ իր կրկնակը տեսնելով օձը վախից նետվում է ծովն ու մահանում (Հայ ժողովրդական հեքիաթներ. հ. 5, Երևան, 1966, N17): Յայսօր կենցաղավարող ուշ երեկոյան հայելու մեջ չնայելու և հանգուցյալի տանը հայելիները մեկուսացնելու սովորությունը բացատրում է հենց այս հավատալիքով

<sup>4</sup> ԱՀ, I, էջ 350: ԱՀ II, էջ 196, Գ. Սրվանձտյան. *Համով-Հոսով*. Կոստանդնուպոլիս, 1884, էջ 11, Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ. Երևան, 1981, էջ 24-25, 38-40, Խորենացի, Ա, I, Ա

<sup>5</sup> Տմբլաչի Խաչան. *եջվ. աշխ.*, գ. Բ, էջ 67

Ընդունելով գավառական բառարանի բացատրությունը «ճուլլ –ճուլլ» Ղրբ. փունջ-փունջ կապած»<sup>1</sup>, որով կարելի է ճուլին կապել ցաքանի, կանաչի փնջի հետ, միաժամանակ հակված ենք կարծելու, որ ճուլին անձրև կանչելու կամ դադարեցնելու հավատալիքների մեջ չափազանց մեծ դերակատարություն ունեցող քարն է<sup>2</sup>, քանի որ «քարը կայծակի սինվուն է, իսկ կայծակն ամպրոպային աստծու զենքը»<sup>3</sup>: Ի դեպ, ցուցանշական են անձրևաբերության և անձրևադադարի քարի հետ սերտորեն կապվող պաշտամունքի հետքերը.

1. «Անձրևաբերության նպատակով խաչքարերի վրա ջուր էին լցնում»<sup>4</sup>:

2. «Երբ շարունակ անձրև է գալիս և արև չի ծագում, քահանայի տանից ավել են գողանում և չոր քարի վրա գրած կրակ տալիս»<sup>5</sup>:

3. Վարանդայում քարի վրա ջուր լցնելիս անմիջապես անձրև էր տեղում, իսկ քարի տակ կրակ վառելիս դադարեցվում էր անձրևը<sup>6</sup>:

4. Քարի վրա կախարդական որևէ բան են գրում ու ջուրը նետում<sup>7</sup>, որոշակի քարերի տեղաշարժը բնորոշ է նաև այլ ժողովուրդների<sup>8</sup>:

5. Որևէ ճգնավորի գերեզմանից երկյուղածությամբ իջեցված քարը խաչով-խաչվառով, քահանաներով և ահագին բազմությամբ հանդիսավոր նետում են ջուրը, և անմիջապես անձրև է տեղում<sup>9</sup>:

Հետաքրքիր է նկատել, որ «երբ բավականաչափ գալիս է անձրև, գնում, այդ քարը հանում են ջրից, որպեսզի անձրևը դադարի»<sup>10</sup>: «Ճուլի» ծիսական երգի երկակի բնույթը բացահայտվում է արարողության ժամանակ քարի կատարած երկհակադիր գործառնությունով. քարը ջուրը ձգելը անձրև կանչելու ուղին է, քարը ջրից հանելը՝ անձրևը դադարեցնելու ուղին:

<sup>1</sup> ԷԱԺ. Հ. Թ, էջ 729

<sup>2</sup> Առանձին ժայռերի և մանր քարերի պաշտամունքը ժամանակի ընթացքում հանգեցրել են անձրևաբեր աստվածությունների կերտմանը, որոնց ժողովուրդը «ուշապ» անունն է տվել: Այդ մասին մանրամասն տես՝ Н. Марр и Я. Смирнов. **Виапаты**. Труды Государственной академии истории материальной культуры, Л., Т. 1, 1931; Б. Пиотровский. **Виапаты**. Каменные статуи в горах Армении. Л., 1939

<sup>3</sup> Մ. Աբեղյան. **Նշվ. աշխ.**, էջ 168

<sup>4</sup> ԱՀ, X, 1903, էջ 201

<sup>5</sup> Եր. Լալայան. **Նշվ. աշխ.**, հ. 2, էջ 432

<sup>6</sup> ԱՀ, II, էջ 191 – 192

<sup>7</sup> Գ. Սրվանձտյան. **Մանանա**, էջ 116

<sup>8</sup> Մ. Աբեղյան. **Նշվ. աշխ.**, էջ 168. E. Meyer. *Ind [ogermanische] Myth (en. II, Achilles. Berlin, 1887), S. 539:*

<sup>9</sup> Եր. Լալայան. **Նշվ. աշխ.**, հ. 2, էջ 431

<sup>10</sup> Նույն տեղում: Մտ. Լիսիցյան. **Ջանգեզուրի հայեր**, էջ 129

Սույն բանաձևը երկու դեպքում էլ կիրառելի է. նայած թե մթնոլորտային պայմաններն ինչպիսի հասարակական պահանջ են ձևավորել՝ անձրև<sup>1</sup>, թե՞ արև: Այս համատեքստում Ճոլի ասելով կարելի է հասկանալ կրկնակի գործառույթով օժտված տիկնիկ-տիրուհի, որը միջնորդ է դիտվել մարդկանց և աստվածների միջև, մանավանդ որ, ըստ հայերի և իրանցիների վաղնջական պատկերացումների՝ արևին վերադրվել է միջնորդի, բարեխոսի և անգամ դատավորի դեր<sup>1</sup>:

Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի վերլուծական ընդհանուր քննությունն ամփոփելով ասենք, որ մթնոլորտային երևույթների տարերային դրսևորումները հնագույն ժամանակներից հայոց մեջ ձևավորել են պաշտամունքային արարողություններ ու ծիսական երգեր, որոնց օգնությամբ ժողովուրդը ձգտել է վերականգնել բնության ու հասարակության ներդաշնակությունը<sup>2</sup>:

Բերված նյութը վկայում է, որ մթնոլորտային երևույթների հակադրամիասնությունն, տրամագծորեն հակառակ ծեսերում նույնատիպ միջոցների գործազրույթով նպաստել են երկակի գործառույթով օժտված ծիսական երգերի ստեղծման (և՛ անձրևաբեր, և՛ անձրևախափան՝ Գողի, Ճոլի):

Համատիեզերական երևույթների ու պատկերացումների երկհակադիր ընկալումներից բխող միաժամանակ և՛ անձրև բերող, և՛ դադարեցնող քարի հավատալիք այն կարևոր հանգուցակետն է, որի միջոցով բացահայտվում է ծիսական «Ճոլի» երգի երկակի բնույթը: Հավանաբար, ցարդ գոյություն ունեցող հակասական թվացող գիտական մեկնաբանությունները պայմանավորված են նույն ծեսի երկակի դրսևորումներից մեկը գրառելու կամ հղելու հանգամանքով: Կարծում ենք, որ երկհակադիր ծիսական պատկերացումների վերլուծության այս համալիրում հանգուցալուծվում են իրարամերժ թվացող մեկնաբանությունները:

*«Պատմաբանասիրական հանդես»,  
Երևան, 2004, N3, էջ 217-227*

---

<sup>1</sup>Մ. Աբեղյան. *Էջվ. աշխ.*, էջ 25

<sup>2</sup>Ուշագրավ է, որ եթե հնում մարդը փորձում էր մթնոլորտային երևույթները կարգավորել ծեսերով, ապա այսօր՝ գիտությամբ: Վերջերս Ռուսաստանի դաշնության Արտակարգ իրավիճակների նախարարության բարձր տեխնոլոգիաների և գիտության դաշնային կենտրոնի կողմից ստեղծվել է իոնային զեներատոր, որի միջոցով կարելի է և՛ անձրև բերել, և՛ դադարեցնել այն (*"Толос Армения"*, 17.IV.2004)



## **ԽԱՉԵՆԱԳԵՏԻ ՆԵՐՔՆԱՀՈՎՏԻ ՎԵՐԱԲՆԱԿ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԷԹՆԻԿ ՇԵՐՏԵՐԸ. ՎԵՐԱՄՇԱԿՈՒԹԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Արցախյան հակամարտության հետեւանքով մեր ժողովրդի մի սովորականգված հարկադիր տեղաշարժերի է ենթարկվել՝ փոխելով բնակության վայրը:

ԼՂՀ Խաչենագետի ներքնահովտի վերաբնակեցված գյուղերն են՝ Նոր Մարաղան, Նոր Սեյտուլանը, Նոր Կարմիրավանը, Նոր Այգեստանը (Չայլու), Նոր Հայկաջուրը (Հասանդայա), Հովտաշենը: Վերոնշյալ հինգ գյուղերի բնակիչները, բացառությամբ Հովտաշենի (որը 1994թ. հիմնադրված, մեծամասամբ Հայաստանից վերաբնակվածների համախումբ գյուղ է), հիմնականում բռնագաղթել են Ադրբեջանից ու ԼՂՀ շրջաններից, Խաչենագետի ներքնահովտում 2001-2004թթ. ընթացքում հիմնադրել են նոր բնակավայրեր՝ իրենց նախկին գյուղանուններին հավելելով «Նոր» ցուցիչը: Վերաբնակեցված տարածքների հարադիր անվանադրումը (Նոր Մարաղա, Նոր Այգեստան՝ այլն) հանրային գիտակցությանը հուշում է տեղահանության հետեւանքների, ազգային ինքնության պահպանման՝ մշակութային ավանդույթների հաջորդականության մասին:

Վերաբնակների կենսընթացում տեղի ունեցող ազգամշակութային երեւույթները, ժողովրդագիտական առանձնահատկությունները, բանահյուսական մշակույթում ընթացող փոփոխությունները բացահայտելու մեր հիմնական միջոցը 2010-2013թթ. դաշտային հետազոտությունների ընթացքում հավաքած նյութերի համակարգումն ու ուսումնասիրությունն է:

Խաչենագետի ներքնահովտի վերաբնակեցման նախնական փուլում վտանգավոր իրադրության, կենսապայմանների բացակայության, տնտեսամշակութային, բնաշխարհագրական՝ օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ հանգամանքների բերումով՝ վերաբնակությունը գերազանցապես բնորոշվում էր միայնակների՝ հիմնականում տղամարդկանց գերակշռությամբ: Մակայն կարճ ժամանակամիջոցում՝ մի քանի ամսից մինչեւ մեկ տարվա ընթացքում, ընտանիքները համալրվում են՝ լծվելով նոր բնատարածքի

մշակութային յուրացմանը, անհրաժեշտ կենսապայամանների ստեղծմանն ու գյուղի ձեւավորմանը:

Բանասաց Մանյա Աբրահամյանի վկայությամբ՝ 2001թ. ապրիլի 10-ին ամուսինը՝ Վազգենը, եկել է Նոր Այգեստան գյուղը: Գյուղը դեռ բնակեցված չի եղել: Մի քանի ամիս հետո ինքը միացել է ամուսնուն: Իրենք գյուղի առաջին բնակիչներն են եղել: Գայլերը, աղվեսները գալիս-հասնում էին տան դուռը: Ջուր չկար, հոսանք չկար, ջուրը 2 կմ հեռու էր: Հոսանքը 2002թ. նոր հասել է գյուղ, իսկ ջուրը՝ 2004-ին: Այսպես տանջվելով, հուսահատվելով հարմարվել են: Բնակատեղին քարերից մաքրել են, կլոր ցանկապատ են քաշել: Մի աշակերտով դպրոց են բացել: Հետո եկել է բանասացի որդի Արմոն՝ կնոջ ու երեխաների հետ: «Իմ հին Չայլուն դրախտ էր: Երբ ես Չայլուից հեռանում էի, ինձ թվաց, թա երկինքը երկրին մոտեցավ ա, կյանքը կանգ ա առավ, պրծավ»<sup>1</sup>:

Բնակատեղի, տուն, գյուղ կառուցելը հավասարագոր է ընտանեկան ու հանրային կյանքի կազմակերպմանը, անկարգությունից կարգ ու կանոնի անցմանը: Նոր տարածքի մաքրումը, կառուցապատումը աղերսվում է տվյալ տարածքի ամբողջականության, կատարելության, միկրոտիեզերքի արարման, ինչպես նաև աշխարհաստեղծման ծիսական մաքրագործման հետ<sup>2</sup>:

Վերաբնակների վկայությամբ՝ թուրքերի տները բարեկարգ չեն, փոքր խցերի են նման, մի սենյակի դուռը բացվում է մյուս սենյակի մեջ: Հայի տունը միջանցք պիտի ունենա, աջ՝ ձախ սենյակներ: «Մի քանի անգամ եղել ա, որ հորս հետ պատահական ընկել ենք թուրքի տուն, ստիպված ենք եղել գիշերել: Պառկում էինք քնելու, բայց վախենում էինք: Դե թուրքի տանը ո՞նց քնես: Թեկուզ թվում է, թե հարզեցին-պատվեցին, ոտքներս լվացին, բայց վստահություն չկար: Առավոտ շուտ վեր էինք կենում՝ տեսնենք՝ ինչ կա, ինչ չկա, սա՞ղ ենք, մեռա՞ծ ենք: Հենց էդ անհանգստությունդ կորցնես՝ կկորես»<sup>3</sup>:

Պակաս ուշագրավ չէ վերաբնակ բանասացի եզրակացությունը Հայաստանի՝ Ղարաբաղի հայերի վերաբերյալ: Նրա կարծիքով՝ ղարաբաղցիները հայրենիքի կարոտը ավելի են զգացել, որովհետև ապրել են իրենց հողի

<sup>1</sup> Թ. Հայրապետյան, *Ղաշտային բանահյուսական-ազգագրական նյութեր* (այսուհետ՝ ՂԲՄՆ), Արցախ, 2012թ., տեսր No 2, էջ 64-66, գ. Նոր Այգեստան

<sup>2</sup> М. Элиаде, *Миф о вечном возвращении, Архетипы и повторяемость*, Санкт-Петербург, 1998, с. 24; О. М. Фрейденберг, *Миф и литература в древности*, Москва, 1978, с. 511

<sup>3</sup> ՂԲՄՆ, Արցախ, 2012թ., տեսր No 2, գ. Նոր Այգեստան, էջ 5-6, 14-15

վրա, բայց օտարի ձեռքի տակ: Միշտ լարված են ապրել, որովհետև հողը հայինն է եղել, բայց պետությունն ու իրավունքը՝ թուրքինը<sup>1</sup>:

Վերաբնակները շարունակում են ապրել կորուսյալ հայրենիքի կարոտով: Իրենց հին գյուղի փողոցները, տները մեկ-մեկ հիշում են: Կարոտում են աղբյուրները, ճանապարհները՝ հուսով են, որ մի օր էլի կգնան իրենց գյուղը. «Թուրքերը, որ ռմբակոծում էին Մարաղան, փախչում, գնում էինք Մաղավուզ՝ բարեկամների, ծանոթների մոտ: Ինչքան էլ վտանգը մեծ էր, էլի ժամանակ առ ժամանակ գյուղ էինք գալիս, մեր բերքն ու բարիքն էինք ուզում հավաքել: Թուրք՝ հասած, գիլասը՝ հասած, հողը ձգում էր»<sup>2</sup>: Մեր այն հարցին, թե երեխաներն իրենց որ գյուղից են համարում՝ հի՞ն, թե՞ նոր, հայրենի ուսուցչուհի Վարդուհի Հովհաննիսյանը պատասխանում է՝ անպայման հին<sup>3</sup>:

Խաչենագետի ներքնահովտի վերաբնակությունը պայմանավորված չէ ժողովրդագրական գործընթացների բնական աճով, այլ պարտադիր տեղաշարժերով թելադրված բազմաշերտ հասարակական-մշակութային իրողություն է: Արցախյան հակամարտության ընթացքում իրենց բնօրրանը կորցրած՝ ռազմական առումով վտանգավոր վայրերից բռնագաղթած դարաբաղցի փախստականների կողքին բավական մեծ թիվ են կազմում նաև Ադրբեջանի նախկին հայաբնակ վայրերից բռնագաղթած, երկրաշարժից տուժած՝ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից՝ գործազրկության, բնակարանային անապահով պայմանների պատճառով Խաչենագետի ներքնահովտում վերաբնակված մեր հայրենակիցների ենթաէթնիկ խմբերը:

Նոր Մարաղա, Նոր Սեյսուլան, Նոր Այգեստան՝ այլ բաղադրյալ տեղանունները ինքնըստիքյան հուշում են նոր բնատարածքի հայացման, ազգամշակութային արժեքների վերահաստատման՝ այլընտրանքի բացակայության պայմաններում նորը հնով փոխարինելու աստիճանական հարմարվողականության մասին:

«Նորը» վերաբնակ հայության ընկալումներում սուկ բառեզր չէ, այլ «օտար-յուրային» հակադրության վերամշակութայնացման հոգեբանական

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 14-15

<sup>2</sup> Նույն տեղում, գ. Նոր Մարաղա, էջ 10

<sup>3</sup> Նույն տեղում, գ. Նոր Այգեստան, էջ 44

բարդ գործընթաց<sup>1</sup>, ինչն էլ պետական-համայնքային միջամտություն հայցելով հանդերձ հիմնականում հաղթահարվում է վերաբնակության ավանդական՝ ազգակցական կամ դրացիական համագործակցության՝ ինքնակազմակերպման տարերային մեխանիզմներով: Գրառված նյութերում վանքեցի, ծաղկաձորցի, լենինականցի վերաբնակ-բանասացները հաստատում են սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման վերոնշյալ՝ ազգակցական-դրացիական եղանակը. «Ինձնից մի քիչ վերեւ աղջկաս ընտանիքն է ապրում», «Հենց իմ կողքի էրկու տներումը տղեքքս ըն ապրում՝ ուրանց ընտանիքներավը» կամ՝ «Դե, ես եկա էստեղ, ախպորս էլ կանչեցի, բերեցի, որ, իրար օգնելով, կարողանանք շատ թե քիչ տանելի պայմաններ ստեղծենք ապրելու համար»<sup>2</sup>: Վերաբնակության կազմակերպման համար «պատասխանատու պետական կառույցները, սովորաբար, ետ են մնում զարգացող իրադարձություններից, ինչը դիտարկելի է նաեւ Շուշիում»<sup>3</sup>:

Հայաստանի՝ Ղարաբաղի տարանջատվածության, մեկ միասնական ազգամշակութային դաշտի բացակայության, տարածաժամանակային ազդեցությունների պայմաններում, բնականաբար, նույն ժողովրդի տարբեր հատվածների միջավայրում ձեւավորվել էին յուրահատուկ լեզվաբարբառային, տնտեսամշակութային առանձնահատկություններ: Իսկ վերաբնակեցված տարածքում «եկվոր հայաստանցի»՝ «բռնագաղթված դարաբաղցի» ընտանիքների համատեղ բնակության՝ փոխառնչությունների արդյունքում արդեն աստիճանաբար սկսում է ձեւավորվել ներէթնիկ խմբերի փոխըմբռնման նոր մոդել, ինչը «մենք-դուք» տարբերակումներին հակադրում է փոխադարձ հանդուրժողականության ու համակեցության աստիճանական դրսևորումներ: Գետրգ Գրիգորյանը Հայաստանից կամավոր է եկել Ղարաբաղում՝ մասնակցել Ազատամարտին: Քյալբաջարի Չապլին գյուղում ծանր վիրավորվել է: Երեւանում բուժվելուց հետո, իբրեւ հրետանավոր, կրկին վերադարձել է Դրմբն: Պատերազմից հետո հիմնավորվել է Նոր Կարմիրավանում: Հումորով է հիշում տեղացիների հետ՝ «գյալմա» (եկվոր) սուբէթնոնիմի հետ կապված նախկին տարածայնությունների մասին. «Մի

<sup>1</sup> Л. Хачатрян, *Освоение «чужого» пространства: армяне-беженцы в «азербайджанских» селах Армении/ Разгадать Южный Кавказ: общества и среда обитания*, Heinrich Bull Stiftung, Сборник статей, Тбилиси, ФГБ, 2008, с. 130

<sup>2</sup> ԴԲԱՆ, *Արցախ*, 2012թ., տետր No2, գ. Նոր Հայկաջուր, էջ 80, գ. Նոր Այգեստան, էջ 26

<sup>3</sup> Ա. Դաբաղյան, Մ. Գաբրիելյան, *Շուշին 1992-2000թթ., Հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ)*, Երեւան, 2004, էջ 48

Ժամանակ դարաբաղցիները մեզ ասում էին գյալմա, հիմա ես եմ իրենց ասում գյալմա: Ղարաբաղցիներն ասում են. «Էս գյալման Նոր Կարմիրավանը դարձնելու ա դրախտ»: Ես էլ ծիծաղելով ասում եմ. «Հըլը ու՞ր եք, սհենց որ գնա, դուք դառնալու եք գյալմա, իսկ ես՝ արորիզեն (տեղաբնակ)»<sup>1</sup>:

Մերձեցման գործընթացն առաջին հերթին իրականանում է առտնինկենցադային շփումների, լեզվաբարբառային տարբերությունների հաղթահարման մակարդակում. «Ես Գյումրիից եմ եկել՝ հայրաքաղաքից, - ասում է Լյովա Հարությունյանը, - 1997 թվականից ապրում եմ Հովտաշենում: Ժենգյալով հացը ստեղ ենք սորվել ուտել, Ղարաբաղի գերբն է: Դե իրանք էլ սորվեցին մեզնից նոր ճաշատեսակներ պատրաստել, լավ կոֆե էփել: Էսա հիմա կասեն, բա դուք մեզնից չայ պատրաստել չե՞ք սորվել: Մի անգամ չայ էիք եփում, մի շաբաթ խմում: Ճիշտ են ասում, իհարկե, սորվել ենք: Բայց այ դուք քյալլա սարքել չեք սորվում, ավստու է թափում եք, հատկապես ոչխարինը»<sup>2</sup>:

Հովտաշենը նախկինում թուրքի գյուղ է եղել: Ընդամենը երկու հայ բնակիչ է ունեցել՝ բժիշկը՝ ռուսերենի ուսուցիչը: «Դե էս Ղարաբաղում լրիվ ռուսագետ են», - ասում է Ոսկեվազի նախկին բնակիչ Արամ պապիկը<sup>3</sup>: Խաչենագետի ներքնահովտում լեզվական խոչընդոտները հաղթահարվում են փոխադարձ շփումների, համակեցության շնորհիվ:

Վերաբնակ բանասացների ազգագրական կազմը բազմաշերտ է (Արցախ, Շիրակ, Գեղարքունիք, Արարատ, Լոռի), մասնագիտական կազմը՝ նույնպես (հողագործներ, արհեստավորներ, ծառայողներ, զինվորականներ, մտավորականներ, ուսանողներ, աշակերտներ): Նրանց սեռատարիքային խմբերն աչքի են ընկնում ազգագրական բոլոր շրջաններին բնորոշ արդի օրինաչափություններով:

Կորուսյալ բոլոր գյուղերն էլ հավաքատեղի են ունեցել, ինչը կոչվում էր «մեյդան»՝ հրապարակ, գյուղամեջ՝ նաեւ շուկա իմաստով: Չայլուում հավաքվում էին «պարիկմախեր Ռուդիկանց ու Դյուդուկանց պատերի տակ»: Հիմա հուշարձանի ու խանութի մոտ են հավաքվում, հիշում են՝ համեմատում հին ու նոր հավաքատեղիները:

Բանահյուսական տարբեր ժանրերի նյութերում նկատվում են տարածաժամանակային տարրերով պայմանավորված բնականոն տեղաշարժեր

<sup>1</sup> ԴԲԱՆ, Արցախ, 2012թ., տետր No2, գ. Նոր Կարմիրավան, էջ 21-23

<sup>2</sup> Նույն տեղում, Արցախ, 2011թ., տետր No1, գ. Հովտաշեն, էջ 2-4

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 88

ու փոփոխություններ: Ծագումով մշեցի վերաբնակ բանասացը վիպական բանահյուսության նմուշները արդիականացնում է՝ նրանց մեջ ներառելով արդի կենսընթացին բնորոշ իրավիճակներ.

Մտրա Մելիքը Մասունցի Դավթին կովի է կանչում ոչ թե սուրհանդակների միջոցով, այլ բջջային հեռախոսով: Կոիվը տեղի չի ունենում, քանի որ, ինչպես բանասացն է ասում, «մկա Դավիթ անխասանելի կեղնի»<sup>1</sup>:

***Տիգրանակերտն իբրև ազգամշակութային գործոն՝ տնտեսական խթան***

Տիգրանակերտի վերաբերյալ հասարակական ընկալումների դաշտային հետազոտության նյութերը թույլ են տալիս արժեւորել արցախահայության, մասնավորապես, Խաչենագետի ներքնահովտի վերաբնակների շրջանում ընդունված պատմամշակութային գործոնի գերակայությունը: Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի բանվորներ Արմո Աբրահամյանի (Նոր Այգեստան), Մենիկ Մովսիսյանի (Նոր Մարաղա), Հայկ Հակոբյանի (Նոր Մեյսուկան), Յուրիկ Կաֆյանի (Հովտաշեն)<sup>2</sup>՝ այլոց համար Տիգրանակերտը սոսկ սեզոնային աշխատանքի հնավորություն՝ ժամանակավոր տնտեսական խթան չէ, այլ խմբային ինքնագիտակցության հզոր ազդակ է: Նոր Այգեստան համայնքի ղեկավար Արշակ Բաղդասարյանի կարծիքով՝ Տիգրանակերտը յուրաքանչյուր հայի՝ հատկապես վերաբնակների հոգում հպարտության վեհ զգացում է ծնում, քանի որ «մեր հայկական պապական հողը պատմական փաստերով ա ապացուցվում»<sup>2</sup>: Վերաբնակները ոգևորված են պեղումների արդյունքներով: Տիգրան Մեծն ու իր ժամանակակիցները այլևս անորսալի ստվերներ չեն, այլ փառավոր հնագույն նախնիներ, ովքեր անփոխարինելի նյութական արժեքներ են փոխանցել գալիք սերունդներին: Հոգեբանական առումով շատ կարեւոր է, որ վերաբնակները ոչ թե թուրքի գյուղում են ապրում, այլ հին հայկական հողում՝ Տիգրան Մեծի կառուցած քաղաքում:

Պատմության ընթացքում, մասնավորապես, վերաբնակության քաղաքական, սոցիալ-հոգեբանական, մշակութային բարդ գործընթացներում մենք գործ ունենք այնպիսի հասարակությունների՝ համայնքների հետ, որոնց համար անցյալը հանդիսանում է խորհրդանշական մոդել ներկայի համար. «Հասարակության նոր անդամներին իր անցյալի հետ ծանո-

<sup>1</sup> Նույն տեղում, գ. Հովտաշեն, էջ 10

<sup>2</sup> Նույն տեղում, գ. Այգեստան, էջ 46

թացնելը՝ այդ հասարակության մեջ նրանց ներգրավման իմաստով, տվյալ հասարակության ջանքերի կարևոր մասն է կազմում»<sup>1</sup>: «Հասարակությունը կազմող մարդիկ գրեթե միշտ էլ կարիք են զգում նախահայրերի, հերոսների»<sup>2</sup>, իսկ Խաչենագետի ներքնահովտի վերաբնակներն անմիջապես ապրում են ազգամշակութային ընդգծված նկարագիր ունեցող հուշարձանի՝ Տիգրանակերտի՝ պատմական իրողության հետ կողք կողքի:

Գրառված նյութերի վերլուծությունից պարզվում է, որ Տիգրանակերտը վերաբնակների կյանքում զգայական ընդգծված նշանակություն ունի, ինչն էլ բացատրվում է Խաչենագետի ներքնահովտի մշակութային վերայուրացման գործընթացում հուշարձանի հետ կապված պատմական հիշողության, գրավոր սկզբնաղբյուրների, բանավոր ավանդույթի՝ պեղումներով հայտնաբերված կառույցների ու հնագիտական նյութերի առկայությամբ: Այս առումով «Խաչենագետի ներքնահովտը հանդիսանում է մշակութային՝ բնականոն մի յուրօրինակ տարածք, որը ցուցադրում է հայ էթնոմշակութային մշտական ներկայությունը ընդհուպ մինչև նոր ժամանակները»<sup>3</sup>:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Խաչենագետի ներքնահովտի վերաբնակեցված գյուղերի կենսընթացում տեղի ունեցող հասարակական-մշակութային գործընթացների, ազգամշակութային ինքնություն ունեցող հուշարձանների, բանահյուսական՝ ազգագրական կենցաղում ընթացող բնականոն տեղաշարժերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում մեզանում եղած համապատասխան հարուստ նյութն ամբողջացնելու, զուգադրելու՝ ժողովրդագիտությունը դարձնելու ռազմավարական գերակա ուղղություն պատմամշակութաբանական ընդհանուր գործընթացներում:

*«Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում.  
Հետազոտական փորձ, խնդիրներ և հեռանկարներ.  
Գիտաժողովի նյութերի ժողովածու», Երևան, 2014, էջ 44-51*

<sup>1</sup> Հ. Մարության, *Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում*, Երևան, 2006, էջ 6, Anthony D. Smith, *Myths and Memories of the Nation. Oxford, New York, 1999, p. 165-166*

<sup>2</sup> Հ. Մարության, *Եջվ. աշխ.*, էջ 11

<sup>3</sup> Մշակութային հետազոտություններն Արցախում. Շուշի, Հանդաբերդի վանք, Տիգրանակերտ, Երևան, 2009, էջ 47

## ՇՈՒՇԻՆ 1992-2002 թթ.

ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՔԱՂԱՔ

(Ազգագրական ակնարկ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ \*

1992թ. մայիսի 8-ի Շուշիի ռազմական գործողությունը հայերի համար քաղաքի ազատագրում էր և պատմական արդարության վերականգնում: Ադրբեջանում այն դարձավ հերթական քաղաքական ճգնաժամի և իշխանափոխության առիթ: Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններում Շուշիի պատկանելության խնդիրը հիմնականներից մեկն է, քանի դեռ անցյալը մնում է հակասական մեկնաբանությունների առարկա: Ադրբեջանցի փորձագետներից մեկի հայտարարությամբ «Ադրբեջանը չի ասի թե պատերազմն ավարտված է, մինչև փախստականները չվերադառնան Շուշի» (Nasibli, 2000): Այս հակամարտությանը բնորոշ են բազմաթիվ այլ պատմական և մշակութային խնդիրներ, որոնց ամբողջությունը նկատի ունեցող մասնագետներն այն համարում են նախկին ԽՍՀՄ առավել դժվար կարգավորելիներից մեկը (Carley, 1998; Hopmann, 1999, էջ 33-35):

Շուշիի անցյալը, ազատագրումը և հայերի վերադարձը Ղարաբաղյան հակամարտության նախապատմության, ընթացքի և ներկա վիճակի մի մասն են: Քաղաքական նշանակությունից բացի, որն ի հայտ եկավ հակամարտության սկզբից, դրանք ունեն էական մշակութային բովանդակություն: Մենք այն փորձել ենք բացահայտել ազգագրական հետազոտության միջոցով: Շուշիի «Արամ Մանուկեան» վարժարանին աշխատակցած Ա. Դաբադյանի 1992-1994թթ. դիտարկումներն աշխատանքի աղբյուրներից մեկն են: Հեղինակները միասին շարունակել են դաշտային ազգագրական աշխատանքը 1996, 2000 և 2002թթ.՝ ժողովելով տարբեր տարիքի, սեռի, հասարակական դրության 36 վերաբնակիչների հետ հարցազրույցներից և

---

*\* Հեղինակներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում «ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի իրենց գործընկերներին, աշխատանքի քննարկման ընթացքում արված բազմաթիվ դիտողությունների և առաջարկությունների համար»*



անձնական դիտարկումներից կազմված ազգագրական նյութ: Այս հիմնական սկզբնաղբյուրի պարբերականությունը թույլ է տվել վերաբնակության առանձին իրողություններ դիտարկել ընթացքի մեջ: Հետազոտության աղբյուր են ծառայել նաև տարաբնույթ արխիվային փաստաթղթեր և վիճակագրական նյութեր, ԼՂՀ և ՀՀ մամուլում, այդ թվում 1994թ. գարնանից հրատարակվող «Շուշի» թերթում տպագրված թղթակցություններ և այլն: 1996թ. հեղինակներն աշխատել են նաև ԼՂՀ Մարտունու, Հադրութի և Քաշաթաղի վարչական շրջանների մի շարք վերաբնակեցված բնակավայրերում, որտեղ հավաքված նյութը թույլ է տալիս Շուշիի հետ որոշ համեմատություններ կատարել: Աշխատանքում ներկայացված իրողություններն ազգաբնակչության առումով կապված են հայ ժողովրդի պատմության անցյալ հարյուրամյակների բախտորոշ իրադարձությունների հետ: Պատմական տարբեր հանգամանքներով թելադրված վերաբնակությունների մասին առկա ազգագրական գրականությունը հիմք է տալիս դիտարկելու Շուշիում ընթացող գործընթացների հասարակական ու մշակութային առանձնահատկությունները, դրանցում հայոց ավանդական գյուղական մշակույթի ազդեցությունը: Այն արտահայտվել է դեռևս XIXդ. առաջին կեսի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո Արևելյան Հայաստան հայերի ներգաղթի մանրամասներում, երբ «փաստորեն տեղի ունեցավ պատմական ծագումով արևելահայ բնակչության մի մասի *վերադարձ* (ընդգծ. մերն է) իրենց նախնիների սկզբնական բնակության վայրերը, բայց 10 սերունդ անց» (Г.Саркисян, 2002, էջ 9):

Վերաբնակվող կամ նոր գյուղ հիմնադրող հայերը հաշվի էին առնում այնպիսի գործոններ, ինչպես ոռոգման ու խմելու ջրի, վարելահողերի առկայությունը նոր վայրում, դրա մերձությունը բանուկ ճանապարհներին և պաշտպանական հնարավորությունները: Սովորաբար մի քանի ընտանիքներից կազմված վերաբնակների խմբերին օգնում էին կողմնորոշվել նախորդ բնակության հետքերը՝ եկեղեցին, գերեզմանոցը, գյուղատեղը (Պետրոսյան, 1974, էջ 101-102; *Культура жизнеобеспечения и этнос*, 1983, էջ 115-118): Նման ավանդույթներ, որոշ տեղական առանձնահատկություններով, ի հայտ են եկել նաև XIXդ. Լեռնային Ղարաբաղում՝ գյուղական համայնքների տրոհմամբ ձևավորված բնակավայրերում (Մկրտչյան, 1985; А.Мкртчян, 1985):

XXդ. հայ ժողովրդի տարբեր հատվածների զանգվածային վերաբնակության հիմնական պատճառը 1915թ. Մեծ եղեռնն էր, որը վերապրած արևմտահայերից ու նրանց սերունդներից է առաջացել Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրների հայկական Սփյուռքը: 1920, 1940, 1970-ական թթ. արևմտահայության փրկված մի մասի Հայաստան ներգաղթը՝ «հայրենադարձություն»-ը, ուղեկցվեց Սփյուռքի և Հայաստանի արդիականացման ու քաղաքայնացման\* գործընթացներով:

Բնականաբար, Շուշիում ընթացող մշակութային երևույթներում ավելի հաճախակի են նորագույն պատմության իրադարձությունների արձագանքները: Քաղաքի ժամանակակից բնակչության կազմավորումն ու բնակության պայմաններն ուղղակիորեն կապված են Սոււմգայիթի ոճրագործությամբ սկսված Ադրբեջանից 360 հազար հայերի բռնագաղթի, դրան հաջորդած պատերազմի, Հայաստանի և Արցախի տևական շրջափակման հետ: Կան նաև Ղարաբաղյան հակամարտությանն ուղղակի չառնչվող այլ հանգամանքներ, որոնք ընդհանուր են Հայաստանի և ԼՂՀ բնակչության համար՝ արդյունաբերության անկումը, բնակչության մեծամասնության աղքատացումը, գործազրկությունը, անցումային շրջանի այլ երևույթներ: Վերջին տասնամյակում այս խնդիրների բազմակողմանի ուսումնասիրության մեջ զգալի է նաև ազգագրական հետազոտությունների ներդրումը:

Այս աշխատանքի հիմնական նպատակն է պարզել ու նկարագրել վերաբնակությանն ուղեկցող մշակութային այն տարրերը, որոնցում արտահայտվում են նոր միջավայրին ազգային մշակույթ կրող հանրույթների հարմարվելու առանձնահատկությունները: Քանի որ հայ ազգագրությունում նման հարցադրմամբ հետազոտությունների թիվը մեծ չէ, աշխատանքում օգտվել ենք Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Կովկասի տարբեր ժողովուրդների զանգվածային վերաբնակությունների մասին առկա ուսումնասիրություններից: Դրանք կարևոր են վերաբնակության գործընթացների ընդհանրական երևույթները հասկանալու առումով:

---

\* «Քաղաքայնացում»-ը, որն ամբողջությամբ արտահայտում է «ուրբանիզացիա» բառի իմաստը, մեզ հուշեց ՀՀ ԳԱԱ ՀԱԲ ազգագրության բաժնի վարիչ, պրոֆեսոր Դ. Ս. Վարդումյանը

## ԳԼՈՒԽ I

### ՇՈՒՇԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔ

Արդի ազգագրությունը հատուկ ուշադրություն է դարձնում ազգային ինքնություններում, հատկապես դրանց հակամարտ դրսևորումներում արտահայտվող պատմական հիշողությանը: Տեսությունը, որի շրջանակներում զարգացել է այս մոտեցումը, վերջին տասնամյակների ընթացքում ապացուցում է ազգային ինքնության բազմակերպությունը, ցույց տալիս դրա անմիջական կապն էթնիկ հանրությունների տնտեսական, հասարակական, քաղաքական կեցությանը (Тышков, 2001, էջ 44-48,60-69,172-173): Ղարաբաղյան շարժման օտարերկրացի առաջին ուսումնասիրողներից Ն.Դուդուիկի աշխատանքում նույնպես պատմական հիշողությունը դիտարկված է որպես հայոց արդի ազգային ինքնության կարևորագույն, միաժամանակ՝ փոփոխական բաղադրիչներից մեկը (Dudwick, 1993, էջ 9-54):

Ժողովուրդների պատմությունն իր բազմակողմանիությամբ տալիս է անցյալի տարբեր մեկնաբանությունների հնարավորություն, ինչը հանգեցնում է պատմական հակամարտ հիշողությունների: Ումանք փորձում են դրանք բացատրել էթնիկության սկզբունքների հակադրությամբ, ինչպես ազգագրագետ Ա. Յամսկովը Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ. «Երկու կողմերի քաղաքական վերնախավերի ընկալումներում հողի նկատմամբ պատմական իրավունքը բխում է նախ այդ վիճելի տարածքի քաղաքական պատմությունից («մեր հողը մեր նախնիների պետության կազմի մեջ մտնող հողն է») և երկրորդ՝ էթնիկական պատմությունից («մեր հողն այն է, որտեղ ապրել են մեր նախնիները»)» (Ямсков, 1998, էջ 170): Այս առնչությամբ այլ հետազոտողներ գտնում են, որ ազգաբանությունը չպետք է վերածվի հակապատմական գիտական վերլուծաբանության, ազգային ինքնությունների «առասպելազերծման» համակարգի, որը հարցականի տակ է դնում ուսումնասիրության առարկայի՝ ազգային ինքնության իսկությունը (Малахов, 2001; Семенов, 1993; Чеснов, 1999, էջ 66-70, 91-95): Ինչպես իրավացիորեն նկատում է պատմության բացասման ուղղության քննադատներից մեկը. «Ամբողջական պատմական գործընթացը պարզապես անունների և դասակարգումների խաղ չէ, այլ ունի խորը բովանդակություն, որում ակնհայտ է ամբողջական երևույթների առկայությունն ինքնությունների տեսքով: Վերջինները կառուցված են ժողովուրդների գոյու-

թյան անմիջական պայմաններին և ամենօրյա կենսակերպին համապատասխան:» (Friedman, 1992, էջ 841):

Ղարաբաղյան հակամարտությունը բացահայտեց հայերի և ադրբեջանցիների պատմական հիշողությունների հակադրությունը, որը երկու ժողովուրդների նախորդ պատմության արհեստական վերակառուցման կամ վերակենդանացման պարզ հետևանք չէր: Շուշիի շուրջ անցյալում դրսևորված հակադրությունները ցույց են տալիս, թե ինչպես են հարաբերվում պատմական իրականությունը և պատմական հիշողությունը:

### Պատմության հակադիր մեկնաբանությունները

Ղարաբաղյան հակամարտությունում Շուշիի կարևորության պատճառը Լեռնային Ղարաբաղում և հարակից շրջատարածքում քաղաքի նշանակությունն էր: Շուշին Ռուսական կայսրության քաղաքի կարգավիճակ ստացավ 1846թ., իսկ մինչ այդ ուներ տևական պատմություն՝ որպես բնակավայր: Այս շրջանի բազմաթիվ խնդիրներ հայ և ադրբեջանական պատմագրություններում ներկայացված են հակառակ դիրքերից:

Հայ պատմագրության մեջ Շուշիի ձևավորման ժամանակագրությունն ունի հետևյալ փուլերը՝ բնակավայր (մինչև XVIIIդ.) - ամրոց (1720-ական թթ. հետո) - քաղաք (1846թ. հետո): Ադրբեջանական տեսությունը ամրոցի պատմությունը սկսում է 1752 կամ 1754թ. Փանահ Ալիի կողմից Շուշիի «հիմնադրում»-ով: Նույն անձը ներկայացվում է որպես «Ղարաբաղի խանության» հիմնադիր (*История Азербайджана, 1958, էջ 339; Эйвазов, 1956, էջ 11; Шушинский, 1968, էջ 4-10*): Խորհրդային շրջանի Ադրբեջանի միայն պաշտոնական աղբյուրներն էին որպես հիմնադրման տարեթիվ նշում 1840թ. (*Азерб. ССР, 1968, էջ 10*), իսկ հեղինակների մեծ մասն «ադրբեջանական» Շուշիի «ծագումը» վարում է 1750-ական թթ.:

Հիմնական հակասությունը, որ նկատվում է ոչ վաղ անցյալի հայ և ադրբեջանցի հեղինակների գործերում, կարելի է ներկայացնել որպես քաղաքի *ձևավորման* և *«ծագման»* տեսությունների հակադրություն: Դրանց մանրամասների և զարգացման փուլերի ստորև առաջարկվող համառոտ դիտարկումն առնչվում է Լեռնային Ղարաբաղի պատմությանը:

Րաֆֆու «Խամսայի մելիքությունները (1600-1827թթ.)» նյութեր հայ ժողովրդի պատմության համար» գործը կարելի է հղված տեսնել Շուշիի

պատմության մասին աղբրեջանական գրքերում, թեև հայ հեղինակն ամեն կերպ դատապարտում է ինչպես «ջառջի» Փանահին, այնպես էլ Շուշին նրան հանձնած Վարանդայի հայազգի մելիքին: Բացասական գնահատելով «թուրքերի» ներկայությունը «Ղարաբաղի սրտում»՝ Բաֆֆին Շուշին հիմնադրված է համարում 1750-ական թթ. (Բաֆֆի, 1991, էջ 50): Նրանից հետո նույն միտքը կրկնում են ժամանակի որոշ այլ հայ հեղինակներ (օր.՝ Լալայան, 1988, էջ 12):

Աղբրեջանցիներից Փանահ Ալիի կողմից Շուշիի հիմնադրման տեսությունը համեմատաբար ամբողջական տեսքով առաջին անգամ արտահայտվել է Ա. Ջևանշիրի 1901թ. "О политической существовании Карабахского Ханства в 1747-1805гг." աշխատանքում, որում ի մի են բերված նախորդ աղբրեջանցի հեղինակների հաղորդումները (ըստ Բակուր, 2000, էջ 67-77; Ս.Մկրտչյան, 1988, էջ 176-193):

1914թ. Լեոն առաջին անգամ անհամաձայնություն հայտնեց Շուշիի 1752թ. հիմնադրված լինելու տիրապետող կարծիքին: Ըստ նրա՝ ոչ թե Շուշին է ընդունել հարևան Շոշ գյուղի անունը, այլ՝ հակառակը, ինչը վկայում է քաղաքի վաղեմությունը (Լեո, 1973, էջ 267): Մինչ այդ արդեն հայտնի էր, որ Շոշ գյուղն Արցախի հնագույն բնակավայրերից է: Այս կարծիքը, թեև բավականաչափ փաստարկված չէր, սկիզբ դարձավ քաղաքի պատմության նոր՝ *ձևավորման* տեսության: Հետագայում այն ամրապնդվեց փաստերով, որոնք հայտնի չէին XIX. վերջի - XX. սկզբի պատմագրությանը, սակայն դրանց նկատմամբ հայ և աղբրեջանցի պատմաբանների վերաբերմունքը մնաց հակասական: XX. առաջին տասնամյակներին հայ-աղբրեջանական հարաբերությունների սրման, 1920թ. Շուշիի հայ բնակչության կոտորածի արդյունքում ստեղծվել էր մի վիճակ, երբ քաղաքի պատմության վերաբերյալ հայտնաբերվող փաստերը հետաքրքրություն էին ներկայացնում միայն հայերի համար և «չէին նկատվում» աղբրեջանցիների կողմից, այսինքն՝ քաղաքի ձևավորման տեսությունը ստացավ հայկական տեսության բնույթ:

Խորհրդային տարիներին Շուշիի պատմության հարցերը Հայաստանում արծարծվել են սահմանափակ, հայ ժողովրդի XVIII. պատմությանն առնչվող սկզբնաղբյուրների հրատարակմամբ: 1950-1980-ական թթ. առանձին հոդվածներում և ժողովածուներում հրատարակվեցին Մատենադարանի թիվ 8211, 4375 ձեռագրերի (1428թ. և 1575թ. ավետարաններ) հիշա-

տակարանները, թիվ 2734 ձեռագիրը (Հակոբ սարկավագ Պողոսեան Զավարեանցի «Պատմութիւն գավառին Արցախու») և խնդրին առնչվող այլ գրավոր աղբյուրներ: 1981թ. Շուշիի հյուսիսային պարսպի մոտ հայտնաբերվեց հինգ խաչքար, որոնցից երկուսը թվագրվում են XIIIդ. (**Ս.Մկրտչյան, 1988, էջ 174,176; Մ.Տարգիսյան, 1996, էջ 5**): Նույն ժամանակաշրջանում հայ պատմագրության մեջ լայնորեն շրջանառության դրվեցին նաև Ռուսական կայսրության հարավ-կովկասյան քաղաքականության հետ կապված արխիվային նյութեր (նամակներ, զեկուցագրեր, հուշագրություններ) և XVIII-XIXդդ. այլ փաստաթղթեր, որոնցում նշվում է նաև Շուշի ամրոցի գոյությունը մինչև 1750-ական թթ.:

Հայ հեղինակների մեծամասնության կարծիքը հիմնավորվում է ինչպես նշված գրավոր սկզբնաղբյուրներով և նորահայտ հուշարձաններով (**Բակուր, 2000, էջ 11-18; Սևյան, 1991, էջ 14-21; Ս.Մկրտչյան, 1988, էջ 173-178**),<sup>1</sup> այնպես էլ Շուշիի տարածքում առայժմ միակ հնագիտական տեղագնության արդյունքներով, որն իրականացրել է 1971թ. Ադր. ԽՍՀ ԳԱ հնագիտական արշավախումբը, քաղաքի արևելյան հատվածում: Հայտնաբերվել են քարեդարյան կացարանի և XI-XVIդդ. ամրաշինական կառույցի հետքեր (**Ավալով, 1977, էջ 26**): Այս փաստերին ծանոթ աղբյուրներից որոշ հեղինակներ ընդունում են, որ Շուշիի տարածքում 1752թ. առաջ եղել է բնակավայր (**Պյուշինսկի, 1968, էջ 8-10**), սակայն դա էականորեն չի փոխել «ծագման» տեսության կողմնակիցների կարծիքը:

Շուշիի պատմության XVIIIդ. առաջին կեսը և ավելի վաղ շրջանն այսօր ուսումնասիրում են միայն հայ հեղինակները: Ըստ նրանց, Շուշիի ամրոցը կառուցել կամ վերակառուցել է Ավան հարյուրապետը, որպես 1720-ական թթ. թուրքերի ներխուժման դեմ կարևորագույն հենակետ: Այդ ժամանակ Շուշին Արցախի սղնախներից գլխավորն էր՝ «Մեծ սղնախը» (**Մալխասյան, 1991, էջ 89-90; Քաֆֆի, 1991, քրմ. 1 ք գլ. XI**),<sup>2</sup> Արցախի փաստացի ռազմավարչական կենտրոնը: Ընտրությունը պայմանավորված էր Խաչենի, Վա-

<sup>1</sup> Մ.Տարգիսյանը նկատում է, որ «հավաստիորեն որոշված չէ, արդյոք այստեղ բնակավայր գոյություն ունեցել է մինչև XVIIIդ. սկիզբը» (**1996, էջ 5**)

<sup>2</sup> «Սղնախ»-ի առավել ճշգրիտ ձևակերպումը տալիս է Զ.Արզումանյանը. «Սղնախը բնական դժվարամատչելի դիրքում գտնվող մշտական գործող ամրացված վայր է կամ բնակավայր՝ նաև հարձակողական գործողություններ ծավալելու համար հարմար կոմունիկացիաներով» (**1982, էջ 84**)

րանդայի և Դիզակի մելիքությունների սահմանագլխին և Սյունիքից Արցախ ճանապարհի վրա Շուշիի բացառիկ ռազմավարական դիրքով:

Նույն պայմանների ազդեցությամբ այս բնակավայրը հենակետի վերածեց 1750-ական թթ. Լեռնային Ղարաբաղում աստիճանաբար ամրապնդվող թյուրքալեզու քոչվոր անասնապահական ցեղերի վերնախավը: Ընդ որում, Շուշին նրանց համար ուներ ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական մեծ նշանակություն, քանի որ գտնվում էր երկրագործ հայերով բնակեցված Ղարաբաղի նախալեռնային և լեռնային գոտիների միջև, այսինքն վերահսկում էր Մուղանի տափաստանի ձմեռանոցներից Կարկառի հովտով դեպի Լեռնային Ղարաբաղի և Սյունիքի ամառային արոտավայրեր տանող ամենաբանուկ ճանապարհներից մեկը (**Исмаил-заде, 1960, карты 1,2**):

Տարբեր պատճառներով, XVIIIդ. երկրորդ կեսն ադրբեջանական պատմագրության մեջ ունի հակասական մեկնաբանություններ:<sup>1</sup> Մասնավորապես, Շուշիի հարցում ադրբեջանցի հեղինակներն ուշադրություն չեն դարձնում դրա ադրբեջանական բնակչության ձևավորման տնտեսական նախապայմաններին, իսկ Փանահ Ալիի կողմից ամրոցի «հիմնադրումը» կարևորում են քաղաքական առումով: Այս դրույթն ամեն կերպ ընդգծվում է. բոլոր հեղինակները նշում են, որ Շուշին առաջին ադրբեջանական բնակավայրն էր Լեռնային Ղարաբաղի տարածքում, որն, ըստ ադրբեջանական աղբյուրների, «հիմնադրվել է անմարդաբնակ, կուսական անտառով ծածկված վայրում»: Հիշատակվում է, որ 1750-ական թթ. այն կոչվել է «Փանահաբաղ», այստեղ հաստվել է «փանաբաղ» անունով պղնձե դրամ: Միաժամանակ, հաճախ նշվում է, որ. «հարևան Շոշ գյուղի ազդեցությամբ պահպանվել է «Շուշի» անունը» (**Авалов, 1977, էջ 24**): Հատկապես շեշտվում է Շուշիի խանության գոյությունը, թեև ժամանակի աղբյուրներում այս անունով հայտնի կազմավորումը, անգամ կազմալուծված Պարսկաստանի ներքաղաքական պայմաններում, բավականին անկայուն միավոր էր. Շուշիի ընդամենը երեք խաներից երկուսը ձերբակալվել և մահապատժի են են-

---

<sup>1</sup> Սա բնորոշ է թերևս ամբողջ ադրբեջանական պատմագրությանը, ինչը նկատվել է տարբեր հետազոտողների կողմից (**Աբրահամյան, 2002:51-54**): Լեռնային Ղարաբաղի ուշ միջնադարյան պատմությունը, հատկապես՝ հողային և հասարակական հարաբերությունները, թերի է լուսաբանված նաև հայ պատմագրության մեջ (**Раффи, 1991:прим. 1 к гл. XXVII**)

թարկվել պարսիկների և ռուսների կողմից (1761 և 1806թթ.), իսկ երրորդի օրոք խանությունը լուծարվել է (1822թ.):

Այս իրավիճակը հասկանալի կդառնա կովկասյան մեկ այլ ազգամիջյան խնդրի՝ օս-ինգուշական հակամարտության հետ համեմատությամբ: Այստեղ վիճահարույց է Վլադիկավկազ քաղաքի հիմնադրման և պատկանելության հարցը: Հակադրությունն արտահայտվում է քաղաքի ներկա տարածքում եղած բնակավայրի երկու տարբեր էթնիկական անվանումների միջոցով «Ձաուջիկաու» գյուղ (օս.) - «Ձաուրովո» ստանիցա (ինգուշ.) (Цуциев, 1998, էջ 18, прим. 31): Օս հեղինակ Ա.Ցուցիկը ցույց է տալիս, որ այս տեղանունների, և դրանցից յուրաքանչյուրի առաջացման պատմությունների հակադրությունն արտահայտում է հյուսիս-կովկասյան երկու ժողովուրդների բնիկության տարբեր մոդելներ: Այս դեպքում պատմական երկու հակադիր տեղանունների առկայությունը հնարավոր էր, քանի որ երկու ժողովուրդներն էլ նստակյաց էին: Շուշիի դեպքում տեղանվան հայկական լինելը, մերձությունը հարևան «Շոշ» գյուղանվանը, արհեստական են դարձնում «Փանաբադ» տեղանվան հաճախակի հիշատակումը ադրբեջանցի հեղինակների գրքերում: Նույնը վերաբերում է նաև քաղաքի անվան «Շուշա» ադրբեջանական հնչյունադարձությամբ տարբերակին (հմմտ.՝ «Սուխումի»-ն ըստ **Бахиа-Окрушвили, 2002; Кварчия, 1989; Попхадзе, 2002**):

Որքան էլ տարբեր են Շուշիի ձևավորման-ծագման տեսությունները, երկուսն էլ կապված են Լեոնային Ղարաբաղում ադրբեջանցիների ներկայության ժամանակի կամ վաղեմիության հետ: Սա ինքնին պատմագիտական դժվար լուծելի խնդիր չէ, քանի որ կապված է ադրբեջանցիների նստակեցության անցման ժամանակի որոշման հետ, ինչն արդեն մանրամասն ուսումնասիրված է. ադրբեջանցիները Լեոնային Ղարաբաղում նստակեցության են անցել 1752թ. Շուշիի ենթադրյալ «հիմնադրում»-ից ավելի ուշ՝ XIXդ. կեսերից մինչև 1920-30-ական թթ. (**Исмаил-заде, 1960, էջ 96-99; Ямсков, 1998, էջ 170-174**): Շուշիի «ծագման» ադրբեջանական տեսությունը փորձում է մոտ մեկ հարյուրամյակով «հնացնել» նստակեցության անցման շրջանը:

Ա.Յամսկովը նկատում է, որ Լեոնային Ղարաբաղի նկատմամբ ադրբեջանցիների «պատմական իրավունքը» սովորաբար հիմնվում է Ղարաբաղի խանության քաղաքական պատմությանը XVIIIդ. և Ռուսաստանին



նրա միացման նախօրյակին, քանի որ խանության կառավարիչներն ադրբեջանցիների նախնիներն էին»։ (Ямсков, 1998, էջ 171)։ Ադրբեջանցի պատմաբան Իսմաիլ-գադեն, ներկայացնելով Շուշիի խանի հանդեպ հպատակների հարկային պարտավորությունները, վկայում է ամրոցում ադրբեջանցիների բնակության սեզոնային բնույթն ընդհուպ մինչև 1830-ական թթ. (Исмаил-заде, 1960, էջ 130-135; М.Саркисян, 1996, էջ 8)։

Հետաքրքիր է, թե 1988թ. առաջ Շուշիի անցյալի ուսումնասիրությունն ինչպես էր համատեղվում 1960-1980-ական թթ. Ադրբեջանում տիրապետող «ադվանսական» տեսությանը։ Հիշենք, որ հենց «ադվանսական» տեսության դեմ էր հայ պատմաբանների հրապարակումների մեծ մասը 1988թ. հետո։ Դրանցում արդեն քննադատվել է ադրբեջանցիների նախնիների քոչվորության բացասումը (Аракелян, 1991; Мурадян, 1990, էջ 9-52, 100-119; հմմտ.՝ Ямсков, 1999, էջ 170-173)։<sup>1</sup> Շուշիի ձևավորման XVIIIդ. երկրորդ կեսի իրական պատմությունը, ներառյալ այն փաստը, որ Փանահ Ալին ձեռք էր բերել ամրոցը Վարանդայի հայազգի մելիքից և 1750-ական թթ. վերակառուցել այն, լիովին չէր տեղավորվում մի տեսության մեջ, որով ենթադրվում էր Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների նախնիների տեղաբնիկ լինելը։ Այս ներքին հակասությամբ հանդերձ, «ադվանսական տեսությունը» և Շուշիի «ծագման» ավելի վաղ ձևավորված վարկածը համատեղվում էին Ադրբեջանի պատմության դասագրքերում։ Վերջին տասնամյակում, Ադրբեջանում թյուրքական ինքնության արթնացմամբ, բազմաթիվ կեղծ փաստարկներից կառուցված «ադվանսական» տեսությունն արագորեն փլուզվեց և 1990-ականներին արդեն նվազագույն դեր ուներ ադրբեջանցիների ինքնության պատմողական բաղադրիչների շարքում (Աբրահամյան, 2002, էջ 51-54; Tohidi, 1997, էջ 83)։ Այս դեպքում, Շուշիի «ծագման» ադրբեջանական տեսությունը, մնալով XIXդ. «նախաադվանսական» պատմագրության շրջանակներում, ըստ երևույթին, պահպանում է Ղարաբաղյան հակամարտությունում ադրբեջանցիների գլխավոր գաղափարախոսական կռիվներից մեկի նշանակությունը։

---

<sup>1</sup> Օրինակ վերոհիշյալ ադրբեջանցի պատմաբան Ջ.Իսմաիլ-գադեն այդ տարիներին ստիպված էր հիմնական աշխատանքները հրատարակել Մոսկվայում (Ямсков, 1998, էջ 173)։

## Քաղաքը սահմանով և առանց սահմանի

1805թ. ռուսական կայսզորի հաստատումից հետո և 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Շուշին Հարավային Կովկասում Ռուսաստանի հիմնական ամրոցներից էր: Նրա ռազմավարական նշանակությունը կարևորել է Ռուսաստանի կովկասյան պատերազմների պատմաբան Պոտտոն. «Ով տիրում է Շուշիին, նա տիրում է Ղարաբաղին»: XXդ. սկզբի և 1988թ. իրադարձությունները ցույց տվեցին, որ վերոհիշյալ ձևակերպումն արդիական է դառնում Ղարաբաղում հայերի և ադրբեջանցիների միջև հակամարտության դեպքերում:

1816թ. չեղյալ հայտարարվեցին Հարավային Կովկասի, այդ թվում Շուշիի խաների քաղաքական իրավունքները: Լեոնային Ղարաբաղում հողային իրավունքների շուրջ մի քանի տասնամյակ դատավարություններ էին ընթանում մահմեդական խաների ու բեկերի և հայ մելիքների ու Հայ Առաքելական եկեղեցու միջև:

Ռուսական կայսզորի տեղակայումը, շրջատարածքում կայուն խաղաղության հաստատումը տնտեսական զարգացման նախադրյալներ ստեղծեցին, որոնք նպաստեցին Շուշիի քաղաքային գործառույթներ ձևափոխելու: 1840թ. այն դարձավ համանուն գավառի կենտրոն, իսկ 1846թ. ստացավ քաղաքի կարգավիճակ Շամախիի, այնուհետև՝ Ելիզավետպոլի նահանգի կազմում: Ավելի վաղ՝ 1830թ., Շուշին դարձել էր Գանձասարի կաթողիկոսի իրավահաջորդ ճանաչված Արցախի թեմակալ արքեպիսկոպոսի նստավայրը:

XIXդ. առաջին կեսին Շուշին ամրոցից վերածվեց բնակավայրի, որում ընթանում էին հայերի և նստակեցության անցնող ադրբեջանցիների համար հավասարապես կարևոր քաղաքայնացման գործընթացներ: Դրանք լայն ազդեցություն ունեցան պատմական Սյունիքի և Արցախի տարածքում: Հաջորդ կես դարում Շուշին աստիճանաբար դարձավ Հարավային Կովկասի խոշորագույն քաղաքներից մեկը:

Այս դերն ու դրանից բխող մշակութային նշանակությունը, որ քաղաքն ուներ XIXդ. և պահպանեց մինչև 1920թ., պայմանավորված էր Հարավային Կովկասում ռուսական ազդեցությամբ: Քաղաքին ուղղված «մշակութի կենտրոն» և համարժեք բազմաթիվ այլ որակումներն ընդհանուր են հայ և ադրբեջանական գրականության մեջ (օր.՝ **Բակուր, 2000, էջ 187; Шущинс-**

**кнй, 1968, էջ 28, 60-63):** Հաճախակի նշվում են այս ժամանակաշրջանի Շուշիում ծնված, ուսում ստացած, կամ պարզապես՝ գործունեություն ծավալած ականավոր անձինք, հայեր կամ ադրբեջանցիներ, սակայն նրանց անունները ներկայացվում են ընտրաբար, միշտ հիշում են միայն յուրաքանչյուրին, իսկ քաղաքի դերը հարևան ժողովրդի մշակույթում մոռացվում է կամ նվազեցվում:

Մոռացումը պատմական հիշողության կարգավորման հիմնական եղանակն է, որով գտվում է իրական անցյալը, տվյալ դեպքում՝ Շուշիում հայերի և ադրբեջանցիների համատեղ բնակության պատմությունը: Մինչև 1988թ. խորհրդային հայ և ադրբեջանական պատմագրության մեջ Շուշիի պատմության հիմնական մոռացված էջը 1920թ. մարտի վերջի - ապրիլի սկզբի ժամանակահատվածն էր, երբ, ըստ տարբեր աղբյուրների, սպանվեց 5-10 հազար հայ, հրկիզվեց ողջ հայկական թաղամասը: Մառախուղի և ծխի տակ քողարկվելով, քաղաքից կարողացավ դուրս գալ 6-7 հազար շուշեցի հայ (**М.Саркисян, 1996, էջ 30; Հայերի կոտորածները, 2003, էջ 458-460**):<sup>1</sup>

Այս պատմական փաստի շրջանցման հիմնական պատճառը ԽՍՀՄ կազմավորումից հետո նախորդ ազգամիջյան բախումների մասին գրելու գաղափարախոսական արգելքն էր, սակայն Շուշիի դեպքում այն գործեց հոգուտ ադրբեջանցիների:<sup>2</sup> Նրանց հիմնական հրատարակությունները ժամանակագրորեն համընկան 1950-ական թթ. սկսված Շուշիի նոր քաղաքաշինությանը: Դրանց վերլուծությունը թույլ է տալիս դիտարկել ադրբեջանցիների կողմից Շուշիի XIXդ. անցյալի «յուրացման» հիմնական եղանակները:

Եղանակներից առաջինը կարելի է անվանել «ժողովրդագրական»: Շուշիի բնակչության մասին առաջին տվյալները վերաբերում են 1823թ., որոնց համաձայն, ամբողջում բնակվում էր 8,3 հազար մարդ՝ 41% հայ և 59% թաթար ու քուրդ (**Սարգսյան, 1990**): Ադրբեջանցի հեղինակներն, առանց

<sup>1</sup> *Չոհվածների և բռնագաղթածների մասին քանակական տվյալները մոտավոր են, քանի որ պարզ չեն մինչև 1920թ. մարտը Շուշիից հայերի արտագաղթի չափերը, որը հարուցված էր անգլիական միսիայի օժանդակությամբ գործող ադրբեջանական ռազմական վարչության կողմից (Արամայիս, 1993; Հայերի կոտորածները, 2003, էջ 170, 186, 353; Սարգսյան, 1990):*

<sup>2</sup> *ԽՍՀՄ-ից դուրս Թուրքիայում հայերի ցեղասպանության՝ Մեծ եղեռնի պատմագիտական ուսումնասիրությունը հնարավոր դարձավ 1960-ական թթ.: Ժամանակակից Ադրբեջանի տարածքում 1918-1920թթ. հայերի ջարդի դեպքերը և ծավալը Հայաստանում հանրությանը ներկայացվեցին միայն 1988թ. հետո (վերջերս հրատարակված արխիվային փաստաթղթերը տե՛ս Ռ.Գրիգորյան, 1996; Հայերի կոտորածները, 2003):*

որն է հիմնավորման, նույն հարաբերակցությունը վերագրում են քաղաքի պատմության հետագա շրջանին (**Шушинский, 1968, էջ 57-59**): Ըստ «Կովկասյան տարեցույց»-ի և ցարական Ռուսաստանի պաշտոնական վիճակագրական աղբյուրների, քաղաք դառնալուց հետո Շուշիի բնակչությունը կազմել է. 1851թ.՝ 12724, 1855թ.՝ 15194, 1897թ.՝ 25881, 1905թ.՝ 33187, 1916թ.՝ 43869 մարդ: Այդ ժամանակահատվածում Շուշիում հայերը կազմել են բնակչության մեծամասնությունը, մոտ 56%, իսկ մահմեդականները (թաթարներ և քրդեր)՝ մոտ 41% (**Սարգսյան, 1990; М.Саркисян, 1996, էջ 8, 11, 15, 19, 29-30**): Այստեղ ապրել են նաև մոտ 2000 ռուսներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ:

Քաղաքի ժողովրդագրական այս պատկերն ադրբեջանցի հեղինակներն աղճատում են, փորձելով ստեղծել Շուշիի մի էթնիկության տպավորություն, չնայած ռուսական վիճակագրությունը գրանցել է քաղաքում մահմեդականների գերակշռության ընդամենը տասնամյա մի ժամանակահատված՝ 1823-1833թթ.: Կարելի է ենթադրել, որ Շուշիի հայ բնակչությունը նվազել է 1795-97թթ. Ղարաբաղի հայ բնակչության մի մասի արտագաղթից հետո, բայց 1830-ական թթ. այն կրկին ավելացել է (**Բակուր, 2000: 105-107, 122-127, Սևյան, 1991, էջ 37-38, 42-45**):

Ժողովրդագրական տվյալների խեղաթյուրման միջոցով քաղաքի «ադրբեջանացման» մյուս տարբերակով ընդգծվում է, որ շուշեցի ազնվականների կազմում ադրբեջանցիները ճնշող մեծամասնություն էին (**Шушинский, 1968, էջ 32, 57**): Այս փաստը չի բացատրվում, այլ ներկայացվում է որպես քաղաքի ադրբեջանական լինելու վկայություն: Մինչդեռ համապատասխան վիճակագրության, այդ թվում՝ առաջին հայ ազգագրագետներից Եր.Լալայանի 1895-1896թթ. ուսումնասիրության արդյունքների ներառումը, թույլ կտար նկատելու առևտրի և արհեստագործության ոլորտներում հայերի եռակի գերակշռությունը քաղաքի բնակչության հիմնական մասը կազմող դասերում (**Լալայան, 1988, էջ 46-89; Г.Саркисян, 1992; М.Саркисян, 1996, էջ 11, 15, 19, 29-30**):

Յուրացման եղանակներից մյուսը պահպանված հուշարձանների ոճաբանական «վերլուծությունն» է, որը տարվում է ճարտարապետության հետ ուղղակի չառնչվող էթնիկական սկզբունքով: Է.Ավալովը քաղաքի ամենավաղ բնակարանի տեսակը՝ գլխատունը, նմանեցնում է «տեղական դարա-

դամին կամ դարբագային», ինչի օրինակները բերում է հարևան հայկական գյուղերից, դրանք անվանելով ադրբեջաներեն «Դաշալթի» (Քարինտակ), «Կալադարասի» (Բերդաձոր): XIXդ. սկզբի որոշ աշխարհիկ շինություններում նա զուգահեռներ է «հայտնաբերում» Նախիջևանի և Ադրբեջանի հյուսիսի քաղաքների հետ (Նուխի, Շամախի), առանց նշելու, որ դրանք նույնպես գլխավորապես հայաբնակ էին (Авалов, 1977, էջ 22-38, 40, 69-75): Հեղինակը, Ադրբեջանի սահմաններից դուրս գալով, Շուշիի մեջիթները համեմատում է Միջին Ասիայի և հյուսիսային Իրանի նմանատիպ կառույցների հետ, իսկ հայկական շինարարական արվեստի ակնհայտ ազդեցությունն անտեսում է, թեև այն կարևոր նշանակություն ունի Շուշիի մահմեդական պաշտամունքային կառույցներին հատուկ ճարտարապետությունը բնութագրելու համար (Ш.Мкртчян, 1988, էջ 194):

Շուշիում 1970-ական թթ. պետականորեն պահպանվում էր պատմության հուշարձանի կարգավիճակ ունեցող 207 շինություն և արձան: Դրանց ցանկը որոշված էր ներքին սահմանի անտեսմամբ. ողջ ներքին հատվածը, որը պատմական արգելոցի կարգավիճակ ուներ, համարվում էր ադրբեջանական: Հայկական պահպանված հինգ եկեղեցիներից այդ ցուցակում ընդգրկված էր միայն Ս.Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին: Ռեալական դպրոցի, Մարիամյան օրիորդաց վարժարանի, Ժամհարյանների հիվանդանոցի և մոտ երկու տասնյակ մասնավոր շենքեր նույնպես չունեին հուշարձանի կարգավիճակ: Շուշիում պահպանված հայկական հուշարձանների նկատմամբ ադրբեջանցիների վերաբերմունքում, Շ. Մկրտչյանը նկատում է «քաղաքի պատմությունը և ճարտարապետությունը «արբագրելու», ցանկալին իրականի տեղ ներկայացնելու ակնհայտ ձգտում» (Ш.Мкртчян, 1988, էջ 190, 193-194): Մինչդեռ պահպանված շատ շինություններ, այդ թվում՝ քաղաքի պարիսպը, նմանություն ունեն Արցախի, Սյունիքի և Նախիջևանի XVIIIդ. հայկական շինարարական արվեստի նմուշների հետ: Ավետարանոց գյուղի շինարարների մասնակցությունը Շուշիի ամրաշինական աշխատանքներին վկայված է վիմագիր արձանագրությամբ (Ш.Мкртчян, 1988, էջ 176-177):

XVIIIդ. երկրորդ կեսի և XIXդ. Շուշիի ներքին բաժանման մասին վստահելի տեղեկություններ են պահպանվել մեծ թվով հուշագրություններում և ուղեգրություններում, Մոսկվայի Կենտրոնական պետական ռազմապատ-

մական արխիվում (**ՇԳՎԻԱ**, Շուշիի գլխավոր հատակագծերը), պարբերական մամուլում, լուսանկարներում և այլն: Այս աղբյուրները ներկայացված են հայ հեղինակների աշխատանքներում (**Ս.Մկրտչյան, 1988, էջ 180-181; Մ.Տարկոսյան, 1996**): Աղբյուրների հեղինակ Է.Ավալովը, օգտվելով վերոհիշյալ աղբյուրների մեծ մասից, շրջանցում է քաղաքի բնակչության երկէթնիկությունը քաղաքաշինության պատմության մասին գլխում: Քաղաքի արևմտյան՝ հայկական մասը ներկայացվում է որպես «**западная нагорная часть**», ձևավորված 1850-ական թթ. հետո, որի ճարտարապետական կառույցներից. «Ցավոք, պահպանվել է միայն մի քանիսը, այն էլ կիսավեր» (**Ավալով, 1977, էջ 38-43**): Այդ նույն աշխատանքում քաղաքի XIXդ. հատակագծերը ներկայացվում են հատվածաբար, միայն աղբյուրներից համարվող թաղամասերը ցույց տալու նպատակով:

Ըստ աղբյուրների հեղինակների, քաղաքն ունեցել է մեկ կենտրոն՝ Փանահի նստավայրը և կից «Չուխուր» («Փոս») թաղը, որտեղից տարածվել են մահմեդականների թաղամասերը (**Ավալով, 1977, էջ 38-39**): Քաղաքագոյացման հայկական տարբերակի համաձայն, Շուշիի արևմտյան (հայկական) և արևելյան (աղբյուրներից) հատվածները ձևավորվել են հին ամրոցի տարածքում՝ 1750-ական թթ.: Դրանց ծավալումն սկսվել է երկու կենտրոնից՝ Փանահ Ալի խանի և Վարանդայի մելիք Շահնազար II-ի նստավայրերից: Հետագայում դրանք տեղաշարժվել են դեպի արևմուտք՝ սարահարթն ի վեր (**Մ.Տարկոսյան, 1996, էջ 8-9**):

Քաղաքի միակենտրոն և երկկենտրոն տեսակետների հակադրությունը շարունակվում է ազգային սկզբունքով առաջացած ներքին սահմանի շուրջ: Է.Ավալովն այդպիսի սահման չի տեսնում՝ «Որևէ տեսանկյունից սահման արևմտյան և արևելյան թաղամասերի միջև չկար, բաժանված էին պայմանականորեն, ինչպես և մյուս թաղամասերը»: Միակ առանձնահատկությունը, որ քաղաքի արևմտյան մասում նկատում է աղբյուրներից հեղինակը՝ փողոցների ավելի ուղղաձիգ հատումներն են, դրանց շառավղաձև հատակագիծը, ինչը համարում է հետևանք 1850-ական թթ. ռուսական նախագծով կառուցապատման (**Ավալով, 1977, էջ 38-47**):

Մ.Սարգսյանը մանրամասն ներկայացնում է քաղաքի հայկական հնագույն թաղամասերը, որոնք հիմնադրել են 1750-ական թթ. Արցախի գավառների, Նախիջևանի Ղազանչի (Շահկերտ) գյուղի և Ագուլիս քաղաքի

վերաբնակիչները (**Բակուր, 2000, էջ 72-76; Յ.Մկրտչյան, 1988, էջ 176-178; Մ.Տարկիսյան, 1996, էջ 6-8**): XIXդ. Շուշիում կար մոտ երեք տասնյակ թաղամաս, որոնցից տասնուորը՝ հայկական: Դրանք կուտակային թաղեր էին, տների անկանոն դասավորությամբ (**Լալայան, 1988, էջ 24-25**): Թաղերն անվանվել էին հայրենակցական սկզբունքով՝ Ջրաբերոցոց, Ղազանչեցոց, Մեղրեցոց, Ագուլեցոց, որևէ անձի՝ Մելիքենց, Աղաբեկի ձոր, կամ տեղանքի անունով՝ Ներքին, Քամու ջաղացի, Սարի, Հին հանգստարանի: Հայաբնակ թաղերը կազմում էին քաղաքի տարածքի շուրջ 65%-ը (**Մ.Տարկիսյան, 1996, էջ 19**):

Հայ հեղինակները ոչ միայն ընդունում են քաղաքում աղբբեջանական հատվածի գոյությունը, այլև՝ հստակորեն նշում դրա սահմանը: Ազգամիջյան հարաբերությունների հետ կապված, այն որոշ փոփոխություններ է կրել բնակչության աճին և կառուցապատմանը զուգահեռ: Դեռևս 1840թ. վկայված է հակասություն հայերի և աղբբեջանացիների միջև, որի արդյունքում հայկական թաղերից մեկի բնակիչները ռուսական իշխանության հրահանգով Ջրաբերոցի դարպասի մերձակայքից տեղափոխվել են Շուշիի սարահարթի արևմտյան եզրը: Հայտնի է, որ այս տեղաշարժը կատարվել է հայերին աղբբեջանացիներից տարանջատելու նպատակով (**Բակուր, 2000, էջ 174-178; Մ.Տարկիսյան, 1996, էջ 12-13**): Հայկական և աղբբեջանական հատվածների սահմանը հերթական անգամ փոխվեց 1905-1906թթ. քաղաքում ազգամիջյան բախումների հետևանքով: Կենտրոնական մասում և հարավում տեղի ունեցած զինված ընդհարումների արդյունքում սպանվեցին տասնյակ մարդիկ, հրկիզվեց հայերի 300 և աղբբեջանացիների 80 տուն, հասարակական շենքեր հայկական հատվածում:

Շուշիի 1920թ. մարտ-ապրիլի ողբերգությունը ներկայացված է հայ հեղինակների մեծամասնության աշխատություններում (**Սևյան, 1991, էջ 56-59; Բակուր, 2000, էջ 224-239; Յ.Մկրտչյան, 1988, էջ 188-193; Յ.Մկրտչյան, Ս.Դավթյան, 1997**): Դրա հետևանքով արևմտյան և արևելյան, կամ վերին և ներքին քաղաքամասերի միջև պատմականորեն ձևավորված սահմանը դարձավ սահման ավերակների և բնակելի հատվածի միջև: Ավերածություններն այնքան մեծ էին, որ քաղաքից աստիճանաբար արտագաղթեց նաև աղբբեջանացիների մեծամասնությունը: Մ.Սարգսյանը ներկայացնում է Շուշիի բնակչության թվի կտրուկ նվազումը 1920թ. կոտորածից և ավե-

րումից հետո. «1921թ. Շուշիում մնացել էր ընդամենը 9223 մարդ: 1923թ.՝ 6976, իսկ 1925թ.՝ 5000: 1920-ական թթ. վերջին բնակչությունը նվազեց մինչև 3000 մարդ» (1996, էջ 30): Ըստ Հ.Սարգսյանի, 1921թ. Շուշիում հայերը կազմում էին բնակչության միայն 3%-ը (1990, էջ 57):

### Շուշին ընդդեմ հայերի

ՌԿԿ Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ, «մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության, վերին և ներքին Ղարաբաղերի միջև տնտեսական կապերի» ապահովման նպատակով, ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Որոշումը հակասական մեկնաբանությունների առարկա է հայ և ադրբեջանական պատմագրության մեջ: Երկուսում էլ այն գնահատվում է բացասաբար և կապում Ի.Ստալինի կամայականության հետ: Հայերը դատապարտում են ԼՂԻՄ կազմավորումը որպես հայաբնակ երկրամասը Ադրբեջանի կազմում թողնող քայլ, իսկ ադրբեջանցիներն անարդարացի են համարում հայերին ինքնավարություն տալը (մանրամասն տե՛ս Ямсков, 1998, էջ 176-186; Nasibli, 2000):

Մեծ մասամբ ավերված և բնակչության հիմնական զանգվածը կորցրած Շուշին չէր կարող լինել մարզկենտրոն, ինչպես նախատեսվում էր Կավբյուրոյի որոշմամբ: 1923թ. ԼՂԻՄ վարչական կենտրոն դարձավ Շուշիից 12 կմ հեռու գտնվող Ստեփանակերտը: 1930թ. վարչատարածքային բաժանմամբ մարզում ձևավորված հինգ շրջաններից մեկը Շուշիի շրջանն էր: Այն ուներ ընդամենը 289 ք.կմ տարածք, (ամբողջ ԼՂԻՄ-ը 4400 ք.կմ), որի մեջ, բացի Շուշի քաղաքից, ներառված էր յոթ հայկական և երեք ադրբեջանական գյուղ: 1965թ. կար արդեն 27 գյուղ, որից 21-ն՝ ադրբեջանական (Աзерб.СССР, 1968, էջ 113): Վերջիններս հիմնականում փոքրաթիվ բնակչությամբ նախկին «յալլաղ»-ներ էին, որոնք գյուղ դարձան 1930-ական թթ., Ադրբեջանում քոչվորության վերացման պետական քաղաքականության արդյունքում:

Շրջկենտրոնի կարգավիճակ ստացած Շուշիում բնակչությունն սկսեց ավելանալ: 1940-ականների սկզբին Շուշիի հարավ-արևելյան մասում կառուցվեցին առաջին նոր շինությունները: 1949թ. սկսվեց Շուշիի ավելի ընդարձակ վերակառուցման նախագծային աշխատանքը, որն ուղեկցվում էր քաղաքի առողջարանային հնարավորությունների գնահատման հետա-



գոտություններով (**Эйвазов, 1955, էջ 9**): 1950-1960թթ. արդեն ընթացքի մեջ էին քաղաքաշինական ծրագրեր:

Դրանց ընթացքում քաղաքում ոչ միայն հարթեցվում էին ավերակները, այլև քանդվում կամ ձևափոխվում էին 1920թ. արհավիրքները վերապրած վերջին հայկական պատմական շինությունները: Այս գործողություններում հայերը տեսնում էին արևելյան հատվածում գտնվող երկու մզկիթները, թուրքական բաղնիքը և մահմեդական մյուս շինությունները, ինչպես նաև XXդ. երրորդ քառորդում բացված աղբբեջանցի մշակույթի գործիչների տուն-թանգարաններն ու հուշարձանները Շուշիի պատմության միակ հուշարձաններ դարձնելու և հայկական անցյալը քողարկելու միտում: Գերեզմանոցների քողարկումը ծառատնկմամբ դիտվում էր որպես քաղաքի հայկական անցյալի դեմ ուղղված ձեռնարկում (**Ш.Мкртчян, 1988, էջ 176-194; М.Саркисян, 1996, էջ 30-31**): Նույնիսկ եթե Շուշիի քաղաքաշինական ծրագիրը հաշվի էր առնում միայն առողջարանային պայմանները, պատմական անցյալի անտեսումը դեռ մինչև 1988թ. բացասաբար էր գնահատվում Ղարաբաղի հայերի կողմից (**Մելիք-Շահնագարյան, 1998, էջ 10-11**):

Նոր պայմաններում Շուշիի քաղաքայնացման առանձնահատկություններից էր կրկին աճող բնակչության տարաբնակեցումը խառը, ոչ էթնիկական սկզբունքով: Մինչև 1988թ. բնակչությունն աճեց, դառնալով 13500 մարդ: Դրա մեծ մասն աղբբեջանցիներ էին: Հարևան գյուղերից Շուշի վերաբնակված հայերը բնակչության թվով երկրորդ խումբն էին և կազմում էին 15% կամ մոտ 2200 մարդ:<sup>1</sup>

ԼՂԻՄ աղբբեջանական փոքրամասնության կողմնորոշումն ընդդեմ ԼՂԻՄ բնակչության մեծամասնության որոշման արտահայտվեց արդեն 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդում: ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միանալու որոշմանը դեմ քվեարակեցին միայն Շուշի քաղաքից և շրջանի աղբբեջանաբնակ գյուղերից ընտրված աղբբեջանցի պատգամավորները, որոնք փոքրամասնություն էին: ԼՂԻՄ, իսկ հետագայում ԼՂՀ կարգավիճակի բոլոր քննարկումներում, այդ թվում նաև միջազգային բանակցություններում այս բնակչությունը Աղբբեջանի կողմից ներկայացվում է որպես «Լեռնային Ղարաբաղի աղբբեջանցիների հա-

<sup>1</sup> *Աղբբեջանցիները հետագայում Շուշիում հայերի թիվը ներկայացնում են 290 հոգի և հղում հայերի հիմնական մասի բնագաղթից հետո 1989թ. հունվարին կատարված մարդահամարը*

մայնք» և օգտագործվում որպես խաղաքարտ ընդդեմ «հայկական համայնքի» (Ուլուբաբյան, 1997, էջ 415-446, 795-797, 802-804; Nasibli, 2000): Հակամարտության սկզբում դրսևորվեց Շուշիի առանձնահատկությունը նաև նրանում, որ քաղաքը գերիշխող դիրք ուներ շրջակա հայկական բնակավայրերի և Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող ճանապարհի նկատմամբ:

Ղարաբաղյան հակամարտության սկզբից Ադրբեջանում ծավալված հակահայ գործողությունների շարքում, 1988թ. մարտին սկսվեց հայ բնակչության արտաքսումը Շուշիից: Բռնագաղթի ընթացքում սպանվեց մեկ հայ տղամարդ (Մելիք-Շահնազարյան, 1998, էջ 47): Շուշիից հայերի բռնագաղթը 1988-1989թթ. «բնակչության փոխանակություն» կամ «էթնիկ զտում» անվանումներով հայտնի հակամարտ գործողության առաջին դեպքն էր ԼՂԻՄ տարածքում:

Շուշին ուղղակի կապ ունի նաև հետագա հակահայ գործողությունների հետ: 1988թ. նոյեմբերին Ասկերանի շրջանի Շոշ գյուղին պատկանող «Խաչին տափ» հանդակում ԼՂԻՄ իշխանությունները նախատեսում էին կառուցել պանսիոնատ՝ Սումգայիթից բռնագաղթած հայերի համար: Այս վայրը, որը Շուշիի դիմաց էր, անջատված մոտ 400մ խորությամբ կիրճով, ադրբեջանցիներն հայտնի էր «Թոփխանա», այսինքն՝ «թնդանոթի տեղ» անունով:

Նախատեսվող շինարարության դեմ ցույցերի խոշոր ալիք բարձրացավ Բաքվում և Ադրբեջանի այլ քաղաքներում, որոնցում հայտարարվում էր «Թոփխանայի» կարևորությունը որպես բնապահպանական արգելոց: Ցույցերի իրական պատճառը տեղանքի ռազմավարական կարևոր դիրքն էր, որը 1795 և 1826թթ. պարսկական պաշարումների ժամանակ ծառայել էր որպես մարտկոց, քանի որ Շուշիի վրա գերիշխող միակ բարձունքն էր շրջակայքում: «Բնապահպանական» պատրվակով սկսված ցույցերը 1988թ. նոյեմբերին վերածվեցին Ադրբեջանում ապրող հայերի դեմ ուղղված զանգվածային բռնությունների և արտաքսման (Մելիք-Շահնազարյան, 1998, էջ 27, Abrahamian, 1997, էջ 63-64):

Այս գործողություններով Շուշիի հնագույն ամրոցային գործառույթն աստիճանաբար դարձավ իրական և Ղարաբաղի հայերը քաղաքը բնութագրեցին որպես «ադրբեջանական կրակակետ»: 1990թ. հունվարից, ԼՂԻՄ-ում

ԽՍՀՄ կենտրոնական իշխանության հատուկ կառավարման ռեժիմի պայմաններում, Շուշիի բանտը «հասարակական կարգը խախտողների» կալանավայր էր, որտեղ բանտարկվում էին ազգային շարժման մասնակիցները: Ադրբեջանցիներից կազմված անձնակազմը հատկապես դաժան կտտանքների և բռնության է ենթարկել հարյուրավոր հայերի (**Սողոմոնյան, 1994, էջ 28-37, 66**):

Մինչև 1991թ. աշունը ԽՍՀՄ ներքին գորքերի ներկայությունը հակամարտության գոտում թույլ չէր տալիս, որ արդեն հարյուրավոր զոհեր խլած գործողությունները վերաճեն պատերազմի: ԽՍՀՄ փլուզմամբ Ադրբեջանի և ԼՂՀ միջև պատերազմն, այնուամենայնիվ, սկսվեց և դրանում Շուշին դարձավ ադրբեջանցիների հիմնական ռազմական հենակետը ԼՂՀ տարածքում: Քաղաքի տիրապետող դիրքը շրջակայքի նկատմամբ ադրբեջանցիներին հնարավորություն էր տալիս կիրառելու հեռահար զենքի ժամանակակից տեսակներ: Մարտկոցները գրեթե անդադար կրակի տակ էին պահում Ստեփանակերտը և մերձակա գյուղերը: 1992թ. փետրվարի 13-ից մինչև մայիսի 9-ը լինում էին օրեր, որ Շուշիից 300-350 ծանր ռեակտիվ արկ էր արձակվում 80 հազարից ավելի բնակչությամբ Ստեփանակերտի ուղղությամբ: ԼՂՀ մայրաքաղաքի բնակչությունն այդ ամիսներին ապրում էր նկուղներում: Հրետանային և օդային հարձակումներին զարնանն ավելացան Շուշիի զորակայանից Ստեփանակերտի ուղղությամբ Կարկառի կիրճը հատող կամ շրջանցող հետևակային զրոհները: Առկա էր սովամահության վտանգը՝ Ղարաբաղը կատարյալ շրջափակման մեջ էր, քանի որ Շուշին փակում էր նաև Հայաստանի հետ հաղորդակցության միակ ճանապարհը:

Պատերազմում Շուշիի դերն արդեն մանրամասն ներկայացված է մի շարք հեղինակների աշխատանքներում (**Բալայան, 1995, էջ 134-158; Եղիազարյան, 1995; Հասրաթյան, 2001**): Մոտավոր նշվել է այն վնասը, որ պատճառել են Շուշիից գործող ադրբեջանական զինված ուժերը մերձակա հայկական բնակավայրերի և, հատկապես՝ Ստեփանակերտի բնակչությանը (**Մելիք-Շահնազարյան, 1998**): Հատուկ ուշադրության է արժանացել նաև Շուշիի դեմ հայերի ռազմական գործողությունը որպես լեռնային պայմաններում հաջող հարձակողական գործողության օրինակ (**տե՛ս Մ.Հարությունյան, 2001**): Այս աշխատանքները վկայում են, որ ընթացող

պատերազմում Շուշիի ռազմական գրավումը միակ հավանական ելքն էր Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության պահպանման: Շուշիի ազատագրումից միայն երկու տարի անց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև հաստատվեց զինադադար, որը մինչ այժմ հայերի անվտանգության միակ քաղաքական երաշխիքն է: Հայերի վերահաստատումը Շուշի քաղաքում ընթանում է դեռ չկարգավորված հակամարտության պայմաններում:

## ԳԼՈՒԽ 11

### ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ (1992-2002թթ.)\*

1992թ. հետո Շուշիի բնակչության վիճակագրական տվյալները հիմնականում ձեռք են բերվել 1996 և 2002թթ., քաղաքի վիճակագրության, կրթության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, զբաղվածության, վերաբնակեցման բաժիններից և ԲՇԳ-ից: Օգտվել ենք նաև «Շուշի» թերթի և այլ լրատվամիջոցների նյութերից:

Ներկայացված վիճակագրական տվյալները, որոնք ընդգրկում են պատերազմական և ետպատերազմյան առաջին տարիները, բավարար ճշտություն չունեն: Դրանց հավաստիությունը բարձրացնելու նպատակով, համադրվել են տարբեր տվյալներ, լրացվել և հնարավորինս ամբողջացվել: Օրինակ՝ 2000թ. Շուշիում գրանցված բնակիչների ցուցակը համեմատվել է 2002թ. ընտրողների ցուցակի հետ:<sup>1</sup>

Բնակչության ներգաղթը Շուշի ընթանում է հիմնականում Լեռնային Ղարաբաղից, որի քաղաքագոյացման ներուժը դեռ 1980-ական թթ. համարվում էր չսպառված (**Մելքումյան, 1990, էջ 73-81**), ինչը տարբերում է այն Հայաստանի Հանրապետությունից, որում քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունն, ըստ մասնագետների, հասել էր որոշակի կայունության (**Карпетян, Овсепян, 1986, էջ 73-81**): Առայժմ քաղաքի բնակչության կառուցվածքում նկատելի է հակամարտության և պատերազմի

\* Այս գլուխը գրելիս օգտվել ենք ՀՀ ԳՍԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Հ. Գ. Սարգսյանի խորհուրդներից, որի համար շնորհակալ ենք

<sup>1</sup> Ծնորհակալություն ենք հայտնում Շուշիի վարչակազմի աշխատակիցներին անհրաժեշտ տվյալները սիրահոժար տրամադրելու համար: 2000թ. հունվարին ԼՂՀ-ում անց է կացվել մարդահամար, որի ամբողջական տվյալները դեռևս հրապարակված չեն: Հետագայում դրանք կարող են ճշտումներ մտցնել կատարված եզրակացությունների մեջ

ազդեցությունը: Դիտարկելի են նաև ետխորհրդային անցումային շրջանին բնորոշ փաստեր, որոնց արդյունքում Հայաստանի և ԼՂՀ բնակչության կազմը ժողովրդագրական զգալի փոփոխությունների է ենթարկվել:

### Բնակչության ներեթնիկ խմբերը

Շուշիի բնակչության ժողովրդագրական հետազոտության նպատակներից է ներեթնիկ խմբերի բնութագրումը: Դրա համար հաշվի ենք առել Երևանի բնակչության էթնուսոցիոլոգիական հետազոտությունում կիրառված սկզբունքը, որով բնակչության ներհոսքը դիտարկվում է ըստ ելքի վայրի: Հեղինակներն այդպիսով առանձնացրել էին ներգաղթողների (мигранты) չորս խումբ՝ 1. գյուղերից, 2. Հայաստանի քաղաքներից, 3. ԽՍՀՄ քաղաքներից, 4. հայրենադարձներ (**Р.Карапетян, 1986**): Այս սկզբունքը կիրառելով, Շուշիի վերաբնակիչների ներեթնիկ կազմում առանձնացրել ենք հետևյալ խմբերը.

**Աղյուսակ 1. Շուշիի բնակչության ներեթնիկ խմբերը 1996թ.**

Ներեթնիկ խումբ	ընտանիք	%
Շուշեցիներ	221	20.7
Ստեփանակերտցիներ	302	28.3
Բոնագաղթվածներ Ադրբեջանից	222	21.0
Տեղահանվածներ ԼՂՀ շրջաններից	200	18.7
Վերաբնակիչներ Հայաստանից	121	11.3
Ընդամենը	1066	100.0

Առանձնացված խմբերից յուրաքանչյուրի Շուշի վերաբնակվելն ունի տարբեր պատճառներ: Շուշեցիների համար այն վերադարձ է հարազատ քաղաք, որտեղից բանագաղթվել էին 1988թ..<sup>1</sup> 1992-1993թթ. քաղաք վերադարձավ 1988թ. քաղաքից բոնագաղթված մոտ 2000 շուշեցի հայերի 35-40%-ը (**ԴԱՆ, Շուշի, 1996**): Սյուսներն ապրում են Ղարաբաղի տարբեր

<sup>1</sup> Հին շուշեցիներից 1920թ. կոտորածը վերապրածների զգալի մասը հեռացել էր Ղարաբաղից դրան հաջորդած տարիներին և հետագայում չվերադարձավ: Հայրենադարձություն չեղավ նաև երկու սերունդ անց՝ 1992թ. հետո: Այս պատճառով «նախկին շուշեցիներ» ասելով՝ նկատի ունենք 1930-ական թթ. հետո ԼՂԻՄ այլ վայրերից Շուշի վերաբնակված հայերին (*Տե՛ս Խաչատրյանների ընտանիքի մասին «Շուշի», 2000, էջ 5/6*)

բնակավայրերում, հիմնականում Ստեփանակերտում, կամ հեռացել է ԼՂՀ-ից:

Ստեփանակերտը ԼՂՀ մյուս քաղաքների համեմատ ուներ բնակչության աճի բարձր տեմպեր դեռևս 1980-ական թթ.: Հակամարտության նախօրեին առկա բնակարանային խնդիրը **(Մելքումյան, 1990, էջ 50)** հետագայում ավելի սրվեց: Ոչ հեռու գտնվող Շուշիում երիտասարդ ընտանիքների բնակարանային խնդրի լուծման հնարավորություն կար, ինչը ստեփանակերտցիների դեպի Շուշի ներհոսքի հիմնական պատճառն էր **(ԴԱՆ, Շուշի, 1996, 2000)**:

Քաղաքի բնակչության վիճակագրության անկատարության պատճառով 1988-1989թթ. Ադրբեջանից բռնագաղթվածների թիվը վերանայման կարիք ունի: Բանն այն է, որ Ստեփանակերտից և Հայաստանից վերաբնակված ընտանիքների զգալի մասը նույնպես Ադրբեջանից փախստականներ էին, չնայած, Շուշի վերաբնակվելով, նրանց մի մասը գրանցվել է որպես Ստեփանակերտից կամ Հայաստանից ներգաղթող: 1997թ. բնակչության հաշվառման համաձայն, Շուշիում ապրում էր Ադրբեջանից փախստական 235 ընտանիք, ինչից ենթադրում ենք, որ 1996թ. նրանց թիվը կարող էր ավելի մեծ լինել **(ԴԱՆ, Շուշի, 2000)**: Հայտնի է, որ Ադրբեջանից փախստական հազարավոր ընտանիքներ հակամարտության սկզբում տեղափոխվեցին ոչ թե Հայաստանի Հանրապետություն, այլ ԼՂԻՄ: Նրանք ծագումով դարաբաղցիներ էին, որոնք չէին կորցրել կապերն իրենց ազգականների հետ: Տարբեր աղբյուրների հաղորդմամբ, 1990թ. Ղարաբաղում հաստատվել էր մոտ 30 հազար փախստական **(Պետրոսյան, 1997, էջ 74-76; Մելիք-Շահնազարյան, 1998, էջ 31)**: Զինադադարից հետո, ճշտված տվյալներով, ԼՂՀ տարածքում ապրում էր Ադրբեջանից բռնագաղթած 21150 մարդ, **(«ԼՂ Հանրապետություն», 1995,04.02)**:

ԼՂՀ գրավված և սահմանամերձ տարբեր գյուղերից Շուշիում ապաստանածների մեծամասնության համար այն ժամանակավոր բնակավայր էր: Նախկինում գյուղաբնակ այս խմբի մեծ մասը 1992թ. Մարտակերտի շրջանից տեղահանվածներն էին, որոնցից 90 ընտանիք 1994թ. զինադադարից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող գյուղերից էին (Չայլուից՝ 5 ընտանիք, Սեյտուլանից՝ 10, Լենինավանից՝ 5, Հասանդայայից՝ 4, Մարաղայից՝ 3, և մեկական ընտանիք Կարմիրավանից, Լևոնարխից,

Մարալյան Սարովից):<sup>1</sup> Շուշիում ապաստանած մարտակերտցիների թիվը մինչև 1996թ. պակասել էր գրեթե երկու անգամ և շարունակում էր դանդաղ նվազել նաև հետագայում:

Գյուղաբնակների Շուշիում մշտական բնակություն հաստատելուն նպաստեց այս խմբի համեմատաբար տարեց լինելը: Գրավված և սահմանամերձ շատ գյուղեր դեռևս մինչև 1988թ. ունեին աճի բացասական ցուցանիշներ, այսինքն՝ «ծերացող» էին (օր.՝ Ասկերանի շրջանի Քյաթուկը և Փառուխը, **Մելքումյան, 1990, էջ 144-145**; հմմտ.՝ **Խոջաբեկյան, 1991, էջ 64-68**): Դրանցից տեղահանվածների մի մասը շարունակեց ապրել Շուշիում, քանի որ անկարող էր մասնակցել ազատագրված հարազատ բնակավայրի վերականգնմանը (**ԴԱՆ, Շուշի, 1996**; «**ԼՂ Հանրապետություն**», 1994, 14.02):<sup>2</sup>

Հայաստանից վերաբնակիչներն ամենասակավաթիվ խումբն են կազմում: 1992-1994թթ. այս խմբի իրական քանակության մասին տվյալներ չունենք: Առավելագույն ներհոսքը 1995թ. էր, երբ հաստատվեց 64 ընտանիք՝ հիմնականում Երևանից: Հաջորդ տարիներին, Հայաստանից վերաբնակիչների թիվը տարեկան մեկ տասնյակից չի անցել (**ԴԱՆ, Շուշի, 1996; 2002**):

Անհրաժեշտ է նկատել, որ վերն առանձնացված ներթնիկ խմբերն ունեն էական ընդհանրություններ: Բացառությամբ Հայաստանից վերաբնակիչների, մյուս բոլոր խմբերը, ներառյալ Ադրբեջանից փախստականների մեծամասնությունը, Արցախի պատմագագրական շրջանից են, այսինքն՝ ունեն բարբառի, կենցաղի, մշակույթի այլ տարրերի մեծ ընդհանրություններ:

Քաղաքի արդի բնակչությունը հիմնականում ձևավորվել է բռնագաղթվածներից (forced migrants), որոնց մեջ կան ինչպես Ադրբեջանի տարածքից փախստականներ (refugees), այնպես էլ ԼՂՀ սահմանամերձ շրջաններից տեղահանվածներ (internally displaced people) (այս հասկացությունների տարբերակումը տես **Moore, Shellman, 2002, էջ 3**): Բռնագաղթվածների

<sup>1</sup> Վերջին վեց գյուղերին հատկացված են ժամանակավոր գյուղատեղեր «Նոր Սեյտուլան», «Նոր Մարաղա» անուններով, (**«ԼՂ Հանրապետություն», 1996, 20.02**): Լենինավանի գյուղապետի տվյալներով, 1995թ. ապրիլին Շուշիում ապրում էր այդ գյուղի 84 նախկին բնակիչ, որոնք տների կառուցումից հետո պետք է վերադառնային (**«ԼՂ Հանրապետություն», 1995, 14.04**), սակայն 1996թ. մայիսի դրությամբ նրանք բոլորը 30 ընտանիք, դեռ Շուշիում էին

<sup>2</sup> Շուշիի արդի բնակչության կառուցվածքում երկու անձից բաղկացած 157 ընտանիքից 60-ը կամ գրեթե 38%-ը միջին տարիքի և բարձր ամուսնական գույգեր են: 40 տարեկանից բարձր են նաև միայնակների 45%-ը

մեծամասնությունն Ադրբեջանի քաղաքներից է: ԼՂՀ և Հայաստանի քաղաքներից վերաբնակվածների հետ միասին, նախկին քաղաքաբնակները կազմում են Շուշի վերաբնակվածների մեծ մասը՝ 833 ընտանիք կամ 78%: Նախկին գյուղաբնակները փոքր մասն են կազմում: Ադրբեջանից բռնագաղթվածների, ինչպես նաև Հայաստանից վերաբնակիչների ճնշող մեծամասնությունը երկրորդ կամ երրորդ սերնդի քաղաքաբնակներ են: ԼՂՀ երիտասարդ քաղաքներից վերաբնակվածները, այդ թվում նախկին շուշեցիները, սերտ կապեր ունեն գյուղերում բնակվող իրենց մերձավոր ազգականների հետ, ինչը հետագայում անդրադարձավ Շուշիում նրանց հարմարվողականության վրա:

### Տարաբնակեցման փուլերը

1992թ. վերջերին քաղաքում առկա բնակչության թիվը որոշվել էր այլուր ստացողների ցուցակով՝ 1500 մարդ, բնականաբար, հավաստի լինել չի կարող: Դրանցում ընդգրկված ընտանիքների անդամներից շատերը բնակվում էին այլ վայրերում, Շուշիում ունենալով մեկական անդամ (**Դիտարկումներ, Շուշի, 1992-1994**):

1992թ. հոկտեմբերի սկզբին Շուշիի Խ.Աբովյանի և Ա.Մանուկյանի անվան նորաբաց դպրոցներում սովորում էր ընդամենը 68 աշակերտ: Նույնիսկ քաղաքի վարչակազմում, դպրոցներում և արտադրական փոքր ձեռնարկություններում աշխատելու համար բավարար քանակի մարդիկ չկային (**ԴԱՆ, Շուշի, 2000**): Այս փաստերի և վիճակագրական որոշ տվյալների համադրմամբ, կարելի է եզրակացնել, որ 1992թ. երկրորդ կեսին քաղաքում, համեմատաբար ամբողջ կազմով ապրում էր շուրջ 150 ընտանիք (**Դիտարկումներ**):

1993թ. գարնանը քաղաքի բնակչության ձևավորման նոր փուլ սկսվեց: Պաշտոնական վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում, օգտվել ենք տարբեր ծառայությունների հաշվառումներից, որոնց հիման վրա կարող ենք ներկայացնել Շուշիի բնակչության և աշակերտների թվի փոփոխությունը 1992-2000թթ. (Աղ.2):



**Աղյուսակ 2. Շուշիի բնակչության և աշակերտների թիվը 1992 - 2000թթ.**

	1992	1993	1996	2000
<i>Բնակիչ</i>	-	2982	3674	2330
<i>Աշակերտ</i>	68	378	654	591

Վերաբնակիչների քանակի ավելացման ամենահավաստի ցուցանիշներից մեկն աշակերտների թիվն էր: 1993թ. աշնանը, ուսումնական տարվա սկզբում, քաղաքի երկու դպրոցներում կար 378 աշակերտ: Ինչպես տեսնում ենք, առաջին տարվա ընթացքում աշակերտների թիվն ավելացել էր 5.5 անգամ: Այս ցուցանիշը վկայում է ոչ այնքան նոր ընտանիքների ներհոսքի, որքան գրանցված անդամների հետ նրանց ընտանիքների վերամիավորման մասին, ինչի արդյունքում 1993թ. աշնանը Շուշիի բնակչությունն առնվազն եռապատկվեց:

Բնակչության կայունացման հակառակ միտում նկատվեց նույն տարվա ամռանը, երբ Շուշիում ապաստան գտած տեղահանված ընտանիքները սկսեցին վերադառնալ իրենց ազատագրված բնակավայրերը: 1994թ. զինադադարից, և հատկապես 1996թ., ԼՂՀ-ում հողի սեփականաշնորհումից հետո, Շուշիից արտահոսքը ժամանակավորապես գերազանցեց ներհոսքին:<sup>1</sup>

Այս տարիներին բնակչության արտահոսքի չափերի մասին են խոսում նաև Շուշիի բնակչության բնական աճի փոփոխությունները (Աղ. 3):

**Աղյուսակ 3. Բնակչության բնական աճը և ամուսնությունները 1993-2001թթ.**

<i>Տարի</i>	<i>Բնակիչ</i>	<i>Ծնունդ</i>	<i>Մահ</i>	<i>Բնական աճ</i>	<i>Ամուսնություն</i>
1993	2982	25	-	-	-
1994	-	39	29	10	-
1995	-	61	17	44	-
1996	3674	58	18	40	23
1997	-	51	22	29	19
1998	-	45	15	30	9
1999	-	29	21	8	12
2000	2330	55	20	35	15
2001	-	53	17	36	11

<sup>1</sup> 1997-2000թթ. Շուշիի բնակչության նվազումը նշվել է նաև մամուլում՝ «Ազատ Արցախ», 2002:04.06; «Ազգ», 2000, 07.05; «Շուշի», 1999,13/14)

Ներկայացված աղյուսակից երևում է, որ Շուշի քաղաքի բնակչության բնական շարժի համեմատաբար ամբողջական պատկեր ունենք 1994թ. հետո, երբ 1994-1996թթ. ընթացքում այն աճեց չորս անգամ: Հետագայում նկատելի էր որոշակի նվազում, իսկ 2000թ. հետո՝ բնական աճի դրական միտումներ:

Գյուղաբնակների արտահոսքը բնակչության թվի նվազման միակ պատճառը չէր: Հատկապես 1994թ. զինադադարից հետո, արտագաղթը պայմանավորված էր նաև սոցիալ-տնտեսական այն գործոններով, որոնք ավելի վաղ դրսևորվել էին Հայաստանում (մանրամասն տե՛ս **Արտագաղթը Հայաստանից, 2003, էջ 11-27**): Արտագաղթող շուշեցիների հիմնական մասը մեկնում է Ռուսաստան:

### **Ընտանիքների կազմը**

Ընտանիքի կազմն էական նշանակություն ունի բնակավայրի զարգացման հեռանկարի գնահատման առումով: Թե՛ 1996թ., թե՛ 2002թ. հատուկ ուշադրություն ենք դարձրել այս խնդրին, փորձելով պարզել տարբեր կազմ ունեցող ընտանիքների հարաբերակցությունը՝ համեմատելով դրանք ՀՀ և ԼՂՀ այլ բնակավայրերի համապատասխան տվյալների հետ:

Ստորև ներկայացված է 1996 և 2000թթ. Շուշիի ընտանիքների քանակն ու կազմը, ինչը թույլ է տալիս նկատելու փոփոխություններն այդ տարիների ընթացքում: Աղյուսակ 4-ից երևում է, որ 1996-2000թթ. ընթացքում բնակչության կառուցվածքում ավելացել է միայնակների թիվը, իսկ բազմանդամ (հինգ և ավելի անդամ ունեցող) ընտանիքների քանակը նվազել է: Երկու, երեք և չորս հոգուց կազմված ընտանիքների տեսակարար կշիռը գրեթե անփոփոխ է մնացել:

**Աղյուսակ 4. Շուշիի ընտանիքների կազմի շարժընթացը  
1996 - 2000թթ.**

Տարի	ընտանիքների քանակը	միայնակ	2 անդամ	3 անդամ	4 անդամ	5 Ս ավելի
<b>1996</b>	1066	179	172	199	224	292
(%)	100.0	16.8	16.1	18.7	21.0	27.4
<b>2000</b>	818	247	157	133	132	149
(%)	100.0	30.2	19.2	16.2	16.2	18.2

1996-2000թթ. բնակչության թվի նվազման պայմաններում, ավելացել է միայնակների թե՛ քանակը, և թե՛ տեսակարար կշիռը: Դրա հիմնական պատճառն այն է, որ շատ ընտանիքներ տրոհվում էին ազատված բնակարաններին տիրանալու համար (**ԴԱՆ, Շուշի, 2002**): Նույն միտումն ենք նկատում կին գլխավորով թերի ընտանիքների թվի փոփոխության դեպքում: 1996թ. Շուշիում ապրում էր 113 կին գլխավոր ունեցող ընտանիք, որից 41-ն ուներ մեկ, 45-ը՝ երկու, 27-ը՝ երեք և ավելի երեխա (**«Շուշի», 1995, 13**): Այս ընտանիքները կազմում էին բնակչության 10.5%, որը գրեթե 2 անգամ մեծ է Հայաստանի 1982թ. նույնակարգ ցուցանիշից (Карпетян, Овсепян, 1986, էջ 7): 2000թ. կին գլխավորով ընտանիքների թիվն արդեն կազմում էր 22.5%, որն ընտանիքների արհեստական տրոհման արդյունք էր, որը հավելյալ բնակարաններ ձեռք բերելու նպատակով ընտանիքների տրոհման արդյունք էր: ԼՂՀ վերաբնակեցված բնակավայրերից նման երևույթ դիտարկվել է միայն Շուշի քաղաքում:

**Սեռատարիքային կազմը**

Շուշիի քաղաքայնացման ընթացքում ի հայտ եկած յուրահատուկ փաստեր արտահայտվում են նաև բնակչության սեռատարիքային կառուցվածքում: Դրա հավաստի ժողովրդագրական պատկերը հնարավոր եղավ կազմել միայն 2000թ. (Աղ. 5):

**Աղյուսակ 5. Շուշիի բնակչության սեռատարիքային կազմը 2000թ.**

<i>Տարիքը</i>	<i>Ամբողջը</i>	<i>%</i>	<i>Տղամարդ</i>	<i>%</i>	<i>Գին</i>	<i>%</i>
<i>0-4</i>	<i>127</i>	<i>5,5</i>	<i>60</i>	<i>2,6</i>	<i>67</i>	<i>2,9</i>
<i>5-9</i>	<i>208</i>	<i>8,9</i>	<i>100</i>	<i>4,3</i>	<i>108</i>	<i>4,6</i>
<i>10 -14</i>	<i>330</i>	<i>14,1</i>	<i>170</i>	<i>7,3</i>	<i>160</i>	<i>6,8</i>
<i>15- 19</i>	<i>250</i>	<i>10,8</i>	<i>130</i>	<i>5,6</i>	<i>120</i>	<i>5,2</i>
<i>20-24</i>	<i>185</i>	<i>8,0</i>	<i>83</i>	<i>3,6</i>	<i>102</i>	<i>4,4</i>
<i>25-29</i>	<i>139</i>	<i>6,0</i>	<i>51</i>	<i>2,2</i>	<i>88</i>	<i>3,8</i>
<i>30-34</i>	<i>163</i>	<i>7,0</i>	<i>62</i>	<i>2,7</i>	<i>101</i>	<i>4,3</i>
<i>35-39</i>	<i>186</i>	<i>7,9</i>	<i>73</i>	<i>3,1</i>	<i>113</i>	<i>4,8</i>
<i>40-44</i>	<i>230</i>	<i>9,9</i>	<i>95</i>	<i>4,1</i>	<i>135</i>	<i>5,8</i>
<i>45-49</i>	<i>124</i>	<i>5,3</i>	<i>53</i>	<i>2,3</i>	<i>71</i>	<i>3,0</i>
<i>50-54</i>	<i>112</i>	<i>4,8</i>	<i>55</i>	<i>2,4</i>	<i>57</i>	<i>2,4</i>
<i>55-59</i>	<i>49</i>	<i>2,1</i>	<i>26</i>	<i>1,1</i>	<i>23</i>	<i>1,0</i>
<i>60-64</i>	<i>88</i>	<i>3,8</i>	<i>41</i>	<i>1,8</i>	<i>47</i>	<i>2,0</i>
<i>65 -&gt;</i>	<i>138</i>	<i>5,9</i>	<i>60</i>	<i>2,6</i>	<i>78</i>	<i>3,3</i>
<i>Ընդամենը</i>	<i>2329</i>	<i>100,0</i>	<i>1059</i>	<i>45,5</i>	<i>1270</i>	<i>54,5</i>

Այս աղյուսակի համեմատությունը Հայաստանի Հանրապետության համապատասխան տվյալների հետ (**Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, էջ 21-24**) նկատելի է դարձնում պատերազմի ազդեցությունը քաղաքի բնակչության ինչպես տարիքային, այնպես էլ սեռային կառուցվածքի վրա: Մինչև 24 տարեկան շուշեցի տղամարդիկ, որոնք չեն մասնակցել պատերազմին, կազմում են բնակչության 47.3 %, իսկ ՀՀ-ում նույն տարիքային խումբը կազմում է 42.3 %: Այսինքն՝ նկատվում է Շուշիի բնակչության երիտասարդացման միտում, որի համար նպաստավոր է նաև պտղաբեր հասակի զգալի տեսակարար կշիռը՝ 36.1 %: Ինչ որ չափով, դրանով է պայմանավորված նաև Շուշիի բնակչության կազմում կանանց բարձր տեսակարար կշիռը՝ 54.5%, ՀՀ-ի՝ 51.4 %-ի համեմատ (տղամարդկանցը՝

46.1% և 48.6%): ԼՂՇ Մարտունու և Հաղրութի շրջաններում մեր հավաքած տվյալների հետ Շուշիի բնակչության սեռատարիքային կազմի համեմատությունը նույնպես հաստատում է այս իրողությունը (**ԴԱՆ, Մարտունի, 1996; Հաղրութ, 1996**):

ԼՂՇ վերաբնակեցվող մեկ այլ Քաջաթաղի շրջանի և Շուշիի բնակչության 1996թ. սկզբի վիճակագրական տվյալների համեմատությունը ցույց է տալիս բնակչության տարիքային խմբերի գրեթե լիակատար համընկնում՝ քաջաթաղցիների փոքր-ինչ ավելի երիտասարդ կառուցվածքով (**ԴԱՆ, Քաջաթաղ, 1996**):<sup>1</sup> Էական տարբերություններ կան վերաբնակիչների երկու համայնքների սեռային կազմում, այսպես՝ Քաջաթաղում 1996թ. տղամարդիկ կազմում էին ամբողջ բնակչության 54%, որը, մեր կարծիքով, ներգաղթի սկզբնական փուլի առանձնահատկություններից է: Սա նաև նոր բնակավայրում կենսապայմանների անապահովությունը, ընտանիքով ապրելու դժվարությունները հաղթահարելուն ուղղված վերաբնակիչների վարքի արտահայտություններից էր:<sup>2</sup> Համեմատության համար նշենք, որ նման երևույթ առկա էր Իսրայելի հրեա վերաբնակների 1910-1960-ական թթ. հիմնած համայնական սեփականությամբ գյուղական բնակավայրերում՝ կիրուցներում, որոնց բնակիչներից շատերը միայնակ էին ապրում նույն նկատառումներով (**Seller, 1978, էջ 134-139**): Շուշիում 1992թ. և Քաջաթաղի բնակավայրերում 1994-1996թթ. իրենց ընտանիքների վերաբնակությունը նախապատրաստող միայնակ տղամարդկանց գերակշռությունը կարճաժամկետ էր՝ ուներ մի քանի շաբաթ կամ ամիս տևողություն (**Պարբիեյան, Դաբաղյան, 1997; ԴԱՆ, Շուշի, 1996; 2000; Քաջաթաղ, 1996; Լ.Խառատյան, 1998, էջ 14-18**):

Վերաբնակիչների կազմում երիտասարդների բարձր տեսակարար կշիռը բնորոշ էր նաև ՀԽՍՀ քաղաքայնացման գործընթացներին: Մասնավորապես, 1950-70-ական թթ. Երևան ներգաղթած բնակչության շուրջ 41.4 %-ը կազմում էին 18-29 տարեկանները, ընդ որում, զգալի թիվ էին կազմում միայնակ վերաբնակվողները (**տե՛ս Բ.Карапетян, 1986, էջ 34-35, табл. 2,3 и**

<sup>1</sup> Տարածաշրջանի 36 բնակավայրերի բնակչության տարիքային կազմի դաշտային վիճակագրական տվյալները խմբավորվել են ըստ 0-6, 7-16, 17-25, 26-40, 41-60, 61-ից բարձր խմբերի (**Պարբիեյան, Դաբաղյան, 1997**)

<sup>2</sup> Նման գգուշավորությունը հիմքեր ուներ թե՛ Քաջաթաղում, թե՛ Շուշիում: Վերջինը 1992թ. մայիս-նոյեմբեր ամիսներին աղբբեջանական հրետանու և օդուժի հասանելիության գոտում էր, իսկ Քաջաթաղի շրջանում ռազմական գործողություններն ավարտվեցին միայն 1994թ. մայիսի 9-ից հետո

4): Շուշիի բնակչության կազմում այս տարիքային խմբի տեսակարար կշիռն անհամեմատ փոքր է՝ ընդամենը 17%: Այլ կերպ ասած, Շուշիի բնակչության տարիքային կառուցվածքը չի նմանվում խորհրդային շրջանի քաղաքագոյացմանը բնորոշ երիտասարդների, և նրանց կազմում միայնակների գերակշռությանը:

Շուշիի նշված արժեքներն ավելի մոտ են Երևան ներգաղթած հայրենադարձների խմբի տվյալներին: Ամբողջ ընտանիքով հայրենադարձության շնորհիվ, այս խմբի 43.1%-ի միջին տարիքը 30-ից ավելի էր (Շուշիում՝ 46,7%):

### Գլուխ III

#### ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Շուշիի վերաբնակիչների կենսապահովման պայմանները և եղանակները փորձել ենք նկարագրել ոչ որպես «ապարդիականացում» (**демодернизация**): Այդպես բնութագրվում են նախկին ԽՍՀՄ առանձին հատվածներում «անցումային» գործընթացների և ազգամիջյան ռազմական հակամարտությունների մշակութային հետևանքները (**Сайдуллаев, 2001; Тишков, 2001, էջ 51-59; Platz, 2000, էջ 114-115**), որ կան նաև Շուշիում: Մեր կարծիքով, այդ ձևակերպումը բավականին ճշգրիտ է, սակայն անհարիր է այնպիսի բնակավայրի մասին աշխատանքում, որում մշակութային նկարագիրը վերականգնվում է կամ վերափոխվում: Այս տեսանկյունով դիտարկված, Շուշիում վերաբնակների կենսապահովման տարբերակները գործընթացներ են, որոնցում ապարդիականացված միջավայրը կենսապահովման նոր մշակույթի ձևավորման ելակետ է:

#### Բնակեցման ելակետային պայմանները

XIXդ. համեմատությամբ, Շուշիի բնակչությունն ու բնակելի տարածքն զգալիորեն նվազել են: Այժմյան բնակելի հատվածը սանդղակաձև տարածվում է արևելյան լայն, ցածրադիր տափարակից դեպի արևմտյան ավելի նեղ ու թեք եզրը, կենտրոնում թողնելով վարչական շենքերը, շուկան և հյուրանոցը: Քաղաքի պատմական հատվածը պահպանվել է կղզյակներով,

հիմնականում ստորին բնակելի հատվածում, որի մեծ մասն այժմ կազմված է 1950-1970-ական թթ. առանձնատներից: Վերին հատվածում գրեթե չկան առանձնատներ, գերակշռում են բազմաբնակարան շենքերը: Առողջարանները գտնվում են բնակելի գոտուց հարավ և հյուսիս՝ պարսպի անմիջական հարևանությամբ:

Շուշիի առանձնատները և բազմաբնակարան շենքերը չեն տարբերվում 1980-ական թթ. Լեռնային Ղարաբաղի մյուս փոքր քաղաքների նույնակարգ կառույցներից, որոնց հիմնական շինանյութը տեղի սպիտակ կրաքարն է: Բազմաբնակարան տիպային շենքերից գերակշռում են չորս և հինգ հարկանիները, թեև կան սակավաթիվ երկու, երեք ու ինը հարկանի շենքեր: Բնակարանների մեծ մասը երեք կամ չորս սենյականոց է:

1950-ական թթ. հետո կառուցված առանձնատների մեծամասնությունը երկհարկ է: Կան տներ, որոնց առաջին հարկի պատերն ավելի հին են: Դրանք հատկապես շատ են քաղաքի կենտրոնին արևելքից և հարավարևելքից հարող հատվածում: Իսկ քաղաքի հարավում, մեծ մասամբ, նորակառույց առանձնատներ են, մոտ 200 քմ տնամերձ հողակտորներով: Առանձնատների այս երկու գոտիների միջև կան հին տների հիմքի վրա կառուցված նոր առանձնատներ, նույնպես համեմատաբար ընդարձակ հողակտորներով:<sup>1</sup>

Շինություններին հիմնական վնասը հասցվեց 1992թ. մայիսի 8-ի գրոհի ընթացքում, թեև որոշ միջոցառումներ էին նախատեսված այն նվազագույնի հասցնելու համար (**Բալայան, 1995, էջ 156**): Մինչև 1992թ. նոյեմբերը Շուշին մնում էր ռազմական գործողությունների գոտում: Ստեփանակերտ-Գորիս ճանապարհի համար ընթացող մարտերի ժամանակ քաղաքը մի քանի անգամ ենթարկվեց ադրբեջանական օդուժի և հեռահար հրետանու հարվածներին, որոնք նույնպես զգալի ավերածություններ պատճառեցին: Բնակիչների համար քաղաքի ավերվածության ընդհանուր պատկերը սովորական է դարձել, թեև հատկապես քաղաքի կենտրոնում այն ծանր տպավորություն է թողնում: Այցելուներից մեկը Շուշին անվանել է «ուրվական քաղաք» (**Rieff, 1997**):

---

<sup>1</sup> Այս արտաքին տարբերությունները կարող են նաև 1920թ. առաջ հայկական և ադրբեջանական հատվածների միջև սահմանի ցուցիչ լինել, բայց դրա ճշտումը լրացուցիչ հետազոտություններ է պահանջում

Ճակատամերձ դիրքում գտնվելը խիստ նվազեցրել է Շուշիում քաղաքային կենցաղի հնարավորությունները: Փոքրացել է քաղաքում բնակության համար պիտանի հատվածը: Ավերվածության աստիճանը տարբեր կերպ է հաշվարկվում՝ 40-50%-ից մինչև 80-90% (**ԴԱՆ, Շուշի, 1996, 2000; «Շուշի», 1999,13-14**): Դրանց ամենաստույգ գնահատականը տրված է 1998թ. Շուշիի գլխավոր հատակագծի հավելվածում: Ըստ այդ փաստաթղթի, 40 բազմաբնակարան շենքերից այժմ անբնակ են 27-ը, որից ութը հրդեհված է, իսկ մյուսները՝ վթարային են: Բնակության համար պիտանի է համարվում ընդամենը 395 բնակարան: Առանձնատներից անվնաս են կեսը՝ 573 տուն: Որոշ աշխատանք է պահանջում «զգալի չափով վթարված» 270, ավերված կամ անավարտ 212 առանձնատների վերականգնումը (**Շուշի, ՔԳՀ:12**):

Շուշիում կա մոտ հինգ տասնյակ հասարակական շենք՝ դպրոցներ, կրթական և առողջապահական հաստատություններ, խանութներ, ակումբներ և այլն: Դրանց մի մասը, ներառյալ վարչակազմի, մշակույթի պալատի, հյուրանոցի և շուկայի շենքերը, ավերվեց գրոհի օրը, քաղաքի կենտրոնում ծավալված փողոցային մարտերի հետևանքով: Նշվածներից հետագայում վերականգնվել է միայն վարչակազմի շենքը: Նույն հատվածում գտնվող Շուշիի Մեծ մզկիթը, որը սխալմամբ համարվում է ավերված (**Rieff, 1997**), իրականում չի վնասվել և ընդգրկված է պետականորեն պահպանվող հուշարձանների ցանկում: Քաղաքի առողջարանային շենքերի մեծամասնությունը վնասվել են ոչ այնքան ռմբահարումներից, որքան ավարառությունից:

Ազատագրումից հետո կային մարդիկ, որոնք շարունակում էին Շուշին ընկալել որպես թշնամական հենակետ և տաժանավայր, դեպի Հայաստան ճանապարհը փակող ամրոց, որի պատճառով Ստեփանակերտի և կից գյուղերի բնակչությունը մոտ վեց ամիս ապրում էր պաշարման մեջ: Այս պատճառով, քաղաքի ազատագրման հաջորդ օրերին ավարառությունը լիովին չբացառվեց:

Քաղաքն ազատագրվեց ԼՂՀ կամավորական ինքնապաշտպանական վաշտերի ուժերով, որոնք դեռևս չէին միավորվել կենտրոնացված հրամանատարության ներքո: Խոշոր գծամասերի՝ վաշտերի կողքին կային փոքր ջոկատներ, որոնցից մի քանիսը 1992թ. գորակայան ընտրեցին



Շուշին: Խաղաղ բնակչության հետ դրանց համատեղումը որոշ խնդիրներ էր հարուցում առաջին ամիսներին, մինչև 1992թ. հոկտեմբերը, դրանք դուրս բերվեցին քաղաքից կամ միացվեցին Շուշիի նորակազմ գնդին: Շուշիում մնաց նաև ՀՅԴ կամավորների գումարտակը: Այս զորամասերի առկայությունը կարևոր ազդեցություն ունեցավ վերաբնակության և քաղաքում կենսապահովման պայմանների վրա:

### **Բնակեցումը**

1992թ. աշնանը մշտական ապրող 500-1000 բնակիչները ցրված էին քաղաքի մոտ ողջ կառուցապատված տարածքով՝ ամեն շենքում կամ թաղամասում՝ մի քանի մարդ կամ ընտանիք: Քաղաքի տարածքում նրանց տեղաբաշխման վրա պատերազմական ավերումների ազդեցությունը դիտարկելի է նախկին երկու կենտրոնների օրինակով, որոնցից մեկին կից փողոցները մարտական գործողություններից առավել տուժածներն են և հատկապես նոսր են բնակեցված: XIXդ. այստեղ էին գտնվում քաղաքի միակ ռուսական եկեղեցին և վարչական շենքերը, «Մեյդանը» կամ գլխավոր շուկան, իսկ խորհրդային շրջանում վարչակազմի շենքը, փոստը, հյուրանոցը, մշակույթի պալատը և այլն: Այս հրապարակն այժմ քաղաքի պաշտոնական կենտրոնն է, սակայն վարչակազմից և փոստից բացի, մյուս շինությունները կիսավեր են կամ չեն գործում:

Քաղաքի հասարակական և առևտրական փաստացի կենտրոնը ավելի մարդաշատ արևմտյան քաղաքամասում գտնվող խաչմերուկն է, հնում հայկական մասի «Թոփխանա» կոչված շուկան: Այստեղ են գտնվում գործող խանութները, համեմատաբար մոտ են երկու դպրոցները, եկեղեցիները, գերեզմանոցը: Շուշիում Նոր տարվա առաջին համաքաղաքային տոնակատարությունը 1994թ. նույնպես կատարվեց այստեղ: 1992-1996թթ. այս վայրից գրեթե հավասար հեռավորության վրա էին գտնվում զորանոցները: 2002թ. մասնավոր միջոցներով բացված և առայժմ գործող միակ «Շուշի» հյուրանոցը նույնպես քաղաքի այս հատվածում է:

Նշված հաստատությունների կենտրոնացումը քաղաքի արևմտյան մասում ուներ երկու հիմնական պատճառ: Առաջին՝ նախորդ քաղաքաշինության արևմտյան հատվածը կառուցապատվել էր բազմաբնակարան շենքերով, ինչի հետևանքով այստեղ ավելի շատ բնակչություն կուտակվեց:

Երկրորդ՝ պատերազմի ժամանակ այն համեմատաբար քիչ էր վնասվել, հետևաբար ավելի արագ վերականգնվեց կենսապահովման ենթակառուցվածքը՝ հեռախոսակապը, էլեկտրականության, խմելու ջրի գծերը, իսկ 1999թ.՝ նաև գազի մատակարարումը (**Դիտարկումներ; «Շուշի», 1999:13/14,15**):

Այս հիմնական պատճառներից բացի, քաղաքի նախկին հայկական հատվածում բնակչության խտության վրա ազդեցին նաև այլ գործոններ: Նախ պահպանված հայկական ճարտարապետական հուշարձանները որոշ «ձգողականություն» ունեին վերաբնակիչների առանձին խմբերի համար: Մասնավորապես՝ ազատագրումից անմիջապես հետո Ստեփանակերտից Շուշի տեղափոխված հոգևորականները և նրանց ընտանիքների անդամները բնակվեցին Ղազանչեցոց եկեղեցու հարևանությամբ: Դաշտային ազգագրական նյութը փաստում է քաղաքում մի քանի տասնյակ ընտանիքների առկայությունը, որոնք Շուշիում բնակարան են ընտրել եկեղեցու մերձությունը հաշվի առնելով: Վանքի առկայությունը վերաբնակչության վայրի ընտրության պատճառ են նշել նաև Արցախի նշանավոր Դադիվանքին կից գյուղի վերաբնակիչները (**«ԼՂ Հանրապետություն», 1996: 12.03**):

Քաղաքի վերին մասը մոտ է Գորիս-Ստեփանակերտ մայրուղուն և ազատագրման առաջին օրերից այստեղ էին տեղակայված Շուշիի զորամասերը: Մայրուղուն մերձության և բնակչության ավելի մեծ խտության հետևանքով այստեղ բացվեցին առաջին խանութները:<sup>1</sup>

Շուշի վերաբնակվելու, տեղում բնակարան ընտրելու հարցերում վերաբնակիչներին օգնում էր քաղաքի վարչակազմը, որը ձևավորվեց ազատագրումից մեկ շաբաթ անց: Վարչակազմի աշխատակիցներն ընդունում էին վերաբնակվել ցանկացողներին, ուղեկցում դեպի առաջարկվող բնակարանը, որում ապրելու հետ կապված խնդիրներն արդեն պետք է լուծեր վերաբնակիչը:<sup>2</sup>

Այս շրջանում շատ կարևոր էր հարևանության խնդիրը, քանի որ առաջին վերաբնակիչները հնարավորություն ունեին ազդելու իրենց դրացիա-

<sup>1</sup> *Վերաբնակեցման գործընթացում ճանապարհի մերձության ավանդական գործոնն ավելի ընդգծված է արտահայտվել Քաշաթաղի շրջանում, այստեղ հիմնական բնակավայրերը ճառագայթաձև տարածվում են Արցախը Հայաստանին կապող մայրուղուց (ՂԱՆ, Քաշաթաղ, 1996)*

<sup>2</sup> *Միայն 1995թ. Հայաստանից վերաբնակվող բռնագաղթվածներին հատկացվում էր դրամական օգնություն՝ մեկ անձին մոտ 10000 դրամի չափով, և վարկ ընտանիքին՝ 20000 դրամ՝ աննշան տոկոսադրույքով*

կան միջավայրի ձևավորման վրա: Նոսր բնակեցված շենքերում և թաղամասերում ապրողները, նախ տեղյակ էին, թե ովքեր են հարևան տներն զբաղեցնող մարդիկ, որքանով է լուրջ վերաբնակվելու նրանց մտադրությունը, երկրորդ՝ իրենք արդեն հարմարվել էին քաղաքի պայմաններին և կարող էին օգնել նորեկներին:

Վերաբնակության նման ինքնակարգավորման ընթացքում կարևոր էր բնիկ շուշեցիների դերը: Նրանք լավ գիտեին քաղաքը, ինչ առավելություն կամ թերություն ուներ որևէ թաղամաս կամ շենք: Տարբեր եղանակներով, այդ թվում՝ մասնակցելով վարչակազմի աշխատանքներին, նրանք աջակցում էին մյուս հայ բնակիչների ներհոսքին և տեղավորմանը: Բնիկ շուշեցիների մի մասը հաստատվեց ոչ թե 1988թ. առաջ իրենց պատկանած բնակարաններում, որոնք խիստ վնասվել էին նրանց բացակայության ժամանակ, այլ ընտրեց ուրիշ բնակարան: Արդյունքում, եթե մինչև 1988թ. հայերի մեծ մասն ապրում էր քաղաքի բազմաբնակարան շենքերում, ազատագրումից հետո նախկին շուշեցիների մեծամասնությունը հաստատվեց առանձնատներում:

Վերաբնակության սկզբում առանձնատուն նախընտրողներ կային վերաբնակիչների բոլոր ներթնիկ խմբերում: Սա նպաստեց Շուշիի ստորին հատվածի բնակեցմանը: Այստեղ բնակչության խտությունն ավելի փոքր էր, քան վերին քաղաքամասում, իսկ բնակեցման առաջին ամիսներին կային պարզապես անմարդաբնակ թաղեր: Այդ պայմաններում առանձնատներում կարող էին բնակություն հաստատել միայն համեմատաբար խոշոր ընտանիքները, միայնակ ապրողի համար դժվար էր ապահովել տան անվտանգությունը: Երբեմն փոխադարձ պայմանավորվածությամբ բնակարաններից առանձնատներ էին տեղափոխվում մի քանի ընտանիք՝ ընտրելով հարևան տներ:

Այս տեղաշարժերում, ինչպես նաև Շուշիում դրացիական հարաբերությունների ձևավորման ողջ ընթացքում, ի հայտ եկավ դրա որոշ նմանությունը հայկական ավանդական գյուղի ազգակցական թաղային կառուցվածքին: Թեև ազգական ընտանիքների թիվն այստեղ մեծ չէ, ակնհայտ է, որ նրանց հիմնական մասը բնակվել է հարևան տներում: Շուշին բաժանված չէ ազգակցական թաղամասերի, բայց ինչպես առանձնատներով կառուցապատված թաղերում, այնպես էլ բազմաբնակարան շենքերում,

կարելի է հանդիպել մոտ ապրոզ երկու կամ երեք ազգական ընտանիքների: Նման հարևանները, մյուսների համեմատ, ավելի ամուր կապեր ունեն:

Ազգականների մերձությամբ բնակվելը բնորոշ է բոլոր զանգվածային վերաբնակություններին: Դադաստանի լեռնային գյուղերից դաշտավայր վերաբնակվող ընտանիքները, հնարավորության դեպքում, բնակվում էին հարևանությամբ: Նրանց զավակները հաճախ հրաժարվում էին գյուղերի ծայրամասում հատկացված հողամասերից և տուն կառուցում հայրական տանը կից հողամասում (**Традиционное и новое, 1988, էջ 151-158**): Նույն փաստը նկատվել է նաև 1960-ական թթ. Ստորին Եգիպտոսի նուբիացիների (**Fahim, 1973; Fernea, Cennedy, 1966**), Իսրայել վերաբնակված հրեաների տարբեր ներթնիկ խմբերի տարաբնակեցման սկզբունքներում (**Geva-May, 2002; Lazin, 2000, էջ 19- 30**):

Նշված վերաբնակությունների ուսումնասիրողները նկատում են նաև, որ դրանց կազմակերպման համար պատասխանատու պետական կառույցները, սովորաբար, ետ են մնում զարգացող իրադարձություններից, ինչը դիտարկելի է նաև Շուշիում: Վերաբնակության ընթացքում ի հայտ են գալիս անհապաղ լուծում պահանջող խնդիրներ, որոնք փոփոխություններ են կատարում վարչակազմի նախատեսած կարգում: Նման բազմաթիվ խնդիրներ առաջացան նաև Շուշիի բնակեցման ընթացքում, մասնավորապես՝ բնակարանների սեփականատիրության հարցերում: Բնակարանի ընտրության տարբեր եղանակները երբեմն հակադրվում էին, ինչի արդյունքում պատահում էր, որ բնակարանն ունենում էր մեկից ավելի հավակնորդ: Ընդ որում, նման խնդիրներ ծագում էին հիմնականում առանձնատների շուրջ և կարգավորվում վարչակազմի միջամտությամբ, հաճախ հոգուտ արդեն բնակվող կամ ավելի բազմանդամ ընտանիքի:

1992թ. աշնանը, Շուշիի վարչակազմը<sup>1</sup> սկսեց սեփականության ժամանակավոր վկայագիր տալ բնակարաններում ապրողներին, իսկ առանձնատներում ապրողներին միայն գրանցեց որպես քաղաքի բնակիչ: Սա կազմակերպված էր վերաբնակներին այլուրի կտրոնների բաշխմանը

---

<sup>1</sup> Շուշիում ԼՂՀ մյուս շրջաններից կես տարի ավելի ուշ՝ 1993թ. հունիսի 1-ից սկսեց գործել ՊՊԿ (Պաշտպանության պետական կոմիտե) լիազոր ներկայացուցչի վարչակազմը: Դրանից առաջ գործում էր ժամանակավոր վարչակազմ: 1995թ. հաստատվեց ներկայիս կարգը՝ շրջանային վարչակազմ, որի ղեկավարը նշանակվում էր ԼՂՀ վարչապետի կողմից: 1996 թվականից կա նաև ընտրովի քաղաքապետ

զուգահեռ: Առանձնատների սեփականության վկայագրումը հետաձգվեց այն պատճառով, որ այդ ամիսներին անհնար էր ճշտել, թե որքանով է առանձնատան չափը համապատասխանում վերաբնակչի ընտանիքի կարիքներին, շատ էին թերի ընտանիքները: Բնակարաններն ավելի ազատ էին, իսկ դրանց սեփականության ժամանակավոր վկայագիր ստանալն ավելի հեշտ:

Հետագա տարիներին, քաղաքում ժամանակավոր ապաստանած գյուղաբնակների արտահոսքի արդյունքում, բազմաբնակարան շենքերում ապրողների մի մասը տեղափոխվեց ազատված առանձնատները: Դրանք ամբողջությամբ զբաղեցված էին 1994թ. վերջին և արդեն հաջորդ տարվա սկզբից քաղաքի իշխանությունները նախաձեռնեցին բնակիչների վերագրանցում, որի արդյունքում տրվեց 591 մշտական և 41 ժամանակավոր բնակարանային վկայագիր (օրդեր) («ԼՂ Հանրապետություն», 1995:02.03):<sup>1</sup> 1998թ. առանձնատների ու բնակարանների սեփականաշնորհմամբ, վերաբնակիչները ձեռք բերեցին նաև դրանց օտարման իրավունք:<sup>2</sup>

Այսպես, պատերազմի թույլատրած հնարավորությունների սահմաններում և վերաբնակիչների նախընտրությունների, այդ թվում՝ ավանդական տարաբնակեցման որոշ եղանակների ազդեցությամբ, քաղաքի գրեթե ողջ տարածքն աստիճանաբար բնակեցվեց: 1996թ. բնակեցված էին բոլոր սարքին առանձնատները, 2000թ.՝ բնակարանները: 2002թ., ըստ վարչակազմի տվյալների, Շուշիում արդեն բնակարանային խնդիր կար: Հերթագրվածները նորակազմ, ծնողներից առանձնացած ընտանիքներ են, սակայն ինչպես բնակչության, այնպես էլ պետական առկա ֆինանսական միջոցները կիսավեր բնակարանների վերանորոգման հնարավորություն չեն ընձեռում:

## Բնակարանները

Քաղաքում պահպանված հինգ տասնյակ հին առանձնատների միջոցով դեռ հնարավոր է ծանոթանալ անցյալ դարասկզբի Շուշիի քաղաքային

<sup>1</sup> 1995 և հաջորդ տարիներին վերաբնակված ընտանիքներին բնակարան էր տրվում 5 տարով, առանց վկայագրի, որին փոխարինում էր վերաբնակչի գրքույկը

<sup>2</sup> 2000թ. փորձեցինք ճշտել, արդյո՞ք քաղաքում արդեն ձևավորվել է անշարժ գույքի շուկա: Բանասացների հաղորդմամբ, վերջին տարիներին տան վաճառքի ընդամենը մի քանի գործարք է եղել և քաղաքի առավելագույն բնակեցման փուլում վերաբնակիչների ձեռք բերած տների մեծամասնությունը դեռևս նրանց է պատկանում (ԴԱՆ, Շուշի, 2000)

շինարարական արվեստին ու բնակիչների կենցաղի տարրերին: Հին Շուշիից մնացել են նաև տասնյակ ջրհորներ և թոնիքներ՝ 1950-ական թթ. վերակառուցված առանձնատների բակերում: Դրանք օգտագործեցին նաև վերաբնակիչները, սակայն մեծամասնությունը, ապրելով առանձնատներում ու բնակարաններում ուներ ջրամատակարարում, իսկ ջեռուցման ու հաց թխելու համար օգտագործում էր երկխուց թիթեղյա վառարաններ, որոնք արագորեն տարածվեցին 1992թ. աշնան նախաշեմին:

Վերաբնակները լքված տներից ընտրում էին ռազմական գործողություններից նվազագույն վնասվածները: Փողոցային մարտերի հետևանքով շատ տներում ապակիներն ու դռները ջարդված էին: Ազատագրումից հետո, երկար ժամանակ, տների մեծ մասը մնացել էր «դռնբաց», և մինչև մշտական ապրողների գալը, գրանցում եղած գույքը, կարելի է ասել, ընդհանուր սեփականություն էր: Մինչև վերջին ժամանակներն այն տների հիմնական կամ միակ կահավորանքն է, քանի որ վերաբնակիչների մեծամասնությունը գրեթե ընչազուրկ էր դարձել 1988-1989թթ. և 1992թ. բռնագաղթի հետևանքով: Շատերն անցյալ տաս տարիներին չեն ունեցել կահույք ձեռք բերելու կամ բնակարան վերանորոգելու հնարավորություն:

Որոշ փոփոխություններ, այնուամենայնիվ, թե՛ ներսույթում, թե՛ առանձնատների կառուցվածքում, տեղի են ունեցել: Դրանցում նույնպես կա պատերազմական իրադրության թելադրանքը, առանձնատներից շատերի բակերում փորվեցին կամ շենքերի նկուղներում պատրաստվեցին ռմբապատարաններ: Դրանք առաջացան 1992թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին, երբ Շուշին հրետակոծվում էր ադրբեջանցիների կողմից:

Առանձնատներից շատերն ունեն ընդարձակ սրահներ, իսկ սենյակների թիվն ավելի է, քան անհրաժեշտ է վերաբնակված ընտանիքներին: Նման տները վերաբնակիչներն օգտագործում են մասնակիորեն. սենյակներից երկուսը կամ երեքը: Ձմռանը ջեռուցման դժվարություններն ստիպում են ավելի փոքրացնել օգտագործվող տարածքը:

Առանձնատներում կատարվեցին նաև որոշ արտաքին ձևափոխություններ, կապված կից շինությունների հետ: Դրանցից ավելորդ դարձածները քանդվեցին: Անասնապահությամբ զբաղվող ընտանիքները, այլ հարմար շինություն չունենալու դեպքում, ավտոտնակներն օգտագործում էին որպես գոմ:

Նշված բոլոր փոփոխություններում երևում է, թե ինչպես են վերաբնակները օգտագործել պատերազմից վնասված քաղաքում եղած նվազագույն հնարավորությունները, քանդված մի մասի հաշվին նորոգելով և հարմարեցնելով մյուսը, հատկապես՝ իրենց բաժին հասած տները:

Այս գործընթացին վարչակազմի մասնակցությունը սահմանափակվել է քաղաքի ընդհանուր տնտեսության վերականգնմամբ, որը նույնպես ընթացել է անբավարար ֆինանսական ապահովման պայմաններում: Նոր գլխավոր հատակագիծը, որով պետք է ընթանա վերակառուցումը, առայժմ ծրագիր է և որևէ կերպ չի ազդել քաղաքի վերջին տարիների զարգացմանը: Ամեն տարի արվում են թեթև վերանորոգումներ, որոշ վթարային շինությունների քանդման կամ «փրկարարական» փոքրածավալ շինարարական աշխատանքներ («Արցախ», 1993, 06.05): Բնակարանային շինարարությունը սահմանափակվել է ԱՄՆ հայերի բարեգործական վիճակախաղից ստացված միջոցներով կառուցված երեք առանձնատներով, զոհված ազատամարտիկների ընտանիքների տների բարեկարգման աշխատանքներով:

### **Տնտեսությունը և զբաղմունքները**

Ազատագրված քաղաքում առաջինը կայուն տնտեսական դիրք գրավեցին գուղատնտեսական զբաղմունքները, թեև դրանց հնարավորությունները նվազագույն են: Հողաշերտով ծածկված, հսկա կրաքարային ժայռի մոտ 500 հա մակերեսի հիմնական մասը 270 հա Շուշիի կառուցապատված հատվածն է: Քաղաքի ներքին տնամերձ հողակտորների 30 հա տարածքում կան սակավաթիվ պտղատու ծառեր: Շուշիի սարահարթը գուրկ է նաև ռոռզման ջրից:

Բնաաշխարհագրական այս սուղ պայմաններում, անցյալ տաս տարիներին բնակիչները ձևավորել են փոքր երկրագործական-անասնապահական համալիր, որն, իրենց իսկ կարծիքով, ժամանակավոր և օժանդակ բնույթ ունի: Դրա հիմնական պատճառը բնակչության աղքատությունն է, աշխատատեղերի սակավությունն ու ցածր աշխատավարձը: Առանձնատներում ապրող նախկին գյուղաբնակներն այս համալիրի հիմնական ներմուծողներն էին, սակայն քաղաքի գրեթե ողջ բնակչությունը տարբեր չափով մասնակից է դրան:

Արդեն 1993թ. գարնանը, որոշ ընտանիքներ իրենց տնամերձ հողակտորներում ցանեցին քանջարեղենի տեսակներ: Հետագա տարիներին նման քանջարանոցների թիվը և տարածքն աստիճանաբար ավելացավ: Հիմնական մշակաբույսերն են կարտոֆիլը և լոբին: Ցանում են նաև լոլիկ, որը լեռնային պայմաններում չի հասունանում, բայց պտուղը կարելի է թթու դնել: Այս մշակաբույսերով ցանված հողակտորների չափերը տարբեր են՝ հարյուրից մինչև 1.5-2 հազար քմ: Բացի սեփական տնամերձերից, շատ վերաբնակներ մշակում են հարևան անբնակ ու վնասված տներին կից հողակտորները, քանդելով բաժանաբար պատերը: Ոռոգում են խմելու ջրով, սակայն դրա սակավության և ոռոգման ջրի բացակայության պայմաններում, բույսերը հիմնական խոնավությունը ստանում են անձրևներից:

Շուշիի բնակլիմայական պայմանները նպաստավոր են սննդի մեջ օգտագործվող տարբեր հատապտուղների, բույսերի և սնկերի համար: Տնամերձերի մեծ մասում կար ընտանի մոռ, որից մուրաբա են պատրաստում, իսկ վայրի բույսերը հավաքում են գարնան սկզբից մինչև ուշ աշուն, **(Խմնտ.՝ Базеян, 2002)**: Դրանց առկայությունը շուշեցիների ուտեստում պահպանում է ավանդական «Ժինգյալավ հացը», խոտաբույսերով եփվող ճաշատեսակներ, թթու սունկը և այլն:

Անասնապահությամբ զբաղվելու նվազագույն հնարավորություն է տալիս սարահարթի կառուցապատումից ազատ մնացած տարածքը: Դրանով զբաղվողները հիմնականում նախկին գյուղաբնակներն են, որոնք տեղավորվել են առանձնատների գոտում, թեև գոմ կամ հավանոց կարելի է տեսնել նաև բազմաբնակարան շենքերի բակերում: Ըստ վարչակազմի տվյալների, 2002թ. քաղաքացիները պահում էին շուրջ 200 գլուխ խոշոր և 150 գլուխ մանր եղջերավոր անասուն, շուրջ 1000 թև թռչուն: Անասունների ձմեռումը, մեծ մասամբ, կազմակերպվում է քաղաքից դուրս, քանի որ մերձակայքի խոտհարքի համար օգտագործվող տարածքը բավականաչափ անասնակեր ապահովել չի կարող:

Անասուն պահող ընտանիքներն իրենք էլ սպառում են ստացվող կաթը, մածոնը, պանիրը, ձուն, իսկ ավելցուկ լինելու դեպքում վաճառում են հարևաններին: Նույն կերպ սպառվում է նաև հազվադեպ մորթվող անասունների միսը:



Ավանդական հայկական գյուղական այս տնտեսաձևերի դերը վերաբնակված ընտանիքների եկամտի կարևոր աղբյուրներից է, բայց շուշեցիները գիտակցում են, որ քաղաքային բնակավայրում չեն կարող ավելացնել դրանցից ստացվող մթերքի ծավալը: Բացի վերը նշված բնաաշխարհագրական խոչնդոտող պայմաններից, կան նաև մշակութային խանգարող հանգամանքներ, այդ թվում՝ համայնքի նախկինում քաղաքաբնակ մեծամասնության «համբերատար բացասական» վերաբերմունքը, հատկապես՝ անասնապահության հանդեպ: ԼՂՀ-ում հողի սեփականաշնորհումը, որը համարվում է Շուշիից 1996-1998թթ. արտագաղթի պատճառներից մեկը, ազդեց քաղաքում մնացողների գյուղատնտեսությամբ զբաղվելու եղանակի վրա: Վերջին տարիներին ինչպես նախկին գյուղաբնակները, այնպես էլ գյուղերում ազգականներ ունեցող մյուս վերաբնակիչները երկրագործական աշխատանքների շրջանում ժամանակավոր բացակայում են քաղաքից: Աշխատանք ունեցողները գյուղեր են մեկնում շաբաթվա վերջին, իսկ ոմանք բացակայում են տևականորեն: Կա գյուղերում սեփական հող ու անասուն ունեցող հարյուրից ավելի ընտանիք: Մեծամասնությունը գյուղում աշխատում է մերձավոր ազգականների հետ փոխօգնության սկզբունքով՝ համատեղ տնտեսություն վարելով, և արդյունքի մի մասը Շուշիում ապրող ընտանիքներին հասցնելով: Տնտեսական փոխօգնության այս եղանակը հայտնի է նաև Հայաստանի տարբեր բնակավայրերում (**Գաբրիելյան, 2001, էջ 85; Զաքարյան, 2001, էջ 120-122**): Սկզբում լինելով պատերազմական իրադրությամբ պարտադրված զբաղմունք, հետագայում տնտեսավարման այս եղանակներով քաղաք էր մտնում բնամթերքի հիմնական քանակը: Մինչև վերջին ժամանակները, գյուղատնտեսական զբաղմունքների նշանակությունն աճել է:

Շուշիի ավելի քան մեկուկես դար քաղաք լինելու հանգամանքը և 1950-1970-ական թթ. առաջացած ենթակառուցվածքները, վերաբնակիչներին ստիպում ու հնարավորություն են տալիս իրենց կարիքների մեծ մասը քաղաքային մասնագիտություններով հոգալու: Սա համապատասխանում է վերաբնակիչների նախկինում քաղաքաբնակ մեծամասնության ցանկություններին և նախապատերազմյան մասնագիտական պատրաստվածությունները:

Վերաբնակությանը նախորդող հակամարտ գործողությունները, Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, խանգարել էին արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը և հարկադիր պարապուրդի մատնել բնակչությանը, այդ թվում՝ Շուշիի հետագա վերաբնակիչներին: Հայաստանում նույնպես բնակչությունը զանգվածաբար գործազուրկ էր դարձել: Մինչև 1994թ. պատերազմող ԼՂՀ տնտեսությունն ամբողջությամբ քայքայված էր, իսկ աշխատունակ բնակչության մեծ մասն ընդգրկված էր բանակում (17-45 տարեկան բոլոր տղամարդիկ) և թիկունքային ծառայություններում: Շուշեցի շատ ընտանիքներ այս շրջանում ապրում էին զինծառայողների ստացած աշխատավարձերի հաշվին: 1996թ. քաղաքում տեղակայված գործամասերի դուրս բերումով կամ կազմացրումով Շուշիում գործազրկությունը հիմնական խնդիրներից մեկը դարձավ:

Նույն ժամանակաշրջանում, այսինքն՝ վերաբնակեցման առաջին տարիներին Շուշիում ձևավորվում էր քաղաքացիական աշխատանքի ոլորտը, ներկայացված պետական հաստատություններով: Առաջին ամիսներին կազմավորվող քաղաքի բնակարանային շահագործման, վարչական և կրթական հաստատություններում աշխատակիցների պակաս կար, սակայն այժմ դրանցում աշխատող 750 մարդիկ Շուշիի աշխատանք ունեցող բնակիչների 80%-ն են: Այս խմբի մեջ մտնողների ամսական միջին աշխատավարձը 20000 դրամ է, ինչն էլ կազմում է ընտանիքների մեծ մասի միակ դրամական եկամուտը:

Պետական աշխատավարձերի մեծ դերը Շուշիում երկու հիմնական պատճառ ունի, որոնց ազդեցությամբ գյուղի չափ բնակչություն ունեցող բնակավայրը կարողանում է պահպանել քաղաքային մշակույթի որոշ տարրեր: Առաջինը՝ քաղաքի անցյալն է, իսկ երկրորդը, որը նույնպես դրանով է պայմանավորված՝ շրջկենտրոնի կարգավիճակն է: Երկու գործոնները համատեղվում են: Դա երևում է, մասնավորապես, քաղաքում գործող դպրոցների օրինակով, որոնցում աշխատող 170 մանկավարժներ աշխատավարձ ստացողների ամենաստվար խումբն են: Քաղաքի դպրոցներից երկուսը Շուշիում կազմավորվեցին հենց առաջին տարում: Դրանցից մեկը պետական էր, իսկ մյուսը հիմնադրվեց ՀՅԴ ուսանողական կազմակերպության հանգանակած միջոցներով: Տարբեր տարիներին երկու դպրոցների միացման խնդիր է առաջացել, սակայն նույնիսկ դպրոցներից երկրորդի

արտաբյուջետային ֆինանսավորման սպառումից հետո դա տեղի չունեցավ, որովհետև դրանց աշխատատեղերը երաշխավորում են ուսուցիչների, որպես վերաբնակիչների, դրամական եկամուտները: Այս երևույթը հատկապես նկատելի էր Քաշաթաղի շրջանի փոքր գյուղերում, որոնցից յուրաքանչյուրում, անկախ բնակչության քանակից, ուսուցիչների որակավորումից և այլն, կազմավորվում էր դպրոց: Սա հիմնավորվում էր նրանով, որ աշխատունակ ընտանիքավոր վերաբնակիչների մեծամասնությունը դպրոցահասակ երեխա ուներ, հետևաբար գյուղերը բնակեցնելու համար տեղերում պետք էին դպրոցներ (ԴԱՆ, Քաշաթաղ, 1996): Իրականում, այդպիսի շատ դպրոցներ ունեցել են տնտեսական, իսկ Շուշիում նաև քաղաքագոյացնող գործառույթ (Գաբրիելյան, Դաբադյան, 1997):<sup>1</sup>

Նշված ոլորտներից բացի, որոնցում առաջնային է պետության ֆինանսական մասնակցությունը, քաղաքի իրական կարիքներին և հնարավորություններին արձագանքելով, անցյալ տասնամյակում առաջացել են հարյուրից ավելի ՍՊԸ-ներ, ՓԲԸ-ներ, անհատական ձեռնարկություններ, կամ, այսպես կոչված, «մասնավոր հատվածը»: Դրանցում աշխատում են վարձատրվող աշխատանք ունեցողների ընդամենը 20%-ը: Ձեռնարկությունների մեծ մասը հաճախակի հայտնվում է պարապուրդի մեջ: Կազմակերպաիրավական տեսանկյունից այս ոլորտը Շուշիում ոչնչով չի տարբերվում ԼՂՀ և ՀՀ մյուս քաղաքներից, իսկ ձեռնարկությունների բնույթը ցույց է տալիս քաղաքային տնտեսության զարգացման մոտակա հեռանկարը:

Նախ՝ նշված քանակության մեջ մեծ տեղ են գրավում շինարարական կազմակերպությունները, որոնք առայժմ զբաղվել են միայն քաղաքի վարչական և բազմաբնակարան շենքերի վերանորոգման և ամրացման աշխատանքներով: Եթե 1993թ. ամռանը դրանց համար մասնագետներ էին հրավիրվել Հայաստանից, ապա 2002թ. Շուշիում կար ոլորտում մասնագիտացած երկու տասնյակ փոքր ձեռնարկություն, որոնք նոր տնտեսական պայմաններին հարմարվելու առաջին կազմակերպական ձևերն էին:

---

<sup>1</sup> Շուշիի վերաբնակիչները, տնտեսական խնդիրներից բացի, այս եղանակով փորձել են լուծել քաղաքի հայկականության վերականգնման խնդիրը, որին անդրադարձել ենք V գլխում: Վերաբնակեցվող շատ բնակավայրերում եղել է նման պատկերացում, ըստ որի, բնակավայրը կայացած է համարվում միայն դպրոցի առկայության դեպքում. «...Եթե բնակավայրից ծուխ է բարձրանում, գյուղը կա, պիտի դպրոցական զանգն էլ հնչի՝ թեկուզ մեկ երեխայի համար» («ԼՂ Հանրապետություն», 1995, 14.04)

Ներկայում կարելի է խոսել շինարարական մասնագիտությունների տիրապետողների թվի ավելացման մասին:

Այս ոլորտի զարգացումը հիմնված է պետական պատվերների և ֆինանսավորման վրա, սակայն աշխատանքի սեզոնային բնույթը, նույնիսկ աշխատավարձերի կանոնավոր վճարման դեպքում, դարձնում է այն ոչ բավականաչափ շահավետ: Վերջին երեք տարիների, հատկացված պետական միջոցների քառապատիկ ավելացման պայմաններում անգամ, շատ ձեռնարկություններ ու շինարարներ հաճախ հայտնվում են պարապուրդի մեջ և ստիպված են լինում աշխատանք փնտրել Շուշիից դուրս, հիմնականում Ստեփանակերտում:<sup>1</sup>

Մյուս ոլորտը, որում ինքնուրույն զարգացում է նկատվում, առևտուրն է: Մինչև 1994թ. վերջը Շուշիում միայն երկու գործող խանութ կար, որոնցից մեկը կտրոններով այլուրի բաշխման կետ էր, իսկ մյուսում վաճառվում էր նախապատերազմյան գինի: 1995թ. կրպակների և խանութների թիվը կտրուկ աճեց, բայց հետո մանր առևտրի այս կետերի մեծ մասն աստիճանաբար փակվեց, և 2000թ. քաղաքում գործում էր երկու տասնյակից ոչ ավելի խանութ ու կրպակ: Բնակչության սակավության պատճառով, առևտուրը հիմնականում ընթանում է արդի գյուղերին բնորոշ եղանակներով: Շատերն առևտուր են անում տնից, քանի որ գնորդները ճանաչում են վաճառողներին և գիտեն, թե յուրաքանչյուրն ապրանքների ինչ տեսականի ունի: Բնակչությանն անհրաժեշտ սննդամթերքի հիմնական տեսակները ներմուծում և վաճառում են գյուղերում ազգականներ ունեցող վերաբնակիչները: Որոշ կրպակների տերերի հետ զրույցներում նկատվել է, որ կանխիկ գումարների բացակայությունը սահմանափակում է առևտուրը: Ստեփանակերտի մերձությունը թույլ է տալիս խոշոր գնումների համար օգտվել տեղի շուկայից: Շատ են ապառիկ գնումներ անողները, որոնց պարտքերը հասնում են հարյուր հազարավոր դրամների, ինչն իր հերթին կրպակների տերերին թույլ չի տալիս պարբերաբար ապրանք բերել և համալրել տեսականին:

---

<sup>1</sup> Համադրելով այս վիճակը գյուղատնտեսությանը զբաղվողների ժամանակավոր տեղաշարժերի հետ, կարող ենք նկատել Շուշիում «ճոճանակային միգրացիայի» առանձնահատկությունը, փոքր քաղաքն աշխատուժով մասնակցում է թե՛ գյուղերի, թե՛ ավելի խոշոր քաղաքի տնտեսությանը: Նման իրավիճակ արձանագրվել է նաև Հայաստանի Շիրակի մարզի փոքր քաղաքներում՝ 1970-ական թթ. (Սեդրոսյան, 1980)

Վերջին տարիներին առևտրի ցանցը նույնպես որոշ փոփոխություններ է կրել, շուշեցի առևտրականները մոտավորապես ամիսը մեկ անգամ լինում են Բագրատաշենի սահմանային տոնավաճառում կամ Երևանում, որտեղից ներմուծում են հագուստ և սննդամթերքի որոշ տեսակներ: Շուշիի շրջանի և ԼՂՀ այլ գյուղերից ներմուծվող գյուղատնտեսական մթերքն արդեն վաճառվում է մշտական գործող կրպակներում:

Ըստ քաղաքի ղեկավարության հետ մեր հարցազրույցների (**ԴԱՆ, Շուշի, 2000**), և «Շուշի» թերթի հաղորդումների, 1992թ. աշնանից քաղաքում արդյունաբերության զարգացման փորձեր են կատարվում, սակայն հիմնված ձեռնարկությունները կարճատև աշխատելուց հետո փակվում են: Շուշին խորհրդային շրջանում չունեի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ հուշանվերների, գորգերի, երաժշտական գործիքների արտադրամասերը առողջարանային քաղաքի ընդհանուր տնտեսության մասն էին կազմում (**Մելքումյան, 1990, էջ 59**): Դրանց շենքերում մնացած սարքավորումների միջոցով և պետական կամ մասնավոր փոքր ներդրումներով գործարկված ձեռնարկությունների կարճատևությունը և խիստ տարբեր ոլորտների պատկանելն առայժմ չի նպաստել դրանցում ժամանակավոր աշխատած վերաբնակիչների մասնագիտություն ձեռք բերելուն: Բնականաբար, դրանց ազդեցությունը քաղաքի տնտեսության և ընտանիքների բարեկեցության վրա նույնպես նվազագույն է: Վերաբնակիչների մեծամասնությունը մնում է կարիքավոր: Աշխատավարձը չի բավարարում նվազագույն կարիքները հոգալու համար և հարկ է լինում պակասը լրացնել այլ զբաղմունքներով: Քանակական տվյալներ չունենք Շուշիում տիրող աղքատության չափերի մասին, անձնական դիտարկումներով, պատկերը նման է Հայաստանի միջին և փոքր քաղաքների վիճակին: Պետական խնամատարությունը և տարբեր հասարակական ու բարեգործական կազմակերպությունների օգնությունն ընդգրկում է տասնյակ ընտանիքներ, որոնց թվում են պատերազմում զոհվածների ընտանիքները, հաշմանդամները, միայնակ ծերերը: Պետական թոշակներն ու նպաստներն անբավարար են նրանց գոյության ապահովման համար: Շուշիում գործող Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի, Քրիստոնեական Միջազգային Ծառայության, Ավետարանչական եկեղեցու կանոնավոր բարեգործությունը նույնպես մեծապես օգնում է նրանց:

## ԳԼՈՒԽ IV

### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

#### Վերաբնակության ավանդական գործոնները

Նախորդ գլուխներում նշեցինք, թե ինչ պայմաններում են հայերը «բռնել Շուշիի ճանապարհը» և հաստատվել այստեղ: Այդ պայմաններն, իրոք, վերաբնակության պատճառ են: Օրինակ՝ բնակարանի խնդիրը հավասարապես առաջնային է եղել գրեթե բոլոր վերաբնակիչների համար. Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ընթացքում ավերվել է 10000 անհատական բնակարան ու առանձնատուն (**Մելիք-Շահնազարյան, 1998, էջ 151-167; ԼՂ Հանրապետություն», 1995, 19.05**): Բռնագաղթը, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացումը նույնպես վերաբնակության դրդող գործոններ են: Այս բոլոր դրդապատճառները նշել են շուշեցի բանասացների մեծամասնությունը, ավելացնելով մի շարք այլ ուղեկցող հասարակական-մշակութային գործոններ: Դրանցից են ավանդական գործոնները, դրսևորված ինչպես հայոց ավանդական գյուղական հասարակական կենցաղում, այնպես էլ XXդ. երկրորդ կեսի քաղաքայնացման գործընթացներում:

Ընտանիքից ավագ որդիների բաժանման սովորույթը Լեռնային Ղարաբաղի հայերի XIXդ. հասարակական կենցաղում գործում էր որպես հներից անջատման եղանակով նոր գյուղերի հիմնադրման, իսկ դարի վերջին քառորդից՝ գյուղերից քաղաք արտագաղթի հիմնական մշակութային գործոններից էր (**Մկրտչյան, 1985; Мкртчян, 1985**): Հին արմատներ ունեցող այս սովորույթն ազդեցիկ էր նաև Հայաստանում, որտեղ XXդ. գործում էր որպես բնակչության ներքին և արտաքին տեղաշարժերը, այդ թվում՝ արտագնացությունը և քաղաքայնացումը կարգավորող միջոց (**Գալստյան, 1998, էջ 32; Карапетян, 1986, էջ 123-124**):

Շուշիի վերաբնակիչների բոլոր ներէթնիկ խմբերում այս գործոնը նշանակալի է: Ավելին, այն հստակ դրսևորվեց քաղաքում արդեն մի քանի տարի բնակված համեմատաբար խոշոր ընտանիքների վարքում, որոնց չափահաս զավակները (հաճախ ավագ որդիներ), գրանցվում էին ծնողներից առանձին և բնակարան զբաղեցնում իրենց ապագա ընտանիքի համար: Քանի որ սա հիմնականում գտնվում է հայրական տան հարևա-

նությամբ նույն շենքում կամ թաղամասում, ապա դրանով շարունակվում է նաև վերաբնակության փուլում եղած ազգականների հարևանության երևույթը:

Շուշին քաղաքային բնակավայր է, ինչը ուղղակիորեն ազդել է այստեղ բնակություն հաստատելու անհատական որոշումների վրա: Գյուղից քաղաք բնակչության շարժը Հայաստանի և ԼՂՀ քաղաքայնացման հիմնական եղանակներից է: Դրանում արտահայտվում են քաղաքայնացման նախորդ տասնամյակների ժողովրդագրական փոփոխությունները, որոնց հետևանքով հայերի մեծամասնությունն արդեն քաղաքաբնակ է:

Շուշիում կենսապահովման պայմանների նկարագրության մեջ նշեցինք, որ ԼՂՀ գյուղերի հետ կապը Շուշիի արդի բնակչության տնտեսավարման հիմնական միջոցներից է: Դրան նպաստող հանգամանք է վերաբնակների մեծամասնության գյուղաբնակ ազգական ունենալը, ինչի ազդեցությամբ, Շուշիի ու ԼՂՀ գյուղերի միջև հարաբերություններն ընթանում են Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում նկատված սերտացման ուղով, քաղաքում և գյուղում բնակվող ազգականների միջև ամրապնդվել է փոխօգնությունը, որոշ դեպքերում փոխելով ուղղությունը և բնույթը (**Ջաքարյան, 2001, էջ 121; Մարություն, 2001, էջ 396**): Ըստ Հայաստանում վերջերս կատարված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների (**Закарян, 2003**), գյուղերում և քաղաքներում ապրող ազգականների շփումներն ավելացել են ի հաշիվ առաջինների ձեռք բերած ավելի մեծ տնտեսական նշանակության:

Փոքր քաղաքի օրինակով, ինչպիսին Շուշին է վերջին տասնամյակում, կարելի է տեսնել, որ, նույնիսկ տնտեսապես ոչ բարվոք վիճակում, դրանք շարունակում են համալրվել գյուղացիներով: Այսպես, առաջին տարիներին նախկինում գյուղացի վերաբնակների մեծամասնությունը Շուշիից արտագաղթեց: Իսկ ՀՀ-ից վերաբնակիչների մի մասը 1995թ. վերաբնակվեց շրջանի լքված գյուղերից մեկը:<sup>1</sup> Այս գործընթացներից հետո նկատվեց, որ քաղաքը համալրվում է նոր գյուղաբնակներով, որոնց մեծ մասը կազմում են ուսման նպատակով Շուշի եկած, կամ այստեղ ամուսնացած երիտասարդները: Այսինքն՝ գյուղից քաղաք ներհոսքը արդի Շուշիում ձեռք է

---

<sup>1</sup> Գյուղ վերաբնակվողը նաև ավելի նշանակալի պետական օժանդակություն է ստանում՝ 100000 դրամ դրամ վարկ կամ անասուն

բերել 1980-ական և ավելի վաղ տարիներին բնորոշ հատկանիշներ: Վերաբնակության այս եղանակը կարելի է գնահատել որպես ավանդական տարրեր պարունակող: Ինչպես և խորհրդային տարիներին, այն ընթանում է քաղաքում ապրող ազգականների օգնությամբ:

Շուշիում վերաբնակության առանձնահատկություններից է բռնագաղթածների մի քանի խմբերի առկայությունը: Հասկանալի է, որ բռնագաղթն ուղեկցվել է զոհերով, հոգեբանական ցնցումներով, նյութական կորուստներով: Վերաբնակիչների մեծամասնությունը վերապրել է նաև պատերազմի ավելի ծանր շրջանը: Նրանց համատեղ բնակությունը Շուշիում ձևավորել է համայնքային և խմբային ինքնապատկերացումների համակարգ, որը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում և կոլիտարկվի առանձին:

### **Բռնագաղթը վերաբնակության հասարակական-մշակութային գործոն**

Բռնագաղթածների համատեղ և գրեթե միաժամանակյա վերաբնակությունը Շուշիում առաջ է բերել ինքնապատկերացումներ, որոնցից մեկը կարելի է նկարագրել բանասացներից մեկի հետևյալ խոսքերով. «Շուշիի բնակչության մեծ մասը եկվորներ են, տարբեր տեղերից՝ Ղարաբաղից, Հայաստանից, Բաքվից, Մումգայիթից: Նույնը, ինչ որ Քաշաթաղի շրջանն է, այնտեղ էլ են բոլորը եկվոր: Այստեղ (Շուշիում) երկու հազարի չափ դարաբաղի կար մինչև շարժումը, նրանց մեծ մասը վերադարձավ, իսկ մնացածները, որոնք եռակի ավելի են, տարբեր տեղերից են: Սրանով է տարբերվում Շուշին Ղարաբաղի ուրիշ շրջկենտրոններից ... բոլորը փախստականներ են» (**ԴԱՆ, Շուշի, 2000**):

Շուշիի բնակչության կազմում նախկին բռնագաղթվածների գերակշռությունը, թեև վերջին բռնագաղթից անցել է շուրջ մեկուկես տասնամյակ, շարունակում է տարբերակիչ դեր կատարել ներկայիս շուշեցիների և ոչ շուշեցիների միջև: Վերաբնակիչները «փախստականի» կերպարին ավելացնում են «տնանկ», «աղքատ» բնութագրիչները, իրենց դժվար նյութական կացությունը համարելով բռնագաղթի հետևանք: Միաժամանակ, դա ազդում է վերաբնակիչների միջխմբային, ինչպես նաև շուշեցիների և ոչ շուշեցիների փոխադարձ պատկերացումների վրա:



Այս իրադրությունը կարելի է լուսաբանել բնիկ շուշեցիների խմբի օրինակով, որոնք միանշանակ դիրք ունեն բնակության իրավունքի հարցում, վերադարձել են ծննդավայր, որտեղից բռնագաղթի պատճառով բացակայել էին ընդամենը 4-5 տարի: Այն հանգամանքը, որ վերադարձել են ոչ բոլորը (ընդամենը 40%-ը), բացատրվում է նրանով, որ ավելի ունևորները կամ արտագաղթել են ԼՂՀ-ից դուրս, կամ ընդմիջտ տեղավորվել են Ստեփանակերտում: Այս փաստը նշողները հիմնականում դատապարտում են Շուշի չվերադարձած նախկին հայրենակիցներին:

Վերաբնակիչները նման հակադրությունները, դրսևորված համայնքի ներէթնիկ խմբերի մակարդակով, որոնք բանասացներն իրենք անվանում են «տարբերություններ», կարող են ստանալ «հայրենասեր» - «ոչ հայրենասեր», «լավ հայ» - «վատ հայ» հակադրումների տեսք:

Նշենք նաև, որ այս իրողությունը բնորոշ է ոչ միայն Շուշիին: Նմանօրինակ վիճակների դիտարկումները հազվադեպ չեն ներէթնիկ ներգաղթի ու արտագաղթի հետ կապված իրողությունների հայ և օտար ազգագրագետների ուսումնասիրություններում: Ընդ որում, հայ հանրային այս դեպքերում, կարծես, փոխում է «յուրային» - «օտար» սահմանի դիրքը, կիրառելով այն իր մեջ: Նման իրադրություն հետևեց 1946-1948թթ. Մեծ եղեռնից փրկված 90.000 արևմտահայերի հայրենադարձությանը, որով նրանք իրենց հայրենիքում «ախպար»-ների խումբ կամ մշակութային փոքրամասնության դարձան (Абрамян, 2000, էջ 67-68; Мелконян, 2000, էջ 26-27): Ավելի մոտ անցյալից ունենք Ադրբեջանից հայ փախստականների նախադեպը, որոնց մի մասը ներէթնիկ լեզվական, մշակութային ու արժեքային առանձնահատկությունների արդյունքում հայտնվեց տեղացիներից որոշ մեկուսացվածության ու օտարվածության վիճակում (Հ.Խառատյան, 1998; Dudwick, 1997): Ներէթնիկ խմբային կամ հայրենակցական սկզբունքով փոխադարձ բացասական վերաբերմունքի արտահայտություններ կան նաև հայկական Մփյուռքի «հնաբնակներ»-ի և նորեկ «հայաստանցիների» միջև (Абрамян, 2000, էջ 64-65): Այս վերջին հակադրությունը ՀՀ անկախացումից հետո թափանցել է նաև Հայաստան - Մփյուռք հարաբերությունների որոշ ոլորտներ (Паносян, 2000, էջ 34-42; Astourian, 2000, էջ 37-42): Ներէթնիկ

հատվածականության այս դրսևորումները հայերի գաղթի կամ վերաբնակությունների հետևանք են, թեև ունեն նաև այլ պատճառներ:<sup>1</sup>

Նախկին շուշեցիների խմբի ներսում այս վերաբերմունքը պետք է լրացնել հետևյալ դիտողությամբ, քաղաքից բացակայողների զգալի մասն այժմ այստեղ բնակվողների մերձավոր ազգականներն են: Նրանց մասին առանձին հարցազրույցներում նախկին շուշեցիները փոխում են մեկնաբանությունը և ճշտում, որ արտագաղթը ոչ թե հայրենասիրության պակասի, այլ նյութական ծանր կացության հետևանք է (հմմտ.՝ արտագաղթողների նկատմամբ հակասական վերաբերմունքի արտահայտությունները Հայաստանում ու արտերկրում՝ Արտագաղթը Հայաստանում, 2003; Գալստյան, 1998, էջ 46-56; **Майничева, 2000, էջ 147-149**):

Բռնագաղթվածների միջև վերոհիշյալ «տարբերությունները», առաջին հերթին, դրսևորվում են վերաբնակիչների կենսապահովման խնդիրներում, քաղաքում բնակարանների բաշխման, իշխանության մարմիններում ներկայացվածության և այլ: Օրինակ՝ քաղաքի դրսեկ «ստեփանակերտցի» ղեկավարությունից դժգոհությունների հողի վրա նախկին շուշեցիների շուրջ երբեմն համախմբվում էին ժամանակակից շուշեցիները, այդ թվում՝ Հայաստանից վերաբնակվածները (**ԴԱՆ, Շուշի, 1996**):

Սակայն սա կարող ի հայտ է գալ նաև առանց նյութական շահագրգռության, ինչը կարելի է տեսնել «հայաստանցի» (Հայաստանից վերաբնակված) - «ղարաբաղցի» (ԼՂՀ կամ Ադրբեջանից վերաբնակված) փոխհարաբերությունների օրինակով: Հայաստանից վերաբնակիչները, որոնք Շուշիում ամենափոքր խումբն են, քաղաք են եկել հիմնականում 1995թ. (**«Շուշի», 1995, 7**): Տարբեր են եղել նաև վերաբնակության եղանակները. Հայաստանից եկել են որևէ կազմակերպության առանձնակի գումարտակի, «Արամ Մանուկեան» վարժարանի, Հայաստանում ԼՂՀ ներկայացուցչության միջնորդությամբ, այլ ոչ թե անձնական ազգակցական, ընկերական, հարևանային կապերի միջոցով, ինչպես մյուսները: Այսուհանդերձ, մյուս վերաբնակիչների և այս խմբի փոխադարձ գնահատականներում «տարբերություններ» եղել են:

---

<sup>1</sup> Հայտնի օրինակ է Իսրայելի վերաբնակության տարբեր փուլերում հրեաների ներթնիկ խմբերի՝ աշկենազիների, սեֆարդների, վերջերս նաև՝ ֆալաշների և խորհրդային հրեաների միջև ընդգծված տարբերությունները

Բացառությամբ Հայաստանից վերաբնակիչների, մյուս բոլոր խմբերը, ներառյալ Ադրբեջանից փախստականների մեծամասնությունը, Արցախի պատմագագազրական շրջանից են և ունեն բարբառի, կենցաղի, մշակույթի այլ տարրերի էական ընդհանրություններ: Դրանց հիմամբ քաղաքում ձևավորվում է տեղական մշակութային նկարագիր, որի բնորոշ տարրերից է Ադրբեջանից բռնագաղթվածների երկլեզվության, Հայաստանից վերաբնակիչների բարբառների նկատմամբ Արցախի բարբառի ձեռք բերած գերակշռությունը:

### **Բնակավայրի իրավունքը**

Շուշիի արտահայտվեց վերաբնակության ավանդական և նոր պայմանների յուրահատուկ միասնություն վերաբնակության վայրի «հայկականության» պայմանում, որը վերաբնակչի համար, պատմականից բացի, ունի որոշակի իրավական նշանակություն: Շուշիում վերահաստատված հայերն իրենց բնակությունը դիտում են որպես վերադարձ հայրենիք (**Ղիտարկումներ, Շուշի; ԴԱՆ, Շուշի, 1996; 2000; 2002**): Վերաբնակիչների հետ տևական շփման դեպքում կարելի է նկատել, որ հստակ տարբերակվում են «գրավումը»՝ որպես միանգամյա ռազմական գործողության արդյունք, և «ազատագրումը»՝ որպես պատմական խոր հիմքեր ունեցող գործընթաց: Սա վերաբերում է ոչ միայն Շուշիին, այլև նախկին ԼՂԻՄ տարածքում և հարևանությամբ գտնվող մինչև 1988թ. խառը բնակչությամբ կամ ադրբեջանաբնակ բնակավայրերին, որոնք պատերազմի ընթացքում անցել են հայերի վերահսկողության տակ (**Մարտունի, 1996; Հաղբուր, 1996; Քաշաթաղ, 1996**):<sup>1</sup>

Վերաբնակիչները քաղաք են մտել զինվորների հետ և նրանցից հետո: Հայերի Շուշի վերադառնալու առաջին նշաններից էին տների դարպասներին ու դռներին զինվորների թողած գրությունները, որոնք հայտնվեցին 1992թ. մայիսի 8-ին, իսկ հաջորդ օրերին ու ամիսներին տարածվել էին քաղաքի բոլոր բնակարանների վրա: Զինվորականներից շատերը քաղաքում մնացին ընդամենը մի քանի օր, քանի որ ռազմական իրադրությունը պահանջում էր նրանց ներկայությունը ճակատային գծում: Հետագայում

---

<sup>1</sup> Նույն կերպ են արտահայտվել նաև Լ.Խառատյանի և Դ.Ռիֆի հետ զրուցած ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հայ բնակիչները (**Խառատյան, 1999, էջ 37; Rieff, 1997**)

բնակարանների «սեփականեցման» նույն եղանակին հետևեցին նաև քաղաքացիական անձինք: Ներկայացնենք այդ գրությունների մի քանի օրինակ.

**«տունը զբաղված է-«անուն ազգանուն»»**

**«Дом занят (անուն, ազգանուն)»**

**«Հայի տուն է, խնդրում եմ չմտնել («ձեռ չտալ»)»**

**«Այստեղ ապրում են («ապրող կա»)»**

**«Здесь живут»**

**«Дом занят / группа Тигран / Ордера на руках / Жильцы ушли на фронт»**

- քառահարկ մի շենքի վրա **«Дом занят / группа Сасун»**

**«Дом занят / Ордер N..... (-ինքնաձիգի համարը)»** (Դիտարկումներ; ԴԱՆ, Շուշի, 1996):

Քաղաքի առանձին հատվածներում այս գրությունների փոխադասավորությունը ցույց է տալիս, որ Շուշիի ազատագրմանը մասնակցած զորաջոկատների շատ մարտիկներ բնակարաններ էին զբաղեցնում նույն շենքում կամ ընտրում էին հարևան առանձնատներ: Նրանց մեծ մասը հետագայում, տարբեր պատճառներով, չդարձավ Շուշիի բնակիչ կամ ապրում էր այլ բնակարանում: Նրանց արած գրությունները կրող տներում բնակվեցին այլ մարդիկ, որոնք շատ դեպքերում նրանց ազգականները կամ ծանոթներն էին: Շուշիում բնակարանների վերաբաշխման ընթացքում վերոհիշյալ գրությունները որոշ իրավական դեր ունեին: Դրանց հեղինակները, եթե չէին բնակվում «գրավոր» յուրացված տանը, իրենց իրավունքը փոխանցում էին վերաբնակիչներից որևէ մեկին: Առաջին օրերին և ամիսներին այն կարող էր սխալմամբ արված ճանաչվել միայն այն դեպքում, եթե գրվել էր 1988թ. առաջ հայ ընտանիքի պատկանած բնակարանի վրա: Նման դեպքերում զինվորի իրավունքը ստորադասվում էր նախկին շուշեցու իրավունքին: Բոլոր մյուս դեպքերում գրությունը, հատկապես, երբ դրա հեղինակը զինվորական էր, հաշվի էր առնվում որպես տան սեփականության կամ ապրելու իրավունքի վկայագիր: Այն հաշվի էր առնում նաև Շուշիի վարչակազմը, նախքան բնակարանների սեփականության հարցերի վերջնական կանոնակարգումը: Վերաբնակիչների ներհուսքի աճին և բնակարանների բաշխման վարչական միջոցների գոր-

ծաղրմանը զուգահեռ, գրություններն աստիճանաբար կորցրեցին իրենց նշանակությունը:

«Սեփականեցման» այս գրությունները միայն պատերազմական իրադրության արտահայտություն չէին:<sup>1</sup> Դրանց ժամանակավոր իրավական նշանակությունն ազդում էր բնակարանի ընտրության եղանակների վրա: Այն հիմնված էր Շուշիի ազատագրմանը նախորդած ժամանակում, 1988թ.-ից հայ ինքնության որոշակի փոփոխություններին, որոնք դիտարկվել են մի շարք հայ ազգագրագետների աշխատանքներում (**Աբրահամյան, Մարության, 1997, էջ 68; Մարության, 2000, էջ 281-298; Marutyan, 2003, էջ 51-52**): Եղեռնի գոհերի հիշատակի արարողությունների, Ղարաբաղյան շարժման հանրահավաքների ցուցապատումների բովանդակության մեջ տարեց-տարի զգալի տեղ գրավեցին սեփական ուժերով պատմական արդարության վերականգնման կոչերը: Դրանց զուգահեռ տեղի էր ունեցել ևս մի փոփոխություն. արևելահայերենում լայն կիրառություն գտավ «ազատամարտիկ», որը 1990թ. ՀՅԴ կուսակցության մամուլի միջոցով կիրառության դրված «ազատամարտիկ» բառը փոխարինեց «ֆիդայի» բառին, որով մինչ այդ կոչվում էին կամավորական ջոկատների անդամները:<sup>2</sup> Խորհրդանշանային այս փոփոխությունների մաս էին կազմում նաև «ազատամարտ» և «ազատագրում» բառերը, որոնցով արտահայտվում էր հայերի վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղում ռազմական բնույթ ստացած հակամարտությանը, դրա ընթացքին և արդյունքին:

Հայերի վերադարձը Շուշի հետևում էր ինքնության այս նոր դրսևորումներին: Վերաբնակության և քաղաքում բնակարանի ընտրության ընթացքում այն սովորության իրավունքի կարճատև դրույթ էր, որը փոխվեց, երբ Շուշիում հաստատվեցին բռնագաղթվածները: Ընդհանուր վերաբերմունքը Շուշիում բնակվելու հայերի իրավունքի նկատմամբ, ներառյալ զինվորի և նախկին շուշեցու իրավունքը, մնաց անփոփոխ, սակայն առաջացավ որոշ ներքին դասակարգում, «ով է ավելի արժանի Շուշիում ապրելու» սկզբունքով: Ինչպես նշեցինք, առաջին օրերից քաղաքում բնակարան ընտրած ազատամարտիկների իրավունքից բարձր էր դիտվում իր տուն վերադար-

<sup>1</sup> Դրանք մեծ մասամբ ռուսերեն էին, ինչպես և 1992թ. Ղարաբաղի գրավված բնակավայրերում ադրբեջանցիների թողած նույնաբնույթ գրությունները

<sup>2</sup> ԼՂՀ նորակազմ ինքնապաշտպանության ուժերի մարտիկներին այս ժամանակաշրջանում տեղացիները կոչում էին նաև ռուսերեն «Боевик» բառով

ձած բնիկ շուշեցու իրավունքը: Բոլոր մյուս վերաբնակների իրավունքներն ավելի ցածր էին դասվում՝ ըստ ազգային ազատագրական պատերազմին մասնակցության չափի: Այս խտրական վերաբերմունքի ստորին աստիճանին սահմանամերձ բնակավայրերից տեղահանվածներն էին, որոնք համարվում էին իրենց «տունը թուրքին թողած», «փախած», որոնց փոխարեն պատերազմել են մյուս դարաբաղդիները: Նրանց նկատմամբ հասարակական կարծիքն ավելի անբարենպաստ էր, քան Հայաստանից վերաբնակվածների, որոնց չպատերազմելը հասկանալի էր համարվում: Այս վերաբերմունքը, ազատագրված բնակավայրերի բնակիչներին վերադարձնելու պետական քաղաքականության հետ միասին, կարևոր դեր խաղաց Շուշիից նախկին գյուղաբնակների արտահոսքում:

### **Առաջին ներհամայնական կապերը**

Շուշիում վերաբնակիչներից համայնք սկսեց ձևավորվել այնպիսի պայմաններում, որ նման էին նույն ժամանակաշրջանի Հայաստանի «մութ տարիներին» (Plata, 2002): Տարբերություններից էր այն, որ վերաբնակների մեծամասնությունը միմյանց անծանոթ էր: Վերաբնակության հատկապես առաջին տարիներին, թեև ազատ տների քանակությունը թույլ էր տալիս վերաբնակիչներին առանձին կացարաններ ունենալ, միայնակ մարդկանց որոշ խմբեր ապրում էին միասին կամ գործընկերոջ, հարևանի տանը: Ծանր կենցաղային պայմանները և անհրաժեշտաբար փոխօգնությամբ կատարվող աշխատանքները ստեղծում էին հաճախակի հանդիպելու և միասին լինելու պայմաններ, ինչը փոխակերպվում էր հանրակացարանային կենցաղի: Մա, թերևս հասարակական կապերի առաջին եղանակն էր, որը երկար չտևեց: Դրան զուգահեռ, իսկ երբեմն դրա հիմամբ, վերաբնակների քանակի աճով սկսեցին ձևավորվել հարևանային հարաբերությունները: Դրանց հիմքում բնակարանի ընտրության եղանակներն էին: Ազգական հարևաններից բացի, որոնք փոքրամասնություն էին, նույն շենքում կամ թաղամասում բնակվում էին անծանոթներ: Նրանց առաջին շփումներն զգուշավոր էին. Շուշի տեղափոխված ընտանիքներն անցնում են մի յուրօրինակ «փորձաշրջան», որից հետո միայն որոշվում էր հարևանային հարաբերությունների բնույթը:

Առաջին օրերին ավելի վաղ վերաբնակիչների կողմից նորեկներին մատուցված օգնության շնորհիվ նախկինում միայնաց անձանոթ մարդկանց միջև վստահություն էր ստեղծվում: Հետագա ամենօրյա կենցաղը և պարբերական շփումների այլ օջախների առաջացումն օգնում էր ընդարձակելու անհատների և ընտանիքների ծանոթության շրջանակը:

Հասարակական հարաբերությունները Շուշիում արդեն կարելի է նմանեցնել հայկական գյուղական համայնքների ներքին հարաբերություններին, թեև դրսևորվել են որոշ առանձնահատկություններ: Օրինակ՝ վերաբնակչի թաղմանը մասնակցելու եկող ազգականները հիմնականում քաղաքից չեն, ինչի հետևանքով ներկաների մեծամասնությունը կազմում են հարևանները: Վերաբնակներից շատերի ազգականները հեռու են ապրում, իսկ երբեմն կապ չունեն նրանց հետ, ինչի հետևանքով շատերը չեն կարողանում մասնակցել թաղման արարողությանը: Եղել են դեպքեր, որ հանգուցյալին թաղել են միայն հարևանները, վարչակազմի օգնությամբ:

Մյուս կարևոր ուղղությունը, որով համախմբվում են վերաբնակիչները, աշխատանքային շփումներն են: Դրանք առանձնապես գործուն դեր ունեն քաղաքում հասարակական հարաբերությունների բովանդակության առումով: Տարիների ընթացքում կայացել են գործընկերային փոքր խմբեր, որոնք հատկապես էական են Շուշիի ապագային միտված նախաձեռնությունների առաջադրման, դրանց անմիջական իրականացման փուլերում, ունեն ընդհանուր կապեր քաղաքից դուրս և ներսում: Դրանց հիմամբ, աստիճանաբար ամենօրյա կայուն հարաբերություններ են առաջանում երկու, երեք, կամ ավելի շատ ընտանիքների միջև, որոնք հարևաններ չեն:

Շուշիի քաղաքային տնտեսության հատուկ բնույթը, որում, ինչպես նշեցինք, զգալի է պատմական անցյալի դերը, գործնական միջավայրում համագործակցության լրացուցիչ պայման է: Շատերը, հատկապես մտավորականությունը, ձգտում են ընդարձակել քաղաքի մշակութային անցյալի նկարագրի վերականգնմանն ուղղված գործունեության շրջանակը:

## ԳԼՈՒԽ V

### ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ՄԿԻԶՄԸ

#### Ապագայի ծրագրերի ընդգրկումը

Շուշիի ազատագրման առաջին օրվանից եղել են տարբեր ծրագրեր «վերականգնում», «վերածնունդ» և այլ նման արտահայտություններով (**Բալայան, 1995, էջ 173; «Երկիր», 1992, 09.05; «Շուշի», 1994-2001**): ԼՂՀ և տեղական իշխանությունների, հայկական կազմակերպությունների և մասնավոր անձանց առաջարկած այս ծրագրերով նախատեսվում էին քաղաքի հայկականության և երբեմնի մշակութային նկարագրի վերականգնման տարբեր եղանակներ: Նույնիսկ առաջարկվում էր Շուշին դարձնել ԼՂՀ մայրաքաղաք: Ըստ Շուշիի առաջին վարչակազմի փոխդեկավար Վ.Գաբրիելյանի, միայն առաջին տարվա ընթացքում մոտ երկու տասնյակ անձինք և կազմակերպություններ արդյունաբերական և մշակութային հաստատություններ էին նախատեսել հիմնել, բայց իրականացվեց դրանց միայն փոքր մասը (**ԴԱՆ, Շուշի, 2000; «Շուշի», 1995, 14/15**): Ինչպես արդեն ցույց ենք տվել, քաղաքի ապագային վերաբերող այս ծրագրերը բավականին խրախուսել են ժամանակակից շուշեցիների ներգաղթը:

Ազատագրումից անմիջապես հետո Շուշիի հայկականության պատկերացումը կապվեց քաղաքի երբեմնի պատմական մշակութային նշանակությանը: Բոլոր իրականացված կամ չիրականացված ծրագրերը (վերջինների թիվը բազմակի ավելի էր), վերաբերում են Շուշիի հատկապես XIXդ. և XXդ. սկզբի, այսինքն՝ 1920թ. հայերի կոտորածին նախորդած շրջանին:

Դրանցից որոշները նախատեսում են վերականգնել Շուշին որպես առողջարանային և տուրիզմի կենտրոն: 1998թ. հաստատված քաղաքի զարգացման հիմնադրույթներում նույնպես այս հնարավորությունը գնահատվում է որպես առավել հեռանկարայինը, ինչին կարող են նպաստել բնակլիմայական պայմանները և պատմական հուշարձանների պահպանվածությունը: Այս փաստաթղթում նախատեսված հիմնականում երկու և եռահարկ շինություններով կառուցապատումը, պատմա-ճարտարապետական հուշարձանների վերականգնումը և այլ միջոցառումներ նպատակաուղղված են քաղաքի XIXդ. պատմական նկարագրի վերականգն-



մանը (**Շուշի ՔԳՀ, 1998**):<sup>1</sup> Խորհրդային տարիներին կառուցված առողջարանների շենքերը, թեև զգալիորեն վնասվել են պատերազմի տարիներին, այսպիսի ծրագրերի հիմնավորումներից են:

Շուշիի պատմական նշանակության վերականգնման մի մասն էր այն Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմական կենտրոն դարձնելու փաստը: Նշանավոր վանքերը՝ Ամարասը և Գանձասարը 1992թ. դեռ ճակատամերձ գոտում էին, իսկ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը եկեղեցի չունի:<sup>2</sup> 1992-1994թթ. Շուշիում թեմական կենտրոնի հիմնադրման փաստը վերաբնակիչներ գրավող գործոններից մեկն էր (**Դիտարկումներ; ԴԱՆ, Շուշի, 1996; տես նաև՝ Խաչատրյան, 2003**): Այն ոչ միայն վերաբնակիչներ է գրավում դեպի քաղաք, այլև հույս էր ներշնչում, որ թեմական կենտրոնի նշանակությամբ բնակավայրը պետք է վաղ թե ուշ ձեռք բերի քաղաքին բնորոշ հատկանիշներ:

Շուշիի վերականգնման ծրագրերից գործնական նշանակություն ունեն այնպիսիք, որոնցով նախատեսվում է քաղաքի երբեմնի մշակութային կենտրոնի գործառույթի վերականգնում: Փոքրաթիվ բնակչությամբ այս քաղաքում գործող մշակութային և կրթական հաստատությունների քանակը բավականին մեծ է. 2002թ. կար երկու միջնակարգ դպրոց (1992թ.-ից), երաժշտական դպրոց (1993թ.-ից), գիշերօթիկ երաժշտական կրթօջախ (1997թ.-ից), պրոֆ-տեխ. ուսումնարան (1993-1997թթ.), կուլտուր-լուսավորչական (հումանիտար) ուսումնարան (1993թ.-ից), «Գրիգոր Մագիստրոս», հետազայում՝ Շուշիի ժողովրդական համալսարան (1997-2003թթ.): 1993թ. «Արամ Մանուկեան» վարժարանում ստեղծվեց «Վարանդա» մանկական երգչախումբը, գործում է նաև հոգևոր երգի մանկական երգչախումբ: Գորիսից հրավիրված դերասանների ուժերով 1993թ.-ից Շուշիում ներկայացումներ էր տալիս Արցախում միակ տիկնիկային թատրոնը, տեղում ստեղծվել էր պարի խումբ: 1996թ. քաղաքում ստեղծվել է ինքնագործ թատերախումբ:

Հատկապես այս կարգի ծրագրերում մեծ է տեղական հասարակական և պետական նախաձեռնության դերը: Համընկնելով Հայաստանի և Մփյուռքի տարբեր կազմակերպությունների և անհատների ազգանպաստ ծրագրերի

<sup>1</sup> Հեղինակները երախտապարտ են «Հայնախագիծ» ինստիտուտի հեղինակային խմբին հատակագծի և հիմնադրությունների պատճենը տրամադրելու համար

<sup>2</sup> 1998թ. սկսվել է Ստեփանակերտում նոր՝ Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցումը

հետ, Շուշիի անցյալի հիշողությունն այս եղանակով արդեն դարձել է քաղաքայնացման կայուն մշակութային գործոն:

Քաղաքի զարգացմանն ուղղված ծրագրերում և հրապարակային ելույթներում նշվում է նաև հակամարտության ընթացքում վերահաստատված ռազմավարական դիրքը: Շուշիի ղեկավարության և բնակչության կարծիքով քաղաքն ունի ռազմավարական բացառիկ նշանակություն ամբողջ Ղարաբաղի անվտանգության համար (**ԴԱՆ, Շուշի, 2000; «Շուշի», 1999,13/14**): Իսկ Հայաստանի առաջին Հանրապետության գործվար Դրոյին վերագրվող «Ով Շուշիի տերն է, նա Ղարաբաղի տերն է, իսկ Ղարաբաղը Հայաստանի միջնաբերդն է» արտահայտությունը «Շուշի» թերթի 1 999թ. նշանաբանն էր:

Մ.Սալինզի «Մշակույթն իրականում ժամանակակից իրադրության կազմակերպումն է անցյալի միջոցներով» (հղված ըստ **Friedman, 1992, էջ 853**), արտահայտությունը կարող ենք համարել 1992թ. հետո Շուշիում ընթացող այս գործընթացների համար նկարագրական: Հայերի պատմական հիշողությունն աստիճանաբար զգալի դեր է խաղում Շուշիի վերաբնակեցման և քաղաքայնացման գործընթացներում: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ վերջին տասնամյակում գրեթե ամեն տարի Շուշիի պատմության մասին գրքեր են հրատարակվում:

### **Փողոցների վերանվանումը**

Քաղաքների ներքին տարածքի անվանակարգումը, ինչպես հայտնի է, ունի մոդելների որոշ սահմանափակ բազմազանություն: Փողոցների վարչական անվանակարգումն սկսվել է XIXդ. արևմտաեվրոպական և հյուսիսամերիկյան երկրներում, կապված քաղաքայնացման գործընթացների հետ (**Mounin, 1980**): Դեռևս 1920-30-ական թթ., նախկին Խորհրդային Միության ողջ տարածքում, տեղանունների ձևավորման ավանդական համակարգին փոխարինել էր գաղափարախոսական հիմքի վրա ձևավորված համակարգ (**Исторические названия, 1989, էջ 3-4**), որը և գործում էր Շուշիում մինչև 1992թ.: Նախկին կուտակային թաղերի առանձին հատվածներ փողոց էին դարձել և անուններ ստացել դեռ Ռուսական կայսրության շրջանում, բայց քաղաքի մեծ մասի անկանուն կառուցպատումը սահմա-

նափակել է դրանց կիրառությունը: Հետագայում Շուշիի գրեթե բոլոր փողոցները ստացել էին խորհրդային ու ադրբեջանցի գործիչների անուններ:

Դրանք վերանվանվեցին 1993թ. գարնանը: Աշխարհագրագետ Յուրի Առաքելյանի առաջարկած նոր անունները ներառում են XIXդ. և XXդ. սկզբի հայազգի գրողների, քաղաքական գործիչների, արվեստագետների, գիտնականների և այլ հայտնի մարդկանց անուններ: Հիմնական ելակետն այդ անձանց շուշեցի լինելն էր: Արդյունքում փողոցների ներկա պաշտոնական անվանացանկը հիմնականում կազմված է XIXդ. Շուշիի անցյալին առնչվող, կամ այդպիսին համարվող նշանավոր անձանց անուններից (Մանուկյան, Ժամհարյան, Լորիս-Մելիքով, Մադաթով և այլն):

Նոր անվանակարգման նախօրեին, Շուշիի գնդի հրամանատարության առաջարկով, փողոցների անվանացանկում ներառվեցին Շուշիի գրոհի ժամանակ զոհված ազատամարտիկների անունները: Նրանց անուններով կոչված են քաղաքի փողոցների և հրապարակների մոտ մեկ երրորդը: Զոհված ազատամարտիկների անվամբ կոչված փողոցներից բացի, կան Արցախի ազատագրության գործին տարբեր ժամանակներում մասնակցածների հիշատակը հավերժացնող փողոցներ՝ Ազատամարտիկների, Անդրանիկի, Նժդեհի, և Վազգեն Սարգսյանի անվան հրապարակ:

Նոր տեղանունների հաստատման երրորդ եղանակը նախախորհրդային ժամանակաշրջանի թաղամասերի և փողոցների անվանումների վերականգնումն է. Ագուլեցոց, Ղազանչեցոց, Մեղրեցոց, Երևանյան, Վայկունիքի, Շոշի և այլն:

Հետաքրքրական է, որ փողոցների անվանակարգման երեք եղանակներն ունեն որոշակի տարածքային փոխդասավորություն՝ ազատամարտիկների անուններ են տրված հիմնականում քաղաքի արևելյան առանձնատներից կազմված ու համեմատաբար կարճ փողոցներին, որոնք հին ադրբեջանաբնակ թաղերի տեղում են: Հին Շուշիի հայաբնակ թաղամասերի անունները ձգտել են համապատասխանեցնել դրանց այժմյան տարածքում գտնվող փողոցներին, որոնք կառուցապատված են բազմաբնակարան շենքերով: Նշանավոր շուշեցիների անուններով են կոչված քաղաքի միջին մասի փողոցները (**Շուշիի քարտեզ, 1999**):

Մինչև վերջին ժամանակները, այս անվանումների կիրառությունը մնում է գուտ պաշտոնական՝ փոստային և վարչական: 1993թ. գարնանը

փողոցների շենքերի պատերին փակցվեցին ժամանակավոր ստվարաթղթե ցուցանակներ, որոնք Շուշիի խոնավ կլիմայի պայմաններում, մի քանի ամիս անց քայքայվեցին և առայժմ չեն փոխարինվել: Վերաբնակիչների մեծամասնությունը հստակ գիտի իր և մերձակա փողոցների պաշտոնական անվանումը:

Մրան գուգահեռ, քաղաքում գործում է կողմնորոշման մի քանի մոդել: Դրանցից մեկը, ամենակիրառականը, հիմնված է նախկին շուշեցիների հիշողության մեջ պահպանված խորհրդային շրջանի պաշտոնական և ոչ պաշտոնական տեղանուններին: Դրանց զգալի մասը, բնիկ շուշեցիների միջնորդությամբ, գոյատևել է XIXդ.-ից, որպիսիք են «Վերին շուկա» կամ «Թովիխանա», «Ջղրրդուզ», «Փոսի թաղ» և այլն:

Կողմնորոշման այս եղանակից բացի, լայնորեն կիրառվում է նաև նկարագրական եղանակն ըստ քաղաքի հայտնի հիմնարկությունների (դպրոցներ, հյուրանոց, հիվանդանոց և այլն) և պատմական հուշարձանների (եկեղեցիներ, մզկիթներ): Նկարագրական եղանակը որոշ բազմաբնակարան շենքերի վրա տարածվում է ըստ դրանցում ապրողների, «հայաստանցիների շենք», «որբևայրիների շենք», «եկեղեցու շենք»:

Այսպիսով, Շուշիի միկրոտեղանունները դեռևս ձևավորման փուլում են, որում ակնհայտ է տեղանվանման երեք հիմնական եղանակ՝ վարչական, նախկին շուշեցիներով միջնորդավորված՝ պատմական և նկարագրական (Դիտարկումներ: ԴԱՆ, Շուշի, 1996, 2000, 2002):

### Հուշարձանները

1998թ. հաստատված Շուշիի գլխավոր հատակագծի հիմնադրույթներում հաշվառված է պետական պահպանության և վերականգնման ենթակա 68 հուշարձան, որոնցից 48 հայկական, իսկ 20 ադրբեջանական (**Շուշի, ՊԳԽ:7-8**): Հայկական հուշարձանների մեկ տասնյակից ավելին գտնվում են քաղաքի պարսպից դուրս: Մի քանի հուշարձանների տեղն է միայն հայտնի: Հաշվառված են նաև 1992թ. հետո կառուցված չորս նոր հուշարձան, թեև այդպիսիների թիվն ավելին է:

Վերանորոգման կարիք ունեն գրեթե բոլոր պատմական հուշարձանները: Դրանց քանակի համեմատ տեղական իշխանությունների միջոցներն այնքան սուղ են, որ հազիվ բավականացնում են մասնակի փրկարարական

աշխատանքների համար: 1994-1998թթ. հուշարձաններից լիովին վերանորոգվել և գործում են երկուսը՝ Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ և Հովհաննես Մկրտչի՝ «Կանաչ ժամ» եկեղեցիները (Հայ Առաքելական եկեղեցու միջոցներով):

Շուշիի նոր հուշարձաններից առաջինը խաչքար էր, կանգնեցված Ղազանչեցոց եկեղեցու հարևանությամբ, ազատագրմանը հաջորդող ամսում: Միջին չափի տուֆի խաչքարի գրանիտե պատվանդանին փորագրված էր. «Այս խաչքարը կանգնեցրի ի հիշատակ Արցախ աշխարհի սուրբ զոհերի. 1992»:

Նոր հուշարձաններից խոշորագույնը 1994թ. գարնանը կառուցված Շուշիի ազատագրման համար զոհվածների հուշահամալիրն է: Այն գտնվում է քաղաքից դուրս՝ գրոհի ժամանակ ԼՂՀ Ինքնապաշտպանության բանակի արկահարված տանկի տեղում: Հուշահամալիրը մասամբ կրկնում է Հայրենական Մեծ պատերազմում զոհված հայ զինվորների հիշատակին նվիրված Երևանի «Մայր հայրենիք» հուշահամալիրի հարդարանքը (պատվանդանին կանգնեցված S-72 տանկով): Երկու իրադարձությունները, որոնց նվիրված են հուշարձանները, ունեն ընդհանուր ամսաթիվ՝ մայիսի 9-ը: Տարին մեկ անգամ, այդ օրը ճանապարհամերձ հուշահամալիրը վերածվում է հրապարակի, որում քաղաքի ազատագրության օրվա առթիվ հավաքվում են հարյուրավոր շուշեցիներ: Հատկապես բազմանդամ էին ետպատերազմյան առաջին տարիների 1994-1996թթ. Մայիսի 9-ի տոնակատարությունները, որոնց ժամանակ այստեղ կրկնվում էր ԼՂՀ բանակի Ստեփանակերտի զորահանդեսը, թեև տեղանքը զառիթափ է և անհարմար շքերթի համար: Մայիսի 9-ը նաև ԼՂՀ և Ադրբեջանի միջև Մոսկվայում 1994թ. ստորագրված զինադադարի մասին համաձայնագրի օրն է, ինչը միավորում է այս երեք իրադարձությունները մի տոնակատարության մեջ: Խճուղու մոտ 200 մետրանոց մի հատված հատուկ ասֆալտապատվեց 1994թ. մայիսի շքերթի համար, երբ դեռ չէր սկսվել Ստեփանակերտ-Գորիս «Կյանքի ճանապարհի» կառուցումը:

Ազատամարտում զոհվածների հիշատակին կանգնեցվել են նաև այլ հուշարձաններ: Քարինտակ գյուղից Շուշի մտնող ճանապարհին 2001թ. կանգնեցվեց խաչքար: Ավելի վաղ՝ 1994թ. նույն նպատակով հուշարձան էր կանգնեցվել գյուղի հրապարակում: Զոհված ազատամարտիկների հիշա-

տակին են նվիրված Խ.Աբովյանի անվան դպրոցի մոտ կառուցված հուշադրյուրը, ՆԳՆ բաժնի գոհվածների հուշադրյուրը, հուշատախտակներ քաղաքի առանձին փողոցներում: Դրանք մեծ մասամբ գոհվածների ընկերների և ազգականների նախաձեռնության արդյունք են: 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության զոհերի հիշատակի տուրք է Շուշիի կենտրոնական հրապարակի վերանվանումը ՀՀ առաջին պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի անունով և նրա հուշարձանի տեղադրումը: Այս բոլոր հուշարձանները կապված են Շուշիի և շուշեցիների համար առավել խորհրդանշական իրադարձության՝ քաղաքի ազատագրման հետ:

Քաղաքի հայկականության վերականգնման հետ են կապված մի շարք այլ հուշարձաններ: 2000թ. նախկին տեղում վերականգնվեց դեռևս 1988թ. հայերի բռնազաղթի օրերին ավերված, ծագումով շուշեցի խորհրդային պետական գործիչ Իվան Թևոսյանի կիսանդրին: Մուրացանի կիսանդրին կանգնեցվել է համանուն դպրոցի բակում:

1992թ. հետո Շուշիում կանգնեցված հուշարձանները խորհրդանշում են հայերի ներկայությունն ազատագրված քաղաքում: Քաղաքի հայկականության վկայելուց բացի, դրանք ընդգծում են ազատամարտի զոհերի հիշատակը: Այս առումով Շուշիի նոր հուշարձանների մեծամասնությունը նմանվում է ԼՂՀ մյուս ազատագրված բնակավայրերում գոհվածների հիշատակի կանգնեցված կոթողներին: Ներքին Հռոթաղում գոհված 21 տանկիստների հիշատակին կառուցվել է հուշադրյուր: Թալիշ գյուղում խաչքար է կանգնեցվել տեղացի չորս ազատամարտիկների հիշատակին, որոնք գոհվել են գյուղի ազատագրության համար (**«ԼՂ Հանրապետություն», 1995, 13.05; 29.04**): Քաշաթաղի կենտրոն Բերձոր քաղաքում նույնպես կա ազատամարտիկների հիշատակին կանգնեցված խաչքար (**ԴԱՆ, Քաշաթաղ, 1996; Խառատյան, 1999**):

### **Հայկական գերեզմանոցները**

Շուշիում կա մի քանի հին հայկական գերեզմանոց: Դրանցից երկուսը փակվել էին դեռ 1850-ական թթ., քանի որ խանգարում էին քաղաքի կառուցապատմանը: Դրանից հետո հայերը թաղումներ են արել քաղաքի պարսպից արևելք և հյուսիս ընդարձակ տարածք գրավող գերեզմանոցներում (**Հ.Հարությունյան, 2002**):

Նշվածներից ավելի ուշ առաջացել են ևս երկու գերեզմանոց: Դրանցից առաջինում թաղված են 1905-1906թթ. ազգամիջյան բախումների զոհերը՝ հայեր և ռուսներ, որոնց հարազատները չեն կարողացել փոխադրել քաղաքամերձ արևելյան և հյուսիսային գերեզմանոցները՝ ճանապարհների փակ լինելու պատճառով (**Հ.Հարությունյան, 2002, էջ 31-34**): Այն գտնվում է հայկական հատվածի հարավում Ռեալական ուսումնարանի շենքից 100 մետր հեռավորությամբ: Նույն ուղղությամբ ավելի հարավ՝ Քարին տակ գյուղի վրա բարձրացող ժայռի ներքին (հյուսիսային) լանջին, թաղված են 1950-1988թթ. Շուշիում մահացած հայերը:

Այժմ շուշեցիներն իրենց հանգուցյալներին թաղում են վերջին երկու հայկական գերեզմանոցների հարևանությամբ, սակայն այս վայրում թաղված են Շուշիում զոհված և մահացած ոչ բոլոր հայերը. 1992թ. ադրբեջանցիների օդուժի և հեռահար հրետանու հարվածներից Շուշիում զոհված 11 հոգուց (**Մելիք-Շահնազարյան, 1998: 173**), մի քանիսն են միայն թաղվել Շուշիում: Վերաբնակիչներից և Շուշիի գնդի զինվորականներից 1992-1994թթ. այստեղ թաղվել են միայն նրանք, ում ընտանիքներն ապրում են Շուշիում: Արդեն հարյուրի մոտ թաղումներով Շուշիի այս գերեզմանոցում 2002թ. մոտ երկու տասնյակ գերեզմանաթմբեր անանուն էին: Գրանցում թաղվածները հարազատ չեն ունեցել, իսկ վարչակազմը միայն կազմակերպել է թաղումը և խաչաձև դրված քարերով նշել շիրիմները: Շիրիմների մեծ մասը ցանկապատված է, ունի հուշաքար, գրություն, որը հայտնում է հանգուցյալի անունը, ազգանունը, ծննդյան և մահվան տարեթվերը: Գրությունները հիմնականում հայերեն են: Սակավաթիվ ցանկապատերի ներսում կա երկու տապանաքար (**ԴԱՆ, Շուշի, 2002**):

### Գրականություն

**Լ.Աբրահամյան, 2002** - Ազգային ինքնության հաստատման չորս հարացույցներ: - Ինքնության հարցեր: Տարեգիրք, Եր., էջ 43-56:

**Արամայիս, 1993** - Ղարաբաղի տազնապը (պատմության համար): Օրագրություն (26 ապրիլի - 26 հուլիսի 1919թ.), Եր.:

**Զ.Արզումանյան, 1982** - Սղնախների առաջացումը և ռազմաքաղաքական նշանակությունը. - Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 9, էջ 77-86:

**Բակուր, 2000** - Շուշի բերդաքաղաքը (պատմությունը մինչև 1920թ.), Եր.:  
**Զ.Բալայան, 1995** - Դժոխք և Դրախտ, Եր.:

**Մ. Գաբրիելյան, 2001** - Հասարակական և մշակութային գործընթացները Հայաստանի Հանրապետության արդի գյուղում 1991- 2000թթ., ատենա-  
խոսական աշխատանք (ձեռագիր):

**Մ.Գաբրիելյան, Ա.Դաբադյան, 1997** - Քաջաթաղի շրջանի վերաբնակեց-  
ման գործընթացը: - Արդի էթնամշակութային գործընթացները Հայաստա-  
նում, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմ-  
նադրույթներ, Եր., էջ 8-9:

**Մ.Գաբրիելյան, Ա.Դաբադյան, 2003** - Շուշի քաղաքի վերաբնակեցման  
ավանդական և ոչ ավանդական եղանակների շուրջ (1992- 2002թթ.): - Հայ  
ազգաբանության և հնագիտության խնդիրներ II, Զ. Խառատյանի 50-  
ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., էջ 30-34:

**Մ.Գալստյան, 1998** - Հայաստանի Հանրապետության բնակչության աշ-  
խատանքային միջպետական տեղաշարժերը, Եր.:

**Ռ.Գրիգորյան, 1996** - Թուրք մուսավաթական զորքերի ոճրագործու-  
թյունները Անդրկովկասի հայաբնակ շրջաններում 1918- 1920թթ.: - Բանբեր  
Հայաստանի արխիվների, հ.1, էջ 88-111:

**Ա.Դաբադյան, Մ.Գաբրիելյան, 2002** - Լ.Ղ.Հ. և ազատագրուած տարածք-  
ներում վերաբնակեցման գործընթացների մասին: - «Դրո- շակ», հ. 3, էջ 33-  
43:

**ԴԱՆ** - Մ.Գաբրիելյան, Ա.Դաբադյան, դաշտային ազգագրական նյութեր,  
Շուշի - 1996, 2000, 2002; Հաղորթ - 1996; Մարտունի - 1996; Քաջաթաղ-  
1996 (հեղինակների ընդհանուր արխիվ): Դիտարկումներ - Ա.Դաբադյան,  
անձնական դիտարկումներ, Շուշի, 1992-1994 (անձնական արխիվ):

**Ա.Եղիազարյան, 1995** - Շուշիի ազատագրումը և հարակից բնակավայ-  
րերի ինքնապաշտպանությունը 1988-1992թթ., դիպլոմային աշխատանք  
(ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնի արխիվ):

**Թ.Զաքարյան, 2001** - Փոխօգնության ձևերը և բարեգործական ավան-  
դույթները հայոց մեջ: - Արդի հայ իրականության և մարդասիրական գի-  
տակցության զարգացման հարցեր, Եր., էջ 108- 128:

**Լեռ, 1973** - Պատմություն Դարաբաղի հայոց թեմական դպրոցի: - Երկեր,  
հ. 3, գ. 2, Եր.:



**Ա.Խաչատրյան, 2003** - Հավատացյալի սոցիալական վարքն ըստ Շուշիի մի խումբ վերաբնակիչների նյութերի: - Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ II, Ջ. Խառատյանի 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2003, էջ 35-38:

**Լ.Խառատյան, 1999** - Վերաբնակեցման և տարածքի մշակութային նացման մոդելները (ԼՂՀ Քաշաթաղի շրջանի օրինակով), դիպլոմային աշխատանք, (ԵՊՀ ազգագրության ամբիոնի արխիվ):

**Հ.Խառատյան, 1998** - Մենք ու մենք, թե օտարներ յուրայինների մեջ (փախստականները և հնաբնակները): - Հայ-ֆրանսիական մշակութային առնչությունները, Եր., էջ 58-78:

**Հայաստանի վիճակագրական տարեգիրք**, Եր., 2002:

**Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.**, Եր., 2003:

**Ս.Հասարթյան, 2001** - Ղարաբաղյան պատերազմ, Եր.:

**Ս.Հարությունյան, 2001** - Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշի-Լաչինյան գործողությունը, Ստեփանակերտ:

**Հ.Մարության, 2001** - Փոխվում են արդյոք հայերը (ազգաբանական դիտարկումներ): - Աղբատությունը Հայաստանում, Եր., էջ 392- 406:

**Լ. Մելիք-Շահնագարյան, 1998** - Աղբբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության դեմ, Եր.:

**Ս.Մելքումյան, 1990** - Լեռնային Ղարաբաղ. պատմա-տնտեսաաշխարհագրական ուսումնասիրություն, Եր.:

**Ս. Մկրտչյան, 1985** - Գյուղական բնակավայրերի տարանջատումը և նորերի առաջացումը Լեռնային Ղարաբաղում XIXդ. – XXդ. սկզբներին: - Հայաստանի բնակչության տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Եր., էջ 26-28:

**Արտագաղթը Հայաստանից**, Եր., 2003:

**Շուշի քաղաքի գլխավոր հատակագիծ (Շուշի ՔԳՀ)**, Եր., 1998:

**Շուշիի քարտեզ**, Եր., 1999:

**Պատմություններ աղբատության մասին**, Եր., 2001:

**Լ.Պետրոսյան, 1974** - Հայ ժողովրդական փոխադրամիջոցները: - Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 6, Եր.:

**Ռ.Պետրոսյան, 1997** - Արցախի պաշտպանության դիրքերում, Եր.:

**Հ.Սարգսյան, 1990** - Շուշի քաղաքի էթնիկ կազմը և նրա շարժընթացը (19-րդ դ.-20-րդ դ. սկիզբ): - 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքներին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., էջ 56-57:

**Կ.Սեդրոսյան, 1980** - Շիրակի արդյունաբերական ավանների բնակչության կազմավորման, նրա կենցաղի և մշակույթի ձևավորման առանձնահատկությունները: Ձեռագիր:

**Ն.Սողոմոնյան, 1996** - «Կուլցո». 1991-Սարդորսություն, Ստեփանակերտ:

**Վ.Սևյան, 1991** - Շուշի, Եր.:

**Լ.Վալեսյան, 1991** - Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրություն, Եր.:

**Բ.Ուլուբաբյան, 1997** - Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր.:

**Л.Абрамян, 2000** - Армения и диаспора: расхождения и встреча. Диаспоры, 1/2, с. 52-76.

**Э.Авалов, 1977** - Архитектура города Шуши и проблемы сохранения его исторического облика, Баку.

**Азербайджанская ССР: административно-территориальное деление**, Баку, 1968.

**Г.Аракелян, 1991** - Об этнографического порядка размышлениях З.Буниятова.- К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, т. I, Ереван, 398-405.

**С.Арутюнов, 1981** - Обычай, ритуал, традиция. - Советская эт-нография, 2, с. 97-99.

**С.Арутюнов, 1989** - Народы и культуры: развитие и взаимо-действие, М.

**К.Базеян, 2002** - Собираательство в современном быту армян.- Археология (IV) и этнология (III) Кавказа. Сборник кратких содержаний докладов, Тбилиси, с.204-205.

**С.Бахиа-Окруашвили, 2002** - Топонимы как источник по истории. Археология (IV) и этнология (III) Кавказа. Сборник кратких содержаний докладов, Тбилиси, с. 209-211.

**Д.Исмаил-заде, 1960** - Из истории кочевого хозяйства Азербайджана первой половины XIXв. - Исторические записки, АН СССР, вып. 66, с. 96-136.

**Исторические названия - памятники культуры. Всесоюзная научно-практическая конференция, тезисы докладов и сообщений, М. 1989.**

**История Азербайджана, т. 1** (с древнейших времен до присоединения Азербайджана к России), Баку, 1958.

**Т.Закарян, 2003** - Формы традиционной помощи и взаимопомощи у армян в новых социальных условиях независимой Армении (по материалам социологического исследования).-Археология, этнология и фольклористика Кавказа. Материалы международной конференции, стр. 289-293.

**Р.Карапетян, 1986** - Формирование населения Еревана. - Население Еревана: этносоциологические исследования, Ереван, с. 30-80.

**Р.Карапетян, 2001** - Армянская семья в контексте переходного периода. - Հնարավոր է հետազոտման հիմնախնդիրները, Հարապետական գիտահղովի նյութեր՝ նվիրված է. Կարապետյանի հիշատակին, Եր., էջ 54-59:

**Э.Карапетян, 1986** - Этнические особенности семьи.- Население Еревана: этносоциологические исследования, Ереван, с. 116-152.

**С.Карапетян, Р. Овсепян, 1986** - Региональные особенности социально-демографического развития Армянской ССР, Ереван.

**В.Кварчия, 1989** - Проблемы охраны и восстановления исторических названий в Абхазской АССР. Исторические названия - памятники культуры. Всесоюзная научно-практическая конференция, тезисы докладов и сообщений, М., стр. 40-41.

**Культура жизнеобеспечения и этнос, Ереван, 1983.**

**А.Майничева, 2000** - Армяне современного Новосибирска. - Диаспоры, 1/2, с. 145-159.

**В.Малахов, 2001**- Символическое производство этничности и конфликт. - Язык и этнический конфликт, М., с.115-137.

**Г.Малхасян, 1991** - Сигнахи Арцаха и Сюника (к историографии вопроса). - К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, т. I, Ереван, с.85-93.

**Э.Мелконян, 2000** - Диаспора в системе этнических меньшинств (на примере армянского расселения).- Диаспоры, 1/2, с. 6- 28.

**Ю.Мкртумян, 1974** - Формы скотоводства в Восточной Армении: вторая половина XIX-начало XX вв. - Հայ ազգայնագրական և բնաշինչաբանական, հ. 6, Եր.:

**А.Мкртчян, 1985** - Общественный быт армян Нагорного Карабаха в XIX - начале XX века (рукопись кандидатской диссертации).

**Ш.Мкртчян, 1988** - Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван.

**Ш.Мкртчян, Ш.Давтян, 1997** - Шуши: город трагической судьбы. Ереван.

**П.Мурадян, 1990** - История - память поколений: проблемы истории Нагорного Карабаха, Ереван.

**Р.Паносян, 2000** - Непростое прошлое, трудное настоящее, туманное будущее.- Диаспоры, 1/2, с. 30-51.

**Н.Попхадзе, 2002** - О грузинском городе Сохуми. - Археология (IV) и этнология (III) Кавказа. Сборник кратких содержаний докладов, Тбилиси, с. 278.

**Раффи, 1991** - Меликства Хамсы (1600-1827): материалы для новой армянской истории, Ереван.

**М.Сайдуллаев, 2001** - Экономические и социальные последствия чеченского конфликта: пути выхода из кризиса. - Чечня: от конфликта к стабильности, М., с. 9- 21.

**Г.Саркисян, 2002** - Население Восточной Армении в XIX - начале XXв.: этнодемографическое исследование. Ереван.

**Г.Саркисян, 1992** - Население Нагорного Карабаха за 100 лет (1823-1923гг.): этнодемографический обзор (рукопись).

**М.Саркисян, 1996** - Из истории градостроительства Шуши, Ереван.

**В.Тишков, 2001** - Общество в вооруженном конфликте (этнография чеченской войны). М.

**Традиционное и новое в быте дагестанцев переселенцев.** М., 1988

**А.Цуциев, 1998** - Осетино-ингушский конфликт (1992-...): его предыстория и факторы развития. Историко-социо-логический очерк, М.

**Я.Чеснов, 2001** - Быть чеченцем: Личность и этнические идентификации народа. - Чечня и Россия: общества и государства, М., с. 63-110.

**Ф.Шушинский, 1968** - Шуша. Баку.

- Б.Эйвазов, 1956** - Курорт Шуша. Баку.
- А.Ямсков, 1998** - Традиционное землепользование кочевников исторического Карабаха и современный армяно-азербайджанский этнотерриториальный конфликт. - Фактор этноконфессиональной самобытности в постсоветском обществе. М., с.168-197.
- L.Abrahamian, 1999** - Typology of Aggressiveness and National Violence in the Former USSR. - Divided Europeans: Understanding Ethnicities in Conflict, T.Allen and J.Eade (eds). The Hague/London/Boston: Kluwer Law International, pp. 59-76.
- S. Astourian, 2000-2001** - From Ter-Petrosian to Kocharian. Leadership Change in Armenia. - Berkeley Program in Soviet and Post Soviet Studies. Working Paper Series. Winter. University of California, Berkeley.
- P. Carley, 1998**- Nagorno-Karabakh. Searching for a Solution. United States Institute of Peace Roundtable Report. - U.S. Institute of Peace. Peaceworks, n. 25. December. Washington, D.C.
- N. Dudwick, 1993** - Memory, Identity and Politics in Armenia. Ph.D. Dissertation thesis, Department of Anthropology, University of Pennsylvania. Manuscript.
- N. Dudwick, 1997** - The Borders of Belonging: State and Citizenship in Armenia. - Institutions, Identity, and Ethnic Conflict: International Experience and Its Implications for the Caucasus. Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies, Working Paper Series. University of California, Berkeley, pp.71-76.
- H. Fahim, 1973** - Egyptian Nubia after Resettlement. Current Anthropology. Vol.14, pp. 483-485.
- R.Ferne, J.Kennedy, 1966** - Initial Adaptation to Resettlement: A New Life for Egyptian Nubians. Current Anthropology. Vol.7, pp. 349-354.
- J.Friedman, 1992** - The Past in the Future: History and the Politics of Identity, American Anthropologist, Vol. 94, pp.837-859.
- I. Geva-May, 1998** - Immigration to Israel: Any Lessons for Canada? Research on Immigration and Integration in the Metropolis Working Paper Series, N. 98-03, January. Vancouver Centre of Excellence.

**F.Lazin, 2000** - Politics, Race and Absorption: Israeli Housing and Education Policies for Ethiopian Jewish Immigrants, 1984-1992. Working Paper No. 28. Center for Comparative Immigration Studies. University of California, San Diego.

**H. Marutyan, 2003** - Iconography of the Gharabagh Movement: An Index of the Transformation of Armenian Identity. Armenian Forum. Vol. 2, n. 4, pp.39-54.

**W.Moore, S.Shellman, 2002** - Refugee or Internally Displaced Person? To Where Should One Flee? - Conference on Forced Migration, Global Security, and Humanitarian Assistance. Center for Comparative Immigration Studies. University of California, San Diego.

**F. Mounin, 1980** - Semiology of Orientation in Urban Space. Current Anthropology. Vol. 21, pp.491-495.

**N. Nasibli, 1998** - Old Stubbornness and New Hopes. - Roundtable: "Nagorno-Karabakh: Situation Hopeless? A Search for Solutions to the Impasse". US Institute of Peace, March 24, Washington, D.C.

**S. Platz, 2000** - The Shape of National Time: Daily Life, History and Identity during Armenia's Transition to Independence, 1991-1994,- Altering States: Ethnographies of Transition in Eastern Europe and Former Soviet Union. D. Berdahl, M. Bunzl and M. Lampland (eds). Ann Arbor: University of Michigan Press, pp.114-138.

**D. Rieff, 1997** - Case Study in Ethnic Strife (Nagorno-Karabakh). Foreign Affairs. Vol. 76, n.2.

**F.J.M. SeHer, 1978** - Some Functional and Structural Aspects of Family Life in a Communal Society: The Financial Sector of the Kibbutz Family. Community, Self and Identity. Bhabagrahi Misra and James Preston (eds). The Hague/Paris: Mouton Publishers, pp.133-159.

**N.Tohidi, 1997** - Gender, Religion and Ethnicity in Post-Soviet Azerbaijan: A Regional Perspective. - Institutions, Identity, and Ethnic Conflict: International Experience and Its Implications for the Caucasus. Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies. Working Paper Series. University of California, Berkeley, pp. 81-85.

*Երևան, 2004, 96 էջ*

## ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՐՏՎԱԾՔԸ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Հաղորդման նպատակն է դիտարկել Դաշտային Արցախի ավանդական հարսանեկան ծեսի երաժշտությունը՝ Լեռնային Արցախի և Հայաստանի մյուս մարզերի երաժշտական ավանդույթի համատեքստում: Աշխատանքը հիմնված է 1985թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմակերպած գիտարշավի ընթացքում մեր հավաքած էթնոերաժշտագիտական նյութերի հիման վրա, որ գրանցվել են Շահումյանի, Քարհատի (Դաշքեսան), Խանլարի շրջանի հայկական բնակավայրերում: Պատկերն ավելի ամբողջական դարձնելու նպատակով դաշտային-ազգագրական նյութերը համադրվել են գրականության տվյալներին: Ավանդական հարսանիքը (կառույց, արարողակարգեր) դիտարկվել է ծեսի սկզբից մինչ ավարտը հնչող երաժշտության համատեքստում՝ պարզաբանելու ծեսի երաժշտական կերտվածքի առանձնահատկությունները:

Նյութի քննությունից կարելի է եզրահանգել՝

- Ծիսակարգի առանցքային կառույցն անփոփոխ էր բոլոր պատմագագրական շրջանների համար և տարբերությունները սոսկ տեղական մշակութային առանձնահատկությունների արդյունք են, որոնք հաճախ տարբերակային նշանակություն են ձեռք բերում: Օրինակ՝ քավորի հրավեր, եզմորթեք կամ մսացու, հաց ու գաթա թխել, փեսայի, մակարների ու քավորի սափրման ծես, հալավօրհնեք և հագցնելու արարողություն, պսակադրություն, շեմքից ներս մտնելու և դուրս հանելու, օջախի ու նախնիների պաշտամունքի, հավթռուկի, առագաստի արարողակարգեր:

- Ծեսի երաժշտական հենքը ևս կայուն էր՝ արտածված արարողակարգերի իմաստաբանությունից ու նշանակությունից և տարբերվում էր նվագարանների ու նվագախմբերի տեսականիով, երաժշտական լեզվամտածողությամբ ու կատարման կերպով:

- Դաշտային Արցախի արարողակարգերը համընկնում են հատկապես Լեռնային Արցախի, նաև Սյունիքի, Տավուշի ու Լոռի-Գուգարքի համապատասխան երաժշտական տեքստերով:

- Որոշակիորեն ուրվագծվում է հարսանեկան ծեսի արարողակարգերի կապը հայոց ավանդական տոների՝ հատկապես, Բարեկենդանի, Համբարձման, Վարդավառի ժողովրդական երաժշտական ավանդույթի հետ:

• Արևմտյան Հայաստանի շատ շրջանների հետ միասին, Տավուշում, Ջավախքում և Դաշտային Արցախի հարսանեկան ծեսում պահպանվել են կենդանիների դիմակներով պարերը՝ իծապար, Քյոսագյալի, կնոջ կերպարանք ընդունած տղամարդկանց պարերը, որոնք Արարատյան դաշտավայրում ու Լոռի-Գուգարքում 19-րդ դ. կեսերից արդեն մոռացության էին տրվում՝ վերապրուկային ձևով պահպանելով միայն Բարեկենդանի տոնի ընթացքում:

• Պարտադիր հնչող նվագարանները՝ զուռնա, տըմբլա (դհով), որ բնակարանում փոխվում էին դուդուկ/կլարնետ, դհով/դափ (20-րդ դ. վերջերին՝ ակորդեոն, որ երբեմն փոխարինում էր նաև դամքաշին) և սազանդարների խմբերը՝ թառ, քյամանչա, սազ, դափ, բնորոշ են Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններին:

• Պարտադիր մեղեդիները՝ ծեսի սկիզբն ու ավարտն ավետող «Սահարին», որ զուռնայի կանչ էր համարվում («Ջանգի»), «Կալոսի պոկենը» («Վակգալի»), պարային նվագները՝ Հարսի մումերով պարը («Խնկի ծառ»), «Վերվերի», «Քոչարի», «Ուզունդարա», «Թարաքյամա», «Բաղդազյուլի», «Մաշտիբաստ», «Շալախո», «Ղազախի», «Էնգելի» («Ինգիլի»), «Յալլի»: Երգերից՝ «Ասենք, շնորհավոր», «Թագվորի մեր, դուրս արի», «Պարտեզում վարդ էր բացվել» և այլն:

• Տեղական առանձնահատկություններից նշելի են ձեռնապարերը՝ կենտ ու զույգ, որ տարածված են նաև Սյունիքում, Տավուշում, Արարատյան դաշտավայրում սկեսուրի պարը՝ «Տասնչորս»:

• Թագվորագովքերի ու Ծաղկոցների երգերի փոխակերպումը բանավոր՝ առանց մեղեդու շնորհավորական ու գովաբանական տեքստերի, ևս տեղական բնույթ է կրում:

• Ի շարս հիշյալների՝ նաև մակարների «Ոտնակապի ծեսը»:

Հայսմ՝ Դաշտային Արցախի հարսանեկան ծեսի երաժշտական կերտվածքը համահայկական հարսանիքի երաժշտական ավանդույթի աներկբա բաղադրիչներից է՝ հայոց հեթանոսական ավանդույթներից դեպի քրիստոնեական եղեկեցական և ժողովրդական մշակութային աշխարհայացք ձգվող տարաբնույթ փոխակերպումներով:

*«Լ.Ղ. Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ. հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2006, էջ 177-178*



## ՀՅՈՒՍՎԱԾՔԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽ ՏԱՐԱԶՈՒՄ

Մեր լեռնաշխարհի աշխարհագրական դիրքին, կլիմայական պայմաններին, մեր ժողովրդի տնտեսական վիճակի և մեր ճաշակին համապատասխան ձևավորվել է մեր տարազը: Այն հանդիսացել է մեր ազգի ինքնապահպանման ազդակներից մեկը: Տարազը ևս հայ ժողովրդի ստեղծագործական մոտեցումն է իր տոհմային ճաշակին և դարավոր ավանդույթներին:

Տարազը, անցնելով պատմական զարգացման երկար ուղի, բաժանվեց տարբեր ազգագրական տարազախմբերի՝ Բարձր Հայքի, Տուրուբերանի, Վասպուրականի, Տրապիզոնի, Արարատյան Հովտի, Գողթնի, Աղձնիքի, Փոքր Հայքի Սյունիք-Արցախի, Կիլիկիայի, որոնք իրարից տարբերվում են ձևվածքներով, հյուսվածքեղենի տեսակներով, գույներով, նախշազարդերով, գլխի հարդարանքով, արդուզարդով, կոշիկներով: Տարազի զարգացման պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ ձևվածքների մշակման ժամանակ հաշվի էր առնվում նաև տարիքային և սեռային գործոնը: Սյունիքն ու Արցախը իրար մոտ գտնվելով ունեցել են տարազի նույն արտաքին տեսքը, դրա համար էլ կոչվում է հենց Սյունիք-արցախյան տարազ:

Հյուսվածքագործությունը վաղեմի ժամանակներից հայկական տարազում իր ուրույն տեղն ուներ: Հայտնի է, որ գոյություն ունեին հյուսման ենթաձևերի և հյուսվածքը զարդարելու հատուկ ոճեր ու հատուկ նախշաձևեր, որոնցում, իրավամբ խտացված են ազգային մշակութային էլեմենտներն ու սիմվոլիկան:

Հայկական հյուսվածքեղենը հիմնականում մետաքսից, բրդից, բամբակից ստացված թելերից էր, որն, անշուշտ կապված է տեղական հումքի հետ:

Հայտնի է, որ XX դարասկզբին գործվածքեղենի արտադրության բնագավառում առանձնահատուկ տեղ ուներ Շուշին: Շուշիում արտադրված մետաքսն ու մետաքսաթելն արտահանվում էին աշխարհի տարբեր երկրներ, այդ թվում՝ Ֆրանսիա: Շուշեցի մանածագործները տիրապետում էին

ոչ միայն միագույն, այլ գծանախշերով, ծաղկանախշերով, բազմագույն կտորներ պատրաստելու տեխնիկային: Հաղորդը ևս մետաքսի արտադրության կարևոր կենտրոնն էր: Արցախում հյուսվածքագործության բնագավառում աչքի էր ընկնում շուղագործությունը /շյուղեր-ռուս. спицы, իսկ Արցախում՝ ճաղեր/, հելունագործությունը /հելուն-ռուս. кружок, իսկ Արցախում՝ դասնաղ/: Շյուղերով, ինչպես նաև հելունով գործում էին տարազի բաղկացուցիչ մաս կազմող գուլպաներ, գլխաշորեր, երեսնոցներ, ժանյակներ, որոնցով զարդարում էին գոգնոցներ, ինչպես նաև բարձի երեսներ, սփռոցներ, վարագույրներ, լամպը ծածկելու հատուկ ժանյակներ, որոնցով զարդարում էին իրենց համեստ ինտերերը:

Հյուսվածքագործության բնագավառում Սյունիք-արցախյան տարագում առանձնանում է գուլպագործությունը: Սյունեցի կամ արցախցի կնոջ հիմնական զբաղմունքներից մեկն էլ գուլպա գործելն էր: Հետաքրքիր է այն փաստը, որ գուլպա գործում էին և կանայք, և տղամարդիկ: Ցայսօր էլ Արցախում տարածված են գուլպա գործելու տարբեր ձևեր: Գործում են հիմնականում շյուղերով, որոնք պատրաստվում են տարբեր տեսակի մետաղներից, ոսկրից, փայտից և այլն: Շյուղերն ընտրվում են թելին համապատասխան: Զարդանախշերով գուլպան արցախյան տարագում անվանում են բադամբութա գուլպա:

Գուլպագործության մեջ տարածված էին տարբեր նախշեր, շեյթան, չաթալ, չախմախ, ծտեր, օխտըպատի, իրեքպատի:

Պետք է ասել, որ նախշերի և գույների ընտրությունն փոփոխության է ենթարկվել ժամանակի ընթացքում, իսկ կանաչ, կարմիր, մուգ կապույտ, օխրավուն ու սև գույները պահպանվել են առայսօր: Արցախում գուլպան գործում են ծայրից՝ քթից և հիմնականում հինգ շղերով: Ոտքին համապատասխան օղեր էին հավաքում և դրանք գույգ-գույգ բաժանում չորս շղերի վրա: Հավաքված օղերը միացնում էին և գործում եզրաշերտը, որը անվանում էին նաև եզերածք: Այնուհետև գործում են ծունկը, որից հետո ճիտքը, ճտքից հետո կրունկը /գոյություն ունեն կրունկ գործելու տարբեր եղանակներ/ և վերջում՝ թաթը: Գուլպայի զարդանախշերը հիմնականում հյուսվածքի հետ օղակներ պակասեցնելու կամ ավելացնելու տարբերակով էին գործում կամ շիտակ ու շրջոնք տարբերակով: Գոյություն ունեին նաև գործելիս հյուսվածքի հետ գունավոր թելերով զարդանախշեր ստանալու

տարբերակներ, որոնք կենդանիների պատկերումներ էին, բուսանախշեր կամ երկրաչափական նախշեր: Շատ բնորոշ էր թաթի երեսին և տակին սպիտակ գույնի սեղանաձև /տրապեցիա/ ուղիղ հյուսվածքով կատարված նախշը և թաթի երեսն ու տակը իրարից բաժանող նեղ շրջանակը: Շրջանակի մեջ արվում էր երկայնակի շեյթան, իսկ լայնակի՝ չախմախ ու ծտեր նախշերի շարանը: Չաթալ նախշն արվում էր գուլպայի թաթի երեսին, որի անունով էլ գուլպան կոչվում էր չաթալ գուլպա:

Արցախում զարդանախշ գուլպա գործելու համար հաճախ օգտագործում էին նաև գուլպան զարդարելու ասեղնագործման եղանակը: Իսկ գուլպայի ճտքին լայնակի նեղ շերտի մեջ երեք շարք գործելու միջոցով կատարում էին զիզգազ գծանախշ՝ կարմիր ու կապույտ, կարմիր ու սև, կանաչ ու սև գույնի համադրությամբ: Թաթի երեսին ծայրի ու սպիտակ գույնի միջև ընկած լայն շերտի միջև ընկած լայն շերտի մեջ, որ գործում էին յոթ շարք /օխտըպատի/ անում էին խաչաձև և «ր» տառի ձևով մեկընդմեջ դասավորված նախշերի շարան, իսկ թաթի տակ այդ նույն շերտի շարունակությունում՝ թեք գծանախշեր՝ չարքաղ անունով:

Հարուստ ու բազմազան են հյուսվածքագործության մշակումները Սյունիք-արցախյան տարագում, որն իսոսում է մեր հարուստ մշակութային ժառանգության ազդեցության ու փոխանցման մասին:

Հյուսվածքագործության ուսումնասիրումն Սյունիք-արցախյան տարագում բավականին հարուստ նյութ է պարունակում, որի իրականացումն մեծապես կնպաստի ավանդական մշակութային ժառանգության առողջացմանն ու պահպանմանը:

*«Ազգ և ժառանգություն» համահայկական երիտասարդական գիտաժողով.  
Ստեփանակերտ, 26-30 սեպտեմբեր, 2006թ.», Ստեփանակերտ, 2006, էջ 169-171*

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ԵՎ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ XIX ԴԱՐՈՒՄ

Պատմական Արցախ աշխարհը գտնվում էր Հայկական լեռնաշխարհի ծայր հյուսիս-արևելյան մասում և ունեցել է միատարր հայ բնակչություն: Արաբների, սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանում էապես չփոխվեց Արցախ-Ղարաբաղի բնակչության էթնիկ պատկերը: XV դ. աղ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքմենական քոչվոր ցեղերի անընդմեջ ասպատակություններից խաթարվեց Ղարաբաղի տնտեսական ու մշակութային կյանքը<sup>1</sup>: XVI դ. սկզբներից Հայաստանին և հարևան երկրներին տիրելու համար Օսմանյան Թուրքիայի և նորաստեղծ Սեֆյան Պարսկաստանի միջև սկսված պատերազմական գործողությունները նոր ավերածությունների ու բնակչության տեղահանումների պատճառ դարձան<sup>2</sup>: Այսուհանդերձ, XVIII դ. սկզբներին բնակչության էթնիկ կազմը մեծ փոփոխություններ չկրեց: Հայ բնակչության գերակշռության մասին է խոսում Ղարաբաղի հոգևոր առաջնորդների ու մելիքների 1725 թ. Եկատերինա առաջին հղված ուղերձում, համաձայն որի Ղարաբաղի վեց մահալներից յուրաքանչյուրում հաշվվում էր 30, 40, 50 գյուղ, իսկ ամեն գյուղում՝ 600, 500, 400, 200, 100, 50 տնտեսություն<sup>3</sup>: Հետագայում Ղարաբաղի հարթավայրային մասերում այլազգի էթնիկ տարրերի, առանձնապես թյուրքալեզու քոչվոր ցեղերի քանակն աստիճանաբար ավելանում էր: Այս ցեղերի մեջ առանձնանում էին 24 քրդական քոչվոր ցեղեր, ինչպես նաև «օթուզ իքի» կոչված թյուրքալեզու ցեղային միությունը, որոնց գլխավորում էր ջևանշիր ցեղը: Սրանց մի մասը ժամանակի ընթացքում, թափանցում ու հաստատվում է այնտեղ որպես տեղական իշխաններ (խաներ)<sup>4</sup>, միշտ մնալով փոքրամասնություն:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև երկարատև պատերազմներից հետո, 1555 թ., այնուհետև 1639 թ. հաշտության պայմա-

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 56-57

<sup>2</sup> Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, էջ 278

<sup>3</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967, с. 249

<sup>4</sup> Нагорный Карабах, Ер., 1988, с. 13-14; Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, Ереван, 1992, с. X

նագրերի արդյունքում Հայաստանը երկու մասի բաժանվեց, Արևմտյան Հայաստանն անցավ Թուրքիային, իսկ Արևելյանը՝ Պարսկաստանին: Արևելյան Հայաստանի մաս կազմող Ղարաբաղը ևս անցավ Պարսկաստանին, կատարվեցին վարչական փոփոխություններ, ձևավորվեցին խանությունների սահմանները<sup>1</sup>: XVI դ. վերջին – XVII դ. սկզբին ստեղծվեցին Ղարաբաղի և Սյունիքի մելիքությունները, որոնք զգալի դեր խաղացին հայ ժողովրդի ազգապահպանման գործում: Սակայն XVIII դ. վերջերին ջևանջիր (որոշ աղբյուրներում՝ Սարիջալու) քոչվոր ցեղի առաջնորդ Փանահ-Ալին, օգտվելով Ղարաբաղի մելիքների ներքին երկպառակություններից ու Վարանդայի մելիք Շահնազար Բ-ի օժանդակությունից, տիրացավ Շոշ գյուղի բերդին: Որոշ ժամանակ անց նա իրեն հռչակեց Ղարաբաղի խան և դաժան միջոցներով փորձեց տիրել ոչ միայն դաշտային, այլև Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև հարևան հայկական իշխանությունների տարածքներին<sup>2</sup>: Իր դիրքերն ամրապնդելու նպատակով Փանահ խանը Վրաստանից ու հարևան խանություններից Ղարաբաղ էր տեղափոխում կարաչորլի, պուսիան, ջինլի, դեմուրչի-հասանլի, դըզըլ-հալաջիլի, սոֆի-քյուրդ, բոյ-ահմեդլի, սասթլի, կենգերլի և այլ քոչվոր ցեղերին: Միայն Ղազախի տարածքից Ահմեդ աղան Ղարաբաղ է տեղափոխում իր ցեղակից 1500 ընտանիք<sup>3</sup>: Փանահի և նրա հաջորդ՝ Իբրահիմի օրոք նոր թափ ստացավ թյուրքալեզու էթնիկ խմբերի ներթափանցումը Լեռնային շրջաններ, ընդ որում, դաշտային Ղարաբաղն աստիճանաբար հայաթափվում էր, ավելին՝ հայ բնակչության մի մասը բռնի մահմեդականացվում էր: Այս կապակցությամբ ահա թե XIX դ. կեսերին Հաքստիաուզենը գրել է, որ սկսած XVIII դ. այս գեղեցիկ երկիրը (Ղարաբաղը – Հ. Ս.) կրում է խորն անկման հետքեր և չի կարող արագ վերականգնվել, մասնավորապես, բազմաթիվ էթնոգրավանական հանրությունների առկայության պատճառով: Գերի տարված հայերի փոխարեն այստեղ են բերվել ծուլլ թաթարներ ու թուրքեր, որոնք աստիճանաբար ավելանալով թվային գերակշռություն են ստանում տեղաբնիկների նկատմամբ<sup>4</sup>:

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 85, 107

<sup>2</sup> Е. Пахомов, *Краткий курс истории Азербайджана*, Баку, 1923, с. 24

<sup>3</sup> Միրզա Յուսուֆ Ներսեսով, *Ճշմարտացի պատմություն*, Եր., 2000, էջ 46-56; *Армяно-русские отношения в XVIII веке, 1760-1800 гг. Сборник документов, т. IV, Ер., 1990, с. 354; Н. Жуковская, Судьба кочевой культуры, М., 1990, с. 54*

<sup>4</sup> А. Гакстгаузен, *Закавказский край*, СПб, 1857, ч. 1, с. 208, 213

Թյուրքալեզու զավթիչները հաստատվելով հայկական միջավայրում, իրենց ձեռքն էին վերցնում իշխանությունը և յուրովի տնօրինում կյանքի բոլոր բնագավառները, որի արդյունքում, փոփոխման էր ենթարկվում ոչ միայն բնակչության թիվն ու էթնիկ կազմը, այլև խեղաթյուրվում էր դարերով պահպանված էթնիկական, քաղաքական, պատմամշակութային արժեքներն ու դավանական տարբերությունները, որոնք վերջին հաշվով հանգեցրին ազգային յուրահատկությունների կորստին և բնիկ բնակչության զգալի մասի ձուլմանը:

Քաղաքական բարդ իրավիճակը ստիպում էր Ղարաբաղի մելիքներին լրջորեն մտահոգվելու հպատակ ժողովրդի մասին և նրանք խնդրագրեր էին ուղարկում ռուսական իշխանություններին՝ Ղարաբաղի հայ բնակչությանը Վրաստանի տարածքի ազատ հողերում տեղ հատկացնելու համար: Հիշեցնենք, որ դեռևս 1783 թվականից Գեորգիևսկում ստորագրված «Բարեկամության տրակտատով» Քարթլիի և Կախեթի թագավորությունն անցավ ռուսական հովանավորության տակ: Նամանավանդ, որ Աղա-Մուհամմեդ-խանի 1795թ. արշավանքի հետևանքով բնաջնջվեցին նաև բազմաթիվ հայեր, հրի մատնվեցին նրանց տները, կանայք ու աղջիկները ենթարկվեցին բռնությունների, տղամարդկանց կոտորեցին, իսկ անասունները քշեցին տարան: Կենդանի մնացածները թաքնվեցին լեռներում, անտառներում և այլ անվտանգ վայրերում<sup>1</sup>: Այս առումով հիշարժան է Ղարաբաղի մելիքների XVIII դ. վերջերին Եկատերինա երկրորդին ու իշխաններ Գ. Պոտյոմկինին և Գուրովիչին ուղղված նամակները, որոնցում ներկայացվել են հայ բնակչության ծանր վիճակը, մասնավորապես նշելով, որ Ղարաբաղի հայերը հուսահատ վիճակում են ու հեռանում են երկրից<sup>2</sup>: 1797թ., Աղա-Մուհամմեդ-խանի արշավանքից հետո, Ղարաբաղում սով բռնկվեց, ժողովուրդն անասելի զրկանքներ կրեց, բնակչությունը սկսեց հեռանալ երկրից, նրանց զգալի մասը գաղթեց Վրաստան, մյուսները՝ Շամախու կողմերը, կամ Ռուսաստան, Թուրքիա ու Պարսկաստան: 1798թ. սովին ավելացավ մահաբեր ժանտախտը, համաճարակի զոհ դարձան մեծ թվով մարդիկ, հիվանդությունը շատ կյանքեր խլեց հատկապես Սյունի-

<sup>1</sup> Обзор Елисаветпольской губернии за 1908 г., Елисаветполь, 1909, с. 3

<sup>2</sup> Армяно-русские отношения..., т. IV, сс. 373-375, 378, 459-461

քում, բնակչությունը հուսահատ փախչում էր, թողնելով տուն ու տեղ՝ լքում էր հայրենի եզերքը:

Դեռևս 1788թ. հունվարի 29-ին մելիքներ Մեջլումի և Աբովի Եկատերինա երկրորդին ուղարկված նամակում նրանք հայտնում են, որ Ղարաբաղում այդ ժամանակ կար մելիքներին հպատակ 12 հազ. հայ ընտանիք կամ շուրջ 70 հազ. մարդ<sup>1</sup>: Այս նամակների արդյունքում, 1797թ. հոկտեմբերի 7-ին, Պավել առաջինի հրամանով Ղարաբաղի մելիքներին՝ իրենց ժողովրդի հետ տրվեց ռուսական հպատակություն: 1799-1800 թթ. Մելիք Ֆրիդոնը և Մելիք Ջումշուդն իրենց հպատակ հայերով նախ հաստատվեցին Ղազախի հողերում, որտեղ հնուց ի վեր հայկական բնակավայրեր են եղել, սակայն Աղա-Մուհամմեդ-խանի ասպատակություններից հետո մեծմասամբ դատարկվել էին, ապա նրանց մի մասն անցավ Լոռի ու Բորչալու: Մելիք Աբովը դեռևս 1797թ. իր 400 ընտանիք հայ հպատակներով ապրում էր Բոլնիսում և հարակից գյուղ երում, իսկ Մելիք Մեջլումի որդի Մելիք Հաթամը բազմաթիվ հայ ընտանիքներով հաստատվել էր Գանձակում: Նույն տարիներին, Ղարաբաղի հայերի մի հոծ զանգված, սովից ու համաճարակից փրկվելու համար գաղթեց Շաքիի և Շիրվանի տարածքներ, որտեղ ընդհանուր առմամբ, ապրում էր շուրջ 20 հազար հայ ընտանիք<sup>2</sup>: Հետագայում՝ 1799թ. Մելիք Աբովը արշավեց դեպի Ղարաբաղ, որտեղից Բոլնիս տեղափոխեց ևս 300 տուն հայեր: Այս տարիներին, ըստ ռուսական աղբյուրների, Ղարաբաղից արտագաղթել էր շուրջ 11 հազ. հայ ընտանիք: 1801թ. Վրաստանը Ռուսաստանի կազմի մեջ, որով էլ սկիզբ դրվեց Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործընթացին:

1805թ. Ղարաբաղը ընդունեց ռուսական հպատակություն, որը հաստատվեց 1813թ. ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրով: 1822թ. վերացավ Ղարաբաղի կամ Շուշիի խանությունը և երկրամասը բաժանվեց ռուսական վարչական միավորների: Որպես կանոն, ռուսական վարչակարգն իր տիրապետությանն անցած շրջաններում, առանց հապաղելու անց էր կացնում վարչական փոփոխություններ ու բնակչության հաշվառումներ: Ըստ ռուսական աղբյուրների, 1805թ. Ղարաբաղում կար մոտավոր ապես 10 հազ., իսկ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 375

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 463, 505-507, 527, 533-535

1808թ. հաշվառումների արդյունքում՝ գրեթե 7,5 հազ. ընտանիք: Հետագայում ևս, ըստ այդ հաշվառումների, բնակչության թվի նվազում է արձանագրվել, այսպես, միայն 1806-1812 թթ., այսինքն ռուս-պարսկական պատերազմի տարիներին, գերի է տարվել ավելի քան 2.2 հազ. մարդ, իսկ 2.6 հազարը՝ փախուստի էր դիմել: Հետևաբար, ինչպես նշվում է աղբյուրներում, 1810-1815 թթ. Ղարաբաղում ապրում էր շուրջ 5 հազ. հայ ընտանիք<sup>1</sup>:

Սովորաբար, քաղաքական և տնտեսական նման բարդ պայմաններում, երբ բնակչությունը գտնվում է ակտիվ տեղաշարժերի մեջ, յուրաքանչյուր հաշվառում դատապարտված է անկատարությամբ, իսկ երբ խոսքը վերաբերում է մի տարածքի, որի սահմաններն անգամ հստակ չեն և որտեղ ընդհանրապես որևէ հաշվառում չի իրականացվել, բավարար արդյունքներ չենք կարող ակնկալել: Այսօր դժվար է գեթ մոտավոր պատկերացում կազմել XVIII դ. վերջերի – XIX դ. սկզբների Ղարաբաղի բնակչության իրական թվի, էթնիկ կազմի, տեղաշարժերի ծավալների և ուղղությունների վերաբերյալ, քանի որ բնակչության ոչ մի հաշվառում չի կատարվել, ուստի մնում է եղած կցկտուր թվերի հիմամբ ինչ-ինչ եզրահանգումներ անել:

Հայտնի է, որ երբ Ղարաբաղը միացվեց Ռուսաստանին, Վրաստանի տարածք գաղթած շատ ղարաբաղցիներ ցանկացան վերադառնալ հայրենիք, սակայն ցարական իշխանություններն ամեն կերպ արգելեցին այդ նախաձեռնությունը և շատ քչերին հաջողվեց վերադառնալ հայրենի շեները:

Ղարաբաղի նորաստեղծ պրովինցիայում բնակչության առաջին հաշվառումն իրականացվեց 1823թ. ռուս պետական խորհրդական Մոզիլ-յովսկու և գնդապետ Երմոլով երկրորդի ջանքերով: Վերջիններս Վրաստանի գլխավոր կառավարիչ Ա. Երմոլովին հղած զեկուցագրում գրում են, որ Ղարաբաղում բնակչության ճիշտ հաշվառումներ կատարելու ցանկությունը շատ մեծ էր, որ իրենք փորձելու են տվյալներ քաղել հարցումների միջոցով, այս գործում ներգրավելով մահալների բեկերին, գյուղերի քեթխուղաներին կամ ավագանիներին ու անգամ կալվածատերերին: Սակայն հարցումների արդյունքում պարզվեց, որ հարկատու ընտանիքների (հատկապես՝ քոչվոր) մի մասը օրյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դուրս էր մնացել հաշվառումներից: Ուստի, նշում են նրանք, նպատա-

<sup>1</sup> *Акты собранные Кавказскою Археографическою комиссиею, Тифлис, 1873, т. V, ч. II, с. 579*



կահարմար է մյուս խանությունների օրինակով, Ղարաբաղի բոլոր գյուղերում ու քոչատեղերում ևս ստուգումներ կատարել «Կամերալ ցուցակագրումների» միջոցով: Մինևույն ժամանակ նրանք վստահեցնում էին, որ նման մանրակրկիտ հաշվառումների արդյունքում ի հայտ կգան զգալի բացթողումներ ընտանիքների ու բնակչության սեռատարիքային կազմերի վերաբերյալ և որ իրենց կարծիքով, բնակչության իրական թիվը մեկ երրորդով ավելի էր<sup>1</sup>: Այս փաստաթուղթը վկայում է, որ նմանատիպ հաշվառումները հեշտ չեն իրականացվել, իսկ արդյունքներն ամբողջական չեն ու կարող են միայն ընդհանուր պատկերացում տալ: Հիմք ընդունելով այս տվյալները և մեր հաշվարկները, որոնք բնականաբար շատ մոտավոր են, պարզվեց, որ ԼՂԻՄ-ի սահմաններում ապրում էր շուրջ 36,5 հազար մարդ, այդ թվում հայ՝ 84,6%, թյուրքալեզու էթնիկ խմբեր կամ թաթարներ՝ 14,7%, քուրդ՝ 0,7%: Գյուղական բնակչության 97,5%-ը հայեր էին, իսկ քաղաքայինի (Շուշի – 8,3 հազար մարդ)՝ 41%-ը:

Համեմատության համար նշենք, որ Ղարաբաղի պրովինցիայում 1823 թ. կար 17520 ընտանիք, որի գրեթե 30%-ը՝ հայկական էր, 22%-ը՝ թաթարական, 2%-ը՝ քրդական, իսկ քոչվորական կյանք էր վարում մահմեդական բնակչության շուրջ 46%-ը:

Հարկ է նշել, որ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով, Պարսկաստանի հայ բնակչությանը հնարավորություն տրվեց տեղափոխվելու Ռուսաստանին միացված հայկական հողեր: Գաղթականների մի փոքր մաս՝ շուրջ 300 ընտանիք հաստատվեց Ղարաբաղում, մեր կարծիքով, սրանց մեջ էին նաև այն ընտանիքները կամ սերունդները, որոնք, ինչպես նշվեց վերևում, երեսուն տարի առաջ գաղթել էին Պարսկաստան<sup>2</sup>:

1832-1833թթ. ցարական իշխանությունները «Կամերալ ցուցակագրումներ» կատարեցին Ղարաբաղի պրովինցիայում, այն արձանագրեց բնակչության թվի նվազում՝ 28,5%-ով, որը, մեր կարծիքով պայմանավորված էր, և քաղաքական անկայուն իրավիճակով, և հատկապես քոչվոր բնակչության արտագաղթով, ինչպես նաև անբավարար հաշվառումներով: Հետագոտվող տարածքում կար 26,1 հազ. բնակիչ, որից հայեր՝ 21,9 հազ. կամ

<sup>1</sup> Национальный архив Армении (НАА), Фонд 93, опись 1, дело 163, Камеральное описание (КО) Карабахской провинции в 1823 г. Действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым, Тифлис, 1866

<sup>2</sup> С. Глинка, *Описание переселения армян азербайджанских в пределы России*, М., 1831, с. 103

84%, թաթարներ՝ 4,2 հազ. կամ 16%: Շուշի քաղաքում ապրում էր 7,9 հազ. մարդ, որից հայեր՝ 54%: Այս նույն ժամանակ Ղարաբաղի պրովինցիայում ապրում էր ավելի քան 100 հազ. մարդ<sup>1</sup>:

1840թ. Անդրկովկասը բաժանվեց երկու վարչամիավորի՝ Վիրա-Իմերեթական նահանգի և Կասպիական մարզի, վերջինիս կազմում էր գտնվում Ղարաբաղի պրովինցիան: 1846թ. վարչական նոր բաժանման արդյունքում կազմավորվեց չորս նահանգ, հետագուտվող տարածքը մտավ Շամախու նահանգի մեջ<sup>2</sup>:

XIX դ. կեսերին Անդրկովկասում բնակչության ամբողջական հաշվառումներ չեն իրականացվել, առանձին վարչամիավորների մասին եղած տվյալների հիման վրա արված հաշվարկները ցույց տվեցին, որ Ղարաբաղի լեռնային մասում ապրում էր մոտ 43,5 հազար մարդ, որից ավելի քան 83%-ը հայեր էին, իսկ 16,7%-ը՝ թաթարներ<sup>3</sup>:

Շուշի քաղաքի բնակչության թիվը հասել էր 12,7 հազարի, հայերը կազմում էին ամբողջ բնակչության կեսից ավելին: Հաճախակի կատարվող վարչատարածքային փոփոխությունները հաջորդում էին միմյանց: Ղարաբաղի պրովինցիայի և հարակից որոշ տարածքների հաշվին 1868 թ. սկզբին կազմավորվեց Ելիզավետպոլի նահանգը, որը սկզբնական շրջանում բաժանվեց 5, իսկ 1873թ.՝ 8 գավառների: Հետագուտվող տարածքը մասնատվեց Ջիվանշիրի, Շուշիի և Ջաբրաիլի գավառների միջև:

1873-1875թթ. «Կամերալ ցուցակագրումների» հիմամբ արված հաշվարկների համաձայն Ղարաբաղում ապրում էր 93,1 հազ. մարդ, հայերը կազմել են ամբողջ բնակչության 84,7%-ը, իսկ թյուրքալեզու խմբերը՝ 15%-ը, Շուշիում կար 24,5 հազ. բնակիչ, այստեղ գերակշռող էր հայ բնակչությունը՝ 55%: 1850-ականների համեմատ նկատելի է բնակչության աճը՝ ավելի քան 53%<sup>4</sup>:

1886 թ. կազմված «Ընտանեկան ցուցակների» վերլուծումից պարզվեց, որ Ղարաբաղի լեռնային հատվածում ապրում էր 116,8 հազ. մարդ, որից 84,8%-ը՝ հայ (99,1 հազ.), 14,9%-ը՝ թաթար (17,4 հազ.), այլը՝ 0,3%: Նա-

<sup>1</sup> НАА, Фонд 93, оп. 1, д. 49, КО казенных крестьян Карабахской провинции на 1832-1833 гг., ч. 1; *Նոյն տեղում*, д. 50, ч. 2; д. 51, КО крестьян ханской фамилии

<sup>2</sup> А. Шахатунян, *Административный передел Закавказского края*, Тифлис, 1918, с. 84-85

<sup>3</sup> *Кавказский календарь (КК) на 1852 г., Тифлис, 1851, с. 430-433; КК на 1856 г., Тифлис, 1855, с. 358-359, 376-441*

<sup>4</sup> *Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880, с. XXII-XXV*

խորդ հաշվառումից հետո անցած 11 տարում, եթե ամբողջ բնակչությունն աճել էր 20,3%-ով, ապա հայերի թիվը՝ 20,5%-ով, որը կատարվել է շուրջ 1,5% տարեկան միջին աճի պայմաններում: Գյուղական բնակչության մեջ դարձյալ գերակշռող էին հայերը՝ 93,2%: Շուշիի բնակչության թիվը հասավ 26,8 հազարի, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում՝ 56,6%<sup>1</sup>:

XIX դ. երկրորդ կեսերից Ռուսաստանի կառավարությունը պատրաստվում էր համառուսաստանյան առաջին մարդահամարի անցկացմանը: Երկար աշխատանքներից հետո այն իրականություն դարձավ միայն 1897թ.:

1897թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարն իր տեսակի մեջ եզակի էր, իսկ արդյունքները՝ հավաստի: Ըստ այդ մարդահամարի Ղարաբաղում ապրում էր 128,6 հազ. մարդ, որից 82,7%-ը կամ 106,4 հազ.՝ հայ, 15,9%-ը կամ 20,4 հազ.՝ թաթարներ, ինչպես նաև 1,5 հազ. ռուս և 300-ը՝ փոքրաթիվ խմբեր: Գյուղական բնակչությունը կազմում էր 79,8%: Շուշիի բնակչության 55,8%-ը հայեր էին<sup>2</sup>: 1886 թ. տվյալների համեմատ 1897 թ. աճը կազմել էր ընդամենը 9%, ընդ որում, եթե հայերի թիվը ավելացել էր 7%-ով, ապա թյուրքալեզու խմբերինը՝ 14,7%: Նշենք, որ նման ցածր ցուցանիշները պայմանավորված էին ինչպես նախորդ հաշվառումների անկատարությունով, այնպես էլ հայ բնակչության ակտիվ տեղաշարժերով:

Լեոնային Ղարաբաղի ուսումնասիրվող ժամանակաշրջանի բնակչության էթնոժողովրդագրական նկարագրում կարելի է առանձնացնել մի քանի փուլ.

• XIX դ. սկզբից մինչև 1830 թ., երբ Անդրկովկասի ամբողջ տարածքն՝ այդ թվում Ղարաբաղը, աստիճանաբար միացվեց Ռուսաստանին: Այս շրջանին հատուկ էր ռազմաքաղաքական բարդ իրավիճակը, որի պայմաններում ակտիվանում են բնակչության տեղաշարժերը, նվազում է բնական աճը և բնակչության ընդհանուր թիվը:

<sup>1</sup> Свод статистических данных о населении Закавказского края извлеченных из посемейных списков 1886 года, Елисаветпольская губерния, Тифлис, 1893, сс. 438-463, 510-527

<sup>2</sup> Исторический архив России, Фонд 1290, опись 11, дело 636, 638, 695, Елисавет-польская губерния; Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., Елисаветпольская губерния, кн. 63, СПб, 1904

• 1830-1850 թթ., բնակչության ժողովրդագրական գործընթացներում նկատվեցին որոշակի դրական տեղաշարժեր, սակայն քաղաքական ու տնտեսական անկայուն իրավիճակը պահպանվում էր:

• 1850-1900 թթ. բնութագրվում են որպես բնակչության թվի աստիճանական կայունացման, տեղաշարժերի ակտիվության նվազման, բնական աճի համեմատաբար բարձր ցուցանիշն երի առկայության շրջան:

Այժմ տեսնենք թե ինչ փոփոխությունների է ենթարկվել Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվն ու էթնիկ կազմը XIX դ. իրականացված հաշվառումների արդյունքում:

Այսպիսով, 1823 թ. Ղարաբաղի տարածքում անցկացված պաշտոնական առաջին հաշվառումներից մինչև 1897 թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարն ընկած 74 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի բնակչությունն աճել էր 3,5 անգամ կամ 71,6%-ով: Ինչպես XX դ., այնպես էլ նշված ժամանակահատվածում, թյուրքալեզու էթնիկ խմբերի աճի տեմպերն ավելի բարձր էին քան հայերինը, ասել է թե ժողովրդագրական քաղաքականությունը նախորդ երկու դարաշրջաններում գրեթե նույնն էր, այսպես, եթե երկրամասի հայ բնակչությունն աճել էր 3,4 անգամ կամ 71,0%-ով, ապա թյուրքալեզու էթնիկ խմբերը կամ այսպես կոչված թաթարները՝ 3,8 անգամ կամ 73,7%-ով, իսկ փոքրաթիվ էթնիկ հանրությունները՝ 6 անգամ:

*«Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն.  
Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով.  
Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006թ.,  
Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 455-464*

## ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Արցախահայության ավանդական (մոնոդիկ) երաժշտական մշակույթի առավել բնորոշ, առաջատար մարզերից է նվագարանային երաժշտությունը:

Հայտնի իրողություն է, որ Արցախում՝ Հայոց աշխարհի այս հնամենի, բնիկ հատվածում, մշտապես հատուկ ուշադրություն, հետաքրքրություն և սեր է ցուցաբերվել նվագարանի, նվագածության և նվագարանային երաժշտության նկատմամբ: Բազմաթիվ, հատկապես թառահարներով, քամանչահարներով, նաև զուռնահարներով, դուդուկահարներով, շվիահարներով, դեղնահարներով և վարպետ նվագարանագործներով է հայտնի Արցախը: Այս իմաստով ուշագրավ է երաժշտագետ, կոմպոզիտոր, բանահավաք Սերգեյ Մարկոսյանի «Արցախի ժողովրդական երաժիշտներ» խորագրով գիրքը (Երևան, 2004), որտեղ ներկայացված է 1880-1980-ական թվականների հարյուրամյա ընթացքում գործող հեղինակի բնորոշմամբ «Արցախի ժողովրդապրոֆեսիոնալ երաժիշտների տաղանդավոր մի համաստեղություն»<sup>1</sup>, շուրջ 60 նվագածուներ, որոնց կողքին, ըստ հեղինակի «դեռևս ստվերում են մնում և պեղման կարիք ունեն արցախյան տասնյակ և տասնյակ ժողովրդական երաժիշտներ»<sup>2</sup>:

Նշելի է նաև, որ 1890-ական թվականներին Շուշիում՝ Արցախի երաժշտական կենտրոնում, հայ մշակութային օջախներից մեկում, երաժշտագետ Վասիլի Դորդանյանի պատկերավոր և թևավոր դարձած բնորոշմամբ՝ Անդրկովկասի այս յուրօրինակ կոնսերվատորիայում<sup>3</sup>, կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանի ջանքերով և ղեկավարությամբ, տեղացի երաժիշտների ուժերով ստեղծվեց ժողովրդական նվագարանների նվագախումբ (սազ, թառ,

<sup>1</sup> Մարկոսյան Ս., *վերը նշված աշխատությունը*, էջ 16

<sup>2</sup> *Նույն տեղում*

<sup>3</sup> Корганов В., *Кавказская музыка, Тифлис, 1980, с. 28*

դուդուկ, քամանչա, թութակ և այլն, կազմով), որը կատարում էր պարեղանակներ, նվագարանային մուղամներ և այլ պիեսներ<sup>1</sup>:

Արցախցին անտարբեր չի նաև եվրոպական նվագարանների և նվագարանային երաժշտության հանդեպ, սիրում և գնահատում է դրանք: Այսպես, Շուշիում 19-րդ դարի երկրորդ կեսին, առկա էին գերմանացի երաժիշտների կազմակերպած աշակերտական փողային և լարային նվագախմբեր, որոնք մասնակցում էին շրջիկ թատերախմբերի, նաև տեղի թատրոնի ներկայացումներին, քաղաքի պարահանդեսներին նմանատիպ այլ միջոցառումներին<sup>2</sup>: Նույն տարիներին Շուշիի «Խանդամիրենց» (Խանդամիրյանների) թատրոնում կարգ կար՝ «ամեն երեկո, ներկայացումների ընդմիջումների ժամանակ, փակ վարագույրի առաջ միշտ ելույթ էին ունենում արցախական աշխարհի անվանի երաժիշտների ժողովրդական եռյակները, որոնք իրենց նվագով, երգ ու պարեղանակներով զբաղեցնում էին հանդիսատեսներին, իրենց կատարողական վարպետությամբ արժանանում երաժշտասեր շուշեցիների գնահատանքին»<sup>3</sup>:

Արցախահայ նվագարանային երաժշտությունը, արցախյան երգ ու բանի հետ մեկտեղ, արցախցու բովանդակ կյանքի (առօրյա, տոն, սուգ, ուրախություն, ծես և այլն) մշտական ուղեկիցն ու անբաժանելի մասն է: Այսպես օրինակ, արցախյան հարսանիքի, այլևայլ ծեսերի մշտական և առավել գործուն մասնակիցներն են եղել զուռնահարը և դիոլահարը «դավուլ զուռնան» (Ե. Լալայան)<sup>4</sup>, որն «ուրբաթ օրը գնում թե՛ փեսացուի, և թե՛ հարսնացուի տների առաջ ածում է «սահարի»՝ հատուկ հարսանեկան եղանակը, որով իմացնում է գյուղին, որ այդ օրվանից սկսվում է հարսանիքը»<sup>5</sup>: «Դավուլ զուռնան» շաբաթ առավոտյան «մի որոշ եղանակ ածելով հրավիրում է բոլորին պատրաստվել պսակ գնալու»<sup>6</sup>, «դավուլ զուռնի»

<sup>1</sup>Մարկոսյան Ս., *Հայկական ժողովրդական փողային արվեստի ուսումնասիրության հարցեր*, դիպլոմային աշխատանք, գիտ. դեկավար՝ Ա. Բուդաղյան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, 1981, էջեր 33, 35

<sup>2</sup> Մուրադյան Ս., *Հայկական երաժշտական մշակույթի պատմություն* (Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում), Երևան, 1970, էջ 194, Մարկոսյան Ս., *դիպլոմային աշխատանք*, էջ 33

<sup>3</sup> Մարկոսյան Ս., «*Արցախի ժողովրդական երաժիշտներ*», էջ 31

<sup>4</sup> Լալայան Ե., *Ազգագրական հանդես*, Երկրորդ տարի, Բ. գիրք, Վարանդա, Թիֆլիս, 1897, էջ 130

<sup>5</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև Լ. Երնջակյան, Զ. Պիկիչյան, «Հիմն արևին» («Սահարին» հայ երաժշտական մշակույթում), Երևան, 1998, էջ 13: Արցախում «Սահարին» անվանվել է նաև «Արնագալի», և կատարվել իբրև հարսանեկան ծեսի առավոտյան աղոթք, նույն տեղում, էջ 14

<sup>6</sup> Լալայան Ե., *Ազգագրական հանդես*, Վարանդա, էջ 135

առաջնորդությամբ ուղևորվում են դեպի հարսնացուի տունը՝ հարսնառի<sup>1</sup> և այլն: Ի դեպ, հայ նվագաձուներին էին հատկապես նախընտրում հարսանիքների հրավիրելու արցախաբնակ այլազգիները՝ ադրբեջանցիները, քրդերը<sup>2</sup>: Հիշատակվում են նաև արցախյան ժողովրդական նվագաձուների մրցույթները, որոնք տեղի էին ունենում եկեղեցական տարբեր տոների ժամանակ, Արցախի այս կամ այն եկեղեցու բակում կամ ընդարձակ գավթում<sup>3</sup>:

Արցախահայ նվագարանային երաժշտությունը ձևավորվել է դարերի ընթացքում հայ ավանդական բազմահարուստ երաժշտության հզոր հիմքով, միաժամանակ ներառելով, յուրացնելով, ազգային հենքին ներդաշնակորեն միահյուսելով կովկասյան և ավելի լայն՝ արևելյան ավանդական երաժշտության որոշ սկզբունքներ, նվաճումներ: Ներկայանում է որպես ձևավորված, կուռ, ամբողջական, ավանդական երևույթ, իրեն հատուկ նվագարաններով, նվագացանկով, նվագաձայնային ձևերով և այլն:

Բնորոշվում է նվագարանների տեսականու բազմազանությամբ. լարային՝ աղեղնավոր, կսմիթային (քամանչա, թառ, սագ), փողային (դուդուկ, գուռնա, շվի և այլն), հարվածային (դիոլ, դափ և այլն) և նվագարանային տարբեր խմբերի առկայությամբ, նվագացանկի հարստությամբ (պարեղանակներ, նվագարանային մուղամներ, ծիսական նվագներ, աշխատանքային եղանակներ), նվագաձայնային բազմապիսի ձևերով (մենակատարային, խմբակային, միաձայն, բազմաձայն, դրանց այլևայլ դրսևորումներով):

Արցախահայ նվագարանային երաժշտության կերտողները, ավանդույթների կրողները և փոխանցողները տեղացի շնորհաշատ նվագաձուների բազմաթիվ սերունդներն են: Դրանք թե՛ անանուն ժողովրդական կատարողներն են, թե՛ հայտնի մեծահմուտ (վիրտուոզ) մասնագետ նվագաձուներ՝ փայլուն մենակատարներ, անսամբլիստներ, քամանչահարներ՝ Ավանես Ավանեսյանը, Արմենակ Էսրիյանը, Թառահարներ՝ Արսեն Յարամիշյանը, Ներսես Դորդանյանը, Բալա Մելիքյանը, Սաշա Թարխանյանը, Սողոմոն Սեյրանյանը և ուրիշներ, որոնց համբավը հատկապես 19-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 132-133

<sup>2</sup> Մարկոսյան Ս., **Արցախի ժողովրդական երաժիշտներ**, էջ 39, 84: Այս մասին տե՛ս նաև Ս. Բրուսյան, *Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր*, Երևան, 2001, էջ 72

<sup>3</sup> Այս մասին տե՛ս «Անմահ է նվագը, վարպետ Ջամշուդ» պատումը Ս. Մարկոսյանի «Արցախի ժողովրդական երաժիշտներ» նշված գրքում, էջ 19-25

րդ դարավերջին և 20-րդ դարում անցավ հայրենյաց սահմանները: Միաժամանակ նրանց եռանդուն կատարողական գործունեությունը դրսում (Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, Լենինգրադ, Միջին Ասիա, Լեհաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Թուրքիա, Իրան և այլն) մեծապես նպաստեց Արցախի նվազարանային երաժշտության ավանդույթների տարածմանը և արմատավորմանը հատկապես Անդրկովկասում, ճանաչմանը, բարձր գնահատմանը Ռուսաստանում և այլուր:

Ոլորտին բազմիցս անդրադարձել են երաժշտագետները՝ Մ. Մուրադյանը<sup>1</sup>, Մ. Բրուտյանը<sup>2</sup>, Ֆ. Շուշինսկին<sup>3</sup>, Լ. Երնջակյանը<sup>4</sup>, Ս. Մարկոսյանը<sup>5</sup>, Մ. Գասպարյանը<sup>6</sup>, սակայն մեծ մասամբ այլ ուղղվածության աշխատությունների ներքո: Այնինչ երևույթը բազմակողմանի և մանրամասն երաժշտապատմական և տեսական ինքնուրույն դիտարկման և ուսումնասիրության կարիք ունի:

Մեր խնդրո առարկան Արցախի ավանդական նվազարանային երաժշտության կերտվածքային (երաժշտական նյութի շարադրման) որոշ կառուցվածքներն են: Դրանք դիտարկել և փորձել ենք վերլուծել՝ հիմք ընդունելով արցախյան նվագների ձայնագրված և նոտագրված նմուշները, որոնք պահպանվում են ՀՀ ԳԱԱ ԱԻ ժողովրդական արվեստի բաժնում, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում, նաև գետեղված են (նոտագրությունները) մի շարք երաժշտագիտական տպագիր և ձեռագիր աշխատություններում: Դրանք են՝ «Հովվի կանչ», «Կոխի եղանակ», «Լարախաղացի մեղեդիներ», հարսանիքի եղանակներ՝ «Հարսանքի կանչ», «Հին հարսանեկան քայլերգ», «Հարսը տնից հանելու եղանակ», «Փեսան հարսին հրավիրում է հարսանքի սեղանին», մուղամներ՝ «Սահարի», «Բայաթի Շիրազ», «Բայաթի Քուրդ», «Շուռ» և այլն, այդ մեղեդիների ավանդական կատարմանը համապատասխան նվազարաններով և նվազարանային կազմերով: Դիտարկել ենք նաև

<sup>1</sup> Մուրադյան Մ., *Հայկական երաժշտական մշակույթի պատմություն*, նշվ. աշխ.

<sup>2</sup> Բրուտյան Մ., *Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր*, նշվ. աշխ.

<sup>3</sup> Шушинский Ф., *Народные певцы и музыканты Азербайджана*, М., 1979

<sup>4</sup> Երնջակյան Լ., *Հայ-իրանական երաժշտական կապերի պատմություն*, Երևան, 1991

<sup>5</sup> Մարկոսյան, *նշված դիպլոմային աշխատանքը*, գիրքը

<sup>6</sup> Гаспарян М., *Опыт характеристики музыкального быта Арцаха (на примерах Гадрутского, Мартуининского районов и города Степанакерта НКАО)*, дипломная работа, научный руководитель Р. Атаян, Ереван, 1990



տարբեր բնույթի պարեղանակներ՝ «Ղարաբաղի կանանց շուրջպար», «Դարչինի», «Դերբենդի», «Լուսարչայ» և այլն, ժողովրդական և աշուղական երգերի նվագարանային այլևայլ տարբերակներ:

Խնդրո՞ղ ղիտարկված և վերլուծված նյութի շրջանակներում մեր նախնական եզրակացությունները հետևյալն են.

1. Արցախահայ ավանդական նվագարանային երաժշտությանը հավասարապես հատուկ են նվագաձայնային թե՛ մենակատարային, թե՛ խմբակային ձևերը:

2. Դրանք սովորաբար գործառնական (ֆունկցիոնալ) նշանակություն ունեն՝ ավանդաբար կապված են կատարվող եղանակի ժանրային պատկանելիության հետ: Այսպես, «Կոխի եղանակը», «Լարախաղացի մեղեդիները», հարսանեկան՝ կանչը, քայլերգը, ինչպես նաև հայ ավանդական հարսանիքի ծիսական մյուս եղանակներից՝ «Սահարի» մուղամը<sup>1</sup>, կատարվում են նվագաձայնային խմբակային ձևով (երկու զուռնա դիոլ): Մյուս մուղամները թե՛ մենակատարային (քամանչա, թառ), թե՛ խմբակային ձևով (երկու դուդուկ): Մենակատարային են հարսանեկան՝ «Հարսը տնից հանելու» և «Փեսան հարսին հրավիրում է հարսանքի սեղանին» եղանակները (զուռնա):

3. Նվագաձայնային մենակատարային ձևը ավելի հատուկ է լարային նվագարաններին (թառ, քամանչա), խմբակայինը՝ փողային և հարվածային նվագարաններին՝ երկու դուդուկ, երկու զուռնա և դիոլ և այլ կազմերով: Առկա է նաև հատկապես պարեղանակներում, լարային-հարվածային՝ թառ տմբլա երկյակը:

Նվագաձայնային ձևերի և նվագարանների նշված կապը ներկայացնում ենք ստորև բերված աղյուսակի միջոցով:

---

<sup>1</sup> «Սահարու» որպես նվագարանային մեղեդի-մուղամի մասին տե՛ս Լ. Երնջակյան, Հ. Պիկիցյան, «Հիմնարկին», նշվ. աշխ., էջ 8, 9

ՄԵՆԱԿԱՏԱՐԱՅԻՆ ՉԵՎ	ԽՄԲԱԿԱՅԻՆ ՉԵՎ	
	Նվագարանային երկյակ	Նվագարանային եռյակ
1.ԹԱՌ 2.ՔԱՄԱՆՉԱ 3.ԶՈՒՌՆԱ	1.ԵՐԿՈՒ ԴՈՒԴՈՒԿ 2.ԵՐԿՈՒ ԶՈՒՌՆԱ 3.ԹԱՌ ՏՄԲԼԱ	1.ԵՐԿՈՒ ԴՈՒԴՈՒԿ ԴՉՈԼ 2.ԵՐԿՈՒ ԴՈՒԴՈՒԿ, ՏՄԲԼԱ 3.ԵՐԿՈՒ ԶՈՒՌՆԱ, ԴՉՈԼ

4.Նվագի կերտվածքային կառուցվածքը անմիջանակորեն կապված է նվագաձայնի ձևի հետ: Ըստ այդմ՝ ակնհայտորեն առանձնանում են մենակատարային նվագաձայնի և խմբակային նվագաձայնի կերտվածքային կառուցվածքները:

5.Մենակատարային նվագաձայնը հատուկ է երկձայնի տարրերով միաձայն կերտվածքը, երբ նվագաձուն (հատկապես թառահարը) մեղեդու դադարների (ցեզուրա) պահին կամիթով (pizzicato) վերարտադրում է մեղեդուց ստորև գտնվող մեկական հնչյուններ: Դրանք սովորաբար մեղեդու (կամ մեղեդու ավարտուն որևէ հատվածի) ձայնակարգի հենակետային հնչյուններն են, մեծ մասամբ՝ տոնիկան կամ օժանդակ հենակետը, որոնք ձայնառության (դամի) նշանակություն ունեն, տվյալ դեպքում վերջինիս ընդհատվող ձևով, և կարծես հաստատում, վավերագրում են մեղեդու «ասելիքը»: Մենակատարային նվագաձայնի կերտվածքային այս կառուցվածքը հատկապես բնորոշ է նվագարանային մուղամներին<sup>1</sup>:

Նոտային օրինակ 1, մուղամ «Ռաստ», հատված սկզբից, թառահար Ս. Սեյրանյանի կատարմամբ<sup>2</sup>:



<sup>1</sup> Հմն. Касимова С., *Народно-национальные истоки мелодии и гармонии оперы «Севиль» Ф. Амирова*, в сб. «Ученые записки» серия XIII (история и теория музыки, N 18), Баку, 1971, с. 21

<sup>2</sup> Այս և հետագա տեքստում բերված հաջորդ «Մահուր հինդի» մուղամի ձայնագրությունները պահպանվում են Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում: Նոտային օրինակներ 1-6-ում զետեղված նյութի նոտագրությունը տողերիս հեղինակինն է:

Եվս մեկ օրինակ, մուղամ «Մահուր հինդի», հատված սկզբից, թառահար Մելիքյանի կատարմամբ:

Նոտային օրինակ 2



Այս դեպքում ընդհատվող ձայնառությունը վերարտադրվում է հնչյունի երկձայն, օկտավային ներքընթաց նմանակման (իմիտացիա) միջոցով:

Ընդհատվող ձայնառական հնչյունները հատուկ են, մասնավորապես, մուղամի սկզբնամասին և ավարտին: Մուղամի միջնամասային, հատկապես բարձրակետային (կուլմինացիոն) հատվածներում ընդհատվող, ձայնառական հնչյունները վերածվում են արագընթաց, կրքոտ, կրկնվող՝ (repetitio) «կշռության մասնատվածությամբ ձայնառությունների» (Ք. Քուշնարյան)<sup>1</sup>, որոնք, ինչպես հայտնի է, գործի են դրվում հատկապես արևելյան ավանդական լարային նվագարանների վրա նվագելիս<sup>2</sup>: Այդ ձայնառությունները հանդես են գալիս թե՛ մեղեդու դադարներին, թե՛ մեղեդուն համընթաց, հատվածաբար առաջ բերելով երկձայն ինտերվալային շարադրանք, և թե՛ մեղեդու հետ յուրօրինակ փոխեփոխ ձևով՝ և նպաստում են մեղեդու դինամիկ վերելքին, սրացնելով ու նպաստականդելով այդ վերելքը դեպի բարձրակետ:

Նոտային օրինակ 3<sup>3</sup>



<sup>1</sup> Кушнарев Х., *Вопросы истории и теории армянской монодийческой музыки*, Л., 1958, с. 218.

<sup>2</sup> Там же

<sup>3</sup> Այս և հաջորդ նոտային օրինակ 4-ը հատվածներ են վերը բերված «Ռաստ» մուղամի (նոտային օրինակ 1) միջին մասից

#### Նոտային օրինակ 4



Տե՛ս ևս երկու օրինակ «Մահուր հինդի» մուղամի միջին մասի բարձրակետային հատվածից (նոտային օրինակներ 5, 6): Այս դեպքում ձայնառությունը մեղեդու նկատմամբ իր ավանդական՝ ստորն դիրքին հակառակ, կատարվում է մեղեդուց բարձր գտնվող հնչամասում:

#### Նոտային օրինակ 5



#### Նոտային օրինակ 6



Մուղամների մենակատարային նվագածության ընթացքում ձայնառությունների կիրառման վերը նշված և դիտարկված բոլոր ձևերը տեղ ունեն նաև արցախահայ մենակատարային նվագարանային պարեղանակներում: Սակայն այստեղ ձայնառությունն իր բուն կարգավիճակի հետ միասին՝ որպես «ձայնեղանակի պահապան» (“блюстителъ гласа” Բ. Քուշնարյան)<sup>1</sup>, ձեռք է բերում նաև չափակշռության գործառնություն՝ հանդես է գալիս մեղեդու չափական ուժեղ, շեշտված մասերում, վերարտադրում մեղեդու պարային կշռության դիմագիծը, և դրանով իսկ, ասես, լրացնում է հարվածային նվագարանի բացակայությունը:

<sup>1</sup> Кушнарев Х., *Вопросы истории и теории армянской монодической музыки*, с. 41

### Նոտային օրինակ 7



Ֆրագ «Շախշախի» պարեղանակից՝ թառ<sup>1</sup>: Միաժամանակ մենակատարային նվագարանային պարեղանակներում նկատել ենք նաև մեղեդին պարզագույն հարմոնիզացիայի ենթարկելու որոշ դրսևորումներ, որոնք դիտարկում ենք որպես կոմպոզիտորական երաժշտության ազդեցության արդյունք<sup>2</sup>: Այսպես, «Շախշախի» պարեղանակում մեղեդին, որի ձայնակարգն է gis լոկր. 3, ուղեկցվում է ոչ միայն նշված ձայնակարգի ավանդական ձայնառական հնչյուններով՝ օժանդակ հենակետ՝ «հ», ստորին մեղիանտա՝ «e», այլև տեղ-տեղ VII աստիճանով՝ “fis” և սուբդոմինանտա՝ “cis”, որոնք ընդգծում են մեղեդու, մասնավորապես, երկրորդ աստիճանի («a») ֆունկցիոնալ ոլորտը, և հարմոնիկ նոր երանգ հաղորդում պարեղանակին:

### Նոտային օրինակ 8



### Նոտային օրինակ 9



<sup>1</sup> Մուրադյան Ա., «Հայկական նվագարանային պարեղանակներ» ձեռագիր հատոր, N 39: Ձեռագիրը պահպանվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում

<sup>2</sup> Հումս. Эльдарова Э., *Искусство ашгыгов Азербайджана*, Баку, 1984, с. 52

Այս երևույթը առաջ է բերում նաև երկձայն ենթաձայնային կերտվածքի տարրեր (տե՛ս նոտային օրինակ 9), նաև ֆրագ «Դերբենդի» (կանանց մենապար) պարեղանակից, թառ<sup>1</sup>:

Նոտային օրինակ 10,



Խմբակային նվագաձևության կերտվածքները դիտարկվող նմուշներում բազմաձայն են: Բնորոշվում են ձայների կերտվածքային բազմազանությամբ՝ մեղեդիական, ձայնառական, կշռության, բազմատեմբրայնությամբ՝ փողային և հարվածային նվագարաններ, լարային հարվածային նվագարաններ, բազմակշռությանությամբ, առաջ բերելով յուրօրինակ «մոնոդիկ բազմաձայնության» (*“монодийное многоголосие”*, եզրը՝ երաժշտագետ Ն. Ս. Յանով-Յանովսկայայինն է)<sup>2</sup> կերտվածքային օրինակներ:

Այդ կերտվածքները դիտարկվող նմուշներում երկուսն են՝ երկձայն և եռաձայն: Դրանցից երկձայն կերտվածքը հանդիպում է երկու տարբերակով.

ա) երբ մեղեդին կատարվում է պահված ձայնառությամբ. առաջին դուդուկ կամ գուռնա՝ մեղեդի, երկրորդ դուդուկ կամ գուռնա՝ ձայնառություն:

բ) մեղեդին՝ թառ, ուղեկցվում է հարվածային նվագարանի՝ դիոլ կամ տմբլա, կշռության հնչամասով: Վերջինս տրոհված է բարձրության երեք ենթահնչամասերի ցածր, միջին, բարձր) տե՛ս ստորև բերված ուրվագիծը 1-ը):

Ուրվագիծ 1



Եռաձայն կերտվածքներում մեղեդին կատարվում է թե՛ դամբի, և թե՛ կշռության տրոհված հնչամասի ուղեկցությամբ (ուրվագիծ 2):

<sup>1</sup> Մուրադյան Ա., *«Հայկական նվագարանային պարեղանակներ»*, 140

<sup>2</sup> Янов-Яновская Н., *Богатство многообразия*. - В журн.: *“Советская музыка”*, 1981, N1, с. 29

Ուրվագիծ 2

ՄԵՂԵԴԻ -----

ՁԱՅՆԱՌ \_\_\_\_\_

ԿՇՌՈՒՅԹ .....

7. Դիտարկվող կերտվածքները բոլոր չափանիշներով պատկանում են հայ ավանդական նվագարանային երաժշտության առավել բնորոշ, տիպական, ազգագրական տարբեր շրջաններում խիստ տարածված կերտվածքային կառուցվածքների շարքին:

Ներկայացված վերլուծությունը ավարտված չենք համարում, ապագային թողնելով արցախահայ նվագարանային երաժշտության այլ նմուշների կերտվածքների քննությունը: Մակայն խնդրո դիտարկման նախնական փորձն արդեն իսկ ի հայտ է բերում երևույթի բազմաբովանդակ լինելն ու նշանակությունը:

*«Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006թ.», Երևան, 2007, էջ 282-293*

## ИЗ ИСТОРИИ ЭТНОГРАФИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ НАГОРНОГО КАРАБАХА (КОНЕЦ XIX- НАЧАЛО XX ВВ.)

Материалы и различные сведения о жизни и быте отдельных селений Нагорного Карабаха, отличавшихся своей самобытностью и своеобразием, нашли отражение уже в обширной дореволюционной кавказоведческой литературе, и с конца XIX в. печатались в издаваемом Кавказским учебным округом «Сборнике материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК), а также других изданиях. Они составлялись в основном смотрителями и учителями местных училищ и были посвящены описанию ряда селений (Гадрута, Кусапата, Сарова, Геташена (Чайкенда) Каринтака (Даш-Алты) и др., древностям с. Аветараноц (Чанахчи)<sup>1</sup>, отдельным сторонам внутрисемейной жизни<sup>2</sup>, промысловым занятиям в Закавказье, в том числе, в Елисаветпольской губ. (в Шуши, Кусапате, Гадруте и др.)<sup>3</sup>.

Попытка первого этнографического изучения этого региона принадлежит Ер. Лалаяну. Том 2-й своего журнала «Азгагракан һандэс» (Ազգագրական հանդես) он посвятил исторической Варанде, причем к участию в составлении этого сборника привлек также других авторов. В разделе Л. Атабекяна «Статистические сведения» содержатся интересные данные о численности и плотности населения всего Шушинского уезда, его распределении по национальному составу и вероисповеданию, а также демографические показатели брачности, рождаемости, смертности, естественного прироста. Значительная

---

<sup>1</sup> И. Давидбеков, Село Гадрут Елисаветпольской губ., Джеванширского уезда» - СМОМПК, Тифлис, вып. VI, 1888, с. 153-192; Н. Григоров, Село Саров, Елисаветпольской губ., Джеванширского уезда - Там же, с. 123-132; Г. Израелов, Село Касапет - Там же, вып. XIII, 1892, с. 42-58; Г. Осипов, Селение Барда, Джеванширского уезда, Елисаветпольской губ. - Там же, вып. XVII, 1893, с. 119-137; Ф. Джейранов, Селение Чайкенд, Елисаветпольского уезда той же губ. - Там же, вып. XXV, 1898, с. 59-100; Г. Осипов, Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпольской губ. - Там же, с. 101-136; Е. Мелик-Шахназаров, Из древностей селения Ченахчи - Там же, вып. XIX, 1894, с. 78-83

<sup>2</sup> Г. Израелов, Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губ. - СМОМПК, вып. VII, 1889, с. 73-76; А. Калашев, Вардавар [сел. Чайкенд Елисаветпольской губ] - Там же, вып. XVII, 1893, с. 1-36

<sup>3</sup> Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья - СМОМПК, вып. XI, 1891, с. 1-79, 87-89 и др



часть материалов представлена в виде таблиц, причем в десятилетнем интервале 1886-1895 гг.

Раздел Г. Тер-Казаряна «Экономическое состояние» представляет краткую сводку главных направлений сельского хозяйства. Отмечены основные культуры, возделываемые в полеводстве, садоводстве, а также количество и виды скота; упоминаются занятия шелководством, пчеловодством, рыболовством, охотой. Приведены данные (в виде таблицы) о ремеслах, в том числе, о количестве мастеров, учеников и рабочих в Шуши и Шушинском уезде за 1895 г., а также фабричном производстве и торговле.

Ер. Лалаяном в сжатой форме представлены исторический очерк, топография, флора и фауна региона, изложены краткие сведения о г. Шуши, ряде известных селений, монастырей, святынь и крепостей. Весьма интересны сведения о состоянии просвещения (количество школ в г. Шуши и в целом в Варанде, библиотек, театров, типографий), а также почтового дела в 90-е гг. XIX в. Как и в других томах журнала «Азгагакан һандэс», здесь также значительное внимание отведено семейной жизни и верованиям. Эти два наиболее больших раздела собственно и составляют этнографическую часть работы. Довольно обстоятельно описаны брак и свадьба, рождение ребенка, внутрисемейные отношения, похоронная обрядность, а также верования (включая многочисленные культы) и календарные праздники<sup>1</sup>. К сожалению, в этой ценной работе отсутствуют такие важные сферы традиционного народного быта армян как хозяйство и материальная культура, а также ряд разделов духовной культуры. Подчеркнем, что сам Ер. Лалаян рассматривал этот труд как «материалы для будущих исследований», что и обозначено в подзаголовке книги. Несмотря на описательный характер этих материалов, значение их с позиций сегодняшнего дня переоценить невозможно: они отражают жизнь и быт традиционного армянского общества в дореволюционный период конца XIX- начала XX вв.

Первое всестороннее этнографическое исследование армян Нагорного Карабаха принадлежит С. Д. Лисициану. В основу его положен обширный полевой материал, собранный ученым в различных районах данного региона во время экспедиции, организованной Закавказской Научной

---

<sup>1</sup> Ե. Լալայան, *Վարանդա, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1898*

Ассоциацией при ЦИК Закавказья. Эта Научная Ассоциация была создана летом 1923г. в Тифлисе «с целью всестороннего изучения стран Закавказской федерации (республик Грузии, Армении и Азербайджана) и Ближнего Востока, а также распространения знаний о них». За недолгий, но плодотворный срок своего существования она оставила заметный след в истории этнологического кавказоведения в бурный период первого постреволюционного десятилетия 1920-х годов. Вслед за всесторонним обследованием Осетии (1923 г.), в 1924 г. Ассоциацией была организована научная экспедиция для комплексного экономического, этнографического и археологического изучения Зангезура, Нагорного Карабаха и Нагорного Курдистана<sup>1</sup>. Широкий масштаб экспедиции, включавшей специалистов разного профиля: этнографов (С. Д. Лисициан, Г. Ф. Чурсин), экономистов (Т. Атабеков, Г. Кочарян), археологов (С. ТерАветисян, Е. Пчелина), знатока курдского языка и быта Лазо (А. Газарян) и фотографа (Н. Степанян) позволил собрать обширный материал, впервые в обобщающем виде отражающий целостную картину жизни и быта указанного региона. Экспедиция стала важной вехой в развитии не только кавказоведения, но и армянской этнографии, поскольку, по определению С. Д. Лисициана, явилась «первой попыткой охвата этнографическим описанием широкого района после советизации Закавказья»<sup>2</sup>. Для самого С. Д. Лисициана, уже признанного к этому времени арменоведа, это был первый, притом весьма успешный опыт полевой работы.

В Нагорном Карабахе он собрал огромный и разносторонний материал, уточнил и расширил данные, ранее собранные Ер. Лалаяном. С. Д. Лисициан учитывал, что, хотя со времени сбора материала Ер. Лалаяном прошло около трех десятилетий, но слишком различными для армянской действительности были эпохи дореволюционной Армении рубежа XIX-XX вв. во время фиксации материала Ер. Лалаяном и первого десятилетия Советской Армении в годы его (Лисициана) собирательно-полевой деятельности. Позже, в 1937 г. он провел в этом регионе дополнительное обследование, акцентируя внимание в основном на достижениях культур-

---

<sup>1</sup> Имеется ввиду Курдистанский у. Азербайджанской ССР

<sup>2</sup> С. Лисициан. *Армянская этнография за 15 лет – Советская этнография, 1936*, <sup>1</sup> 4-5, с. 271

ного строительства за десятилетний период, прошедший после его предыдущей (1924 г.) экспедиции. Проанализировав и обобщив собранные материалы, ученый написал (на русском языке) историко-этнографическое исследование, посвященное армянам Нагорного Карабаха, в котором вскрыл его местную специфику и одновременно показал историко-культурную общность с армянским этносом в целом.

В небольшом предисловии «От автора» С. Д. Лисициан представил маршрут экспедиции, а также кратко изложил степень изученности данного региона. В монографии, снабженной в вводной части географическим очерком, подробно освещены этнический состав населения, основные аспекты хозяйства и материальной культуры (занятия жителей, поселения, жилища, интерьер, утварь, пища, одежда), семьи и семейно-обрядовой сферы (свадебная, родильная, похоронная обрядность), внутрисемейные и соседские отношения, формы взаимопомощи, различные стороны духовной культуры, в частности верования и связанные с ними многочисленные формы культов, праздники годового календарного цикла. Все аспекты традиционной материальной и духовной культуры армян рассмотрены в двух контекстах: исторической ретроспективы и преобразований социалистического строительства. Подобный методологический подход в изучении данного региона был для него не случаен. С. Д. Лисициан подчеркивал, что «Нагорный Карабах принадлежит к тем редким армянским провинциям, население которых раз сложившись в раннюю историческую эпоху, в дальнейшем в своей массе сохранило свой этнический состав на протяжении долгих веков, хотя и здесь оно не носит уже того целостного характера, который ему был свойственен до XVII-XVIII вв.». По сравнению с другими армянскими провинциями «Нагорный Карабах удержал сравнительно большую культурно-бытовую преемственность»<sup>1</sup>. Работа С. Д. Лисициана явилась первым в армянской этнографии монографическим исследованием отдельного историко-этнографического региона Армении. По актуальности поставленных проблем она не утратила своей значимости и в настоящее время.

К сожалению, рукопись ждала трудная и необычная судьба. Сохранившиеся в личном фонде ученого архивные документы свидетельствуют о сложных

---

<sup>1</sup> С. Лисициан, *Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк. Ер., 1992, с. 41*

многолетних перипетиях, связанных с ее изданием<sup>1</sup>. На протяжении 1930-х гг. готовность ее опубликования поочередно выражали целый ряд заинтересованных ведомств: Закавказская Научная Ассоциация (Тифлис), организовавшая экспедицию; отдел народного образования Автономной области Нагорного Карабаха (Степанакерт); Институт кавказоведения им. Марра (Тифлис); Институт этнографии АН СССР (Ленинград), заключивший в 1936 г. договор с автором на ее издание, но не сумевший за 1936-1940 гг. его осуществить; Институт истории, археологии и этнографии Азербайджанского филиала АН (в дальнейшем Институт истории АН Аз. ССР, Баку). В 1940 г. в силу ряда обстоятельств готовая рукопись была из Ленинграда передана для издания в Баку. Однако там она не только не была опубликована, но и не возвращена автору, а после его смерти (в 1947 г.) - его законным наследникам: их многочисленные настойчивые требования на протяжении более двадцати пяти лет остались безрезультатны<sup>2</sup>. Монография увидела свет десятилетия спустя, после того, как в архиве ученого в Ереване нами конце 1970-х гг. был случайно обнаружен черновик рукописи, многие страницы которой за давностью лет прочитывались уже с трудом. Учитывая ее большую научную ценность и уникальность представленных в ней полевых материалов, ставших в настоящее время достоянием истории, а также неослабевающий интерес к работе, в особенности в связи с событиями последних лет в Нагорном Карабахе, Институт археологии и этнографии АН Арм. ССР счел необходимым и актуальным издание этого труда. При редактировании работы, написанной более полувека тому назад, потребовались тщательная текстологическая проверка текста, составление необходимых комментариев и научно-справочного аппарата. Монография С. Д. Лисициана (ред. Д. С. Вардумян, Л. М. Варданян) была опубликована сначала в армянском переводе, с обширным иллюстративным материалом (1981), вскоре став библиографической

---

<sup>1</sup> Национальный архив Армении, ф. 428: семейный фонд Лисицианов, оп. 2, д. 126, 307; оп. 3, д. 103, оп. 4, д. 300, 306, 307, 336, 341, 345

<sup>2</sup> Документы частично опубликованы в работе: Степан Лисициан, *Армяне Нагорного Карабаха. Приложение*, с. 191-206. Подробности см. также: Л. М. Варданян, *Степан Лисициан и истоки армянской этнографии*, Ер., 2005, с. 287-292

редкостью, а затем в русском оригинале (1992)<sup>1</sup>. Она сразу привлекла научной общественности и получила высокую оценку специалистов.

По полевым материалам указанной экспедиции С. Д. Лисициан тогда же написал и работу о традиционном карабахском жилище. В ней скрупулезно описаны все основные части и детали жилого дома и хозяйственных построек и их функциональное назначение, причем с пояснением терминов на армянском и русском языках<sup>2</sup>. Впервые традиционное жилище рассматривалось не только как одна из основных сфер материальной культуры армян, но и как важный источник для решения проблемы их этногенеза. В этой работе С. Д. Лисициан впервые в армянской этнографии предпринял попытку изучения традиционного армянского жилища с позиций его типологической классификации, чему в дальнейшем посвятил целый ряд своих исследований. Другим весомым вкладом ученого явилось выявление им - также впервые на карабахском материале - определенной генетической связи «так называемых простонародных крестьянских построек» с армянскими культовыми сооружениями. По его мнению, изучение уже одного только карабахского жилища «дает полное основание ставить в непосредственную связь с его планом план жаматунов». Данная работа С. Д. Лисициана положила начало его многолетнему обширному исследованию по армянскому народному жилищу, завершить которое в объеме монографии ученый не успел.

Практически одновременно с исследованиями С. Д. Лисициана И. Петрушевский опубликовал работу о дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха<sup>3</sup>. В основе ее лежит экспедиционный материал 1928 г., отражающий различные формы широко распространенного здесь культа местных святынь. Приведенный в работе обширный фактический материал свидетельствует о том, что еще в конце 1920-х гг. здесь сохранялось поклонение горным вершинам, священным деревьям и родникам, могилам

---

<sup>1</sup> Ս. Լիսիցյան, *Հեծնային Ղարաբաղի հայերը* (Ազգաբնակչության ակնարկ), Հայ ազգագրություն և բնակչություն, 12, Եր., 1981, էջ 7-84: Степан Лисициан, *Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк*. Ер., 1992. Для русского издания нами составлены Глоссарий этнографических терминов и Указатель встречающихся в тексте географических названий, исторических памятников и местных святынь, а также написано предисловие «От редактора», в котором охарактеризована научная биография С. Д. Лисициана

<sup>2</sup> С. Лисициан, *К изучению армянских крестьянских жилищ* (Карабахский карадам) – *Известия Кавказского историко-археологического института*, Тифлис, 1925, т. 3, с. 97-108

<sup>3</sup> И. Петрушевский, *О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха*, Баку, 1930

мучеников-ныхатаков. Оценивая работу И. Петрушевского, С. Д. Лисициан отмечал, что при сборе ими полевого материала в 1924 и 1928 гг., когда «еще не успело во всей широте развернуться колхозное движение», оба они еще «встречали хотя бы уцелевшие в памяти стариков обрывки обычаев, столь важных как источник давно пройденных стадий общественного развития». Всего четыре года спустя после их поездки «исследователю приходится наталкиваться на чистое место», т. к. «стали более сбивчивыми, а во многих случаях - совсем сгладились воспоминания о старых обычаях, еще несколько десятков лет тому назад живо сохраняемых и соблюдаемых в народной массе»<sup>1</sup>. Подчеркнем, что культ местных святынь, их типология и социально-общественное значение в жизни армян на обширном полевом материале, в том числе—и карабахской экспедиции, впервые был изучен С. Д. Лисицианом<sup>2</sup>.

*«Լ. Ղ. Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով.  
Զեկուցումների ժողովածու. հունիսի 21-24, 2006թ.,  
Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 488-495*

---

<sup>1</sup> С. Лисициан, *Армяне Нагорного Карабаха...*, с. 26, 27

<sup>2</sup> С. Лисициан, *Святыни у перевалов - Советская этнография*, 1936, <sup>1</sup> 4-5, с. 200-212; подробнее см. Л. М. Варданян, С. Лисициан и истоки армянской этнографии..., с. 277-285

## ՇՈՒՇԻԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԸՍՏ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԵԳՐՔԻ»

«Կովկասյան տարեգրքի» համարները, հրատարակված երկրամասի փոխարքայի գրասենյակի կողմից 1849 թվականից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, հետաքրքրական մանրամասներ են պարունակում Կովկասի քաղաքների բնակչության տնտեսական զբաղմունքների, հասարակական կառուցվածքի, գավառական կառավարչության, պետական և զինվորական հաստատությունների մասին: Շուշի քաղաքին վերաբերող տեղեկություններ տարեգրքում առկա են առաջին համարից սկսած, որի 3-րդ բաժնի հատվածներից մեկում, նվիրված Անդրկովկասի քաղաքներին, ներկայացվում է Շուշիի պատմությունը և որոշ վիճակագրական տվյալներ. ծխերի քանակը՝ 2407, գործող 5 եկեղեցիների, 1 վանքի և 9 մզկիթների քանակը և այլն<sup>1</sup>:

Տարեգիրքն արդի հետազոտողին հնարավորություն է ընձեռում վերականգնել ռուսական կայսրության կազմում Շուշիի զարգացման հիմնական փուլերը, թեև քաղաքի պատմության որոշ կարևոր հարցեր, ինչպես օրինակ՝ 1905թ. ազգամիջյան բախումները, պետական այս հրատարակության էջերում գրեթե արձարծված չեն: Կան մի շարք այլ թերություններ և սահմանափակումներ՝ կապված վիճակագրական տվյալների անճշտությունների, հաճախակի կրկնությունների և միօրինակության հետ, ինչը վաղուց հայտնի է հետազոտողներին<sup>2</sup>: Դրա հետ մեկտեղ «Կովկասյան տարեգրքի» առավելություններից պետք է նշել այս հրատարակության շարունակականությունը, վարչական և այլ տեղեկատվության համակարգված շարադրանքը, որոնց մանրամասնության աստիճանը թույլ է տալիս

<sup>1</sup> *Кавказский календарь (КК) на 1850г. от канцелярии наместника Кавказского, Тифлис, 1849, Отд. 3-е, С. 96*

<sup>2</sup> *Տե՛ս, օրինակ, տարեգրքի վերջին համարներում Շուշիի բնակչության անհավաստյի բարձր թվերի մասին. Ն. Սարգսյան, Շուշի քաղաքի բնակչության էթնիկ կազմը և նրա շարժընթացը (XIX դ., -XX դ. սկիզբ): -1986-1988 թթ. ազգաբնակչության և բնագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքներին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Ե., 1990, էջ 56-57; Մ. Саркисян, *Из истории градостроительства Шуши, Ер., 1996, С. 29**

համեմատության մեջ դիտել կայսերական Կովկասի բնակչության կյանքի տարբեր հանգամանքներ և պայմաններ:

Հարավային Կովկասի հարակից ընդարձակ հատվածում Շուշին XIX դ. երկրորդ կեսի միակ քաղաքային կենտրոնն էր և տարաբնույթ տնտեսական և վարչական գործառույթներ էր իրականացնում Ելիզավետպոլի նահանգի ողջ հարավի նկատմամբ՝ հարյուրավոր գյուղական բնակավայրերով և ավելի քան 400.000 բնակչությամբ: Տարեգրքի առաջին իսկ համարներից պարզ է դառնում, որ նախորդ դարակեսի համեմատությամբ Շուշին ռուս-պարսկական սահմանին իր առաջատար ռազմական նշանակությունը զիջել էր Նախիջևան, Մալյան և Լենքորան ավելի փոքր քաղաքներին, փոխարենն ստանձնելով տնտեսական, վարչական և, ինչպես հայտնի է հատկապես այլ աղբյուրների հաղորդմամբ, կրոնական ու մշակութային գործառույթներ: Շուշիի ապառազմականացման մասին է վկայում այն փաստը, որ քաղաքում չկար ռազմական հոսպիտալ, միակ գործող կիսահոսպիտալը գտնվում էր Վանք գյուղում, որտեղ տեղակայված էր նաև Արաքսի սահմանի պարեկային բրիգադի շտաբը<sup>1</sup>: Ուշագրավ է, որ արդեն 1852 թ. տարեգիրքը որպես գորամասի համար մեծածախ գնումների վայր էր նշում նույն Վանք գյուղի և Խանքենդիի (ապագա Ստեփանակերտի) կիրակնօրյա շուկաները<sup>2</sup>:

Տարեգրքի տվյալները հատկապես կարևոր են Շուշիի տնտեսական կյանքի առանձնահատկությունները հասկանալու համար, քանի որ մինչ այժմ հստակ չէ, թե ինչպես որպես ամրոց և խանի ամառային նստավայր ձևավորված բնակավայրը ռուսական տիրապետության հաստատումով ձեռք բերեց առևտրական, արհեստագործական և արդյունաբերական կենտրոնի նկարագիր: Տարեգրքի արդեն առաջին համարը ներկայացնում է մի քանի ուշագրավ տեղեկություն, որոնք առաջին հերթին առնչվում են դարակեսին Շուշիում առևտրի վիճակին՝ կար 16 «գործարան», քաղաքի բյուջեի համալրումներից հիմնականը երկուսն էին՝ անասունների մորթի համար և իջևանատներից գանձվող գումարները (յուրաքանչյուր հողվա-

<sup>1</sup> *КК на 1901 г. Отд. 3-е, С. 48*

<sup>2</sup> *КК на 1852 г. Отд. 3-е, С. 186. Խանքենդում էր տեղակայված նաև տարածքը վերահսկող խոշորագույն գորամասի՝ Մինգրեղական եգերական գնդի կենտրոնակայանը՝ տե՛ս Կոնստանտինովիչի հոդվածը Շուշիի մասին նույն համար 430-435 էջերում*



ծով տարեկան 1200 ռ.)<sup>1</sup>: Տարեգրքի հաջորդ տարվա համարի հողվածագիրներից մեկը վերլուծում է Պարսկաստանի հետ առևտրական հարաբերությունների փոփոխված բնույթը, ընդ որում՝ նկատում է ինչպես պարսկական ապրանքի (հիմնականում բամբակ և մետաքսաթել) ներկրման ծավալների բազմապատիկ աճ (1832թ. 598 ռուբլու դիմաց 4 մլն ռուբլի 1849 թ.) այնպես էլ ներկրման գների նվազում, ինչը նպաստավոր պայմաններ էր ստեղծում Պարսկաստան-Ռուսաստան (Եվրոպա) առևտրի մեծագույն մասն իրականացնող հայազգի, այդ թվում՝ շուշեցի առևտրականների համար<sup>2</sup>: Շուշին դիրքեր էր ձեռք բերել այս առևտրում դեռևս 1750-ականներին քաղաք վերաբնակված ագուլեցի վաճառականների կապերի միջոցով: Առևտրի ծավալների մասին պատկերացում են տալիս տարեգրքի տեղեկությունները Խուդափերինի կամրջից հյուսիս գտնվող Ջեբրայիլի մաքսային անցակետի տարեկան շրջանառության մասին, որը 1878թ. (մուտք՝ 269.806 ռ., ելք՝ 105.299 ռ.) կայուն երկրորդ տեղն էր զբաղեցնում Պարսկաստանի հետ կարավանային առևտրում՝ զիջելով միայն Նախիջևանի հիմնական ուղղությամբ (Նախիջևանի և Շարուրի անցակետերի շրջանառությունը միասին կազմում էին մուտքը՝ 2.194.601 ռ., ելքը՝ 729.372)<sup>3</sup>: Կարելի է ենթադրել, որ հենց Պարսկաստանի հետ առևտրի բնույթը պայմանավորեց Արցախի նախալեռնային գոտում մետաքսի մշակության տարածումը, որպես սեփական հումքով Եվրոպա դուրս գալու նախաձեռնություն: Ինչպես հայտնի է, 1890-ականներից անդրկովկասյան երկաթուղու (սկզբում Բաքու-Թիֆլիս, այնուհետև՝ 1900-ական թթ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուղա հատվածների) գործարկմամբ Շուշին մեկուսացավ միջազգային առևտրի հիմնական ուղիներից<sup>4</sup>:

Քաղաքի տնտեսական նշանակությունը նպաստեց կրթության և մշակույթի հաստատությունների զարգացմանը, որոնց մասին նույնպես մանրամասնություններ կան տարեգրքի գրեթե բոլոր համարներում: Անդրկովկասի կրթական մյուս հաստատությունների շարքում տարեգիրքը հիշատակում է նաև Շուշիի վարժարանների և դպրոցների ուսուցիչների անուն-

<sup>1</sup> Նույն տեղում՝ էջ 432

<sup>2</sup> *KK* № 1853 ր. Ը. 415-439

<sup>3</sup> *KK* № 1881 ր. Ը. 51

<sup>4</sup>Ռ. Տեր-Գասպարյան, **Շուշի քաղաքը**, Ե., 1993, էջ 59-64: Ըստ տարեգրքի՝ Շուշիում մետաքսի բրձնով գինն իջել է նվազագույնի 1908թ. 12-14ռ. փթի դիմաց (*KK* № 1910 ր.)

ները, նրանց կողմից դասավանդվող առարկաների ցուցակը, ուսման վարձը և այլն: Այսպես՝ հայտնի է դառնում, որ 1894 թ. բացված Մարիամյան օրիորդաց ուսումնարանի ուսուցչուհիների մեծ մասը ռուսներ էին, իսկ Խանքենդիում 1897թ. այս ուսումնարանը բացել էր նախապատրաստական դասարան 9 սաների համար<sup>1</sup>:

Տարեգրքի աղբյուրագիտական նշանակությունը Շուշիի, ինչպես նաև Անդրկովկասի մյուս քաղաքների հասարակական կյանքի ուսումնասիրության առումով կարևորվում է դրա շարունակական համարներում հարյուրավոր անձնանունների և հասցեների հիշատակումը: Այստեղ ներկայացված են Շուշիի կայսերական հաստատությունների պետական ծառայողների անունները, որոնց կրողներից շատերը Շուշիի հայտնի հայ և մահմեդական ընտանիքների ներկայացուցիչներ են: Ակնհայտ է դառնում, թե ինչպես քաղաքային և գավառական վարչության առանձին պաշտոններ փաստացի ամրագրվում են հայկական համայնքի ներկայացուցիչներին: Վերջինների կազմում գերակշռում են հայ ազնվականական (մելիքական) և քաղքենիական-առևտրական դասերին պատկանող ընտանիքների անդամները: Նման աղբյուրի գոյությունը հատկապես կարևոր է մեր օրերում, երբ Շուշի վերադարձած հայ բնակչությունը շարունակում է քաղաքի բազմաշերտ պատմության վերակառուցման՝ դեռևս 1990-ականների սկզբին վերսկսած գործը: Տարեգրքի էջերից հայտնի հարյուրավոր շուշեցի հայերի մասին թեկուզ խիստ համառոտ տեղեկությունները կարող են համապատասխան աշխատանքի դեպքում լրացնել այլ աղբյուրներից, այդ թվում՝ Շուշիի հայկական ընդարձակ գերեզմանատներից հայտնաբերված վիմագրերի կցկտուր տեղեկությունները քաղաքի բնակչության մասին<sup>2</sup>:

*«Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 330-334*

<sup>1</sup> *КК на 1901 г. Отд. 3-е, С. 358*

<sup>2</sup> Հարությունյան, **Շուշի**, նորահայտ նյութեր քաղաքի պատմության մասին, Սեփանակերտ, 2002

**ԴԱՐԲՆԻ ԾԻՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ  
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ  
ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (XIX-XX ԴԴ.)**

Արցախի մի շարք գյուղերում մինչև XX դարի սկիզբ պահպանվել էր Նավասարդի տոնակատարությունների հետ կապված մի հետաքրքիր ավանդույթ, որի գուգահեռները կարելի է հանդիպել Հայաստանի այլ գավառներում նույնպես: Ըստ այդմ, Նավասարդի նախօրեին գյուղացիները չար ուժերին քշելու և նոր տարի նրանց մուտքը կանխարգելելու նպատակով հնարավոր բոլոր միջոցներով աղմուկ են բարձրացրել: Այս արարողությունների մասն է կազմել նաև դարբնի կողմից դարբնոցում գնդանին հարվածներ հասցնելը: Մեկ այլ դեպքում նշվում է, որ դարբինները շաբաթ երեկոյան են կատարել գնդանին կռանահարման ծեսը: Հանդիպում է նաև կռանահարման ծեսը Ջատկի Ավագ հինգշաբթի գիշերը իրականացնելու տարբերակը: Հատկանշական է, որ Ջատկի Ավագ հինգշաբթի դարբնի կողմից իրականացվող ծիսական գործողությունների շարքում հանդիպում է նաև հղի հարսներին «ուրբաթարուր» մատանիներ պատրաստելու արարողությունը: Այդ մատանիները կրելու դեպքում հարսները պաշտպանվում էին չար ուժերից և չար աչքից:

Առաջին հայացքից ծիսական այս փոքրիկ դրվագը, որտեղ դարբինը կռանահարման միջոցով մասնակցում էր չար ուժերին քշելու արարողությանը, սերտ գուգահեռներ ունի ինչպես միջնադարյան պատմիչների կողմից նկարագրվող Արտավազդի շղթայման ծեսի հետ, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների գյուղերից գրանցված այն ծեսի հետ, որ դարբինը Ջատկի Ավագ հինգշաբթի նախօրեին մտնում էր դարբնոց, երեք խորհրդանշական հարված հասցնում գնդանին և դուրս գալիս, բացատրելով, որ դրանով ամրացնում է ժայռում գամված Արտավազդի շղթաները: Հիշեցնենք, որ նա այստեղ հանդես է գալիս որպես դրական հերոս, որը շղթայված է պահում աշխարհը փոխել (այսինքն գործող կարգը խափանել) ցանկացող Արտավազդին, որոշ տարբերակներում դիվահար Շիդարին: Հետաքրքիրն այստեղ այն է, որ դարբինները մի կողմից հանդես են գալիս,

որպես չար ուժերի հակառակորդներ, մյուս կողմից գոյություն ունեցող կարգի, կամ ավանդույթի (Արտավազդի դեպքում խոսքը վերաբերում է թաղման ավանդույթի դեմ բողոքելուն): Նմանատիպ հերոս է նաև ժայռում փակված Փոքր Մհերը: Հատկանշական է, որ Մհերի դուռը կոչվող վայրի հետ կապված պահպանվել է Դարբնաց քարի ավանդույթը, համաձայն որի դարբինները օր ու գիշեր կռիվ են մղում վիշապների ու աշխարհակործան չար ուժերի հետ: Այսինքն, կարելի է ենթադրել, որ դարբնի կողմից իրականացվող կոանահարման ծեսը կապված է հնի ու նորի, տիեզերապահական և տիեզերակործան ուժերի պայքարի մասին պատկերացումներին: Հատկապես, այդ պայքարն ուժեղանում է ժամանակային պարբերաշրջանների փոփոխման պատճառով առաջացող կրիտիկական ժամանակամիջոցներին: Դարբնի ծիսական կերպարում հստակ նկատվում են տիեզերապահական հերոսի հատկանիշներ: Մակայն հարց է ծագում, թե հատկապես ինչպիսի գծերով է օժտված ծիսական նման գործառույթ ստացող հերոսը:

XIX դարի վերջում և XX դարի սկզբներին Արցախում տարածում ունեին դարբնի կողմից պատրաստվող երկաթյա կամ պողպատյա իրերի հետ կապված որոշ հավատալիքներ, որոնք թույլ են տալիս ավելի լիարժեք դարձնել դարբնի ծիսական կերպարին վերաբերող մանրամասները: Մասնավորապես, դարբնի պատրաստած պողպատյա մեխերը կամ կայծքարի պողպատը՝ հրահանը համարվում էին չարխափան ինչպես չար ուժերից պաշտպանվելու, այնպես էլ հիվանդություններից ու վախից բուժվելու նպատակով: Այսպես, ինչպես բուժական, այնպես էլ չարխափան նպատակներով, բավական տարածված էր սուրբ ծառերի բներին մեխեր մեխելը: Հաճախ նույն նպատակով մեխ են մեխել նաև դռան շեմին, որը նույնպես չարի ու բարու պայքարի սահմանագծային տարածք է համարվել:

Մեկ այլ սովորության համաձայն, արգելվել է արևը մայր մտնելուց հետո երեխաներին լողացնել: Խիստ անհրաժեշտության դեպքում դա թույլ է տրվել՝ պայմանով, որ ջրի մեջ անպայման պողպատյա իր գցեն: Հաճախ այդ իրի դերում հանդես է եկել նաև կայծքարի պողպատը: Վերջինս նաև երեխաներին չար աչքից պահպանելու նպատակով յոթ գույնի թելերով կարել են նրա ձախ ուսին:

Այսինքն, հստակ նկատելի է մի ընդհանրություն, որը ցուցում է, որ դարբնի պատրաստած երկաթե կամ պողպատե առարկաները կրում են

չար ուժերին վնասագերծելու հատկանիշ: Հետաքրքիր է, որ պողպատի չարխափանության հատկությունը հաճախ բացատրել են պողպատի և կայծակի ընդհանրությամբ: Ի դեպ, այս հավատալիքը համահունչ է համահայկական և նույնիսկ հնդեվրոպական տարածում ունեցող այն հավատալիքի հետ, որ կայծակի ժամանակ երկնքից պողպատ է ընկնում: Արցախում, ըստ ավանդական պատկերացումների ընդունված է եղել նաև այն հավատալիքը, որ կայծակը դա հրեշտակների ձեռքի սուրն է, որով նրանք քշում են չար ուժերին: Այդ պատճառով էլ կայծակ խփած ամեն բան համարվում էր մաքրագործված: Այսինքն, կարելի է ասել, որ արցախյան ժողովրդական հավատալիքներում նկատվում են պողպատ-կայծակի, որպես սրբազան զենքի մասին ավանդական պատկերացումները: Ավելորդ չէ նշել, որ այս պատկերացման դրսևորմանն ենք հանդիպում նաև հայկական ժողովրդական էպոսի հերոսների զենքի՝ Թուր Կեծակիի անվանման մեջ:

Հատկանշական է, որ Արցախում տարածված է եղել նաև կայծակ խփած քարերի ու ծառերի պաշտամունքը:

Այսինքն, եթե ընդունենք, որ չարխափան համարվող պողպատե առարկաներ պատրաստողը դարբինն էր, որին փաստորեն նույնպես կարևոր տեղ էր տրվում Նոր տարվա կամ Զատիկի չարխափանության ծեսերում և նկատի ունենանք այն, որ ծիսա-առասպելական մտածողությունը նույնականացնում է պողպատն ու կայծակը, ապա կարելի է ասել, որ ծիսական մտածողության հարթությունում դարբինն վերագրվում են *պողպատ-կայծակ* սրբազան զենքին տիրապետող հերոսի հատկանիշներ:

Դարբնի մասնակցությամբ վերը բերված կռանահարության ծեսում, որը պատմական աղբյուրներում և Հայաստանի որոշ շրջանների ավանդույթներում բացատրվում է որպես Արտավազդի շղթայման ծես, կարելի է տեսնել ամպրոպի ու կայծակների միջոցով վիշապներին հալածող դարբին-ամպրոպամարտիկի կերպարի աղերսներ: Ի դեպ, ամպրոպամարտիկ դարբինը բավական տարածված կերպար էր ինչպես հնդեվրոպական, այնպես էլ հարևան կովկասյան ժողովուրդների առասպելներում և հատկապես դրա զուգահեռները հայոց ավանդական ծիսական կյանքում պետք է դիտել որպես բնականոն երևույթ:

Մյուս կողմից, ինչպես վերը նշեցինք, այս ծեսն ընդհանրություններ ունի նաև համահայկական տարածում ունեցող Արտավազդի կամ Շիդարի շղթայման ծեսի հետ, քանի որ ծիսական գործողության առումով, (այսինքն կռանահարության) այս ծեսերը կրկնում են իրար: Մեկ այլ վերլուծությունում մենք հանգամանորեն ներկայացրել ենք վիշապ Արտավազդ-դարբին հակադրության իմաստաբանությունը և ցույց տվել, որ Արտավազդի շղթայման ծեսի հիմքում նույնպես ընկած է վիշապ Արտավազդին շղթայելու միջոցով աշխարհի կարգը կործանումից պահպանելուն ուղղված վիշապամարտի առասպելաբանական թեման, որում դարբինը կրում է վիշապամարտիկ հերոսի ծիսական գործառույթը:

Նկատի ունենալով վերը բերվածը՝ կարելի է ենթադրել, որ Արցախում դարբնի մասնակցությամբ նավասարդյան այս ծեսի ենթատեքստում նույնպես հանդիպում է հին և նոր ժամանակների փոփոխման միջոցին աշխարհի կարգը խափանել ցանկացող և նրա դեմ պայքարող ամպրոպամարտիկ-դարբնի պայքարի իմաստաբանությունը, որի ակունքները թաքնված են երկաթի մշակույթի վաղ շրջանի հետ կապված հնդեվրոպական վիշապամարտի առասպելույթի մետաղագործական առումի հետ:

Բերված վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախում նավասարդյան ծիսակարգում դարբնի կողմից իրականացվող կռանահարման չարխափան ծեսը սերտ զուգահեռներ ունի համահայկական տարածում գտած նմանտիպ մեկ այլ՝ նույնպես ծիսական կռանահարությամբ, դարբինների կողմից Արտավազդի շղթաների ամրացման ծեսի հետ և իմաստաբանորեն նրա հիմքում ընկած է հին ու նոր ժամանակների սահմանագծին ընթացող տիեզերակործան և տիեզերապահպան ուժերի պայքարը ներկայացնող վիշապամարտի թեման: Այսպիսով, բերված մասնավոր օրինակը և դրա վերլուծությունը ցույց են տալիս, որ արցախյան ժողովրդական հավատալիքները մասն են կազմում համահայկական հավատալիքների, և դրանցում արտահայտված տարբերակները սերտորեն կապված են հայկական այլ շրջանների տարբերակներին, ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարածամանակյա առումներով:

*«Լ.Ղ. Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով.  
Զեկուցումների հիմնադրույթներ. հունիսի 21-24, 2006թ.,  
Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 321-324*

## ՇՈՒՇԻԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ

### ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1916-1926 ԹԹ.

Առաջին աշխարհամարտը, 1917թ. ռուսական հեղափոխությունն ու դրան հաջորդած տարիները բեկումնային ժամանակաշրջան դարձան ցարական Ռուսաստանի տարածքում և մասնավորապես Անդրկովկասում բնակվող հայության համար: Անդրկովկասում ծայրահեղ սրվեց երկրամասի վարչատարածքային վերաբաժանման խնդիրը՝ ազգային-էթնիկական սկզբունքի հիման վրա: Ցարիզմի իրականացրած վարչատարածքային բաժանումն Անդրկովկասում չէր բխել ո՛չ էթնիկ, ո՛չ աշխարհագրական-տեղագրական և ո՛չ էլ տնտեսական նկատառումներից, ինչի արդյունքում էլ խնդիրը կարգավորելու փորձերը բախվում էին երկրամասի 3 տիտղոսակիր ազգությունների՝ հայերի, վրացիների և թաթարների հակադիր դիրքորոշմանը՝ բացառելով համաձայնության գալու որևէ հնարավորություն: Էթնիկ և տնտեսական առանցքի շուրջ Անդրկովկասի վարչական տարածքների սահմանների փոփոխության նախագծերն ու առաջարկները 1917-1918 թթ. լուրջ առարկությունների հիմք դարձան հայկական և շատ դրվագներում միասնաբար հանդես եկող վրաց-թաթարական կողմերի միջև:

1918թ. մայիսին՝ անդրկովկասյան հանրապետությունների հռչակումից հետո, Հայաստանի տարածքի անբաժան և պատմական մասը կազմող Ղարաբաղի հարցը դարձավ հայ-ադրբեջանական խնդիրների առանցքը: Ադրբեջանի նորաստեղծ պետության ձգտումները և հարուցած վեճերը ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Նախիջևանի ու Զանգեզուրի պատկանելիության շուրջ չունեք որևէ նախահիմք:

Շուշիի գավառի և ընդհանրապես Լեռնային Ղարաբաղի բնակչության մեջ հայերի՝ մեծամասնություն լինելու փաստը առարկության ենթակա լինել չի կարող: Ղարաբաղի բնակչության ազգային կազմի մասին հավաստի տեղեկություններ կարող ենք քաղել ցարական Ռուսաստանի վիճակագրությունից, ըստ որի 1916թ. Շուշի քաղաքի 43.869 բնակիչներից 23.396-ը հայեր էին, 1921-ը՝ մահմեդականներ (ըստ անգլ. տվյալների՝ 1909),

1249-ը՝ ռուսներ, մյուսները՝ վրացիներ, լեռնականներ, եվրոպացիներ: Քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը (53.33%):

Անդրկովկասի հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան բրիտանական արխիվներում: Համաձայն 1917թ. տվյալների՝ Ղարաբաղն ընդգրկում էր մոտ 13.850 քառ. կմ տարածք՝ Ղազախ, Ելիզավետպոլ, Շուշի, Ջևանշիր և Կարյազինո գավառների մի մասով և 255.000 հայ բնակչությամբ: Այս տարածքներում բնակվում էին 72.500 մահմեդականներ, իսկ հայերը կազմել են ամբողջ բնակչության 75.46%-ը<sup>1</sup>: Նույն թվականին տպագրված «Кавказский календарь»-ում հայ բնակչության վերաբերյալ տվյալներն ունեն հետևյալ տեսքը.

1. Ղազախում՝ 61000 հայ,
2. Ելիզավետպոլում՝ 52000 հայ,
3. Ջևանշիրում՝ 22000 հայ,
4. Շուշիում՝ 98000 հայ,
5. Կարյազինոյում՝ 22000 հայ<sup>2</sup>:

Ցարական Ռուսաստանի վիճակագրության մեջ Ղարաբաղին վերաբերող տվյալները ամբողջովին չեն ներառել երկրամասի մի շարք պատմական մասեր (Գյուլիստան, Վարանդա, Խաչեն, Դիզակ, Ջրաբերդ), իսկ այդ պատճառով դժվար է պատկերացում կազմել բնակչության ամբողջական թվի մասին: Արցախահայության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են պարունակում Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի տվյալները (1914թ. Ղարաբաղի Հայոց թեմն իր մեջ ընդգրկում էր 206.768 լուսավորչական հայ)<sup>3</sup>: Ղարաբաղի հայ բնակչության մասին առավել հավաստի տվյալներ, ըստ որոշ ուսումնասիրողների, պարունակում են Թիֆլիսում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությանը տրամադրված հայկական տվյալները, որոնք վերաբերում են 1917 թվականին, և ուր ներկայացված է հայ բնակչությունն ըստ գյուղերի<sup>4</sup>: Ըստ վերոհիշյալ տվյալների՝ Ղարաբաղի լեռնային մասի բնակչությունը կազմել է մոտ 240.000 մարդ, ընդ որում հայերը մեծամասնություն են կազմել Ելիզավետ-

<sup>1</sup> Armenia, Political and Ethnic Boundaries 1878-1948, London, 1998, p. 477

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 479, Кавказский календарь на 1916 г., Тифлис, 1917, с. 194-195

<sup>3</sup>Վ. Բալայան, *Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը*, Ե., 2002, էջ 293

<sup>4</sup>Ս. Ղարիբյան, *Արցախի բնակչության ազգային կազմի շուրջ* (ըստ 1917 թ. տվյալների), *Արևելագիտական ժողովածու*, հ. 4, Ե., 2004, էջ 104-109



պուլի, Ջևանշիրի, Շուշիի, Կարյազինոյի շրջաններում, ուր նրանց թիվը 194 հազար էր: Նույն տվյալների համաձայն՝ Շուշի քաղաքի հայ բնակչությունը կազմել է 21.151 մարդ:

1918թ. ընթացքում Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ ցեղասպան քաղաքականությունը շարունակեց թուրքական զորահրամանատարությունը՝ կոտորածներ կազմակերպելով մասնավորապես Ելիզավետպուլի նահանգի հայության շրջանում, ապա նաև սեպտեմբերին ջարդի ենթարկելով Բաքվի հայությանը: Թուրք-ադրբեջանական հայաջինջ քաղաքականության գազաթնակետը հանդիսացավ Շուշիի հայության կոտորածը 1920թ. մարտի 10-23-ը, որի արդյունքում Շուշին հայաթափվեց:

1920-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ թվական և այլ տվյալներ արձանագրվել են 1923թ. ԽՍՀՄ մարդահամարով: Այսպես, 1923թ. մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության թիվը կազմում էր 77.002 մարդ: Անշուշտ, Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչության գերակշիռ մասը բնակվում էր հենց Բաքվում, որի վերաբերյալ վիճակագրական տվյալներն ավելի ամփոփ են հաջորդ մարդահամարների ժամանակ: Ավելի ընդգրկուն վիճակագրական արդյունքներ են վեր հանված 1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ Համամիութենական առաջին մարդահամարով: Այս մարդահամարով վերջնականապես ճշգրտվում են 1920-ական թթ. Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը, տեղաբաշխումն ու այլ գործընթացներ, ուր ընդգրկված էր թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչությունը:

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում՝ ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի  
մարդահամարի

	ամբողջը	արա- կան	իզական	Մայրենի լեզու				գրա- գետ	գրագե- տ ազգ- լեզվ.
				հայ	ռուս	ճիւղ թուրք	լիւ		
Ադրբեջա- նական ԽՍՀ <sup>1</sup> , որից՝	282.004	144.877	137.127	276.223	4039	239	1503	93.739	84.312
1.ԼՂԻՄ	111.694	56.225	55.469	111.624	55	8	7	25.792	25.703
2.Նախիջևա նի ԻԽՍՀ	11.276	5643	5633	11223	16	15	22	3757	3705
3. ք. Բաքու	76.656	36.904	36.752	72.569	3806	37	244	40.408	32.318
4.ք. Գանձակ	16.148	8.218	7.930	15.930	83	11	124	7067	6721

Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը 1926թ. մարդահամարով կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության 12,4%-ը: Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչությունը կազմում էր 103.280 մարդ: Բաքվում (արդյունաբերական-գործարանային շրջանի հետ) էր կենտրոնացած ադրբեջանահայության 27,1%-ը, իսկ Գանձակում՝ 5,7%-ը: Բաքվի գավառում (առանց Բաքու քաղաքի) ևս մեծաթիվ հայ ազգաբնակչություն կար, որոնց թիվը հասնում էր 7541 մարդու: Գյուղական շրջաններում բնակվում էր ընդամենը 429 հայ: Գավառի հայ ազգաբնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր արդյունագործական գործարանային շրջանում (7112 մարդ): Արդյունագործական գործարանային շրջանում բնակվող հայությունը կենտրոնացած էր Լենին-Սուրխաթական շրջանում՝ 4792 մարդ, Բիբի Էյբաթում՝ 1928 մարդ, Բինիգադում՝ 392 մարդ:<sup>2</sup>

Բավականին բարձր էր ադրբեջանահայության մեջ հայերենին տիրապետողների թիվը, որոնք այն համարում էին իրենց մայրենի լեզուն, նրանց տոկոսային կշիռը կազմում էր 97,9%-ը, իսկ 1,4%-ի համար մայրենի լեզուն

<sup>1</sup>Всесоюзная Перепись населения 1926 года, т. XIV. Закавказская Социалистическая Федеративная Советская Республика. Азербайджанская ССР. М., 1929, с. 12

<sup>2</sup>Итоги всесоюзной Переписи населения 1926 года по г. Баку и Промышленно-Заводскому Району, т. 1, Издание Баксовета, 1929, с. 42

ռուսերենն էր: Գրագետ էր հանրապետությունում բնակվող հայության 33,2%-ը: Ադրբեջանական ԽՍՀ հայության գերակշիռ մասը՝ 63,4%-ը, գյուղաբնակ էր և ցրված հանրապետության բոլոր գավառներում անխտիր: Առանձին դիտարկենք ԼՂԻՄ-ը և ԼՂԻՄ-ի մեջ չմտած, բայց պատմական Արցախի լեռնային կամ դաշտային մաս կազմող գավառների հայ բնակչությանը վերաբերող տվյալները ևս: Այսպես.

1. Գանձակի (առանց քաղաքի) գավառի հայ ազգաբնակչությունն իր թվաքանակով ամենամեծն էր Ադրբեջանական ԽՍՀ գավառների մեջ, ուր բնակվում էր 41.861 հայ, որոնցից 40.895-ը գյուղաբնակներն էին: Գավառի մյուս 2 քաղաքները՝ Ելենենդորֆն ու Շամխորը, նույնպես հայաբնակ էին, ընդ որում նրանց հայ բնակչությունը մի քանի անգամ գերազանցում էր տեղի թուրք (ադրբեջանցի) ազգաբնակչության թիվը: Գավառի գյուղական շրջաններից (Դայրա) Աղջաքենդիում (8.975 հայ կամ 91,8%), Բանանցում (Բայանում՝ 12.409 հայ կամ 99,7%), Սլավյանովկայում (8396 հայ կամ 75,5%), Չայքենդում (6413 հայ կամ 76,5%) հայ ազգաբնակչությունը գերակշռում էր իր թվաքանակով, զգալի թիվ էր կազմում Ելենենդորֆում՝ 3017 մարդ կամ շրջանի բնակչության 43,4%-ը: Գանձակի գավառի մյուս գյուղական շրջաններում ևս առկա էր հայ ազգաբնակչություն, որոնց թիվը մի քանի տասնյակից մի քանի հարյուր մարդ էր կազմում:

2. Ղազախի գավառի հայ ազգաբնակչության թիվը 3632 մարդ էր, որոնցից 2020-ը բնակվում էր Ձևգամի գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի քաղաքային բնակավայրերը՝ Ղազախում՝ 414 հայ, Թովուզում՝ 404 հայ, Աղստևում (Աղստաֆա)՝ 171 հայ:

3. Աղդամի գավառում բնակվող 2525 հայից 1917 մարդ բնակվում էր Թարթառ (Տերտեր) քաղաքում և համանուն շրջանի գյուղական վայրերում: Հայաբնակ էին նաև Եվլախ, Աղդամ քաղաքներն ու Բարդայի գյուղական շրջանը (250 հայ):

4. Ջեբրայիլի գավառի 625 հայ բնակիչների կեսից ավելին՝ 383 մարդ, բնակվում էր Կարյազիտ (Սարդար) քաղաքում և համանուն գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի Հորադիզ, Ջեբրայիլ, Չանգելան և Խանլիխ գյուղական շրջանները:

5. Քուրդիստան գավառի 373 հայ բնակիչների հիմնական մասը բնակվում էր Մուրադխանլի և Ղուբաթլու գյուղական շրջաններում, իսկ Լաչինում հայերի թիվը 66 մարդ էր (քաղաքի բնակչությունը 435 մարդ էր):

### **Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ)**

1923թ. կազմավորված ԼՂԻՄ-ն ուներ 2 քաղաք և 5 գյուղական շրջաններ, ընդամենը 125.159 բնակիչներով, որոնց 89,2%-ը (111.694 մարդ) հայեր էին, 10%-ը՝ թուրքեր (12.592 մարդ): ԼՂԻՄ քաղաքներում բնակվում էին 2817 հայեր, որից Ստեփանակերտում՝ 2724, իսկ Շուշիում՝ ընդամենը 93 հայ: Ղարաբաղի և Հարավային Կովկասի խոշոր հայկական կենտրոն Շուշիում Ադրբեջանի մուսավաթական կառավարության իրականացրած ջարդերի և հայաթափության արդյունքում վերացվել էր քաղաքի գերակշիռ մասը կազմող հայ բնակչությունը, իսկ Շուշիի շրջանի գյուղերում ևս իրավիճակը նույնն էր. ամբողջ շրջանում բնակվում էին ընդամենը 8 հայեր: Շուշի քաղաքն ու համանուն շրջանը բնակեցված էր 9220 թուրքերով (ԼՂԻՄ թուրք բնակչության 73,2%-ը), որոնք արհեստականորեն ձևավորված ադրբեջանական Քուրդիստանի հետ մեկտեղ նպատակ ունեին թուլացնել Ղարաբաղի կապը հայկական ԽՍՀ-ի հետ: Լեռնային Ղարաբաղի ԻՄ գյուղական շրջաններում բնակվում էին 108.877 հայ և ընդամենը 7349 թուրք բնակիչներ: Այսպես.

1. Վարանդայի շրջ.՝ 28.190 հայ, 650 թուրք,
2. Ջրաբերդի շրջ.՝ 29.292 հայ, 1914 թուրք,
3. Խաչենի շրջ.՝ 26.702 հայ, 22 թուրք,
4. Դիզակի շրջ.՝ 24.685 հայ, 443 թուրք,
5. Շուշիի շրջ.՝ 8 հայ, 4320 թուրք:

Լեռնային Ղարաբաղի ԻՄ հայ ազգաբնակչության 99,9%-ի համար մայրենի լեզու էր ազգային լեզուն՝ հայերենը: Գրագետ էր ԼՂԻՄ հայ բնակչության 23%-ը:

### **Նախիջևանի ԻԽՍՀ**

Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ գտնվող Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էր 11.276 հայ: 1926թ. Նախիջևանի ԻԽՍՀ-ն ուներ 3 քաղաք, բաժանված էր 8 գյուղական շրջանների, որոնցում անխտիր առկա էր հայ

ազգաբնակչություն: Նախիջևան քաղաքում բնակվում էր 1065 հայ, որը կազմում էր քաղաքի բնակչության 10,3%-ը, իսկ Օրդուբադում՝ 77 հայ: Ջուղա (Ջուլֆա) քաղաքի հայ ազգաբնակչությունը (293 մարդ) իր թվաքանակով գերազանցում էր տեղի թուրք բնակչությանը: Նախիջևանի ԻԽՍՀ Փառակա գյուղական շրջանում հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 2789 մարդու և կազմում էր ամբողջ շրջանի բնակչության 60,8%-ը: Հայ բնակչության թվաքանակով երկրորդը Նարիմանովկայի շրջանն էր, ուր բնակվում էին 2004 հայեր, ապա Տումբուլի շրջանը՝ 1529 հայով: Կիլրախի գյուղական շրջանում բնակվում էին 1079 հայեր, Ապրակունիսում՝ 876, Ջուղայում՝ 848, Բաշ-Նորաշենում՝ 455 և Օրդուբադում 261: Նախիջևանի ԻԽՍՀ գյուղական շրջանների հայության ընդհանուր թիվը 9841 մարդ էր, իսկ քաղաքային բնակչության թիվը՝ 1435: Նախիջևանի ԻԽՍՀ հայ բնակչության 99,5%-ի համար հայերենը մայրենի լեզու էր:

1930-ական թվականներին Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը շարունակական աճ է դրսևորել, ինչն ակնհայտ երևում է 1939թ. Համամիութենական մարդահամարով վեր հանված վիճակագրական տվյալներից:

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում՝ ըստ 1939 թ. մարդահամարի

	ամբողջը	բնակչության մեջ %-ներով	քաղաքաբնակ	գյուղաբնակ
Ադրբեջանական ԽՍՀ <sup>1</sup> որից՝	388.025	12.1	171.101	216.924
1.ԼՂԻՄ	132.800	88	10.555	122.245
2.Նախիջևանի ԻԽՍՀ	13.350	10.5	3016	10.334
3. ք. Բաքու	118.703	14.7	118.703	-

Արդեն 1939թ. մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության տոկոսային կշիռն աճել էր և կազմում էր 44%: Միայն Բաքու քաղաքում բնակվում էր ադրբեջանահայության 30,5%-ը: Քաղաքային հայ բնակչության շրջանում աճ է առկա թե՛ ԼՂԻՄ-ում, թե՛ Նախիջևանի

<sup>1</sup> *Всесоюзная Перепись населения 1939 год, Основные итоги, с. 71.*

ԻԽՄՀ-ում: 1926 թ. արդյունքների համեմատ՝ 21,3%-ով (38.200 մարդով) աճել է նաև գյուղական հայ բնակչության թիվը: ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության թիվը աճել էր 18,8%-ով (21.106 մարդով), որն այնքան էլ բարձր ցուցանիշ չէր, եթե նկատի ենք առնում, որ Բաքվի հայության թիվը նույն ժամանակահատվածում աճել էր 42.047 մարդով (54,8%-ով): Բաքվի հայ ազգաբնակչության թվի կտրուկ աճը մեծ մասամբ պայմանավորված էր գյուղական շրջաններից հայության արտահոսքով:

Այսպիսով, Ադրբեջանական ԽՄՀ-ին նվիրաբերված մի շարք հայկական և հայաբնակ գավառներ (Ղարաբաղ, Նախիջևան) և նրանց բնակչությունը հայկական էին, որոնք, դառնալով քաղաքական, կուսակցական պետական շահերի գոհ, բռնակցվել և հայտնվել էին ՀԽՄՀ հարևան հանրապետության կազմում: Դեռևս ցարական Ռուսաստանի կազմում գտնված ժամանակ Անդրկովկասի խոշոր տնտեսական և քաղաքական կենտրոններում հայ ազգաբնակչությունը գերակշռում էր ոչ միայն իր թվաքանակով, այլև զբաղեցնում էր ամուր դիրքեր քաղաքական, տնտեսական, առևտրական, կրթական-գիտական և այլ ոլորտներում: Պատահական չէ, որ անգամ մուսավաթականների՝ 1918թ. Բաքվում իրականացրած հայկական ահավոր սպանդից հետո տեղի հայ բնակչությունը դեռևս 1920-ական թվականներին իր թվաքանակով գերազանցում էր Երևանի հայությանը:

Այսպիսով, ընդամենը 10 տարվա ընթացքում՝ 1916-1926 թթ., փոփոխվեց հայկական պատմական Արցախ երկրամասի թե՛ բնակչության էթնիկ կազմի տեսակարար կշիռը, թե՛ սահմանները: Այդպիսին էր երկրամասի հայ մեծամասնության նկատմամբ վարած ադրբեջանական քաղաքականության արդյունքները: Պատմական Արցախ երկրամասի լեռնային և ցածրադիր կամ դաշտային շրջաններում միասին 1926 թ. դեկտ. 17-ի մարդահամարով բնակվում էր 176.458 հայ (Ադրբ. ԽՄՀ-ում՝ 282.004 հայ):

ա. 1916թ. համեմատ Ղարաբաղի հայության թվաքանակը մեկ տասնամյակ անց նվազել է մոտ 80.000-ով (համեմատելով 1917թ. անգլ. տվյալների հետ՝ 78.542 մարդով):

բ. Ղարաբաղի հայության ընդհանուր թվի նվազմանը զուգընթաց՝ ամբողջությամբ հայաթափվեց Շուշի քաղաքը և շրջանը, ավելին՝ այն բնակեցվեց մահմեդական բնակչությամբ:

գ.1916-1926 թթ. դարձան այն բեկումնային ժամանակաշրջանը, երբ հայաթափվեցին Շուշին, գանձակը և բազմաթիվ այլ հայկական բնակավայրեր, սեպ խրվեց մայր հայաստանի և Արցախի միջև արհեստաձին Կարմիր Քուրդիստանի միջոցով:

դ. Ադրբեջանի կառավարող շրջանակների նպատակաուղղված հակահայ գործելակերպի արդյունքում Ղարաբաղից հայության արտահոսքը շարունակվեց նաև հետագա տարիներին:

*«Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 115-124*

## ՇՈՒՇԻԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Ասեղնագործական դպրոցը Արցախում հնագույն պատմություն ունի: Միջնադարյան հայ պատմագրության մեջ ասեղնագործության մասին առաջին ամբողջական տեղեկությունը վերաբերում է Արցախ աշխարհին: Կիրակոս Գանձակեցին հիացմունքով է պատմում Հաթերքի իշխանուհի Արզու խաթունի և նրա դուստրերի ձեռքի աշխատանքների մասին՝ որակելով դրանք որպես. «...իմաստութիւն ուստայնանկութեան եւ հանճար նկարակերտութեան»: Գետքի եկեղեցու համար նրանց պատրաստած վարագույրը պատմիչը նկարագրում է այսպես. «Զարմանալի տեսողաց, ի մագոյ այծիցն կակղագունից, ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակակերպ եւ նկարեալ պատկերօք, ճշտագոյն հանուածովք, տնօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսնողան»<sup>1</sup>: Գանձակեցին հիշատակում է մեկ այլ իշխանուհու՝ Ներքին Խաչենի տեր Վախթանկի տիկնոջ՝ Խորիշահի մասին ևս, որը, ամուսնու մահից հետո, 1216-ին «...չոգաւ յԵրուսաղեմ երկրորդ անգամ, բոլոր ունեցածը կարօտելոց բաշխեց, և ինք իւր ձեռագործով ապրեցաւ միշտ...»<sup>2</sup>:

Հայ ազնվական տիկնանց բնորոշ գեղարվեստի ավանդույթները մինչև XIX դ. պահպանվեցին Արցախի մելիքական դասի կանանց շնորհիվ, որոնց մասին Ե. Լալայանը գրում է. «Սրանք (*մելիքների կանայք-Կ.Բ.*) մի քանի աղախին և ծծմայր ունեին և տան կառավարությամբ չէին զբաղվում, միայն մետաքսից թեշիկով թել էին մանում, ասեղնագործում, քսակ և այլ ձեռագործեր շինում»<sup>3</sup>: Մելիքական դասի կանանց ձեռագործերը մեծ մասամբ կատարվում էին ոսկեթելով, փայլուններով, մարգարտանման ուլունքներով՝ թանկարժեք կտորների վրա: Սրանք հաճախ ունենում էին անվանատառեր և վենզելներ, որոնք ներկայացնում էին նրանց ազնվականական ծագումը:

Ասեղնագործության՝ որպես արցախցի կանանց սիրված զբաղմունքի մասին են վկայում բարբառում պահպանված մի քանի հատկանշական

<sup>1</sup>Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի*, Ե., 1961, էջ 215-216

<sup>2</sup>Նույն տեղում

<sup>3</sup>Ե. Լալայան, *Գանձակի գավառ, Երկեր*, հ. 2, Ե, 1988, էջ 249



բառեր, որոնք ներկայացրել են Սահակ վարդապետ Ամատունին և Հ. Աճառյանը: Իրենց բառարաններում նրանք ներկայացրել են Ղարաբաղում գործածվող *անույի* (որ բացատրվում է՝ ասեղնագործ, ասեղով գործած), *ասղակար* (ասեղով գործած, ձեռագործ), *ծաղկավոր* (վրան ծաղիկներ բանած կամ նախշած) բառերը: Հատկանշական է, որ Աճառյանը որպես ղարաբաղյան երևույթ է ներկայացնում նաև Արևելյան Հայաստանում XIX դ. լայն տարածում ունեցող այն սովորույթը, որի համաձայն «Ավագ ուրբաթ առաւօտ՝ լուսածագին 7 հատիկ կար ասեղով կը կարեն իրարու զգեստի վրայ, իբրև չարէ պահպանուելու միջոց», և որը հայտնի էր *ուրբաթարօր*, կամ *ուրբաթառու* և այլ անվանումներով<sup>1</sup>:

Հայկական ձեռնարվեստի հմուտ գիտակ Ս. Դավթյանն իր «Հայկական ասեղնագործություն» աշխատության մեջ Արցախի ասեղնագործությունը միացնում է Սյունիքին և շատ քիչ է անդրադառնում դրան<sup>2</sup>: Ընդունելով դրանց ընդհանրությունը՝ միաժամանակ անհրաժեշտ ենք համարում խոսել զուտ արցախյան և հատկապես Շուշիի քաղաքային ձեռնարվեստի առանձնահատկությունների մասին, ինչին էլ ուղղված է սույն աշխատանքը: Ցավոք մեր ձեռքի տակ չունենք դաշտային ազգագրական նյութեր, որոնք հնարավորություն կտային առավել մանրամասն վերլուծություններ կատարել, ուստի կփորձենք այն ներկայացնել գրականության մեջ սփռված փոքրաթիվ տեղեկությունների և թանգարանային հավաքածուների օգնությամբ:

Արցախում ասեղնագործական արվեստի զարգացումն ու լայն տարածումը XIX դ. վերջերին կապված է Շուշիի՝ որպես քաղաքի ձևավորման հետ: Շուշիում, որը շատ կարճ ժամանակում դարձավ Արևելյան Հայաստանի ամենահայտնի «ամառանոցային» քաղաքը, մեծ էր ծագումով արցախցի թիֆլիսաբնակների մշակութային ազդեցությունը: Ինչպես վկայում է Մտ. Լիսիցյանը. «...երկհարկանի, երբեմն նաև՝ եռահարկ քաղաքատիպ տները, հովեկների զգեստները, ...ինչպես նաև՝ գեղարվեստական ճաշակն ու զվարճալի ժամանցները չէին կարող չհեղափոխել ոչ միայն «բերդի», այլ նաև շրջակա մոտիկ գյուղերի արտաքին կեցվածքն ու

<sup>1</sup>Սահակ վրդ. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912: Հ. Աճառյան, *Հայերեն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913

<sup>2</sup>Ս. Դավթյան, *Հայկական ասեղնագործություն*, Ե., 1972

կենցաղը»<sup>1</sup>: Այդպիսով, XIX դ. վերջից քաղաքային նոր տիպի բնակարանների ներսույթը, ի տարբերություն ավանդական-գյուղականի, առաջ բերեց ասեղնագործ և ժանյակե զանազան իրերի պահանջ՝ որպես ժամանակի նորաձևության արտահայտություն: Բնակարան մուտք գործած եվրոպական տիպի կահույքի հետ սենյակների գեղագարդմանն էին ուղղված բազմաթիվ ծածկոցներն ու տակդիրները, վարագույրներն ու սփռոցները, բարձերն ու թիկնաբարձերը և շատ ու շատ այլ իրեր, որոնք արտահայտում էին նաև տանտիրուհու կամ ընտանիքի կանանց ու աղջիկների ճաշակը, վարպետությունն ու, որ պակաս կարևոր չէ, նաև սոցիալական դրությունը:

Շուշիի ասեղնագործության զարգացմանն ու լայն տարածմանը նպաստող գործոն էր նաև օժիտի ինստիտուտը, գործոնը, որն, ընդհանուր առմամբ, բնորոշ էր ողջ Հայաստանին: Հայոց մեջ հատուկ վերաբերմունք կար կանանց ձեռնարվեստի նկատմամբ. հայ կինը պարտավոր էր տիրապետել կարուձևին, հյուսելուն, ասեղնագործելուն, քանի որ «Կնոջ գործն է գլխավորապես տնային հիմնական առարկաների և առօրեայ սպառող պիտոյքների պատրաստությունը»<sup>2</sup>: Հայ կնոջ, աղջկա պատիվն էր սեփական ձեռքերով օժիտի պատրաստումը, ուստի դեռ մանուկ հասակից հայ օրիորդը սկսում էր սովորել ձեռագործի տարբեր տեսակներն ու դրանց նրբությունները: Գյուղերում աղջիկները վարպետության դասեր էին առնում կամ հարազատներից, կամ այլ հմուտ կանանցից: Քաղաքներում այդ բացը լրացվում էր դպրոցական կրթության միջոցով:

Շուշիում ասեղնագործության զարգացումը խթանեցին 1864 թ. քաղաքում բացված սբ. Մարիամ իգական և Ղարաբաղի թեմական դպրոցները: Այդ գործում ուշագրավ է շուշեցի Մարիամ Հախումյանի կատարած աշխատանքը, որի կազմած ծրագրով և գործադրած ջանքերի շնորհիվ բացվեց «Մուրբ տիրամայր Մարիամու» օրիորդաց դպրոցը, որտեղ հատուկ ուշադրություն էր դարձվում նաև աղջիկներին ձեռագործի դասավանդմանը: Ասեղնագործության ուսուցման բարձր մակարդակի վկայությունն է այն փաստը, որ հիշյալ ուսումնական հաստատությունների բյուջեի

<sup>1</sup>Մտ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը (*ազգագրական ակնարկ*), *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, պր. 12, Ե., 1981, էջ 30

<sup>2</sup>Ա. Թառանան, Հայ ժողովրդի արհեստագործությունը, *Ազգագրական հանդես*, գիրք 9, Թիֆլիս, 1898, էջ 50

համալրման աղբյուրներից մեկը սովորողների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառքից հավաքված գումարն էր: Այս մասին մանրամասն և խիստ արժեքավոր տեղեկություններ են տալիս «Տարագ» ամսագիրը<sup>1</sup> և «Գործ» հանդեսը<sup>2</sup>: Հանդեսում մասնավորապես ներկայացվել են օրիորդաց դպրոցի հաջողությունները, որ 1880-1881 թթ. աշակերտների թիվը հասել է 149-ի: «Գործն» անդրադարձել է ոչ միայն ուսուցման ձևերին ու մեթոդներին, ուսուցանվող առարկաներին, որոնց թվում հատուկ տեղ է գրավել «ձեռագործի արվեստը, որ ուսուցանում էր նրանց Ջառի Արզումանյանը», այլև աշակերտուհիներին խրախուսելու միջոցներին, որոնց թվում հիշատակության արժանի են «շնորհալի աղջիկների ձեռագործների ցուցահանդեսները», ինչպես նաև հատուկ մրցանակագրերի և վարժապետական կոչումների հանձնումը: Հանդեսում թվարկված են այն առաջադեմ աշակերտուհիների անունները, որոնք օրինակելի վարք են ցուցաբերել և հետագայում զբաղվել մանակավարժությամբ, դրանց թվում են Վարսենիկ Գյանջեցյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը, Կատարինե Դոլուխանյանը և ուրիշներ:

Շուշիում ասեղնագործության զարգացմանը նպաստում էր նաև տեղի կուսանոցը, որի միանձնուհիների ձեռքի աշխատանքներն իրենց կարատեսակներով և գեղարվեստական վարպետությամբ մեծապես ազդում էին շրջապատի վրա: Միանձնուհիները միաժամանակ ասեղնագործություն էին դասավանդում տներում, որի մասին վկայում է Լեոն<sup>3</sup>: Նրանց ջանքերով Շուշիի ասեղնագործ բանվածքներն աչքի են ընկնում բարձր որակով ու արտահայտչականությամբ:

Ինչպես Հայաստանի մյուս քաղաքների, այնպես էլ Շուշիի ասեղնագործական արվեստի աշխուժացումը նպաստեց նաև կանանց ուղորդված հանդեսների («Ծաղիկ կանանց հատուկ», Կ. Պոլիս, «Տարագ», Թիֆլիս և այլն), ինչպես նաև ասեղնագործ կանանց, աղջիկներին ու վարպետներին ուղղված ձեռնարկների տպագրությունը<sup>4</sup>, որոնցում առաջարկվող զարդանախշերն ու տառաձևերն օգտագործվում էին իրենց աշխատանքներում:

<sup>1</sup> Ղարաբաղի թեմական դպրոցի հաշիւը, Տարագ, Թիֆլիս, 1981, էջ 63

<sup>2</sup> Ավագյան Ա., Ղարաբաղի մամուլի պատմություն, Ե., 1989, էջ 96-97

<sup>3</sup> Լեոն, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Շուշի, 1914

<sup>4</sup> Ա. Բրիլյանչիկյան, Հայկական մոնոգրամներ և ծաղկագրեր ձեռագործի համար, Մ. Պետերբուրգ, 1892, Եղ. Պատկանեան, Հայկական նշանագրեր հարթակարի համար, Թիֆլիս, 1990, Տեսք ասեղնագործության, գծագրեց և վիմագրեց Մ. Ոսկինար, Տրապիզոն, 1907 և այլն

Այդ է պատճառը, որ հիշյալ ժամանակահատվածում քաղաքային ասեղնագործությունը հայկական բոլոր քաղաքներում մեծ ընդհանրություններ է դրսևորում:

Շուշիի ասեղնագործական դպրոցում առավել տարածում ունեցող կարատեսակներն էին հարթակարն իր տարատեսակներով (լիցք, համրովի), շղթայակարը, ցողունակարն ու թելքաշը: XX դ. սկզբներից գործածվում է նաև օղակար-պատկարը, որը օտար՝ եվրոպական նորաձևության արդյունք էր և նման էր մյուս քաղաքների նույնատիպ բանվածքներին: Ասեղնագործության համար կիրառվում էին հիմնականում մետաքսյա և բամբակյա բազմագույն և սպիտակ թելեր: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, համեմատաբար հարուստ խավի աշխատանքներում գերակշռում են թանկարժեք ոսկեթել-արծաթաթել, մետաքսաթել, ուլունքագարդ և այլ նյութերի կիրառմամբ հարուստ ասեղնագործությունները: Եթե մինչև XIX դ. վերջերը կիրառական էին տեղական արտադրության մետաքսաթելերը, որոնք պատրաստվում էին տնայնագործական եղանակներով և նույն ձևով էլ ներկվում, ապա XX դարից լայն տարածում ստացան պատրաստի, ներմուծված նոր տիպի թելեր՝ «իրիս», «գարոզ», «մուլինե» և այլն, որոնք մեծ քանակությամբ վաճառվում էին խանութներում: Զարդանախշերը գերազանցապես բուսական և կենդանական են:

Ինչպես արդեն նշվեց, Շուշիի ասեղնագործությունները գերազանցապես բնակարանի ներսույթը զարդարելուն ուղղված բազմազան իրեր են (ծածկոցներ, վարագույրներ, բարձեր, թիկնաբարձեր, սփռոցներ, սրբիչներ և այլն):

Շուշիի ասեղնագործության զարդահամալիրն աչքի է ընկնում բուսական զարդանախշերի գերակայությամբ, որոնք ներկայացված են ինչպես ոճավորված, այնպես էլ ճշգրիտ վերարտադրված: Հատկապես հետաքրքիր են ծիսական սրբիչների ասեղնագործ նախշերը, որոնք արված են համրովի հարթակարով և թելքաշի տարբեր եղանակներով ու զարդարված են երկրաչափականացված ծառերի շարքով, որոնց ճյուղերի վրա նստած են գույզ թռչուններ: Սրբիչների այս տեսակը բնորոշ է միայն Սյունիք-Արցախյան դպրոցին և իր մեջ կրում է հայկական ասեղնագործության հնագույն ավանդույթները:

Այլ խումբ են կազմում քաղաքային տիպի ասեղնագործությունները, որոնց զարդահամալիրներում, բացի զուտ արցախյան բնորոշ զարդանախշերից, լայնորեն ներկայացված են համահայկական նախշեր և հորինվածքներ, որոնք կարելի է հանդիպել նաև նույն ժամանակաշրջանի այլ քաղաքների ասեղնագործության մեջ: Դրանք իրենց վրա կրում են ռուսական, եվրոպական ազդեցություն, քանի որ արվում էին վերը հիշատակված հանդեսներում և ամսագրերում տպագրված նախշերի հիման վրա: Նման ասեղնագործությունների զարդանախշերը խիստ ռեալիստական են՝ սիրամարգ, աղավնի, ծիծեռնակ, որոնք հանդես են գալիս որպես հիմնական կերպար և ուղեկցվում են տարբեր առարկաների հետ (գավաթ, գիրք, նամակ և այլն):

Քաղաքային կենցաղում նոր երևույթ էին նաև զուտ դեկորատիվ բնույթ ունեցող սյուժետային ու դիմանկարային ասեղնագործությունները, որոնք գործածվում էին պատերը զարդարելու համար: Դրանք, որպես գեղանկարչական տիպի աշխատանքներ, ներկայացնում էին ինչպես ազգային նշանավոր դեմքերին (Վարդան Մամիկոնյան, Խրիմյան Հայրիկ), այնպես էլ ուղղակի որևէ արտարկտ հերոս կամ հերոսուհի, որոնք պատկերվում էին որոշակի միջավայրում:

*«Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 244-251*

## ՏՈՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Մինչև XX դ. սկզբները դարաբաղցիների ավանդական տոնածիսական համալիրն ուներ այն նույն կառուցվածքը, ինչպիսին՝ հայ էթնոսի մյուս բոլոր հատվածներինը:

Հայ էթնոսի այդ խմբի ավանդական կենցաղում առավել տարածված տոներն էին՝ **Նոր Տարին, Քրիստոսի Ծնունդը, Սուրբ Սարգիսը, Վարդանանցը, Տեառնընդառաջը (Դրոդոռունջ, Դողոռաջ, Դօնդօռունջ), Բարեկենդանը, Մեծ Պասը, Ծաղկազարդը (Զրգարդար, Զրրոզարթար, Զըրգարդար), Զատիկը, Համբարձումը, Վարդավառը (Վարդեվոր, Վրդեվոր, Վրրթեվօր, Վրրթեվուր), Սուրբ Աստվածածնի Վերափոխումը, Խաչվերացը** և մասնավորապես՝ **Նավասարդը**<sup>1</sup>:

Հայոց քրիստոնեական տոնացույցի հենքը կազմող հիշյալ տոները, ծագումնաբանորեն, ունեն հեթանոսական արմատներ, որոնք առանձնա-նում են տնտեսության, ընտանիքի և անձի բախտն ու ճակատագիրը կանխագուշակող հմայական բնույթի ծեսերով, սովորույթներով ու հավա-տալիքներով: Դրանցում հիմնականում արտացոլվել է երկրագործական-

<sup>1</sup> Ե. Լալայան, *Վարանդա*, ԱՀ, Թիֆլիս, 1898, գիրք 9, 1, էջ 338-349

Ե. Լալայան, *Գանձակի գավառ*, ԱՀ, Թիֆլիս, 1900, գիրք 2, էջ 232-382

Մտ. Լիսիցյան, *Լեռնային Ղարաբաղի հայերը* (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, 112, Երևան, 1981, էջ 67-73

Դադյան, *Զան-գիւլումներ. Վարանդայի բանավոր գրականությունից*, ԱՀ, Թիֆլիս, 1908, գիրք XVIII, էջ 25-32

Ս. Իսրայելյան, *Լեռնային Ղարաբաղի Փիրջամալ*, Նախիջևանիկ և Շուշի քաղաքի ազգագրական նյութեր, 1970, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս I և II (1 355- 356), 48

Գ. Գրիգորյան, *Ղարաբաղի ազգագրական նյութեր (գ. Մալանդարյան)*, 1970-1971, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 19, մասեր՝ I և II, տետրեր՝ I, II, III, IV

Ս. Վարդանյան, *Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Շուշիի շրջան, 1970 թ. հունիս-հուլիս*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, տետր 11 FF VII, էջ 6189

Բ. Ղազարյան, *Ղարաբաղ, Տարբեր ժամանակներ, 1973-ից սկսած*, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԲԲԱ, տետր 1

Մ. Բեգյան., *Լեռնային Ջազիր գյուղի ավանդական սովորություններ, արհեստներ և ծեսեր*, Երևան, 1985, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, մաս III, IV, 11/150

Ն. Ղազարյան, *Գանձակի գավառի (Շիզավետսյոյի) հայկական բնակավայրերը և պատմական ճարտարապետական հուշարձանները*. Գյուլումներ (Բարսում, Ջազիր, Խաչակապ), Երևան, 1984, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, 5/116, թղթ. 4: Նան՝ Գանձակի գավառ, Երևան, 1985 թ., 2/124, թղթ. 1

Թ. Հայրապետյան, *Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ*, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2004, 3, (167), էջ 217-227

ժողովրդական տոնացույցը<sup>1</sup>, որը՝ համահայկական համատեքստում, բնորոշ էր նաև դարաբաղցիների ավանդական տոնածխական համալիրին:

Տոների այս շարքում ուշագրավ է ավանդական Նավասարդի կենցաղավարումը, որն առավելություն ուներ հունվարյան Ամանորի (հունվարի 1) նկատմամբ: Վերջինս հիմնականում տարածված էր Ղարաբաղի քաղաքային բնակավայրերում: Թեպետ գյուղ ներթափանցող քաղաքային սովորույթները թուլացրել էին ավանդական Նավասարդը, սակայն վերջինիս փոխարեն դեռևս կենցաղ չէր մտել հունվարյան Նոր Տարին (հունվարի 1), որը, ի տարբերություն Շուշի քաղաքի՝ գյուղերում աննկատ էր անցնում<sup>2</sup>: Ղարաբաղում Նավասարդը նշվում էր ոչ թե օգոստոս ամսին, այլ՝ նոյեմբերին<sup>3</sup>, որը խորհրդանշում էր տնտեսական տարվա ավարտը\*:

Քաղաքային միջավայրը, որպես օրինաչափություն, հիմնային գործոն է՝ ավանդական ծեսերի ձևափոխման կամ համալրման տեսակետից: Այս առումով հատկանշական են այնպիսի նորույթային երևույթներ, ինչպիսիք

---

<sup>1</sup> Որոշ հետազոտողներ՝ այս տեսանկյունով տիպաբանորեն դասակարգելով քրիստոնեական տոնացույցի հենքը հանդիսացող ավանդույթային տոները, փորձել են դրանցում պահպանված մինչքրիստոնեական տարրերի միջոցով բացահայտել առանձին տոների կամ տոնախմբերի կապը տնտեսական գործունեության ավանդական փուլերի հետ (ցանքի նախապատրաստում, ցանք, խնամք, բերքահավաք և այլն): Այս առումով ուշագրավ է Վարդ Բդոյանի աշխատությունն (տե՛ս՝ Վ. Բդոյան, «Երկրագործական մշակույթը Հայաստանում», Երևան, 1972, էջ 433-501), որտեղ ավանդույթային տոները դասակարգվել են ըստ երկրագործական աշխատանքային փուլերի: Ավանդույթային տոները այստեղ ներկայացվել են հետևյալ դասակարգմամբ. 1. Տոներ, որոնք կապված են գարնանացանի նախապատրաստական աշխատանքների հետ (Նոր Տարի-Ամանոր, Քրիստոսի Ծնունդ-Ջրօրհներ, Սուրբ Սարգիս, Տեառնընդառաջ, Բարեկենդան, Մեծ Պաս, Ծաղկագարդ, Ջատիկ և Համբարձում): 2. Տոներ, որոնք կապված են դաշտերի խնամքի և բերքահավաքի հետ (Վարդավառ, Նավասարդ, Ս. Աստվածածին): Երկրագործական տոնացույցի գրեթե նմանատիպ տիպաբանություն է տվել նաև Ասյա Օդաբաշյանը (տե՛ս՝ Ա. Օդաբաշյան, Հայոց ժողովրդական հավատալիքները» (դոկտորական հայցման ատենախոսության սեղմագիր), Երևան, 1995, էջ 10-11)

<sup>2</sup> Ստ. Լիսիցյան, **եջվ. աշխ.**, էջ 67

<sup>3</sup> Անդ

\*Հայոց ավանդական այդ տոնը, ընդհուպ մինչև XX դ. սկզբները, ձևափոխումներով հանդերձ, Գանձակի և Վարանդայի բնակավայրերի հետ միասին առավելապես պահպանվել էին նաև Մյունիքում, Գողթնում և Պարսկահայքում, ուր Նավասարդի ժամկետները տատանվում էին ամռան վերջերից մինչև ուշ աշուն: Չնայած մասնակի առանձնահատկություններին, նավասարդյան ծիսաշարն ուներ ընդհանրական գծեր: Դրանք հիմնականում նշվում էին աշնանը՝ համընկնելով բերքահավաքին, քեզեկուրթին, նախրաթողին, և մինևույն դեպքում, իրենցից ներկայացնում էին գյուղատնտեսական աշխատանքային պայմանադրությունների յուրօրինակ ծիսական սահմանագիծ: Վերջինս հատկապես նկատվում էր Տավուշի և Արմավիրի գյուղական բնակավայրերում, ուր արդեն գրեթե մոռացվել էր Նավասարդի՝ տոն լինելու հանգամանքը

Նշենք նաև, որ դարաբաղցիների տոնածխական վարքագծային նմանությունները, մասնավորապես՝ Լոռու, Տավուշի, Մյունիքի ու Գողթնի հետ, հիմնականում պայմանավորված էր աշխարհագրական դիրքով և միգրացիոն ինտենսիվ գործընթացներով, որի արդյունքում ձևավորվեցին գրեթե նմանատիպ կենցաղամշակույթային համալիրներ

են՝ Նոր Տարվա առիթով շնորհավորական բացիկները կամ այցետոմսերը<sup>1</sup> և գատկական Ախատ-մատաղին՝ մասնակցության հրավիրատոմսային ձևերը<sup>2</sup>, որոնք եվրոպական ազդեցության արդյունք էին և աստիճանաբար տարածվում էին նաև Ղարաբաղի քաղաքատիպ բնակավայրերում:

Ուշագրավ էր նաև եվրոպական ծագում ունեցող **Ապրիլի 1-ի** կամ **խաբելու տոնի**<sup>3</sup> տարածվածությունը XIX դ. վերջերին՝ Գանձակ քաղաքում և շրջակա գյուղերում, որն այդ ժամանակի հայ իրականության մեջ եզակի երևույթ էր:

Առանձնահատուկ երևույթ էր նաև Վարդավառ տոնի ծիսահամալիրում **Համբարձման-վիճակի** և մասամբ՝ **Նուրինի** առկայությունը, չնայած դրանցից յուրաքանչյուրը կենցաղում դեռևս պահպանում էր ժամկետային և արարողակարգային ինքնուրույն դիմագիծը<sup>\*\*</sup>: Նշենք նաև, որ դարաբաղյան ծիսական **Նուրինը** («Գողի», «Ճուլի»), կատարում էր ինչպես անձրևաբեր, այնպես էլ վնասաբեր տեղումները կանխարգելող կամ անձրևախափան գործառույթ<sup>4</sup>:

Տարածված էին առանձին տոներին և սրբերին նվիրված ուխտագնացությունները: Ղարաբաղյան ուխտավայրերից մասնավորապես իրենց մասապականությամբ և հատուկ նշանակությամբ կարելի է առանձնացնել Շուշիի՝ **Քամու խաչը**<sup>5</sup>, Գանձակի՝ **Մկնատամի խաչը**<sup>6</sup>, **Ամարասը**, Նինգի՝

<sup>1</sup> Ե. Լալայան., *Գանձակի գավառ*, էջ 363

<sup>2</sup> Ե. Լալայան., *Վարանդա*, էջ 347

<sup>3</sup> Ե. Լալայան., *Գանձակի գավառ*, էջ 370

*\*\** Հայաստանում կային այլ բնակավայրեր ևս, ուր Վարդավառին գրեթե կրկնվում էին Համբարձման վիճակխաղերը: Տավուշում, Համշենում, Պոնտոսում և շատ այլ տեղերում, Վարդավառը ևս համարվում էր վիճակ բացելու օր, որը երբեմն ավելի հանդիսավորությամբ էր կատարվում, քան՝ Համբարձման տոնին: Հայաստանի առանձին գավառներում Վարդավառին նաև խարույկներ էին վառում, որոնց շուրջը կատարվող արարողությունները նման էին Տերընդեզի կրակավառության հանդիսություններին (տե՛ս՝ Բ. Թոռլաքյան, Ազգագրական նյութեր համալսարանի և պոնտահայերի սոցիալական հարաբերությունների մասին, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 6-րդ, 230, տետր 3/30, էջ 438: Նաև՝ Գ. Հալաջյան, *Դերսիսի ազգագրական նյութերը*, 1960, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 5, 399, 15 բ, էջ 1525)

<sup>4</sup> Բ. Ղազիյան, *նշվ. աշխ.*, էջ 73-74: Նաև՝ Ս. Վարդանյան, *նշվ. աշխ.*, էջ 6189: Նաև՝ Թ. Հայրապետյան, *նշվ. աշխ.*, էջ 220

<sup>5</sup> Այդ սրբավայրում զանգվածային ուխտագնացություններ էին կազմակերպվում մասնավորապես՝ Մեծ Պասի Չարսարանաց շաբաթի Ավագ Չորեքշաբթի (Չիք Չորեքշաբթի) օրը (տե՛ս՝ Ե. Լալայան, Վարանդա, էջ 345)

<sup>6</sup> «Ուխտավորները մտեր էին վառում, աղոթում և այդ սրբավայրի հողից ջրով մի փոքր շաղախելուց հետո քսում մկնատամ ունեցողների վերքերին, որ շուտ ապաքինվեն: Վերադարձի պահին քարեր էին գլորում կամ նետում, որպեսզի իրենց հիվանդություններն էլ այդ քարերի հետ հեռանան: Ուխտավայրերում գտնվող ծառերից շորեր էին կապում, որպեսզի հիվանդություններն այնտեղ



**Ս. Լուսավորիչը, Սարիբեկը, Սարուշենի՝ Ավետարանը<sup>1</sup>, Նախիջևանիկի՝ Նահատակը<sup>2</sup>, Պարկեսա-Պերքը<sup>3</sup>\*\*\*\* այլն:**

Ավանդական կենցաղում տոների մասնակիցները սոցիալական գրեթե բոլոր խավերն էին՝ իզական սեռի որոշակի գերակայությամբ: «Հայ կինը,- գրում է Լեոն,- ընտանեկան կյանքի մեջ ներկայացնում է ինչպես մի առանձին մարմին, որը պահպանում է նախնական սովորությունն երևա մենայն սրբությամբ և միշտ հարազատ է մնացել հայության լեզվին և բոլորովին պահպանել է հայ կնոջ պատմական առանձնահատկությունները՝ չենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցության: Այդ խոստովանում են տղամարդիկ: Եթե մեր ժամանակ մնացել է սիրտ, հոգի, բարեպաշտություն, դա միայն կանանց մեջ է,- ասում են նրանք: Մեզ հայտնի է, որ ուսման ազդեցությունն անգամ չի կարող ացել առայժմ իսկ հայ կնոջից նրա պապական սովորությունները, ուսում առածներն էլ ջերմեռանդ պաշտպան են նախապաշարմունքների»<sup>4</sup>:

Նույնիսկ խորհրդային շրջանում ազգային տոնի կամ ծեսի հիմնական կրողը՝ կինն էր (հատկապես՝ տարեց կինը), որը ավանդաբար դեռևս պահպանում էր ներընտանեկան տոնածիսական միջոցառումների գլխավոր կազմակերպչի կարգավիճակը:

Չնայած դարաբաղցիների ավանդական տոնածիսական համալիրում հիմնականում տարածված էին Հայ Առաքելական եկեղեցու կողմից հատուկ կանոնարկված քրիստոնեական տոները, սակայն կենցաղում նախընտրությունը տրվում էր առավել հնագույն՝ բնապաշտական հենքեր ունեցող ժողովրդական խաղային և զվարճալի բնույթի արարողություններին<sup>5</sup>:

---

*կապված մնան: Սրբավայրերից բերված հողը լուծում էին ջրի մեջ և խմեցնում աղջիկներին՝ շուտ ամուսնանալու ակնկալիքով» (տե՛ս՝ Ե. Լալայան, Գանձակի գավառ, էջ 368)*

<sup>1</sup> Ամարասը, Նինգի գյուղի Ս. Լուսավորիչը, Սարիբեկը և Սարուշենի Ավետարանը, մասնավորապես՝ Վարդավառյան գլխավոր ուխտավայրեր էին (տե՛ս՝ Ե. Լալայան, Վարանդա, էջ 348)

<sup>2</sup> Ս. Բարայեյան., **նշվ. աշխ.**, մաս II, էջ 30-33

<sup>3</sup> Անդ, էջ 169-170

\*\*\*\* Ժողովուրդը շատ խոր հավատ ուներ Նախիջևանիկի Սուրբ Նահատակի գործության նկատմամբ: Այդ իսկ պատճառով ուխտի էին գալիս նույնիսկ հեռավոր բնակավայր երից (մեծ մասամբ՝ ուղքով և ոտաբորիկ), որտեղ մատաղի ծեսերը և փահլանների ելույթները համատարած բնույթ ունեին: Պարկեսա-Պերք ուխտավայր այցելության գլխավոր նպատակը՝ այդ սրբի գործությամբ զավակ ունենալու հավատն էր

<sup>4</sup> Լեո, **Ուղեգրություններ**, Հուշեր, հ. 8, Երևան, 1985, էջ 16

<sup>5</sup> «Ինչպես հայկական մյուս մարզերում, այնպես էլ Լեոնային Ղարաբաղում հեթանոսական տոների ժառանգորդ քրիստոնեական տոները սերտորեն ձուլվել են հենց հեթանոսական ծեսերի հետ:

XX դ. սկզբներին, դարաբաղցիների կենցաղում ավանդական տոների կտրուկ անկումը գլխավորապես պայմանավորված էր խորհրդային համակարգի հակակրոնական ուղղվածությամբ<sup>1</sup>: Հայոց էթնիկ ինքնությունը արտացոլող էթնոմշակութային այդ կարևոր բաղադրիչի անկման գործընթացն առավել խորացավ, քանի որ նորաստեղծ քաղաքական համակարգը բոլոր պայմանները ստեղծել էր՝ այլէթնիկ և այլակրոն ընդգծված բնութագիր ունեցող ադրբեջանական պետական կառույցների կողմից բացահայտ ու քողարկված հակահայկական քաղաքականություն իրականացնելու համար: Դրա փաստացի վկայությունն էր՝ ադրբեջանական ազգային-կրոնական տոների ու ծեսերի նկատմամբ որոշակի հանդուրժողական քաղաքականությունը:

Արդյունքը եղավ այն, որ արդեն XX դ. վերջերին, տեղաբնիկ հայ էթնոսի շրջանում ազգային-ավանդական տոներն ամբողջությամբ տեղի տվեցին խորհրդային ապազգային տոնաձիսական միջոցառումներին: Դա մեծ չափով պայմանավորված էր սերունդների աթեիստական դաստիարակությամբ ստեղծված պայմաններում՝ սոցիալ-մասնագիտական առաջընթացի և խորհրդային պետական-քաղաքական կառույցներին ինտեգրվելու օբյեկտիվ իրողությամբ:

Պատմությունը ցույց տվեց, որ ադրբեջանական պետական կամ կիսապետական ենթակայության ոչ մի կառույց (լինի դա՝ խանական, ցարական, խորհրդային, մուսաֆաթական և այլն), օբյեկտիվորեն չի կարող ապահովել իր պատմական բնօրրանում բնակվող էթնոսի գոյապահպանումը, առավել ևս՝ ներդաշնակ զարգացումը: Դա հիմնականում պայմանավորված է՝ հազարամյա ավանդույթներ ունեցող հայ էթնոսի նկատմամբ ադրբեջանական պետական և ոչ պետական կառույցների մերժո-

---

*ժողովրդի գիտակցության մեջ վերջիններս հաճախ շատ ավելի ցայտուն ու ընդգծված են հանդես գալիս, քան եկեղեցական քրիստոնեական բարեպաշտության այս կամ այն կողմերը: Բոլորովին պատահական չէ, որ քրիստոնեության խորհրդանիշ խաչն ու սրբապատկերը մասնավոր տներում չէին դրվում: Ոչ մի տեղ դրանք չէիր գտնի, բացի սուրբ օջախներից, այն էլ՝ շատ հազվադեպ: Այստեղ ոչ այնքան եկեղեցին էր ներխուժում համաժողովրդական անձնական կյանքի մեջ, որքան ավելի շատ՝ վերջինս եկեղեցու մեջ: Նույնիսկ գոհակենդանու մորթելը միշտ չէ, որ պահանջում էր հոգևորականի ներկայությունը» (տե՛ս՝ Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 67)*

<sup>1</sup> «Ռևոլյուցիայից հետո, Սովետական շրջանում փակվում էին բոլոր եկեղեցիները, որոնք օգտագործում էին որպես պահեստներ: Եկեղեցիներից խաչերը հանում էին: Կրոնական զգացմունքները միայն ծերերի մոտ էր մնացել, որը քիչ-քիչ վերանում էր: Առանձին գյուղերում որոշ անձանց մոտ դեռևս պահպանվում էին սրբերին հավատալու և մատաղ մորթելու սովորույթները» (տե՛ս՝ Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., մաս I, տեսոր I, էջ 8-9)

ղական, անհանդուրժողական դիրքորոշմամբ, անկախ դրանց՝ քողարկված և բացահայտ դրսևորումներին<sup>1</sup>:

Ղարաբաղցիների ֆիզիկական գոյատևումը, ազգային մշակութային և այդ համատեքստում՝ ավանդական տոնածիսական արժեքների պաշտպանվածությունը և ժառանգորդությունը օբյեկտիվորեն հնարավոր է միայն հայկական անկախ պետական կառույցի պայմաններում: Հակառակ դեպքում՝ կլինեն պարբերաբար կրկնվող բռնի տեղահանումներ, ֆիզիկական և մշակութային ջարդեր, որի ակնհայտ դրսևորումներից է արդեն իսկ հայաթափված հայկական բնակավայրերում ազգային տոնածիսական սրբավայրերի ու մասունքների ավերումները:

*«Լ.Ղ. Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողով.  
Ջեկուցումների հիմնադրույթներ. հունիսի 21-24, 2006թ.,  
Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 395-401*

---

<sup>1</sup> Հայոց ավանդական տոնածիսական միջավայրը ձևավորող ազգային մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականությունը պարբերաբար շարունակվում էր նույնիսկ խորհրդային վերջին շրջանում: Միայն Գանձակի գավառում, 1980-ական թթ. սկզբներին Ադրբեջանի սովետական և կուսակցական կառույցների կողմից իրականացված այդ քաղաքականությունը բավական է՝ ամբողջական պատկերացում կազմելու նշված երևույթի մասշտաբների վերաբերյալ: Ն. Ղազարյանի փաստացի վկայությամբ՝ «Գեղաբեկի շրջանի Փոլաթլու գյուղի հանդում էր գտվում 5-րդ դարի հուշարձան՝ «Վիշապ» սյունը, որը 1983 թ. տարվել է Բաքու: Բարում գյուղի Երեք Հրեշտակապետաց վանքում էր գտնվում «Սահմանաքար», որը վերաբերում էր Արցախյին և Ուտիքին ու դարձյալ տարվել է Բաքու: Սակայն Բաքվի պետական պատմության թանգարանում այս պատմական արժեքները չեն պաշտպանվում: Միայն վերջին շրջանում պայթեցվել և ավերվել է Սվրեցիք գյուղի եկեղեցին, Խաչքուլաղ գյուղի եկեղեցին, Դասան (Հոռոմաշեն) վանքը և տասնյակ այլ վանքեր, եկեղեցիներ, հուշարձաններ» (տե՛ս՝ Ն. Ղազարյան, նշվ. աշխ., Երևան, 1984 թ., 2/124, թղթ. 1, էջ 1-2)

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԼՂՀ-ում ներկայիս սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նշանակության հիմնահարցերի թվում առանձնահատուկ հրատապություն ու նշանակություն ունեն տարաբնակեցման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծումը: ԼՂՀ-ում տարաբնակեցման և ժողովրդագրական հիմնահարցերի համալիր և խոր հետազոտություններ դեռևս չեն իրականացվել, չեն գնահատվել բնակավայրերի զարգացման նախադրյալներն ու պայմանները, չեն բացահայտվել տարբեր մեծության և գործառույթներ իրականացնող բնակավայրերի առանձնահատկությունները, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների բնույթն ու զարգացման միտումները: ԼՂՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները բացահայտելու համար մեծ նշանակություն ունի Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակի փոփոխությունների ուսումնասիրությունը և հայ բնակչության թվաքանակի դանդաղ աճի, իսկ երբեմն էլ՝ նվազման պատճառների վերլուծությունը: Նման ուսումնասիրությունները հնարավորություն կտան մասնագետներին և պետական մարմիններին մշակել և իրականացնել ԼՂՀ տարաբնակեցման քաղաքականության՝ գիտականորեն հիմնավորված հիմնական սկզբունքները և ուղղությունները:

Պատմական Հայաստանի Արցախ-Ղարաբաղի տարածքը հնագույն ժամանակներից բնակեցված է եղել հայերով: Այդ մասին են վկայում այստեղ հայտնաբերված բազմաթիվ սեպագիր արձանագրությունները և ճարտարապետական հուշարձանները: Գրավոր աղբյուրներում Լեռնային Ղարաբաղը (Արցախ) հիշատակվել է Սարդուրի 2-րդի (763-734թթ.) գրառումներում, երբ Վանի թագավորությանն է միացել Ուրտեխե-Արցախի երկրամասը: Այն հիշատակվում է նաև Ստրաբոնի կողմից («Օրիսիստենե»)՝ որպես Հայաստանի մարզ [1]: Հին հունական և հռոմեական գրավոր աղբյուրներում նշվում է այն մասին, որ Արցախի, Ուտիքի և Մեծ Հայքի արևելյան շրջանների բնակիչները եղել են հայեր:

Մինչև 12-րդ դարը Արցախի տարածքում հիմնական բնակիչները եղել են հայերը: Արաբների, սելջուկ-թյուրքերի, թաթար-մոնղոլների տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում էապես չի փոխվել Արցախ-Ղարաբաղի բնակչության էթնիկ պատկերը: Սակայն ժամանակի ընթացքում աստիճանաբար սկսեցին Արցախ թափանցել քոչվոր թյուրքալեզու անասնապահների ցեղեր: Այնուամենայնիվ, դեռևս 1740թ. ցարական փաստաթղթերում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի հայերի թիվը կազմում է մինչև 100 հազար տուն, իսկ 1798թ. Արցախ-Ղարաբաղում եղել է 110 հազար հայկական ընտանիք [2, 3]:

Ռուս-պարսկական պատերազմի արդյունքում 18-րդ դարի վերջից մինչև 19-րդ դարի սկիզբը Արցախի տարածքը 33 տարվա ընթացքում 6 անգամ հայտնվել է պատերազմական իրավիճակում, ինչը բացասաբար է ազդել բնակչության աճի վրա: Ղարաբաղի խանության ստեղծումով ուժեղացել է թյուրքական ցեղերի ներթափանցումը Ղարաբաղ և, ընդհակառակը, հայերի արտագաղթն այնտեղից: Իբրահիմ խանի քաղաքականությունը բերել է հայերի զանգվածային արտահոսքի [4]: Հետագայում շուրջ 11000 հայկական ընտանիք տեղափոխվել է Հս. Կովկաս [5]: 19-րդ դարի սկզբին, Ղարաբաղի խանության ժամանակաշրջանում, Կովկասում գլխավոր հրամանատարության գրասենյակի ղեկավար Ս.Մ.Բրոննսկին նշում է, որ «Ներկայումս այն հարուստ երկրամասից, որտեղ եղել է շուրջ 60 հազար տուն բնակիչ, հազիվ 5 հազ. տուն է մնացել» [6]: Հարձակումների հետևանքով բնակչության մեծ մասը հարթավայրային մասերից տեղաշարժվել է նախալեռնային ու լեռնային դժվարամատչելի վայրերն ու անտառները: Այստեղ էլ ղարաբաղցիները նորից հիմնել են բնակավայրեր, կառուցել ամրոցներ ու եկեղեցիներ:

1823թ. Ղարաբաղի լեռնային մասի բնակչությունը կազմել են հայերը՝ 84,6% կամ 30850 մարդ, և թաթարները՝ 14,7% կամ 5370 մարդ [7]:

Չնայած 1833թ. բնակչության ընդհանուր թիվը 1823թ. համեմատությամբ պակասել է 28,5%-ով, սակայն հայերը դարձյալ գերակշռող են եղել՝ 84%: Միակ քաղաքում՝ Շուշիում, նրանք կազմել են բնակչության 54%-ը: Ղարաբաղը ցարական Ռուսաստանին միանալուց հետո սկսվել է հայ բնակչության ներհոսքը հատկապես նրա լեռնային հատված, որը շարունակվել է մինչև կայսրության անկումը: 1868թ. կազմավորվել է Ելիզավետպոլի

նահանգը, Ղարաբաղի պրովինցիան բաժանվել է 3 գավառի՝ Ջաբրայիլի, Ջևանշիրի և Շուշիի: 1875թ. հաշվառումների համաձայն, Ղարաբաղի լեռնային մասում ապրել է 91,3 հազ. մարդ, որից հայեր՝ 78,8 հազար կամ 84,7%, թյուրքալեզու էթնիկ խմբեր՝ 14,5 հազ. կամ 15,3%: Շուշիում ապրել է 24,5 հազ. մարդ, որից հայերը կազմել են 55%: 1897թ. մարդահամարի տվյալներով՝ Ղարաբաղի լեռնային մասում ապրում էր 128,6 հազ. մարդ, որից 106,4 հազարը կամ 82,7%-ը կազմել են հայերը, իսկ 20,4 հազ. կամ 15,9%-ը՝ թաթար, ինչպես նաև 1,5 հազ. ռուս և 300 այլ էթնիկ խմբեր<sup>1</sup>:

20-րդ դարի սկզբին Ղարաբաղի հայերի բացարձակ թվաքանակը կայուն էր մնում, հարաբերականը կտրուկ նվազում էր, իսկ մահմեդականների (թաթարներ և քրդեր) թիվն աճում էր: Դա բացատրվում է Ղարաբաղից հայ բնակչության տեղաշարժով դեպի մեծ քաղաքներ, հատկապես՝ Բաքու: Այստեղ 20-րդ դարի սկզբին ապրում էր 30 հազ. ղարաբաղցի հայ<sup>2</sup>: Այն տարածքում, որտեղ հետագայում կազմավորվել է ԼՂԻՄ-ը, 20-րդ դարասկզբին հայ բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության 94%-ը<sup>[8]</sup>: 1913թ. ԼՂՀ ներկայիս սահմաններում ապրել է շուրջ 372 հազ. մարդ (Շուշիում՝ 42 հազ.), իսկ 1914թ. նախկին ԼՂԻՄ վարչական սահմաններում՝ 167,1 հազ. մարդ, որի 81%-ը կազմել են հայերը, իսկ 17,8%-ը՝ թյուրքալեզու էթնիկ խմբերը կամ թաթարները<sup>3</sup>: Վերջիններին միայն խորհրդային կարգերի օրոք անցկացված 1-ին մարդահամարից (1926թ.) հետո սկսեցին անվանել ադրբեջանցիներ:

1918-20թթ. Ադրբեջանի ագրեսիայից, ինչպես նաև թուրքական ինտերվենցիայից հետո Ղարաբաղի բնակչության թիվը կտրուկ նվազել է՝ 1921թ. մինչև 131,5 հազ. (94,4% հայեր), 1923թ. ԼՂԻՄ հռչակման տարում՝ 127,8 հազ.<sup>4</sup>: Խորհրդային Միության տարիներին ԼՂԻՄ-ում հայ և ադրբեջանցի բնակչության թվաքանակը հավասարապես չի աճել: Այսպես, եթե 1923թ. հայերի տեսակարար կշիռը ԼՂԻՄ ամբողջ բնակչության մեջ կազմել է 94,4%, ապա 1989թ.՝ 76,9%: 1926 և 1989թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում ԼՂԻՄ-ում հայերի թիվն ավելացել է 33,8 հազարով (աճը կազմել է 130,3%), իսկ ադրբեջանցիներինը՝ 28,1 հազարով

<sup>1</sup> [http://www.litera-ru.ru/html/materials/2003\\_0608\\_Per1897.html](http://www.litera-ru.ru/html/materials/2003_0608_Per1897.html)

<sup>2</sup> [http://www.bakuland.com/?page=history&logik=history\\_supnew](http://www.bakuland.com/?page=history&logik=history_supnew)

<sup>3</sup> <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>

<sup>4</sup> Նույն տեղում


(323%): Ընդ որում, հայերի թիվը 1926-39թթ. աճել է 21,1 հազարով, իսկ 1939-79թթ. նվազել է 9,7 հազարով, հետո նորից մինչև 1989թ. ավելացել 22,4 հազարով: Ադրբեջանցիների թվաքանակը 1926 և 1989թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում անընդհատ աճել է: Մշտապես տատանվել է նաև ԼՂԻՄ ընդհանուր բնակչության թիվը: Այսպես, եթե 1926-39թթ. Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվը 125,3 հազարից ավելացել և դարձել է 150,8 հազ., ապա 1939-59թթ. նվազել է և կազմել 130,4 հազ.: 1970թ. գրեթե հասել է 1939թ. մակարդակին՝ 150,3 հազ. [9]: Հետո բնակչության թիվն ավելացել է և 1990թ. հասել ԽՍՀՄ գոյության ընթացքում ԼՂԻՄ բնակչության առավելագույն թվին՝ 195,2 հազ. [10]: Դա հիմնականում պայմանավորված էր Բաքվից և Ադրբեջանի այլ շրջաններից հայերի բռնագաղթով ու Լեռնային Ղարաբաղում բնակեցմամբ: Հետագա տարիներին ԼՂՀ բնակչությունը մինչև 1990-ականների կեսերը նվազել է, իսկ հետո շատ դանդաղ սկսել է աճել և 2008թ. դարձել է 138,8 հազ.<sup>1</sup> (Նկ. 1): Դա պայմանավորված էր պատերազական իրավիճակով և բնակչության մեծ արտագաղթով: Խորհրդային տարիներին բնակչության թվաքանակի այսպիսի տատանումները պայմանավորված են եղել ադրբեջանական իշխանությունների վարած հայատյաց քաղաքականությամբ, որի արդյունքում հայ բնակչության թիվը ոչ միայն չէր ավելանում, այլև նվազում էր: Միտումնավոր կերպով կրճատվում էին ԼՂԻՄ-ում կատարվող շինարարական աշխատանքների համար հատկացվող ֆինանսավորումները, 44 բնակավայրում փակվել է 52 արդյունաբերական ձեռնարկություն: Միայն 1940-60թթ. ԼՂԻՄ-ում ամբողջությամբ դատարկվել է 47 գյուղ<sup>2</sup> (մինչև 1980թ.՝ ընդհանուր առմամբ՝ 85 կամ ԼՂԻՄ գյուղերի 30%-ը)<sup>3</sup>:

<sup>1</sup> <http://www.utro.ru/articles/2006/07/04/562296.shtml>

<sup>2</sup> <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>

<sup>3</sup> <http://www.utro.ru/articles/2006/07/04/562296.shtml>

Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակի շարժընթացը 1823-2008թթ.  
 Բնակչության թվաքանակի շարժընթացը (1823-2008 թթ.)



Փոխարենը ստեղծվում էին գյուղեր, որոնք բնակեցվում էին բացառապես աղբբեջանցիներով: Այս ամենի արդյունքում կտրուկ փոխվել է մարզի ժողովրդագրական պատկերը: 1989թ. մարդահամարի արդյունքում պարզվեց, որ Շուշիում այլևս ոչ մի հայ չկա: Հաղբուրթի շրջանում 1913թ. 37138 հայից 1989թ. մնացել էր 11600 հայ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարզի բնակչության 35%-ը կամ 45000 մարդ գորակոչվել է Բանակ, որը 4-5 անգամ ավելի էր, քան աղբբեջանական հարևան շրջաններինը: Ռազմաճակատում զոհվել է 22 հազար արցախցի: Պատերազմից հետո, 1949թ. հունիսի 14-ի գիշերը, աղբբեջանական իշխանությունները մարզից հազարավոր հայ ընտանիքներ արքստրել են Ռուսաստանի Ալթայի երկրամաս<sup>1</sup>:

Բնակչության և՛ թվաքանակի, և՛ ազգային կազմի զգալի փոփոխություններ են տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղի երբեմնի մայրաքաղաք Շուշիում: 19-րդ դարի ընթացքում Շուշին դարձել է խոշոր կենտրոն, որը մեծությամբ 5-րդն է եղել Անդրկովկասում: Քաղաքի բնակչությունն ավելացել է նախևառաջ հայերի հաշվին, որոնք 19-րդ դարի կեսերին մեծամասնություն էին կազմում: 1851թ. Շուշիի բնակչությունը եղել է 12724 մարդ, որից 6357-ը՝ հայ, 1883թ.՝ 25656 (13282 տղամարդ, 12374 կին), որից

<sup>1</sup> <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>



56,5%-ը՝ հայ, 43,2%-ը՝ թաթարներ, 0,3%-ը՝ ռուս, հրեա: 1890-ականներին բնակչության թիվը կազմել է 34 հազ., 1916թ.՝ 43 հազ., 1920թ.՝ 60 հազ., որից 47 հազարը՝ հայ<sup>1</sup>: 1918-20թթ. հայ-ադրբեջանական ընդհարումների և Շուշիի կոտորածների արդյունքում քաղաքի բնակչությունը հասավ 9 հազ., ապա 1920-ականների վերջերին՝ 5 հազ. ու այլևս չբարձրացավ 17 հազարից՝ 1989թ.<sup>2</sup>:

Ներկայիս մայրաքաղաք Ստեփանակերտը 1847թ. ունեցել է 80 տուն հայ և 52 տուն ռուս բնակիչ [11]: 1900թ. Ստեփանակերտի բնակչությունը կազմել է 3 հազ., [12], 1939թ.՝ 10 հազ., 1959թ.՝ 19,7 հազ., 1970թ.՝ 30,3 հազ., 1975թ.՝ 33 հազ., 1979թ.՝ 38,9 հազ., 1989թ.՝ 57 հազ. (ըստ մարդահամարի տվյալների): 2008թ. հունվարի 1-ի դրությամբ մայրաքաղաքն ունեցել է 50984 բնակիչ [13]:

Բնակչության թվաքանակի հաճախակի փոփոխությունները, ռազմական գործողությունները, ռազմաքաղաքական անկայուն իրավիճակը, տնտեսական ու սոցիալական բարդ պայմաններն իրենց հետքն են թողել բնակչության ժողովրդագրական ցուցանիշների վրա: ԼՂՀ ներկայիս ժողովրդագրական պատկերը ձևավորվել է երկարատև գործընթացի արդյունքում:

Ժողովրդագրական իրավիճակն անմիջական ազդեցություն է ունեցել անդրկովկասյան երկրների ազգային հիմնախնդիրների սրության և զարգացման բնույթի վրա:

---

<sup>1</sup> <http://www.nkr.am/rus/history/shushi.htm>

<sup>2</sup> [http://www.nkr.am/rus/mid/bull/text1\\_00.htm](http://www.nkr.am/rus/mid/bull/text1_00.htm); <http://www.thewordbook.com/?suche=Shusha>

Աղյուսակ 1

Բնակչության խտությունը նախկին ԽՍՀՄ  
մի շարք հանրապետություններում 1987թ. [14]

Հանրապետությունը	Միջին խտությունը, մարդ/կմ <sup>2</sup>	Ըստ գյուղատնտեսական հողահանդակների, մարդ/կմ <sup>2</sup>
Հայաստանի ԽՍՀ	115	262
Ադրբեջանի ԽՍՀ	79	166
Վրաստանի ԽՍՀ	76	165
Ուկրաինայի ԽՍՀ	85	122
Մոլդովայի ԽՍՀ	124	161

Հայաստանում և Ադրբեջանում ժողովրդագրական պայթյունն առավել-լագույն բարձրության է հասել նախորդ դարի 60-ականների 1-ին կեսին, երբ բնակչությունն աճում էր տարեկան ավելի քան 3%-ով: Բնակչության արագ աճի պայմաններում մեծանում էր բնակչության խտությունը (Աղյուսակ 1): Լեռնային երկրներում բնակչության ընդհանուր խտությունը չի արտացոլում տվյալ տարածքի իրական պատկերը: Առավել ճշգրիտ պատկերացում են տալիս այն ցուցանիշները, որոնք հաշվարկվում են հողօգտագործման տարածքների, իսկ առավել ճշգրիտ՝ գյուղատնտեսական հողահանդակների հաշվով:

Համեմատության համար նշենք, որ ԼՂՀ-ում 01.01.2008թ. դրությամբ բնակչության միջին խտությունը կազմել է 11,9 մարդ/կմ<sup>2</sup>, իսկ ըստ գյուղատնտեսական հողահանդակների՝ 30,2:

Աղյուսակ 2

ԼՂԻՄ, ՀԽՍՀ և Ադր. ԽՍՀ բնակչության աճի տեմպերը [14]

Թվական	ԼՂԻՄ բնակչությունը, հազ. մարդ	Աճի տեմպերը, %		
		ԼՂԻՄ	Հայաստանի ԽՍՀ	Ադրբեջանի ԽՍՀ
1926	125			
1939	151	121	146	131
1959	131	87	138	115
1970	150	115	141	138
1979	161	107	122	118
1987	180	112	112	113

ԼՂԻՄ բնակչությունն ավելի դանդաղ է աճել, քան Հայաստանի ԽՍՀ-ում և Ադրբեջանի ԽՍՀ-ում, ինչը վկայում է, որ այստեղից մշտապես եղել է բնակչության հոսք (Աղյուսակ 2): Եթե համեմատենք բնակչության աճը 1959թ. նկատմամբ, ապա Ադրբեջանում այն կազմում է 184% (1987թ.), ՀԽՍՀ-ում՝ 194%, ԼՂԻՄ-ում՝ միայն 137% [14]:

*Աղյուսակ 3*

*Երիտասարդ և տարեց բնակչության տեսակարար կշիռը, %, 1979թ. [14]*

	Տարիքը				Հետաշխատանքային տարիքի
	15-29	այդ թվում			
		15-19	20-24	25-29	
<b>Ամբողջ բնակչությունը</b>					
ԼՂԻՄ	26,8	12,2	8,8	5,8	14,6
Ադրբեջանի ԽՍՀ	30,5	13,5	10,3	6,7	9,0
Հայաստանի ԽՍՀ	31,4	12,6	10,9	7,9	9,3
<b>Քաղաքային բնակչությունը</b>					
ԼՂԻՄ	31,6	13,5	10,6	7,5	10,2
Ադրբեջանի ԽՍՀ	32,6	12,9	11,7	8,0	9,4
Հայաստանի ԽՍՀ	32,0	1,6	11,4	9,0	8,9
<b>Գյուղական բնակչությունը</b>					
ԼՂԻՄ	23,2	11,2	7,4	4,6	18,0
Ադրբեջանի ԽՍՀ	23,0	14,1	8,7	5,2	8,5
Հայաստանի ԽՍՀ	30,4	14,5	10,1	5,8	10,1

Քանի որ ԼՂԻՄ-ում բնական աճի ցուցանիշները ցածր չեն եղել, քան Հայաստանի ԽՍՀ-ում և Ադրբեջանի ԽՍՀ-ում, ապա կարելի է մոտավորապես գնահատել բնակչության կորուստները: Բնակչության ակտիվ հեռացման մասին են վկայում նաև ԼՂԻՄ տարիքային կառուցվածքի առանձնահատկությունները (Աղյուսակ 3): 15-29 տարեկանների բաժինը ամբողջ բնակչության մեջ ԼՂԻՄ-ում զգալիորեն ցածր է եղել, քան ՀԽՍՀ-ում և Ադրբեջանի ԽՍՀ-ում, հատկապես գյուղական բնակավայրերում: Սա բացատրվում է նրանով, որ միգրանտների ավելի քան 3/4-ը այս տարիքի բնակիչներն են: Միաժամանակ թոշակառուների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ աճել է 1,5 անգամ, իսկ գյուղական բնակչության մեջ՝ 2 անգամ:

ԼՂՀ բնակչության սեռային կազմը [13, 16, 17, 19]

Տարեթիվը	Բնակչության թիվը հունվարի 1-ի դրությամբ, հազ.մարդ	այդ թվում			
		տղամարդիկ		կանայք	
		հազ. մարդ	%	հազ. մարդ	%
1989*	189,1	92,1	48,7	97,0	51,3
2000#	133,3	64,0	48,0	69,3	52,0
2001#	134,4	64,1	47,7	70,3	52,3
2002#	135,7	66,0	48,6	69,7	51,4
2003#	136,6	65,2	47,7	71,4	52,3
2004#	137,0	65,3	47,7	71,7	52,3
2005**	137,7	66,6	48,4	71,1	51,6
2006#	137,7	66,5	48,3	71,2	51,7
2007#	137,7	66,5	48,3	71,2	51,7
2008#	138,8	66,8	48,1	72,0	51,9

ՇԱՆ. \* - մարդահամարի տվյալներով

\*\* - 18.10.2005թ. մարդահամարի տվյալներով

# - գնահատմամբ

Բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց անդրադարձն են ունեցել ԼՂՀ բնակչության սեռային կազմի վրա (Աղյուսակ 4): Ըստ շրջանների բնակչության սեռային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 01.01.2008թ. դրությամբ բոլոր շրջաններում, բացի Շահումյանից և Քաշաթաղից, գերակշռում են կանայք, ընդ որում՝ կանայք ամենաբարձր տեսակարար կշիռն ունեն Շուշիի շրջանում (55,2%), իսկ Հաղարթի շրջանում գրեթե հավասար ցուցանիշ ունեն (կանայք՝ 50,5%, տղամարդիկ՝ 49,5%) (2006թ. եղել են հավասար՝ 50%): Շահումյանի շրջանում կանայք կազմում են ընդհանուր բնակչության 47,1%-ը, իսկ Քաշաթաղում ամենացածրն է՝ 46,5% (Աղյուսակ 5):

Պատճառներից հիմնականներն են. Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում կանանց բարեկեցիկ բնակչության համար անհրաժեշտ շատ պայմաններ բացակայում են (աշխատանք, տարրական կենցաղային ու հիգիենիկ պայմաններ և այլն), այստեղ հիմնականում միայնակ բնակվում են տղամարդիկ, որոնց ընտանիքները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում կամ ԼՂՀ այլ շրջաններում:


Հայ բնակչության արտահոսք է եղել Ադրբեջանից, ԼՂԻՄ-ից, ինչպես նաև Վրաստանից: 1926-89թթ. մարդահամարների միջև ընկած ժամանա-

կահատվածում հայերի թիվն Ադրբեջանում և Վրաստանում նույնիսկ նվազել է, իսկ ԼՂԻՄ-ում գործնականում չի աճել: Դա նշանակում է, որ այստեղից հայերի միգրացիան կատարվել է իրենց բնական աճի չափով, մոտավորապես տարեկան 2-3%: Ադրբեջանցիների թիվը նույն ժամանակահատվածում զգալիորեն աճել է ԼՂԻՄ-ում:


Նկար 2

ԼՂՀ սեռատարիքային բուրգը, 2005թ. [15]

ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎՆ ԸՍՏ 2005 Ք. ՍԱՐԴԱՅԱՍԱՐԻ - 137737 մարդ



ԼՂՀ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՅԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ (2005 Ք.)



Աղյուսակ 5

ԼՂՀ բնակչության սեռային կառուցվածքն ըստ շրջանների  
2008թ. հունվարի 1-ի դրությամբ [13]

Հ/հ	Շրջանները	Բնակչության թվաքանակը			Տեսակարար կշիռը %-ով	
		Ընդամենը	այդ թվում		տղամարդ	կին
			տղամարդ	կին		
1	Ստեփանակերտ	50984	23672	27312	46,4	53,6
2	Ասկերանի	17393	8356	9037	48,0	52,0
3	Հաղրութի	12240	6053	6187	49,5	50,5
4	Մարտակերտի	19042	9347	9695	49,1	50,9
5	Մարտունու	23228	11299	11929	48,6	51,4
6	Շահումյանի	2789	1475	1314	52,9	47,1
7	Շուշիի	4607	2063	2544	44,8	55,2
8	Քաշաթաղի	8551	4575	3976	53,5	46,5
	ԸՆԴԱՄԵՆԸ	138834	66840	71994	48,1	51,9

Ներգաղթի և համեմատաբար ավելի բարձր բնական աճի շնորհիվ ԼՂԻՄ-ում աղբբեջանցիների թիվն ավելի քան կրկնապատկվել է, այն դեպքում, երբ հայերի թիվն աճել է 12%-ով: Արդյունքում ստացվել է, որ Ղարաբաղում արագորեն փոխվել է ազգային կազմը հոգուտ աղբբեջանցիների:

Աղյուսակ 6

ԼՂԻՄ ազգային կազմը, % [14]


	1959թ.		1970թ.		1979թ.	
	հազ. մարդ	%	հազ. մարդ	%	հազ. մարդ	%
<b>Ամբողջ բնակչությունը</b>	<b>130,4</b>	<b>100,0</b>	<b>150,3</b>	<b>100,0</b>	<b>162,3</b>	<b>100,0</b>
այդ թվում՝ հայեր	110,1	84,4	121,1	80,6	123,1	75,9
աղբբեջանցիներ	18,0	13,8	27,2	18,1	37,3	23,0
ռուսներ	1,8	1,4	1,3	0,86	1,3	0,78
այլ ազգեր	0,5	0,4	0,7	0,44	0,3	0,32

Պատկերը փոխվել է 1988-ից հետո, երբ աղբբեջանցիները հեռացել են ԼՂԻՄ-ից, և ներկայումս բնակչության 99,7%-ը կազմում են հայերը: Ռազմական գործողությունների, ռազմաքաղաքական անկայուն իրավի-

ճակի, տնտեսական ու սոցիալական բարդ պայմանների արդյունքում վատթարացել է բնակչության սոցիալական դրությունը, առկա է գործազրկությունը, խորացել է աղքատությունը, ինտենսիվացել է արտագաղթը: Այս ամենի արդյունքում 90-ական թվականների առաջին կեսին տեղի է ունեցել բնակչության թվի կտրուկ նվազում (Նկ. 1), ի հայտ են եկել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրատապ է դարձրել հանրապետության բնակչության և տարաբնակեցման համակարգի աշխարհագրական ուսումնասիրությունները:

Նկար 3

**Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության շարժընթացը 1823-2005թթ. [15]**



Չնայած պատերազմին հաջորդած առաջին իսկ տարիներից ԼՂՀ-ում սկսվեցին և այսօր էլ շարունակվում են լայնածավալ շինարարական աշխատանքները, վերականգնվում են կրթական, մշակութային և այլ հիմնարկներ, վերաբնակեցվում են նոր բնակավայրեր, սակայն շատ հարցեր դեռևս իրենց լուծումը չեն գտել: Եվ դա առաջին հերթին վերաբերում է ժողովրդագրական իրավիճակի կարգավորմանը:

Բնակչության ժողովրդագրական իրավիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է ծնելիությունը, որի ազդակներից են՝ ամուսնությունը, ամուսնալուծությունը, երիտասարդ ընտանիքների արտագաղթը, գործազրկությունը, սոցիալական ծանր պայմանները, նյութական ապահովվածությունը և այլն: 2005թ. մարդահամարի տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամուսնացած չէ 25-39 տարեկան տղամարդկանց 24,04%-ը (քաղաքներում՝ 24,73%, գյուղերում՝ 23,35%), իսկ 15 տարեկանից բարձր բնակչության կազմում երբեք ամուսնացած չի եղել

ԼՂՀ բնակչության 25,5%-ը, որը բավական բարձր ցուցանիշ է: Այն առավել բարձր է քաղաքներում, որտեղ երբեք ամուսնացած չի եղել 15 տարեկանից բարձր բնակչության 28,9%-ը, իսկ գյուղերում այն կազմում է 21,7% [16]: Սրանից կարելի է եզրակացնել, որ գյուղերում համեմատաբար ավելի հեշտ է սոցիալական հարցերի կարգավորումը՝ շնորհիվ գյուղատնտեսական աշխատանքների: Ամուսնությունների գործակիցը 2000-2006թթ. տատանվել է 4,7-6%-ի սահմաններում, իսկ ամուսնա-լուծություններինը՝ 0,6-1% [17] (*Աղյուսակ 7*):

*Աղյուսակ 7*

*Ամուսնությունների և ամուսնալուծությունների ընդհանուր գործակիցները [17]*

Տարեթվերը	1000 բնակչի հաշվով, %	
	ամուսնություն	ամուսնալուծություն
2000	5,7	0,7
2001	5,2	0,8
2002	4,7	0,7
2003	4,9	0,7
2004	5,8	0,6
2005	5,5	1,0
2006	6,0	0,9
2007	3,8	0,9

Ինչպես երևում է աղյուսակից, ամուսնալուծությունների գործակիցներն ունեն ավելի փոքր տատանումներ, քան ամուսնություններինը:

*Աղյուսակ 8*

*Բնակչության բնական շարժի ցուցանիշները 1985-2007թթ. [16, 17, 18, 19]*

Տարեթիվը	1000 բնակչի հաշվով, %		
	Ծնվածները	Մահացածները	Բնական աճը
1985	24,0	7,8	16,2
1990	17,3	7,1	10,2
1991	21,6	12,2	9,4
1992	11,6	11,2	0,4
1993	10,6	16,6	- 6,0
1994	14,2	15,2	- 1,0
1995	14,2	9,5	4,7




1996	15,2	10,2	5,0
2000	16,6	8,8	7,8
2001	17,0	7,9	9,1
2002	16,0	9,1	6,9
2003	15,0	9,0	6,0
2004	15,3	9,5	5,8
2005	14,6	9,2	5,4
2006	15,3	9,0	6,3
2007	15,4	8,8	6,6

Բնակչության թվաքանակի շարժընթացի վրա հիմնական ազդեցությունը թողնում են ծնելիության և մահացության ցուցանիշները: Ինչպես երևում է *Նկ. 4-ից* և *Աղյուսակ 8-ից*, 1985-ից հետո ծնելիությունը և բնական աճը զգալիորեն նվազել են, վերջինս նույնիսկ ունեցել է բացասական արժեք: 90-ական թվականների երկրորդ կեսից ծնելիությունը համեմատաբար կայունացել է: Այսպես, 1995-2007թթ. ընթացքում այն տատանվել է 14,2-17,0%-ի սահմաններում, մահացության ցուցանիշները 7,9-10,2%: Բնական աճը կազմել է 4,7-9,1%: Ծնելիության ու բնական աճի անկումը և մահացության ավելացումը 90-ականների 1-ին կեսին պայմանավորված էր նախ և առաջ պատերազմով: Եվ եթե հետպատերազմյան ժամանակաշրջանում որոշակիորեն բարձրացել է ծնելիության մակարդակը՝ 14,2%-ից հասնելով 15,6% ցուցանիշին, ապա մահացության ցուցանիշը շատ քիչ է նվազել՝ 9,5%-ից իջնելով 8,9%-ի:


*Նկար 4*

**Բնակչության բնական շարժի ցուցանիշները 1960-2007թթ.**



Թեև բնական աճը 4,7%-ից հասել է 6,7%-ի, [16, 17, 18, 19], այնուամենայնիվ, այն շատ ցածր է, եթե հաշվի առնենք, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի բնակչության թվաքանակի արագ աճը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար: Ծնելիության և բնական աճի ամենաբարձր ու մահացության ամենացածր մակարդակը 1992-ից ի վեր դիտվել է 2001թ.՝ համապատասխանաբար 17%, 7,9%, 9,1%: 2001-ից հետո ծնելիությունն ավելի շատ է նվազել, քան մահացությունը: Արդյունքում զգալիորեն նվազել է բնակչության բնական աճը: Մահացության բարձր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով. մի կողմից՝ բնակչության տարիքային կառուցվածքում տարեցների բաժնի մեծացմամբ, մյուս կողմից՝ բնակչության սոցիալական և կենցաղային պայմանների վատացմամբ:

ԼՂՀ բնակավայրերի բնակչության փոփոխությունները 1989-2008թթ.



Ժողովրդագրական իրավիճակը սրված է ԼՂՀ գրեթե բոլոր շրջաններում: Ամենուրեք դիտվում է ծնելիության նվազում, սակայն կապված մահացության ցուցանիշների տատանումների հետ՝ բնական աճը վերջին տարիների ընթացքում չի ունեցել կայուն աճ կամ նվազում, թեև բոլոր շրջաններում էլ ընդհանուր առմամբ նվազել է: Առավել անմխիթար է վիճակը Ասկերանի (վերջին 5 տարիների ընթացքում բնական աճը տատանվել է - 0,2% - 3,3%-ի սահմաններում), Մարտունու (2,6%-4,9%), Մարտակերտի (3,5%-6,3%) և Հաղրուփի (2,0%-5,1%) շրջաններում, ինչը պայմանավորված է նախ և առաջ պատերազմի ժամանակ ավելի շատ երիտասարդ տարիքի բնակչության զոհվելու կամ պատերազմից հետո նրանց շրջանից հեռանալու հետևանքով տարիքավորների տեսակարար կշռի մեծ լինելով: Ծնելիության ամենաբարձր գործակիցներ ունեն Շահումյանի (10,8%-18,8%) և Քաշաթաղի (12,4%-16,5%) շրջանները: Այստեղ առավելապես երիտասարդ վերաբնակիչներ են ապրում, իսկ կանանց մեծ մասը աշխատանք չունի: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ծնելիության մակարդակը երբեմն անցել է նաև 20%-ի սահմանը (Շահումյանի շրջանում 2001թ.՝ 21,6%, 2002 և 2005թթ.՝ 20,4%, Քաշաթաղի շրջանում 2001թ.՝ 20,3%): Մահացության մակարդակը նույնպես ամենացածրն է այս երկու շրջանում՝ տատանվելով 1,9-3,4%-ի սահմաններում Քաշաթաղի շրջանում և 1,9-3,4%՝ Շահումյանի շրջանում:

ԼՂՀ բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել բնակավայրերի բնակչության թվերի փոփոխությունների մեջ՝ 2008թ. 1989թ. համեմատ (Նկ. 5): Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին ԼՂԻՄ տարածքում գտնվող 121 բնակավայրերի (70,8%) բնակչությունը նվազել է կամ չի ավելացել և միայն 50-ում (29,2%) է ավելացել: Ըստ շրջանների պատկերը հետևյալն է. Մարտակերտի շրջանում ամբողջ բնակավայրերի 84,4%-ում (38 բնակավայր) 2008թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվն ավելի քիչ է եղել, քան 1989-ին, Մարտունու և Շուշիի շրջաններում՝ 75,0-ական %-ում (համապատասխանաբար 27 և 6), Հաղրուփի շրջանում՝ 63,2%-ում (24), Ասկերանի շրջանում՝ 58%-ում (25): Բնակչության թիվը նվազել է նաև Ստեփանակերտում: Բնակչության թվաքանակը հիմնականում ավելացել է երկրի արևմտյան գյուղերում, իսկ

արևելքում, առաջնային գծում գտնվող գյուղերից միայն 2-ում է այն ավելացել (Աշան, Սպիտակաշեն):

Պատճառները տարաբնույթ ու բազմազան են, որոնցից, թերևս, գլխավորներն են պատերազմի ընթացքում զոհվածների թվաքանակը, ինտենսիվ արտագաղթը, ցածր ծնելիությունը և բարձր մահացությունը: Ներկայումս էլ բնակչության բնական շարժի ցածր ցուցանիշների արդյունքում բնակչությունը շատ դանդաղ է ավելանում, և դժվար է կանխատեսել, թե բնակավայրերում բնակչության թիվը երբ կհասնի նախապատերազմյան ժամանակաշրջանի մակարդակին: Ազատագրված և նոր կազմավորված շրջաններում (Շահումյան, Քաշաթաղ) վերաբնակեցված բոլոր բնակավայրերում վստահորեն կարելի է ասել, որ ներկայումս ապրում են ավելի քիչ թվով բնակիչներ, քան եղել է 1989թ. գրեթե նույն տեղերում գոյություն ունեցած ադրբեջանական գյուղերում, որտեղ միասին վերցրած ապրել է ավելի քան 100 հազար մարդ՝ ներկայիս 8,5 հազարի փոխարեն: Պատահական չէ, որ այսօր Քաշաթաղի շրջանում գերակշռում են շատ մանր, մանր ու փոքր գյուղերը (Նկ. 6), որոնք ունեն մինչև 300 բնակիչ (Քաշաթաղի շրջանում ամենամեծ գյուղը Ծաղկաբերդն է 238 բնակչով, իսկ Շահումյանի շրջանում՝ Նոր Վերին շենը՝ 224 բնակչով): Ականաբերդ գյուղը, որն ունի 523 բնակիչ, թեև վարչականորեն մտնում է Շահումյանի շրջանի կազմի մեջ, սակայն փաստացի տեղակայված է Մարտակերտի շրջանում: Ընդհանուր առմամբ, ամբողջ ԼՂՀ-ում մինչև 500 բնակիչ ունեն 286 գյուղերից 244-ը (կամ գյուղերի 85,3%-ը)՝ 30149 ընդհանուր բնակչությամբ (ամբողջ գյուղական բնակչության 44,9%-ը) և միայն 42 գյուղ ունեն 501 և ավելի (14-ը՝ 1000 և ավելի) բնակիչ՝ 37036 ընդհանուր բնակչությամբ [13]:


Ակնհայտ է, որ բնակչության ժողովրդագրական ցուցանիշներն ազդում են տարաբնակեցման գործընթացների և ձևերի վրա, մասնավորապես, կախված բնակչության տարիքից, սեռից, զբաղվածության տեսակից, փոխվում է բնակչության կենսագործունեության բնույթը, նրա կազմակերպումը տարածության և ժամանակի մեջ: Բնակչության բնական և մեխանիկական շարժերը հանդիսանում են տարաբնակեցման կարևորագույն գործոնները, որոնք պայմանավորում են տարաբնակեցման փոփոխության միտումները [20]:

Ժողովրդագրական իրավիճակը ԼՂՀ-ում այսօր պայմանավորել էն բազմաթիվ սոցիալական և տնտեսական հիմնախնդիրներ, որոնց լուծման հիմնական ուղին այստեղ տնտեսության զարգացումն է, արտոնությունների ավելացումը, աշխատատեղերի ստեղծումը, կրթական, բժշկական և այլ օբյեկտների ցանցի ընդլայնումը: Մրանք կնպաստեն, որպեսզի թուլանա սոցիալական լարվածությունը և բնակիչները չլքեն իրենց բնակավայրերն ու արտագաղթեն, բարձրանան ծնելիության ու բնական աճի ցուցանիշները: Արդյունքում՝ ժողովրդագրական իրավիճակը ԼՂՀ-ում մի փոքր կկարգավորվի, որը, բացի գուտ աշխարհագրականից, ունի նաև կարևոր ռազմավարական նշանակություն:

Ապրիլ, 2009թ.

Նկար 6

ԼՂՀ բնակավայրերն ըստ մարդաշատության և բնակչության խտությունն ըստ վարչական շրջանների 01.01.2008թ. դրությամբ



## Աղբյուրներ և գրականություն

1. *Страбон*, «География», 11.14.4; «Нагорный Карабах. Историческая справка» АН Арм. ССР, Ереван, 1988.
2. АВПР, ф. СРА. 1736 г., д. 1, лл. 106-117, 144-165 об.  
<http://ru.wikipedia.org/wiki/>
3. Полный свод законов Российской империи. Том 24, стр. 76;  
<http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
4. *Шнирельман В.А.*, «Войны памяти». Часть I, гл. 13;  
<http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
5. «Живописная Россия». Под редакцией вице-председателя Императорского русско-го географического общества П.П. Семенова, Санкт-Петербург, 1883; <http://ru.wikipedia.org/wiki/>
6. *Броневский С.М.*, Исторические выписки о сношениях России с Персией, Грузией и вообще с горскими народами, в Кавказе обитающими, со времен Ивана Васильевича донныне. Эпоха III;  
<http://www.Vostlit.info/Textsrus9/Bronevskiy/text32.html>-  
<http://ru.wikipedia.org/wiki/>
7. «Описание Карабахской губернии», Тифлис, 1866г., стр. 260;  
<http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
8. *De Waal, Thomas*. Black garden: Armenia and Azerbaijan through Peace and War. New York: New York University Press, 2003. p. 130. ISBN 0-8147-1945-7
9. «Нагорный Карабах. Историческая справка» АН Арм. ССР, Ереван, 1988.
10. «Վիճակագրական ժողովածու 1985-1996», Ստեփանակերտ, 1997թ.:
11. *Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.*, «Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան», Երևան, 1986թ., 2-րդ հրատ., Երևան, 1988:
12. *Цитович Г.А.*, Храмы армии и флота. Пятигорск, 1913, 520+40+XIV с. Кавказский военный округ.
13. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թվաքանակը 2008թ. հունվարի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագիր, ԼՂՀ ԱԿԾ, Ստեփանակերտ, 2008:

14. *Зайончковская Ж.А.*, «Демографическая ситуация и проблемы развития Нагорного Карабаха» // Проблемы горного хозяйства и расселения, Институт географии АН СССР, 1990.
15. ՀՀ Ազգային ատլաս, հատոր Ա, Երևան, 2007:
16. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդահամարի արդյունքները», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2006:
17. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2000-2006», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2007:
18. «Վիճակագրական ժողովածու 1985-1996», Ստեփանակերտ, 1997:
19. «Լեռնային Ղարաբաղը թվերով 2007», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2007:
20. *Մանասյան Մ.Գ.*, «ՀՀ տարաբնակեցման համակարգը», Ե., ԵՊՀ հրատ., 2005:

*«21-րդ դար», Երևան, 2009, թիվ 3, էջ 49-66*



## ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թռուցիկ դիտարկումներից անգամ նկատվում է, որ գորգագործական բազմաթիվ կենտրոններում արմատացած գորգերի մի շարք տիպեր ակնհայտորեն նմանվում, կամ կրկնում են Արցախյան գորգերին: Դրանք այնքան շատ են ու տարբերակներով հարուստ, որ չեն կարող համարվեն պատահականության արդյունք: Արցախյան գորգերի ավանդույթները նկատվում են հայոց մշակութային տարածքում գտնվող գորգագործական կենտրոնների մեծ մասում՝ սակայն դրանց արտահայտությունների քանակով ու կարևորությամբ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Շիրվանի, Դերբենտի, Ղարադաղի, Ուրմիա լճի ավազանի և Փոքր Ասիայի գորգագործական կենտրոնները: Ընդ որում, դրանցում բավականին ակնհայտ նմանություններ ենք հայտնաբերում ոչ միայն գորգերի գեղագարդման համակարգերում այլ նաև գորգ գործելու տեխնոլոգիական հմտությունների ու գունային երանգների ասպարեզում:

Նկատի ունենալով սույն հաղորդման սահմանափակ հնարավորությունները, այստեղ մենք կանդրադառնանք միայն Հյուսիս-արևելյան Անդրկովկասի գորգագործական կենտրոններին: Պատմական սկզբնաղբյուրներում եղած գրավոր վկայություններից հայտնի է, որ այս տարածաշրջանի ժողովրդագրական պատկերում բավականին ազդեցիկ տեղ ունեին հայ հանրույթը: Հայոց թվաքանակը այդ տարածաշրջանում այնքան զգալի էր և ազդեցիկ, որ այդտեղ ձևավորվում է առանձին թագավորություն<sup>1</sup>: Այս հարցերն ուսումնասիրած վիճակագրատ Սեդրակ Բարխուդարյանը հաստատում է, որ այդ տարածքներում XI-XIII դդ. իսկապես եղել է հայոց թագավորություն<sup>2</sup>:

<sup>1</sup> Մատթեոս Ուտիայեցի, *Ժամանակագրություն: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները Հրաչ բարթիկյան, Եր., 1981, էջ 151-152, Абу-Исхак ал-Истахри. Книга путей и царства. Перевод и комментарий Н. А. Караулова - СМОМПК вып. II, Тифлис, 1901, էջ 97.107, Ս. Բարխուդարյան, Դերբենտի հայ-աղվանական թագավորությունը. Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1969, նո. 3, էջ 139-141*

<sup>2</sup> Ս. Բարխուդարյան, *նշվ. աշխ.*, էջ 125-147

Այդ ամենը հաստատում են նաև Մակար Արքեպիսկոպոս Բարխուտարեանցի 19-րդ դ. վերջին արած դիտարկումները: Նա նշում է, որ Խաչմապի մերձակայքում գտնվող երկու հին գերեզմանոցներում գյուղացիների օգնությամբ հողից հանել ու մաքրել են բազմաթիվ տապանաքարեր, որոնց արձանագրություններից պարզվել է, որ հայերն այդտեղ ներկա են առնվազն 573-1890թթ: Այդպիսի մացառուտներով ծածկված հանգստարանում Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալյանցը 1840-ականների վերջին տեսել է Աղվանից վերջին թագավոր՝ Սևադայի որդի Սենեքերիմի տապանաքարը<sup>1</sup>, բայց Մակար Բարխուտարեանցի այնտեղ գտնվելու ժամանակ այն արդեն անհայտացած էր<sup>2</sup>: Մակար Բարխուտարեանցի հավաքած նյութերը փաստում են որ Դերբենտ-Մախաչկալա տարածաշրջաններում մինչ XIX դ. վերջերը պահպանվել էին հայոց ներկայությունը մատնանշող բազմաթիվ ավանդույթներ ու տեղանուններ և որ այդ տարածաշրջաններում ժամանակին գոյություն են ունեցել հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր:

Չնայած տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակների պարբերաբար կրկնվող կտրուկ շրջադարձերին, Անդրկովկասի հյուսիս արևելյան տարածքներում գոյատևում էին հայկական կիսանկախ իշխանություններ, այդ թվում՝ մասնավորապես Կուտկաշենի մելիքությունը<sup>3</sup>: Արտեմ Արարատսկին ակնատեսի աչքով հիշատակում է XVIII դ. վերջին այդ տարածքներում՝ Մուշկյուրի հովտում տեղաբաշխված հայկական տասնյակ ծաղկուն գյուղերի մասին<sup>4</sup>:

XIX դարի վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավերագրերի ու հուշերի հիման վրա արված ուսումնասիրությունները թույլ են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանի հայոց նկարագրի, դրանց ու արցախահայերի կապերի, ինչպես նաև իսլամ ընդունած հայերի քանակի մասին: Մասնավորապես, միայն XVIII դարի առաջին քառորդում, թուրք-պարսկական պատերազմներին ու լեզգիների իրար հաջորդող ասպատակությունների ու դրանց հետևած սովի հետևանքով Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսլամ են ընդունում ավելի քան տասն հազար

<sup>1</sup> Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանց, *Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան: Մասն Բ, Տիրիխ, 1858, էջ 420 / հետագայում՝ Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանց/*

<sup>2</sup> Մակար Բարխուտարեանց, *էջվ. աշխ.*, էջ 76-77

<sup>3</sup> В. Левиатов, *Очерки из истории Азербайджана в XVIII веке*, Баку, 1948, էջ 71-72

<sup>4</sup> Жизнь Артемия Араратского, Издание подготовил К. Н. Григорян при участии Р.Р. Орбели, М., 1981, էջ 128-130

հայեր<sup>1</sup>: 1725 թվականի փետրվարի 5-ին վրաց Վախթանգ VI թագավորին ուղղված մի նամակում հաղորդվում է, որ լեզգիների կողմից ամբողջովին թալանվել ու թուրքացվել են Շաքիի, Շամախու, Ղարաաուի, Մուշկյուրի ու հարակից տարածաշրջանների հայաբնակ գյուղերը: Դրանցից զերծ չի մնացել նաև Արցախը և «այս վերագրեալ երկրներեն թե եսիր, թե շորեղեն, թե բրինձ, թե ցորեն բոլորը տարան Դաղստան»<sup>2</sup>: Այստեղ խոսքը վերաբերում է 1711-12 թվականներին կատարված լեզգիների արշավանքին, որը հսկայական ավերածություններ պատճառեց տարածաշրջանին, այդ թվում Բարգուշատից Ջրաբերդ ու Գանձակ ընկած տարածքներին:

Այսպես թե այնպես, այդօրինակ հաճախակի կրկնվող իրադարձությունների հետևանքով Անդրկովկասի հյուսիս-արևելյան հայահոծ տարածաշրջաններում տեղի է ունեցել հայ բնակչության արտահոսքի, դավանափոխության կարծես անընդմեջ գործընթաց: Ղազար քահանա Հովսեփյանը իր հավաքած նյութերի հիման վրա պարզել է, որ միայն 1750-ական թթ. Շաքիի տարածաշրջանում բռնի դավանափոխ է արվել շուրջ 15000 ծուխ հայ, որի արդյունքում թուրքացվել է 29 հայկական գյուղ<sup>3</sup>: Շամախու ու Շաքիի տարածաշրջաններին հսկայական վնաս է հասցնում Նադիր Շահի արշավանքը՝ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ գերեվարվում ու տարվում են Պարսկաստան<sup>4</sup>:

Սակայն դրան զուգահեռ, հետևել են արցախահայոց տեղաշարժման նոր ալիքներ: Մասնավորապես, միայն 1790-ական թթ. Արցախից այդտեղ են վերաբնակվել շուրջ 12000 ծուխ հայ<sup>5</sup>: Նման պարբերաբար կրկնվող տեղաշարժերով փաստորեն կրկին բնակեցվել ու հայ բնակիչներով համալրվել են հայաթափման եզրին կանգնած բազմաթիվ բնակավայրեր ու այդ բոլոր դեպքերում էլ հոսքը հիմնականում կատարվել էր Արցախի գյուղերից: Այս իմաստով հատկանշական է Շաքիի տարածաշրջանում գտնվող

<sup>1</sup> Եսայի Հասան Ջալալյան, *Պատմություն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելեց յաշխարհին Ադրանց, Շուշի, 1830, էջ 28 /հետադարձ՝ Եսայի Հասան Ջալալյան/, ինչպես նաև՝ Левиатов Н., նշվ. աշխ., էջ 92*

<sup>2</sup> *Армяно-русское отношение в XVIII веке. Сборник документов, т. 2, часть 2., под редакцией Ашота Иоанисяна, Ер. 1967, стр. 230-233*

<sup>3</sup> Ղազար քահանա Հովսեփյան, *Անկարկներ ուտիացի եվ մահմեդական հայերի մասին, Թիֆլիզ, 1904, էջ 64-65*

<sup>4</sup> Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ., էջ 56*

<sup>5</sup> Բեկնազարեանց Ապրես, *«Գաղտնիք Ղարաբաղի»։ Առաջաբան և գրաբարից աշխարհաբարի թարգմանությունը Մակար վարդապետ Բարխուտարեանցի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 241-242, հետայսու՝ Գաղտնիք Ղարաբաղի/՝ Մակար Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 97, 104*

Սոցություն գյուղի օրինակը, որի մասին Եսայի Հասան Ջալալյանը գրում է «եւ ոմն Բարսեղ անուն քահանայ, որ էր բնիկ Ղարաբաղու երկրեն Խաչինու, և ի յագգէ մելիքաց էր՝ որ ընդ գնալոյ ժողովրդեանն ստքա ևս ազգաւ գնացեալ էին և զՍոքություն գեղն նորոգ շինեալ և բնակեալ»<sup>1</sup>: Անդրկովկասի հյուսիս արևելյան տարածաշրջաններում արցախյան ավանդույթների առկայության վերաբերյալ կան նաև պատմամշակութային մի շարք կարևոր դրսևորումներ, որոնք արտահայտված են լեզվաբարբառային, տարազի ու բնակարանային համալիրներում:

Մասնավորապես, Եսայի կաթողիկոսն իր ժամանակին Շիրվանի մասին գրել էր «և երկիրն էր բարելի և շեն և մարդաշատ, թե հայ ազգոք, որ ի Ղարաբաղի երկրեն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այս ավելի քան տեղականսն. և թէ այլ ազգօք որ բնիկ ի յերկրեն են»<sup>2</sup>: Մակար Բարխուտարեանցը, ընդհանրացնելով իր հավաքած տեղեկությունները, նշում է որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ և Ճառի և սոցա բոլոր գաւառների /բացի Կապադակից/ հայերեն ընդհանուր տիրոդ բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպես գիտենք, կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած և տեղափոխված են Արցախից: Սպահանից, Խոյից և Թեհրանից երկիրս գաղթողներն ևս պահպանուած են իւրեանց նախկին հայրենեաց գավառական հայերեն բարբառը»<sup>3</sup>: Տեղում արմատացած արցախյան մշակութային համալիրների վերաբերյալ XIX դ. սկզբներին շուշեցի ուղեգիր Տեր Բաղդասար Գասպարյանը գրել է, «հայք խոսին որպես ղարաբաղցիք և զգեստիւ հայոց հնոց կարճօրեն և տեսելամբ գեղեցիք»<sup>4</sup>: Նույնը ուղեգիրը գրել է նաև Շաքիի մասին<sup>5</sup>: Տեր Բաղդասար Գասպարյանը, հավանաբար նկատի ունենալով այդ տարածաշրջանների հայ բնակչության տվար լինելու հանգամանքը, Շիրվանից մինչև Դերբենտ համարել է Հայաստան<sup>6</sup>:

Այդ դեպքերից շուրջ հարյուր տարի անց Մակար Արքեպիսկոպոս Բարխուտարեանցը տեղում դեռևս մնացած հայերից ու մահմեդականու-

<sup>1</sup> Նույնը, էջ 33

<sup>2</sup> Եսայի Հասան Ջալալյան, էջ 32-33

<sup>3</sup> Մակար Բարխուտարեանց, *եջվ. աշխ.*, էջ 149-150

<sup>4</sup> Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, *Մաղկաքաղ աշխարհագրոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ.Քյուրտյան, Բանբեր Մատենդարանի 9, Եր., 1969, էջ 293*

<sup>5</sup> Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, *նույն տեղում*

<sup>6</sup> Նույնը, էջ 292-293

թյուն ընդունած հայերից հավաքած տեղեկություններից պարզել է, որ Խաչմաչում՝ երբեմնի Մուշկյուրի խոշորագույն բնակավայրերից մեկում, իշխողները ավանդաբար եղել են հայերը: Նա հիշատակում է տեղացիների մոտ մեծ հարգանքի արժանացած Հովսեփ բեկ Ջավադբեկյանի ու նրա նախնիների մասին ու ավելացնում որ տեղի հայերն արդեն խոսում էին տաճկերեն<sup>1</sup>:

Մակար Բարխուտարեանցը հայոց երբեմնի ներկայությունը վկայակոչող ավանդույթներ, լեգենդներ ու տեղանունների մասին տվյալներ է մատնանշում նաև Շաքիի ու դրանից հյուսիս գտնվող գավառների՝ մասնավորապես Ճառի վերաբերյալ<sup>2</sup>: Դրանք հստակորեն ցույց են տալիս, որ Շաքի-Ջաքաթալա-Բելոկան տարածաշրջանում մեծաքանակ էին հատկապես Արցախի Ջրաբերդ, Վարանդա ու Խաչեն գավառներից այդտեղ տեղափոխված վերաբնակիչները<sup>3</sup>: Ակնհայտ է, որ այս իրավիճակում խնդրո առարկա տարածաշրջանի մշակութային նկարագրում որոշակիորեն պետք է ընդգծվեր հայոց բնորոշ մշակութային համակարգն ու այդ թվում՝ գորգագործական մշակույթը:

Շիրվանի գորգագործական կենտրոններում արցախյան ավանդույթների ներկայության առումով մենք կարևորում ենք նաև Ելիզավետապոլի գավառի կազմում եղած Արեշի գավառը: Մինչ XX դարի սկզբները ամբողջովին հայաբնակ էին այդ գավառի գյուղերը՝ Քանդակը, Հավարիկը, Մամաթավան, Խանավաղը, Մազուրդուն, Խալդանն ու Արեշը, որոնք հայտնի էին որպես գորգագործական կենտրոններ<sup>4</sup>: Ու միանգամայն տրամաբանական է, երբ Մ. Բարխուտարեանցը նկարագրելով Շամախու ու մերձակա գավառների բնակչության գործունեության ոլորտներ, նշում է, որ նրանք բոլորը՝ այդ թվում նաև հայերը, վարում էին բազմաբնույթ տնտեսաձևեր, որոնց արտադրանքը վաճառահանվում էր մոտակա շուկաներում, մասնավորապես Ադղաշում: Այդօրինակ ապրանքների թվում մեծ տեղ է գրավել ուստայնանկության հումքն ու արտադրանքը՝ գորգերն ու կարպետները, անկողնապարկերն ու խուրջիները, բուրդն ու մանվածքը, ներկանյութերը և այլն<sup>5</sup>:

<sup>1</sup> Մ. Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 75-76

<sup>2</sup> Նույնը, էջ 134-140

<sup>3</sup> Նույնը, էջ 112-123

<sup>4</sup> Նույնը, էջ 141-143, Ա. Լուսենց, *Արեշի բարբառը*, Եր., 1982, էջ 5-7

<sup>5</sup> Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 144

Ընդհանրապես, այդ տարածաշրջաններ վերաբնակված արցախցիների ունեցած դերի ու նշանակության մասին պատկերացում կազմելու համար տիպական օրինակ կարող է ծառայի արցախյան գորգագործության նշանավոր կենտրոն Վարանդա գավառի Ճարտար գյուղը: Մակար Բարխուտարեանցի ներկայացրած տվյալներից պարզել ենք, որ այդտեղից XVII-XVIII դդ. արտագաղթածները բնակություն էին հաստատել Շամախու մերձակայքի Արփաուտ, Ղարա-Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերում<sup>1</sup>: Նշենք, որ Մակար Բարխուտարեանցը իր ուսումնասիրած տարածաշրջանների՝ ներկայիս Ադրբեջանի Ղուբայի, Կուսարի, Չաքաթալայի, Բելոկանի, Շաքիի, Շամախու, Գյուլչայի, Եվլախի շրջանների բնակավայրերի էթնիկական կազմի ու դրանց ծագումնաբանական մասին խոսելուց, որոշ դեպքերում մատնանշել է հայերի նախկին բնակության միայն գավառների անվանումները՝ հիմնականում Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա, Դիզակ<sup>2</sup>, իսկ ավելի շատ՝ ներկայացրել է կոնկրետ գյուղերի անվանումներ՝ ընդհանուր թվով երեսուներեք գյուղ: Ընդ որում, դրանցից քսանհինգը Վարանդայի ու Դիզակի գյուղերն են՝ Ավետարանոցը, Սոսը, Հաղորտին, Մուշկապատը, Աշանը, Գիշին, Դոնավարզը, Ծովատեղը, Մամնան, Քերթը, Ղավախանը, Թաղավարդը, Հերիերը, Շոշը, Ննգին, Հացին ու վերն արդեն նշված Ճարտարը /բուրը՝ Վարանդա/, Հաղրութը, Տողը, Տումին, Թաղերը, Հարարը, Շեխերը, Դրախտիկը, Ծամձորը /բուրը՝ Դիզակ/: Ջրաբերդի ու Խաչենի գյուղերից հիշատակվում են Խնածախը, Բալլուջան, Դաշբուլաղը, Խանձքը, Վանքը, Նախիջևանիկը, Առաջածորը, Խնձրիստանը<sup>3</sup>:

Վերոհիշյալ Արփաուտ, Ղարա-Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերի հետ միասին, Մակար Բարխուտարեանցը տեղեկությունների համաձայն Վարանդայի ու Դիզակի նշված գյուղերից տեղափոխվածները հաստատվել են Գիրկ, Ազայի շեն, Ղալաքյա, Խանի շեն, Փախրաքյուշ, Մեյսարի, Աղբուլաղ, Բուզվանդ, Քովլուջ, Դայմա դաղ, Ավանաշեն, Ռուջան, Վանքաշեն գյուղերը<sup>4</sup>: Հարկ ենք

<sup>1</sup> Նույնը, էջ 97, 104, 107: *Խնդրո առարկա հարցերի մասին տես նաև՝ Քաջբերունի, Բազմամիլիոն, ժառանգություն Վավերագրեր-2/կազմողներ Ա. Ղազիյան, Ա. Քալանթարյան/, Եր., 2001, էջ 76*

<sup>2</sup> Մ. Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 89-134

<sup>3</sup> Նույնը, էջ 89-110

<sup>4</sup> Նույն տեղում

համարում, ասել, որ Արցախի մեր հիշատակած բոլոր բնակավայրերի մեծ մասը գորգագործական ավանդույթներով հայտնի գյուղեր են:

Բայց այդ այդ ամենը մշակութային ներգործության միայն ակնհայտ գործոններ են: Կարծում ենք, որ հիշատակված տարածաշրջանի գորգագործական կենտրոններում արմատացած գորգերի ու կարպետների տիպերի ու դրանց գեղագարդման համակարգում, կատարման տեխնիկատեխնոլոգիական չափանիշներում արցախյան ավանդույթների արմատավորման, ու մանավանդ, հետագա զարգացումների հարցում, առանձնահատուկ է իսլամ ընդունած և ազգային լեզուն կորցրած հայերի դերը: Հայտնի է, որ XVII-XX դդ. խնդրո առարկա տարածաշրջաններում պարբերաբար եղել են զանգվածային կրոնափոխության դեպքեր, այդ թվում 1918-20 թթ. երբ Շամախու, Շաքիի ու Գյոքչայի գավառների 52 գյուղից մասնակիորեն փրկվեցին միայն տասը՝ Միրզաբեկլուն, Խոշկաշենը, Նիժը, Ճալեթը, Թուսիկը, Վարդաշենը, Մեծ Սոգուլթուն, Փոքր Սոգուլթուն, Գիրկը, Չոռլուն<sup>1</sup>: Դրանց շնորհիվ շատ ավելի դյուրին են դառնում էթնամշակութային այլ միջավայրում հայոց մշակութային ավանդույթների տեղայնացման, էթնիկական այլ հանրությունների կողմից դրա յուրացման գործընթացները: Դավանափոխության հետ միասին, թեև աստիճանաբար տեղի է ունենում նաև մայրենի լեզվի կորուստ, բայց այնուամենայնիվ, դա չի ենթադրում տնտեսամշակութային գործունեության համակարգի փոփոխություն, ուստի այն ամենն ինչ ունենում է դավանափոխ հանրությո՞ւն, մեխանիկորեն դառնում է օտար հանրությո՞ւն մշակութային սեփականություն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բռնի դավանափոխության պիքները սկիզբ են առել առնվազն XIV-XV դարերից, պետք է ենթադրել, որ արդեն XVI-XVII դարերում դավանափոխ հայերի սերունդները դիտվում էին որպես մահմեդական ցեղեր՝ լեզվի, թաթար, պարսիկ և այլն, որոնք շարունակում էին պահպանել ու զարգացնել իրենց նախնիներին բնորոշ զբաղմունքներն ու սովորությունները<sup>2</sup>:

Պատմամշակութային այսօրինակ գործընթացները, ինչպես նկատում ենք, զգալիորեն բարդացնում են ծագումնաբանական հետազոտությունների իրականացումն, ու միաժամանակ, հնարավորություն են տալիս

<sup>1</sup>Геноцид армян в Османской империи: Сборник документов о материалах/ под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1982, стр. 538-539

<sup>2</sup>Մ. Բարխուտարեանց, *նշված աշխ.*, էջ 22

ցանկության դեպքում յուրացնել իրականում այլ էթնիկական հանրությունների ստեղծած մշակութային ժառանգությունը: Բարեբախտաբար, 1920-30-ական թթ. հրատարակված տեղեկատվական ու տնտեսագիտական բնույթի ուսումնասիրություններում նշվել են այդ տարածաշրջանների հայոց գորգագործական մշակույթի նկարագրին վերաբերող կոնկրետ տվյալներ: Մասնավորապես Մ. Իսահրը՝ Կովկասում գորգագործության զարգացման ասպարեզում այդ հայտնի մասնագետը գրում է, որ մինչև 1920-ական թվականների սկիզբը զանգվածային գորգագործության կենտրոններ էին Կարամարյանի ենթաշրջանի հայկական գյուղերը՝ Կիրկը, Ռուշանը, Ուշտալը, Սոլթանքենդը, և որ մեր համար հատկապես կարևոր է, շեշտում է, որ նրանց արտադրանքը որակով ու տեխնիկատեխնոլոգիական առումներով նույնն է, ինչ որ որցախյանը<sup>1</sup>:

Անդրադառնալով վերոհիշյալ տարածաշրջանների գորգագործական կենտրոններում տարածում գտած արցախյան ծագումով գորգերի խմբերին ու առանձին տիպերին, պետք է նշել, որ դրանք աչքի են ընկնում բազմազանությամբ և կոնկրետ ուղղվածությամբ:

Դերբենտի գորգագործական կենտրոններում խոսքն առաջին հերթին վերաբերում է «Զրաբերդ» հորինվածքի տարբերակներով գեղազարդված գորգերին /այդ թվում՝ այսպես կոչված «Զեյխուր» տիպին/, «Գետաշեն», «Որոտան» և «Ամարաս» տիպի գորգերին: Շիրվանի ու Շաքիի տարածաշրջանների գորգագործական կենտրոնների դեպքում այդ ցանկը զգալիորեն մեծ է ու հիշատակվածների հետ միասին ներառում է նաև «Ճարտար», «Հաղպատ», «Զրաբերդ», «Ուտիք», «Ոսկանապատ», «Բանանց», «Փյունիկ», «Միսական», «Գանձակ» և մի քանի այլ տիպեր: Ինչպես Դերբենտի, այնպես էլ Շիրվանի գորգագործական կենտրոններում, անշուշտ առկա են նաև տեղական առանձնահատկություններ, որոնք մեծամասամբ վերաբերում են գորգ գործելու տեխնոլոգիաներին: Շիրվանի գորգագործական կենտրոններում, օրինակ, գործել են նաև բարձր խտությամբ և բամբակյա միջնաթելով գորգեր, իսկ Դերբենտի գորգագործական կենտրոններում տարածում ուներ մեկ միջնաթելով գործելու ավանդույթը:

*«Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին»,  
Ստեփանակերտ, 2009, պրակ 1, էջ 256-258*

<sup>1</sup> М. Исаев, *Ковровое производство Закавказья, Тифлис, 1932, стр. 121*



## ՀԱՐԹԱԿԱՐՈՎ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՍԻՆ

Հայոց ասեղնագործական մշակույթի համակարգում ասեղնագործելու առավել տարածված եղանակներից մեկը հարթակար եղանակն է, որի հիմնական առանձնահատկությունը ասեղնագործվող մակերեսը տվյալ նախշին համապատասխան գույնի թելերով ծածկելն էր: Թելերի տեսակների ու ասեղնագործվող առարկայի, դրա գործածական նշանակության եւ այլ հանգամանքներից կախված, ասեղնագործելու այդ եղանակում կարող են դրսևորվել որոշակի առանձնահատկություններ: Հայոց մեջ լայնորեն տարածված կիրառական-գեղագարդման արվեստի այս ոլորտը ավանդական էր նաեւ Արցախում: Ասեղնագործ զարդանախշերով հարդարվում էր նաեւ ավանդական տարազը, մասնավորապես վերնախավի տոնական տարազը: Այս առումով հանրահայտ են Շուշիի հայուհիների վերնագգեստն ու գոտին, որոնք բնորոշվում էին հարթակարով արված ոսկեթել ու մետաքսաթել ճոխ ասեղնագործություններով<sup>1</sup>:

Արցախի գործվածքի վերաբերյալ մեզ հայտնի գրավոր վաղագույն վկայությունը Մովսես Կաղանկատվացունն է: 680 թվականին կատարված Աղվանից Տիվանշիր իշխանի սպանության առիթով պատմիչը հիշատակել է Արցախի լեռնային բնակավայրերից մեկում, դավադիրների տնից բռնագրավված «մետաքսահյուս ու կերպաս դիպակների ու գունագեղ կարպետների» մասին<sup>2</sup>: Ավելի ուշ ասեղնագործելու մասին առավել որոշակի տեղեկություններ է հաղորդում Կիրակոս Գանձակեցին, պատմելով, որ Խաչենի իշխաններից մեկի՝ Վախթանգ Հաթերքեցու կին **Արգուխաթունը** իր աղջիկների հետ միասին 1191-1214 թթ. **Գետիկի, Հաղբատի, Մակարավանքի** եւ **Դաղիվանքի** խորանների համար պատրաստել են գորգագոր-

<sup>1</sup> Տե՛ս Н. Авакян, *Народная одежда армян Арцаха в XIX-начале XX в.* - "Хозяйство и материальная культура народов Кавказа в XIX -XX вв" М., 1971, էջ 215

<sup>2</sup> Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, *Պատմություն Աղվանից աշխարհի*, թարգմ., առաջաբանը եւ ծանոթությունը. Վարազ Առաքելյանի, Եր., 1969, էջ 175: Ի դեպ, ձգտելով գորգագործական մշակույթից գերծ պահել հայերին ու Հայաստանը, Լ. Քերիմովը հիշատակելով Կաղանկատվացու այս տեղեկությունը, չի նշել Արցախ տեղանունը եւ գրել է. «Ադրբեջանի հյուսիսային մասերում պատրաստում էին մետաքսե գործվածք եւ գույնզգույն գորգեր» տես՝ Լ. Керимов, *Азербайджанский ковер*, h. 2, 1983, էջ 12-13

ծական տեխնիկայով եւ ասեղնակարով արված վարագույրներ ու զանազան ծածկոցներ<sup>1</sup>: Այդ ամենը տեսած պատմիչը դրանք ներկայացնում է իբրեւ մեծ վարպետությամբ արված ու հարուստ գեղագարդմամբ բնորոշվող գործեր: Հայտնի է, որ, ասեղնագործելը, եւ ընդհանրապես, ոստայնանկությամբ զբաղվելը հատուկ է եղել վերնախավին պատկանող կանանց ու աղջիկներին, այնպես որ, Վախթանգ իշխանի գերդաստանը այդ առումով եզակի չէր<sup>2</sup>: Համենայնդեպս, ԺԹ դարի վերջերին գրի առած ազգագրական տվյալները Երվանդ Լալայանին հնարավորություն են տվել գրելու, որ մեկիքների կանայք ու աղջիկները քիչ էին զբաղվում տան գործերով, նրանք **«միայն մետաքսից թեշիկով թել էին մանում, ասեղնագործում, քսակ ու այլ ձեռագործներ շինում»**<sup>3</sup>:

ԺԹ դ. երկրորդ կեսին հավաքված ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ այլ զբաղմունքների թվում Արցախում կանանց ու աղջիկների համար համատարած զբաղմունք էր նաեւ ասեղնագործությունը: Այդ ժամանակաշրջանում դրա ուսուցումը իրականացվում էր հատուկ այդ նպատակով հրատարակված Եղիսաբեթ Պատկանյանի, Խ. Թախտաջյանի, շուշեցի հայտնի ասեղնագործուհի Մարգարիտ Ալեքսանյանի ուսումնական ձեռնարկներով: Ընդ որում, դա իրականացվում էր ոչ միայն Շուշիում, այլ նաեւ Արցախի խոշոր բնակավայրերում եղած տեղական դպրոցներում: Մասնավորապես հայտնի է, օրինակ, որ 1880-ական թթ. ասեղնագործությունը ուսուցվում էր Արցախի Ջրաբերդ գավառի Կարաչինար գյուղի դպրոցում<sup>4</sup>: Անշուշտ, մասնագիտական նրբությունների առումով այն ավելի զարգացած էր Արցախի կենտրոն Շուշիում, ուր ԺԹ դարի վերջին ու հաջորդ դարի սկզբին հայտնի ասեղնագործուհիների համբավ ունեին Զարուհի Մախմուրյանը, Ոսկի Թունիբեկյանը, նշանավոր ոսկերիչ ու մանրանկարիչ Գրիգոր Բադամյանցի քույր Շուշանիկը:

<sup>1</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, **Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, 215 - 216**

<sup>2</sup> Այս կապակցությամբ ենթադրում ենք, որ գորգարվեստը ուսումնասիրողների շրջանին քաջ հայտնի «Մինա Խանում» կոչված զարդանախշ-վարդակի անվանումն էլ կապված է ԺԳ դարում ապրած Սյունյաց նշանավոր իշխան Տարսայիճ Օրբելյանի (իշխել է 1273-1290 թթ.) տիկնոջ Խաչենի իշխան Հասան Ջալալի դուստր Մինայի անվան հետ

<sup>3</sup> Եր. Լալայան, **Երկեր, հտ. 2, Եր., 1988, էջ 249**

<sup>4</sup> Տե՛ս Կ. Կառամանյան. **Книга очага: земля зовет, 2, Եր., 2004, էջ 238**

Շուշանիկի 1906թ. հարթակարով արված աշխատանքներից մեկը՝ արծվի պատկերով պատի զարդը պահվում Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանում<sup>1</sup>:

Ի դարի 70-90-ական թթ. Արցախում իրականացված ազգագրական դաշտային հետազոտությունները ցույց են տվել, որ հարթակար ու կտրտովի եղանակով արված ու ժամանակակից մտահղացումներով գեղագարդված ասեղնագործ պատի զարդերը դեռևս լայն տեղ ունենին բնակարանի ներքնատեսքի հարդարանքում: Միաժամանակ, կարելի է նկատի ունենալ, որ ինչպես գորգագործական մշակույթի, բարբառային ու տարագային համալիրների դեպքում է, այս պարագային էս արցախյան ավանդույթները համահունչ են Զանգեզուրի, Տավուշի, Գողթան գավառի ու Լոռվա ավանդույթներին:

Չնայած Արցախի ասեղնագործական մշակույթին այս կամ այն չափով անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, մասնավորապես Մ.Ղազարյանն իր «Արցախի գանձերը» աշխատության մեջ, այնուամենայնիվ, դրա ամբողջական պատմամշակութային բնութագիրը դեռևս արված չէ:

Սույն հաղորդմամբ, մենք փորձում ենք փոքր-ինչ լրացնել պակասն ու մասնագիտական շրջաններին ներկայացնել ուշ միջնադարի արցախյան ասեղնագործական մշակույթին վերաբերող ու հարթակար եղանակով արված մի աշխատանք:

Այն ունի բնդարձակ նվիրատվական թվակիր հիշատակարան՝ **«Յիշատակ է թագս ի Մելիք Բեգլարի կողակից Մարիամեայ ի դուռն Հոռեկս վանքի. ՌՄԽԴ»**<sup>2</sup>: Մ. Ղազարյանը վերը հիշատակված աշխատության մեջ ներկայացրել է այս թագը, սակայն հիշատակարանի վերջում թյուրիմացաբար տեղ են գտել «ի վայելումն Գեուրգ արքեպիսկոպոսի» բառերը<sup>3</sup>: 1795 (ԴՄԽԳ) թվականին ասեղնագործված այս նվիրատվության հեղինակ Մարիամը Մելիք Շահնագար 2-րդի՝ Վարանդայի ազդեցիկ մելիքի դուստրն էր<sup>4</sup>: Իսկ Մելիք Բեգլարը Գյուլիստանի Մելիք Աբովի ավագ որդին էր,

<sup>1</sup> Այս ամենի մասին տես՝ Մ.Ղազարյան, **Արցախի արվեստի գանձերը**, Անթիլիաս, 1993, էջ 85 - 93, նկ 158

<sup>2</sup> Մ.Ղազարյան, **Արցախի արվեստի գանձերը**, էջ 90

<sup>3</sup> Արցախի արվեստի գանձերը, Անթիլիաս, 1993, էջ 89-90

<sup>4</sup> Եր. Լալայան, **Գանձակի գավառ** (Նյութեր սպագա ուսումնասիրության համար).- Երկեր հինգ հատորով, հատ. 2, Եր., 1988, էջ 223, Բա ֆֆի, **Խամսայի մելիքություններ**, Երկերի ժողովածու, հատ. 9, Եր., 1987, էջ 470 - 472

Մելիք Բեգլար 2-րդը, որը հոր մահից հետո, 1775 թվականին ժառանգել էր այդ գավառի մելիքական իշխանությունը: Մելիք Բեգլար 2-րդը շատ կարճ ժամանակ է վարել իշխանությունը՝ 1781 թվականին, երիտասարդ տարիքում նա զոհվել է լեզգիների դեմ մղված մարտերից մեկում<sup>1</sup>:

Ավանդություններից հայտնի է, որ Մելիք Բեգլար 2-րդը հավատարիմ չի եղել իր կնոջն ու արժանացած է եղել նրա ցասումին: Մելիք Շահնազարի աղջիկը ամուսնու ծառաներից մեկի ձեռքով սպանել էր տվել նրա սիրուհուն, իսկ դրա հաջորդ օրն էլ գավառի սահմաններում լեզգիների դեմ տեղի ունեցած ճակատամարտում դավադրաբար՝ նույն ծառայի արձակած գնդակով սպանվել է երիտասարդ, բայց արդեն մեծահամբավ Մելիք Բեգլար 2-րդը<sup>2</sup>: Ըստ էության, Մարիամը ամուսնու եղերական մահվանից 14 տարի անց, իրեն համակած մեղքի զգացումից թողություն ստանալու համար էր կատարել այդ երեւելի նվիրատվությունը: Նրա մասին մեզ ավելին հայտնի չէ, սակայն հայտնի է, որ Արցախի մելիքությունների արտաքին կապերն ու հարաբերություններն այդ ժամանակներում հատկապես սահմանափակ էին՝ տարածաշրջանն անընդհատ ենթարկվում էր լեզգիների հարձակումներին, իսկ մյուս կողմից առկա էին Շուշիի խանի դավադրությունները: Այդպիսի իրավիճակը թույլ է տալիս եզրակացնել, որ խնդրո առարկա թագը ստեղծվել է հենց Մելիք Բեգլարյանների Թալիշ գյուղում, որի մերձակայքում էլ գտնվում է Հոռեկա վանքը: Ասեղնագործությունը բնորոշվում է բարձր ու նրբաճաշակ մակարդակով, գեղազարդման ավանդական սկզբունքների իմացությամբ ու կատարման վարպետությամբ: Այն գործնականորեն փաստում է վերնախավի կանանց շրջանում գործվածքով, մասնավորապես ասեղնակարով զբաղվելու ավանդույթը, որն ինչպես ասվեց, կար Արցախում մինչ այդ, ու որի շարունակման մասին ԺԹ դարի վերջերին նշել էր Երվանդ Լալայանը: Թագի գեղազարդման համակարգն աչքի է ընկնում հարստությամբ ու բովանդակային հագեցվածությամբ: Թագի մի կողմում ասեղնագործված է խաչը, մյուսին՝ Աստվածամայրը Մանուկ Հիսուսի հետ: Երկու պատկերն էլ ամփոփված են ճյուղատարած, ճոխ ծաղկանախշերով լրացված կենաց ծառի կենտրոնում՝ հատուկ ձեւավորված ձվաձեւ շրջանակում: Գեղազարդումը կատար-

<sup>1</sup> *Տե՛ս* А. Иоаннисян, *Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия*, Ер., 1990, էջ 59

<sup>2</sup> *Սյու մասին տես՝* Եր. Լալայան, *նշվ. աշխ.*, էջ 223 - 224

ված է բրդե բարակ մանված թելերով, մետաքսաթելով ու նաև ոսկեթելով: Խաչի ու եզրագոտու ներքին եզրի հարդարաման համար օգտագործված են նաև մարգարիտներ: Գունային երանգները մեղմ ու ներդաշնակ են, գեղազարդման մանրամասներն էլ՝ այս պարագայում վարդակներով գեղազարդված գոտին, միանգամայն համահունչ են հիմնական հորինվածքներին, ընդ որում, եզրագոտու վարդերը հարդարված են գունավոր ապակե ակերով: Հիշատակարանը ասեղնագործված է ոսկեթելով, թագի ստորին մասում հատուկ այդ նպատակով առանձնացված շրջանակում:

Մանրամասնությունների մեջ չխորանալով, հարկ ենք համարում հատուկ շեշտել խոշոր վարդակները, ձվաձև շրջանակի բեկբեկուն տերեւանախշ երիզն ու ընձյուղները, որոնք բնորոշ են արցախ-այունիքյան ասեղնագործական մշակույթին ու մասնավորապես ԺԹ-Ի դարերի կտրտովի ասեղնագործությամբ արված պատի զարդերին: Ուշագրավ են նաև կենաց ծառի գագաթին պատկերված գույգ կակաչները: Այդ նախշը հանդիպում է նաև ԺԷ-ԺԸ դդ. վերաբերող այսպես կոչված «օտտոմանյան» ասեղնագործությունների գեղազարդման համակարգում եւ նույնիսկ համարվում է նրանց բնորոշիչներից մեկը: Ինքնին սա բավականին նշանակալից երևույթ է, ու մեր կարծիքով, ինչպես որ արցախ-այունիքյան գորգագործական մշակույթի ցայտուն արտահայտությունների առկայության դեպքում է, դա նույնպես առնչվում է ԺԵ-ԺԷ դարերում տեղի ունեցած տեղաշարժերին, որոնց ընթացքում Փոքր Ասիայի արեւմտյան մասերում հաստատվեցին Արեւելյան Հայաստանից տեղափոխված հազարավոր հայ ընտանիքներ:

Այդ առումով, ըստ երևույթին, հատկապես զգալի էին ԺԶ-ԺԷ դդ թուրք-պարսկական երկարամյա պատերազմների ընթացքում իրականացված բռնի տեղահանումները<sup>1</sup>: Վերաբնակիչների մի ստվար մասն էլ այդտեղ էր հաստատվել Պարսկաստանից՝ Շահ Աբաս 1-ինի կազմակերպած բռնագաղթվածների թվից: Շատ ուշագրավ է, որ այդ իրադարձություններին ականատես սկզբնաղբյուրն այդ ամենի մասին տալիս է նաև իր բացատրությունը, ըստ որի դա պայմանավորված էր «արհեստավորների կարիքով, քանի որ իրենք ոչ մի մասնագիտության չեն տիրապետում ու իրենց հսկայական տիրույթներում ոչ մի բան իրենց ստեղծածը չի:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, Եր., 1964, էջ 248 - 260

Թուրքերը կոպիտ են ու անտաշ, ու հետեւաբար, հեռու հոգեւոր կյանքից»<sup>1</sup>: Կոնկրետ Արցախից, Սյունիքից ու Ղարադաղից Փոքր Ասիայի ծայր արեւմտյան տարածքներ՝ Դենիզլի, Այդն, Յոդեմիշ, Մանիսա, Սպարտա տեղափոխվածների մասին տեղեկացնում է Հակոբ Քոսյանը<sup>2</sup>:

Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը նշում է, որ ինքը 1878-1879 թվականներին Նիկոմեդիայի, Չմիուռնիայի եւ մերձակա բնակավայրերի հին գերեզմանոցների տապանաքարերին բազմիցս տեսել ու գրի է առել ննջեցյալների ծննդավայրերին վերաբերող սյունիք-արցախյան տեղանուններ՝ Մեդրի, Ղափան, Կալեր, Կճողուտ, Հադորտի, Հացի, Հադրութ եւ այլն: Ուշագրավ է հատկապես այն, որ դեռեւս ԺԹ դարի վերջերին Չմիուռնիայի Դենիզլի գյուղի տարեց պատավներն իրար հետ խոսում էին Ղարաբաղի բարբառով<sup>3</sup>: Այս ամենին հավելենք, որ ժամանակին Հրաչյա Աճառյանը պարզել էր, որ Բուրդուրի ու Սպարտայի հայերի խոսակցական լեզուն համապատասխանում է Ղարաբաղի բարբառին, որ այդ տարածքների հայաբնակ վայրերում պահպանվել էր անկորուստ<sup>4</sup>:

Ասվածի վկայությունն են Արեւելյան Հայաստանի՝ Արցախի, Սյունիքի, Լոռվա, Վասպուրականի գորգագործական կենտրոններին վերաբերող այն բազմաթիվ ավանդույթները, որոնք առկա են փոքրասիական գորգագործական կենտրոններում: Դրա ցայտուն արտահայտություններից մեկը փոքրասիական գորգերի **Լադիկ** տիպն է, որի նախատիպերից մեկը կարող ենք համարել Աղվանից Ներսես Կաթողիկոսի հետ առնչվող 1731 թ. գործված գորգը, որը պահվում է Երուսաղեմի սուրբ Հակոբ եկեղեցու թանգարանում: Այն ունի հայատառ, թվակիր արձանագրություն որում ասվում է՝ **«յիշեցեք մաքրափայլ յաղօթս ձեր Ներսէս մեղապարտ կաթողիկոս Աղուանից է պատճառ սմին (արված) լոյս ընկալ Չարեքու սբ անապատին ՌՃՁ թվին»**<sup>5</sup>: Ինչպես նկատել են ուսումնասիրողները, մենաստաններում եւ կուսանոցներում ասեղնագործությամբ ու գորգագործությամբ զբաղվելը

<sup>1</sup> Տե՛ս նաև Չ. Զուլպյան, *Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եւրոպացի հեղինակների, XIII-XVIII: Գիրք Ա., Քաղաքական պատմություն, Եր., 1990, էջ 110*

<sup>2</sup> Տե՛ս Կոնկր. Վ. -Քոսեան, *Հայք ի Չմիուռնիա եւ ի շրջակայս, հատ. Ա, Բ, Վիեննա, 1899, էջ 9, 13, 14, 25- 27, 31- 32, 66- 67, 79-80, 94 - 96, 141, 152-153 եւ այլն*

<sup>3</sup> *Գաղտնիք Ղարաբաղի, հեղինակություն Ապրեսի Բեկնազարեանց, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 242:*

<sup>4</sup> Տե՛ս նաև Աճառյան, *Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 61, նույնը՝ Հայոց լեզվի պատմություն, հ.2, Եր., 1952, էջ 332*

<sup>5</sup> Տե՛ս նաև Քուրտյան, *Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 68, Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Եր., 1981, էջ 128 -129*

եղել է ընդունված երեւոյթ<sup>1</sup> եւ այս գորգն էլ փաստորեն դրա վկայութիւններէից մեկն է: Ըստ էության, այդ հաստատութիւններում, ինչպէս որ իշխանական տներին ու վանական խոշոր համալիրներին կից եղած գործատուն-արհեստանոցներում էր, կային նաեւ ասեղնագործութիւնների ու գորգերի համար հատուկ գծանկարներ կազմող մասնագետներ եւ պատրաստում էին ինչպէս սեփական կարիքների, այնպէս էլ վաճառքի համար նախատեսված գործվածքներ<sup>2</sup>:

Այս գորգի կենտրոնական դաշտի ծայրերում, մեկ լայնակի շարքով պատկերված են կենաց ծառի տեսքով խոշոր բուսանախշեր, որոնց գագաթներն ավարտվում են մեզ ծանոթ **կակաչ** նախշով: Հռոեկա վանքի հարեւանությամբ գտնվող Չարեքա անապատում, Մարիամի ասեղնագործած թագից 64 տարի առաջ ստեղծված այս գորգի գեղագարդման համակարգում կարելորված **կակաչ** նախշն, անշուշտ, մատնանշում է արցախյան ասեղնագործութիւնների մեջ դրա հնամենի ավանդույթներ ունենալու փաստը: Ընդհանրապէս, թագի ասեղնագործ վարդակներն ու ճոխ բուսանախշերը բնորոշ էին տարածաշրջանի մշակութային կենտրոններին:

Այս առումով մենք կարելորում ենք եւս մեկ պատմամշամութային արժեք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գանձատանը պահվող 1771 թվականին Ագուլիսում ստեղծված մետաքսե վարագույրը: Այն ներկայացնում է Աստվածամոր թագադրման տեսարանը կենտրոնում Աստվածամայրն է՝ Հիսուսի հետ միասին, իսկ նրա աջ ու ահյակ կողմերում՝ Գրիգոր Լուսավորիչը եւ Հովհաննէս Մկրտիչը: Վերին մասում երկու հրեշտակ սավառնելով բերում են թագը: Վարագույրի անկյուններում, իրենց խորհրդանշաններով հանդերձ պատկերված են գահավորակներին բազմած չորս ավետարանիչները: Այդ ամենը երիզված է բուսածաղկային նախշերով արված չորս զոտիով, որոնք աչքի են ընկնում գեղագարդման մանրամասների ճոխությամբ: Դա վերաբերում է հատկապէս կենտրոնական լայն գոտուն: Այն ալիքաձեւ կապույտ գծանախշով բաժանված է երկու մասի ու գեղագարդված է ճյուղատարած ծաղկանախշ հորինվածքներով, ընդ որում, դրանք պարունակում են վեց թերթանի վարդակներ ու բացված վարդեր,

<sup>1</sup> Ս.Ռավթյան, *անդ*, էջ 77-78

<sup>2</sup> Բտալիայի կուսանոցներում, *օրինակ, լայն տարածում ունէր վաճառքի համար ժանյակներ գործելը, տես՝ “Энциклопедия мирового искусства. Антиквариат, самая полная история антиквариата”. Генеральный редактор Хуон Меллалю, М осква, 2003, էջ 187*

որոնք նման են թագին ասեղնագործված վարդակներին: Աստվածամոր աջ եւ ահյակ կողմերի ձվաձեւ շրջանակներում ասեղնագործված է հայատառ ընդարձակ հիշատակարան՝ «Յիշատակ է Ագուլեցի Միմիոնի կողակից Անթառամին եւ Ոսկանի կողակից Հոիփսիմէին, որոյն Մեհրապին, քեռն Գայիեանին կողակցոյն Եղեսաբեթին, որոյն Գրիգորին, դստերն Հերիքնագին .... Նորին Պետրոսին ի Դոն Գողթնեաց ՄԲ Թովմայի Առաքելոյն թուին հայոց ՌՄԻ»<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ, այս երկու ասեղնագործությունների գեղագարդման մանրամասներում առկա են ոճական ու տեխնոլոգիական միեւնույն հատկանիշները, իսկ վարագույրի Ագուլիսում կատարված լինելն էլ կարելու է մի քանի առումներով: Նախ, հայտնի են Արցախ-Սյունիք ու Գողթան գավառ տարածաշրջանների պատմամշակութային համալիրների սերտ աղերսները, իսկ այնուհետեւ այն, որ ագուլեցիների մի սովոր գանգված արդեն այդ ժամանակներից ի վեր հաստատվել էր Արցախում ու արեւելյան Այսրկովկասի մի շարք վայրերում՝ մասնավորապէս Զաքաթալայում<sup>2</sup>:

ԺԸ դարին վերաբերող հարթակար ասեղնագործության այս երկու նմուշները մեզ հնարավորություն են տալիս որոշակի պարզաբանումներ կատարել ԺԷ-ԺԸ դարերին վերաբերող ու նույն տեխնոլոգիայով արված պատի զարդերի մի յուրահատուկ խմբի ծագումնաբանական հարցերի ասպարեզում: Խոսքը վերաբերում է «կովկասյան ասեղնագործություն» ընդհանրացված անունով տարբերակված պատի ասեղնագործ զարդերի մի խմբի, որը բնորոշվում է արցախ-սյունիքյան վիշապագորգերի **Գուհար** ենթախմբին պատկանող գորգերի գեղագարդման համակարգերի մանրամասներով ու մասնագետների մի մասի կարծիքով էլ դրանք կատարվել են Արցախում:

Գովկասյան վիշապագորգերի ծագումնաբանության վերաբերյալ մեր տեսակետները հայտնի են՝ դրանց ծագման ու տարածման ամենահավանական կենտրոնները մենք համարում ենք Արցախի ու Սյունիքի գորգագործական կենտրոնները<sup>3</sup>: Ասվածը վերաբերում է նաեւ **Գուհար** ենթա-

<sup>1</sup>Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Նոր Վեհարան, գույքահամար՝ թիվ 63: Կատարող: Հայ եկեղեցու գանձերը: Ցուցահանդես «Մոսկվայի Կրեմլ» պետական թանգարանում, հուլիս - օգոստոս, 1997, էջ 124

<sup>2</sup> Տէ՛ս Պ. Չոբանյան, **Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին**, Ս.Էջմիածին, 2006, էջ 57- 58

<sup>3</sup> Այս մասին տե՛ս Ա.Պողոսեան, **Վիշապագորգերի ծագումնաբանության ու տարածման արեւելների հարցի շուրջ**- «Հանդէս ամսօրեայ», Վիեննա - Երևան, 2004, թիվ 1-12, էջ 367- 415, Հայաստանում



խմբի գորգերին՝ մասնավորապես, 1700 թվականին գործված Գուհար գորգը մեր կարծիքով ստեղծվել է Վարանդա-Միսական գավառների գորգագործական կենտրոններում<sup>1</sup>:

Հայատառ արձանագրությամբ ու ծագումնաբանության հետ կապված հստակ տվյալներ ունեցող վերոհիշյալ երկու ասեղնագործությունները առարկայորեն վկայում են առ այն, որ ուշ միջնադարում Արցախ-Սյունիքի մշակութային կենտրոններում գոյություն ունեին հարթակար ասեղնագործության զարգացած ավանդույթներ:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, ակնհայտ է դառնում, որ հարթակարով արված ու տարածաշրջանին բնորոշ վիշապագորգերի գեղագարդման համակարգի մանրամասներով գեղագարդված պատի զարդերն էլ ստեղծվել են այդ նույն տարածաշրջանում:

Հարթակար ասեղնակարով արված ու գորգերին բնորոշ գեղագարդման համակարգով ասեղնագործված պատի զարդերի տարածման արեալները ներառում են նաև հյուսիս արեւելյան Այսրկովկասում՝ Շիրվանի, Շաքիի, Ղուբայի, Դերբենտի տարածաշրջանները: Դրանց գեղագարդման համակարգում, ի շարս վերն ասված գուհարյան հորինվածքի տարբերակների ու այդ ենթախմբին բնորոշ զարդանախշերի, լայն տեղ են գրավում ընդհանրապես գորգերին բնորոշ զարդանախշերը: Ընդ որում, այս դեպքում նույնպես չափազանց ակնառու են արցախ-սյունիքյան ավանդույթները:

Ինչպես փոքրասիական մշակութային կենտրոնների առումով էր, այստեղ եւս առկա է պատմամշակութային փոխշփումների գործոնը: Այս դեպքում, սակայն, հարկ է նկատի ունենալ, որ այսրկովկասյան վերոհիշյալ տարածաշրջաններն ընդհանրապես գտնվել են Արցախի ու Սյունիքի պատմաազգագրական ազդեցության ոլորտում: Չնայած տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակների պարբերաբար կրկնվող կտրուկ շրջադարձերին, այդ տարածքներում նույնիսկ ԺԷ դարում

---

գորգագործության ծագման հարցի շուրջ, ՊԲՀ, 2001, թ. 2, էջ 236 - 250, Հայոց գորգագործական մշակույթը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին. - Հայոց ազգային մշակույթի աստլաս, երկրորդ հատոր, էջ 171-172, Եր., 2009; Carpets-Armenian Folk Art. Culture Identity /co-authors: Edited by Levon and Nensi Sweezi, Bloomington and Indianapolis, 2001, էջ 150-165 և այլն

<sup>1</sup> Տե՛ս Ա.Պողոսյան, **Վիշապագորգերի ծագումնաբանությունն ու տարածման արեալների հարցի շուրջ**, էջ 383-384

գոյատեւում էին հայկական կիսանկախ իշխանություններ, այդ թվում, օրինակ, Կուտկաշենի մելիքությունը<sup>1</sup>:

Եսայի Կաթողիկոսը 1720-25 թթ. Շիրվանի մասին գրել էր՝ «երկիրն էր մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղի երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այս աւելի քան տեղականսն եւ թէ այլ ազգօք որ բնիկ ի յերկրէն են»<sup>2</sup>:

ԺԹ դարի սկզբներին էլ շուշեցի ուղեգիր Տեր Բաղդասար Գասպարյանը Շիրվանի ու Շաքիի տարածաշրջանների հայերի մասին գրել է. «հայք խօսին բառով որպէս ղարաբաղցիք»<sup>3</sup>: Մակար Բարխուտարեանցը, ընդհանրացնելով իր հավաքած տեղեկությունները, նշում է որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ եւ ճառի եւ սոցա բոլոր գաւառների (բացի Կապաղակից) հայերէն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպէս գիտենք, կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած եւ տեղափոխուած են Արցախից»: Բարխուտարեանցի հավաքած տեղեկություններից պարզվում է, որ միայն Վարանդայի ճարտար գյուղից ԺԷ-ԺԸ դարերի արտագաղթածներով վերաբնակեցվել են Նադիր շահի արշավանքների պատճառով դատարկված Շամախու մերձակայքի Արփաուտ, Ղարա-Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերը<sup>4</sup>:

Ամփոփելով, կարելի է ասել, որ արցախյան մշակութային ավանդույթների գոյությունը վերոհիշյալ տարածաշրջաններում միանգամայն բնական էր ու պայմանավորված էր ինչպէս պատմամշակութային սերտ աղերսների առկայությամբ, այնպէս էլ արդեն իսկ պարբերաբար այդտեղ հաստատված արցախցի վերաբնակիչների ստվար զանգվածների մշակութային գործունեությամբ:

<sup>1</sup> Տե՛ս Լևիատով, *Очерки из истории Азербайджана в XVIII веке*, Баку, 1948, էջ 72

<sup>2</sup> Եսայի շառան Ջալալյան, *Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելեց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839*, էջ 32-33

<sup>3</sup> Տեր Բաղդասար Գասպարյան, *Շուշեցի Օսղկաբաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Շ. Քյուրսյան. - Բանբեր Մատենադարանի 9, Եր., 1969*, էջ 293

<sup>4</sup> Ա. Պողոսյան, *Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեւելների մասին. - Միջազգային գիտաժողովի նյութեր, պրակ 1, Ստեփանակերտ, 2009*, էջ 256-259: Մակար Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 97, 104, 107: Կուրճեւան, Քեշխուրդ եւ Քյալբանդ գյուղերում նախկին ճարտարգիներ բնակվելու մասին մեզ տեղեկացրեց Շամախի քաղաքի մերձակայքում գտնվող Հնդար գյուղից ճարտար հարս եկած յոթանասունհինգամյա Սահակյան Ռոզան

Այսպիսով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում պահվող վերոհիշյալ ասեղնագործությունները, վկայելով Արցախի հարթակար ասեղնագործության հարուստ ավանդույթների մասին, միաժամանակ հնարավորություն են տալիս մեզ որոշակիորեն լրացնելու հայոց գործվածքի պատմության մասին եղած պատկերացումներն ու հիմնավորել դրա առանձին ոլորտների ծագումնաբանության հետ կապված լուծումները:

*«Էջմիածին», Ս. Էջմիածին, Յուլիս, 2011, էջ 53-60*

## «ՋՐԱԲԵՐԴ» ԽՄԲԻ ԳՈՐԳԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց ավանդական գորգերի կազմում մեծապես հետաքրքիր է դասական վիշապագորգերի գեղագարդման համակարգին անմիջականորեն առնչվող գորգերի մի խումբ, որ մասնագետների շրջանում հայտնի է «Չարաբերդ», «Չալաբերդ», «Արծվագորգ», «Աղլեր-Ղազախ» եւ այլ անվանումներով: Ընդ որում, առաջին երկու անվանումներով այն հայտնի է նաեւ Արցախի ու Սյունիքի գորգագործների շրջանում: Այս խմբին պատկանող գորգերի հիմնական բնորոշիչը խաչաձեւ առանցքով խոշոր ու բարդ հորինվածք է, որի յուրաքանչյուր գագաթին պատկերվում են ոճավորված գույզ թռչնազուլխներ<sup>1</sup>: Այդ ամենը լրացված են ճառագայթանման հավելվածներով, որն էլ նկատի ունենալով, մենք այդ հորինվածքը տարբերակում ենք «Ճառագայթագարդ հորինվածք» անվանումով: Դրա մի բնորոշիչն էլ կենտրոնում՝ շեղանկյուն մի զարդաշրջանակում ամփոփված քառաթերթ վարդակն է, որը հայոց զարդարվեստի կարեւոր տարրերից է ու հայտնի է նաեւ «զարդ աշխարհի» անվանումով<sup>2</sup>:

Թեեւ մասնագիտական գրականության մեջ տարբեր առիթներով անդրադառնում են խնդրո առարկա գորգերի հետ կապված տարաբնույթ հարցերին, այդուհանդերձ, մեր կարծիքով դեռեւս չկա դրանց ծագումնաբանական ու տիպաբանման լիակատար պատկերը ներկայացնող ուսումնասիրություն: Ուստի, նկատի ունենալով այդ բացը, այս հոդվածում մենք կփորձենք ներկայացնել ծագումնաբանական հարցերին վերաբերող մեր դիտարկումներն ու նաեւ տիպաբանության խնդրում մեր ունեցած մոտեցումները: Այդ նպատակով հիմնականում օգտագործել ենք մեր ունեցած դաշտային ազգագրական նյութերը, ԺԶ-ԺԹ դդ. վերաբերող պատմաագագրական տեղեկությունները, Հայաստանի ու արտերկրի թանգարաններում պահվող գորգերն ու բնականաբար, հրապարակի վրա եղած

<sup>1</sup>Այդ հանգամանքը առիթ է տվել մի շարք ուսումնասիրողների խնդրո առարկա գորգերն անվանել «Արծվագորգ» կամ «Աղլեր Ղազախ»

<sup>2</sup>1601 թ. Կարնո գավառի Դրրվանջ գյուղում արտագրված ու Մատենադարանում պահվող թիվ 7634 ձեռագիր Ավետարանում պատկերված այդ տարբերակներից մեկի տակ գրված է «սա է զարդ աշխարհի». տե՛ս Աս.Մեացակաեյա. Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 176, նկ. 42

ուսումնասիրություններում եւ ինտերնետային կայքերում տեղ գտած խնդրո առարկային վերաբերող տվյալները:

**Տիպաբանական հարցեր:** «Ջրաբերդ» խմբի գորգերի պարագային ելակետային է բնորոշիչ տարրը՝ «Ճառագայթազարդ հորինվածքը», որը մեր դիտարկումների համաձայն, ունի շուրջ մեկ տասնյակ տարբերակ: Այդ բարդ հորինվածքի տարբերակները դասական տեսքով բնորոշ են ԺԶ-ԺԷ դարերին վերաբերող հայոց գորգերի մի շարք տիպերի՝ այդ թվում նաեւ դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգերին: Ընդ որում՝ դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգում կան տարբերակներ, որոնք նմանվում են բազմաթերթ վարդակների: Հատկանշական է, որ այդ բոլոր դեպքերում դրանք տվյալ գորգերի գեղազարդման առանցքային տարրերից են: Այդ հորինվածքի տարբերակներն իրար հետ համեմատելով համոզվում ենք, որ գոյություն են ունեցել դրանցից յուրաքանչյուրով բնորոշվող գորգերի առանձին տիպեր, որոնց գեղազարդման ավանդույթները պահպանվել են ԺԹ-Ի դդ վերաբերող գորգերի գեղազարդման համակարգերում:

«Ջրաբերդ» խմբում բնոգրկված գորգերը եղած տվյալների համաձայն վերաբերում են ԺԶ-Ի դարերին: Նկատի ունենալով դրանց գեղազարդման համակարգերում կատարված փոփոխությունները, նպատակահարմար ենք գտնում վաղ շրջանին՝ ԺԶ-ԺԸ դդ. վերաբերողներն առանձնացնել առանձին ենթախմբում ու տարբերակել «Դասական Ջրաբերդ» անվանումով: Դրանք այն գորգերն են, որոնք հիմնականում բնորոշվում են «Ճառագայթազարդ» հորինվածքով եւ ոճավորված վիշապատկերներով: Այս ենթախմբին ենք դասում նաեւ ԺԹ-Ի դդ. վերաբերող տիպերից մեկին՝ որը նույնպես նշված հորինվածքներով է ու մեր կողմից տարբերակված է «Ջրաբերդ-վիշապագորգ» անվանումով<sup>1</sup>:

«Դասական Ջրաբերդ» ենթախմբում ներառված են գորգերի երկու տիպ:

1. «Գուհարյան Ջրաբերդ»: Այս տիպին պատկանող գորգերի գեղազարդման համակարգում, բացի հիմնական հորինվածքից, առանցքային նշանակություն ունեն նաեւ վիշապի երկուական ոճավորումներից կազմված քնարաձեւ հորինվածքները: Դրա դասական նմուշը 1700 թվականին

<sup>1</sup>Ա.Պողոսյան, *Հայոց գորգագործական մշակույթը ԺԹ դ. վերջին եւ Ի դ. սկզբին. «Հայոց ազգային մշակույթի աստլաս»,* երկրորդ հատոր, Եր., 2009, էջ 171-172, նույնը՝ «Արցախի գորգագործական մշակույթը (XIX - XX դդ)». «Լեռնային Ղարաբաղի հանրապետության աստլաս», Եր., 2009, էջ 86

գործված հայտնի «Գուհար» գորգն է, որի անունով էլ տարբերակել ենք այս տիպը, իսկ քնարաձեւ հորինվածքը կոչել ենք «Գուհարյան վիշապապատկեր»։ Այս տիպն իր հերթին ունի մի շարք տարբերակներ, որոնք բնորոշվում են այդ երկու հիմնական հորինվածքների ու դրանց լրացնող մանրամասների մատուցման ձևերով։ Տիպիկ ու հարուստ նմուշ է Ժոզեֆ Մակմիլանի հավաքածուում պահվող եւ բազմիցս հրատարակված գորգը<sup>1</sup>։ Այս տիպին պատկանող գորգերի մեծ հավաքածու է պահվում Ստամբուլի իսլամական արվեստի թանգարանում<sup>2</sup>։ Մեր նախորդ ուսումնասիրություններում բավականին հանգամանորեն անդրադարձել ենք դասական վիշապագորգերի, այդ թվում, նաեւ «Գուհար» գորգի ծագումնաբանական հարցերին ու եզրակացրել, որ դրանց ծագման հիմնական տարածաշրջանները Արցախն ու Սյունիքն են<sup>3</sup>։

2. «Ձկնավոր Ջրաբերդ»։ Այս գորգերի գեղազարդման համակարգն աչքի է ընկնում տարրերի բազմազանությամբ ու գորգադաշտի հագեցվածությամբ։ Այստեղ հավասարապես կարելուոված են «Ջրաբերդ» հորինվածքը, բազմաթերթ տարատեսակ վարդակներն ու ձկնակերպ խոշոր ոճավորումները։ Այս տիպին պատկանող ու ԺԸ դարով թվագրվող մի ուշագրավ նմուշ պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում։ Դրա գեղազարդման համակարգն աչքի է ընկնում մի յուրահատկությամբ՝ «Ճառագայթազարդ» հորինվածքները պատկերված են ոչ միայն գորգադաշտի կենտրոնում, այլ նաեւ անկյուններում։ Ընդհանուր առմամբ, այն իր գծային ձևերով համահունչ է ինդրո առարկա հորինվածքի դասական ձևին՝ շրջանաձեւ է ու բազմաթերթ, եւ յուրաքանչյուր կողին դարձյալ երեքական ելուստ-ճառագայթներ են, սակայն այս դեպքում ունեն ընդգծված բուսական տեսք՝ մասնավորապես պարունակում են մեկական եռատերեւ «կենաց ծառ» նախշ։ Այս գորգի գեղազարդման համակարգի մի յուրահատ-

<sup>1</sup>Տե՛ս *օրինակ՝* V. Ganzorn, *Le Tapis Cretien Oriental, Benedikt Taschen Verlag, Koln, էջ 351, պատկեր 91/հետայսու՝* V. Ganzorn/, *տես նաև՝* [http://www.turkotek.com/mini\\_salon\\_00010/ms\\_10\\_16.htm](http://www.turkotek.com/mini_salon_00010/ms_10_16.htm)

<sup>2</sup>Տե՛ս *Serare Yetkin, Early Caucasian Carpets in Turkey, Vols 1. 2. London, 1978: Աղբրեջանցի ուսումնասիրողներն այս եւ վարդակավոր գորգերը շրջանառում են «Նախիջեւան» անունով, թվագրում են ԺԴ-ԺԶ դդ. ու վերագրում են Նախիջեւանին ու Բարդային, այնուհետեւ նաեւ Շուշիին՝ այս մասին տե՛ս* J. Керимов, *Азербайджанские ковры, Баку, 1983, т. 3, էջ 195-196*

<sup>3</sup>Տե՛ս Ա. Պողոսյան, *Վիշապագորգերի ծագումնաբանության եւ տարածման արեալների հարցի շուրջ. «Հանդէս Անտրեպ», Վիեննա-Երեւան, 2004, թ. 1-12, էջ 367-415 (հետայսու՝ Ա. Պողոսյան, Վիշապագորգերի ծագումնաբանության ...), նույնը՝ Վերստին վիշապագորգերի մասին. «Նոր Ազգագրական հանդէս», Ա. «Գիտական աշխատություններ», Եր., 2005, էջ 106-119*

կույթունն էլ այն է, որ հիմնական հորինվածքի հանդիպակաց գագաթներին կան աղեղնաձև բարդ նախշեր, որոնք նմանվում են ձկնապատկերների: Այս հանգամանքը հիմք բնորոշելով՝ գեղագարդման այսպիսի համակարգով բնորոշվող գորգերը առաջարկում ենք տարբերակել «Ձկնավոր Ջրաբերդ» անվանումով: ԺԶ-ԺԸ դարերին վերաբերող հայկական վիշապագորգերի թվում կան այս տիպին պատկանող նմուշներ, ընդ որում, ձուկ-վիշապապատկերներն այդ գորգերի գեղագարդման համակարգում տեղադրված են գորգադաշտի վերին ու ներքին մասերում<sup>1</sup>:

Քանի որ այս տիպին բնորոշ խոշոր վարդակներն ու գույզ թռչնագլուխներից կազմված պատկերներն առկա են ԺԹ դ. թվագրվող Ուրմիա լճի ավազան- Համադան գորգագործական կենտրոնների բնորոշ այսպես կոչված «Բուսանախշ» կամ «Աֆշան», մեր կողմից «Աղբակ» անվանակոչված գորգերի գեղագարդման համակարգում, ենթադրում ենք, որ դրա ծագման հիմնական տարածաշրջանների թվում առաջին հերթին պետք է բնորոշել հենց հյուսիս-արեւմտյան Պարսկաստանի ու արեւելյան Վասպուրականի գորգագործական կենտրոնները: Կարծում ենք, որ այս ձկնավերպ ոճավորումների հետագա ավանդույթների արտահայտությունն է Վայքի, Սիսականի, Գողթան գավառի ու հարակից Ղարադաղի գորգագործական կենտրոնների բնորոշ գորգերի մի տիպ, ուր դրանք ներկայացված են դիմահայաց գույգերի տեսքով:

Դասական գորգերի գեղագարդման համակարգերի հետագա զարգացումների հիման վրա ստեղծված ԺԹ-Ի դարերին վերաբերող «Ճառագայթագարդ» հորինվածքով բնորոշվող խմբին պատկանող գորգերի գեղագարդման համակարգում չկան վիշապի քնարաձև ոճավորումներ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, դրանք բնորոշել ենք առանձին ենթախմբում ու տարբերակել «Ուշ Ջրաբերդ գորգեր» անվանումով: Այդպիսով, մենք քննության առարկա գորգերի խմբում տարբերակում ենք երկու հիմնական ենթախումբ, որոնցից առաջինում ներառված են վիշապագորգերը, իսկ երկրորդում միայն «Ճառագայթագարդ» հորինվածքի տարբերակներով բնորոշվողները: Կարելորդ էլով այն, որ երկրորդ ենթախմբի գորգերի բնորոշիչը հիմնական հորինվածքի այս կամ այն գորգագործական կենտրոնին վերաբերող տարբերակներն են, հարմար ենք գտնում

<sup>1</sup>Տե՛ս օրինակ՝ V. Ganzhorn, էջ 343-344, պատկեր 473, 474

տիպերի անվանումներում ներկայացնել խմբի անվանումն ու տվյալ գորգագործական կենտրոնի տեղանունը:

Ի դեպ, միայն «Ճառագայթագարդ» հորինվածքով գորգերը որոշ ուսումնասիրողներ նույնպես համարում են վիշապագորգ<sup>1</sup>:

1. «Ջրաբերդ»: Այս տիպը բնորոշվում է մեկ կամ մի քանի «Ճառագայթագարդ» դասական հորինվածքով: Մրանց գործելու հիմնական տարածաշրջանները համարվում են Արցախն ու Սյունիքը<sup>2</sup>: Այդպիսիք գործում էին նաև Գեղարքունիքում, Լոռիում, մասամբ նաև հյուսիսարևելյան Այսրկովկասում, Ղարադաղում, Համադան-Չարմահալ գորգագործական կենտրոններում: Այդ բոլոր կենտրոններում էլ այն ունեցել է գեղագարդարման մանրամասների ու հյուսիսարևելյան Այսրկովկասում այն հայտնի է երկու տարբերակներով՝

ա. Միայն մեկ հորինվածքով ու կենաց ծառերով գեղագարդված<sup>3</sup>: Մրանց գեղագարդարման համակարգում նկատելի տեղ են գրավում խոշոր բուսանախշերը:

բ. Հիմնական հորինվածքի երկրաչափականացված տարբերակով գեղագարդված: Դրանք լինում են մեկ կամ մի քանիսն, եւ ճառագայթներին բացակայում են բուսանախշ հավելվածները<sup>4</sup>:

Մեր ունեցած տվյալների համաձայն, Համադան-Լիլահան-Չարմահալ գորգագործական կենտրոններին բնորոշ էին այս տիպի ուղեգորգային տարբերակներն ու, բացի այդ, հիմնական հորինվածքներն այստեղ նույնպես պարզ ու երկրաչափականացված էին: Ուշագրավ է, որ այդպիսիք գործել են նաև Ջանգեզուրի՝ մասնավորապես Սիսականի գորգագործական կենտրոններում, որոնցում բավականաչափ զգալի էր Պարսկաստանի վերոհիշյալ հայաշատ տարածքներից եկած վերաբնակիչների պատմամշակութային ազդեցությունը տեղական ավանդույթների վրա:

2. «Ջրաբերդ-Վարանդա»: Բնորոշվում է դասական հորինվածքի մի տարբերակով, որն ունի բացված թելերով թիթեռի տեսք ու կենտրոնում

<sup>1</sup>Տե՛ս *օրինակ՝* Gregorian T. Arthur, *Gregorian Joyce Hampshire, Armenian Rugs from Georgian Collection*, Copyright, 1987, էջ 100, նկ. 49

<sup>2</sup>Տե՛ս Ա. Պողոսյան, *Վիշապագորգերի ծագումնաբանություն ...*, էջ 381-382

<sup>3</sup>Այս տարբերակին պատկանող գորգերը սակավաթիվ էին, սակայն 1990-ական թթ. դրանք կրկնօրինակում ու սահմանափակ խմբաբանակներով գործում են մի շարք երկրներում՝ այդ թվում նաև Դաղստանում

<sup>4</sup>Տե՛ս Մ. Կազարյան, *Армянские ковры*, М., 1987, նկ. 110



«գարդ աշխարհի» քառաթերթ վարդակ: Դրանք գորգադաշտում պատկերվում են մեկ երկայնակի շարքով: Բացի հիմնական հորինվածքից, գորգադաշտի գեղագարդման համակարգը լրացվում է մանր բուսանախշերով ու կենդանակերպ ոճավորումներով: Այս տիպի տասնյակ կատարյալ նմուշներ վերաբերում են Արցախի Վարանդա գավառի գորգագործական կենտրոններին ու հատկապես Բերդաշեն գյուղին: Այս տիպի գորգեր գործել են նաև Լոռվա, Տավուշի, Գարդմանի, Սողքի, Գողթնի եւ Այսրկովկասի հյուսիսարեւելյան ու Վասպուրականի արեւելյան գորգագործական կենտրոններում:

Գունային արտակարգ ներդաշնակ երանգներով ու գեղագարդման համակարգը լրացնող նախշերի, զարդերի ու պատկերների հարստությամբ հայոց գորգագործական մշակույթի ուշագրավ նմուշներ են այս տիպին պատկանող գորգերի Վարանդայում՝ մասնավորապես Բերդաշեն, Թաղավարդ, Գիշի, Աշան, Հացի գյուղերում գործվածները: Դա մեզ հնարավորություն է տալիս արձանագրել, որ այս տիպի գորգերի ձեւավորման օրրանը հենց այդ գավառի գորգագործական կենտրոններն են:

Ըստ էության «Ջրաբերդ-Վարանդա» տիպի գորգերի գեղագարդման համակարգին են առնչվում «Զեյխուր» կամ «Գյոլլու-չիչի» անուններով տարբերակված գորգերը, որոնք վերագրվում են Այսրկովկասի հյուսիսարեւելյան գորգագործական կենտրոններին: Առանձնապես չվիճարկելով այդ պարագան, մենք ուղղակի տեղեկացնում ենք, որ ըստ մեր ունեցած դաշտային ազգագրական նյութերի, այդպիսիք գործել են նաև Լոռվա, Տավուշի ու Արցախի գորգագործական կենտրոններում: Ընդ որում, Արցախում՝ մասնավորապես Վարանդայի Թաղավարդ գյուղից հայտնի են նաև դրա «սումախ» կարպետային տարբերակները: «Զեյխուր» գորգերի հիմնական հորինվածքում կարելի է նկատել «Ճառագայթագարդ» հորինվածքին բնորոշ խաչաձեւ առանցքն ու «Ջրաբերդ-Վարանդա» տիպին էլ բնորոշ ճառագայթատիպ հավելվածի բուսականացված տարբերակը: Բացի այդ՝ հորինվածքի կենտրոնում կա «գարդ աշխարհի» քառաթերթ վարդակը: Ընդհանուր առմամբ, այս տիպի գեղագարդման համակարգը բնորոշվում է բուսանախշ մանրամասների առատությամբ: Ամեն պարագայի, այստեղ կա լրացուցիչ հիմնավորումների անհրաժեշտություն, ու բացի այդ, մենք չենք բացառում, որ այդ տիպը ԺԹ դարի վերջերում արված այն գոր-

գանկարներից կարող է լինել, որոնք կատարվեցին մասնագետ նկարիչների կողմից ու տրամադրվեցին Կովկասյան տնայնագործական միության արտեղներին ու անհատ տնայնագործներին:

3. «Ջրաբերդ-Դիզակ»: Բնորոշվում է խմբի «Ճառագայթագարդ» հորինվածքի բազմատարր ու գծայնացված տարբերակով: Այս դեպքում տասներկու ճառագայթների փոխարեն ներկայացված են նույնքան ոճավորված թռչնազուխներ: Այս հորինվածքի կենտրոնում լինում է երկայնաձիգ ութանիստ զարդ: Դրա ուղղաձիգ գագաթներին մեկական խոյեղջուր պատկեր է, իսկ վերջինիս երկու կողմերին՝ մեկական թռչնակերպ ոճավորում: Երիզվում է նույնատիպ՝ հորիզոնական ուղղվածությամբ պատկերներով: Գեղազարդման համակարգի բաղադրամասերից է նաև «Կենաց ծառ» զարդանախշը, որը սովորաբար պատկերվում է հիմնական հորինվածքի եզրերին: Այս տիպի գորգերը հատկապես բնորոշ են Արցախի Դիզակ գավառի գորգագործական կենտրոններին: Այն տարածված էր նաև Զանգեզուրի գորգագործական կենտրոններում՝ հատկապես Տեղ, Կոռնիձոր, Խնձորեսկ գյուղերում, Գողթան գավառում, Երնջակում, Շարուրում: Արթուր Գրիգորյանի հավաքածուի հրատարակիչներն այս տիպի հայատառ երկու նմուշ, վերագրելով հանդերձ «Աղլեր-Ղազախ» խմբին, ըստ երեւույթին որոշակի մասնավոր տեղեկությունների հիման վրա տարբերակել են «Շամախու զարդանախշ» անվանումով<sup>1</sup>: Մի շարք ուսումնասիրողներ էլ այս տիպի գորգերը դասելով հանդերձ արցախյան գորգերի շարքը՝ մասնավորապես Դիզակ-Բարգուշատ գավառների, այդուհանդերձ դրանք տարբերակել են «Թալիշ» անվանումով ու չեն դասել «Ջրաբերդ» խմբի մեջ<sup>2</sup>: Մասնագիտական շրջաններում այս տիպի գորգերը տարբերակում են նաև «Լենքորան» ու «Թռչնաբուն» անուններով<sup>3</sup>: Այս առումով, անշուշտ, շատ ավելի իրավացի են հայատառ արձանագրություններով գորգերի կատալոգի հրատարակիչները, որոնք դրանց ուղղակի անվանել են «Ջրաբերդ»<sup>4</sup>:

<sup>1</sup> T. Gregorian, J. Gregorian, *Armenian Rugs from Gregorian Collection*, Copyright, 1987, էջ 122, նկ. 63, 64

<sup>2</sup> Տե՛ս Ն. Կերիմով, նշվ. աշխ., էջ 231, պատկեր 176

<sup>3</sup> «Թռչնաբուն» հասկացության մասին տե՛ս Վ. Թաթևյան, *Արցախի սոսնագորգերը, 122-123- րդ լուսանկարներին կից բացատրությունները*

<sup>4</sup> "Rites of Passage in inscribed Armenian Rugs", Edited by L. M. Ejiland, San Francisco, 2002, էջ 48, նկ. 13

**«Ջրաբերդ» խմբի գորգերի տարածման արեալների մասին:** Մեր նախորդ հետազոտություններում տարբեր առիթներով անդրադառնալով այս խմբին պատկանող գորգերի ծագումնաբանական հարցերին՝ ներկայացրել ենք Արցախի ու Սյունիքի պատմաազգագրական մարզերի գորգագործական կենտրոններին դրանց բնորոշ լինելու եւ այդ կենտրոններում էլ ծագած լինելու տեսակետ<sup>1</sup>: Դա առաջին հերթին հիմնավորվում է այն հանգամանքով, որ հենց այդ տարածաշրջաններին են բնորոշ վիշապագորգերի բոլոր ուշ տիպերի ու տարբերակների ավանդույթները: Դա վերաբերում է նաեւ «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերին:

Սակայն հայտնի է նաեւ, որ դրանց առանձին տիպեր ու տարբերակներ տարածված են գորգագործական այլ կենտրոններում եւս՝ մասնավորապէս Այսրկովկասի հյուսիսարեւելյան, Իրանի հյուսիսարեւմտյան ու Փոքր Ասիայի արեւմտյան տարածաշրջանների գորգագործական կենտրոններում:

ա. Հյուսիսարեւելյան Անդրկովկաս: Այս տարածաշրջանում հատկապէս նկատելի են արցախ-սյունիքյան գորգագործական ավանդույթների ազդեցության արդյունքները: Բացի խնդրո առարկա խմբին պատկանող «Ջրաբերդ» տիպից, այստեղ լայնորեն հայտնի են նաեւ Արցախի գորգագործական կենտրոններին բնորոշ բազմաթիվ տիպերի գորգեր: Հատկապէս շատ են երկրաչափական խոշոր զարդերով ու ոճավորված հորինվածքներով բնորոշվող տիպերին պատկանող գորգերը:

Մեր նախորդ ուսումնասիրություններում հանգամանորեն անդրադարձել ենք հայոց գորգագործական մշակույթի ավանդույթների արեալային տարածման հարցերին, այդ թվում նաեւ Հարավային Դաղստանի ու հյուսիսարեւելյան Այսրկովկասի գորգագործական կենտրոններում դրանց ունեցած առանցքային նշանակությանն ու այդ ամենը բացատրել ենք տարածաշրջանում հայոց շուրջ մեկուկես հազարամյակ տեւած մշակութային ակտիվ գործունեությամբ<sup>2</sup>:

Խնդրո առարկա հարցի հետ կապված կա մի ուշագրավ նմուշ: Տարբեր հրապարակումներից հայտնի է Արցախին վերագրվող «Ջրաբերդ» տիպի մի գորգ, որն ունի «1850 Ամի Տէր Միքայէլ Սհարբէկով» հայատառ ու

<sup>1</sup> Տե՛ս Ա. Պողոսյան, *անդ*

<sup>2</sup> Ա. Պողոսյան, *Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ*. ՊԲՀ, 2001, թ. 2, էջ 236-250. Ա. Պողոսյան, *անդ*, էջ 367- 415

թվակիր գրություն: Արտերկրի մասնավոր հավաքածուներից մեկում պահվող այս գորգի ծագումնաբանության պարզաբանման գործում ուշագրավ տվյալներ ենք գտնում նշանավոր գյուղագիր Քաջբերունու ուղեգրություններում, որոնք արվել են 1885-1916 թվականներին: Դրանցում արձանագրված են հյուսիսարեւելյան Այսրկովկասի հայաբնակ գյուղերի տեղագրությանն ու հայոց նիստուկացին վերաբերող չափազանց արժեքավոր տեղեկություններ: Դրանց թվում կա նաեւ Շամախուն մերձակա Քերքենջ գյուղի նկարագիրը: Քաջբերունին շեշտելով, որ այն ամբողջովին հայաբնակ է, նշում է, որ կանայք շատ աշխատասեր են, կատարում են բազմատեսակ աշխատանքներ ու նաեւ «տներում կարպետներ են գործում»<sup>1</sup>: Անդրադառնալով գյուղի ուշագրավ կառույցներին, հաղորդում է խմելու ջրի երկու աղբյուրի մասին, որոնք 1871 եւ 1874 թվականներին կառուցել են քերքենջաբնակ Գրիգոր եւ Մարտիրոս Սահարբեկյանները<sup>2</sup>: Հարկ է նշել, որ Սահարբեկյան ազգանունը մեզ հայտնի է միայն վերը նշված 1850 թվականին վերաբերող գորգին գործված եւ Քաջբերունու տեսած աղբյուրներին փորագրված գրություններից: Նկատի ունենալով այս հանգամանքն ու, նաեւ այն, որ այդ երկու թվականներն իրարից շատ հեռու չեն, կարծում ենք, որ վերոհիշյալ «Ջրաբերդ» գորգի արձանագրության մեջ հիշատակված Միքայել Տեր-Սահարբեկովն էլ Քաջբերունու հիշատակած Սահարբեկյանների ազգակիցն է ու այդ գորգը գործել են Քերքենջ գյուղում: Ընդ որում, նախկին քերքենջաբնակ, Մասիսի շրջանի Միս գյուղում վերաբնակված 80-ամյա Վոլոդիա Պողոսյանը 2010թ. հուլիսին ներկայացնելով իր ծննդավայրին բնորոշ նիստուկացն ու զբաղմունքները, պատմել է որ գորգագործությունն ու կարպետագործությունը Քերքենջում, ինչպես նաեւ նրան հարեւան Զարխուն, Սաղիան, Մադրասա հայկական գյուղերում զարգացած էր նաեւ 1950- 60-ական թվականներին<sup>3</sup>:

Այդուհանդերձ, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հետագա զարգացումների արդյունքում հայոց մի զգալի մասը ԺԸ դ. վերջին եւ ԺԹ դ. սկզբին տեղափոխվեց հյուսիսային Կովկաս, մի մասն էլ ստիպված դարձան մահմեդական կրոնի հետեւորդներ<sup>4</sup>: Մասնավորապես Մուշկյու-

<sup>1</sup> Քաջբերունի, էջ 60-61

<sup>2</sup> Տե՛ս անդ

<sup>3</sup> Հեղինակի անձնական արխիվ

<sup>4</sup> Տե՛ս Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 146-147

րի հովտի հայերը, Դերբենտի հայերի հետ միասին Վալերիան Զուբովի ձախողված արշավանքից հետո տեղափոխվում են Ղզլար ու մերձակայք<sup>1</sup>:

ԺԹ դարի վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավերագրերի ու հուշերի հիման վրա արված ուսումնասիրությունները թույլ են տվել պարզել, որ այդ տարածաշրջաններում բնակված հայերի ճնշող մեծամասնությունը եղել են Արցախից տարբեր ժամանակաշրջաններում այդտեղ տեղափոխված հայերը<sup>2</sup>:

Շիրվանի գորգագործական կենտրոններում արցախյան ավանդույթների առկայության առումով մենք կարելորում ենք նաև Ելիզավետպոլի գավառի կազմում եղած Արեշի գավառը: Մինչ Ի դարի սկզբները ամբողջովին հայաբնակ էին այդ գավառի գյուղերը՝ Քանդակը, Հավարիկը, Մամաթավան, Խանավաղը, Մագուրդուն, Խալդանն ու Արեշը, որոնք հայտնի էին որպես գորգագործական կենտրոններ<sup>3</sup>:

Այսրկովկասի հյուսիսարևելյան տարածաշրջաններում արցախյան ավանդույթների առկայության վերաբերյալ կան նաև պատմամշակութային մի շարք կարևոր դրսևորումներ, որոնք արտահայտված են լեզվաբարբառային, տարազի ու բնակարանային համալիրներում:

Մասնավորապես, Մակար Բարխուտարեանցը, 1880-ական թթ. ընդհանրացնելով իր հավաքած տեղեկությունները՝ նշել է, որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ եւ ճառի եւ սոցա բոլոր գաւառների (բացի Կապադակից) հայերեն բնօրինակ տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպես գիտենք, կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած եւ տեղափոխուած են Արցախից...»<sup>4</sup>:

Արցախյան ավանդույթների, այդ թվում նաև «Ջրաբերդ» գորգերի հյուսիսարևելյան Անդրկովկասում տարածում ստանալու եւ արմատավորվելու հարցում, անտարակույս հսկայական նշանակություն պետք է ունեցած լինեն նաև իսլամ բնդունած՝ կրոնափոխ եղած հայերը: Մասնավորապես, միայն ԺԸ դարի առաջին քառորդում, թուրք-պարսկական պատերազմների ու լեզզիների իրար հաջորդող ասպատակությունների ու

<sup>1</sup> Տե՛ս «Жизнь Артемия Арагатского», Издание подготовил К. Н. Григорян при участии Р. Р. Орбели, М., 1981, էջ 128-129

<sup>2</sup> Տե՛ս Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 89-134

<sup>3</sup> Տե՛ս Մակար Բարխուտարեանց, *նշվ. աշխ.*, էջ 141-143. Ա. Լուսենց, *Արեշի բարբառը*, Եր., 1982, էջ 5-7

<sup>4</sup> Տե՛ս *անդ.*, էջ 149-150

դրանց հետեւած սովի հետեւանքով Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսլամ են ընդունել ավելի քան տասը հազար հայեր<sup>1</sup>:

Այսպես թե այնպես, այդօրինակ հաճախակի կրկնվող իրադարձությունների հետեւանքով Այսրկովկասի հյուսիսարեւելյան հայահոծ տարածաշրջաններում տեղի է ունեցել հայ բնակչության արտահոսքի ու դավանափոխության կարծես անընդմեջ գործընթաց: Ղազար քահանա պարզել է, որ միայն 1750-ական թթ. Շաքիի տարածաշրջանում բռնի դավանափոխ է արվել շուրջ 15000 ծուխ հայ, որի արդյունքում թուրքացվել է 29 հայկական գյուղ<sup>2</sup>:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բռնի դավանափոխության ալիքները սկիզբ են առել առնվազն ԺԴ-ԺԵ դարերից, պետք է ենթադրել, որ արդեն ԺԶ-ԺԷ դարերում դավանափոխ հայերի սերունդները դիտվում էին որպես մահմեդական ցեղեր՝ լեզգի, թաթար, պարսիկ եւ այլն, որոնք սակայն, այս կամ այն չափով, շարունակել են պահպանել ու զարգացնել իրենց նախնիներին բնորոշ զբաղմունքներն ու սովորույթները<sup>3</sup>:

Հյուսիսարեւմտյան Պարսկաստան: Նկատի ունենալով պատմագրագրական զուգահեռ հատկանիշներ ունենալու հանգամանքը, այստեղ ներառում ենք Համադանի, Ուրմիա լճի ավազանի, պատմական Վասպուրականի արեւելյան գավառների ու Ղարադաղի հայոց գորգագործական կենտրոնները: Այստեղ «Ջրաբերդ» խմբի գորգերի ավանդույթների մասին եղած տեղեկությունները վկայում են դրանց ուշ նմուշների առկայությունը:

Վերոհիշյալ գորգագործական կենտրոններում, ըստ էության, առավել հայտնի են «Ջրաբերդ» տիպի գորգերի ուշ տարբերակները, համենայնդեպս, այդպիսիք բավականին մեծ քանակությամբ պահպանվել էին 1940-60-ական թվականներին Հայաստան տեղափոխված պարսկահայերի ընտանիքներում:

Ենթադրում ենք, որ այդ առումով հատկապես պետք է առանձնանային Արաքսի աջ ափին՝ Դիզակի ու Մեղրիի դիմացը գտնված հայաբնակ գյուղերը: Այդ տարածաշրջանը պատմական Հայաստանի Վասպուրականի

<sup>1</sup> Տե՛ս Եսայի Հասան Ջալալյան, *Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելոց յաշխարհին Արուանից, Շուշի, 1839, էջ 29 (հետայսու՝ Եսայի Հասան Ջալալյան), ինչպէս նաեւ՝* Н. Левиатов, *Очерки из истории Азербайджана в XVIII веке, Б., 1948, էջ 92*

<sup>2</sup> Տե՛ս Ղազար քահանայ Յովսէփէան, *Ակնարկներ ուտիացի եւ մահմեդական հայերի մասին, Թիֆլիզ, 1904, էջ 64-65*

<sup>3</sup> Տե՛ս Մակար Բարյուտարեանց, *Նշվ. աշխ., էջ 22*

երբեմնի Պարսպատունիք գավառն էր: Հետագայում պարսիկներն այն անվանեցին Սիա-կուհ (Սեւ սար), որ թուրքերն իրենց հերթին կոչեցին Ղարադաղ<sup>1</sup>: Հայտնի է, որ Ժ դարից սկսած, Պարսպատունիքի բնակչությունը եկեղեցական հարկը տվել էր Տաթևի վանքին, համարվել Տաթևի վանքին պատկանող Սյունյաց 14 գավառներից մեկը, այնպես, որ բնական էր դրանց տնտեսամշակութային համալիրների նույնությունը<sup>2</sup>:

1515 թվականին կազմված Սեֆյան Իրանի սահմանները նշող «Թագ-քիրաթ-ալ-մուլուքում» Պարսպատունիքի հետ միասին Սիա-կուհ են անվանված նաև պատմական Հայաստանի Դրունք (այժմ Ահար), Կատիջք (այժմ՝ Ուզունդուլ), Քոշաթաղ (այժմ՝ Աշկամբար) գավառները: Այդ նոր բաժանումներով Պարսպատունիքը վերանվանվեց Ղարադաղի Աբասպար մահալ, իսկ Դրունք, Կատիջք, Քոշաթաղ գավառներն էլ՝ Ահարի մահալ: Կենտրոն հաստատվեց Ահար քաղաքը<sup>3</sup>: Հենց այդ թվականին կազմված ցուցակներից հայտնի է, որ նշված տարածքում սելջուկ-մոնղոլական ու դրանց հաջորդած թուրքմենական ցեղերի ավերիչ ներթափանցումների ու ապա թուրք-պարսկական պատերազմների պայմաններում դեռևս պահպանվել էին 44 հայաբնակ գյուղ<sup>4</sup>: Ի դարի սկզբներին դրանց թիվը նվազել էր ու մնացել էր 29 գյուղ<sup>5</sup>:

Վերոհիշյալ տեղեկությունները հաղորդող Ահարի գավառի Խանագեահ գյուղի բնակիչ Հարություն Հովսեփյանի 1930-40-ական թթ. դիտարկումներով, Ղարադաղի տարածքն իր աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, կենդանական աշխարհով ու բարբառով համընկնում է Սյունիքին եւ Արցախին: Մասնավորապես Արցախի գյուղերի հետ Ղարադաղի հայերը մշտական բարեկամական կապեր ունեին՝ աղջիկ էին հարս տալիս ու բերում եւ այլն<sup>6</sup>: Ղարադաղում էլ, ի շարս այլ արհեստների, տարածված էր գորգագործությունը ընդ որում, ավելի շատ գործում էին 2-3 մ երկարության ու 1 մ լայնության ուղեգորգեր՝ մի հանգա-

<sup>1</sup> Տեւ անդ

<sup>2</sup> Տե՛ս նաև Հ. Հովսեփյան, **Ղարադաղի հայերը**, հատոր 1, «Ազգագրություն», Եր., 2009, էջ 13. Ս. Ղարազոյցյան, **Ղարադաղ**. «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 12, Եր., 2010, էջ 149-150

<sup>3</sup> Տե՛ս նաև Հ. Հովսեփյան, **նշվ. աշխ.**, էջ 13-14

<sup>4</sup> Տե՛ս նաև, էջ 141-143

<sup>5</sup> Տե՛ս նաև, էջ 145

<sup>6</sup> Տե՛ս նաև, էջ 13, 152

մանք, որը նույնպես բնորոշ էր Արցախի ու Սյունիքի գորգագործական կենտրոններին<sup>1</sup>:

Ցավոք, մեզ հայտնի չեն այս տարածաշրջանին վերաբերող գորգերի փաստագրված նմուշներ, սակայն լեզվաբարբառային, տարազի, ուտեստի ու մշակութային այլ ոլորտներում եղած ակնհայտ նույնությունները թույլ են տալիս համոզվածությամբ եզրակացնել, որ այդտեղի գորգագործական կենտրոններին եւս պետք է բնորոշ լինեին արցախ-սյունիքյան գորգագործական ավանդույթները: Այլ խոսքով, ի դեմ Պարսպատունիքի կամ Ղարադաղի, մենք գործ ունենք արցախ-սյունիքյան գորգագործական ավանդույթների ոլորտում գտնված մի կենտրոնի, որի դերը հատկապես կարևոր ու նշանակալից պետք է լիներ նախքան ԺԶ-ԺԷ դարերը՝ երբ դեռ տարածաշրջանի գավառներում իշխում էին նաեւ կիսանկախ հայ մելիքները<sup>2</sup>:

Փոքր Ասիայի գորգագործական կենտրոններ: Փոքր Ասիայի արեւմտյան տարածաշրջանների գորգագործական կենտրոններում նույնպես նկատվում են «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերի ավանդույթներ: Այս դեպքում եւս կան բավականաչափ սկզբնաղբյուրներ, որոնք հնարավորություն են տալիս մեզ դրանց առկայությունը բացատրել նաեւ արցախ-սյունիքյան ավանդույթների ներգործությամբ:

Այդ առումով, ըստ երեւոյթին, հատկապես նշանակալից էին ԺԶ-ԺԷ դդ. թուրք-պարսկական երկարամյա պատերազմներն ու դրանց ընթացքում իրականացված բռնի տեղահանումները: Վերաբնակիչների մի ստվար զանգված էլ այդտեղ էր հաստատվել Պարսկաստանից՝ Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթերի հետեւանքով: Արցախից, ինչպես բազմիցս նշվում է սկզբնաղբյուրներում, հատկապես լայնածավալ էր արտագաղթը 1795-97 թվականներին, երբ Աղա Մահմադ շահի արշավանքի պատճառով եղած ավերածություններին ու կողոպուտներին գումարվեցին սովն ու համաճարակը: Մարդիկ մահանում էին մինչ այդ չտեսնված հիվանդություններից, անասելի չարչարանքներից հետո, որի պատճառով էլ «սկսաւ յաշխարհն փախչիլ հանդեպ երեսաց իւրոց ի յԵրեւան, ի Գանձակ, ի Նախիջեւան, ի Խոյ, ի Վան, ի Պայազիտ եւ յայլ տեղիս»՝

<sup>1</sup> Տե՛ս նաև, էջ 250

<sup>2</sup> Տե՛ս նաև, էջ 367



այսպես է ականատեսը ներկայացնում 1797 թվականի Արցախի նկարագիրը<sup>1</sup>:

Այդ նույն դեպքերի մասին ավելի մանրամասնորեն հիշատակում է Ապրես Բեկնազարյանցը. «Ղարաբաղում սաստիկ սով ձգեցին Աղա Մամատ խանի արշաւանքները, արտորէից հրդեհելը, չորքոտանիների Պարսկաստան տեղափոխելն ու Հերակլի, Ջուբովի, Իբրահիմ ճըռ խանի արշաւանքներ: Իսկ երկարատեւ երաշտութիւնն էլ ժանտախտ բերաւ: Մեծ եւ փոքր Սիւնեաց երեք հարիւր տասը եւ հինգ հազար բազմամարդ տուն հայ բնակիչներից եւ ոչ կէսն մնացած է: Կիւլիստանի, Ստորին Խաչէնի, Վարանդու եւ Դիզակի ժողովրդոց ամենամեծ մասը գաղթեցին, իսկ Վերին Խաչէնը, Ջառիստը, Ղափանն ու Մեղրին ամբողջապէս դատարկուած են բնակիչներից, յորոց շատերը մեռան եւ շատերը գաղթեցին: ...Ահա հաշիւը որքան կարելի եղաւ մեզ ձեռք բերել: 20105 ընտանիք գոհ եղան սովին եւ ժանտախտին, 26500 տուն գաղթեց Տաճկաստան, 15000 տուն՝ Պարսկաստան, 18000՝ Լոռի Բոլնիս մելիքին մօտ, 15000՝ Ղազախի եւ Շամշադնի կողմերը, 13000՝ Վրաստանի այլ եւ այլ կողմեր, 12000՝ Շամախու վիճակը, 12000՝ Նուխու վիճակը, 10000 տուն՝ Կախէթի կողմերը, 2250 տուն՝ Ճառի կողմերը, 2090՝ Արարատեան նահանգ, 1050՝ Յունաստանի չգիտեմ որ կղզիները, 6000՝ Ռուսաստան, 5000՝ Հնդկաստան, 3000՝ Լեհաստան եւ Հունգարիոյ կողմերը»<sup>2</sup>:

Արցախից, Սյունիքից ու Ղարաբաղից տեղափոխված հայերի բնակության վայրերից շատերը հեատագայում հայտնի են դառնում որպէս փոքրասիական գորգագործության հանրահայտ կենտրոններ: Մասնավորապես այդպիսին են Դենիզլին, Այդնը, Յողեմիշը, Բուրդուրը, Նիգդեն, Մանիսան, Սպարտան որոնցում հաստատված Արցախից ու Սյունիքից տեղափոխված հայերի մասին տեղեկացնում է Հակոբ Քոսյանը<sup>3</sup>:

Այդ նույնը հիշատակում է նաեւ «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակը, ըստ այդմ նա 1878-1879 թվականներին Նիկոմեդիայի եւ Զմիռունիայի շրջանների քաղաքների եւ գյուղերի հին գերեզմանոցների տապա-

<sup>1</sup>«Հայկական աղբյուրները Աղա Մամատ խանի անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797)», աշխատասիրությամբ՝ Ռ. Տիտանյանի, Եր., 1981, էջ 103

<sup>2</sup>«Գաղտնիք Ղարաբաղի», հեղինակութիւն Ապրեսի Բեկնազարեանց, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 241-243

<sup>3</sup> Յակոբ Քոսեան, Հայրի Զմիռունիա եւ ի շրջակայս, հատոր ա, բ, Վիեննա, 1899, էջ 9, 13, 14, 25- 27, 31- 32, 66- 67, 79-80, 94-96, 141, 152-153 եւ այլն

նաքարերին բազմիցս տեսել ու գրի է առել ննջեցյալների ծննդավայրերին վերաբերող սյունիք-արցախյան տեղանուններ՝ Մեղրի, Ղափան, Կալեր, Կճողուտ, Հաղորտի, Հացի, Հաղրուօ եւ այլն: Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ դեռեւս ԺԹ դ. վերջերին Զմիռունիայի Դենիզլի գյուղի տարեցներն իրար հետ խոսում էին Ղարաբաղի բարբառով<sup>1</sup>: Այս ամենին հավելենք, որ ժամանակին Հրաչյա Աճառյանը պարզել էր, որ Բուրդուրի ու Սպարտայի հայերի խոսակցական լեզուն համապատասխանում է Ղարաբաղի բարբառին, եւ որ այն այդ տարածքների հայաբնակ վայրերում պահպանվել էր անկորուստ<sup>2</sup>: Բացի նշվածներից, Ղարաբաղի բարբառով են խոսել նաեւ Դենիզլիի, Էոդեմիշի, Զոնգուլդաղի, Անթալիայի, Գասաբայի, Նազիլիի, Քըրք Աղաջի, Դովրեկի, Դուզջեի եւ մի շարք այլ՝ ընդհանուր թվով տասնհինգ բնակավայրերի հայերը<sup>3</sup>:

Այսպիսով, ակնհայտ է, որ ժամանակին այդ տարածքներում հաստատվել էին արեւելահայաստանյան՝ մասնավորապես արցախ-սյունիքյան ծագում ունեցող հայերը, որոնք, ինչպես վկայում են լեզվաբարբառային հետազոտությունները, պահպանել էին իրենց բնորոշ պատմաազգագրական հատկանիշներն ու այդ թվում, անկասկած՝ նաեւ գորգագործական մշակույթի ավանդույթները: Ասվածի վկայությունն են Արեւելյան Հայաստանի՝ Արցախի, Սյունիքի, Լոռվա, Վասպուրականի գորգագործական կենտրոններին վերաբերող այն բազմաթիվ ավանդույթները, որոնք արտահայտված են փոքրասիական գորգագործական կենտրոններին բնորոշ «Պերգամա», «Գիրյանդառ», «Մելաս», «Մաղրի» ու մի շարք այլ տիպերի գորգերի գեղազարդման համակարգերում:

Այդ ամենից գատ, հայտնի է, որ Փոքր Ասիայի մի շարք գորգագործական կենտրոններում, մասնավորապես Գյորդեսում, Բերգամայում ու Դեմիրչիում գործել են «Զրաբերդ-վիշապագորգ» տիպի գորգեր: ԺԹ դարի կեսերով թվագրված նման մի գորգ հրապարակել է Մուրեյ Էյլանդն ու այն ներկայացրել որպես այդ կենտրոններին բնորոշ ու «կովկասյան վիշապագորգերի» ավանդույթների ներկայությունը վկայող նմուշ (նկ. 11)<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Գաղտնիք Ղարաբաղի», էջ 242

<sup>2</sup> Տե՛ս Ն. Աճառյան, **Հայ բարբառագիտություն**, Մոսկվա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 61, նույնը՝ *Հայոց լեզվի պատմություն*, հ.2, Եր., 1952, էջ 332

<sup>3</sup> Տե՛ս Ն. Սկրտչյան, **Բուրդուրի բարբառի ձեւաբանությունը**. «Լրաբեր հասարակական գիտություններին», 1966, թ. 1, էջ 49, նույնը՝ *Բուրդուրի բարբառը*, Եր., 1971, էջ 7

<sup>4</sup> L. E. Murray, **Oriental Rugs**, New York, 1976, color plate 18

Ներկայացվող գորգի գեղագարդման համակարգում բնականաբար տեղ են գտել նոր լուծումներ, որոշ չափով բուսական վարդակի տեսք է ստացել «Ճաճանչագարդ» հորինվածքը, եւ ընդհանրապես, ավելի շատ են բուսական մանրամասները: Այդ ամենով հանդերձ, ակնհայտ է, որ հիմնական հորինվածքների պատկերագրման ու մատուցման սկզբունքները մնացել են անփոփոխ, ու դա, վերը բերված փաստարկների հետ միասին հիմք է տալիս մեզ եզրակացնելու, որ այդ գորգը որպէս ԺԶ-ԺԸ դարերում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի պատմամշակութային արձագանք, հանդիսանում է արցախ-սյունիքյան «Ջրաբերդ» խմբի «Ջրաբերդ-վիշապագորգ» ենթախմբի տեղական գորգագործական մշակույթի առանձնահատկություններով լրացված մի նմուշ:

Այսպիսով, արցախ-սյունիքյան գորգագործական կենտրոններին բնորոշ «Ջրաբերդ» խմբի գորգերի պատմաազգագրական այս համառոտ բնութագիրը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու դրանց հարուստ ու բազմաբովանդակ նկարագրի, տարածաշրջանի գորգագործական մշակույթի ավանդույթների ու գորգագործական այլ կենտրոններում ունեցած արտահայտությունների մասին:

*«Էջմիածին», Ս. Էջմիածին, փետրուար, 2011, էջ 38-49*

## ՇՈՒՇԻՆ՝ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

(ԺԹ. դարի վերջ-Ի. դարի առաջին քառորդ)

ԺԹ. դարի վերջին ու հատկապես Ի. դարի սկզբներին շուկայական հարաբերությունների զարգացումը Արցախում առանձնապես լուրջ ծավալ ու ընդգրկում չունեք: Մասնավորապես, ի տարբերություն Ղուբայի ու Շամախիի տարածաշրջաններում Կովկասյան տնայնագործական կոմիտեի ջանքերով ծավալված գորգերի զանգվածային արտադրության, Արցախում շարունակվում էր դրա տնայնագործական բնույթը<sup>1</sup>: Այդ առումով, թերևս, առանձնակի էր Շուշին, որտեղ զարգացում էին ապրում հատկապես շուկայական ուղղվածության տնտեսաձևերն ու մասնավորաբար գորգագործությունը:

Շուշիի՝ առևտրի կենտրոն լինելու հանգամանքն ինքնին պետք է որոշակի ներգործություն ունենար ինչպես գորգագործության զարգացման, այնպես էլ արտադրվող գորգերի գեղագարդման առանձնահատկությունների ձևավորման վրա: Հայտնի է, որ ԺԹ. դարի երկրորդ կեսից սկսած՝ արևմտաեւրոպական ու ամերիկյան շուկաներում արևելյան գորգերի հանդեպ աճած պահանջարկի պայմաններում հատկապես ավելացել են այդ պահանջներին համապատասխանող գորգերի արտադրության քանակները: Այդպիսի իրավիճակը միանգամայն նպաստավոր էր գորգերի կենտրոնացված արտադրություն կազմակերպելու համար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տնայնագործների աշխատանքին ու նրանց արտադրանքի որակին հետևելը կապված է որոշակի բարդությունների հետ, այս ոլորտով հետաքրքրվողների համար առավել ձեռնտուն դրանք մի տեղում հավաքելն էր:

Շուշին նույնպես միանգամայն հարմար էր ապրանքային գորգագործության ծավալման համար. այն Անդրկովկասի տնտեսական ու մշակութային հանրահայտ կենտրոններից մեկն էր, տեղի հայերն աչքի էին ընկնում գորգագործական ավանդույթներով, ու բացի այդ ամենը՝ գոյու-

<sup>1</sup> Տե՛ս Եր. Լալայան, *հ 2, Վարանդա, Երևան. 1988, էջ 84, 110, 112, 134, 135*

թյուն ուներ մի հիմնական գործոն ևս, քաղաքի բնակչության շրջանում հանձին մահմեդական բնակչության՝ առկա էր ազատ աշխատուժ: Այս նկատառքի մասին ավելի հանգամանալից պատկերացում են տալիս խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող մարդահամարների տվյալները: Ըստ այդմ՝ մինչ 1991թ. սահմաններն ընդգրկած Արցախում 1823 թվականի տվյալներով հայերը կազմում էին գյուղական բնակչության **97.5**, իսկ քաղաքային բնակչության **41** տոկոսը: 1914 թվականի մարդահամարի տվյալների համաձայն նշված տարածքում հայերը գյուղական բնակչության մոտ **91** տոկոսն էին, իսկ քաղաքային բնակչության՝ **52.3** տոկոսը<sup>1</sup>: Ահա քաղաքի բնակչության մոտ կեսը կազմող, բայց աշխատանք չունեցող մահմեդական բնակչության աշխատունակ մասն էլ կարող էր ներգրավվել ապրանքային գորգագործության ոլորտում: Իրավիճակը միանգամայն այլ էր քաղաքի հայ բնակչության շրջանում: Նրանց մեծագույն մասը՝ ի տարբերություն մահմեդականների, Արցախի գյուղերից այդտեղ տեղափոխվածներն են, որոնք շարունակում էին կապված մնալ գյուղերում մնացած իրենց ազգականների հետ ու նաև մասնակցել բերքահավաքի եւ այլ աշխատանքների: Բացի այդ՝ քաղաքի արհեստավորության բացարձակ մեծամասնությունը հայերն էին: Այս առումով բավական է բերել ոսկերիչների ու զինագործների օրինակը՝ 1842-1917 թթ. ազգությամբ հայ էին այդտեղ աշխատած 171 ոսկերիչներից 149-ը ու 25 զինագործներից՝ 23-ը<sup>2</sup>: Եր. Լալայանի հավաքած տվյալների համաձայն, 1895 թվականին քաղաքում աշխատում էին շուրջ 440 հայ արհեստավոր, որոնք ունեին նաև 120 բանվոր, ընդ որում այստեղ բացակայում են ոսկերիչները, գորգագործները և մի շարք այլ արհեստների ներկայացուցիչներ<sup>3</sup>: Այսինքն՝ Շուշիի հայերը գործագուրկ չէին ու ի վիճակի էին հոգալ իրենց անհրաժեշտ կարիքները:

ԺԹ դարի վերջին Շուշիի գորգագործության մասին պատկերացում կազմելու համար կարևոր սկզբնաղբյուր հանդիսացող և, իմիջիայլոց, տեղի քաղաքային դպրոցի ուսուցիչ Յ. Ջեղգենիձեի տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տված դիտարկումներում շեշտադրված են հենց

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Ն.Սարգսյան, *Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության աճի տեմպերը 19-րդ դ. սկզբից մինչև 1914թ.* «Հայ մշակույթի հետազոտման հարցեր», Արցախ: Գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1992, էջ 33-34

<sup>2</sup> Տե՛ս Ծ. Աստազատյան, *История оружейного и серебряного производства на Кавказе в XIX — начале XX в., Дагестан и Закавказье, часть I, М., 1977, шл. IX, էջ 150*

<sup>3</sup> Տե՛ս Եր. Լալայան, *անդ.*, էջ 84-85

այդ առանձնահատկությունները: Այդ հեղինակը նշում է, որ հայերից քչերն էին այնտեղ զբաղվել գորգագործությամբ, մինչդեռ թաթարների ընտանիքներում այն համատարած էր: Ձեղգենիձեն այս երևույթն ի շարս այլ պատճառների, բացատրել է նրանով, որ աղբբեջանական ընտանիքներում տղամարդիկ տնտեսական գործերով զբաղվելու սովորույթ չունեին, ուստի կանայք ստիպված էին զանգվածաբար զբաղվել գորգագործությամբ և դրանից առաջացած եկամտով էլ հոգալ իրենց ընտանիքների կարիքները<sup>1</sup>: Ասել է թե, այդ ժամանակաշրջանում Շուշիում ապրանքային գորգագործությամբ հիմնականում զբաղվում էին տեղի մահմեդական աղջիկներն ու կանայք, ու դա անմիջականորեն կապված էր կենցաղավարման նրանց ներընտանեկան առանձնահատկությունների հետ: Հայոց մեջ էլ հայտնի է ապրանքային գորգագործությամբ զբաղվելու ավանդույթը՝ սակայն առաջին հերթին այն դեպքերում, երբ տղամարդկանց բացակայության պայմաններում ընտանիքի հոգսերը հոգում էին կանայք ու աղջիկները<sup>2</sup>: Ամեն դեպքում՝ այստեղ գորգագործությամբ զբաղվելը կամ չզբաղվելը մենք չենք կապում տվյալ հանրույթի համար դրա ավանդական լինել- չլինելու հետ՝ տվյալ պարագաներում այն ընդամենը արտադրանքի շուկայական պահանջարկ վայելող ու ըստ այդմ էլ կենսական խնդիրների լուծման համար հարմար զբաղմունք էր: Այստեղ ավելի կարևոր են Ձեղգենիձեի արած պարզաբանումները, որոնցից պարզվում է, որ Շուշիում հայերը իրականում իրենց կարիքների համար զբաղվում էին գորգագործությամբ, և դեռ ավելին՝ նրանց գործած գորգերն ու կարպետները շատ ավելի որակով էին «թաթարների» գործածներից, քանի որ վերջիններս գործում էին միայն վաճառքի համար և ուշադրություն չէին դարձնում տեխնոլոգիական պահանջներին<sup>3</sup>:

Շուշիում հայերի՝ գորգագործությամբ զբաղվելու ու ընդհանրապես այդ քաղաքում ուստայնանկության բոլոր ոլորտների զարգացած լինելու մասին կան նաև այլ վկայություններ: Հայ-թաթարական ընդհարումներից հետո, տասնյակ շուշեցի հայուհիներ զրկվելով ամուսիններից, ստիպված էին անձամբ հոգալ իրենց ընտանիքների ամենօրյա հոգսերը: Նրանց օժան-

<sup>1</sup> Տե՛ս Կ. Զեդգենիձե, *Город Шуша, Производство ковров и паласов, - СМОМПК вып. XI, Тифлис, 1891, էջ 3-6, 32*

<sup>2</sup> Այս առումով տես օրինակ՝ «Ակն և Ակնցիք», նախաձեռնեց և հավաքեց Առաքել Քեչեան, *աշխատասիրեց, դասավորեց և խմբագրեց Մկրտիչ Պարսամեան, Փարիզ, 1952, էջ 411*

<sup>3</sup> Կ. Զեդգենիձե, *նշվ. աշխ., էջ 30-31*

դակելու համար 1906թ. հուլիսի 12-ին այստեղ բարեգործական միջոցներով բացվում է գորգագործական ֆաբրիկա<sup>1</sup>: Կան տեղեկություններ, որ 1906-1907 թթ. այդտեղ աշխատում էին հարյուր քսան գորգագործուհիներ, որոնց պատրաստած գորգերի մեծ մասը արտահանվում էր Եվրոպա:<sup>2</sup>

Բարեգործական նպատակներով բացված վերոհիշյալ ֆաբրիկայի մասին ուշագրավ տեղեկություններ է պարունակում դրա ներկայացուցիչ՝ 1909թ. ապրիլի 4-ին Թիֆլիսում կայացած տնայնագործների համագումարում ներկայացրած զեկուցումը: Ըստ այդմ, պարզվում է որ այդտեղ սկզբնական շրջանում գործում էին միայն գորգեր ու նմանատիպ գործվածքեղեն՝ ուղեգորգեր /«ուղիկ»/, խուրջին, կարպետ, բարձի երես և այլն: 1907թ. սկզբներից այդտեղ բացվում է ջուլհականոց, և սկսում են գործել նաև սրբբիչներ, սփռոցներ, վարագույրներ, գոգնոցներ, անձեռոցիկներ և այլն, որոնց համար օգտագործվում էր տեղական քաթանից /կտավ/ և բրդի մանվածքից գործված կտորեղենը: 1908 թվականից սկսվում է մետաքսե գործվածքի արտադրությունը՝ վերմակի երեսներ, գոտիներ, ջեջիմներ և այլն, ընդ որում, այս դեպքում հրավիրվում է թուրք վարպետ<sup>3</sup>: Ջեկուցման մեջ շեշտված է նաև, որ անհամեմատ շահավետ է տեղական բրդի ու մետաքսի հումքի օգտագործումը<sup>4</sup>: Այստեղ մեծ ուշադրություն էր դարձվում բնական ներկանյութերի օգտագործմանն, ու այդ նպատակով ստեղծվել էր նաև ներկատուն: Ամբողջ Վարանդայում այս գործընթացների հաջող ծավալման համար ստեղծվել էր նաև ուսումնական կենտրոն, որտեղ գորգի վարպետ դառնալու համար պահանջվում էր երկու տարվա ուսուցում ու գործնական աշխատանքի փորձ: Ջեկուցողը, ներկայացնելով ֆաբրիկայում արտադրված գորգերի առանձնահատկությունները, նշում է նաև, որ դրանց համար գործածվում էր ավանդական եղանակով՝ ձեռքով զգած և մանած թել, որի պատճառով արտադրանքի արժեքը համեմատաբար բարձր էր: Հատկանշական է նաև այն, որ այստեղ գործվող գորգերը ընդօրինակվում էին հին գորգերից, որոնք խիստ ընտրությամբ ձեռք էին բերում մասնավորներից<sup>5</sup>: Ասել է թե, Շուշիի այս արհեստանոց ֆաբրիկայում կարևորել են Արցախի գորգագործական մշակույթի ավանդույթներն

<sup>1</sup> «Տնայնագործական համագումար», Թիֆլիս, 1909, էջ 119

<sup>2</sup> <http://www.mecenas-and-world.ru/aragast/7-aragast/shahnazarov.htm>

<sup>3</sup> Այս ամենի մասին տես՝ «Տնայնագործական համագումար», էջ 119

<sup>4</sup> Անդ, էջ 120

<sup>5</sup> Անդ, էջ 120-121

ու աշխատել են պահպանել դրանք: Դրա հետ միասին, ըստ երևույթին, շուկայում արտադրանքի իրացման խնդիրների լուծման նպատակով այդտեղ փորձել են գործել նաև պարսկական գորգեր<sup>1</sup>: Այս ամենը վկայում են, որ շուշեցի հայուհիները տիրապետում էին գորգագործությանն ու ընդհանրապես ոստայնանկության բոլոր ոլորտներին և հարկ եղած դեպքում դրանք դարձնում էին իրենց հիմնական զբաղմունքը:

Նկատի ունենալով վերն ասվածները, մասնավորապես այն, որ այստեղ առաջին հերթին կատարվում էին արտերկրի շուկաների առաջադրած պահանջներն ու բացի այդ, այստեղ բնակվում էին գորգագործական տարբեր կենտրոններից եկած բնակիչներ, տրամաբանական է թվում, որ Շուշիում գործված գորգերը պետք է որ առանձնանային տիպերի ու դրանց տեխնոլոգիական հատկանիշների բազմազանությամբ: Ընդ որում, տիպերի բազմազանության հարցում կարևորում են մի շարք հանգամանքներ, նախ այն, որ ինչպես հաղորդում է Երվանդ Լալայանը «Վարանդայի գյուղերից Շուշի էին արտահանվում գորգեր ու կարպետներ, որոնք տնայնագործներից գնում էին գորգ հավաքողները»<sup>2</sup>: Այնուհետև, կարևոր են մի շարք այլ հանգամանքներ. բացի արցախյան ու նաև զանգեզուրյան և Գողթան գավառին բնորոշ գորգագործական ավանդույթներից, այստեղ տեղի ունեցած մշակութային գործընթացներում իրենց որոշակի տեղն են ունեցել նաև հյուսիս-արևելյան Պարսկաստանի գորգագործական կենտրոնների ու դաշտային Արցախում և Շուշիում հաստատված իրանական ու թուրքական տարրերի՝ այս ոլորտում ունեցած ավանդույթները: Այս ամենին, անշուշտ, նպաստում էին նաև Շուշիի՝ գորգի առևտրի կենտրոն լինելու հանգամանքն ու վերը ներկայացված ֆաբրիկայի գործունեությունը: Այսպիսով, Շուշին գորգագործական մշակույթի մի յուրահատուկ խառնարան էր, որտեղ իրար են հանդիպել վերը նշված գորգագործական կենտրոնների ավանդույթները:

Անշուշտ, Շուշին նաև ինքնին գորգերի սպառման շուկա էր: Ի տարբերություն գյուղական բնակավայրերի, որտեղ գորգ գործածում էին ունևորները և այն էլ՝ որոշակի արարողությունների ժամանակ, քաղաքային կենցաղում ԺԹ. դարի երկրորդ կեսից ձեռագործ գորգը սկսում է լայն տեղ գրավել նաև միջին խավի շրջանում և, որպես փոքր կամ պատի գարդ,

<sup>1</sup> «Տնայնագործական համագումար», էջ 119

<sup>2</sup> Եր. Լալայան, հ 2, անդ, էջ 87



գործածվել բնակարանի ներքնատեսքում: Այս առումով կարևոր նշանակություն ունեին քաղաքի առևտրական ու մշակութային կապերը Ռուսաստանի ու մանավանդ Արևմտյան Եւրոպայի մշակութային կենտրոնների հետ, որտեղ սովորող շուշեցիները քաղաք էին բերում կենցաղավարման նոր ձևեր ու պահանջներ:

**Շուշիի բնորոշ գորգերի մասին:** Շուշիի գորգագործական մշակույթի ծագումնաբանական հարցերին համառոտակի անդրադառնալուց հետո փորձենք ներկայացնել դրանց գեղագարդման առանձնահատկություններն ու տարածման արեալները:

Արցախում ու մերձակա գորգագործական կենտրոններում գորգերի գեղագարդման ասպարեզում լայնորեն գործածվում էին բուսածաղկային, երկրաչափական ու կենդանակերպ նախշեր, զարդեր, պատկերներ ու դրանցով կազմված հորինվածքներ: Շուշիում արդեն ԺԹ . դարի կեսերից բավականին կարևորված էին ուղեգորգերը: Դրանք նեղ ու երկար գորգերն են և հայտնի էին «**յան**» անվանումով, որոնք տնայնագործության կազմակերպիչները տարբերակում էին «**ուղիկ**» անվանումով: Այդ գորգերն աչքի են ընկնում գեղագարդման հիմնական հորինվածքների բազմազանությամբ և ըստ այդմ՝ հայտնի են նշանախշով, կենաց ծառով, շեղանկյունագարդով, աստղագարդով, գունաշերտային գեղագարդումով, բազմանիստով, ծաղկանախշով, վարդակով, խաչագարդով և գեղագարդման այլ տարրերով տարբերակվող ուղեգորգեր: Առավել լայն տարածում ունեին բուսածաղկային հորինվածքների տարբերակներով, բազմանիստով և շեղանկյունագարդով գեղագարդվածները, որոնց թվումն են մեր տիպաբանությամբ «**Աղբակ**», «**Ճարտար**», «**Նշանախշ**», «**Վարանդա**» ու մի շարք այլ տիպեր:

Քաղաքի գորգագործների շրջանում լայն տարածում ունեւր բազմաթերթ վարդակով ու դրա տարբերակներով բնորոշվող գորգի մի տիպ, որը լայն տարածում ունեւր հատկապես պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի արևելյան գավառների գորգագործական կենտրոններում՝ մասնավորապես Աղբակ գավառում ու ընդհանրապես Ուրմիա լճի ավազանում: Ընդ որում՝ հենց այդ հանգամանքի բերումով է, որ բազմաթիվ տարբերակների տեսքով հայտնի այդ տիպը մենք տարբերակել ենք «**Աղբակ**» անունով: Շուշիում լայն տարածում ստացած այդ տարբերակներից մեկի հիմնական հորինվածքը մասնագիտական շրջաններում հայտնի է «**Մինա**

**խանութ»** անունով<sup>1</sup>: Այդ անվանման մասին կան տարատեսակ մեկնաբանումներ<sup>2</sup>. մենք մեր հերթին ենթադրում ենք, որ իրականում այստեղ առկա է Խաչենի Հասան Ջալալ իշխանի դստեր՝ **Մինա խանումի** կերպարը, որն ամուսնացած էր Սյունյաց իշխան Տարսայիճ Օրբելյանի հետ<sup>3</sup>: Այս տիկնոջ մասին հայտնի է, որ նա բարեգործուհի էր, կատարել էր բազմաթիվ նվիրատվություններ ու իր ծախսով կառուցել շենքեր: Նա Հաթերքի իշխանուհու նման սերում էր այն գերդաստանից, որտեղ կանայք ու աղջիկները վաղ հասակից, տոհմական ավանդույթների համաձայն, սովորում էին կանանց ու աղջիկներին անհրաժեշտ հմտություններ, այդ թվում գորգագործություն: Ըստ էության, Մինա խանումը գործել էր իր իսկ մտահղացումներով ստեղծված գորգեր, որոնց գեղազարդման հիմնական տարրերից մեկն հանդիսացել էր բազմաթերթ վարդակը, որ հետագայում ստացել է **«Մինա խանութ»** անունը: Այդ հորինվածքով բնորոշվող գորգերն, ի թիվս վերն ասված տարածաշրջանների, լայն տարածում ունեին նաև Արցախում հ Սյունիքում: Այս տիպին պատկանող մի այլ տարբերակ բնորոշվում է հիմնական հորինվածքի ներկայացման ձևով՝ այն լինում է վանդակում կամ առանց դրան՝ լրացված նաև ճյուղատարած ծաղկանախշով, ինչպես նաև ոճավորված թռչնագլուխներով: Ամեն դեպքում, այստեղ էական է այն, որ այս հորինվածքը ԺԶ-ԺԷ. դարերով թվագրվող դասական **վիշապագորգերի** ու **«Ջրաբերդ»** գորգերի գեղազարդման հիմնական տարրերից մեկն է: Հավելենք, որ այն մասնագիտական շրջաններում տարբերակված է «Ավշան» անվանումով<sup>4</sup>:

Շուշիի գորգագործների շրջանում լայն տարածում ունեին սղոցատիպ եզրերով շեղանկյունատիպ խոշոր հորինվածքով գեղազարդված ու մեր կողմից «ճարտար» անվանակոչված տիպին պատկանող ուղեգորգերը: Այս տիպին բնորոշ է գեղազարդման մանրամասների հարստությունն ու գունային երանգների արտակարգ ներդաշնակությունը: Սա արցախյան ավանդական գորգերից է. դրա մեզ հայտնի վաղ նմուշը պատկերված է 1693 թվականին վերաբերող մի տապանաքարի վրա<sup>5</sup>, իսկ այդ անունով տարբե-

<sup>1</sup> *Sté u Rites of Passage in inscribed Armenian Rugs, Edited by Ejlant L. Murray, San Francisco, 2002, նկ. 79*

<sup>2</sup> *Sté u Heinrich Jacobi, How to Know Oriented Carpets and Rugs, London, 1974, 15 225-227*

<sup>3</sup> *Sté u Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1978, էջ 98*

<sup>4</sup> *Այս մասին տես նաև՝ Լ. Керимов, Азербайджанский ковер, т.3, Б., 1983, էջ 247-248*

<sup>5</sup> *Sté u Մ. Мкртчян, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха /А, Ереван., 1989, էջ 163, նկ. 216-217*

րակելու հիմնավորումը Վարանդայի գորգագործական խոշորագույն կենտրոններից մեկում՝ ճարտարում առավել հայտնի լինելու հանգամանքն է<sup>1</sup>:

Շուշիում ու մերձակա գորգագործական կենտրոններում տարածում ստացած և գեղագարդման հնամենի ավանդույթներ կրող գորգերի տիպերի շարքում առանձնանում են բուսածաղկային բարդ հորինվածքներով ու ձկնակերպ ոճավորումներով բնորոշվողները, որոնք հայտնի են «**Բարգուշաստ**», «**Հորաղիզ**» և «**Բերդաձոր**» անվանումներով: Մեր հետազոտությունները հնարավորություն են տալիս ենթադրել, որ դրանք առավելապես տարածված էին Արցախի ու Սյունիքի մերձարաքսյան գորգագործական կենտրոններում, Արաքսպարում ու Գողթան գավառում, իսկ արդեն ԺԹ դարի սկզբներից՝ նաև Շուշիում:

Շուշիում լայն տարածում ստացած գորգերի մի տիպ էլ բազմաթերթ վարդակներով ու ոճավորված գույգ թռչնապատկերներից կազմված հորինվածքներով բնորոշվող գորգերն են, որոնք մեր տիպաբանության համակարգում տարբերակված են «Ամարաս» անվանումով: Շուշիի գորգագործների շրջանում լայն տարածում ունեցած այս տիպը նույնպես աչքի է ընկնում տարբերակների բազմազանությամբ: Դրանք առանձնանում են հիմնական հորինվածքի լուծումներով, թռչնապատկերների ոճավորված կամ երկրաչափականացված լինել-չլինելով, ու բացի այդ՝ բուսածաղկային բնույթի այլ հորինվածքների առկայությամբ:

Ինչպես վերն ասվեց, այստեղ շատ հարգի էին պատկերային՝ թեմատիկ տեսարաններով գորգերը: Ընդ որում, պատկերային գորգեր գործելու հարցում անհրաժեշտ էին տեխնոլոգիական անհամեմատ ավելի շատ իմացություններ, քան դրանք պահանջում էին սովորական զարդանախշային գորգերը: Շուշիի գորգագործների վարպետության այդպիսի բարձր հատկանիշները հենց հնարավորություն են տալիս ստեղծելու աստվածաշնչային թեմաներ ու կենցաղային տեսարաններ ներկայացնող գորգերի բազմաթիվ նմուշներ:<sup>2</sup> Ինչպես պատմական Հայաստանի մի շարք այլ քաղաքներում, այստեղ էս հայտնի էին «**Մայր Հայաստան**» տիպի գորգերը: Շուշիում, որն այդ ժամանակ հայոց ազգային-ազատագրական մտքի ու շարժման կենտրոններից մեկն էր, բնական էր այդօրինակ թեմաներով մշակութային արժեքների պահանջարկը:

<sup>1</sup> Այս մասին տես՝ Ա. Պողոսյան, *Արցախի գորգագործական մշակույթը /պատմագագրական ուսումնասիրություն/*, անտիպ, էջ 83

<sup>2</sup> Л. Керимов, *Азербайджанский ковер*, т.1, Б., 1961, էջ 50

Ներկայացված գորգերի տիպերը, բնականաբար չեն կազմում Շուշիի գորգագործների շրջանում տարածում ունեցած գորգերի ողջ տեսականին ու քաղաքի գորգագործության ամբողջական պատկերը: Անշուշտ, այդտեղ գործում էին նաև Արցախի գորգագործական կենտրոններում տարածում ունեցած ավանդական գորգատիպերը՝ մասնավորապես «Ջրաբերդ», «Խնձորեսկ», «Գուհար», «Մայացոտն» ու մի շարք այլ տիպերի գորգեր, նշանաշխտվ ու դրա բազմաթիվ տարբերակներով գեղագարդված գորգեր ու ընդհանրապես մերձակա գորգագործական կենտրոններին՝ այդ թվում հասկապես Իրանի գորգագործական կենտրոններին՝ բնորոշ գորգեր: Ըստ էության, այս ամենը կապված էին Շուշի քաղաքի՝ առևտրական լայն կապեր ունենալու հետ: Ամեն դեպքում, վերոշարադրյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Շուշիի գորգագործական մշակույթն, իր յուրահատկություններով հանդերձ, արցախյան գորգագործական մշակույթի մի մասն էր: Հարկ է նշել, որ այս առումով յուրովի են ադրբեջանցի մասնագետների մոտեցումները: Մասնավորապես հայտնի է, որ Լ. Քերիմովն ընդունելով գորգերի «Ղարաբաղյան խումբ» հասկացությունը, դրանում ներառում էր երբեմնի «Բարդայի, Ադդամի, Ջաբրահիլի, Քյալբաջարի շրջանները», դրանց միացնելով նաև Շուշին, սակայն վերջինս անջատելով Արցախի մյուս տարածաշրջաններից՝ Վարանդայից, Դիզակից, Խաչենից, Ջրաբերդից<sup>1</sup>:

Խոսելով Շուշիի գորգագործական մշակույթի հետագա զարգացումների մասին՝ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ 1920թ. մարտյան դեպքերից հետո Շուշին հայաթափվում է: Շուշին գորգագործության և ընդհանրապես արհեստագործությունների կենտրոն էր մինչ այդ իրադարձությունը: Ու թեև ըստ Ջեդգինիձեի դիտարկումների՝ գորգագործությունն ու կենցաղում գորգեր օգտագործելու ավանդույթը կար նաև Շուշվա մահմեդական բնակչության վերնախավի շրջանում, հայաթափվելուց հետո այն երկար ժամանակով դադարում է ոչ միայն գորգագործական մշակույթի, այլև ընդհանրապես շատ կամ քիչ նշանակալից դեր ունեցող բնակավայր լինելուց: Մի քաղաք, որը ոսկերչության, զինագործության, ընդհանրապես մետաղագործության, արևելյան նվագարանների պատրաստ-

---

<sup>1</sup> Л. Керимов, *Азербайджанский ковер*, т.2, Б., 1983, էջ 19. D. Tsitsishvili, L.Kerimov, N. Stepanian und T. Grigoliya, *Kaukasische teppische*, Leningrad, 1984, էջ 20. Սյու մասին տես նաև՝ Տիգրանուհի Մկրտչյան, *Շուշվա գորգերի տեղը Արցախի գորգարվեստում*: «Հայ մշակույթի հետազոտման հարցեր, Արցախ»: Գիտական նստաշրջան, գեկուցումների հիմնադրույթներ, Երուսն, 1992, էջ 27-28

ման ու այլ արհեստների կենտրոն էր, 1920 թվականից հետո հայտնի է մնում միայն որպես առողջարանային բնակավայր<sup>1</sup>: Ասել է թե, քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքում առանցքային էր հայոց նշանակությունն ու ներկայությունը:

Մեր ժամանակներում, երբ հրատապ ու արդիական է Արցախի ու մասնավորապես Շուշի քաղաքի տնտեսական ու մշակութային զարգացման անհրաժեշտությունը, առաջնային ենք համարում պատմամշակութային ավանդույթների վերականգնման հարցը, որի լուծմանն ուղղված գործընթացներն արդեն սկզբնավորված են Արցախում: Մանավանդ, պետք է կարևորվի այն հանգամանքը, որ այդ ավանդույթների վերականգնումով հնարավոր կլինի ստեղծել մի քանի հազար աշխատատեղ:

Կարծում ենք, որ Արցախում՝ այդ թվում նաև Շուշիում, գորգագործության ավանդական ու զարգացման բարձր մակարդակում եղած լինելու հանգամանքն ու մանավանդ՝ այդ ավանդույթների պահպանման ու հետագա զարգացման խնդիրը անհրաժեշտ ու միանգամայն հիմնավորված են դարձնում նաև Շուշիում Արցախի գորգագործական մշակույթին նվիրված թանգարանի հիմնադրման գաղափարը:

Թանգարանի հիմնական խնդիրների թվում պետք է դիտվեն՝

- Արցախի ու նաև հարակից գորգագործական կենտրոններին վերաբերող գորգի ու նմանատիպ առարկաների հավաքածուի ստեղծումը,
- Արցախյան գորգերի ու դրանց արեալային ազդեցությունների հիմնավորված ցուցադրության կազմակերպումը,
- Գիտական ու գիտահանրամատչելի ուսումնասիրությունների, կատալոգների ու բուկլետների միջոցով արցախյան գորգերի պատմամշակութային նշանակության ու հայոց գորգագործական մշակույթի համակարգում նրա տեղի բացահայտումը,
- Քաղաքի գիտամշակութային կյանքի, զբոսաշրջության համար նպաստավոր միջավայրի ձևավորման ու հետագա զարգացման գործին օժանդակումը:

*«Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական հանդես,  
Ս. Էջմիածին, 2014, Բ, էջ 42-49*

<sup>1</sup> *Տի ւ Բ. Худяков, Закавказье /Историко-экономический очерк, /М.-Л., 1926, էջ 140*

**ԱՐՅԱԽՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ  
ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԻ ՈՒ ԿՈՎԿԱՍԻ  
ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Պատմական Հայաստանի գորգագործական կենտրոնների թվում իր առանձնահատկություններով, տիպերի բազմազանությամբ մեծ կարևորություն ունի արցախյան գորգագործական մշակույթը: Ըստ էության, պատահական չէ, որ ուսումնասիրողները հայկական գորգերի շարքում առաջին հերթին հիշատակում են արցախյան գորգերը: Այլ հարց է, թե մասնագետների մի մեծ խմբի կողմից ինչ է հասկացվում «արցախյան գորգ» հասկացության տակ, ինչ էթնիկական հանրույթների են վերագրվում դրանք, և ինչպես է ներկայացվում դրանց ծագումնաբանությունը: Բավական է նշել, որ այս տարածաշրջանի գորգերը ուսումնասիրողների մի սովոր զանգված համարում է XI–XIV ու նաև հետագա դարերի ընթացքում այդտեղ բնակություն հաստատած եկվոր վաչկատուն ցեղերի կողմից բերված մշակույթ: Ընդ որում՝ շրջանառվում է տեսակետ, որ այն Արցախ և ընդհանրապես Կովկաս է հասել փոքրասիական գորգագործական կենտրոնների միջոցով: Իրականում ինչպիսի՞ն է արցախյան գորգագործական մշակույթի ծագումնաբանական ու հետագա զարգացումների նկարագիրը: Այս հարցադրումների ու նաև արցախյան գորգերի տիպերի ու դրանց ավանդույթների տարածման բացահայտման հարցում անտարակույս է պատմահամեմատական հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը: Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների ուսումնասիրման համար գոյություն ունեն գրավոր ու նյութական բավականաչափ սկզբնաղբյուրներ: Գորգագործական մշակույթը, ինչպես որ վկայում են սկզբնաղբյուրները, տարածաշրջանում, և ընդհանրապես Առաջավոր Ասիայում, բուռն զարգացում էր սկսում ապրել վաղ միջնադարից: Իսլամի ծավալմանը զուգընթաց, նկատելիորեն ընդլայնվեց գորգի գործածման շրջանակն ու արտադրության ծավալները: Վաղ ու զարգացած միջնադարում, հատկապես արաբական խալիֆա-

յության դարաշրջանում հայկական գորգը վերնախավի համար պահանջարկ վայելող առևտրի առարկա էր, իսկ գորգագործությունն էլ մնում էր որպես կարևոր զբաղմունք: Այս տեսակետից բնորոշ օրինակ է Հայոց Արևելից կողմի թագավոր Վաչագանի և գորգագործուհի Անահիտի հետ կապված ավանդությունը, որում հենց շեշտված է այդ զբաղմունքի ունեցած մեծ հեղինակությունն ու դրա հանդեպ եղած հարգանքը:<sup>1</sup> Հայոց Արևելից կողմի, այդ թվում արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների մասին մեզ հայտնի վաղագույն տեղեկությունը վերաբերում է VII դ. վերջերին: 680 թվականին<sup>2</sup> դավադրաբար սպանված Աղվանից Ջեվանշիր իշխանին հետապնդողները հասնում են Արցախ գավառում գտնվող ոճրագործի հոր գյուղը, քանդում և ավերում են նրա տունը և ի թիվս այլ հարստությունների, վերցնում են նաև «մետաքսահյուս ու կերպաս դիպակներ, գունագեղ կարպետներ»:<sup>3</sup> Այս դեպքում բավականին որոշակի հիշատակվում է գործվածքի օգտագործման վայրն ու գործվածքի տեսակը և բացահայտված է նաև կոնկրետ ժամանակը: Հատկանշական ենք համարում այն հանգամանքը, որ այդտեղ խոսքը գնում է ոչ թե առևտրական ուղիներին մոտ գտնվող քաղաքի կամ որևէ այլ խոշոր բնակավայրի, այլ այդ ամենից կտրված ինչ որ մի գյուղի մեծատոհմիկի բնակարանի կահավորանքի մասին է: Ըստ էության, սա մատնանշում է այդտեղ գոյություն ունեցած գործատան կամ մեծատոհմիկի կարիքների բավարարման համար աշխատած տնայնագործ գորգագործների առկայության փաստը: Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների շարունակման ու զարգացման վերաբերյալ կարևոր են Պարտավի «Կիրակի» կոչված շուկայի մասին եղած արաբ մի շարք մատենագիրների տեղեկությունները:<sup>4</sup> Աբու-լ Կասիմ Իբն Հաուքալն, օրինակ, պատմում է, որ այդտեղ վաճառահանվում էին նաև մերձակա գյուղերից բերված գորգեր ու այլ գործվածքեղեն: Այդ ու մյուս տեղեկությունները լրացնում են Աղվանից պատմության հեղինակներն ու հաստատում մեր ենթադրությունը առ այն, որ մասնավորապես Արցախում գորգագործությունը տեղական արմատ-

<sup>1</sup> *Տե՛ս* Ղանալանյան Ա., 1969, 98

<sup>2</sup> *Տե՛ս* Նակոբյան Ա., 2004, 267

<sup>3</sup> Մովսես Կաղանկատվացի, 1969, 175: *Ի դեպ, Լ. Քերիմովը հիշատակելով Կաղանկատվացու այս տեղեկությունը, չի նշել Արցախ տեղանունը և այն ներկայացրել է «Աղբբեջանի հյուսիսային մասերում պատրաստում էին մետաքսե գործվածք և գույնզգույն գորգեր» տեսքով, տե՛ս Կերիմով Լ., 1983, 12-13*

<sup>4</sup> *Абу-л Касим ибн- Хаукаль, 1908, 14-15*

ներ ունենալով հանդերձ, ուներ նաև բավականին լայն ճանաչում: Դրանք թույլ են տալիս եզրակացնել նաև, որ գործունեության այդ ոլորտը ուներ նաև ապրանքային ուղղվածություն:

Անշուշտ, սրանք կարևոր նկատառումներ են և հստակորեն ցույց են տալիս, որ Հայաստանում, մասնավորապես Արցախում գորգագործական մշակույթը գոյություն է ունեցել դեռևս արաբական ու սելջուկյան ներթափանցումներից նախորդած ժամանակաշրջանում և հիմք չկա այն կապել արևելյան որևէ ներթափանցման հետ:

Հայատառ արձանագրությամբ առայժմ ամենահին՝ 1202 թվականին գործված գորգը<sup>1</sup> պահվում էր Վիեննայի արդյունաբերության պատմության թանգարանում և, որպես հայոց գորգարվեստի մի ուշագրավ նմուշ, դեռևս 1895 թ. հրատարակել էր արևելագետ Ալտիզ Ռիգլը:<sup>2</sup>

«Եռախորան»-ի կարևորությունը կայանում է նրանում, որ այն հնագույն թվագրված ու հիշատակարան ունեցող գորգն է: «Եռախորանի» Արցախում ստեղծված լինելն ըստ իս, բացատրելի է նրա գեղագարդման մանրամասերի հանգամանքով, որոշ ուսումնասիրողներ էլ, որպես դրա հիմնավորում ընդունում են հիշատակարանում եղած, բայց ուսումնասիրողների կողմից տարբեր կերպ ընթերցվող «Բանանց» բառը, որը Գարդմանի նշանավոր բնակավայրերից մեկի անունն է:<sup>3</sup> Հայտնի է այս գորգի հայատառ թվակիր ընդարձակ հիշատակարանը (Արկանելիս Կիրակոսի Բանանցուց ի յիշատակ Հոփսիմեի տն ՌՄԱ թվին գսա գործեցի):

Արցախի գորգագործական կենտրոնների հետ անմիջական առնչություն ունի վիշապագորգերի խմբին դասվող, 1680 թվականին գործված հանրահայտ «Գուհար» գորգը, որը նույնպես ունի հայատառ, թվակիր ընդարձակ մակագրություն (Ես Գուհարս մեղօք լի հոգովս տկար ես նօրհասս ձեռք իմով գործեցի, ով կարդայ մեկ բերան օղորմի ասի թվին ՌՃԻԹ): Այն 1880-ական թթ. ձեռք էր բերել Լոնդոնի Վիկտորիա և Ալբերտ թանգարանը: Հետագայում՝ 1970-ական թթ. այն հայտնվել է տեխասյան մի մասնավոր հավաքածուի կազմում: Դրա գեղագարդման համակարգում վիշապի ռճավորումները պատկերված են գույգերով՝ ուղղաձիգ, ստորին մասում միմյանց կցված, իսկ վերին մասերը իրարից հեռացած: Դա մի

<sup>1</sup> Թեմուրճյան Վ., 1955, 48

<sup>2</sup> Թեմուրճյան Վ., 1955, 9

<sup>3</sup> Թեմուրճյան Վ., 1955, 35: Դավթյան Ս., 1981, 112



բարդ հորինվածք է, ընդհանուր առմամբ ունի քնարաձև տեսք, որին մենք անվանակոչում ենք «Գուհարյան հորինվածք» անվանումով:

Այս շարքում հաջորդ կարևոր գորգը Աղվանից Ներսես կաթողիկոսին վերագրվող 1731թ. գործված գորգն է, որն ըստ Հարություն Քուրտյանի, պահվում է Երուսաղեմի սուրբ Հակոբ եկեղեցու թանգարանում: Այն նույնպես ունի հայատառ թվակիր գրություն, որի մի հատվածը խոշոր պատռվածքի պատճառով բացակայում է: Արձանագրությունում ասված է՝ «Յիշեցեք մաքրափայլ յաղոթս ձեր Ներսես մեղապարտ կաթողիկոս Աղուանից է պատճառ սմին ... լոյս ընկալ Չարեքու սբ անապատին ՌՃԶ թվի»:<sup>1</sup>

Չարեքա մենաստանում գործված ու մեր կողմից «Գանձասար» անվանակոչված այս գորգի գեղազարդման համակարգում առանցքայինը երկայնաձիգ հինգ հորինվածքներն են, որոնցով ձևավորված են կենաց ծառի նախշով ու այլ բուսանախշերով հարդարված խորանաձև բացվածքներ: Դաշտի ծայրերում, մեկ լայնակի շարքով պատկերված են կենաց ծառի տեսքով խոշոր բուսանախշեր, որոնց գագաթներն ավարտվում են «կակաչ» նախշով: Նախնական հետազոտությունները հնարավորություն են տալիս շեշտել, որ արտերկրի ուսումնասիրողների կողմից «օտտոմանյան» տարբերակված ասեղնագործությունների գեղազարդման համակարգում կարևոր տեղ գրաված այս բուսածաղկային հորինվածքը նաև արցախյան գեղարվեստական գործվածքի ավանդական տարրերից էր: Մասնավորապես, դրանով է գեղազարդված 1795թ. Ջրաբերդի Մելիք Բեզլարի կնոջ՝ Մարիամի, ասեղնագործած եպիսկոպոսական թագը, որն ունի ընդարձակ նվիրատվական թվակիր հիշատակարան՝ «Յիշատակ է թագս ի Մելիք Բեզլարի կողակից Մարիամից ի դուռն Հռեկե վանքի: ԻԹ ՌՄԽԴ»:<sup>2</sup> Դրանից 64 տարի առաջ ստեղծված Ներսես կաթողիկոսին նվիրված «Գանձասար» գորգի գեղազարդման համակարգում կարևորված «կակաչ» նախշն, անշուշտ, մատնանշում է արցախյան գեղազարդման արվեստում դրա հնամենի ավանդույթներ ունենալու փաստը:

XIX–XX դդ. արցախյան գորգագործական կենտրոնների մասին եղած տեղեկություններն ավելի շատ ու բազմատեսակ են: Այս դեպքում այլ աղբյուրների շարքում առանցքային նշանակություն ունեն դաշտային

<sup>1</sup> Դավթյան Ս., 1981, 128–129

<sup>2</sup> Պողոսյան Ա., 2011, 53–60

ազգագրական դիտարկումները: Մեր կողմից նման աշխատանքներ տարվել են 1979–89 թթ., որոնց ընթացքում ձեռք բերված մի քանի տասնյակ գորգեր համալրել են Հայաստանի ազգագրության թանգարանի գործվածքի հավաքածուն: Խնդրո առարկայի առումով չափազանց արժեքավոր են XIX դարի երկրորդ կեսին ազգագրագետ Երվանդ Լալայանի հավաքած ազգագրական նյութերը, որոնցից կարելի է ենթադրել, որ այդ ժամանակաշրջանում գորգագործությունը Վարանդայի ու Գանձակի գավառներում արդեն կրում էր համատարած բնույթ: Մասնավորապես Շուշու գավառի վերաբերյալ, որի կազմի մեջ էր նաև Վարանդան, նա նշում է, որ «բավական զարգացած էր գորգագործությունը: Թեև առանձին գործարաններ չկային, բայց շատ տներում գործում են գորգ, կարպետ, ձիու չուլ և այլն»:<sup>1</sup>

Դա ուներ համընդհանուր բնույթ, բայց կարող ենք նաև առանձնացնել արցախյան գորգագործական մշակույթի այդօրինակ մի քանի առավել հանրահայտ կենտրոններ ևս՝ Թաղլար, Հաղրութ, Տումի, Տոդ, Ճարտար, Աշան, Բերդաշեն, Թաղավարդ, Ավետարանոց, Շոշ, Բադարա (Պտրեցիք), Բալլուջա, Դաշբուլաղ, Կուսապատ, Վանք, Հաթերք, Թալիշ, Բարսում, Կարաչինար, Վերիշեն, Էրքեջ, Գետաշեն, Բանանց, Միրզիկ, Ոսկանապատ, Փիփ, Ջագիր, Բադա գյուղերը և այլն:<sup>2</sup>

XIX դ. վերջերից գորգագործության ու առհասարակ, ոստայնանկության ուսուցումը իրականացվում էր նաև դպրոցներում: Ասեղնագործության, գորգագործության ու նմանօրինակ այլ մասնագիտությունների հետ միասին աշակերտներին սովորեցնում էին նաև հումքի մշակման գործը: Հայտնի է, օրինակ, որ 1880-ական թթ. Կարաչինար գյուղի դպրոցում աշակերտներին սովորեցնում էին նաև շերամապահության գործը, որ ինքնին վկայում է նաև տարածաշրջանում մետաքսագործության տարածվածության ու մետաքսաթելի լայն օգտագործման մասին:<sup>3</sup>

1899 թվականին ստեղծված Կովկասյան տնայնագործական կոմիտեի տվյալների համաձայն, Անդրկովկասում գորգագործությամբ զբաղվելու

<sup>1</sup> Լալայան Եր., 1988, 84

<sup>2</sup> Պողոսյան Ա., ԴԱՆ, տեսր 2, էջ 41–48, Каграманян К., 2004, 262–263, 284, 304, Թաթիկյան Վ., 2004

<sup>3</sup> Каграманян К., 2004, 238: Արցախում 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի առաջին տասնամյակներում գործում էին մետաքսաթելի ստացման տասնյակ ձեռնարկություններ, որոնց թվում նշանակալից էր հատկապես Քարին տակ գյուղինը, որն աշխատում էր նաև Խորհրդային ժամանակաշրջանում: Այդ ավանդույթների արդյունքն էր նաև Ստեփանակերտում մետաքսագործական խոշոր ֆաբրիկայի հիմնումը, որը գործում է նաև մեր ժամանակներում

գծով առաջին տեղը զբաղեցնում էր Գանձակի գավառը, որի կազմում էին նախկին Խաչենի, Ջրաբերդի ու Գյուլիստանի մելիքությունները: Ըստ այդ տվյալների, դրանով զբաղված էր գավառի աշխատունակ բնակչության 48.2%:<sup>1</sup> Նկատի ունենալով այդ ամենը, գավառի գորգագործական մշակույթի հանրահայտ կենտրոններից մեկում՝ Գետաշենում, ստեղծվել էր գորգագործական արհեստանոց, որտեղ փորձառու վարպետների մոտ սովորում էին տասնյակ աշակերտներ: Այդտեղ, ինչպես նաև գորգագործական մյուս կենտրոններում՝ մասնավորապես Ղուբա-Դերբենտ տարածաշրջանում, այդ ժամանակներից սկսած, գորգեր գործում էին Տնայնագործական կոմիտեի նկարիչների ստեղծած տեխնիկական քարտերի՝ գորգանկարներին համապատասխան:<sup>2</sup>

Ի տարբերություն Ղուբայի ու Շամախու տարածաշրջաններում Կովկասյան տնայնագործական կոմիտեի ջանքերով ծավալված գորգերի զանգվածային արտադրության, Արցախում շարունակվում էր դրա տնայնագործական բնույթը: Այդ առումով, թերևս, առանձնակի էր Շուշին, որտեղ զարգացում էին ապրում հատկապես շուկայական ուղղվածության տնտեսաձևերն ու այդ թվում նաև գորգագործությունը:

Ըստ Յակով Ջեդգենիձեի արտադրանքի տեսականին կրում էր միանգամայն առանձնակի բնույթ ու կապված չէր շրջակա գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդույթներին:<sup>3</sup> Այս առումով, կարծում ենք, որ Ջեդգենիձեի դիտարկումները թերի են ու չեն ներկայացնում քաղաքի գորգագործական մշակույթի ընդհանուր պատկերը: Այս քաղաքի բնակչության մեծ մասը կազմող հայերը (ըստ 1886 թ. մարդահամարի տվյալների՝ 30945 բնակչից 18690-ը հայ էր, 11940-ը՝ թաթար, 315-ը՝ ռուս<sup>4</sup>) այդտեղ էին տեղափոխվել հիմնականում գորգագործական ավանդույթներով հայտնի Խաչենի ու Վարանդայի գյուղերից ու բնականաբար, այդ ավանդույթները չէին կարող անհետանալ Շուշիում: Այլ հարց է, որ վաճառքի համար թաթարների՝ ինչպես դրանց անվանել է Ջեդգենիձեն, գործած գորգերը Կովկասյան տնայնագործական կոմիտեի նկարիչների կազմած վերամշա-

---

<sup>1</sup> Пиралов А., 1913, 78

<sup>2</sup> Пиралов А., 1913, 116–118

<sup>3</sup> Зедгенидзе Я., 1891, 2

<sup>4</sup> Зедгенидзе Я., 1891, 1

կումներն էին, ու դրանք ըստ էության, նորություններ էին տարածաշրջանի գորգագործների համար:

Ջեդգենիձեի տեղեկություններով հայերի գործած գորգերն ու կարպետները շատ ավելի որակով էին «թաթարների» գործածներից, քանի որ վերջիններս գործում էին միայն վաճառքի համար և ուշադրություն չէին դարձնում տեխնոլոգիական պահանջներին:<sup>1</sup>

Ըստ այդմ նա նշում է, որ Վարանդայի գյուղերից Շուշի և այլ քաղաքներ էին արտահանվում գորգեր ու կարպետներ, որոնք տնայնագործներից գնում էին գորգ հավաքողները:<sup>2</sup> Բավականին տարածում ուներ նաև վաճառականների կողմից տնայնագործներին կոնկրետ պատվերների ու համապատասխան հումքի տրամադրումը: Այս երևույթը շարունակվում էր նաև նաև XX դարի կեսերին՝ 1940–50-ական թվականներին:

Այդ ասպարեզում հանրահայտ էին Ճարտար, Մեծ Թաղեր, Տող, Թաղավարդ, Սարուշեն, Սոս գյուղերը: Մասնավորապես Ճարտարում համարյա ամեն մի տան մեջ դրված էր «ոստան» ու հիմնականում գործում էին ուղեգորգեր (յան) և կարպետներ: Այս առումով շատ ուշագրավ է Ջարվարդ Պողոսյանի պատմածը, ըստ որի Ճարտարի գորգագործուհիները դեռևս 1930-ական թվականներին պատվերներ էին ստանում մերձակայքում դեգերող քոչվոր մահմեդականներից, վճարի փոխարեն դրանցից ստանալով տվյալ գորգին կամ կարպետին անհրաժեշտ բրդի կրկնակի քանակություն:

**Արցախյան գորգերի տիպերը:** Արցախի գորգագործական մշակույթի բազմադարյա ավանդություններն ինքնին հիմք են հանդիսացել գորգերի մի քանի տասնյակ տիպերի ու դրանց հարյուրավոր տարբերակների ձևավորման համար: Շուշիի առումով հարկ ենք համարում առանձնացնել նաև ուսումնասիրողների շրջանում լայն ճանաչում ստացած «Մինա խանում» բուսածաղկային հորինվածքով բնորոշվող գորգերի տիպը (նկ. 5):<sup>3</sup> Նկատի ունենալով մասնագիտական գրականության մեջ այս տերմինի հայտնի և ընդունված լինելու հանգամանքը, հարկ ենք համարում շեշտել որ Մինա խանումը Խաչենի Հասան Ջալալ իշխանի դուստրն էր, որն ամուսնացած

<sup>1</sup> Зедгенидзе Я., 1891, 30–31, А. Пиралов, 1913, 78

<sup>2</sup> Լալայան Եր., 1988, 87

<sup>3</sup> *Rites of Passage in inscribed Armenian Rugs*, 2002, նկ. 44

էր Սյունյաց իշխան Տարսայիճ Օրբէլյանի հետ:<sup>1</sup> Մինա խանումի մասին հայտնի է, որ նա բարեգործ էր, կատարել էր բազմաթիվ նվիրատվություններ ու իր ծախսով կառուցել շէնքեր: Ըստ էության, Մինա խանումը գործել էր իր իսկ մտահղացումներով ստեղծված գորգեր, որոնց գեղագարդման հիմնական տարրերից մեկն էլ հանդիսացել էր բազմաթերթ վարդակն ու որն էլ հետագայում ստացել է «Մինա խանում» անունը: Այդ հորինվածքով բնորոշվող գորգերը ի թիվս այլ գորգագործական կենտրոնների, լայն տարածում ունէր Արցախում և Սյունիքում: Հայաստանի ազգագրության պետական թանգարանում պահվող հավաքածուի կազմում կան Շուշիի գորգագործներին վերաբերող այդ տիպի գորգերի հայատառ գրություններով նմուշներ,<sup>2</sup> որոնց հորինվածքը «Աղբակ» տիպի գորգերին բնորոշ վարդակի տարբերակներից է (նկ.6):

Արցախում գործված XIX–XX դդ. գորգերի նմուշների գեղագարդման համակարգերի ու դրանց վերաբերող մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի պատմահամեմատական ուսումնասիրումից հստակորեն նկատվում է, որ դրանք կրում են XIII–XVIII դդ. գորգերի տեխնիկատեխնոլոգիական ու գեղագարդման ավանդույթները և դա վերաբերում է թելի որակին ու ոլորքին, խավի բարձրությանն ու հանգույցի ձևին, գունային երանգներին ու ներկանյութերին, հորինվածքներին ու դրանց մատուցման սկզբունքներին: Ընդ որում, տեղական բուրդը համարվել է գորգագործության համար լավագույն հումք, իսկ տարածաշրջանի խոտաբույսերի թվումն էլ եղել են բազմաթիվ ներկատու բույսեր, այդ թվում նաև այնպիսիք, որոնք ցանվել ու մշակվել են այս ոլորտի կարիքները հոգալու համար: Ջրաբերդ գավառում եղած տորոնի բնական ցանքատարածքների մասին օրինակ, նշել է Մակար եպիսկոպոսը:<sup>3</sup>

XIX–XX դդ. Արցախում գորգն օժիտի պարտադիր մաս էր, և ոչ միայն գորգը, այդպիսինն էր նաև կարպետը, անկողնապարկը, խուրջինը, աղի տոպրակը: Եվ այս պարագան ինքնին մատնաշում է Արցախում գորգագործական մշակույթի համատարած լինելու փաստը:<sup>4</sup>

<sup>1</sup> Ուլուբաբյան Բ., 1978, 225–227

<sup>2</sup> ՀԱՊԹ, Գործվածքի ֆոնդ, գ/հ 6938/47

<sup>3</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 188

<sup>4</sup> Լալայան Եր., 1988, 116, 353

**Արցախյան գորգագործական ավանդույթները Կովկասի հարավ արևելյան գորգագործական կենտրոններում:** Մենք լուրջ չենք համարում որոշ ուսումնասիրողների կողմից արցախյան գորգերին «քոչվորական» գորգ ու Արցախն էլ մահմեդական տարրերով բնակեցված համարող պատկերացումներն ու միաժամանակ տեղեկացում, որ Արցախում տարածում գտած գորգերի և կարպետների տիպերի զգալի մասը ընդհանրապես բնորոշ էր պատմական Հայաստանի մյուս գորգագործական կենտրոններին: Ի շարս «Նշանախշ», «Կենաց ծառ», «Գլաձոր», «Նախշաշերտային» ու նմանատիպ այլ համընդհանուր տարածում ունեցած գորգատիպերի, դրանց թվումն են նաև «Ոսկանապատ», «Որոտան», «Շեղանկյունագարդով», «Ամարաս», «Աստղավոր» և այլ տիպերի գորգերը, որոնք, այնուամենայնիվ, իրենց բոլոր տարբերակներով հանդերձ, առավելապես բնորոշ են Արցախի գորգագործական կենտրոններում: Սակայն արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների առկայությունը միանգամայն նկատելի է նաև պատմական Հայաստանի սահմաններից դուրս գտնված տարածաշրջաններում՝ մասնավորապես հայոց մշակութային գործունեության տարածքում: Ըստ երևույթին, հենց այդ իրավիճակն էլ ինչպես արցախյան, այնպես էլ արցախյան ավանդույթների ընդգրկման գոտիներում ստեղծված գորգերի տիպաբանման ու մանավանդ ծագման հարցերում տեղիք է տվել խառնաշփոթի: Թռուցիկ դիտարկումներից անգամ նկատվում է, որ գորգագործական բազմաթիվ կենտրոններում արմատացած գորգերի մի շարք տիպեր ակնհայտորեն նմանվում, կամ կրկնում են Արցախյան գորգերին: Դրանք այնքան շատ են ու տարբերակներով հարուստ, որ չեն կարող համարվել պատահականության արդյունք: Ընդ որում, դրանցում բավականին ակնհայտ նմանություններ ենք հայտնաբերում նաև գորգ գործելու տեխնոլոգիական հմտությունների ու գունային երանգների ասպարեզում: Այդ ամենի առկայությամբ աչքի են ընկնում հատկապես հարավարևելյան Կովկասի գորգագործական կենտրոնները:

Մեր կարծիքով այստեղ առանցքային նշանակություն են ունեցել ժողովրդագրական իրադարձությունները:

Շաքի-Դերբենտ տարածաշրջանի VIII–XIV դդ. վերաբերող պատմամշակութային կառույցները, գյուղատեղիներն ու գերեզմանոցները վկայում են հայոց սովորաթիվ լինելու և մշակութային բուռն գործունեությամբ զբաղ-

վելու հանգամանքը:<sup>1</sup> Հայոց թվաքանակը այդ տարածաշրջանում այնքան զգալի էր և ազդեցիկ, որ այդտեղ ձևավորվում են առանձին փոքր թագավորություններ: X դարում Շաքիի տարածաշրջանում ստեղծվել էր Արցախի իշխող տոհմի՝ Առանշահիկների հայկական թագավորություն, որը 960-ական թվականներից հետո, երբ տեղի հայ բնակչությունը դավանափոխ լինելով դարձավ քաղկեդոնական, կտրվեց հայկական միջավայրից:<sup>2</sup>

Դերբենտի հայկական թագավորության մասին չափազանց կարևոր տեղեկություններ է հաղորդում XI դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին: Նա պատմելով հայոց թագավորությունների մասին, որպես ականատես նշում է նաև Դերբենտի տարածաշրջանում գոյություն ունեցած հայոց թագավորության մասին՝ «կային և ուրիշ հայ թագավորներ՝ Դարբանդ գավառում, որ կոչվում էր Կապանք՝ օզերին և աղվաններին սահմանակից. նրանք ազնիվ և սրբակրոն թագավորներ էին, և պատարագներում հիշվում են նրանց անունները՝ այն է Վաչագանի, նրա որդու՝ Սևադայի, Սևադայի որդու՝ Սենեքերիմի, Սենեքերիմի որդու՝ Գրիգորի, որը մեր այս մատյանի գրության ժամանակ դեռ կենդանի էր»:<sup>3</sup>

Այդ տարածաշրջանի վիմագիր սկզբնաղբյուրներն ուսումնասիրած հայ նշանավոր վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը գտնում է, որ այդտեղ XI–XIII դդ. իսկապես եղել է հայոց թագավորություն և անգամ մի քանի թագավորների տապանաքարեր պահպանվել են Դերբենտից հարավ ընկած բնակատեղիներում:<sup>4</sup> Այդ ամենը հաստատում են նաև Մակար Բարխուտարեանցի XIX դ. վերջին արած դիտարկումները: Նա նշում է, որ Խաչմասի մերձակայքում գտնվող երկու հին գերեզմանոցներում գյուղացիների օգնությամբ հողից հանվել ու մաքրվել են բազմաթիվ տապանաքարեր, որոնց արձանագրություններից պարզվել է, որ հայերն այդտեղ ներկա են առնվազն 573–1890-ական թվականները: Այսինքն, հայոց մշակութային ակտիվ գործունեությունն այդ տարածաշրջանում սկսվել է առնվազն VI դարից ու անընդմեջ շարունակվել մինչ XX դ. 80-ական թվականները: Խաչմասի մերձակայքի մացառուտներով ծածկված հանգստարանում Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալյանցը 1840-ական թվականների

<sup>1</sup> Բարխուդարյան Ս., 1969, 141–143, *Абу-Исхак ал-Истахри, 1901, 97, 107, Левиатов В., 1948, 72*

<sup>2</sup> Ուլուբաբյան Բ., 1978, 83–84

<sup>3</sup> Մատթեոս Ուռհայեցի, 1991, 249

<sup>4</sup> Բարխուդարյան Ս., 1969, 125–147

վերջին տեսել է Աղվանից վերջին թագավոր՝ Սևադայի որդի Սենեքերիմի տապանաքարը,<sup>1</sup> բայց Մակար Բարխուտարեանցի այնտեղ գտնվելու ժամանակ՝ 1890-ական թվականներին, այն արդեն անհայտացած էր:<sup>2</sup> Դժբախտաբար այս երկու հեղինակների արձանագրած տվյալները ցույց են տալիս, որ հայոց վերաբերող պատմական հուշարձանները ընդամենը հիսուն տարվա ընթացքում զգալիորեն պակասել ու նաև, միտումնավոր ավերվել են: Ընդ որում, սա դեռևս վերաբերում է XIX դ. երկրորդ կեսին:

Տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակների պարբերաբար կրկնվող կտրուկ շրջադարձերի պայմաններում էլ, Կովկասի հարավ արևելյան տարածքներում շարունակում էին գոյատևել հայկական կիսանկախ իշխանություններ, այդ թվում՝ օրինակ Շաքիի հայկական թագավորության հարևանությամբ գտնվող Կուտկաշենի մելիքությունը:<sup>3</sup> Տարածաշրջանում էլ ընդհանրապես գերակշռում էր քրիստոնյա բնակչությունն ու վերը հիշատակված տեղեկությունների թվում, դրա մասին է վկայում նաև XIV դ. երկրորդ կեսին ու XV դ. սկզբներին ապրած Արդ ար Ռաշիդ ալ-Բաքուին, շեշտելով որ Բաքվի շրջակայքում կային բազմաթիվ գյուղեր, որոնց բնակիչները քրիստոնյաներ էին ու միայն քաղաքի (որտեղից էլ ինքն էր)՝ Բաքվի բնակիչներն էին շիա մահմեդականներ:<sup>4</sup>

Տարածաշրջանի հայ բնակչության քանակության մասին պատկերացում է տալիս նաև այն, որ 1720-ական թթ. Արցախ-Սյունիքում ծայր առած ազգային ազատագրական պայքարի ընթացքում կարևոր դերակատարում են ունեցել Շիրվանի հայերից կազմված զորամասերն ու մանավանդ նրանց հրամանատարները՝ հանգամանք, որը վկայում է այդ տարածաշրջանում գոյատևած հայոց իշխանական տների մնացուկների մասին: Հարություն Արարատյանը հիշատակում է XVIII դ. վերջին Դերբենտից հարավ, ծովափնյա Մուշկյուրի հովտում տեղաբախշված հայկական տասնյակ ծաղկուն գյուղերի մասին:<sup>5</sup>

Այդուհանդերձ, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հետազոտողների արդյունքում հայոց մի զգալի մասը XVIII դ. վերջին և

<sup>1</sup> Մարգիս Ջալալեանց, 1858, 420

<sup>2</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 76–77

<sup>3</sup> Левиатов В., 1948, 71–72

<sup>4</sup> <http://www.vostlit.info/Texts/rus2/Bakuwi/frametext5.htm>

<sup>5</sup> Жизнь Артемия Араратского, 1981, 128–129



XIX դ. սկզբին տեղափոխվեց Հյուսիսային Կովկաս, մի մասն էլ ստիպված դարձան մահմեդական կրոնի հետևորդներ:<sup>1</sup> Մի մասն էլ, օրինակ Մուշկյուրի հովտի հայերը, Դերբենտի հայերի հետ միասին 1790-ականների վերջին տեղափոխվեցին Ղզլար ու դրա մերձակայք:<sup>2</sup> Պրոֆեսոր Մյուլլերի հաշվարկների համաձայն Մուշկյուրից տեղափոխված հայերի քանակը մոտ տասը հազար էր:<sup>3</sup>

XIX դարի վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավերագրերի և հուշերի հիման վրա արված ուսումնասիրություններն ու XVI–XVII դարերում գրված հայերեն ձեռագիր սկզբնաղբյուրները թույլ են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանից, ինչպես նաև Արցախից հեռացած կամ իսլամ ընդունած հայերի քանակի մասին: Մասնավորապես, 1584 թ. Կարինում գրված մի ձեռագրում հիշատակված է, որ թուրքերի կողմից Շիրվանը գրավելու տարում հայ գերիների թիվը 72 հազար էր:<sup>4</sup>

Հայտնի է, որ միայն XVIII դարի առաջին քառորդում, թուրք-պարսկական պատերազմների ու լեզգիների իրար հաջորդող ասպատակությունների ու դրանց հետևած սովի հետևանքով Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսլամ են ընդունում ավելի քան տաս հազար հայեր:<sup>5</sup> 1725 թվականի փետրվարի 5-ին վրաց Վախթանգ VI թագավորին ուղղված մի նամակում հաղորդվում է, որ լեզգիների ասպատակություններից ամբողջովին թալանվել ու թուրքացվել են Շաքիի, Շամախու, Ղարասուլի (Կուտկաշեն), Մուշկյուրի ու հարակից տարածաշրջանների հայաբնակ գյուղերը:<sup>6</sup> Այսպես թե այնպես, այդօրինակ հաճախակի կրկնվող իրադարձությունների հետևանքով հարավ-արևելյան Կովկասի հայահոծ տարածաշրջաններում տեղի է ունեցել հայ բնակչության արտահոսքի, դավանափոխության կարծես անընդմեջ գործընթաց:

Ղազար քահանա Հովսեփյանը իր հավաքած նյութերի հիման վրա պարզել է, որ միայն 1750-ական թթ. Շաքիի տարածաշրջանում բռնի դավանափոխ է արվել շուրջ 15000 ծուխ հայ, որի արդյունքում թուրքացվել

<sup>1</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 146–147

<sup>2</sup> Жизнь Артемия Арапатского, 1981, 128–129

<sup>3</sup> Миллер В., 1929, 8 տես նույնը` /<http://www.miacum.am/docs/taty/>

<sup>4</sup> Աշոտ Հովհաննիսյան, 1959, 65 /տեղեկությունը քաղված է Մատենադարանի թիվ 9223 ձեռագրի թիվ 27 պատառիկից/

<sup>5</sup> Եսայի Հասան Ջալալյան, 1839, 29, Левиатов В., 1948, 92

<sup>6</sup> Եսայի Հասան Ջալալյան, 1839, 32

է 29 հայկական գյուղ:<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք, այդպիսի գործընթացների շնորհիվ պարբերաբար նվազում էր իրենց ինքնությունը պահպանած հայերի թվաքանակը, մանավանդ որ բացի Հյուսիսային Կովկաս տեղափոխվելուց, 1730-ական թվականներին էլ այդ տարածաշրջաններից՝ Շամախուց ու Շաքիից հազարավոր հայ ընտանիքներ Պարսկաստան է վերաբնակեցրել Նադիր Շահը:<sup>2</sup> Մակայն այդ ամենին էլ զուգահեռ, շարունակվել են արցախահայոց նոր հոսքերը: Սկզբնաղբյուրը տեղեկացնում է, որ միայն 1790-ական թթ. Արցախից այդտեղ են վերաբնակվել շուրջ 12000 ծուխ հայ:<sup>3</sup> Նման պարբերաբար կրկնվող տեղաշարժերով կրկին բնակեցվել ու հայ բնակիչներով համալրվել են հարավարևելյան Կովկասի հայաթափման եզրին կանգնած բազմաթիվ բնակավայրեր: Այս իմաստով հատկանշական է Շաքիի տարածաշրջանում գտնվող Սոգութլու գյուղի օրինակը, որի մասին Եսայի Հասան Ջալալյանը գրում է «եւ ոմն Բարսեղ անուն քահանայ, որ էր բնիկ Ղարաբաղու երկրեն Խաչինու, և ի յազգէ մելիքաց էր անդ՝ որ ընդ գնալոյ ժողովրդեանն սոքա ևս ազգաւ գնացեալ էին և զՍոքութլու գեղն նորոգ շինեալ և բնակեալ»:<sup>4</sup> Այդ դեպքերից շուրջ հարյուր տարի անց Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը տեղում դեռևս մնացած հայերից ու մահմեդականություն ընդունած հայերից հավաքած տեղեկություններից պարզել է, որ Խաչմասում՝ երբեմնի Մուշկյուրի խոշորագույն բնակավայրերից մեկում, իշխողները ավանդաբար եղել են հայերը: Նա հիշատակում է տեղացիների մոտ մեծ հարգանքի արժանացած Հովսեփ բեկ Ջավադբեկյանի ու նրա նախնիների մասին ու ավելացնում, որ տեղի հայերն արդեն խոսում էին տաճկերեն:<sup>5</sup>

Արցախյան ավանդույթների ներկայության առումով մենք կարևորում ենք նաև Ելիզավետապոլի նահանգի կազմում եղած Արեշի գավառը: Մինչ XX դարի սկզբները ամբողջովին հայաբնակ էին այդ գավառի գյուղերը՝ Քանդակը, Հավարիկը, Մամաթավան, Խանավաղը, Մագուրդուն, Խալդանն ու Արեշը, որոնք հայտնի էին որպես գորգագործական կենտրոններ:<sup>6</sup> Մ. Բարխուտարեանցի դիտարկումներից պարզվում է, որ այդ ու հարակից

<sup>1</sup> Ղազար քահանա Յովսեփյան, 1904, 64–65

<sup>2</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 56

<sup>3</sup> Բեկնազարեանց Ապրես, 1886, 241–242

<sup>4</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 33

<sup>5</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 75–76

<sup>6</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 141–143, Լուսենց Ա., 1982, 5–7

գավառների բնակիչները և նրանց թվում նաև հայերը, վարում էին բազմաբնույթ տնտեսաձևեր, որոնց արտադրանքը վաճառահանվում էր մոտակա շուկաներում, մասնավորապես Ադդաշում: Այդօրինակ ապրանքների թվում մեծ տեղ է գրավել ոստայնանկության հումքն ու արտադրանքը՝ գորգերն ու կարպետները, անկողնապարկերն ու խուրջինները, բուրդն ու մանվածքը, ներկանյութերը և այլն:<sup>1</sup> Սարգիս Ջալալյանը իր հավաքած տեղեկությունների հիման վրա հանգել է այն եզրակացության, որ XV–XVII դդ. այս գավառը եղել է հիմնականում հայաբնակ, բայց 1840-ական թվականների վերջին դրա ժողովրդագրական նկարագիրն արդեն այլ էր՝ «ի սմին տարածութիւն բնակին մեծ բազմութիւն մահմետականաց, դարձելոց ի Հայոց և գիւղք Հայոց են աստ յոթն»<sup>2</sup>:

Նմանատիպ ժողովրդագրական զարգացումներ է ունեցել նաև Շաքի-Ջաքաթալա տարածաշրջանը: Մակար Բարխուտարեանցը հիշատակում է այս տարածքներում հայոց երբեմնի ներկայությունը վկայակոչող ավանդություններ, լեգենդներ ու տեղանուններ: Դրանք հստակորեն ցույց են տալիս, որ Շաքի-Ջաքաթալա-Բելոկան տարածաշրջանում մեծաքանակ էին հատկապես Արցախի Ջրաբերդ, Վարանդա ու Խաչեն գավառներից այդտեղ տեղափոխված վերաբնակիչները:<sup>3</sup> Ընդհանրապես, այդ տարածաշրջաններ վերաբնակված արցախցիների ունեցած դերի ու նշանակության մասին պատկերացում կազմելու համար տիպական օրինակ կարող է ծառայել արցախյան գորգագործության նշանավոր կենտրոն Վարանդա գավառի ճարտար գյուղը: Մակար Բարխուտարեանցի ներկայացրած տվյալներից պարզել ենք, որ այդտեղից XVII–XVIII դդ. արտագաղթածները բնակություն էին հաստատել Շամախու մերձակայքի Արփատու, Ղարա-Քարքանջ, Կուր-Ճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերում:<sup>4</sup> Այն հանգամանքը, որ հիշատակված ութ գյուղերից յուրաքանչյուրում XIX դ. վերջերին ու նույնիսկ XX դ. առաջին կեսին՝ այսինքն ռազմա-քաղաքական բազմաթիվ վայրիվերումներից հետո էլ դեռևս մնացել էին մի քանի տասնյակ տուն նախկին ճարտարցիներ, պատկերացում է տալիս ինչպես արտագաղթի ծավալների, այնպես էլ դրա հետևանքով բնակության այդ նոր վայրերում

<sup>1</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 144

<sup>2</sup> Սարգիս Ջալալեանց, 1858, 382

<sup>3</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 112–123

<sup>4</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 97, 104, 107: Քաջբերունի, 2002, 76

արցախյան ավանդույթների ներթափանցման ու արմատավորման հնարավորությունների մասին Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոններում արցախյան ավանդույթների առկայության վերաբերյալ կան ավելի որոշակի փաստարկներ՝ այս դեպքում խոսքը վերաբերում է տեղի հայերի կենցաղի նկարագրին ու բարբառին:

Եսայի կաթողիկոսն իր ժամանակին Շիրվանի մասին գրել էր՝ «և երկիրն էր բարելի և շեն և մարդաշատ, թե հայ ազգօք, որ ի Ղարաբաղի երկրեն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այս ավելի քան տեղականսն և թե այլ ազգօք, որ բնիկ ի յերկրեն են»:<sup>1</sup>

Բայց այդ ամենը հարավ-արևելյան Կովկասի մշակութային նկարագրում արցախահայության կողմից որոշակի մաս ու ներգործություն ունենալու հնարավորություններից միայն մեկն է: Ըստ իս, հիշատակված տարածաշրջանի գորգագործական կենտրոններում արմատացած գորգերի գեղագարդման համակարգում, կատարման տեխնիկատեխնոլոգիական չափանիշներում արցախյան ավանդույթների արմատավորման, ու մանավանդ, հետագա զարգացումների հարցում շատ ավելի էական էր իսլամ ընդունած և ազգային լեզուն կորցրած հայերի դերը: Վերն ասվեց, որ XVII–XX դդ. խնդրո առարկա տարածաշրջաններում պարբերաբար եղել են զանգվածային կրոնափոխության դեպքեր: Վերջին զանգվածային դավանափոխությունը տեղի ունեցավ 1918–20 թթ., երբ Թուրքիայի ու Ադրբեջանի միացյալ ջանքերով սպանվեց մոտ քառասուն հազար հայ, իսկ հազարավորներն էլ կրոնափոխ եղան: Շամախու, Շաքիի ու Գյոթչայի գավառներում դեռևս պահպանված հայաբնակ հիսուներկու գյուղերից մասնակիորեն փրկվեցին միայն տաս գյուղ՝ Միրզաբեկլուն, Խոշկաշենը, Նիժը, Ճալեթը, Թոսիկը, Վարդաշենը, Մեծ Սոգոլթուն, Փոքր Սոգոլթուն, Գիրկը, Չոռլուն:<sup>2</sup>

Դավանափոխության շնորհիվ շատ ավելի դյուրին են դառնում էթնոմշակութային այլ միջավայրում հայոց մշակութային ավանդույթների տեղայնացման, էթնիկական այլ հանրությունների կողմից դրանց յուրացման գործընթացները: Դավանափոխության հետ միասին, թեև աստիճանաբար տեղի է ունենում նաև մայրենի լեզվի կորուստ, բայց այնուամենայնիվ, դա չի ենթադրում տնտեսամշակութային գործունեության համակարգի փոփո-

<sup>1</sup> Եսայի Հասան Ջալալյան, 1858, 32–33

<sup>2</sup> *Геноцид армян в Османской империи, 1982, 538–539*

խություն, ուստի այն ամենը, ինչ ունենում է դավանափոխ հանրույթը, մեխանիկորեն դառնում է օտար հանրույթի մշակութային սեփականություն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բռնի դավանափոխության ալիքները սկիզբ են առել առնվազն XIV–XV դարերից, պետք է ենթադրել, որ արդեն XVI–XVII դարերում դավանափոխ հայերի սերունդները դիտվում էին որպես մահմեդական ցեղեր՝ լեզգի, թաթար, թաթ, պարսիկ և այլն, որոնք սակայն, այս կամ այն չափով, շարունակել են պահպանել ու զարգացնել իրենց նախնիներին բնորոշ զբաղմունքներն ու սովորույթները:<sup>1</sup>

Պատմամշակութային այսօրինակ գործընթացները, ինչպես նկատում ենք, զգալիորեն բարդացնում են ծագումնաբանական հետազոտությունների իրականացումն, ու միաժամանակ, հնարավորություն են տալիս ցանկության դեպքում յուրացնել իրականում այլ էթնիկական հանրույթների ստեղծած մշակութային ժառանգությունը: Համենայնդեպս, 1960-ական թվականներից սկսած այդ գաղափարախոսությունն են ներկայացնում գորգագործական մշակույթին վերաբերող Բաքվում հրատարակված աշխատությունները, որոնցում ընդհանրապես խոսք չկա հայոց մասին: Սակայն մյուս կողմից էլ, 1920–30-ական թթ. հրատարակված տեղեկատվական ու տնտեսագիտական բնույթի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանների գորգագործական մշակույթում հայոց ունեցած իրական դերի մասին: Ըստ այդմ՝ պարզվում է, որ հարավ-արևելյան Կովկասի մի շարք գորգագործական կենտրոններում այդ մշակույթի գոյությունը կախված է եղել հայոց ներկայությունից:

Վ. Խուդադովի կողմից արված վիճակագրական ուսումնասիրություններից պարզվել է, որ 1918–20 թվականներին իրականացված հայաթափումից հետո դադարել են գոյություն ունենալ մինչ այդ հանրահայտ Շամախու, Գյոկչայի, Ադդաշի, Նուխու ու Ջաքաթալայի գորգագործական կենտրոնները:<sup>2</sup> Մինչդեռ հայաթափումից հետո, անշուշտ, տեղում էր մնացել բնակչության մահմեդական մասն՝ այդ թվում կովկասյան թաթարները կամ նորանվանյալ այսպես կոչված «ադրբեջանցիները», որոնք, Լ. Քերիմովի հայտարարությունների համաձայն, գործում էին կովկասյան գոր-

<sup>1</sup> Մակար Բարխուտարեանց, 1999, 22

<sup>2</sup> Худатов В., 1926, 140

գերի 90 %:<sup>1</sup> Այս նույն իրավիճակում էր հայտնվել գորգագործությունը նաև Շուշիում: Անդրկովկասյան տնայնագործության հայտնի գիտակ Ա.Ս. Փիրալովն իր «Кустарная промышленность Закавказ. Республик» հոդվածում շեշտել էր, որ XIX դ. վերջերին Շուշին գորգի արտադրության կենտրոններից էր, որտեղ կային խոշոր արտահանողներ և ամենաճաշակավոր գորգագործներ, իսկ արտադրանքն էլ արտահանվում էր Արևմտյան Եվրոպա և առանձնապես Անգլիա:<sup>2</sup> 1920թ. ապրիլին հայաթափվելուց հետո, 1925–27 թթ. կատարված վիճակագրական ուսումնասիրություններից պարզվում է, որ երբեմնի մարդաշատ՝ ավելի քան քառասուն հազար բնակիչ ունեցող ու մշակութային և տնտեսական կենտրոնի հռչակ վայելող այդ քաղաքում 1926թ. ապրում էր միայն 5107 մուսուլման, տնտեսական գործունեությունն էլ աննշան էր ու համարյա վերացել էր նույնիսկ սազ, թառ ու քամանչա պատրաստելը:<sup>3</sup>

Մ. Իսանը 1920–30-ական թվականներին Կովկասի գորգագործական կենտրոններում կատարած դաշտային հետազոտությունների հիման վրա ստեղծված իր ուսումնասիրության մեջ շեշտել է, որ մինչև 1920-ական թվականների սկիզբը զանգվածային գորգագործության կենտրոններ էին Կարամարյանի ենթաշրջանի հայկական գյուղերը՝ Կիրկը, Քալազան, Ռուշանը, Ռուշտալը և այլն, և որ մեր համար հատկապես կարևոր է, հիշատակում է, որ այդ գյուղերում գործված գորգերը որակով ու տեխնիկատեխնոլոգիական առումներով նույնն են, ինչ որ արցախյանը:<sup>4</sup> Իսանը հաղորդում է մի շարք ուշագրավ մանրամասնություններ ևս՝ պարզվում է, որ այդ գորգերն ունեցել են համարյա քառակուսի չափեր՝ 2\*2.50 մետր, մեկ քառակուսի դեցիմետրում 35\*40 հանգույց խտություն, տարբերակվել են «Էրմենի իսիլա»՝ «հայկական գործվածք» անունով ու բարձր պահանջարկ են վայելել առևտրականների շրջանում:<sup>5</sup> Դրանց արտադրությունը վերացավ 1918–20 թվականներից սկսած՝ երբ բռնագաղթման ենթարկվեց Քուռ

---

<sup>1</sup> Керимов Л., т. 2, 1983, 5, 39

<sup>2</sup> Սեյրան Գ., 1928, 67

<sup>3</sup> Սեյրան Գ., 1928, 72, 95

<sup>4</sup> Исаев М., 1932, 121

<sup>5</sup> Նույն տեղը, 180

գետի ձախափնյա տարածքների՝ Քյուրդամիրի, Իսմայիլիի ու Գյոքչայի շրջանների հայ բնակչության մեծամասնությունը:<sup>1</sup>

Այդ տարածաշրջաններում գործված գորգերի տեխնիկատեխնոլոգիական ու գեղագարդման համակարգերի նմանություններն արձանագրել են նաև մի շարք այլ ուսումնասիրողներ, որոնք սակայն չեն անդրադարձել այդ երևույթի պատճառներին ու չեն դարձրել ուսումնասիրման առարկա: Մասնավորապես, ադրբեջանցի ուսումնասիրողներից Ա.Բաբանը իր հաղորդումներից մեկում նշելով հանդերձ, որ «վաղ ժամանակներում Շաքիում և մերձակա գորգագործական կենտրոններում գործել են Ղարաբաղին բնորոշ գորգեր», չի փորձել բացատրել դրա պատճառներն ու բացահայտել դրանց կոնկրետ ակունքները:<sup>2</sup> Կարծում ենք, որ վերոհիշյալ գործոններն առանցքային նշանակություն են ունեցել Կովկասի հարավարևելյան տարածքներում արցախյան գորգագործական ավանդույթների ներթափանցման և արմատավորման գործում:

Արցախյան ու ընդհանրապես հայկական գորգագործական ավանդույթների տարածման մի ձևն էլ վերը ներկայացված տեղահանումների ու կոտորածների հետևանքով մահմեդականների ձեռքն ընկած գորգերն ու կարպետներն էին: Ընդ որում, հայտնվելով եկվորների տներում, հետագայում ադրբեջանցի ու մյուս ուսումնասիրողներն էլ դրանք դիտարկել են որպես մահմեդականների մշակութային գործունեության արդյունք: Իսկ այդպիսի գորգերի քանակությունը հսկայական է եղել ու դրանում համոզվելու համար բավական է միայն մեկ օրինակ: 1905 թվականի օգոստոսի վերջերին Քաշաթաղի Մինքենդ գյուղի 85 տուն հայ բնակչությունը ենթարկվեց այդ նույն գյուղի 145 տուն մահմեդականների ու նրանց օգնության հասած թարաքյամանների ու թուրքական այլ ցեղերի հարձակմանը: Դրա հետևանքով 696 հայերից 240-ը զոհվում են, 44-ի ճակատագիրը մնում էր անհայտ, իսկ մնացած 456-ը մի կերպ փրկվում են ու ցրվում: Գյուղը հայաթափվում է վերջնականապես, իսկ մահմեդականներին մնում է հայերի ամբողջ ունեցվածքը՝ այդ թվում 1290 գորգ, 688 կարպետ, 182 ջե-

<sup>1</sup> Ադրբեջանի նախկինում հայաբնակ շրջաններն այս ուսումնասիրության մեջ ներկայացված են 1970–80-ական թթ. անվանումներով, որոնք կարող են և չհամապատասխանել ներկայիս անվանումներին

<sup>2</sup> Бабаев А., 1983, 36

ջիւմ և այլն:<sup>1</sup> Նկատի ունենանք, որ այդքան կողոպուտը հավաքվեց ընդամենը 85 հայ գերդաստանից:

Անդրադառնալով վերոհիշյալ տարածաշրջանների գորգագործական կենտրոններում տարածում գտած արցախյան ծագումով գորգերի խմբերին ու առանձին տիպերին, պետք է նշել, որ դրանք աչքի են ընկնում բազմազանությամբ և կոնկրետ ուղղվածությամբ: Հատկապես նկատի ունենք երկրաչափական խոշոր զարդերով ու ոճավորված հորինվածքներով բնորոշվող գորգերը: Դերբենտի գորգագործական կենտրոններում խոսքն առաջին հերթին վերաբերում է «Որոտան», «Ամարաս», տիպերին ու «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերին: Դադստանի գորգագործական կենտրոններում լայն տարածում ունեն «Գուհար» ենթախմբի վիշապագորգերի տարբերակները:<sup>2</sup> Շիրվանի ու Շաքիի տարածաշրջանների գորգագործական կենտրոնների դեպքում այդ ցանկը զգալիորեն մեծ է ու հիշատակվածների հետ միասին ներառում է նաև «Ճարտար», «Տավուշ», «Ջրաբերդ», «Ուտիք», «Գանձակ» «Ոսկանապատ», «Բանանց» և մի քանի այլ տիպեր: Այս տարածաշրջանում արցախյան ավանդույթների տարածման մասին վկայող մի ուշագրավ նմուշ է Շաքիի մերձակա Ճալեթ գյուղում 1888 գործված հայատառ արձանագրությամբ «Ճարտար» տիպին պատկանող մի գորգ<sup>3</sup>, որն աչքի էր ընկնում կատարման տեխնիկատեխնոլոգիական լավագույն հատկանիշներով ու արցախյան ավանդույթներին համահունչ գունային երանգների ներդաշնակ մատուցմամբ: Մակայն այստեղ արցախյան ծագումով գորգերի տիպերի թվում հատկապես կարևորում ենք դասական վիշապագորգերին ու դրանց տարբերակներին: Մասնավորապես հայտնի են այս գորգագործական կենտրոններում ստեղծված վիշապագորգերի «Գուհար» և «Խնձորեսկ» ենթախմբերին ու «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգեր «Սիսական», «Փյունիկ»:<sup>4</sup> Մեծ տարածում ուներ «Գուհար» ենթախմբին պատկանող գորգերի մի տարբերակ, որը բնորոշ է հատկապես Շաքիի գորգագործական կենտրոններին:<sup>5</sup>

<sup>1</sup> Աբրահամյան Հր., 2009, 34–35

<sup>2</sup> Պողոսյան Ա., 2004, 367–415

<sup>3</sup> Այդ գորգը դեռևս 1980-ական թվականներին պահվում էր Երևանում, ծննդով Ճալեթցի Արշալույս Հարությունյանի տանը: 1990-ական թվականների սկզբներին, նա տեղափոխվել է ԱՄՆ և հավանաբար այդ գորգն էլ այժմ գտնվում է ԱՄՆ-ում

<sup>4</sup> Պողոսյան Ա., 2004, 367–415, 2010, 380–387, 2008, 38–49, 2011, 240–250

<sup>5</sup> Tony Hazledine, 1994, 88–96



Վերոնշյալ փաստերը հստակորեն ներկայացնում են հայոց գորգագործական մշակույթի ավանդույթների, հատկապես արցախյան ավանդույթների ներկայությունը Կովկասի հարավարևելյան տարածաշրջաններում և այդ հանգամանքը դիտարկվում է շուրջ մեկուկես հազարամյակ շարունակ: Հասկանալի է, որ տեղական գորգագործական ավանդույթների ձևավորման հարցում էլ դրանք ունեցել են շոշափելի նշանակություն: Կովկասի այդ մասի գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերի տիպերի գերակշիռ մասն այս կամ այն չափով կրում են արցախյան ավանդույթներն ու ինչպես տեսանք այս շարադրանքում, առաջին հերթին դա պայմանավորված էր արցախայության մի հոծ զանգվածի ներկայությամբ, որը միաժամանակ շարունակում էր ակտիվորեն կապված մնալ նաև իր բնակության նախկին վայրերին:

Կովկասի հարավ-արևելյան գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերն ունեն ծագումնաբանական առանձնահատկություններ: Կովկասի հարավ-արևելյան գորգագործական կենտրոնների ձևավորման հարցում իրենց ներդրումն են ունեցել նաև կովկասյան մյուս ցեղերը՝ օրինակ լեզգիները, որոնց բնորոշ են տեխնոլոգիական որոշակի առանձնահատկություններ ու բացի այդ էլ, նրանք աչքի են ընկել հատկապես «սումախ» տիպի կարպետներ գործելու ասպարեզում: Հետազոտողները գտնում են, որ լեզգիների կենցաղում գորգերն ու կարպետները ստացել էին մեծ կարևորություն, ընդ որում, հատկապես հարգի էին կարպետները:<sup>1</sup>

Գորգագործական մշակույթին ծանոթ էին նաև Դադստանի կումիկները, կովկասյան թաթարները, որոնք զբաղեցնում էին այդ տարածաշրջանի հարթավայրային մասերը: Ընդ որում, շատ հետաքրքիր է, որ դրանց գործած գորգերի տիպերի թվում դարձյալ տեսնում ենք արցախյան ավանդույթները կրող տիպերի՝ մասնավորապես «Գուհարյան» ենթախմբին պատկանող գորգերի գեղագարդման համակարգի ներկայությունը:<sup>2</sup>

Ինչպես Դերբենտի, այնպես էլ Շիրվանի գորգագործական կենտրոններում անշուշտ գոյություն են ունեցել տեղական առանձնահատկություններ և դրանք վերաբերում են գորգ գործելու տեխնոլոգիաներին: Շիրվանի գորգագործական կենտրոններում, օրինակ, գործել են նաև բարձր խտու-

---

<sup>1</sup> Агаширинова С., 1978, 81

<sup>2</sup> Гаджиева С., 1958, 17

թամբ և բամբակյա միջնաթելով գորգեր, իսկ Դերբենտի գորգագործական կենտրոններում տարածում ուներ մեկ միջնաթելով գործելու ավանդույթը: Ընդհանրապես 1880–90-ական թվականներից սկսած, երբ լայն տարածում են ստանում Կովկասի տնայնագործական կոմիտեի ստեղծած գորգանկարները, այս տարածաշրջանի գորգագործական կենտրոններում ստեղծվում են արտերկրի շուկաներում ճանաչում ստացած ու բարձր պահանջարկ վայելող գորգերի խմբաքանակներ: Ըստ էության, դրանցում բացակայում են տնայնագործ գորգագործուհու կողմից գործելու ընթացքում ներդրվող մանրամասերը, որոնցով սովորաբար պայմանավորված է լինում տվյալ գորգի գեղագարդման համակարգի ինքնատիպության ու նաև իմաստային բովանդակության գործոնը:

Ամփոփելով սույն ուսումնասիրությունը, մենք կարող ենք եզրակացնել.

ա. Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթները արցախահայոց տեղաշարժերի պատճառով ի շարս պատմական Հայաստանի այլ տարածաշրջանների ու մերձակա երկրների, արմատավորվել են նաև Կովկասի հարավ-արևելյան տարածաշրջաններում և հիմք են հանդիսացել գորգագործական նոր կենտրոնների առաջացման համար: Այս առումով առանցքային դեր ունեցած գործոնների թվում են XVI–XVIII դդ ընթացքում դավանափոխ եղած տասնյակ հազարավոր հայերը, որոնց միջոցով արցախյան գորգագործական ավանդույթները մտել են նաև մահմեդական ցեղերի միջավայր:

բ. Կովկասի հարավ արևելյան գորգագործական կենտրոններում, ինչպես նաև Արցախում, գորգագործական մշակույթով այս կամ այն չափով զբաղվել են նաև այլ էթնիկական հանրույթներ ևս՝ լեզգիները, ավարները, ուտիները, թաթերը, կովկասյան թաթարները, պարսիկները, քրդերը և այս հանգամանքով էլ պայմանավորված է ընդհանրապես կովկասյան գորգերի բազմաշերտությունը, գեղագարդման մանրամասերի արտակարգ հարստությունը և տեխնոլոգիական հատկանիշների ինքնատիպությունը: Այս կամ այն էթնիկական հանրույթին վերաբերելու հարցում կարևոր գործոնները գունային ու տեխնոլոգիական առանձնահատկություններն են: Ընդ որում դրանցից որոշները՝ բամբակե միջնաթելի գործածումը, համեմատաբար բարձր խտությունը, Շիրվանի և Ղուբայի գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերին բնորոշ եզրային բարակ հյուսվածքը մա-

սամբ կապված են 1880-ական թվականներից սկսված Կովկասյան տնայնագործական կոմիտեի նորամուծությունների հետ:

գ. Հաշվի առնելով հանդերձ արցախյան գորգագործական ավանդույթների շուրջ մեկուկես հազարամյա ակնհայտ ներկայությունը Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոններում, պետք է ընդունել, որ այդտեղ ստեղծված գորգերը վերը թվարկված էթնիկական հանրույթների համահավաք մշակութային գործունեության արդյունք են, ուստի հնարավոր չէ հստակորեն բացահայտել այս կամ այն տիպի ծագման հարցում այս կամ այն էթնիկական հանրույթի ունեցած դերակատարման չափը: Այս առանձնահատկությունների առկայությունից էլ էլնելով շրջանառության մեջ ենք դնում նաև «Հարավարևելյան կովկասյան գորգեր» հավաքական անվանումը:

#### ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Աբրահամյան Հր.,** – 2009, Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901–1933): Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Բ., Ս. Էջմիածին, 2009:

**Բարխուդարյան Ս.,**– 1969, Դերբենտի հայ-աղվանական թագավորությունը. – Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1969, հմ. 3, էջ 139–141:

**Բեկնագարեանց Ապրես,** – 1886, «Գաղտնիք Ղարաբաղի»: Առաջաբան և գրաբարից աշխարհաբարի թարգմանությունը Մակար վարդապետ Բարխուտարեանցի, Ս.Պետերբուրգ, 1886,

**Դավթյան Ս.,** – 1981, Դրվագներ միջնադարյան Հայաստանի կիրառական արվեստի պատմության, Եր., 1981

**Եսայի Հասան Ջալալյան,** – 1839, Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելեց յաշխարհին Ադուանից, Շուշի:

**Թաթիկյան Վ.,** – 2004, Արցախի տոհմագորգերը, Եր., 2004:

**Թեմուրճյան Վ.,** – 1955, Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955:

**Իրն Դաուդ ալ-Բալագուրի,** – 2005, Երկրների նվաճում.- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16: Արաբ աղբյուրներ, Գ, արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր (Ներածությունը և բնագրից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի), Եր., 2005, էջ 223–329:

**Իրն Մուհամմադ Իրն ալ-Ֆակիհ**, – 2005, Գիրք երկրների մասին. – Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16: Արաբ աղբյուրներ, Գ, արաբ մատենագիրներ Թ–Ժ դարեր (Ներածությունը և բնագրից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի), Եր., 2005:

**Լալայան Եր.**, – 1988, Գանձակ. – Երկեր հինգ հատորով, հատոր 2, Եր., 1988:

**Լալայան Եր.**, – 1988, Վարանդա. – Երկեր հինգ հատորով, հատոր 2, Եր., 1988:

**Լուսենց Ա.**, – 1982, Արեշի բարբառը, Եր., 1982:

**Կարապետյան Ս.**, – 1985, Պատմական Խոշկաշենը և նրա հուշարձանները.- ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր», 1985, թիվ 10, էջ 74–79:

**Հակոբյան Ա.**, – 2004, Աղուանից իշխանների ժամանակագրությունը Է. դարի վերջին -Ը. դարի սկզբին. – Հանդես Ամսօրեայ, հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա-Երևան, 2004, թիվ 1–12, էջ 267–293:

**Հակոբյան Հր.**, – 1991, Արցախի միջնադարյան արվեստը, Եր., 1991:

**Հովհաննիսյան Ա.**, – 1959, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959:

**Հոֆոնիստեր Ջ.**, – 1937, Հայկական գորգերը. – Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1937:

**Ղազար քահանա Յովսեփյան**, – 1904, Ակնարկներ ուտիացի եվ մահմեդական հայերի մասին, Թիֆլիզ, 1904:

**Ղանալանյան Ա.**, – 1969, Ավանդապատում, Եր., 1969:

**Մակար եպս. Բարխուտարեանց**, – 1999, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ: հատորը կազմեց՝ Պ.Չոբանեան, Եր., 1999:

**Մատթեոս Ուռհայեցի**, – 1991, Ժամանակագրություն: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյան, Եր., 1991:

**Միրզա Յուսուֆ Ներսեսով**, – 2000, Ճշմարտացի պատմություն, թարգմանություն՝ բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Բ.Պ. Կոստիկյանի, Եր., 2000:

**Մովսես Կաղանկատվացի**, – 1969, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջաբանը և ծանոթագր.՝ Վարազ Առաքելյանի, Եր., 1969:

**Ուլուբաբյան Բ.Ա.**, – 1978, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Եր., 1978

**Ուլուքաբյան Բ.Ա.,** – 1981, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության, Եր., 1981

**Պողոսյան Ա.,**–1984, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 1, անհատական գիտարշավ Վարանդա, 1984:

**Պողոսյան Ա.,**–1985, Դաշտային ազգագրական նյութեր, տետր 2, անհատական գիտարշավ Վարանդա, 1985:

**Պողոսյան Ա.,**–2004, Վիշապագորգերի ծագումնաբանության և տարածման արեալների հարցի շուրջ. – Հանդես Ամսօրեայ, հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա-Երևան, 2004, թիվ 1–12, էջ 367–415:

**Պողոսյան Ա.,** –2008, «Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին.– «Էջմիածին», փետրվար, 2008, ԺԲ, էջ 38–49:

**Պողոսյան Ա.,** – 2010, «Խնձորեսկ» խմբի մի տիպի գորգերի ծագման ու արեալային տարածման հարցի շուրջ.-Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում (Հայ ժողովրդական մշակույթ XV), Եր., 2010, էջ 380–387:

**Պողոսյան Ա.,** – 2011, Արցախի գորգագործական ավանդույթները հյուսիս-արևելյան Այսրկովկասի գորգործական կենտրոններում. –Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի պետական համալսարան, 14, Եր., 2011, էջ 240–250:

**Պողոսյան Ա.,** – 2011, Հարթակարով ասեղնագործական մշակույթի ավանդույթների մասին. – «Էջմիածին», նոյեմբեր-դեկտեմբեր, 2011, Է, էջ 53–60:

**Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանց,** – 1858, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան: Աշխատասիրութեամբ տեսնոն Սարգսի Սանահնեցվոյ Ջալալեանց թեմակալ Արքեպիսկոպոսի հայոց Վրաստանի, Իմերեթի և այլն, մասն Բ, Տփղիս, 1858:

**Սեյրան Գ.,** – 1928, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները (տնտեսական աշխարհագրություն), Թիֆլիս, 1928 Թիֆլիս, 1928,

**Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի,** – 1969, Ծաղկաքաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ. Քյուրտյան. – Բանբեր Մատենադարանի 9, Եր., 1969, էջ 283–347:

**Տեր-Ղևոնդյան Ա.,** – 1982, Խալիֆա իբն-Խալաթը որպես Հայաստանի և խալիֆայության Է–Թ դդ.պատմության աղբյուր. – Արևելյան աղբյուրագիտություն I, Եր., 1982:

**Քաջերունի**, – 2001, Բազմամիլիոն ժառանգություն. – ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգարության ինստիտուտ, Վավերագրեր-2, կազմողներ Ա.Ղազիյան, Ա. Քալանթարյան, Եր., 2001, էջ 47–106:

**Քուրսեան Հ.**, – 1947, Գորզը հայոց մոտ, Վենետիկ, սր. Ղազար, 1947,

**Абу-Исхак ал-Истахри**, – 1901, Книга путей и царства. Перевод и комментарии Н.А. Караулова, – СМОМПК, вып. 29, Тифлис, 1901.

**Абу-л Каим ибн-Хаукаль**, – 1908, Книга путей и царства. Перевод и комментарии Н.А.Караулова.-СМОМПК, вып. 38, Тифлис, 1908.

**Агаширинова С.С.**, – 1978, Материальная культура лезгин XIX – начало XX в., М., 1978.

Армяно-русское отношение в XVIII веке, – 1967, Сборник документов, т. 2, часть 2, под редакцией Ашота Иоанисяна, Ер., 1967.

**Бабаев А.А.**, – 1983, Ковры Шеки-Закатальской и Кахи Белоканской зон.- Международный симпозиум по искусству восточных ковров, тезисы, Б., 1983.

**Волкова Н.Г.**, – 1980, Хыналыг, – Кавказский этнографический сборник, VII, Москва, 1980.

**Гаджиева С. Ш.**, – 1958, Каякентские кумыки.- Кавказский этнографический сборник, II, М., 1958.

Геноцид армян в Османской империи, – 1982, Сборник документов и материалов (под ред. М.Г. Нерсисяна), Ер., 1982.

Жизнь Артемия Араратского.- Издание подготовил К.Н. Григорян при участии Р.Р. Орбели, Литературные памятники, М., 1981.

**Зедгенидзе Я.**, – 1891, Город Шуша. Производство ковров и паласов.- СМОМПК вып. XI, Тифлис, 1891.

**Исаев М.**, – 1932, Ковровое производство Закавказья, Тифлис, 1932.

**Каграманян К.**, – 2004, Книга очага: земля зовет, 2, Ер., 2004.

**Керимов Л.**, – 1983, Азербайджанский ковер, т. 2, Б., 1983.

**Лавров Л.**, – 1982, Этнография Кавказа, Л., 1982.

**Левиатов В.Н.**, – 1948, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Б, 1948.

**Миллер Б.**, – 1929, Таты, их расселение и говоры, Баку, 1929.

Народы Кавказа,– 1981, Каталог-указатель этнографических коллекций, Л., 1981.

Народы Кавказа, т. 2, под редакции Б. А. Гарданова, А. Н. Гулиева, С. Т. Еремяна, Л. И. Лаврова, Г. А. Нерсесова, Г. С. Читая, М., 1962.

**Пиралов А. С.**, – 1913, Краткий очерк кустарных промысел Кавказа, издание второе, С.Петербург, 1913.

**Пиралов А.С.**, – 1925, Кустарная промышленность Закавказских Республик.- Закавказье: статистико-экономический сборник, Тифлис, 1925.

**Худадов В.Н.**, – 1926, Закавказье (историко-экономической очерк), М.-Л., 1926.

**Boralevi A.**, – 2013, The mystery of Armenian»Niche» rugs.-Armenian knot, Traditionsof karpet weaving Art, Erevan, 20–22 November, 2013, abstracts, p. 25–26.

**Chazarian Manya**, – 1988, Armenian Carpet, Los Angeles, 1988:

**Ejland L. Murray**, – 1976, Oriental Rugs, New York, 1976:

**Enderleijn V.**, – 1986, Orientalische kelims, Berlin, 1986:

**Kouymjian Dickran**, – 2014, The Berlin Dragon-Phoenix Carpet and its Probable Armenian orijin.- Armenian Rugs and Textiles an over view of Examples From Four Centuries, Exhibition Catalogue, Vienna 2014, p. 16–34.

**Lemyel Amirian**, – 1983, Competiton.-Hali, Vol. 6, թիվ 1,1983, էջ 107–108:

**Poghosyan Ashkhunj**, – 2013, On the issue of the Origin of Anatolian Rug.- Armenian Knot. Traditions of Carpet Weaving Art, International conference, Erevan 20–22 November 2013, Abstracts, Erevan 2013, p. 58–59.

**Poghosyan Ashkhunj, Muradyan Tatevic**, – 2013, Armenian Rug Weaving Art Traditions in the Nort Eastern Transcaucasia.-Armenian Knot.Traditions of Carpet Weaving Art, International conference, Erevan 20–22 November 2013, Abstracts, Erevan 2013, p. 61–63.

Rites of Passage in inscribed Armenian Rugs, – 2002, Edited By Ejland L. Murray, San Francisco, 2002.

**Tony Hazledine**, – 1994, On the Road to Zakatala,- Hali, the international Magazine of Antigüe Carpet and Textile Art, December 1994/January issue 78, էջ 88–96:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1710-1720-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1710-1720-ական թթ. Արևելյան Հայաստանում, մասնավորապես Արցախում (Ղարաբաղում) և Սյունիքում (Ղափանում) տիրող ժողովրդագրական իրավիճակի մասին կան հստակ տեղեկություններ: Պատմական ժողովրդագրության քննությունը հնարավորություն է ընձեռում, այլ հարցերի հետ մեկտեղ, ճշտելու և վերստուգելու հայկական զինված ուժերի քանակը մեզ հետաքրքրող ժամանակահատվածում:

Նախ, ներկայացնենք առկա տեղեկությունները: Ռուսաստանում հայ ազատագրական շարժման ներկայացուցիչ Մինաս վարդապետ Տիգրանյանը, ավարտելով Պետրոս Մեծի հրամանով իր գաղտնի առաքելությունը<sup>1</sup> Հայաստանի պարսկական տիրապետության տակ գտնվող շրջաններ, 1717 թ. մարտի 14-ին բանավոր զեկուցել էր. «Այդ պատրիարքի (իմա՛ Եսայի Հասան-Ջալալյանի) [հոգևոր] իշխանության տակ, Գանձասար վանքի շուրջը, կա 900 գյուղ, ու դրանք մեծ՝ 100, 200, 300, 400 և ավելի տներ ունեցող գյուղեր են: Գանձասարից մինչև Էջմիածնի վանքը, որտեղ ապրում է մյուս պատրիարքը (իմա՛ Աստվածատուր Ա. Համադանցին – Ա. Ա.), բեռնըված ձիերով 5 օրվա ճանապարհ է: Վերջինս ավելի շատ գյուղեր ունի իր իշխանության տակ, քան Եսայի պատրիարքը, բայց թե որքան՝ այդ մասին ճշգրիտ չգիտե...»

Այդ երկու վերը հիշված պատրիարքների իշխանության տակ կլինի 200.000 [տուն] ժողովուրդ, դրանք էլ՝ վաճառականներ և գյուղացիություն»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս *Армяно-русские отношения в первой трети XVIII века [Сборник документов, т. II, ч. I, под ред. Ашота Иоаннисяна, Е., 1964 (այսուհետև՝ Աшота Иоаннисяна, АРО, I), док. 147]*

<sup>2</sup> *АРО, т. I, док. 154, с. 370. 1721 թ. Իրանի շահի մոտ առաքված օսմանյան պատվիրակ Դերի-Մուհամմեդ Էֆենդին, վերադարձալով Կ. Պոլիս, նույն բանն էր հաղորդում սուլթանին, որ Պարսկաստանի «ամեն մի գյուղ ունի 300, 500 և 1000 տուն (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանությունը, ներածությունը, ծանոթագրությունները Ա. Ն. Սաֆրաստյանի, հ. Ա, Ե., 1961, էջ 125)*



1724 թ. նոյեմբերի 5-ին Ղարաբաղի հայկական գործի պատվիրակները Մանկտ- Պետերբուրգում՝ արտաքին գործերի կոլեգիայում հաղորդում էին ավելի հասակ տվյալներ.

«Նորին կայսերական մեծության պաշտպանության տակ մտնելու ցանկություն ունեցող հայ ժողովրդի (և՛ զինվորականների, և՛ այլոց) թիվը միայն Ղարաբաղի նահանգում կլինի ընդհանուր առմամբ 100.000 տուն՝ չհաշված հայկական մյուս նահանգը, որը կոչվում է Կապան և գտնվում է Ղարաբաղի նահանգի և Երևանի միջև՝ դրանցից ձիով 3 օրվա ճանապարհի հեռավորության վրա: Եվ այդ Կապանի նահանգի հայերն իրենց հետ միաբան են և նույնպես ցանկանում են մտնել նորին կայսերական մեծության պաշտպանության տակ: Իսկ այդ Կապանի նահանգում հայ ժողովրդի թիվն ավելի մեծ է, քան Ղարաբաղում, ու մեծ մասը վաճառականություն է»<sup>1</sup>:

Փոքր-ինչ ավելի ուշ, 1725 թ. հուլիսի 25-ին կայսրուհի Եկատերինա Ա-ին հղված ուղերձում, Ղարաբաղի կաթողիկոսներն ու մելիքները նշում էին, որ իրենց ամենափոքր գյուղերն ունեն 30-ից մինչև 50, իսկ ամենախոշորները՝ մինչև 600 տուն<sup>2</sup>: Վերլուծենք այս տվյալները:

1. Ղարաբաղի աշխարհագրական ընդգրկումը XVIII դարում: Հաշվելով 1710-1720- ական թթ. Ղարաբաղի բնակչության թիվը, պետք է հիշել, որ XVIII դ. Ղարաբաղը ներառում էր մի շարք տարածքներ, որոնք 1923թ. նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) սահմաններից դիտավորյալ դուրս էին թողնվել: Այդ բնիկ հայկական շրջանները ձգվում էին ԼՂԻՄ-ի ողջ պարագծով՝ բնական աշխարհագրական սահմանների երկայնքով: Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում դա Գյուլիստանն էր, Գետաշենը, Գետաբեկն ու Քարահատը, արևմուտքում՝ Քարվաճառը, իսկ հարավում՝ մինչև Արաքս՝ Դիզակի մելիքության ծայրամասային հատվածները:

1722թ. մինչև 1730-ական թթ. Ղարաբաղի տարածքը՝ դաշնակից Սյունյաց իշխանապետության հետ միասին, վերահսկում էին հայկական զինված ուժերը և, ըստ այդմ էլ, արտաքին ուժերի կողմից ստացել էր

<sup>1</sup> АРО, т. II, ч. II, под ред. Ашота Иоаннисяна, Е., 1967 (այսուհետև՝ АРО, II), док. 291, с. 205

<sup>2</sup> АРО, II, док. 315, с. 249

Հայկական սղնախներ և Հայկական գորք նոր պետականակիր անվանումներ<sup>1</sup>:

2. Հայ ընտանիքի (տան) շնչերի քանակը: Եթե որպես XVIII դ. սկզբում հայկական «տան» շնչերի նվազագույն քանակ ընդունենք 5-ը, ապա, Սանկտ-Պետերբուրգում 1724թ. նոյեմբերի 5-ին արված վերոհիշյալ հայտարարության համաձայն, Ղարաբաղի բնակչության ընդհանուր թիվը կազմել է 500,000 մարդ<sup>2</sup>: Միաժամանակ, պետք է նկատել, որ XVII-XVIII դդ. ավանդական հայկական ընտանիքը՝ «տունը», բաղկացած էր 10, 20, իսկ երբեմն էլ 30-40 շնչից<sup>3</sup>:

Այդուամենայնիվ, ղարաբաղցի հայերը, մատնանշելով իրենց 100,000 տունը, մեր կարծիքով, հաշվարկի հիմքում դնում էին ոչ թե հայ ավանդական տունը՝ 10 և ավելի անդամներով, այլ միայն նրա սկզբնային բջիջը՝ առանձին ընտանիքը:

3. Շրջակա հայության հոսքը Ղարաբաղ: Ըստ ամենայնի, 1724թ. Ղարաբաղի 100,000 հիշատակվող տների մեջ պետք է մտցնել նաև Գանձակի բնակչության հայկական մասը՝ այդ քաղաքը շրջապատող հայկական գյուղերի հետ միասին: Բանն այն է, որ 1723թ. հոկտեմբերին Գանձակի վրա օսմանյան բանակի ձախողված գրոհի<sup>4</sup> ժամանակ ու դրանից անմիջապես հետո բնակչության մեծամասնությունը՝ և՛ հայերը, և՛ մահմեդականները դուրս եկան քաղաքից: 1723թ. դեկտեմբերի 20-ին Շամախիից

---

<sup>1</sup> Սյու մասին մանրամասն տե՛ս Aivazian A. M. *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997), p. 17-18

<sup>2</sup> Միայն սույն հայտարարության հիման վրա՝ դեռևս 1990 թ. Պ. Մուրադյանը ևս նկատում էր, որ 1720-ական թթ. Ղարաբաղի հայերի թիվը եղել է 100,000 ընտանիք և 500,000 մարդ (Мурадян П. *История - память поколений: проблемы истории Нагорного Карабаха*, Е., 1990, с. 112)

<sup>3</sup> Համապատասխան տվյալները տե՛ս Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի Օսմանյան աշխարհագիր մատյաններում, Ե., 2007, էջ 60-63: Petrus Bedik. *Cebil Sutun, Vienna, 1678*, p. 379; Ջաբարիա Սարկաազ. Պատմագրություն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 132: Կարապետյան Մ. Մ., Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ. (Պատմա-բանասիրական հանդես, 1986, N 2, էջ 103, ծնթ. 33), Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բարարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 386: Гакстаузен Август. *Закавказский край*, СПб., 1856, т. 1, с. 190: Վրաց հեղինակների համաձայն, XVII-XVIII դդ. Վրաստանում նմանատիպ իրավիճակ էր՝ «մեկ ծովան ուներ 10-20, իսկ երբեմն էլ 30 շունչ» [տե՛ս Բրեգաձե H. A. *К вопросу об этническом составе населения Грузии в XVII веке (Кавказский этнографический сборник, т. VI, М., 1976, с. 245, прим. 55)*]

<sup>4</sup> Սյու ճակատամարտում օսմանցիների դեմ կռվել էին պարսկական, կախեթցի վրացիների, Գանձակի շիա և հայկական միացյալ ուժերը. այս մասին մանրամասն տե՛ս Այվազյան Ա. Մ., Բրադարձություններն Այսրկովկասում 1723 թվականին և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք (Պատմա-բանասիրական հանդես, 1990, N 4, էջ 71-73. հմնտ. APO, II, с. LXVI-LXXV)

գրած նամակում Ալեքսանդր քահանան ընդգծում էր, որ այդ պահի դրությամբ Գանձակի գրեթե բոլոր հայերն արդեն անցել էին Ղարաբաղ. «ԿՌ (60.000) մարդով եկին Գանջու վերա: ԺԲ (12) փաշայ ին, թոփ, դունբարայ [=ռումբ] շատ ունին, քաղաքի մինչև ի կեսըն առին, մեր Հայոց ազգն ողճ ապրանքըն թալանեցին՝ որն կոտերեցին, որն կերի դանում: Որ փող ուներ՝ գնաց իւր երէխեքըն առին: Կ (60) տուն քշեցին տարան Հոռմաս տուն, մնացեալն փախըստական, մերկ, պոպիկ գնացին Հայոց սղնա[խ]նն»<sup>1</sup> (ընդգծումը՝ Ա. Ա.):

Համաձայն 1725թ. օգոստոսի 8-ին գրված ֆրանսիական մի փաստաթղթի, Գանձակի պարիսպներից դուրս գտնվող արվարձանը բնակեցված էր բացառապես հայերով՝ *faubourg des Armeniens*<sup>2</sup>: Գանձակի այս *faubourg*-ը 1723թ. նոյեմբերի 26-ին Բաքու ժամանած հայ քահանա Անտոն Առաքելովի հարցաքննության գրառման մեջ անվանված է «армянскими слободами за городом»<sup>3</sup>: Հենց այս արվարձանն է Ալեքսանդր քահանայի նամակի վերոբերյալ հատվածում անվանված «քաղաքի կեսը»՝ **“того города взяли половину”**: Բայց և այնպես, միջնադարյան քաղաքի այն մասը, որն ընկած էր պարիսպներից դուրս, պատմականորեն մի քանի անգամ ավելի մեծ բնակչություն ուներ, քան պարսպապատ հատվածի ներսում: Օրինակ, XVII դ. կեսերին ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն ընդգծում էր, որ Երևանի *faubourg*-ում 20 անգամ ավելի շատ մարդ էր ապրում, քան պարիսպների ներսում<sup>4</sup>: Իսկ Գանձակի մասին 1699թ. սեպտեմբերի 22-ին Իսրայել Օրու հաղորդած տեղեկությունների համաձայն, «ամենուր այդ քաղաքի շուրջ ապրում են [հայ] քրիստոնյաներ» (“...tout autour de laditte ville, se (=ce) sont des chrestien”): Գանձակում հայ բնակչության հոծ թվի մասին է վկայում նաև այդ քաղաքից և նրա անմիջական շրջակայքից 15,000 հայ զինվոր հավաքագրելու Օրիի մտադրությունը<sup>5</sup>:

Այս առումով հատկանշական է, որ, երբ թուրքական բանակը Գանձակի վրա անհաջող գրոհելուց հետո նահանջում էր Թիֆլիս, Ղարաբաղում

<sup>1</sup> *АРО, II, документы 195, 196, с. 53, 54*

<sup>2</sup> Табарга И., *Материалы для истории Грузии первой четверти XVIII века*, Тбилиси, 1982, с. 304

<sup>3</sup> *Հմմտ. АРО, II, док. 194, с. 51*

<sup>4</sup> *Les Six Voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse, et aux Indes, Paris, т. 1, 1679, p. 38. Հմմտ. Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 95-102*

<sup>5</sup> Эзов Г., *Сношения Петра Великого с армянским народом. Документы*, СПб., 1898, док. 9, с. 33, 36

տեղակայված հայկական զորաբանակի հրամանատարությունը չի վարանում սուրհանդակներ ուղարկել թուրքերի մոտ՝ Գանձակից վերցված հայ գերիներին անհապաղ ազատելու պահանջով: Նկատի առնելով, մի կողմից, սեփական զորքերի վատ դրությունը գանձակյան ձախողումից հետո, մյուս կողմից՝ այն սպառնալիքը, որ ներկայացնում էին Ղարաբաղի հայերի ընտիր և լավ զինված զորքերը, թուրքերի գլխավոր հրամանատար Իբրահիմ փաշան անմիջապես բավարարում է նրանց պահանջը<sup>1</sup>: Այսպիսով, գանձակեցի հայերի՝ վերը մեջբերված փաստաթղթում հիշատակվող գերյալ 60 ընտանիքը նույնպես հայտնվեց Արցախում: Գանձակից, ինչպես նաև մերձակա շրջաններից հայերի զանգվածային ներհոսքը Ղարաբաղ՝ հայկական զորքերի պաշտպանության տակ, հաստատվում է ավելի ուշ եղած տեղեկությունների համաձայն ևս: Այսպես, 1726 թ. հունվարի 26-ին ռուսական հրամանատարության կողմից իբրև լրտես ուղարկված շամախեցի Սիմոն Բալասյանը («1726 г. Генваря 26 дня посланной [русским командованием] из Баки шпионом армянин шамахинской житель Семен Баласин»), ի միջի այլոց, զեկուցում էր նաև Գանձակի ժողովրդագրական իրավիճակի մասին. «Այժմ Գանձակում ապրում են գանձակեցի մահմեդականների 5 կամ 6 ընտանիք և հայերի 50 ընտանիք: Իսկ մյուս մահմեդականները գաղթել են Արդեբիլ և տարբեր քաղաքներ, իսկ հայերը՝ Սըղնախներ<sup>2</sup> (իմա՝ Ղարաբաղ – Ա. Ա.)»:

Այսպիսով, սկսած 1723թ. նոյեմբերից՝ Արցախն ապաստան էր դարձել տասնյակ հազարավոր հայ գաղթականների համար:

4. Ղարաբաղի բնակիչների և զինվորների թվային հարաբերակցությունը 1720-ական թթ.: 1720-ական թթ. Ղարաբաղն ու Ղափանը միասին մարտի դաշտ էին հանում մինչև 60,000 զինվոր (որից 40 հազարը՝ Ղարաբաղը)<sup>3</sup>: Մեկ տասնամյակ շարունակ օսմանյան ավելի խոշոր կանոնավոր բանակներին արդյունավետ դիմադրություն ցույց տված այս երկու ծայրաստիճան ռազմականացված հայկական իշխանապետություններում<sup>4</sup>

<sup>1</sup> Հմմտ. АРО, II, док. 194, с. 51

<sup>2</sup> Архив внешней политики России, фонд СРП (Сношения России с Персией), 1726, оп. 1, док. 4, л. 211а-212а. Հմմտ. Пайчадзе Г. Г. Русско-грузинские политические отношения в первой половине XVIII в., Тбилиси, 1970, с. 79. Պարսաւյան Վ. Ա., Լեհահայերի մասնակցությունը Ղալիթ-բեկի արիւնքին, Ե., 1962, էջ 67, АРО, II, док. 358-359, 366, с. 299, 302, 307

<sup>3</sup> Aivazian A., *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, p. 7-9, 60-63.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 6-20

խաղաղ բնակիչների և զինվորների՝ 10-ը 1-ի (5 արուններից մեկը) հարաբերակցությունը միանգամայն արդարացված է թվում: Նման հարաբերակցությունը նույնպես հուշում է, որ Ղարաբաղի բնակչությունը խնդրո առարկա տասնամյակներում կազմում էր մոտավորապես կես միլիոն մարդ:

5. Ղարաբաղի բնակչության թիվը՝ ըստ գյուղերում եղած տների միջին թվաբանականի: Եթե 315-ը վերցնենք որպես 1725թ. Ղարաբաղի գյուղերում եղած տների ամենափոքր և ամենամեծ թվերի՝ 30-ի և 600-ի<sup>1</sup> միջին թվաբանական և այն բազմապատկենք 900-ով (սա Ղարաբաղի գյուղերի քանակն է 1717թ., ըստ Մինաս Տիգրանյանի վերոբերյալ հաղորդման), ապա կստանանք 283,500 տուն կամ 1,417,500 շունչ ամբողջ Ղարաբաղում՝ մեկ ընտանիքում 5 շունչ հաշվարկով:

Եթե 250-ը վերցնենք որպես միջին թվաբանական 100 և 400-ի միջև (այսինքն, ըստ Մինաս Տիգրանյանի՝ 1717 թ. Ղարաբաղի գյուղերում եղած տների ամենափոքր և ամենամեծ թվերի միջև) ու այն դարձյալ բազմապատկենք 900-ով, ապա կստանանք 225,000 տուն կամ 1,125,000 շունչ ամբողջ Ղարաբաղում՝ մեկ ընտանիքում 5 շունչ հաշվարկով: Անկասկած, այս երկու հաշվարկում էլ պատմական իրականությունը ներկայանում է բավական ուռճացված տեսքով: Սակայն այս թվերը վկայում են, որ վերը կատարված գնահատումները, ըստ որոնց, 1710-1720-ական թթ. Ղարաբաղի բնակչությունը կազմել է 500,000 մարդ, միանգամայն արժանահավատ են:

6. Հետադարձ հաշվարկ: 1710-1720-ական թթ. Արևելյան Հայաստանում ու մասնավորապես Ղարաբաղում ժողովրդագրական իրավիճակի մասին վերոհիշյալ գնահատականները հաստատվում են նաև կողմնակիորեն՝ ավելի ուշ տեղեկությունների հիման վրա հետադարձ հաշվարկ կատարելու միջոցով: Այսպես՝ հայ ազատագրական շարժման լավատեղյակ գործիչ Հովսեփ Էմինը 1792թ. հայտարարում էր, որ «ի ժամանակի Պետրոս արքային (իմա՝ XVIII դ. առաջին քառորդում – Ա. Ա.) հայք տասնապատիկ առաւելս էին, քան զայժմս (իմա՝ 1790-ական թթ. – Ա. Ա.), եւ մէլիքեանքն Ղարաբաղու բաւական շատացեալս էին զօրօք և բովանդակ Նախիջևան և Երևան լի էր հարուստ վաճառականօք»<sup>2</sup>:

<sup>1</sup> 1725 թ. հուլիսի 25-ին Եկատերինա Ա-ին վերը հիշատակված ուղերձը տե՛ս APO, II, док. 315, с. 249

<sup>2</sup> Մեջբերված է Հովսեփ Էմինի՝ 1792 թ. հունվարի 1-ի նամակից [տե՛ս Գրիգորյան Վ., Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղությանի անտիպ նամակները (Պատմա-բանասիրական հանդես, 1990, N 4, էջ 193)]

Իսկապես, 1720-ական թթ. և հետագայում հայերն ահռելի մարդկային կորուստներ էին կրել: Պատահական չէ, որ լեհ ճիզվիտ Ջ. Կրուշինսկին, պատմելով 1724թ. Երևանի գրավման մասին, գրքում էր. «Քաղաքի գրավման ժամանակ սպանված 30000 հայերից բացի, բավական շատ էին նաև գերեվարվածները, որոնց քշում էին նախիրների պես: Այս պատերազմների ընթացքում հայերի թիվն այնքան նվազեց, որ 1725թ. վերջին անգամ կեսը չէին այն քանակության, որ մինչև աֆղանների գալն ունեին Պարսկաստանում»<sup>1</sup>: Իսկ կարմելիտ քարոզիչ Լինդերը, որը 1732թ. եկել էր Իրան և ընդարձակ նյութեր էր հավաքել իրեն անմիջականորեն նախորդած շրջանի մասին, իր «Երկրորդ ճանապարհորդություն» («Secondo Viaggio») աշխատության մեջ, 1722-1725 թթ. Իրանում հայերի մարդկային կորուստները հաշվում էր «200000 սպանված և ստրկության քշված»<sup>2</sup>:

Ժողովրդագրական տանսապատիկ անկման գնահատականը, որ Էմինն, ամենայն հավանականությամբ, լսած պետք է լիներ հայ հոգևորական գործիչներից, որոնք էլ միայն կարող էին ունենալ հայության ժողովրդագրության մասին փոքրիշատե հավաստի տեղեկություններ, ստուգվում է ռուսաց ցար Պավել Ա-ի 1797 թ. արձակած մի հրամանագրով, որտեղ Ղարաբաղի հայ բնակչության թիվը նշվում է 11,000 ընտանիք<sup>3</sup>: Այսինքն՝ գրանցվում է բնակչության թվի գրեթե ճիշտ տասնապատիկ անկում՝ 100,000 ընտանիքից մինչև 11,000 ընտանիք<sup>4</sup>:

XVIII դ. երկրորդ կեսի Ղարաբաղի ժողովրդագրության վերաբերյալ ունենք ևս երկու ուշագրավ տեղեկություն: 1804թ. դեկտեմբերի 30-ին Իշխան Ցիցիանովի զեկուցագրում նշվում է, որ Իբրահիմ խանի (1763-1806) իշխանության տակ կար ղարաբաղցի հայերի 60,000 տուն<sup>5</sup>:

<sup>1</sup> Krusinski T., *The History of the Late Revolutions of Persia*. vol. 2, London, 1740, p. 178. Հմնտ. *Արքայապետ Երևանցի, Պատմություն պատերազմացն 1721-1736 թուի. Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանոթագրություններ, պատրաստեց Սահակ Ճէմճէմեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1977, էջ 31-35*

<sup>2</sup> “The Armenian race in Persia was so diminished from the time of the arrival of the Afghans, i.e. in 1722 up to 1725 that 200,000 may be reckoned as having been killed and taken away as slaves” (A Cronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII Centuries. Vol. I, London, 1939, p. 579)

<sup>3</sup> Мурадян П. *История – память поколений*, с. 112 (СХнбХЩ չի “Полное собрание законов Российской империи” գրքից՝ տ. 24, с. 761)

<sup>4</sup> Հետաքրքիր է, որ անձանոթ լինելով Հովսեփ Էմինի սույն նամակին՝ XVIII-XIX դդ. մի շարք ռուսական արխիվային վավերագրեր համեմատելու միջոցով, Պ. Մուրադյանը եկել է Էմինի արած նույն եզրակացությանը, այն է՝ 1724 թ. հաջորդած «հարյուր տարվա ընթացքում հայերի թիվը պակասել էր գրեթե տասն անգամ» (նույն տեղում, էջ 112-113)

<sup>5</sup> «Իբրահիմ խանն իր իշխանության տակ ուներ միայն ղարաբաղցի հայերի 60.000 տուն, որոնք կառավարում էին հինգ ամենազնվական մելիքները, որոնք, ըստ իս, տգիտությունից

Այս 60,000 հայ ընտանիքների մասին տեղեկությունը, ըստ ամենայնի, վերաբերում է 1760-1770-ական թթ. դրությանը, որովհետև 1783 թ. Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը Ղարաբաղում հաշվում էր արդեն ընդամենը 30,000 հայ ընտանիք<sup>1</sup>: Այս թվերը նույնպես հաստատում են այն հնարավորությունը, որ 1710-1720-ական թթ. Ղարաբաղում կար 100,000 հայ ընտանիք, քանի որ օսմանյան ներխուժումը և այն ուղեկցած բնակչության զանգվածային ոչնչացումը, ինչպես նաև դրանից ոչ շատ անց Իրանում սկիզբ առած ավերիչ ներքին խժոժությունները բերեցին Արևելյան Հայաստանում հայկական բնակչության թվի աղետալի կրճատման:

7. Մխալ և թյուր տեղեկություններ: Վերոշարադրյալի հիման վրա պետք է անստույգ համարել Մինաս վրդ. Տիգրանյանի՝ 1717թ. մարտի 14-ին տված այն գնահատականը, ըստ որի՝ Արևելյան Հայաստանում էջմիածնի և Գանձասարի «պատրիարքների իշխանության տակ գտնվող հայ ժողովրդի թիվը կարող է լինել մոտ 200,000, դրանք էլ՝ վաճառականներ և գյուղացիություն» [Народа армянского под владением вышепомянутых двух патриархов счислением может быть тысяч с двести, и то купечество и крестьянство]: Ամենայն հավանականությամբ, Մինաս վարդապետը խոսել է ոչ թե 200,000 հայերի, այլ 200,000 հայ տների մասին, որը լիովին կհամապատասխաներ դարաբաղցիների 1724 և 1725 թթ. հաղորդածին, ինչպես նաև չէր հակասի իր իսկ հայտնած 900 գյուղի և դրանց չափսերի մասին տեղեկությանը: Հավանաբար, սխալը թափանցել է նրա՝ բանավոր հայերեն զեկույցի՝ ռուսերենով թարգմանաբար գրառված տեքստի մեջ՝ թարգմանչի անուշադրության պատճառով:

Ամենայն հավանականությամբ, դարձյալ թարգմանչի սխալն է արևելահայերին միայն գյուղացիության և վաճառականության դասերի մեջ ներառելը, քանզի հայերն ապրում էին Այսրկովկասի բոլոր հիմնական քաղաքներում, իսկ Երևանում, Թիֆլիսում և Գանձակում կազմում էին մեծամասնություն, որոնց մեջ մեծ էր նաև արհեստավորության թիվը, և

---

*առաջնորդվելով, իրենց համարում են հին Հայաստանի թագավորներից սերված: Իսկ այժմ ոչ ավել, քան 4.000 տուն կա, մնացածները Շամախիի և Շերիի խաների [իշխանության] տակ են, ինչպես նաև Վրաստանում են»: Տե՛ս Кавказ и Закавказье во время управления князя П. Д. Цицианова (Акты, собранные Кавказской археографической комиссией, т. 2, Тифлис, 1868, с. 623), հմմտ. Мурадян П. История – память поколений, с. 11*

<sup>1</sup> *Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.). Сборник документов, т. IV, под ред. Нерсисяна М. Г., Е., 1990, док. 128, с. 209*

այս հարցում Մինաս Տիգրանյանը սխալվել չէր կարող: Բացի այդ, Վրաստանում, Արցախում, Սյունիքում, Շամախիում և պարսկական ծառայության մեջ զգալի թիվ էր կազմում նաև հայ զինվորականությունը:

Թյուրիմացություն պետք է համարել նաև 1724 թ. նոյեմբերի 5-ի Ղարաբաղի պատվիրակների հաղորդումը, թե Ղափան նահանգում ավելի շատ հայ կար, քան Ղարաբաղում: Հնարավոր է, սակայն, որ Ղափան ասելով՝ նրանք նկատի են ունեցել ոչ թե Դավիթ-բեկի ստեղծած հայոց իշխանապետության տարածքը, այլ Ղափանն ավելի լայն առումով՝ որպես Սյունյաց ամբողջ աշխարհ<sup>1</sup>, ներառյալ Գեղարքունիքը, Ագուլիսն ու Երնջակի գավառը:

Ի մի բերելով՝ կարելի է վստահորեն եզրակացնել, որ 1710-1720-ական թթ. Արցախի (Ղարաբաղի) բնակչության թիվը կազմել է մոտավորապես 500,000 մարդ<sup>2</sup>: Պատկերացում տալու համար, թե այդ կես միլիոն հայն ինչպիսի հարաբերական մեծություն էր տարածաշրջանում, բավական է մատնանշենք, որ 1720-ական թթ. եվրոպացի մի ճանապարհորդ լեզգիներին «մեծաթիվ ժողովուրդ էր» համարում, որովհետև նրանց թիվը կազմում էր... 30,000 ընտանիք<sup>3</sup>:

*«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2010, N 1-2, էջ 59-67*

---

<sup>1</sup> Այվազյան Ա., *1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից* (Սկզբնաղբյուրների համադրման փորձ) (Պատմա-բանասիրական հանդես, 1990, N 2, էջ 128-129)

<sup>2</sup> Եվրոպական հայտնի մի աղբյուրի համաձայն, XVII դ. սկզբում Գանձակ կամ Ղարաբաղ նահանգի բնակչությունը կազմում էր 250,000 մարդ (տե՛ս Don Juan of Persia, A Shiah Catholic 1560-1604. Transl. and ed. by G. Le Strange, London 1926, p. 41-2. Cf. Tadhkirat Al-Muluk. A Manual of Safavid Administration (circa 1137/1725). Translated and explained by Minorsky V. London: W. Heffer & Sons, 1943, p. 44, 166): Այս փաստը ևս հուշում է, որ 1639 թվականից ի վեր խոշոր պատերազմներից զերծ մնացած Ղարաբաղի բնակչությունը կարող էր լուրջ աճ արձանագրել

<sup>3</sup> Ксаверие Главани, *Описание Черкессии 1729 г.*, Тифлис, 1893, с. 15 [Этот многочисленный народ (в нем считают более тридцати тысяч семейств) занимает оконечность Кавказа, соприкасаясь с одной стороны с Персией, с другой – с Грузией]



ԱՐՅԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ  
ԸՍՏ 1897Թ. ՀԱՄԱՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Հանրահայտ է, որ ազգագրական գիտության մեջ մեծ է վիճակագրական աղբյուրների, հատկապես՝ բնակչության մարդահամարների նշանակությունը: Շնորհիվ մարդահամարների, հետազոտողները հնարավորինս ճշգրիտ տեղեկություններ են ստանում ամենազանազան հարցերի վերաբերյալ: Ռուսական կայսրությունում գիտականորեն կազմակերպված առաջին մարդահամարն անցկացվել է 1897 հունվարի 28-ին (նոր տոմարով՝ փետրվարի 9-ին): Մարդահամարն իրականացվել է «Ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի մասին կանոնադրություն» կոչվող փաստաթղթի համաձայն<sup>1</sup>: Այդ փաստաթղթով հաստատվել էր մարդահամար անցկացնելու ծրագիրն ու նպատակը՝ պարզել բնակչության քանակը, ցեղագրական, տարիքային, կրոնական կազմը, տեղաբաշխումը: Ելիզավետպոլի նահանգի, (որի տարածքը հիմնականում համընկնում էր ուշ միջնադարում «Ղարաբաղ» անվանված երկրամասի տարածքի հետ), վերաբերյալ վիճակագրական նյութերը հրատարակվեցին 1904թ. նոյեմբերին, սենսատոր Տրոյնիցկու խմբագրությամբ<sup>2</sup>: Մինչ այդ եղած մարդահամարների տվյալների հետ համեմատած, առաջին համառուսաստանյան մարդահամարի տվյալները ավելի հավաստի են, քանի որ անճշտությունների թիվը չի անցնում 1-2 տոկոսը, ինչը ժողովրդագրական թույլատրելիության սահմաններում է: Ալեքսանդր II ցարը, 1867թ. դեկտեմբերի 9-ին ստորագրել էր մի կանոնադրություն, որը գործողության մեջ էր դրվել 1868թ. հունվարի 1-ից<sup>3</sup>: Ըստ այդ կանոնադրության, նախկին Ղարաբաղի պրովինցիայի և հարակից որոշ տարածքների հաշվին կազմավորվեց Ելիզավետպոլի նահանգը: Սկզբնական շրջա-

<sup>1</sup> Положение о первой всеобщей переписи населения Российской империи, СПб, 1895

<sup>2</sup> Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г., Елисаветпольская губерния, кн. 63, СПб, 1904

<sup>3</sup> Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862-6 декабря 1872 гг., Тифлис, 1873, ст. 49-50

նում այն բաժանվեց 5, իսկ 1873թ.<sup>1</sup> 8 գավառների (Ջևանշիրի, Շուշիի, Ջեբրաիլի, Ջանգեզուրի, Ելիզավետպոլի, Արեշի, Նուխիի, Ղազախի): Պատմական Արցախ աշխարհի տարածքը հիմնականում մասնատված էր Շուշիի, Ջևանշիրի, Ջեբրաիլի, Ելիզավետպոլի, մասամբ՝ Ջանգեզուրի գավառների միջև: Ելիզավետպոլի նահանգի ընդհանուր տարածքը՝ 38.782 քառակուսի վերստ (քառ.կմ) էր: Ելիզավետպոլի նահանգի բնակչության ընդհանուր թիվը, 1897թվականի մարդահամարի տվյալների համաձայն, կազմում էր 878.415 մարդ: Այդ 878.415 մարդն, ըստ գավառների, տեղաբախշված էր հետևյալ կերպով.

1. Ելիզավետպոլի գավառ..... 162.778 մարդ
2. Արեշի գավառ..... 67.277 մարդ
3. Ջեբրաիլի գավառ..... 66.360 մարդ
4. Ջեվանշիրի գավառ..... 72.719 նարդ
5. Ջանգեզուրի գավառ..... 137.871 մարդ
6. Ղազախի գավառ..... 112.074 մարդ
7. Նուխիի գավառ..... 129.555 մարդ
8. Շուշիի գավառ..... 139.771 մարդ<sup>1</sup>:

Տվյալները վկայում են, որ բնակչության թվաքանակով առաջին տեղերում էին Ելիզավետպոլի, Շուշիի և Ջանգեզուրի գավառներն, իսկ վերջին տեղը գրավում էր Ջեբրաիլի գավառը: 1867թ. բնակչության թվով ամենամեծը եղել է Շուշիի գավառը, իսկ 30 տարի անց այն թվով երկրորդն էր: Շուշիի գավառի բնակչության դանդաղ աճը և թվի նվազումը կապված էր հիմնականում շարունակական արտագաղթով, որը մեծ չափերի էր հասել 19-րդ դարի վերջին: Տարեկան մոտ 16,5 հազ. մարդ, կամ չափահաս տղամարդկանց մեկ երրորդը աշխատանք որոնելու նպատակով հեռանում էր հայրենիքից<sup>2</sup>: Ինչպես ողջ Կովկասն, այդպես էլ Ելիզավետպոլի նահանգը բազմազգ էր: 1897 թվականի մարդահամարը ցույց տվեց, որ կովկասյան թաթարները (ներկայիս ադրբեջանական թուրքերը ցեղային այդ անվանումով էին հաշվառվել) կազմում են ամբողջ նահանգի ազգաբնակչության կեսից ավելին՝ 60 տոկոսը, հայերը՝ 33,26 տոկոսը, ռուսները՝ 1,8 տոկոսը, լեզգիները՝ 2,57 տոկոսը, գերմանացիները՝ 0,36 տոկոսը, քրդե-

<sup>1</sup> Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г., Елисаветпольская губерния, кн. 63, ст. 6-7

<sup>2</sup> С. Заварян, *Экономические условия Карабаха и голод 1906-1907гг.* СПб, 1907, ст. 50

րը՝ 0,35 տոկոսը, թաթերը՝ 0,20 տոկոսը<sup>1</sup>: Այս տվյալները վկայում են, որ երբեմնի «Հայոց Արևելից Կողմանց» (Արցախ ու Ուտիք) ընդարձակ տարածքում, որն զգալիորեն ավելին էր, քան է ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը, բնիկները՝ հայերը կազմում էին բնակչության միայն մեկ երրորդը: Դա թուրքական «հայտնության» շուրջ ութ դարերի արգասիքն էր, որն ընդամենը քսան տարի անց, չարաբաստիկ դեր էր խաղալու Հայաստանի Հանրապետության սահմանների ձևավորման հարցում: Մարդահամարի տվյալների համաձայն, նահանգի ազգաբնակչությունն ազգային առումով տեղաբախշված էր հետևյալ կերպ՝ Կուր ու Արաքս գետերին հարող հարթավայրերում ապրում էին թաթարները, որոնք լինելով վաչկատուններ. օգտվում էին նախալեռնային ու լեռնային շրջանների արոտավայրերից և իրականում արտոնյալ վիճակում էին հայտնվել: Հայերը նախալեռնային ու լեռնային շրջանների բացարձակ մեծամասնությունն էին կազմում: 1886-1897թթ. ընթացքում հայ բնակչության թիվը նահանգում 35,4 տոկոսից իջել էր 33,2 տոկոսի: Նույն ժամանակահատվածում նահանգում թաթարների թիվը 448 հազարից հասել էր 552 հազարի<sup>2</sup>: Թաթարական բնակչության թվի աճը պայմանավորված էր ոչ միայն բնական աճի բարձր տեմպերով, այլ նաև ներգաղթով: 1880-ական թվականներից սկսած միայն Պարսակաստանի տարածքից Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներ եկածների թիվը տարեկան կազմում էր 30-35 հազար մարդ<sup>3</sup>: Ցավոք սրտի մարդահամարի տվյալները կովկասյան թաթարների մեջ է ներառել մահմեդականացված հայերին՝ այրումներին, Նուխիի գավառի 7 հազար թրքախոս հայերին<sup>4</sup>: Նահանգի լեռնային գավառներում հայերը կազմում էին բնակչության 70 տոկոսը, թաթարները՝ 23 տոկոսը, մնացածները (ռուսներ, հույներ, քրդեր)՝ 7 տոկոսը: Բնակչության այսպիսի տեղաբաշխվածության առանձնահատկություններին ուշադրություն են դարձրել 19-րդ դարի մի շարք ռուս հեղինակներ: Այդ հեղինակներից Ե.Նաումենկոն գրում է. «Եթե մենք գծով առանձ-

<sup>1</sup> Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г., Елисаветпольская губерния, кн. 63, 65-75

<sup>2</sup> Բ. Իշխանյան, *Վիճակագրական ուսումնասիրություններ Անդրկովկասյան ժողովուրդների, մաս I, Բաքու, 1919, էջ 79*

<sup>3</sup> История Азербайджана, т. 2, Баку, 1960, ст. 253,261

<sup>4</sup> Բ. Իշխանյան, *Վիճակագրական ուսումնասիրություններ Անդրկովկասյան ժողովուրդների, մաս I, էջ 114*

նացնենք Հայկական Գանձակի լեռնային համակարգը մերձկուրյան դաշտավայրից, ապա այդ գիծը կառանձնացնեն հայերին ու թաթարներին: Վերջիններս զբաղեցնում են մերձկուրյան դաշտավայրը, իսկ հայերը բնակեցնում էին ողջ նախալեռնային հատվածը մոտ 30 վերստ լայնությամբ»<sup>1</sup>: Լեռնային Ղարաբաղի տարածքում, որը պատմական Արցախի հիմնական մասն է կազմում, հայերի բացարձակ գերակշռությունն անմիջապես է աչքի զարնում. նրանց թիվը հասնում է 171,6 հազարի, այն դեպքում, թաթարները՝ 30,8 հազար, ռուսները՝ 6,7 հազ և այլն: Շուշի քաղաքի բնակչության 55,8 տոկոսը նույնպես հայեր էին:<sup>2</sup> Այսպիսով, Արցախյան մերօրյա շարժման սկզբից 90 տարի առաջ, Արցախի հիմնական մասում, առանձնապես ոչ հատուկ հայասիրությամբ տառապող ռուսական պետության պաշտոնական մարդահամարի տվյալերով, հայերը կազմում էին ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը, ինչը թույլ տվեց հայության այս հատվածին տոկալու հարյուրամյա ցնցումներին ու արհավիրքներին: Հայկական երկրորդ պետությունը վիճակագրական այդ իրողության ու դրա շնորհիվ գոյատևած ոգու արգասիքն է:

*«ԱրՊՀ. Հայազիտական հանդես», Մտեփանակերտ, 2010, էջ 60-63*

---

<sup>1</sup> Ե.Науменко, *Елисаветпольская губерния, Военно-статистическое описание, Тифлис, 1903, часть 1, ст. 280*

<sup>2</sup> *Исторический архив России, Фонд 1290, опись.11, дело 636, 638, 639, 645*

## ԲՈՒՆԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Վերջին շրջանում մամուլում, գիտական հանդեսներում եւ առանձին մենագրություններով զանազան նյութեր են հրապարակվում Արեւմտյան Հայաստանում եւ ընդհանրապես Թուրքական Հանրապետության տարածքում այժմ ապրող եւ իրենց ազգային ինքնությունը կորցրած, մահմեդականություն ընդունած եւ, հետեւաբար, թուրքացած ու քրդացած հայերի մասին:

Սակայն միայն Արեւմտյան Հայաստանում եւ նախկին Օսմանյան կայսրության տարածքներում չէ որ հայության այս կամ այն հատվածը ենթարկվել է բռնի մահմեդականացման եւ դրա արդյունքում՝ ինքնության կորստի: Համանման երեւոյթներ տեղի են ունեցել նաեւ Արեւելյան Հայաստանում:

Ղարաբաղի խանության կազմավորումից հետո, տարածաշրջանի էթնոքաղաքական իրավիճակը խիստ բարդացավ. վաչկատուն ցեղերի անընդհատ արշավանքները մի կողմից, մելիքների ու Ղարաբաղի խաների հակամարտությունը մյուս կողմից, հայ ժողովրդին դրեցին աղետալի կացության մեջ: Այս առնչությամբ ահա թե ինչ է գրել Հաքստհաուզենը, «Սկսած XVIIIդ. այս գեղեցիկ երկիրը կրում է խոր անկման հետքեր և չի կարող արագ վերականգնվել, մասնավորապես բազմաթիվ էթնոդավանական հանրությունների առկայության պատճառով: Գերի տարված հայերի փոխարեն այստեղ են բերվել ծույլ թաթարներ և թուրքեր, որոնք աստիճանաբար ավելանալով թվային գերկշռություն են ստանում տեղաբնիկների նկատմամբ»<sup>1</sup>:

Բացի Ղարաբաղի հայաթափումից եւ թուրքաքրդալեզու էթնիկ տարրերի ներթափանցումից, այդ շրջանում տեղի է ունենում հայության համար մեկ այլ աղետալի երևույթ՝ հայ բնակչության մի մասի մահմեդականացում: Բռնի մահմեդականացված հայության հիմնական հատվածն ապրում էր գլխավորապես Հյուսիսային Արցախում, մասնավորապես՝ Գարդման-

<sup>1</sup> Гакстгаузен А., *Закавказский край*, СПб, 1857, ч.1, с. 208-213

քում: Դրանք այրումներն են, որոնց ումանք համարում են աղբրեջանցիների ազգագրական խմբերից մեկը<sup>1</sup>: Այրումներն, ըստ XIX դարի տվյալների, պահպանվել էին հիմնականում Գարդմանքում (ներկայիս Գետաբեկի, Դաշքեսանի, Թովուզի եւ ուրիշ շրջաններում, ինչպես նաեւ՝ ԼՂՀ Շահումյանի, Քարվաճառի շրջաններում), այսինքն՝ Ալիարակ (Գոյ-գոյ) լճից մինչեւ Աղստեւ գետն ընկած տարածքում: Գանձակ գավառի լեռնակողմն, այնտեղ բնակվող այրումների շնորհիվ, մինչեւ XIX դարի սկզբները կոչվում էր «Այրումվու», բայց ռուսական տիրապետության օրոք այդ անվանման տակ հասկացվող տարածքն առավել սահմանափակվեց եւ սկսեց վերաբերվել միայն առանձին գյուղական հասարակությունների:

Այրումների մասին գրավոր աղբյուրները բավական սակավաթիվ են: Նրանց վերաբերյալ հայ իրականության մեջ առաջին տեղեկությունները հաղորդել է Ե. Լալայանն, ըստ որի. «Թուրքեր են համարվում նաեւ թափառական այրումները, որոնք իրենց Ռումից (Բյուզանդիա) գաղթած են համարում եւ իրենց կոչումն էլ մահմեդականներ են, շիա աղանդին պատկանող, խոսում են Ատրպատականի բարբառով, մի առանձին արտասանությամբ և ոչնչով չեն զանազանվում թուրքերից: Մրանք բնակվում են Ամիրվալ Աջի, Բիրգյոզ, Այքենդ, Դաստաֆուր, Դամջալի, Գյունեյ, Դամի, Զագա-Դարասի, Ղարաբուլախ եւ Ղազախ Էլչիլախ հասարակությունների մեջ»<sup>2</sup>:

Հայ ուսումնասիրողներից Հ. Վարդանյանը նշում է, որ. «Այրումների հետ մոտ ծանոթանալուց, ինչպես ասում են, նրանց ազգն ու տակը քրքրելուց յետոյ մարդը ակամայ համոզվում է, որ այդ իսեղճ ու կրակ մահմեդականները ոչ այլ ոք են, եթե ոչ մեր Գարդմանաց Ձորի անպարտելի քաջերի սերունդը: Մինչեւ այժմ այրումների մեջ մնացել են մի քանի հայկական խօսքեր, օրինակ՝ հանդ, հավալիք, (ավելուկ), հախչիս (աղջիկ) եւ այլն... այրում ոչ թե կը նշանակե «հայ-յոյն», և այդ խօսքը ուղղակի «հայրում» խօսքի աղավաղումն է: Նրանք բռնի կերպով են մահմեդական դարձել, որի պատճառով նրանք իրենց անուանում են «զլիջ մուսուլմանի», այսինքն սրի ույժով մահմեդական դարձածներ: Այրումները այն կրոնական մոլեռանդությունը չունեն, ինչ-որ ուրիշ տեղի մահմեդականները:

<sup>1</sup> Народы мира, Историко-этнографический справочник, Под ред. Ю. Бромлея. Москва, 1988. с. 42

<sup>2</sup> Լալայան Ե., *Տրվեր*, հ. 2, 1988, էջ 329

Դեպի կրոնը և կրոնական ծեսերը շատ անտարբեր են: Նույնիսկ ամբողջ գավառամասում աղօթատուն չունեն<sup>1</sup>: Այրումներին բնիկ է համարում նաև աղբբեջանցի հետազոտող Ս. Ալեքսեյեովը: Ալեքսեյեովը նույնպես գտնում է, որ «այրում» էթնիկական անվանումը ծագել է «հայ» եւ «հույն» անվանումներից եւ դա կապված է այն իրողության հետ, որ 451-ի Քաղկեդոնի ժողովից հետո հայերի որոշ մասն սկսեց ընդունել քաղկեդոնականություն, եւ նրանց «հայ-հոռոմներ» անվանեցին, այսինքն՝ հունադավան հայեր<sup>2</sup>: Ըստ Կոբիչևի, 591թ. Հայաստանի երկրորդ բաժանումից հետո նրա մեծ մասն անցավ Բյուզանդական կայսրությանը, որի հետևանքով Բյուզանդական կայսրությանն անցած գավառների բնակչությանն սկսեցին կոչել «հայ-հոռոմներ», այսինքն՝ բյուզանդահպատակ հայեր<sup>3</sup>:

Իսկ այն հարցին, թե Գարդմանքում ե՞րբ է քաղկեդոնականությունը տարածվել: Ըստ Ս. Կարապետյանի, դա կարող էր տեղի ունեցած լինել բյուզանդասեր Եզր կաթողիկոսի օրոք՝ VII դարում կամ էլ Վրաստանի հզորացման շրջանում՝ XII դարում<sup>4</sup>: Մեր կարծիքն այն է, որ դա կարող էր տեղի ունեցած լինել նաև բյուզանդական Հերակլ կայսեր ժամանակներում, որը 622-623 թվականներին արշավել էր դեպի այդ երկրամասեր: Մեքենոսի պատմածի համաձայն՝ Հերակլին դիմագրավելու նպատակով պարսկական զորքը մտավ Գարդմանք, որը գրավել էր կայսրը և բանակ դրեց մյուս Տիգրանակերտում:

Կա նաև մյուս հարցը. ե՞րբ են այրումներն ընդունել մահմեդականություն: Ըստ Ս. Կարապետյանի, այդ տեղի է ունեցել XV-XVI դարերում, ինչը քիչ հավանական է, կամ էլ՝ 1720-ական թվականներին, ինչը տեղի է ունեցել նաև Շաքիի, Կապադակի, Դասսանի, Շամախիի, Մուսկուրի եւ այլ բնակավայրերի հայերի մի զգալի մասի հետ՝ 1720-1750-ական թվականներին<sup>5</sup>: Ըստ Ալեքսեյեովի՝ բռնի մահմեդականացումը կատարվել է 18-րդ դարի սկզբներին՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարի անկումից հետո, երբ այս տարածաշրջան ներխուժած թուրքերը, տեղի թյուրքալեզու տարրերն անհանդուրժողական վերաբերմունք էին դրսևորում հայերի

<sup>1</sup> Վարդանյան, «Մի քանի խոսք այրումների մասին», «Մշակ», 1914, հ. 154, էջ 2-3

<sup>2</sup> Алекперов А., *Исследования по археологии и этнографии Азербайджана*, Баку, 1960, с. 87

<sup>3</sup> Кобычев В., *Айрумы* (к вопросу происхождения этнонима), Советская этнография, 1962, N 3, с.148

<sup>4</sup> Կարապետյան Ս., *Հյուսիսային Արցախ*, Երևան, 2004, էջ 17

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 18

նկատմամբ: Հատկապես անհուսալի էր Մեւանա լճից հյուսիս ապրող հայերի վիճակը: Մահմեդականություն ընդունելով, նրանք փրկվում էին ֆիզիկական ոչնչացումից<sup>1</sup>:

Բռնի մահմեդականացման դեպքեր են տեղի ունեցել ոչ միայն Հյուսիսային Արցախում: Ղարաբաղի մյուս շրջանները եւս զերծ չեն մնացել այդ չարիքից, մանավանդ Իբրահիմ խանի ժամանակ: Րաֆֆին համոզված էր. «Եթե այսօր հանդիպում ենք Ղարաբաղում ամբողջ գյուղերի հայ-մահմեդական բնակիչներով, եթե տեսնում ենք հայոց գյուղերում թուրք ընտանիքներ, որոնք խոստովանում են, թե իրանց նախնիքը հայեր են եղել,- այդ բոլորը Իբրահիմ խանի ժամանակների պտուղներն են»<sup>2</sup>: Իբրահիմ խանի վարած այս քաղաքականությունից չկարողացան խուսափել անգամ Ղարաբաղի մելիքական տները: Դիզակի մելիք Եսայի Մելիք Եզանյանի որդի Բախտամ բեկին եւ նրա որդիներին՝ Ասլանին ու Վահանին, Իբրահիմ խանը բռնի կրոնափոխ է անում, սակայն չբավարարվելով այդքանով, սպանել է տալիս նախ Բախտամ բեկին, այնուհետեւ նրա որդի Մելիք Ասլանին: Վահանի մասին տեղեկություններ չեն պահպանվել<sup>3</sup>:

Րաֆֆին գրում է. «Տող բերդում, Մելիք-Ավան խանի պալատում բնակվում է մի Ֆարհադ բեկ անունով թուրք ազնվական, որը պարծանքով հիշում է, թե ինքը Մելիք Ավանյանների նշանավոր տոհմի զավակներից է: Եվ իրավ, նա Բախտամ-բեկի թոռը և Մելիք-Ասլանի որդին է: Իսկ Մելիք-Ավանյանների քրիստոնյա մնացած ժառանգները այժմ թշվառ աղքատության մեջ բնակվում են նոյն Տող բերդում, թեւ ազնվականներ են համարվում»<sup>4</sup>: Մելիք Ասլանի անունով այս տոհմի մահմեդականացած ժառանգներն հետագայում սկսել են կոչվել Մելիք-Ասլանովներ: Այդ տոհմի մասին Լեոն գրել է. «Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող գյուղի բեկերն են և կրում են Մելիք-Ասլանով և Մելիք-Եզանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեև նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայնիվ այնքան ենթարկված են ամբոխային հասկացության, որ կրոնն են համա-

<sup>1</sup> Алекперов А., *Исследования по археологии и этнографии Азербайджана*, с. 88

<sup>2</sup> Րաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. 10, Երևան 1964 թ, էջ 245

<sup>3</sup> Րաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. 10, էջ 281

<sup>4</sup> *Նույն տեղում*, էջ 281



րում ազգության նշան, ուստի և ձուլվում են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերին դեմ գնալու համար: 1905-1906 թ.թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ այդ Մելիք-Ասլանովներից մեկը, որ պրիստավի պաշտոն էր կատարում Զանգեզուրի գավառում, անորակելի գազանություններ կատարեց հայերի նկատմամբ: Բարձրագույն ուսումն էլ չի կարողանում ազգության մասին ուղիղ գաղափար տալ Տողի երբեմնի հավատուրացների այժմյան սերնդին: Նույն Մելիք-Ասլանովներից մեկը, կրթությամբ ինժեներ, մինիստր էր 1918 թ. Ադրբեջանի մուսաֆաթական կառավարության մեջ, երբ Բաքվում, այդ կառավարության կարգադրությամբ, կոտորեցին մոտ 30 հազար հայեր»<sup>1</sup>:

1886 թվականի տվյալների համաձայն Տողում բնակվող 273 գերդաստաններից 33-ը կազմում էին մահմեդական հայերը<sup>2</sup>: Ավելի ուշ՝ Խորհրդային Ադրբեջանի վարած գաղութային քաղաքականության հետեւանքով, Տողում մահմեդականների թիվն ավելացնելու նպատակով, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի հրահանգով 1943-1953 թվականներին Ադրբեջանի Իմիշլիի շրջանի Թալբիսանլու դշլաղի թուրքերին տեղափոխում են Տող<sup>3</sup>: Արցախյան շարժման նախօրյակին արդեն Տողի 1412 բնակչից 811-ը կազմում էին թուրքերը<sup>4</sup>: Ըստ ականատեսների վկայության՝ Մելիք-Եզանովներն ավելի վատթար վերաբերմունք ունեին հայերի նկատմամբ, քան եկվոր թուրքերը...

Ս. Ջալալյանը նկարագրելով Շուշիի մոտ գտնվող Ղայբալիշեն գյուղը նշում է, որ գյուղից երեք գերդաստան Իբրահիմ խանի բռնությունների հետևանքով ընդունել են մահմեդականություն, սակայն գաղտնի կերպով դավանում էին քրիստոնեություն<sup>5</sup>:

Հակարի գետի ձախափնյա վտակներից մեկի վերին հոսանքում, Քաշաթաղի շրջանի Մեղի գյուղից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվում էին Ճամբերախաչ, Քյոհնաքենդ, Ղշլաղ, Խումարթա, Էյրիկ եւ Ալիփանահլի գյուղատեղերը, որոնց հետագայում սկսեցին կոչել Մուսուլմանլար հավաքական անվանումով: Ի տարբերություն շրջակա քուրդ

<sup>1</sup> Լեո, *Հայոց պատմություն*, հ. 3, Երևան 1946, էջ 857-858

<sup>2</sup> *Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков. 1886 г., Тифлис, 1893, с. 516*

<sup>3</sup> Մկրտչյան Շ., *Արցախում եւ ուրիշ պատերազմ տեսա*: Երևան 1996, էջ 47

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 49

<sup>5</sup> Ջալալեանց Ս., *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*, հ.Բ, Տիֆլիս, 1858, էջ 342

բնակչության, XIX դարում այդ գյուղերի բնակիչները թուրքալեզու էին: Խումարթա գյուղի հարեւանությամբ, մեկ կիլոմետրի վրա, դեռ պահպանվում է սալատապաններով մի փոքրիկ հայկական գերեզմանատուն<sup>1</sup>:

Շուշիի շրջանի Մուսուլմանլարին (այժմ՝ Քիրսավան) մերձակա հայկական գյուղերի բնակիչների տեղեկությունների համաձայն, Մուսուլմանլարում բնակվողները մահմեդականացած հայեր էին: Շուշի քաղաքի թյուրքերն ու թյուրքական գյուղերի բնակիչները նրանց անվանում էին «երմանիդան դյոմուզ մուսուլմանլար», թուրքերենով՝ «հայից սերված մահմեդականներ»: Թե երբ են նրանք մահմեդական դարձել, հայտնի չէ եւ կան զանազան կարծիքներ դրա վերաբերյալ: Ոմանք գտնում են, որ սրանք հավատափոխ են եղել Իբրահիմ խանի կառավարման տարիներին, ուրիշների կարծիքով՝ նույն դարի վերջին Աղա-Մահմադ խանի արշավանքների ժամանակ: Մուսուլմանլարցիներն արտաքինով խիստ տարբերվում էին իրենց շրջապատող թուրքերից ու քրդերից: Նրանք շատ վախվորած ու զգուշանալով էին խոսում իրենց ծագման շուրջ<sup>2</sup>:

1840-50-ական թթ. բազմաթիվ հավատափոխ եղած հայեր դիմում են Ամենայն Հայոց կաթողիկոսին և Հոգևոր սինոդին՝ նորից իրենց նախնիների դավանաքին վերադառնալու խնդրանքով: 1849թ. մահմեդականներ Հյուսեին Բահման բեկը և Ջաֆար Մամեդ օղլուն դիմում են Վեհափառ հայրապետին նորից հայ առաքելական եկեղեցու դավանանքին վերադառնալու կապակցությամբ նշելով, որ իրեն հոր հետ միասին բռնի հավատափոխ են եղել Իբրահիմ խանի ժամանակներում<sup>3</sup>: 1852թ. Հայոց հոգևոր սինոդին նմանատիպ խնդրանքով է դիմում Դիզակի Թաղասեռ գյուղի բնակիչ Հյուսեին բեկ Բհմանբեկ օղլին: Արցախի թեմի առաջնորդին գրած խնդագրում նա նշում է, որ իր նախնիները հայեր են եղել և բռնությամբ թուրքացվել են Իբրահիմ խանի օրոք<sup>4</sup>:

Թուրքալեզու զավթիչները հաստատվելով հայկական միջավայրում փոփոխության են ենթարկել ոչ միայն բնակչության էթնիկական կազմը, այլև խեղաթյուրել պատմամշակութային արժեքներն ու էթնիկական

<sup>1</sup>Կարապետյան Ս., *Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում*: Երևան 1999, էջ 179

<sup>2</sup>Տվյալներն հավաքված են մեր կողմից՝ Շուշի քաղաքում եւ շրջանի գյուղերում

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ.56,գ.1,գ.2449

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ.56,գ.1, գ.2958

տարբերությունները, ինչը վերջին հաշվով հանգեցրել է ազգային յուրահատկությունների կորստի եւ բնիկ հայության մի մասի ձուլման: Չուլված այդ հայությունն օտարի կողքին հավելյալ չարիք է դարձել հարազատ ժողովրդի անխաթար մնացած մեծամասնության գլխին, տկարացրել հայության ուժը: «Հայոց Արեւելից կողմանքը» նույնպես չի խուսափել այդ աղետաբեր գործընթացներից:

*«ԱրՊՀ. Հայագիտական հանդես», Մտեփանակերտ, 2010, էջ 187-192*

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ում (1991-2002թթ.)

Խորհրդային Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղում սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում հետևողականորեն իրականացվել է հայ բնակչության շահերը ոտնահարող խտրական քաղաքականություն:

Ազգային հալածանքի քաղաքականությունն ուղեկցվել է սոցիալ-տնտեսական կյանքում առկա բազմաթիվ չլուծված հիմնախնդիրներով, որոնք հակազդել են ոչ միայն երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման, այլ նաև ժողովրդագրական զարգացման ընթացքի վրա:

1921թ. մարդահամարի տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվը հասնում էր 131,5 հազար մարդու, որի 94.4%-ը հայեր էին, իսկ մնացած 5.6%-ը այլազգիներ:

Խորհրդային իշխանության տարիներին, ադրբեջանական կառավարության հայաջինջ քաղաքականության պատճառով, Արցախի բնակչության թիվը չնչին չափով աճեց: Այսպես, 1939-1979 թթ. երկու մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում երկրամասի բնակչությունն ավելացավ ընդամենը 7%-ով՝ 151 հազարից հասնելով 162 հազար մարդու: Ընդ որում, հայերի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվակազմում 75.9%-էր, իսկ ադրբեջանցիների թվաքանակը աճելով կազմեց 22.9%<sup>1</sup>: Միաժամանակ հարկ է նշել, որ եթե Ղարաբաղի բնակչությունը 1926-1990թթ. աճել է 1,56 անգամ, ապա նույն ժամանակաշրջանում Ադրբեջանի բնակչությունը աճել է շուրջ 4 անգամ: Եթե 1990թ. Ադրբեջանում բնակչության խտությունը կազմում էր 82,3 մարդ, ապա Ղարաբաղում այդ ցուցանիշը կազմում էր 44 մարդ<sup>2</sup>: Պարզ է, որ հայ բնակչության թվաքանակի նվազումը կապված էր ադրբեջանական խտրական քաղաքականության

<sup>1</sup>Խոջաբեկյան Վ., *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին*, Երևան, 2002, էջ 286

<sup>2</sup> ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարության տրամադրության տակ եղած նյութերից

հետևանքով թելադրված հայերի կայուն արտահոսքի և ադրբեջանցիների ներհոսքի պատճառով:

Բնակչության կազմում հայերի նվազման միտումների շարունակումը կարող էր, ինչպես Նախիջևանի պարագայում հանգեցնել Արցախի լիակատար հայաթափմանը:

1988թ. սկիզբ առած ազգային ազատագրական պայքարի պատճառով, սակայն բնակչության կառուցվածքում հայերի տեսակարար կշիռը էապես փոխվեց: 1988թ. բնակչության թիվը կազմում էր 189 հազար մարդ, իսկ 1990թ.՝ 195.2 հազար մարդ, որի 98-% հայեր էին<sup>1</sup>:

1990թ. Արցախի բնակչության թվաքանակի նման աճը հիմնականում պայմանավորված էր Բաքվից և Ադրբեջանի մյուս շրջաններից հայերի բռնագաղթմամբ:

1988-1994թթ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից 1988-1994թթ. արտագաղթած 48 հազար հայ բնակիչ սկզբում ապաստան գտավ Հայաստանի Հանրապետությունում, ապա մի մասը վերադարձավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

1990-1992թթ. պատերազմական իրադարձությունների և Մարտակերտի, Շահումյանի և ԼՂՀ այլ շրջաններից արտագաղթի պատճառով բնակչության թիվը նվազեց մինչև 121 հազար մարդու:

Պատերազմական իրավիճակով պայմանավորված խիստ նվազեց բնակչության բնական աճը: Այսպես, եթե 1985թ. ծնվածների թիվը կազմում էր 4498 հոգի, ապա 1992թ.՝ 1359, 1993թ.՝ 1308: Դրան հակառակ բարձր էր մահացության գործակիցը: Այսպես, եթե 1993թ.՝ 1000 բնակչի հաշվով ծնվածների թիվը կազմեց 10,6 մարդ, ապա նույն ժամանակահատվածում մահացածների թիվը 1000 բնակչի հաշվով կազմեց 16,6 մարդ: Համեմատության համար նշենք, որ շարժման նախօրյակին Արցախում ծնվողների միջին տարեկան թվաքանակը 1000 շնչի հաշվով կազմում էր 22,3 մարդ, շարժման տարիներին այդ թիվը կրճատվեց գրեթե 2 անգամ<sup>2</sup>:

Ծնելիության գործակցի նվազումը և մահացության աճը ինչպես նաև մեծ չափեր ընդունած արտագաղթը պայմանավորեց Արցախի բնակչու-

<sup>1</sup> ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները 1985-1996, էջ 8

<sup>2</sup> Նույն տեղում

թյան թվաքանակի նվազեցումը: Այսպես, եթե 1985թ. բնակչության թիվը կազմեց 173,6 հազար, ապա 1995թ.՝ 126,4 հազար:

### Բնակչության թվաքանակը և կազմը

Հազար մարդ

Տարիներ	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում՝	
		քաղաք.	գյուղ.
1985	173.6	82.7	90.9
1990	195.2	101.7	93.5
1991	143.3	64.1	79.2
1992	121.9	64.1	57.8
1993	123.2	71.5	51.7
1994	126.9	71.8	55.1
1995	126.4	71.2	55.2
1996	131.4	73.1	58.3

### Բնակչության բնական շարժը

Հազար մարդ

Տարիներ	Ծնվածների թիվը	Մահացածների թիվը	Բնակչության բնական աճը
1985	24.0	7.8	16.2
1990	17.3	7.1	10.2
1991	21.6	12.2	9.4
1992	11.6	11.2	0.4
1993	10.6	16.6	-6.0
1994	14.2	15.2	-1.0
1995	14.2	9.5	4.7
1996	15.2	10.2	5.0

Փաստորեն Արցախյան պատերազմի, սոցիալ-տնտեսական բնույթի կտրուկ անցումների արդյունքում Լեռնային Ղարաբաղում ապակայունացվեց ժողովրդագրական և միգրացիոն իրավիճակը: Ելնելով սոցիալ-տնտեսական ու ռազմաքաղաքական բարդ իրավիճակից, ինչպես նաև

դրսում ապաստան գտած ղարաբաղցիներին վերադարձնելու, պետության սահմաններն ամրապնդելու, ազատագրված բնակավայրերը վերականգնելու անհրաժեշտությունից, 1993թ. ի վեր ԼՂՀ-ում իրականացվում է վերաբնակեցման ծրագիր: Արցախի վերաբնակեցումը ղարաբաղյան հարցի բաղկացուցիչ մասն է, համազգային խնդիր, որն ազգային ծրագիր պետք է դառնա:

1988թ. հետո Ադրբեջանի տարբեր տարածքներից Ղարաբաղ են ներգաղթել 75000 փախստականներ<sup>1</sup>: 1993թ. ապրիլի 1-ին և սեպտեմբերի 13-ին ՀՀ կառավարությունը ընդունեց ԼՂՀ տարածքում պատերազմական գործողությունների հետևանքով ավերված բնակավայրերի վերականգնման և վերաբնակեցման միջոցառումների մասին որոշում, որտեղ նախատեսվում էր վերաբնակիչների կենսապայմանների ապահովման, բնակավայրերի վերականգնման միջոցառումներ:

1993թ. նոյեմբերի 8-ին ԼՂՀ Պաշտպանության Պետական կոմիտեն (ՊՊԿ-ն) ընդունեց ՀՀ կառավարության համապատասխան որոշումներից բխող միջոցառումների կիրարկումն ապահովող համապատասխան որոշում<sup>2</sup>: Հրադադարից հետո, ցավոք, պատերազմից հյուծված հանրապետությունն ի վիճակի չէր համակողմանիորեն զբաղվելու փախստականների խնդիրներով, առաջին հերթին՝ նրանց բոլորին ապահովելու բնակարաններով: Զինադադարից հետո ԼՂՀ իշխանություններն ակտիվորեն ձեռնամուխ եղան վերաբնակեցման խնդրի իրագործմանը: 1994թ-ից ի վեր Արցախի կառավարությունն իրականացնում է «Վերադարձ Արցախ» ծրագիրը, իսկ 2000թ-ից ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը ևս աջակցում է այս ծրագրի իրականացմանը: Ծրագրի նպատակն էր վերաբնակեցնել և վերականգնել պատերազմական գործողությունների հետևանքով ամայացած Արցախի տարածքները:

Իշխանությունների կողմից առանձնակի ուշադրություն էր դարձվում պատերազմի հետևանքով մշտական բնակավայրերից տեղահանվածների պահանջմունքների բավարարմանը: Կառավարության համապատասխան որոշման համաձայն (թիվ 108 որոշում, 30 ապրիլի, 1996թ.) վերաբնակ ընտանիքներն ապահովվում էին բնակարաններով, ընտանիքի անդամներ-

<sup>1</sup> «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N10(17), 2002, էջ 16

<sup>2</sup> ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի որոշում, 1993, հր.320

րին ցուցաբերվում էր միանվագ դրամական օգնություն, սեփականության իրավունքով հատկացվում էր գյուղատնտեսական նշանակության հողամաս, տրամադրվում էին երկարաժամկետ վարկեր՝ ինքնազբաղվածությամբ նրանց ապահովելու համար և այլ արտոնություններ<sup>1</sup>:

Վերաբնակեցումն իրականացվում էր կամավորության սկզբունքներով, վերաբնակվել ցանկացողների մեծ հոսքը բացատրվում էր ստեղծված գրավիչ պայմաններով: Բնակարանը տրամադրվում էր սեփականության իրավունքով, սակայն այդ իրավունքը փաստաթղթային ձևակերպում կարող էր ստանալ միայն 5 տարի հետո: Տրվում էր 2 հազ. քմ տնամերձ հողամաս, 6 հազ. քմ տնամերձ հողամաս, 6 հազ. քմ սեփականաշնորհվող հող՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին: Տեղափոխման բոլոր ծախսերը հոգում էր Արցախի կառավարությունը: Ընտանիքի գլխավորին տրվում էր միանվագ օգնություն աշխատավարձի քսանապատիկի և յուրաքանչյուր անդամին՝ հնգապատիկի չափով: Վերաբնակիչներն ազատվում էին որոշակի հարկերից, նրանց տրվում են նաև վարկային արտոնություններ: Վերաբնակիչների գերակշռող մասը հասարակության սոցիալապես՝ անապահով խավի ներկայացուցիչներն էին՝ Ադրբեջանից բռնագաղթվածները, պատերազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված արցախցիները, նախկին ԽՍՀՄ կոնֆլիկտային գոտիներից դուրս եկածները, բնակարանային խնդիրը չլուծած նորաստեղծ ընտանիքները, քաղաքների և նախկին շրջկենտրոնների գործազուրկ, հողով չապահովված ընտանիքները:

Աշխատանքը տարվում էր երկու ուղղությամբ՝ նորաստեղծ գյուղերի բնակեցում և գյուղերի հզորացում: ԼՂՀ կառավարության որոշմամբ, 2001թ. նոյեմբերի 30-ին կառավարությանն առընթեր ստեղծվում է միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչություն: Մինչ այդ, վերոհիշյալ գործառույթներն իրականացվում էին սոցապ նախարարության համապատասխան ստորաբաժանումները<sup>2</sup>:

2001թ. կառավարությունը հաստատեց ԼՂՀ վերաբնակեցման տասնամյա ծրագիր, որով նախատեսվում էր այդ տարիներին երկրում ընդունել մինչև 67000 գաղթականի: Համաձայն վերաբնակեցման տասնամյա

<sup>1</sup> «ԼՂ Հանրապետություն», 11 հունիսի, 1996

<sup>2</sup> «Ազգ», 18 ապրիլի, 2001



ծրագրի, ԼՂՀ-ն պետք է տարեկան ընդունի միջինը 1200 ընտանիք, որպեսզի հանրապետության բնակչության թվաքանակը հասներ նախապատերազմյան մակարդակին: Վերաբնակեցման քաղաքականությանը նպաստում էր նաև ԼՂՀ-ում 1997թ. մշակված «Ծնելիության և բազմազավակության խթանման ծրագիրը»: Բազմազավակ ընտանիքներն այստեղ օգտվում էին առավելություններից, սկսած երրորդ երեխայից՝ Արցախի կառավարության որոշմամբ, նրա անվամբ բանկում հաշիվ էր բացվում 700 դոլլարի չափով, 9-10 երեխայի դեպքում գումարի չափը հասնում էր մինչև 3000 դոլլարի: Արտոնությունների այս մեխանիզմը խթանում էր Արցախի բնակչության աճը:

Վարվող քաղաքականության արդյունքում՝ վերջին տարիներին աճել է ՀՀ-ից, ԱՊՀ և այլ երկրներից Ղարաբաղ վերադարձածների թիվը: Ահավասիկ՝ 1999թ. ԼՂՀ է վերադարձել շուրջ 230 ընտանիք (1000 հոգի): 2000թ. պետական բյուջեով վերաբնակեցման համար նախատեսվել է 1149357.0 հազար դրամ, որի շնորհիվ ապահովվեց շուրջ 194 ընտանիքի (847 հոգի) վերադարձը<sup>8</sup>:

Մեծ թափով սկսվեց սահմանամերձ, պատերազմական գործողությունների հետևանքով ամբողջովին ավերված և ռազմավարական նշանակության բնակավայրերի վերաբնակեցումը: Գյուղեր վերաբնակեցվեցին հանրապետության բոլոր շրջաններում, այդ թվում նաև 12 գյուղ Շահումյանի շրջանում: Վերաբնակեցված գյուղերի մեծ մասում կառուցվել են դպրոցներ, բուժկետեր և սոցիալական այլ օբյեկտներ, նորոգվել են ճանապարհները, անցկացվել էլեկտրահաղորդման գծեր, վերականգվել է ջրային համակարգը:

2001թ. բյուջեի միջոցների սղության պատճառով համեմատաբար պակաս գումար հատկացվեց վերաբնակեցման գործընթացին, այդուհանդերձ հնարավորություն ընձեռնվեց վերաբնակեցնել ևս 154 ընտանիք:

2001թ. ԼՂՀ կառավարությունը հաստատեց Շուշի քաղաքի և Շուշիի շրջանի զարգացման 10-ամյա ծրագիրը, որը ներառում էր վերաբնակեցման և աշխատատեղերի բացման խնդիրներ:

2002թ. վերաբնակեցման ծրագրի համաձայն պետբյուջեից հատկացվեց 450 մլն դրամ: 1993թ-ից մինչև 2002թ-ը Լեռնային Ղարաբաղ է տեղափոխվել 4498 վերաբնակիչ (1148 ընտանիք), որոնցից 161-ը (57 ընտանիք)

բնակություն է հաստատել մայրաքաղաքում, մյուսները՝ շրջկենտրոններում: Չնայած իրականացված լայնածավալ աշխատանքներին, վերաբնակիչները դեռևս շատ գյուղերում հայտնվում էին ոչ բարենպաստ կենսապայմաններում: Վերաբնակիչները բախվում են էներգամատակարարման խնդրի, ջրի պակասի, դպրոցների, ճանապարհների շինարարության ոլորտում բազմաթիվ թերությունների հետ: Հանրապետության գյուղական դպրոցներում, հատկապես վերաբնակեցվող տարածքներում հիմնախնդիր է ուսուցիչ-մասնագետների պակասը:

ԼՂՀ կառավարության 2001թ. մայիսի 4-ի թիվ 122 որոշմամբ համաձայն վերաբնակներին տրվում են նոր արտոնություններ<sup>2</sup>.

- անհատական տնով կամ բնակարանով ապահովում,
- միանվագ դրամական օգնության ցուցաբերում,
- ՀՀ-ից ԼՂՀ ճանապարհածախսի վճարում,
- ընտանիքի գույքի տեղափոխում կամ գույքի տեղափոխման դրամական փոխհատուցում (ՀՀ-ից ԼՂՀ) երկարաժամկետ արտոնյալ բյուջետային վարկի տրամադրում՝ 260 հազար դրամի չափով,
- մշտական օգտագործման իրավունքով հողի հատկացում,
- 5 տարի ժամկետով բնակարանային կոմունալ ծառայությունների վարձից ազատում,
- նոր ընտանիք կազմած գորակոչային տարիքի անձանց՝ ժամկետային զինվորական ծառայության երկու տարով հետաձգում,
- վերաբնակիչների ընդգրկում վերաբնակեցման ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքներում:

ԼՂՀ կառավարությանն առընթեր գործող միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչության խնդիրն է վերաբնակեցման ծրագրի իրականացմանը օժանդակելու համար ներգրավել համահայկական կառույցներին և հասարակական քաղաքական կազմակերպություն Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի գրավիչ պայմաններ, որպեսզի վերջիններս շահագրգռված լինեն ապրելու և արարելու այդտեղ: Դա առաջին հերթին վերաբերում է ինչպես բնակարանների կառուցմանը, այնպես էլ սոցիալա-

<sup>1</sup> «Ազատ Արցախ», 28 մայիսի, 2002

<sup>2</sup> ԼՂՀ կառավարության ընթացիկ արխիվ, 2001թ. մայիսի 4-ի որոշում, թիվ 122

կան, արդյունաբերական օբյեկտների ստեղծմանը, բիզնես-ծրագրերի շահավետ պայմաններով վարկավորմանը:

Վերաբնակեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և տնտեսական որոշ դրական տեղաշարժերի արդյունքում Արցախում վերջին շրջանում արձանագրվեց բնակչության թվաքանակի աճ: Այսպես՝ 2002թ. բնակչության թվաքանակը կազմեց 145.0 հազար մարդ, այն դեպքում, երբ 1995թ. կազմում էր 126.4 հազար<sup>1</sup>: Միննույն ժամանակ նշենք, որ հանրապետությունում ցածր է բնակչության բնական հավելվածը, չնայած կառավարության կողմից իրականացվող ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումներին. դրան հակառակ նկատվում է մահացության դեպքերի շատացում: Այսպես՝ ծնվածների թիվը 2000թ. կազմել է 2222, 2001թ.՝ 2306, 2002թ.՝ 2190. մահացածներ՝ համապատասխանաբար՝ 1185, 1075, 1242<sup>2</sup>: Համեմատության համար նշենք, որ նախապատերազմյան 1000 բնակչի հաշվով 22.2 ծնվածի դիմաց, 2002թ.՝ նույն ցուցանիշը կազմում է 15.1:

Չնայած վերաբնակեցման քաղաքականության արդյունքում ետպատերազմյան տարիներին Արցախում ներգաղթը գերազանցեց արտագաղթին, այդուհանդերձ վերջինս շարունակում է մնալ որպես ներքին ժողովրդագրական իրավիճակն ապակայունացնող գործոն, որի վերացման համար անհրաժեշտ է վերլուծել այն դրդապատճառները, որոնք մղում են արտագաղթի և այդ ուղղությամբ ձեռնարկել վճռորոշ քայլեր:

Այսպես, եթե 1990-1994թ.թ. արտագաղթը պայմանավորված էր գլխավորապես պատերազմական իրավիճակով և դրա ծանր հետևանքներով, ապա 90-ականների II կեսից արտագաղթի դրդապատճառները հիմնականում թելադրված էին սոցիալ-տնտեսական շարժառիթներով: Արտագաղթի որոշիչ դրդապատճառներ դարձան աշխատատեղերի բացակայությունը, սոցիալական լարվածությունը, բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը, մասնագիտական որակավորվածությանը համապատասխան աշխատանքի բացակայությունը, ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները, երկրի ներսում զարգացման

<sup>1</sup> ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2003, էջ 10

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 12

հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը, քաղաքական անկայուն իրավիճակը կապված արցախյան հիմնահարցի հետ:

Ազգային վիճակագրական ծառայության հաղորդած տվյալների համաձայն՝ հանրապետությունից 2000թ. արտագաղթել է 709 մարդ, 2001թ.՝ 857 մարդ, 2002թ.՝ 1138 մարդ<sup>1</sup>:

Վերոնշյալ երևույթները պահանջում են Արցախի վերաբնակեցման, արտագաղթի դրդապատճառների հետևողական վերացման քաղաքականություն, որն էլ իր հերթին ենթադրում է տնտեսական աճի խթանման, բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների իրագործում:

Արցախի զարգացման ու հզորացման հիմնախնդիրների լուծումը ենթադրում է նրանում ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխություն՝ վերաբնակեցման հիմնավորված քաղաքականության իրականացում: Հիմնավորված միջոցառումների շնորհիվ անհրաժեշտ և կարծում ենք միանգամայն հնարավոր է որպեսզի արդեն 2010թ. բնակչության թիվն հասցնել 250-300.000 մարդու: Վերաբնակեցումը այն կարևոր ռազմավարական խնդիրն է, որի իրագործումը նշանակում է տնտեսության հզորացում, ամրապնդում, ազգային համախմբվածություն: Արցախի բնակեցման, նրա տարածքի հարուստ բնական և զբոսաշրջության նպաստող աղբյուրների յուրացումը պետք է հանդիսանա աշխույժ պետական քաղաքականության առարկա ինչպես ՀՀ, այնպես էլ ԼՂՀ իշխանությունների համար: Այն թերևս հնարավոր կլինի իրականացնել խնդիրների համալիր ծրագրման միջոցով: Այստեղ պետք է կարևորվեն պետության և տնտեսական և՛ վարչական-կազմակերպական և՛ քարոզչական հնարավորությունների նպատակային գործադրումը: Անհրաժեշտ է ստեղծել նյութական, բարոյահոգեբանական և կազմակերպական լուրջ նախադրյալներ Արցախում բնակչության թվակազմի կտրուկ ավելացման նպատակով:

*«ԱրՊՀ. Հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2010, էջ 94-101*

---

<sup>1</sup> ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2000-2004, էջ 25

## ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ԷԶԵՐԻՑ

Խոսք ասելով արվեստի այս տեսակի մասին՝ ճիշտ չի լինի չանդրադառնալ երգարվեստի բանավոր տեսակին՝ աշուղությանը:

Նախ տեսնենք, թե ինչ իմաստ ունի «աշուղ» բառը: Այն արաբերեն նշանակում է սիրահար: Միրահարվածը (աշուղը) երգի ձևով մատուցում է հորինված բանաստեղծությունը ինքնաստեղծ մեղեդու հետ՝ նվագակցելով որևէ երաժշտական գործիք:

Տեղեկատու աղբյուրներում նշված է. «Աշուղի հիմնական գործիքներն են սազն ու քյամանչան»:<sup>1</sup>

Այսօրվա սերնդին ևս բախտ է վիճակվել 20-րդ դարի վերջերին լսելու աշուղների (հայերեն՝ գուսան) կենդանի երաժշտությունը հարսանիքների ժամանակ: Նրանք գործում էին մենակ, երբեմն էլ՝ երկուսով: Այն տպավորությունն էր, որ մրցում էին իրար հետ: Ցավով նշենք, որ Ղարաբաղն այսօր աշուղ չունի:

Ունեցել ենք աշուղներ, որոնք, չնայած ինքնուս են եղել, սակայն հանրությունը նրանց ընդունել, հարգել ու սիրել է: Արցախում, Մերձավոր Արևելքի շատ բնակավայրերում եղել են ճանաչված աշուղներ՝ Հաթամը (Ադամ), Միսկին Բուրջին (շուշեցի Բուրջանց գերդաստանից), Ալեքսանը և ուրիշներ:

Չնայած գրավոր տեղեկություններ չկան, սակայն սերնդեսերունդ մեզ են հասել տեղեկություններ այն մասին, որ աշուղ Հաթամը ծնվել է Բերդաձորում: Այդ մասին վկայում են «Ըշըղեն տափ», «Ըշըղեն տանձի» (Ենգիբար գյուղի մոտ, այժմ՝ Ծաղկաձոր), «Աշուղ Հաթամի աղբյուրը» (Հին Շենի հարավ-արևմտյան կողմում, որի մոտով անցնում էր Շուշիից Խուդաֆերինի կամուրջը տանող ճանապարհը) մանրատեղանունները: Ըստ ընդունված կարգի (սովորություն էր երևի)՝ նա երգել է հայերեն, պարսկերեն և արաբերեն: Աշուղ Հաթամն ավելի շատ Պարսկաստանում է շրջագայել, քան Ղարաբաղում: Նրան ամեն տեղ սիրով են ընդունել ու ճանապարհել:

<sup>1</sup> Հայկական Սովետական հանրագիտարան, Եր., 1977, էջ 493

Ասում են՝ իբր խնջույքների ու հարսանիքների ժամանակ ոսկով ու արծաթով նվագող այս աշուղը մի անգամ էլ իր ձիու համար ստացած մի պարկ հարդի դիմաց նվագելիս երգով ասել է. «մի քսակ արծաթ ու ոսկու համար չնվագող աշուղս մի պարկ դարմանի համար եմ նվագում»:

Աշուղ Հաթամի մահվան մասին ստույգ տեղեկություն չկա: Մեր ձեռքի տակ եղած լուսանկարը 1973թ. ձմռանը Երեւանում, մեզ են նվիրել՝ նշելով, որ բերդածորցի աշուղ Հաթումն է.

Միսկին Բուրջու շուշեցի լինելու մասին վկայում է քաղաքի հյուսիսային կողմի հին հայկական, գերեզմանատան տարածքում Բուրջեանցների տոհմական գերեզմանոցի առկայությունը, որը, չնայած եղծված է ազերների կողմից (տարածքում կառուցվել է ավտոնորոգման արհեստանոց), սակայն պահպանվում են աշուղի եղբոր՝ Անանիայի և նրա տիկնոջ՝ Սոնիշկայի շիրիմները՝ բրգաձև շիրմաքարով:<sup>1</sup>

Միսկին Բուրջին սիրել է հանդիպումներ ունենալ անվանի մտավորականների հետ: Հորինել է քառյակներ ու երգել խնջույքների ժամանակ: Նրա մտերիմ ընկերներից է եղել քաղաքի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու առաջին հոգևորական Ավետիս Երամիշյանցը: Ասում են՝ Միսկին Բուրջին Ա. Երամիշյանցի հետ Թբիլիսիում 1837թ. հանդիպել է Ռուսաստանի ցար Նիկոլայ Առաջինի հետ, այդ ժամանակ, ի պատիվ ցարի, հորինել է մի քառյակ, որի տողերում ասվում է.

*-Император русский, великий царь.*

*Кроме бога, нигде нет выше вас.*

Պարզ ու հասկանալի, սակայն ռուսերեն ու աշուղավարի ողջունել է ցարի առաջին մուտքը Թբիլիսի:<sup>2</sup>

19-րդ դարի 2-րդ 20-րդ դարի 1-ին կեսին է ապրել ու ստեղծագործել «Տուղլու աշուղ» Ալեքսանը (Տոդ գյուղ): Այս աշուղի մասին ևս մեր մշակույթի պատմության էջերում, հանրագիտարանում տեղեկություն չկա: Միանգամայն պատահականորեն ձեռք բերվեց Ֆիրիդոն Շուշինակու «Սեյդ Շուշինսկի» փոքրածավալ գրքույկը՝ հրատարակված 1966թ. Բաքվում: Այդ գրքում հիշատակված է նաև աշուղ Ալեքսանի անունը: Հետաքրքրական է, որ այս հայ աշուղի մասին գովեստով է խոսում հեղի-

<sup>1</sup> Арутюнян Г., *Шуши: нововыявленные исторические надписи*, Степанакерт, 2008, стр. 251, 320

<sup>2</sup> «Նախիջևան» թերթ, մարտ 2001

նակը: Գրքույկն ադրբեջաներեն է, թարգմանաբար մեջբերում ենք ազգանունով անհայտ դարաբաղցի աշուղի վերաբերյալ հատվածը:

1904թ. աշնանը տողեցի աշուղ Ալեքսանն իր խմբով հարսանիքի է հրավիրվում Հորադիզ գյուղը: Նույն հարսանիքի կանանց խնջույքին մաշադի Հուրգաթը ևս հրավիրված էր: Հանդեսին հավաքված գյուղի տարեցները աշուղ Ալեքսանին խնդրում են, որ 15-ամյա Մեյիդի երգելը ևս լսեն: Աշուղ Ալեքսանը չի մերժում, նվագակցելով՝ երգելու հնարավորություն է տալիս տղային: Դրանից հետո աշուղն իր խմբում ընդգրկում է Մեյիդին ևս: Մեյիդը միշտ հարգում էր ու հարգանքով էր խոսում աշուղ Ալեքսանի մասին՝ ասելով. «Ես առաջին անգամ Ղարաբաղի Ղոչահմեդլի գյուղում (գյուղը Կարյազհիտյից (այժմ՝ Ֆիզուլի) ոչ հեռու է), հեղափոխական Մամեդխան Մամեդովի հարսանիքի ժամանակ աշուղ Ալեքսանի հետ միասին եմ երգել: Նրա խումբը բաղկացած էր 8 հոգուց: Աշուղի որդին՝ Լալալարը, և՛ երգում էր, և՛ նվագում: Երեք-չորս տարի նրանց հետ Ղարաբազար, Հորադիզ և Արաքսի ափերին տեղակայված գյուղերի հարսանիքներին ու խնջույքներին ենք մասնակցել: Աշուղ Ալեքսանը «Արագբարը» երգն այնպես էր երգում, որ լսողները հիացած էին մնում»:

Այս աշուղի մասին կոմպոզիտոր Ուզեիր Հաջիբեկովը գրել է. «Աշուղ Ալեքսանը 19-րդ դարի 2-րդ կեսին ապրած աշուղներից է: Այն ժամանակ Ղարաբաղի գյուղական հարսանիքներում իր խմբով հանդես եկող (նվագող-երգող) աշուղ Ալեքսանը Ադրբեջանի երաժշտական արվեստի զարգացման և մի շարք վարպետ-մասնագետների հասունացման, զարգացման գործում մեծ ու նշանավոր ծառայություններ է ունեցել»:<sup>1</sup>

Եվ պատահական չէ, որ արվեստագետը իր հետագա հոդվածներից մեկում գրում է. «Աշուղ Ալեքսանն անցյալ դարի ականավոր աշուղներից մեկն է»:<sup>2</sup>

Ֆիրիդուն Շուշինսկին Բաքվում հրատարակված երգարվեստին նվիրված իր գրքում խոսում է նաև առևտրի և հայերի թթի օղու մասին: Աշուղ Ալեքսանի խմբում երգող Հորադիզեցի Սեիդին շուշեցի Սեիդ Շուշինսկի էին անվանում, նրա մանկության ընկեր Ասադ Միրզայի օղին, հիշելով միասին սովորելու տարիները, գրում է. «Ես, Սեիդը և Ղոչահմեդլի Հեյդար

<sup>1</sup> Гаджибеков Узеир, *“В прошлом и новом Азербайджане”*, журнал “Советская музыка” 12, 1935, стр. 57

<sup>2</sup> Шушинский Фиридун, *“Сенд Шушинский” на азерб. яз.* Баку, 1966, стр. 9

Հեղարարվր նույն դասարանում էինք սովորում: Մեր ուսուցիչն էր մոլլա Համգան: Նրան «Пишик Амза» (Կատու Համգա) ասելով էին կանչում»:<sup>1</sup>

Կարող ենք համոզված ասել, որ Սեիդին և այլոց՝ որպես շուշեցիների հանրությանը ներկայացնելը միշտ միևնույն նպատակն է հետապնդել ու այժմ էլ այդպես է արվում միտումնավոր՝ վաղուց կազմված ծրագրի համաձայն: Ծրագիր, որը տալիս է մեկ հանձնարարական՝ Շուշին ապագա սերունդներին ներկայացնել որպես մահմեդական Շուշի: Այլապես Սեիդը և շատ-շատերը չէին ներկայացվի որպես շուշեցիներ: Հատկանշական է, որ հանրագիտարանում բացակա է, չի նշված Ուզեիր Հաջիբեկովի ծննդավայրը:

Արվեստագետի կենսագրության նոր ճշգրիտ էջեր պիտի բացվեն: Վերջերս հաջողվել է պարզել Ուզեիր Հաջիբեկովի իսկական անունը: Շատերի նման նա ևս ասիմիլյացիայի էր ենթարկվել: Նա ծնվել է 1885թ., մահացել՝ 1948թ. Բաքու քաղաքում, որտեղ էլ նրա սև գույնի գրանիտից քրիստոնեական ոճով կանգնեցրած ուղղանկյունաձև շիրմաքարին կարակուլե փոփախով պատկերված նկարի տակ գրված է՝ Հաջի բեկ Ուզեիր Աբդուլ Հյուսեին օղլը:<sup>2</sup>

Քաղաքի հին հայկական գերեզմանատներում կատարված հետազոտությունների ժամանակ, կարևոր տեղեկատու արձանագրություններից բացի, շիրմաքարերի կողերին քանդակված՝ կերպավորված տարբեր պարային տեսարաններ, երաժշտական գործիքներ կան, որոնք գաղափար են տալիս, որ 18-19-րդ դարերում Շուշիում եղել ու գործել են հանրահայտ երաժիշտներ: Եվ հասկանալով, որ նման տեսարանների՝ պատկերների առկայությունն ինքնին խոսում է, հետազոտության տարիներին (1997-2003թթ.) շատ էինք ցանկանում հանդիպել գոնե մեկ շիրմաքարի, որի արձանագրությունը որոշ տեղեկություն կտար ժամանակաշրջանի որևէ հայ երաժշտի մասին: Անբացատրելի էր՝ ինչպես կարող է հավաքված 1300-ից ավել արձանագրությունների շարքում, որոնք հստակ տեղեկություններ են տալիս քաղաքում գործող 40 տարբեր արհեստների ու պատմական իրադարձությունների մասին, չլինել երաժշտության վերաբերյալ տեղեկատու արձանագրություն:

<sup>1</sup> Там же, стр. 8

<sup>2</sup> Հաջի բեկ Ուզեիր Աբդուլ Հյուսեին օղլու շիրմաքարը, Բաքու, 1948



2008թ. հուլիսին, արձանագրություններ հավաքած, Շուշիի հարակից Ղայբալի գյուղից վերադառնալիս Ստեփանակերտ-Երևան մայրուղու աջակողմյան հեղեղատում նկատվեցին շիրմաքարեր: Հասկանալի էր, որ դրանք բերել են ազերիները, որպեսզի փակեն հեղեղատն ու նրա վրայով անցկացնեն ավտոճանապարհ դեպի մուսուլմանաբնակ Խալիֆայի և մյուս գյուղերը: Տեղամասն ուսումնասիրելով՝ հավաքեցինք արձանագրություններ: Կիսաջարդ շիրմաքարի կողին գրված էր «սազանդար» բառը: Որոշ հեռավորության վրա գտնվեց հրաշքով փրկված երկրորդ կտորը ևս: Այնուհետև երևացին որիշ շիրմաքարեր էլ, որոնք անխոս վկաներ էին շուշեցի երաժիշտների մի գերդաստանի մասին, որ ապրել ու գործել էին 18-19-րդ դարերում:

Մշակույթի այս ճյուղը ևս հունական ծագում ունի (musike), որը բառացի նշանակում է արվեստ երաժշտության մասին:<sup>1</sup>

Բաքվաբնակ Ֆիրիդուն Շուշինսկու (Մամեդովի) ռուսերեն «Շուշա» գրքում ներկայացված է. «Շուշին երաժշտության օրրան է»: Այս քաղաքը, որ իրավամբ Կովկասի կոնսերվատորիա էր համարվում, աճեցրել է շատ երգիչներ և երաժիշտներ:<sup>2</sup> Սերտ կապված երգարվեստին՝ Շուշիում ձևավորվել է թառ, քյամանչա և հարմոն նվագողների ամբողջ համաստեղություն: Նրանց շարքում կարելի է դասել թառահարեր Ալի Ասկերին, Սադրիջանին, Արտեմին, Լազր Տեր Վարդանեսովին, Արսեն Յարամիշյանին, Մաշադի Ջալալ Ամիրովին, Բալայի որդի Գրիգորին (1895-1929), փոքրիկ Գրիգորին, Բալա Գրիգորի որդի Մելիքովին (1902-03թթ. ապրել է Բաքվում), Թադևոս Հարությունյանին, Կուրբան Փիրումովին, Լազր Գաբրիելյանին, քյամանչահարներ Բադդագյուլի որդի Աթային, Ավանեսին, Բադդագյուլի որդի Քյասիին (Գասպար, Ն.Ն.) Սևիին, Լևոն Կարախանովին, Բ. Ալիևին, Արմենակ Շուշինսկուն և Մակիչին»:<sup>3</sup>

Ներկայացվող ցուցակին անմիջապես հաջորդում է երկտող. «Այս ցուցակում առանձին տեղ է զբաղեցնում թառահար Արսենի անունը, որը երգիչ Սեիդի հետ լավագույն ձևով նվագում էր «Չահարգյահ» դժվար

<sup>1</sup> Советский энциклопедический словарь, Москва, 1990, стр. 855

<sup>2</sup> Фиридун Шушинский, “Шуша” на азерб. языке, Баку, 1968, стр. 96

<sup>3</sup> Там же, стр. 115

նվագվող մոտիվը: Նա միշտ արժանանում էր բուռն ծափահարություններին:<sup>1</sup>

Ցուցակում ընդգրկված 20 երաժիշտներից 16 հոգի հայեր են, իսկ մյուս չորսի ադրբեջանցի լինելը թեական է: Սակայն անառարկելիորեն զգացնել է տալիս իրեն, որ Ջամիլը «Մաշադի» քոչվոր ցեղի ծագում ունի: Ըստ նշված տարեթվերի՝ պարզ հասկանալի է, որ գրքում ներկայացված են 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի 30-ական թվականների շուշեցի երաժիշտները: Իսկ հետագա տարիների մասին ոչ մի խոսք, որովհետև Ադրբեջանում տարվող ներքին քաղաքականությունն իրավունք չէր տալիս հայի մասին դրական խոսք ասելու:

Հարկ ենք համարում ընթերցողին տեղեկացնել, որ ուսումնասիրություններից պարզվել է, որ հեղեղատում գտնվող շիրմաքարերը բերված են քաղաքի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու հարավ-արևելյան կողմի և ռուսական եկեղեցու բակի արևելյան հատվածի գերեզմանատներից:

Արդեն ակնհայտ չորս շիրմաքարերի արձանագրություններ, որ տեղադրված են եղել Ոսկանի, նրա որդիներ Առաքելի, Հարությունի (անվանակոչել են պապի՝ Հարությունի անունով), Ասլանի շիրիմներին, վկայում են այն մասին, որ գերդաստանն, իրավամբ, վարպետ երաժիշտների գերդաստան էր: Այդ մասին փաստում են նրանց վերագրված «ուստա» և «սազանդար» բառերը: Հիշյալ երաժիշտների ծնված թվերը չեն նշված շիրմաքարերի արձանագրություններում, սակայն պարզ գրված է, որ Ոսկանը մահացել է 1791, եղբայրներ Առաքելն ու Հարությունը՝ 1795, իսկ Ոսկանի երրորդ որդին՝ սազանդար Ասլանը՝ 1801 թվականին: Գերդաստանի Հարություն պապի մասին տվյալներ չկան, քանի որ չգտնվեց շիրմաքարը: Նրա որդու շիրմաքարի արձանագրության տողերում վերջինս հիշատակվում է որպես ուստա, այսինքն՝ վարպետ:

Մյուս կարևոր արհեստներին զուգահեռ գործում էր ժառանգականության սկզբունքը: Դեռ չկային ուսումնական հատուկ հաստատություններ: Առաջին կոնսերվատորիան հազիվ 1800-ական թվականների առաջին կեսին Իտալիայում, այնուհետև 1862թ. Պետերբուրգում էին հիմնադրվել: Ինչպես մերձավոր Արևելքի արաբական երկրներում ու Պարսկաստանի Սպահան, Թավրիզ, Նոր Ջուղա քաղաքներում, Շուշիում էլ նույն սկզբուն-

<sup>1</sup> Там же, стр. 116

քով շարունակվում էին ասպարեզ գալ երաժիշտներ, որոնք երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (1939-1945թթ.) ինքնուրույն կատարելագործվում, որակավորվում էին՝ տիրապետելով լարային ու փողային երաժշտական գործիքների: Մեծ համբավ ունեին թառահար Սուրեն Պետրոսի Մանգասարյանը, Վաղարշակ Բալասանյանը, որը կլառնետով աշխարհի բազմաթիվ ազգերի մեղեդիներ էր նվագում Շուշիի հանգստյան տանն ու առողջարանում նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններից եկող հանգստացողների համար: Հիանալի քյամանչա էր նվագում Վարդան Պետրոսյանը: Երկար տարիներ աշխատել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում որպես երաժշտության ուսուցիչ: Միաժամանակ երաժշտական գործիքների պատրաստման հմուտ վարպետ էր: Սեփական աշխատանքի արդյունք էր նաև նրա քյամանչան: Վ. Պետրոսյանն ուսումնարանի երաժշտական համույթի միակ քյամանչահարն էր: Հարկ է նշել, որ Պետրոսյանների գերդաստանի նախնիները հմուտ վարպետներ էին: Դեռ 18-19-րդ դարերում Շուշի քաղաքում տեղակայված իր արհեստանոցում Հակոբջան Պետրոսյանը պատրաստում էր լարային ու փողային երաժշտական գործիքներ, որի մասին վկայում է լուսանկարը:

Արցախում և Արցախից դուրս հայտնի էր թառահար Սուրեն Պետրոսի Մանգասարյանը /1927-1978/: Նա այն սակավաթիվ երաժիշտներից էր, որի կատարողական արվեստը առանձնահատուկ ու յուրատեսակ գծեր ուներ, շնորհիվ ինչի էլ տարբերվում էր մյուսներից: Նրա նվագից լսվում էին բառերը, կարծես մարդկային շունչ առած ասմունքում էին լարերը: Սուրեն Մանգասարյանը, երբ մուգրաբով խփում ու մատները վազեցնում էր լարերի վրայով, ոգևորում էր երգողին էլ, լսողին էլ: Երևի դրա համար էր, որ, ի տարբերություն շատերի, ծափերի նա արժանանում էր երկու անգամ՝ մեկ սադափաշար թառը ձեռքին բեմում երևալիս, մեկ՝ կատարումն ավարտելիս: Նա այն եզակի թառահարն էր, որի ձախ ձեռքի ցուցամատը չէր աշխատում: Զարմացած, մի անգամ այդ մասին հարցրինք, թե ինչպես է կարողանում այդպես նվագել, կարճ պատասխանեց. «Ես իմ թառը շատ եմ սիրում»:

Սուրեն Մանգասարյանի հմտությունն ու համբավը հնարավորություն են տվել, որ երեսունհինգամյա շուշեցի թառահարի ու հմուտ կազմակերպչի հետ հաշվի նստեն նաև Բաքվի մասնագետ պատոնյաները: Այդ մասին է վկայում այն փաստը, որ (բացառության կարգով) 1955-60թթ.

միաժամանակ աշխատել է Շուշիում ու Լաչինում: Եղել է Շուշիի մշակույթի տան տնօրենը, իսկ 1960 թվականից մինչև կյանքի վերջը՝ 1978 թվականը, մասնագիտությամբ աշխատել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում: Ուսումնարանի երգ-երաժշտության համույթի, կազմված հայերից ու ադրբեջանցիներից յոթ երաժիշտներից հինգը եղել են հայեր: Երաժիշտների առաջատարը եղել է թառահար Ս. Մանգասարյանը, իսկ ընդհանուր ղեկավարը՝ Մոսկվայի կոնսերվատորիան ավարտած Էլգա Հարությունի Ավանեսովան, որը շատ լավ դաշնամուր էր նվագում:

Ս. Մանգասարյանի վարպետությունն ու բարի համբավն են փաստում բազում օրինակներ: Այսպես՝ 1963թ. հունիսին Շուշիի դեռ կանգուն երկհարկանի «Բորժումի» հյուրանոցից դեպի հրապարակ ձգվող զբոսայգում Նովրուզի (նրանց տանը ուսանող տղաներից վեցը վարձով էինք մնում) և նստարաններից մեկի վրա նստած սև կոստյումով, կարակուլե գլխարկով, քթի տակ հազիվ նշմարվող բեղով անձանոթ մարդու միջև երկխոսություն էր: Ձկներին կերակրելով՝ Նովրուզը մոտեցավ ու ասաց. «Խա՛ն, կյանքներս վերջանում է, այսօր կանք, վաղը՝ ոչ, մի անգամ մինչև Բաքու գնալը հավաքվենք, մի քիչ ձայնդ լսենք, ինչ կլինի»: Քմծիծաղ տվեց անձանոթն ու պատասխանեց. «Նովրուզ գարդաշ (եղբայր) առանց նվագ ինչ երգ»: Նովրուզը թե. «Էլդարին կկանչենք»: Խանը (հետո Նովրուզ քիշիից իմացանք, որ երգիչ Խան Շուշինսկին էր) լսելի ձայնով ծիծաղեց ու պատասխանեց. «Էլդարդան բիր շեյ չըխմագ, Մուրենը թափսանրզ, ամալա գյալար (Էլդարից մի բան դուրս չի գա, եթե Մուրենին գտնենք, կստացվի): Այս խոսքերը սովորական էին մեզ՝ ուսանող պատանիներիս համար, սակայն տարիների հեռվից վերհիշելով՝ հասկանում ենք, որ սրանք ոչ միայն խոսքեր էին այլազգի երգչի շուրթերից լսված, այլև գնահատական՝ հայտնի թառահարի մասին: Մուրենի մասնակցությամբ հավաքը հետո կայացավ, թե ոչ, չգիտենք, սակայն փաստ էր, որ նրա վարպետությունը գնահատում էին այլազգիները:

Արցախում 1988թ. փետրվարի 13-ին վերսկսված ազգային-ազատագրական շարժման տարիներին, ինչպես շատ տեղեր, Շուշիում ևս լրեց երգ-երաժշտության ձայնը: Պետականորեն, իշխանությունների աջակցմամբ տեղահանվել էին հայերը: Հոգսաշատ ու շրջափակված Արցախ-Ղարաբաղին պատերազմ էր պարտադրել Ադրբեջանը: Սակայն երգ-երաժշտության ձայնի լռությունը շատ կարճ տևեց ամբողջ հայության համար: Երբ 1992

թվականի մայիսի 9-ի առավոտյան Արկադի Տեր-Թադևոսյանի (հայտնի է Կոմանդոս անունով) հրամանատարությամբ հայ քաջերն ազատագրեցին երկու տարի առաջ պետականորեն հայաթափված, դարեր առաջ հայի ձեռքերով կառուցված Շուշին, հայր նորից սկսեց գործի անցնել՝ քաջ գիտակցելով, որ կոմունիստ միաժամանակ երգ-երաժշտությունն էլ պետք է: Եվ նույն տարում սկսեցին ձեռնամուխ լինել երգչախմբի ստեղծմանը: Երգչախումբը, որ կազմվեց մանուկներից, պատանիներից ու երիտասարդներից, կոչվեց «Վարանդա», որը հիմնադրվել է Ջաքար Քեշիշյանի կողմից «Արամ Մանուկյան» վարժարանում: Հետագայում երգչախումբը պետականացվեց: Այն իր ստեղծագործական կյանքը առ այսօր շարունակում է:

Ջաքար Քեշիշյանն ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Հիանալի շվիահար է և խմբավար: Որպես շվիահար՝ նա ճանաչված է Լիբանանում, հատկապես Բեյրութում, Հայաստանում, Եգիպտոսում, Սիրիայում և Կիպրոսում:

Երգչախումբը ավելի քան 200 համերգներով հանդես է եկել ԼՂՀ պաշտպանության բանակի զորամասերում, հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև Հայաստանում ու Լիբանանում:

«Վարանդա» երգչախումբն այն ամուր օղակն է, որից պիտի կազմվի մեծ շրթա, որպես շարունակությունը քրիստոնյա Շուշիի ընդհատված հայ երաժշտության տարեգրության:

Այսպես ասելու իրավունք է տալիս այն փաստը, որ Ադրբեջանի կառավարության կողմից Արցախի վզին փաթաթած դաժան պատերազմում ստացած վերքերի բուժմանը զուգահեռ արցախահայությունը ուշադրության կենտրոնում է պահում արվեստի կարևոր ճյուղերից մեկը՝ երգ-երաժշտությունը: Որպես ապացույց նշենք, որ այսօր «Վարանդա» երգչախմբի սաներից երեքը սովորում են Երևանի Սայաթ Նովայի անվան պետական կոնսերվատորիայում, իսկ 12 հոգի՝ թատերական համալսարանի մասնաճյուղում:

Նրանք Շուշիի Խանդամիրյանի անվան վերածնված թատրոնի առաջնեկ դերասաններն են, ովքեր համատեղում են ուսումն ու աշխատանքը: Համոզված ասենք, որ սերունդները քայլում են պապերի ոտնահետքերով:

*«Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու»,  
Երևան, 2012, N1, էջ 63-71*

## ՇՈՒՇԻԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ

(19-րդ դար)

Շուշիի մասին շատերն են գրել՝ հայ, ռուս, թուրք և այլազգի: Նրանք բոլորն էլ Շուշին գնահատել են նախ և առաջ որպես մշակութային կենտրոն: Մինչդեռ այն եղել է նաև վարչական, տնտեսական և առևտրական կենտրոն:

Շուշին իր առանձնահատկություններով տարբերվել է Անդրկովկասի մյուս քաղաքներից. նախ՝ որպես վաղ միջնադարի բերդ-ամրոց, ապա՝ նոր ժամանակաշրջանում՝ գաղթականներով բնակեցված քաղաք՝ իր սովորություններով և առանձնահատկություններով:

Շուշին 18-րդ դարի երկրորդ կեսին վեր է ածվել խոշոր բնակավայրի, որին 1845 թվականին տրվել է քաղաքի կոչում: Այն իր աշխարհագրական դիրքով և բնական պայմաններով յուրահատուկ տեղ է բռնում Անդրկովկասում: Մեսրոպ Թաղիադյանը, 1822 թ. Հայոց Եփրեմ կաթողիկոսի հետ լինելով Շուշիում, այն անվանել է «անառիկն ամրոց», որտեղ կար 500 հայ ընտանիք և եկեղեցիներ: Այստեղի «Բնակչիք... ընդ այր և ընդ կին առույզ են և աշխույժք», իսկ «...Կուսանք նոցա, որ զծայրագոյն պատկեր ամոթխածութեան ի զէմս կրեն, գեղեցիկք են յոյժ և ախորժատեսիլք»:<sup>1</sup>

Շուշիի բերդաքաղաքի մասին Մարգիս վարդապետ Ջալալյանցը, որը 19-րդ դարի 60-70-ական թվականներին եղել է Արցախի թեմի առաջնորդ, 40-ական թվականների սկզբին գրած իր «Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան» գրքում նշել է. «Հայազգի բնակիչք՝ի սմա են եւթն հարիւր գերդաստանի, որք ունին գերկուս եկեղեցիս վայելչաշէնս Ագուլիսեցոց և Ղազանչեցոց առձայնեալ, յայսմ ամրոցի է արքեպիսկոպոսանիստ աթոռ Արցախու...»:<sup>2</sup> Իսկ Լեոն իր «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի 1838–1913» ուսումնասիրության մեջ նշում է, որ 19-րդ դարի առաջին քառորդում «Շուշուայ-Ղալան» արմատապես փոփոխության

<sup>1</sup>Թաղիադյան Մ., *Ուղեգրություններ, Հորվածներ, Նամակներ, Վավերագրեր*, Եր., 1975, էջ 157–158

<sup>2</sup> *Ճանապարհորդութիւն Ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ Մարգիս վարդապետի Ջալալեանց, Մասն Ա, Տիփլիս, 1842, էջ 181*

պայմանների մեջ էր, որտեղ վերացվել էին մելիքությունը և կաթողիկոսությունը, որոնք «տեղական ինքնամփոփման գլխավոր գործոններն էին»:<sup>1</sup>

Հայտնի է, որ Շուշիի առաջին բնակիչները հանդիսացել են Վարանդայի Շոշ գյուղից այնտեղ տեղափոխվածները: Հետո գաղթականներ են եկել Գողթանի Շահկերտից (Ղազանչի), Ագուլիսից և Մեղրիից: 1840 թ. տվյալներով Ագուլեցոց եկեղեցին ուներ 447 ծուխ 2478 շնչով, Ղազանչեցոց եկեղեցին՝ 367 ծուխ՝ 3494 շնչով, Մեղրեցոց եկեղեցին՝ 102 ծուխ՝ 458 շնչով: Գաղթականները, 18-րդ դարի կեսերին գալով Շուշի, բերեցին իրենց տեղական բարքերը և հատուկ բարբառը: Հետագա ժամանակաշրջանում նրանց փոխադարձ շփումների հետևանքով միավորվեցին նրանց բարքերը, և բարբառը, անկասկած, ենթարկվեց Ղարաբաղի հայության խիստ ազդեցությանը: Ահա, նշել է Լեոն, այդպես առաջ եկավ դարաբաղյան բարբառի մի ճյուղ՝ «քաղաքացիացած ճյուղ»:<sup>2</sup>

1805թ. մայիսի 14-ին Քուրակչայում կնքված պայմանագրով Ղարաբաղի երկրամասը միացվել է Ռուսաստանին, իսկ 1822 թ. խանության վերացումից հետո Շուշին խանության կենտրոն լինելուց դարձավ գավառային կենտրոն: Այստեղ ռուսական տիրապետության ժամանակ առաջին գավառապետը հանդիսացել է փոխգնդապետ Միխայիլ Պետրովիչ Կոլյուբյակինը, որի օգնականն էր Պետր Պետրովիչը: Գավառի վարչության կազմում կային միայն երկու հայ: Շուշիի քաղաքապետն էր Յակով Անդրեևիչ Տիմոֆեևը: Մնացած պաշտոնյաները ռուսներ էին:<sup>3</sup> Այդ կարգը շարունակվել է մինչև 1917 թվականը:

Արխիվային և հրապարակված նյութերում տվյալներ կան, որ Շուշին, 18-19 ըդ դարում լինելով արցախահայության ազգային-ազատագրական պայքարի կենտրոն, մեծագույն դեր է խաղացել երկրամասի ուժերի կենտրոնացման և հակառակորդին բազմիցս պարտության մատնելու գործում: Ահա թե ինչու ռուս ռազմական պատմաբաններ Պոտտոն, Դուբրովինը և ուրիշներ բարձր են գնահատել Շուշիի պաշտպանական դերը մանավանդ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: Շուշին իր գեղեցկությամբ, առողջարան լինելու իրողությամբ ոգևորել է շատ բանաստեղծների, երաժիշտների, գրողների, նկարիչների:

<sup>1</sup> Լեո, *Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրոցի 1838-1913*, Թիֆլիս, 1914, էջ 59

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 65

<sup>3</sup> *Кавказский календарь на 1846 г., Тифлис, 1845, стр. 54*

1830-ական թվականների սկզբից սկսած Արցախի թեմի աթոռանիստ դարձած Շուշին ոչ միայն հանդես էր գալիս որպես գավառի վարչական, այլև տնտեսական և մշակույթի կենտրոն, որն աչքի էր ընկնում իր կառույցներով, եկեղեցիներով, տպարանով, ուսումնական հաստատություններով, արդյունաբերական ձեռնարկություններով, արհեստանոցներով: 19-րդ դարի 30-ական թվականների վերջին ռուս հեղինակը գրել է, թե Հայաստանի անցյալի իշխանական և մելիքական կենտրոն Շուշիում 1838 թ. բացվել է ուսումնական հաստատություն՝ ի դեմ հոգևոր ուսումնարանի:<sup>1</sup> Երբ դարի 20-ական թվականներին Վալերի Մադաթովը Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի ռազմական հրամանատարն էր, նա մեծ ջանքեր էր գործադրում կարգավորելու Շուշի տանող ճանապարհներն ու ամրոցի փողոցները: Շուշեցիները շատ էին սիրում իրենց բերդ-ամրոցը և ոչինչ չէին խնայում նրա պաշտպանության համար: Մի փաստաթղթում ասված է, որ 1826 թ. բերդի պաշարման ժամանակ նրա հայ բնակիչները իրենց բոլոր անասունները նվիրել են պաշտպաններին՝ կերակրելու նպատակով, որի համար պարետ Ռեուտը երախտապարտ էր:<sup>2</sup> Շուշեցին այդ քայլին էր դիմել ամենից առաջ հայրենասիրությունից դրդված:<sup>3</sup> Չնայած Շուշիում շուկայական հարաբերությունները դանդաղ էին զարգանում, այն հանդիսանում էր առևտրի կենտրոն, որտեղ վաճառվում էին միս, կաթնեղեն, մրգեղեն, խմիչքներ, մետաքս, արհեստագործական ապրանքներ, տարբեր զարդեր: Շուշիի առևտրականները վաղուց էին դուրս եկել երկրամասի սահմաններից և երևում էին Ռուսաստանի, Եվրոպայի ու Ասիայի շուկաներում: Արդեն դարի 50-ական թվականներին քաղաքում երևացել են հարյուրավոր կրպակներ: Այստեղ առևտուրը հիմնականում զարգանում էր դրամով և ապրանքափոխանակությամբ: Ըստ էության՝ գավառում հողատիրության պահպանումը խոչընդոտում էր արդյունաբերության, առևտրի, շուկայական հարաբերությունների արագ զարգացումը: Հողը՝ որպես արտադրամիջոց, երկրամասի բնակչության գոյության գլխավոր պայմանն էր: Հողը ապրելամիջոց էր նաև Շուշիի բնակչության մի մասի

<sup>1</sup> Сборник актов относящихся к обозрению истории армянского народа, ч. III, Москва, 1938, с. 6

<sup>2</sup> Акты собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. VI, ч. I, Тифлис, 1874, документ 1327, стр. 868

<sup>3</sup> Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XV - начале XIX вв., Ленинград, 1949, стр. 318



համար: Պետական խորհրդական Պ.Սոգիլևսկու և գնդապետ Պ. Երմոլով 2-րդի կողմից 1823թ. Ղարաբաղում անցկացված վիճակագրության ներածականում նշված է, որ բերդում եղած բոլոր հողերը օգտագործվում էին նրա բնակիչների կողմից:

Ըստ վիճակագրության՝ Շուշի բերդ-ամրոցը բաժանվում էր երեք թաղամասի՝ Թավրիզյան, Ղազանչի և Ագուլիս: Աշխատանք գտնելու համար ամեն օր շրջակա գյուղերից, Պարսկաստանից կամ այլ տեղերից Շուշի էին գալիս հարյուրավոր մարդիկ: Պարզապես ամեն օր Շուշիում կարելի էր գտնել բանվորական ազատ ուժ: Կասիտան Զուբարյովը, որը պետական ծառայող էր, 30-ական թվականների սկզբին իր մի զեկուցագրում հաղորդել է, որ Շուշիում բոլոր ծանր աշխատանքները հիմնականում կատարում են հայ բանվորները:<sup>1</sup>

1822թ. Շուշիում հաստատվելով՝ Բագելի բողոքական միսիոներները 1827 թվականին բացեցին տպարան, որտեղ գրքեր էին տպագրվում տարբեր լեզուներով: Նրանք բացեցին նաև ուսումնարան, որտեղ սովորող աշակերտների թիվը հասնում էր 130-ի:<sup>2</sup> Շուշիում գործում էր նաև կուսանոց, որը բացել էր Հռիփսիմե Բահաթրյանցը 1814 թվականին իր սեփական ծախսերով: Այն գործել է մինչև 1917 թվականը:

1823թ. հիմնադրվել է «Շուշի ամրոցի և նրա շրջանի քաղաքային դատարանը», որը գործել է մինչև 1840 թվականը, և վերանվանվել է Շուշիի գավառային դատարան: Դատարանը գործել է մինչև 1868 թվականը: Հետո գավառային դատարանը վերանվանվել է Շուշիի հաշտարար դատարան և գործել մինչև 1917 թվականը:

19-րդ դարի 40-ական թվականներին Ղարաբաղի գավառային ղեկավարությունը ենթարկվում էր Կասպիական մարզի ղեկավարությանը: Այդ ժամանակ Ղարաբաղի գավառապետը եղել է հեծելագորային փոխգնդապետ, իշխան Ստենբուկը, իսկ Շուշիի քաղաքապետը՝ Յա. Տիմոֆեևիչը:

1805 թվականից Շուշիում սկսել է գործել փոստատուն, իսկ 1876 թվականին հիմնվել է հեռագրատուն: 1866 թվականից քաղաքում սկսել է գործել զինվորական մաս:

<sup>1</sup> АКАК, т. VII, 1878, Тифлис, док. 411, стр. 462

<sup>2</sup> Նույն տեղում, Յ. VI, փ. I, ՊՏՍ. 225. стр. 173

Շուշեցիները միշտ էլ հոգացող են եղել: Մեսրոպ Թադիադյանը, նկարագրելով հայտնի վաճառական Մարկոս Թառումյանցի մահը, նշում է, որ նա, զգալով, որ իր մահը մոտ է, հրամայում է մոտ բերել պարսք ունեցողների մուրհակները, նաև Եփրեմ կաթողիկոսին տված 4000 ոսկու մուրհակը, դրանք վերադարձնում է պարտապաններին, ապա հրամայում է իր մոտ բերված երկու պարկ ոսկին բաժանել աղքատներին:<sup>1</sup>

Դարի երկրորդ կեսին Շուշիում առաջընթաց էին ապրում շուկայական հարաբերությունները: Այստեղ վճռական տեղ ունեին մետաքսագործությունը, կտավագործությունը, գորգագործությունը, կաշեգործությունը և արհեստագործության այլ ճյուղեր: 1830-ական թվականներին քաղաքում կային 42 մետաքսագործարան: 1829 թ. այնտեղ արտադրվել է 7200 կտոր մետաքսե գործվածք: Գործում էին նաև 132 ոստաններ, որոնց վրա աշխատում էին 324 ջուլհակ և բանվոր: Քաղաքում կտավագործների թիվը հասնում էր 28-ի, որոնք բանեցնում էին 80 ոստան և տարեկան տալիս էին 8 հազար կտոր արտադրություն: Կաշեգործարանների թիվը հասնում էր 19-ի, որտեղ աշխատում էր 40 բանվոր և տարեկան մշակում էին մինչև 5 հազար կաշի:<sup>2</sup>

Շուշիի բնակչությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին բավականին նվազել է: 1830-ի կեսերին այն ուներ 5079 արական սեռի բնակիչ: Այդ ժամանակ ամրոցի 1098 ընտանիքից 762-ը հայկական էր: Քաղաքի բնակիչներից կտորեղեն էին վաճառում 94 հոգի, բանջարեղեն, ուտելիք, զանազան մանրութներ՝ 44, դեղեր և ներկեր՝ 30, բուրդ ծեծողներ՝ 6-ը, արծաթագործներ՝ 12-ը, դարբին՝ 25-ը, պղնձագործ՝ 6-ը, անագող՝ 3-ը, թամբագործ՝ 15-ը, բրդագործ՝ 24-ը, դերձակ՝ 30-ը, կոշկակար՝ 44-ը, ձեռագործով զբաղվողներ՝ 4-ը, հյուսն՝ 4-ը, համետագործ՝ 10-ը, թաղիագործ՝ 2-ը, դայթան պատրաստող՝ 2-ը և այլն: Այդ ժամանակ Շուշիի առևտրականների թիվը՝ հասնում էր 417-ի:<sup>3</sup> Ընդհանրապես՝ 19-րդ դարի 30-ական թվականներին Շուշիի առևտուրը, արհեստը և արդյունաբերությունը նպատակ ունեին բավարարելու տեղական պահանջները: Այստեղ արհեստավորը գործում էր պատվերով, իսկ առևտրականը գիտեր, թե որ

<sup>1</sup> Թադիադյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 159

<sup>2</sup> *Обозрение Российских владений, СПб, 1835, стр. 311-313*

<sup>3</sup> *Նույն տեղում*, էջ 308-309

ապրանքից ինչ քանակի պահանջ կար և նույնիսկ ուլքեր են պահանջողները:

19-րդ դարի 20-ական թվականներից, ինչպես նշել է Լեոն, Նոր Ղարաբաղ էր ստեղծվում: Քաղաքում զարգանում էր «ազդեցիկ, հրամայող դասակարգը–բուրժուազիան»:<sup>1</sup> Այստեղ ազնվականներից, հոգևորականներից և ոչ արտոնյալ դասակարգերից առաջանում էր հասարակական մի նոր շերտ, նոր դասակարգ: Դա պետական ծառայողներն էին, պաշտոնավարող չինովնիկները, որոնք ունեին սեփական շահեր և կապված էին վաճառական դասակարգին:<sup>2</sup> 1840–1870-ական թվականներին Շուշիում արմատավորվում են նաև հոգևորականները, հետզհետե ավելանում են բանվորների և արհեստավորների թիվը, բացվում են նոր արհեստանոցներ, արդյունաբերական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ, վեր են բարձրանում նոր կառույցներ, երևում են սալիատակած փողոցներ: Այստեղ գործում էին բազմաթիվ համքարություններ, որոնք ունեին իրենց կազմն ու կառուցվածքը: Այստեղ արհեստն անվանվում էր «ոսկե ապարանջան»՝ համոզված լինելով, որ «արհեստավորը ոչ մի ժամանակ քաղցած չի մնա»: «Նոր դար» թերթը նշել է, որ Շուշիում լավ արհեստավորը գնահատվում է, նա անգործ չի մնում, իսկ եթե պատվերը լավ չի կատարում, ապա նա տեղ չի ունենում:<sup>3</sup> Սակայն դարի երկրորդ կեսից սկսած շուկայական մրցության պայմաններում Շուշիի արհեստավորների մի մասը դուրս են մղվում:

19-րդ դարի կեսերից սկսած Շուշին արագորեն տարածվում էր: Շուշեցի արհեստավորների և ձեռնարկությունների արտադրանքը արտահանվում էր աշխարհի շատ շուկաներ, որ սպառվում էր հեշտությամբ, մանավանդ ոսկերչական գործերը և մետաքսը, իսկ գորգը՝ առավելապես: Այդ ժամանակներից սկսած Շուշիի կյանքն աշխուժանում էր և գրավիչ տեսք ընդունում: Ըստ «Կովկասյան տարեցույցի» տվյալների՝ 1855 թ. Շուշին ունեցել է չինովնիկներ՝ տղամարդ՝ 28, կին՝ 8, 45 հայ հոգևորական, 4173 տղամարդ, 3553 բնակչուհի: Դրանցից առևտրով էին զբաղվում 713 մարդ, արհեստավորներ էին 2031 հոգի. որից 1318-ը՝ կին: Տարեցույցը նաև հաղորդել է, որ քաղաքում ռուսներն ունեն 6 տուն, հայերը՝ 1715, շիա-թուրքերը՝ 1319:

<sup>1</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 73

<sup>2</sup> Նույն տեղում

<sup>3</sup> «Նոր դար», թ. 70, 04.05.1885

Քաղաքում կար քրիստոնեական 5 եկեղեցի, 2 մեջիդ, 16 ֆաբրիկա, մեկ վանք, 7 հրապարակ, 6 կամուրջ, 4 փողոց, 970 ջրհոր:<sup>1</sup>

Շուշին Անդրկովկասում մշակույթի կենտրոն էր: 1864թ. փետրվարի 17-ին շուշեցի Մարիամ Հախումյանցը Շուշիի կանանց անունից դիմում է բարձր Սրբազանությանը և իրավունք խնդրում Շուշիի օրիորդների համար բացել սուրբ Մարիամի անունով ուսումնարան և «առաջարկել Ղարաբաղու հոգևոր դպրոցի տեսչին ընդունել ուսումնարանի ուսումնական մասի կառավարությունը»:<sup>2</sup> 1859թ. Շուշիի համար կարևոր իրադարձություն էր նաև այն, որ այդ նույն թվականին ամբողջովին վերանորոգվեց Ղարաբաղի ազգային հոգևոր դպրոցը: 1860 թվականին Պետերբուրգից Շուշի է հրավիրվում Պետրոս Շանշյանը, ով հանձնառում է հոգևոր ուսումնարանի տեսչի պաշտոնը: Շանշյանը հոգևոր ուսումնարանին տալիս է նոր շունչ և հոգի, վերացնում է ֆիզիկական պատիժը և բոլոր այն արարքները, որոնք վարկաբեկում էին ուսուցչի հեղինակությունը:

Ինչպես Անդրկովկասի մյուս քաղաքները, այնպես էլ Շուշին ուներ իր եկամուտների աղբյուրը: Դրանք վարձակալությամբ տրված կառույցներն էին, աղբյուրները, անշարժ կայքից տոկոսային վճարները, արդյունաբերական ձեռնարկություններից, առևտրականներից, մաքսային եկամուտներից երկու տոկոսի չափով ստացվող օգուտը, ակցիզային վճարներից ստացվող 20 տոկոս վճարը, մուրհակներից ստացվող 20 տոկոս վճարը, տուգանքներից, աճուրդներից և համանման աղբյուրներից եկամուտները:<sup>3</sup> Քաղաքի եկամտի աճը հիմնականում կախված է լինում բնակչության թվից: Արդեն 1870թ. Շուշին ուներ 20297 բնակիչ: Եթե քաղաքը 1862 թ. ունեցել է 16433 ռ. մուտք և 11755 ռ. ելք, ապա 1872-ին ունեցել է 29972 ռ. մուտք և 29395 ռ. ելք:

Սկսած 19-րդ դարի 60-70-ական թվականներից՝ Շուշիի տնտեսության զարգացման հետ աշխուժանում էր նաև հասարակական կյանքը: Երվանդ Լալայանը նշել է, որ Շուշին, բաժանված էր հայ և թուրք թաղամասերի. դա խանգարում էր քաղաքի ընդհանուր կյանքին: Հայկական թաղի կենտրոնում էր գտնվում «Թոփխանա» կոչված հրապարակը, որը մոտավորապես

<sup>1</sup> *Кавказский календарь на 1856, Тифлис, 1855, стр. 360–361*

<sup>2</sup> «Մեղու Հայաստանի», թիվ, 19, 04.04.1864

<sup>3</sup> Դավիթ Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1801–1870 թթ.)*, հատոր I, Բարու, 1916, էջ 181–182

կազմում էր 250 քառակուսի մետր տարածություն: Դարի 80-ական թվականներին քաղաքն ուներ չորս եկեղեցի և մեկ կուսանոց-մենաստան: Հոյակապ էր մանավանդ Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, որի շինարարությունը շարունակվել է 20 տարի: Եկեղեցու երկարությունը կազմում է 35, լայնությունը՝ 23, իսկ բարձրությունը՝ մոտ 35 մետր: Այն կառուցվել է 1868–1887 թվականներին խաչաձև հատակագծով, բյուզանդական ոճով:<sup>1</sup>

1872թ. կոնսիստորիան տեղափոխվել է նորակառույց, եռահարկ շենք, որի երկու հարկը կառուցվել էր մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանի միջոցներով, իսկ երրորդ հարկը՝ 1865–1876 թթ. Արցախի թեմի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանի միջոցներով:<sup>2</sup>

Շուշիում դեռ վաղուց սուր էր ջրի հարցը: Քաղաքի բնակիչները հիմնականում օգտվում էին ջրհորներից և շատ թե քիչ նվազ աղբյուրներից: Ջրհորներից ջուր վերցնելու համար երբեմն ամբողջ գիշեր հերթ էին կանգնում կամ էլ գնում էին քաղաքից 6 կմ հեռավորության վրա գտնվող աղբյուրից ջուր բերում:

Շուշին, լինելով գավառական քաղաք, ուներ քաղաքագլուխ, դումա, հաշտարար դատարան, փոստ, հեռագրատուն: Այստեղ էր գտնվում նաև Ղարաբաղի հայոց կոնսիստորիան, որը բացվել է 1830 թվականին Բաղդասար մետրոպոլիտի օրոք: Քաղաքն ուներ տպարան: Երկրորդ՝ Ա. Մահտեսի Հակոբյանի տպարանը, կառուցվել է 1877 թվականին, որը մինչև 90-ական թվականների վերջը տպագրել է 93 անուն գիրք:<sup>3</sup>

Շուշիում վաղուց ի վեր գոյություն ուներ մի սովորույթ. հասարակության որոշումով քաղաքից արտաքսվում էին վտանգավոր և վատ վարք ունեցող մարդիկ: 1862 թ. Շուշիից մի նամակ է ուղարկվել Էջմիածին, որի հեղինակները մեղադրում էին ոմն Եպիսկոպոս Վարդանին և պահանջում նրան ետ կանչել Էջմիածին: Նա վիրավորել էր Համբարձում Հախումյանին և քաղաքի այլ անվանի ու պատվավոր մարդկանց: Ըստ էության՝ Վարդան Եպիսկոպոսը Շուշիի համար խիստ վտանգավոր անձնավորություն էր, զբաղվում էր կաշառակերությամբ, կեղծիքներ հորինելով, բամբասանքներ տարածելով և խաբեբայությամբ: Նա նույնիսկ հափշտակել էր կոնսիստո-

<sup>1</sup> Լալայան Ե., *Երկեր*, հատ 2, Երևան, 1988, էջ 16

<sup>2</sup> «Մշակ», թիվ 39, 05.10.1872

<sup>3</sup> Լալայան Ե., *Նշվ. աշխ.*, էջ 94

րիայի փողերը: «Ով որ նրա ձեռքն է ընկնում, քերթում է»,–ասված է նամակում:<sup>1</sup>

Քաղաքից վտանգավոր մարդկանց արտաքսումը հաճախակի դարձավ 70–80-ական թվականներին: Նման հարց քննարկելու համար քաղաքի բնակչությունից ընտրված ներկայացուցիչները հավաքվում էին ժողովի, որին ներկա էին լինում գավառապետը, այլ պաշտոնյաներ և քաղաքային պատգամավորը: Այս վերջինն ընտրվում էր քաղաքի բնակչության կողմից և պարտավոր էր պաշտպանել նրանց շահերը: Նման մի ժողով տեղի ունեցավ 1884 թ. դեկտեմբերի 16-ին, որն ընդունեց հասարակական վճիռ, այսինքն՝ արձանագրություն կազմվեց հինգ բողոքական ընտանիքների քաղաքից արտաքսելու մասին, որոնք իրենց բարքով ընդունելի չէին քաղաքի քրիստոնյա բնակիչների համար: Որոշման տակ ստորագրել էին 1571 քաղաքացի:<sup>2</sup> 1885 թ. ապրիլի 24-ին, ըստ ընդունված կարգի, քաղաքի հասարակական ժողովը ընտրում է երեք հոգու, որոնք պետք է քաղաքից վտարվողների վերաբերյալ կազմված արձանագրությունն ու ընդունած որոշումը հասարակության անունից հանձնեին քաղաքապետին:

Ժամանակի մամուլը հաճախ էր անդրադառնում Շուշիի ներքին կյանքին: 1883 թ. «Մշակում» տպագրված մի նամակում ասված է, որ քաղաքում ետ է մնում «ընկերական կյանքի գաղափարը»: Հեղինակը բողոքում է, որ այստեղ աղջիկներին կրթություն տալը համարվում է շռայլություն, քաղաքը չունի «հիվանդանոց, աղքատանոց, աշխատանոց»: Մակայն գովեստով է խոսում թեմի առաջնորդ Սարգիս Ջալալյանցի մասին, որը «ոչ միայն կենդանացրել էր քաղաքի արու մանկանց ուսումը, այլև իգական սեռի դաստիարակության համար կանգնեցրել է մի շքեղ շենք», որտեղ դասավանդելու համար ուսուցիչներ պետք է բերվեին Եվրոպայից:<sup>3</sup> Շուշիում երկրորդ օրիորդաց ուսումնարանը բացվել է 1876 թվականին, որն ուներ 60–70 սովորող:<sup>4</sup> Շուշեցի մեկ ուրիշ հեղինակ նույն թերթում բողոքում է, որ իրենց քաղաքում տարվա մեջ 2–3 անգամ հազիվ թատրոնի երես են տեսնում, քաղաքի երկու տպարաններում մկներն են խաղում: Քաղաքն ունի մի կուսանոց, 5 թե 6 եկեղեցի, մի սեմինարիա, երկու օրիորդաց և մի

<sup>1</sup> Մատենադարան, Արխիվ Ալեքսանդր Երիցյանի, թղթ. 150, վավ. 175

<sup>2</sup> Նույն տեղում, թղթ. 149, վավ. 159 և 160

<sup>3</sup> «Մշակ», թիվ 1, 14.01.1878:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 116, 28.07.1879

քաղաքային ուսումնարան, որտեղ մոտավորապես ուսանում են 700 աշակերտ-աշակերտուհի, մի ընդհանուր գրադարան, մի ակումբ, մի ուսումնական ընկերություն: Քաղաքի հրապարակը ակումբի տեղ է ծառայում: Քաղաքում կա մեկ հյուրանոց: Այստեղ ժողովրդի համար մտածողները միայն ուսուցիչներն են:<sup>1</sup> Իմիջիայլոց հեղինակը մոռացել է, որ Շուշիում առաջին հասարակական գրադարան-ընթերցարանը բացվել է 1859 թվականին, որը գործել է չորս-հինգ տարի և ունեցել է մեծ հեղինակություն:<sup>2</sup>

Շուշիում երիտասարդից բաղկացած մի խումբը հանգանակություն էր կատարում չքավորների օգտին: Երբ 1880 թվականին սովը լայն ծավալ ընդունեց, երիտասարդների այդ խմբի գործն ավելի մեծացավ: Այդ օրերին քաղաքի հարուստներից 16 հոգի 500-ական ռուբլի տրամադրեցին սովյալների համար հացահատիկ գնելու: Ժամանակի մամուլը հաղորդել է, որ թանկացումների դեմ անզիջում պայքարում են շուշեցի պարոններ Գրիգոր Հաղլաթյանցը, Մինաս Խանեյանցը և Սահակ Թադևոսյանցը:

Դարի 70–80 ական թվականներին պանդխտության մեկնողների թիվը տարեցտարի ավելանում էր: Այնուամենայնիվ՝ 1886 թ. Շուշին ունեցել է 5779 ծուխ՝ 26806 բնակչով, որից 15786-ը արական, 11020-ը՝ իգական:<sup>3</sup> Քաղաքի բնակչության 58,59 տոկոսը տղամարդիկ էին, 41,11-ը կանայք: 11 տարի հետո, 1897 թ. մարդահամարի տվյալներով Շուշին ունեցել է 25656 բնակիչ, որից 13283-ը՝ տղամարդ, 12374-ը՝ կին:<sup>4</sup> Ստացվում է, որ 11 տարում Շուշիի բնակչությունը պակասել է 1150-ով: Եթե 1885 թ. քաղաքի եկամուտը կազմել է 29512 ռ., ծախսը՝ 25316 ռ., ապա տասը տարի հետո՝ 1895-ին, եկամուտը հասել էր 39296 ռ. 87 կ., ծախսը՝ 33956 ռ. 90 կ., դրամագլուխը՝ 33887 ռ. 44 կ.:<sup>5</sup> 1896-ին քաղաքի եկամուտը կազմել է 32132, 1897-ին՝ 164538, իսկ 1898-ին՝ 61896 ռուբլի: Այդ նույն թվականներին քաղաքի 1000 բնակչին ընկնող գումարը համապատասխանաբար կազմել է 1252,

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 57, 08.04.1878

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 198, 14.11.1879

<sup>3</sup> *Этнографические карты губерний областей Закавказского края. Кавказ. Издание кавказского статистического комитета, Тифлис, 1886, стр. V*

<sup>4</sup> *Сборник статистических сведений Закавказского края, Тифлис, часть I, Тифлис, 1902, стр. 20-21*

<sup>5</sup> Լալալյան Ե., *Նշվ. աշխ.*, էջ 88

613 և 2412 ռուբլի:<sup>1</sup> Բերված տվյալներից երևում է, որ Շուշիի համար բարենպաստ տարի է հանդիսացել 1898 թվականը:

Շուշիի տարածքը նեղ է և մեծ քաղաք դառնալու համար հնարավորություն չի ունեցել: Ասենք նաև, որ հենց սկզբից քաղաքը նախագծով չի կառուցվել: Այն կառուցվել է արաբական ոճով, նեղ և ոչ ուղիղ փողոցներով: Շուշին ունեցել է խառն բնակչություն՝ հայեր, թուրքեր, քրդեր, պարսիկներ, ռուսներ և այլն: 1890-ական թվականների սկզբի մի տվյալի համաձայն՝ քաղաքի 32850 բնակչից 19501-ը եղել է հայ, 12083-ը՝ թուրք, մնացածը՝ այլազգիներ:<sup>2</sup> Քաղաքի արևելյան կողմում ապրում էին թուրքերը, արևմտյանում՝ հայերը: Քաղաքը բաժանված էր 35 թաղի, որոնցից 18-ը՝ հայկական, 17-ը՝ թուրքական:<sup>3</sup> Տվյալներ կան, որ դարի միայն վերջին տասնամյակում Շուշիից գաղթել են 6000-ից ավելի հայեր: Այդ ժամանակ Բաքվում բնակվող ավելի քան 15 հազար դարաբաղցիներից 10 հազարը շուշեցիներ էին:<sup>4</sup>

Շուշիում 1881-ին բացվել էր ռեալական ուսումնարան, ապա՝ գրադարան-ընթերցարան: Այդ առթիվ «Մշակը» գրել է, որ գրադարանի բացումը 16 հազար բնակչություն ունեցող քաղաքի համար հանդիսանում է գեղեցիկ շտեմարան է:<sup>5</sup>

«Մեղու Հայաստանի» թերթը գրել է, որ հայկական և թուրքական թաղամասերն իրարից շատ են տարբերվում: Հայոց թաղամասը թե՛ տների շինությամբ և թե՛ մաքրությամբ շատ բարձր էր թուրքական թաղամասից: Հայկական թաղամասի նոր փողոցները, հրապարակները և բնակչության ապրելապայմանները ավելի եվրոպական են, իսկ թրքական թաղամասինը՝ պարսկական: Թուրքերի կեղտոտության պատճառով, շարունակում է թերթը, քաղաքը չի հաշվվում մաքուր քաղաքների շարքում: Թուրքերի թաղամասի բնակարանները կեղտոտ են, մութ և խոնավ: Այնտեղ մեկ փոքրիկ սենյակում ապրում են 10-12 հոգի:<sup>6</sup> Վեց տարի հետո այդ նույն թերթը, կրկին անդրադառնալով թուրքական թաղին, գրել է, թե թուրքերի

<sup>1</sup> Сборник статистических сведений ..., стр. 184–185

<sup>2</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ֆ. 1, թղթ. 240, վավ. 191: Մեր կարծիքով այդ թվերը չափազանցեցված են

<sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52

<sup>4</sup> «Նոր դար», թիվ 166, 27.09.1897

<sup>5</sup> «Մշակ», թիվ 45, 15.03.1883

<sup>6</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 27, 12.04.1880



«տեղաշարերի վերայ երկու տարույ կեղտ կարելի է նշմարել... նրանք միջատներից ազատվելու համար շապիկները թափ են տալիս վատված թոնիրում. ինչ գարշահոտութիւններ ասէք, որ նեղացկամ չլինեին անցնողին... աղբ, կերակրի մնացորդ...»:<sup>1</sup> Այս ամենը, անշուշտ, ազդում էր քաղաքի հեղինակության վրա:

Քաղաքի կյանքը փոքր-ինչ փոխելու համար Շուշիի գավառապետ Դուբրովսկին հրամայում է կիրակի օրերը խանութները չբացել և միայն թարմ մթերքներ վաճառել:<sup>2</sup> Շուշին 90-ական թվականներին ուներ 600-ից ավելին խանութ, որոնք ամեն շաբաթ աղքատներին բաժանում էին 20-ական կոպեկ: Ստացվում է, որ բոլոր խանութները տարեկան աղքատներին բաժանում էին մինչև 6000 ռուբլի: Քաղաքի բնակիչները կողմնակից էին այդ գումարը ժողովել և ավելի խելացի ծախսել:<sup>3</sup>

Շուշիում գործում էր հասարակության կողմից ընտրված մի հանձնաժողով՝ Իվան Քալանթարյանի նախագահությամբ, որը հասարակական հիմունքներով պետք է զբաղվեր խմելու ջրի, քաղաքի մաքրության, փողոցները սալահատակելու, վտանգավոր ձեռնարկությունները քաղաքից դուրս բերելու, հիվանդանոցը և փողոցները լուսավորելու, թոնրատների բարեկարգման, գյուղերից եկողների անասունները տեղավորելու, հրշեջ խումբ ստեղծելու, ռեալական ուսումնարանի համար շենք կառուցելու, հասարակական այգիները կարգի բերելու և այլ հարցերով:<sup>4</sup>

Շուշիում խմելու ջրի խնդիրը հրատապ էր: Դարի երկրորդ կեսին արդյունաբերության զարգացման և բնակչության թվի ավելացման պայմաններում ջրի հարցը քաղաքի համար դառնում էր ավելի կենսական: Եղած աղբյուրները գտնվում էին ներքին մասում, որտեղ բնակվում էին թուրքերը: Հայկական թաղամասում աղբյուրներ չկային, շատ թե քիչ օգտվում էին ջրհորներից: Քաղաք ջուր բերելու համար պահանջվում էր 25–30 հազար ռուբլու ծախս: Վաճառական Դավիթ Ադամյանը խոստացել էր այդ ծախսը հոգալ: Սակայն դրան խանգարեց նրա մահը: Դեռևս 1883 թ. քաղաքի հայերը որոշել էին մի քանի վերստ հեռավորության վրա գտնվող աղբյուրներից մեկի ջուրը բերել քաղաք: Դրա համար սկսվել էր հանգա-

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 84, 04.06.1886

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 3, 09.01.1890

<sup>3</sup> «Նոր դար», թիվ 176, 07.11.1892:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 176, 07.11.1892

նակություն: Հավաքված գումարը լրացվել էր նվիրատվություններով: Քաղաքի բնակիչները կողմնակից էին, որ բերվող ջուրը լինի քաղաքի իշխանությունների վերահսկողության տակ:<sup>1</sup> Ահա այդ ժամանակ է, որ հայտնի բարերար Թադևոս Թամիրյանը որոշում է իր միջոցներով 15 վերստ հեռավորության վրա գտնվող աղբյուրի ջուրը բերել քաղաք, որն իրագործվեց 1893 թվականին: Ջուրը քաղաք հասնելու օրը թուրքերը մզկիթներում հոգեհանգիստ են կազմակերպել: Իսկ երբ 1899 թ. Թամիրյանը մահանում է, թաղման պատարագին, որը տեղի է ունեցել Ղազանչեցոց եկեղեցում, ներկա էին քաղաքի հայ և թուրք հասարակության ներկայացուցիչները: Շուշիի հասարակությունը իր վերջին հրաժեշտը տալով նրան, ասել է՝ «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:<sup>2</sup>

Շուշի քաղաքը երկար ժամանակ հարմարավետ բաղնիք չի ունեցել: Եվ ահա 1900 թվականին սկսեց գործել ժամանակի պահանջներին համապատասխան բաղնիք, որը կառուցվել է եվրոպական ձևով շնորհիվ պարոն Մ. Ա. Նանյանցի: «Մշակը» գրել է, որ դա ուրախալի երևույթ էր Շուշիի բնակչության համար:<sup>3</sup>

Սկսած 1860 թվականից՝ քաղաքի հասարակական կյանքում գոյություն ուներ մի երևույթ. քաղաքի հասարակական ժողովում ընտրվում էր պատգամավոր (դեպուտատ): Այն ընտրվում էր ունևոր դասից և առաջին հերթին կատարում էր աղաների կամքը: 1887 թվականին քաղաքի բնակչությունը որոշեց այս անգամ պատգամավոր ընտրել ոչ թե ունևորներից, այլ որևէ մտավորականի, որը պետք է պաշտպաներ հասարակության շահերը: Հասարակությունից առաջադրված ընտրողներին հանձնարարվում է պաշտպանել Համբարձում Առաքելյանի թեկնածությունը: Սակայն բնակչության առաջարկությունը չի պաշտպանվում քաղաքապետի կողմից: Նրա ճնշմամբ պատգամավոր է ընտրվում Գրիգոր բեկ Դանիելբեկյանը: Չնայած Համբարձում Առաքելյանը չէր ընտրվել պատգամավոր, սակայն նա համարվում էր հասարակության թեկնածու: Ըստ կարգի՝ գավառապետը պետք է պատգամավոր հաստատեր այդ երկուսից մեկին:<sup>4</sup> Պատգամավորը աշխատում էր հասարակական հիմունքներով և բավա-

<sup>1</sup> «Մշակ», թիվ 37, 05.04.1890

<sup>2</sup> «Նոր դար», թիվ 224, 18.12.1899

<sup>3</sup> «Մշակ», թիվ 172, 14.03.1900

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 7, 22.01.1887

կանին անելիքներ ուներ քաղաքի կյանքում: Նա լսում էր բնակչության բողոքները, օժանդակում հիմնարկ-ձեռնարկություններին, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և կատարում նման զանազան աշխատանքներ: 1891թ. պատգամավոր է ընտրվում Ջ. Իշխանյանը: Այս անգամ որոշվեց պատգամավորին վարձատրել տարեկան 1000 ռուբլի քաղաքի գանձարանից և նրա նկատմամբ մեծացնել պահանջները:<sup>1</sup> Պատգամավորի հաջորդ ընտրությունը տեղի ունեցավ 1894 թվականին, աշխատավարձի չափը դարձավ 2000 ռ.: Ընտրվեցին երկու պատգամավոր՝ Ջ. Իշխանյանը և Բ. Թյունիբեկյանը: Իշխանյանը համաձայնում է աշխատել ձրի, իսկ Թյունիբեկյանը՝ վճարով: Այդ ընտրությունը պատգամավորական վերջին ընտրությունն էր, որովհետև քաղաքին ինքնավարություն տրվելուց հետո ավարտվում է պատգամավորի գործունեությունը:

Շուշիի պատմության մեջ կարևոր երևույթ էր քաղաքի ինքնավարության հարցը: Շուշին, Անդրկովկասում բնակչության թվի տեսակետից լինելով երրորդ քաղաքը, վաղուց պետք էր ինքնավարության իրավունք ունենար: Սակայն ցարական միապետության կամակոր քաղաքականության հետևանքով տարիներ շարունակ այդ հարցը չէր լուծվում, այդ այն դեպքում, երբ Շուշիից շատ քիչ բնակչություն ունեցող մի շարք քաղաքներ վաղուց ինքնավարություն էին ստացել: Օրինակ՝ Ախալքալաքը Շուշիի բնակչության կեսի չափ բնակչություն չունեի, սակայն վաղուց ինքնավար էր:

Քաղաքի բնակչությունն արթնանում էր խոր քնից և փորձում վեր ելնել՝ իր իրավունքները պաշտպանելու: Օրինակ՝ 1887թ. պատգամավորի վերընտրության ժամանակ նշմարվեց բնակչության հուզում՝ իր իրավունքները պաշտպանելու համար: Քաղաքին ինքնավարություն տալու վերաբերյալ ժողովրդական պահանջը ասես մոտենում էր հանգուցալուծմանը: Ժամանակի մամուլը, հրապարակելով այդ կապակցությամբ բնակիչների գրած նամակ-բողոքները, բազմիցս շեշտել է, որ քաղաքին ինքնավարություն տալու հարցը կարևորներից կարևորն է, որովհետև ինքնավարությունը քաղաքի կյանքում կհանդիսանա հեղաշրջում, արմատական փոփոխություն քաղաքի կյանքի բոլոր բնագավառներում՝ դպրոց, վարկ, առողջապահություն, քաղաքաշինություն, կենցաղ, կարգ ու կանոնի

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 5, 15.01.1891

հսկում, պայքար գողերի և ավագակների դեմ, ազգային հարաբերություններ և հազար ու մի հարցեր։<sup>1</sup>

Ի վերջո՝ 1892թ. հուլիսի 11-ին հաստատված կանոնադրությամբ Շուշի և Գանձակ քաղաքներին տրվում է ինքնավարության իրավունք։ Սակայն այն ձգձգվեց մինչև 1896 թվականը։ Ըստ կանոնադրության՝ քաղաքային դուման պետք է բաղկացած լինի 40 պատգամավորից, 8 թեկնածուից, քաղաքագլխից և տեղակալից։ Թուրքերը, ըստ կանոնադրության, կարող էին ընտրել 8 պատգամավոր, սակայն նրանք պահանջում էին պատգամավորական տեղերի կեսը, որը հակասում էր կանոնադրությանը։<sup>2</sup> Այդ ժամանակ քաղաքի 35552 մարդուց 20673-ը հայ էին, 12879-ը՝ թուրք։ Հայերը պահանջում էին պատգամավորներ ընտրել այդ թվերի համեմատ։ Բացի այդ, քաղաքի պետական և քաղաքային բոլոր հարկերի 2/3-ը վճարում էին հայերը։ Ըստ էության՝ թուրք վաճառականների պահանջը միանգամայն անարդարացի էր։ Դա նկատի ուներ մամուլը, երբ գրեց. «Ամօթ, հազար ամօթ թուրք ամբոխին, որ քաղաքային ինքնավարություն ստանալու րօպեին էլ այդքան ֆանատիկոս են և խաւար»։<sup>3</sup> Ընտրությունները նշանակված էր 1896 թ. մարտի 10-ին։ Մինչ ընտրությունների օրը հայ և թուրք կողմերի միջև տեղի ունեցած մի քանի հանդիպումները դրական հետևանք չունեցան. թուրքերը չէին հրաժարվում իրենց պահանջից։ Առանց թուրքերի կամքը հարցնելու՝ ի վերջո որոշվեց պատգամավորների 1/5 մասն ընտրել մահմեդականներ։ Քվեարկությանը մասնակցել են 204 քրիստոնյա և 130 մահմեդական ներկայացուցիչներ։ Պատգամավորների 87 թեկնածուից ընտրվում են 39-ը՝ 34 քրիստոնյա և 5 մահմեդական։ Այդ նշանակում է, որ լրացուցիչ ընտրություններ պետք է տեղի ունենար մեկ պատգամավոր և 8 թեկնածու ընտրելու համար։ Մահմեդականները դժգոհ էին ընտրությունների արդյունքից։ Շուշիի գավառապետ իշխան Ափխաձեն պահանջում է հայ պատգամավորներից մի քանիսը հրաժարվեն և իրենց տեղերը զիջեն մահմեդականներին։ Դա էլ պատճառ հանդիսացավ, որ 1897թ. սեպտեմբերին Շուշի ժամանեց նահանգապետը, պաշտոնից

---

<sup>1</sup> «Кавказ», N 115, 02.05.1893

<sup>2</sup> Նույն տեղում, N 1, 01.01.1896

<sup>3</sup> «Մշակ», թիվ 26, 02.03.1896

ագատեց գավառապետին, առաջին և երկրորդ մասերի ոստիկանապետերին և այլ պաշտոնյաների:<sup>1</sup>

Շուշիի առաջին քաղաքագլուխ է ընտրվում Իվան Քալանթարյանը, օգնական՝ Ջավադ բեկ Իշխանյանը: Իվան Քալանթարյանը վեց ամիս անց հրաժարվում է պաշտոնից: Նոր քաղաքագլուխ է ընտրվում պաշտոնաթող զինվորական Կ. Դանիելյանցը: Նա եռանդով մղվում է աշխատանքի, չնայած քաղաքի ֆինանսական միջոցները խիստ սուղ էին, այնուամենայնիվ 1500 ռ. է հատկացնում փողոցները սալահատակելու համար, զբաղվում է Թամիլյանի բերած ջրի բաշխման, քաղաքի շուկայի և դեղատան հարցերով: Նախաձեռնում է հայկական թաղամասում բաղնիք կառուցելու գործը: Ամենակարևորը՝ նույն թվականի օգոստոսին Շուշի պետք է ժամաներ Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը: Կազմակերպում է նրան պատշաճ մակարդակով ընդունելու գործը: Հայոց կաթողիկոսը ավելի քան տասը օր լինելով Շուշիում, Ամարասում, Գանձասարում և այլուր, վայելում է արցախահայության ջերմ սերն ու հարգանքը: Նա Արցախից հեռանում է խորին գոհունակությամբ:

Այսպիսով, ինչպես երևում է շարադրվածից, Շուշիի կյանքը 19-րդ դարում եղել է եռուն, հետաքրքիր և դրական երանգներով շաղախված:

*«Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Ստեփանակերտ, 2013, էջ 4-15*

---

<sup>1</sup> «Մուրճ», 1896, թիվ 2, էջ 331

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԵՎ  
ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ  
ԿՆՔՈՒՄԻՑ ՀԵՏՈ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ,  
ՊԱՐՄԿԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹ,  
ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐ

19-րդ դարի սկիզբը Ղարաբաղի քաղաքական կյանքում նշանավորվեց արմատական փոփոխություններով: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Ղարաբաղի քաղաքական պատմության մեջ տեղի է ունենում աննախադեպ խոշոր իրադարձություն. 1805 թ. մայիսի 14-ին Քյուրակչայ (Կուրակ) գետի ափին կնքված պայմանագրով Ղարաբաղը միացվում է Ռուսաստանին: Ղարաբաղի Իբրահիմ խանը ստորագրված դաշնագրով հրաժարվում է պարսկական տիրապետությունից և ընդունում Ռուսաստանի մշտնջենական հովանավորությունը<sup>1</sup>: Պարսկաստանը չի ճանաչում Քյուրակչայի դաշնագիրը, և Ռուսաստանի դեմ պայքարը Ղարաբաղի ու անդրկովկասյան տարածքների համար շարունակվում է: Ղարաբաղի տարածքը թատերաբեմ էր ռազմական գործողությունների համար: Ղարաբաղի մելիքներից շատերն իրենց գորաջոկատներով հանդես էին գալիս ռուսական զորքերի կազմում: Պարսկական զորքերի դեմ մղված մարտերում աչքի են ընկնում Վարանդայի տեր Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի, Գյուլիստանի տեր Մելիք-Աբովի որդու՝ Ռոստոմբեկ Մելիք-Բեգլարյանի և Գյուլաթաղի Մելիք-Բովշան Մելիք-Ալլահվերդյանի հեծելախմբերը<sup>2</sup>: 1804 թ. սկսած ռուս-պարսկական պատերազմը ավարտվում է 1813թ. հոկտեմբերի 12-ին՝ Ղարաբաղի Գյուլիստան բեր-

<sup>1</sup> Լեոն, *Երկերի ժողովածու*, հ. 4, Եր., 1984, էջ 248-251, Сейранян П., *Карабах и Россия: страницы истории*, Москва, 1997, стр. 104, Утверждение русского владычества на Кавказе, т. I, под ред. ген.-май. В. Потто, Тифлис, 1901, стр. 192

<sup>2</sup> Մաղալյան Ա., *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.*, Եր., 2007, էջ 51

դավանում կնքված պայմանագրով<sup>1</sup>: Այն ստորագրում են Ռուսաստանի լիազոր Ռտիշչևը և Պարսկաստանի ներկայացուցիչ Միրզա Աբդուլ Հասան խանը: Պայմանագրով Պարսկաստանը ճանաչում է Դադստանի և Արևելյան Վրաստանի, ինչպես նաև Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուրբայի, Գանձակի, Բաքվի, Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին<sup>2</sup>:

Գյուլիստանի պայմանագրի դրական հետևանքներից էր հայրենադարձությունը. քաղաքական անկայուն իրավիճակը և պատերազմն իրենց սև գործն արել էին՝ մասնավորապես Ղարաբաղի բնակչության գերեվարության և արտագաղթի առումով: Այս մասին հանգամանալից տեղեկություններ է հաղորդում Կովկասյան հնագրական հանձնաժողովի հրապարակած՝ «Ակտերի» էջերում տեղ գտած Ա. Երմոլովի 1817 թվականի թվագրությամբ զեկուցագիրն ուղղված Ալեքսանդր 1-ինին: Ջեկուցագրում նշվում է. «Ղարաբաղը ռուսական պետության կազմի մեջ մտնելու պահին ուներ ավելի քան 10 հազար ընտանիք, 1808թ.՝ 7474 ընտանիք: Այս թվում թշնամու կողմից տարված և արտասահման փախած. այսպես՝ 1806 թ. պարսիկների կողմից գերվել է 367 ընտանիք, իսկ փախել՝ 84-ը: 1809 թ. գերի է տարվել 323 ընտանիք, փախել՝ 412-ը: 1810 թ. տարվել է 276, փախել՝ 248 ընտանիք, 1811 թ. Տարվել է 274, փախել՝ 707 ընտանիք: 1812 թ. տարվել է 977, փախել՝ 1177 ընտանիք: Գերվածներն ու փախածները ընդամենը 4845 ընտանիք են: Հետևաբար՝ Ղարաբաղում պետք է մնացած լինեին 5000 ընտանիք, իսկ գնդապետ Ասսերի հաղորդմամբ՝ 3080 ընտանիք: Դրանից բացի, Շաքիի խանության տիրություններում կար մոտ 1000 ընտանիք»<sup>3</sup>:

Արտագաղթին զուգահեռ՝ ծայր էր առել մեկ այլ գործընթաց. ցարական կառավարությունը, տարբեր միջոցներով իր կողմը գրավելով քոչվոր անասնապահների որոշ ընտանիքների, նրանց լրտեսական նպատակներով օգտագործելու համար տեղավորում էր կարևորագույն ռազմական կետերում: Վերը նշվածի իսկությունը փաստում է գեներալ Ռտիշչևի հանձնարարականը Գանձակի պարետին. ռուսական սահմանները լավա-

<sup>1</sup> Բալայան Վ., *Արցախի պատմություն*, Եր., 2002, էջ 204, Ազատյան Հ., *Բախտորոշ պայմանագրեր*, Եր., 2002, էջ 27-31

<sup>2</sup> Վալերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), Եր., 2000, էջ 34-35

<sup>3</sup> АКАК, т. V, ч. II, Тифлис, 1873, стр. 579

գույնս պաշտպանելու նպատակով նա կարգադրում է, որ այրում անաս-  
նապահները, որոնք ամառն անց էին կացնում Խաչբուլաղի լեռներում,  
ռուսներին տեղյակ պահեն այդ շրջաններում թշնամու տեղաշարժերի  
մասին: Այրումների այդ պահակակետերից հետագայում առաջացան  
Հյուսիսային Արցախի սահմանային Այրում, Բաղշլաղ, գյուղերը: Այդ նույն  
ճանապարհով նախկինում առաջացել էին Ջեյվա<sup>1</sup>, Մոլլավալաթի (հետա-  
գայում՝ Շեֆեթ), Գյուրգալար, Թողան բնակավայրերը, որոնք, հետագայում  
բազմամարդ դառնալով, կատարյալ չարիք դարձան Ղարաբաղի բնիկ  
տերերի գլխին: Նրանց անարգել բնակեցմանը նպաստում էր նաև այն, որ  
Ղարաբաղի մելիքները պատերազմական դրության պատճառով կարճ  
ժամանակով թողել էին հայրենի տիրույթները և հեռացել Վրաստան:  
Վերադառնալուց հետո նրանք փորձում էին իրենց հողերից վտարել  
եկվորներին, սակայն դա միշտ չէր հաջողվում: Հեշտությամբ չէր հաջող-  
վում նաև հայ մելիքների վերադարձը Ղարաբաղ: Աղբյուրների վկայու-  
թյամբ մելիքները բազմիցս դիմել են ռուսական իշխանություններին՝  
Ղարաբաղ վերադառնալու խնդրանքով:

Կովկասի կառավարչապետ՝ գեներալ Տորմասովի՝ գնդապետ Ախվեր-  
դովին ուղղված մի զեկուցագրում վերջինիս կարգադրվում էր թույլատրել  
Մելիք-Բեգլարյանների վերադարձը Ղարաբաղ: Ղարաբաղի մելիքներից  
Մելիք-Բեգլարյանների տոհմն առաջինն էր, որ թողեց Վրաստանը և  
սկսած 1812 թվականից, վերստին հաստատվեց իր հայրենական տիրույթ-  
ներում՝ Գյուլիստանի գավառում: Գավառը բաժանվեց Մելիք-Աբովի և  
Մելիք-Ֆրիդոնի ժառանգների միջև: Նրանց տոհմերը, հետևելով ռուսական  
սովորույթին, սկսեցին կոչվել պապերի անունով. Մելիք-Հովսեփի թոռնե-  
րը՝ Մելիք-Հովսեփյաններ, իսկ Մելիք-Բեգլարի թոռները՝ Մելիք-Բեգլար-  
յաններ<sup>2</sup>:

19-րդ դարի 10-ական թթ. Ղարաբաղում հաստատված իրավիճակի մա-  
սին «Կռունկ հայոց աշխարհի» թերթը գրում է. «Բացի բուն Հայաստանից  
Հայք գտանում են այժմ բաւական շատ թուով եւ Ղարաբաղի գավառում:  
Հովիտներից նոքա փոքր առ փոքր մղուեցան լեռներում. այնտեղ նոքա  
կառավարում էին 5 ժառանգական մելիքների ձեռքով, որք պարսկաց

<sup>1</sup> АКАК, т. V, в. II, стр. 542

<sup>2</sup> Մաղալյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 99-100



իշխանութեան տակ էին, բայց թուրքաց իշխաններու զօրութիւնը եւ գերագանցութիւնը Ղարաբաղում՝ արտաքսեցին նոցա այնտեղից տասն եւ ութերորդ դարում. իսկ երբոր Ռուսաստանը տիրեց Ղարաբաղին, նոքա կրկին վերադարձան: Ներկայ ժամանակում կան միայն երկու տունք մելիքաց՝ Բեյլարեանք և Շահնազարեանք»<sup>1</sup>: Մելիք-Բեգլարյանները մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը շարունակում են իշխել Գյուլիստան գավառի 15 գյուղերի վրա, իսկ 3 գյուղերում իշխում էին Մելիք-Հովսեփյանները<sup>2</sup>:

Հայրենադարձությանը զուգընթաց՝ վերակենդանանում էին նաև ամայացած բնակավայրերը: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ավերվել և ամայացել էր Ջրաբերդ գավառի Կուսապատ գյուղը: 1812-1814 թթ. Վանի Աթաբեյանն իր գերդաստանով տեղափոխվում է հիշյալ գյուղը, և կարճ ժամանակում գյուղի բնակչության թիվը հասնում է 150 ծխի<sup>3</sup>: Ոգևորիչ արդյունքից խրախուսվելով՝ Վանին թողնում է գյուղը և նույն եղանակով հիմնադրում ու շենացնում Հոռաթաղ, Մարտակերտ, Մեծ շեն, Մոխրաթաղ, Կարմիրավան և Ծաղկաշեն գյուղերը<sup>4</sup>:

Ռուս-պարսկական պատերազմի ավարտին՝ 1812թ., Վրաստանից Ղարաբաղ է վերադառնում նաև արցախահայոց հոգևոր հովվապետը՝ Գանձասարի Սարգիս Հասան-Ջալալյան կաթողիկոսը: Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը՝ 1227 հ. թ. չավալ ամսի (1812 թ. 10 հոկտեմբեր-6 նոյեմբեր) հրովարտակով ճանաչում է Գանձասարի կաթողիկոսի իրավունքները<sup>5</sup>:

Պայմանագրի կնքմանը հաջորդած երեք տարիներին Ղարաբաղ վերադարձած ընտանիքների թվի մասին հայտնի է դառնում Ա. Երմուլովի՝ Ալեքսանդր 1-ինին ներկայացրած՝ 1817թ. մարտի 4 թվագրված մի զեկուցագրից: Ջեկուցագրում ասված էր, որ Գյուլիստանի պայմանագրի կնքու-

<sup>1</sup> Բաստամեանց Ե., Բարոն Օ., *Հակստհաուզենի ճանապարհորդութենից մի գլուխ*, «Կռունկ հայոց աշխարհի», թիւ Բ, փետրվար, 1862, էջ 107, տե՛ս նաև Հակստհաուզեն Օգոստոս, ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու, այն է ի Հայս եւ ի Վիրս, թարգմ. Արիստակես վարդապետ Սեդրակեան Խալֆալուեցոյ, Վաղարշապատ, 1872, էջ 211

<sup>2</sup> Մաղալյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 100

<sup>3</sup> Израелов Г., *Село Касапет, Елисаветпольской губернии, Джеванширского уезда, Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, (այսուհետև՝ СМОМПК), вып. 13, Тифлис, 1892, стр. 44-45

<sup>4</sup> Մաղալյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 114, Առաքելյան Գ., *Գանձակ-Ելիզավետպոլի (մարզ, նահանգ) բնակչությունը XIX դարում*, Երևան, 2003, էջ 34

<sup>5</sup> Մկրտումյան Լ., *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ.*, Երևան, 2006, էջ 194: 1815թ. Ներսես Աշտարակեցու կողմից Սարգիս կաթողիկոսը ճանաչվեց որպես արքեպիսկոպոս կամ միտրոպոլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի: Այս մասին տե՛ս Մաղալյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 142

մից ի վեր երեք տարվա ընթացքում Պարսկաստանից փախչելով վերադարձել են մոտ 4 հազար ընտանիքներ, որոնք բնակվել են իրենց նախկին կացարաններում: Նշվում էր նաև, որ. «... Ղարաբաղն այժմ արդեն ունի 7872 ընտանիք, բայց նախկին բնակչության թվաքանակի համեմատությամբ պակաս է 4 հազարով»: Հատկանշական է, որ սկզբնական շրջանում հայրենադարձությունը կամավոր բնույթ էր կրում: Դրությունը փոխվում է հետագայում, երբ 1817թ. Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի խանությունների ռազմական հրամանատար է նշանակվում Վ. Մադաթովը<sup>1</sup>: Վերջինս, ելնելով ցարական կառավարության և իր շահերից, ձեռնամուխ է լինում բռնի հայրենադարձություն իրականացնելուն: Նա ձգտում է Ղարաբաղ վերադարձնել բոլոր այն ընտանիքները, որոնք Վարանդայից Շաքի էին գաղթել: Արդեն 1817թ. սեպտեմբերի 5-ին Մադաթովը Ա. Կուտուզովին<sup>2</sup> ուղղված իր զեկուցագրում նշում է, որ Վարանդա է վերադարձել 187 ընտանիք<sup>3</sup>: Այս ճանապարհին Վ. Մադաթովը չէր խորշել անգամ մահմեդականների՝ Ղարաբաղ տեղափոխման գործից՝ արդյունքում իր հպատակների թիվն ավելացնելով ղլիչցիների, կարաղեմուրչիցիների հաշվին<sup>4</sup>:

Հատկանշական է, որ, ի հակակշիռ հայ բնակչության վերադարձի, Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը իր դիրքերի անսասանությունն ամրապնդելու համար հոգում էր նաև քոչվոր մահմեդական ցեղերի վերադարձի մասին: 1821թ. Հոկտեմբերի 7-ին նա դիմում է Ի. Վելյամինովին Ղարաբաղից հեռացած և Երևանի խանությունում բնակություն հաստատած քոչվոր 200 ընտանիք քոլանի ցեղի քրդերին Ղարաբաղ տեղափոխելու մասին<sup>5</sup>:

Հայրենադարձության և սեփական հայրենիքը շենացնելու ցանկության մի հետաքրքիր փաստ է վավերագրված Մատենադարանի արխիվային նյութերում՝ թվագրված 1830թ., ապրիլի 16: Ըստ վավերագրի՝ հնդկահայ

<sup>1</sup> Մատենադարան, Այ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 158. Аветисян Г., *Генералы-армяне Российской империи*, Ер., 2007, стр. 121, Вирабян А., *Знаменитые арцахцы*, кн. первая, Ер., 1992, стр. 13

<sup>2</sup> Չեն-մայր Ալեքսանդր Կուտուզովը փոխարինում էր Ալեքսեյ Երմոլովին՝ վերջինիս Պարսկաստանում գտնվելու արթիվ

<sup>3</sup> *Присоединение Восточной Армении к России*, т. II, Ер., 1978, стр. 45, АКАК, т. IV, ч. I, Тифлис, 1874, док. 1081, стр. 726

<sup>4</sup> Хан-Агов А., *Экономический быт государственных крестьян Джеванширского уезда, Елисаветпольской губернии*, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края *այսուհետ*՝ *МИЭБГКЗК*, т. VI, ч. II, Тифлис, 1887, стр. 338-339

<sup>5</sup> *Присоединение Восточной Армении к России*, т. II, с. 95-96

մեծահարուստ Հովսեփ Ամիրբեկյանը պատրաստակամություն է հայտնում իր ծննդավայր Արցախն ու Փայտակարանը գնելու հայ ժողովրդի համար. «Նաև իմ միտքնայ իմ հայրենի աշխարհն, որ է Արցախ և Փայտակարան աշխարհն, թե հնարե փողով գնել կամ հարկատուութենէ ազատել, ինչ քանակութիւն լինի պատրաստ եմ հատուցանել, եթե ըստ իմ ցանկութեան կըզտանիմ՝ այսինքն բոլորովին իմ հրամանի ներքոյ լինի...»: Ամիրբեկյանը ավելացնում է նաև, որ ինքն իր ընտանիքով բնակություն կհաստատի այստեղ՝ հրավիրելով նաև Հնդկաստանի բոլոր հայազգիներին<sup>1</sup>: Ցավոք, Ամիրբեկյանի սրտաբուխ ցանկությունը չի իրագործվում:

Այսպիսով՝ Գյուլիստանի պայմանագրի կնքումից շուրջ մեկ տասնյակ անց Ղարաբաղի հայ բնակչության դանդաղ հայրենադարձության և բնականոն աճի արդյունքում, 1823թ.<sup>2</sup> ցարական կառավարության ցուցակագրությամբ<sup>3</sup> Ղարաբաղի լեռնային հատվածում բնակչության թիվը կազմում էր 36,5 հազ. մարդ, որից հայերը կազմում էին 30,8 հազ. մարդ (84,6%), թաթարները՝ 5,4 հազ. (14,7%), քրդերը՝ 0,3 հազ. (0,7%)<sup>4</sup>: Ընդհանուր առմամբ, երկրամասի լեռնային և նախալեռնային շրջաններում հայ բնակչությունը միշտ էլ գերակշռել է: Բնակչության այսպիսի տեղաբաշխվածության առանձնահատկություններին ուշադրություն են դարձրել 19-րդ դարի մի շարք ռուս հեղինակներ: Այդ հեղինակներից Ե. Նաումենկոն գրում է. «Եթե մենք գծով առանձնացնենք Հայկական Գանձակի լեռնային համակարգը մերձկուրյան դաշտավայրից, ապա այդ զիծը կառանձնացնեն հայերին ու թաթարներին: Վերջիններս զբաղեցնում են մերձկուրյան դաշտավայրը, իսկ հայերը բնակեցնում էին ողջ նախալեռնային հատվածը մոտ 30 վերստ լայնությամբ»<sup>5</sup>:

1823թ. Ղարաբաղի գավառի կամերալ ցուցակագրության փաստը հատուկ խնամքով կեղծվում է աղբբեջանական պատմագիտության կողմից: Մասնավորապես՝ Ջ. Հաջինան կասկածի տակ է դնում 1823թ. Պ. Երմոլովի և Պ. Մոզիլսկու կողմից Ղարաբաղում անցկացված բնակչության

<sup>1</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 62, վավ. 75

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 163

<sup>3</sup> 1823 թ. մայիսի 2-ին Ա. Երմոլովին ներկայացվեց Պ. Մոզիլսկու և Պ. Երմոլովի զեկույցը բնակչության թվի, հարկերի մասին

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 163

<sup>5</sup> Науменко Е., *Елисаветпольская губерния, Военно-статистическое описание, Тифлис, 1903, часть 1, стр. 280*

հաշվառման արդյունքները՝ կարծիք հայտնելով, որ քանի որ ցուցակագրությունն իրականացվել է բանավոր վկայությունների հիմքի վրա, հետևաբար հիմնականում ցուցումներ տվող, այսպես կոչված «աղբբեջանցի» բեկերն ու նայիբները հարկերից խուսափելու նպատակով թաքցրել են իրենց հավատակիցների անունները, այլապես, Հաջինայի կարծիքով, «աղբբեջանցի» բնակչության թիվը կկազմեր ոչ թե 80%, (գոյություն չունեցող ցուցանիշ- Ն. Բ.) այլ զգալիորեն ավելի շատ<sup>1</sup>: Կամերալ ցուցակագրության աղբբեջանական տարբերակը իրական տարբերակից տարբերվում է նրանով, որ միտումնավորությամբ դուրս են հանված բացառապես հայաբնակ մի շարք գյուղանուններ: Այս փաստը, սակայն ծուռ հայելու մեջ է ներկայացված Խ. Խալիլովի կողմից, վերջինիս պոնմամբ՝ «Այն աղբբեջանական գյուղերը, որոնք բնակեցված էին հայկական ընտանիքներով ցուցակագրության մեջ ներկայացված են որպես հայկական գյուղեր»<sup>2</sup>:

Բնակչության բնականոն աճը կրկին խաթարվում է 1826-1828 թթ. ռուսպարսկական պատերազմով:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվում է 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի հաշտության պայմանագրով: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանի արևելյան հատվածի մի մասը, ազատվելով պարսկական լծից, ընդունում է ռուսական տիրապետությունը: Պայմանագրի 15-րդ հոդվածը պարսկահայերին իրավունք էր տալիս գաղթել Ռուսաստանին միացված հայկական տարածքները: Ներգաղթի կազմակերպման գործում մեծ ջանքեր են գործադրում Ալ. Գրիբոյեդովը<sup>3</sup>, իսկ հայ հասարակական գործիչներից՝ Ն. Աշտարակեցին<sup>4</sup>, Լազարյանները և ուրիշներ: Ռուսական բանակի գնդապետ Ղազար Լազարյանը 1828թ. մարտի 30-ին դիմելով իր քրիստոնյա եղբայրներին՝ ասել էր. «Ի գաւառնս

<sup>1</sup>Гаджиева З., *Гарабагское ханство: социально-экономические отношения и государственное устройство*, Баку, 2008, стр. 7

<sup>2</sup>Халилов Х., *Из этнической истории Карабаха*, <http://karabakh-dok.azerall.info/ru/-azerpeople/ap003.htm>, 4.10.2006

<sup>3</sup>Պարսաձյան Վ., *Ա. Մ. Գրիբոյեդովը և հայ ռուսական հարաբերությունները*, Եր., 1947, Шостакович С., *Дипломатическая деятельность А. С. Грибоедова*, Москва, 1960, Мирзоян С., *Арцахско-российские перекрестки*, Москва, 2003, стр. 28-29

<sup>4</sup> Խաչատրյան Մ., *Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումը ըստ ժամանակի փաստաթղթերի*, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 10, Երևան, 1978, էջ 96-99, Հովհաննիսյան Վ., *Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և Ներսես Աշտարակեցին*, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3, Եր., 1973, էջ 123

Երևանայ, Նախիջևանայ և Ղարապաղու, գորս դուք ընտրեսցիք, տացի ձեզ լայնատարած և արգասաւոր երկիր արդէն իսկ ըստ մասին սերմանեալ է. և ի պտղոյ նորին գտասներորդ մասն միայն տաջիք Տերութեան և յընթացս վեց ամաց ազատ լիցիք յամենայն յարկատուութենէ. և որք միանգամ աւելի աղքատ իցեն ի ձէնջ, տացի նոցա օգնութիւն չուելոյ»<sup>1</sup>:

Փետրվարի 29-ին Ի. Պասկևիչը հաղորդել էր, որ իրանական Ատրպատականի տարածքում ապրող շատ հայեր ցանկություն են հայտնել տեղափոխվելու Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի շրջանները և ապրելու Ռուսաստանի հովանու տակ<sup>2</sup>: Պասկևիչը երկիցս նշել էր, որ անհրաժեշտ է գաղթականներին վերաբնակեցնել նաև Ղարաբաղում՝ չնայած նախապես որոշված էր գաղթականներին վերաբնակեցնել Երևանի և Նախիջևանի մարզերում<sup>3</sup>:

Հավանաբար, մերձակա լինելու հանգամանքի պատճառով Ուզումչի առավելապես հունարնակ գյուղի և նրա մոտ գտնվող երեք հայկական գյուղերի 147 ընտանիքներ գաղթեցին Ղարաբաղ<sup>4</sup>:

1828թ. ապրիլի 24-ին Ի. Պասկևիչի զեկույցներից մեկում նշվում էր գաղթականների մեծ մասի, հատկապես աղքատների՝ Ղարաբաղ գնալու ձգտման մասին, որտեղ նրանք կապահովվեն բավարար կենսապայմաններով<sup>5</sup>: 1828 թ. մայիսի 26-ին Ի. Պասկևիչը Ի. Դիբիչին ուղղված իր զեկույցում հայտնում է, որ Ղարաբաղ է տեղափոխվել 279 ընտանիք<sup>6</sup>:

Ղարաբաղի պարետ՝ իշխան Ի. Աբխազովը գաղթականներին տեղավորում է Պարտավում: 1831թ. թվագրվող մի փաստաթղթում նշվում է, որ գաղթականների շրջանում շուտով սկսվում են ծանր հիվանդություններ և մահացություններ, որի հետևանքով նրանց թիվը նվազում է 100 ընտանիքի: Գաղթականների ծանր վիճակի մասին է վկայում 1828 թ. օգոստոսի

<sup>1</sup> Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч. II, Москва, 1838, стр. 163-164, Айвазян С., *История России. Армянский след*, Москва, стр. 393

<sup>2</sup> Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч. II, стр. 157

<sup>3</sup> Մանուկյան Եվ., *Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թթ. վերջերին և 30-ական թթ. սկզբներին*, Եր., 2005, էջ 81

<sup>4</sup> Тавакалян Н., *Переселение армян из Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России*, «Историко-филологический журнал», №3, Ер., 1978, стр. 32

<sup>5</sup> Глинка С., *Описание переселения армян аддербиджанских в пределы России*, Москва, 1831, с. 127

<sup>6</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, стр. 497, Գեղամեանց Ե., *Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի 4-րդ շրջանը*, Բարսի, 1915, էջ 146

21 թվագրվող մի փաստաթուղթ, որտեղ Չայլուի (Գետաշեն) հսկիչ Թումանովը գեկուցում է Ղարաբաղի պարետ Կալաչևսկուն գաղթականների ծանր վիճակի մասին. «...Հայ գաղթականների մեջ չկա որևէ առողջ մարդ, որ կարողանա ներկայանալ և հաշվետվություն տալ ձեզ մահացածների թվի մասին...»: Թումանովի՝ Կալաչևսկուն ուղղված մեկ այլ գեկուցում (1828 թ. օգոստոսի 25) նշվում է. «... Գաղթականները գտնվում են այնպիսի իրավիճակում, որ մահացածներին թաղելու համար չկա ոչ մեկը, ամեն օր մահանում է մինչև քսանը»<sup>1</sup>:

Ղարաբաղ գաղթածների ծանր վիճակի մասին վկայում է նաև ռուս պաշտոնյա, վիճակագիր Դ. Ջուբարյովը. «Պարսկաստանից եկած հայերը աչքի են ընկնում օրինակելի աշխատասիրությամբ: Նրանց մի մասը Կովկասում հազվադեպ հանդիպող անչափ օգտակար արհեստների տեր է: Ցավոք, օգտակար այս ժողովուրդը չափից դուրս ճնշվում է Ղարաբաղում... Ղարաբաղի տեղական իշխանությունը, հայերի դեմ ինչ-որ կանխակալությամբ նեղում է նրանց չտեսնված անների կերպով: Մինչև այժմ նրանք չունեն մշտական կացարան, բնակեցման համար հատկացնում են ամենաանպատաստ հողերը... Առանց ջրի, առանց կերակրի, բաց երկնքի ու արևի կիզիչ ճառագայթների տակ տարաբախտ հայերը մահվան ճարակ էին դառնում: Երեք ամսվա ընթացքում մեռավ 1012 երկու սեռի մարդ»<sup>2</sup>: Ղարաբաղի մասին մեկ այլ փաստաթղթում Ջուբարյովը գրում է. «Գաղթած հայերն այստեղ ճնշվում են թաթար նայիբների և տեղական ղեկավարության կողմից: Եթե այս խեղճերից մեկը խնդրանքով գալիս էր Շուշի, ապա նրան բավարարում էին ծեծով»<sup>3</sup>:

1828թ. սկզբներից տարբեր ժամանակներում գլխավոր հրամանատարի կամքով Ղարաբաղի գավառ էին գաղթել 750 հայ և հույն ընտանիքներ<sup>4</sup>: Վերը նկարագրված ծանր վիճակն էլ պատճառ է դառնում, որպեսզի նրանց մի մասը ետ վերադառնար Պարսկաստան<sup>5</sup>: Պետք նշել նաև, որ Ղարաբաղ գաղթած պարսկահայերի մեծ մասը նախկինում իրենց հայրենիքը լքած

<sup>1</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, Феодальные отношения и колониальный режим 1827-1843 гг., М.-Л., 1936, с. 201

<sup>2</sup> АКАК, т. VII, док. 412, стр. 460-462

<sup>3</sup> АКАК, т. VII, док. 413, стр. 464

<sup>4</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, стр. 204

<sup>5</sup> Մանուկյան Եվ., նշվ. աշխ., էջ 121, *Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988, стр. 19*

ղարաբաղցիներն էին, որոնք թուրք-պարսկական պատերազմների ընթացքում ստիպված էին հեռանալու դեպի Պարսկաստան: Այսպես, օրինակ, 17-րդ դարի սկզբներին Շահ Աբասի արշավանքից առաջ Դիզակի գավառից չորս գյուղ, թուրքերից նեղված, անցել էին Պարսկաստան ու ապաստան գտել Սպահանում<sup>1</sup>:

Ըստ Մակար Բարխուդարյանցի՝ Ղարաբաղ գաղթածները բնակություն հաստատեցին Դիզակի Սարենշեն, Քարագլուխ, Ծակուռի, Մյուլքուդարա, Խծաբերդ, Ջրակուս գյուղերում, Խաչենում (Մեհտիշեն), Սարդարաշենում, Նորագյուղի մի մասում, Գյուլաթաղ, Մարաղա, Այգեստան (Չայլու), Ջրաբերդի Ջանյաթաղ և այլ գյուղերում: Ըստ հայ ազգագրագետ Ս. Լիսիցյանի՝ տեղաբնիկների կողքին նոր բնակչության հայտնվելը բարբառային և ազգագրական յուրահատկություններում նկատելի փոփոխություններ չառաջացրեց մասամբ այն պատճառով, որ այդ տարրերը ամբողջ բնակչության 10 տոկոսն էլ չէին կազմում, մասամբ էլ, որ Ղարաբաղի և Ղարադաղի միջև վաղուց ի վեր գոյություն ունեին սերտ տնտեսական և մշակութային կապեր<sup>2</sup>: Մինչ պարսկահայերի գաղթը Ղարաբաղի և Պարսկաստանի միջև եղել են բնակչության տեղաշարժեր: Մասնավորապես, Խաչենի Լուսաձոր (Մեհտիշեն) գյուղի բնակչությունը այստեղ է տեղափոխվել 1828-1829 թթ. գաղթից շատ առաջ, որի մասին տեղեկություններ կան 1823թ. կամերալ ցուցակագրությունում<sup>3</sup>:

Փաստերն ապացուցում են, որ դասագրքային այն «ճշմարտությունը», որ ներգաղթածներին տրվել են արտոնություններ և, հետևաբար, նրանք հայտնվել են կենսագործունեության համար լիարժեք պայմաններում, քննադատության չի դիմանում: Բայց այն իրողությունը, որ պարսկական հետամնաց տիրապետության փոխարինումը համեմատաբար զարգացած ռուսական տիրապետությամբ ինքնին առաջադիմական երևույթ էր, անժխտելի է:

Այսպիսով՝ Թուրքմենչայի պայմանագրից հետո կատարված գաղթի հետևանքով Ղարաբաղում բնակություն է հաստատում մոտավար տվյալ-

<sup>1</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ.4, Եր., 1972, էջ 96

<sup>2</sup> Ս.Լիսիցյան, **Լեռնային Ղարաբաղի հայերը**, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պր. 12, Եր., 1981, էջ 17

<sup>3</sup> ՀԱՍ, Ֆ. 93, ց. 1, գ. 163

ներով մինչև 100 ընտանիք: Պատմական այս իրողությունը խեղաթուրելով՝ արբեջանական «պատմաշինարարները» փորձում են իրենց և աշխարհին հրամցնել այն կեղծիքը, թե իբր հայ բնակչությունը Ղարաբաղում հայտնվել է Թուրքմենչայի պայմանագրից հետո կատարված գաղթի հետևանքով<sup>1</sup>: Բացահայտ այս կեղծիքը՝ մոզոնված աղբբեջանական պատմագրության կողմից, «հիմնավորվում է» նրանով, որ Թուրքմենչայի պայմանագրով Ղարաբաղ է գաղթել ավելի քան 130 հազ. հայ, որոնք, այստեղ հաստատվելու պահից սկսած, զավթելով կալվածատիրական և պետական հողերը, մեծ անհանգստություն սկսեցին պատճառել Ղարաբաղի «բնիկներին՝ մահմեդականներին»<sup>2</sup>:

Աղբբեջանական «պատմագիտական տեսությունների դեմ լուրջ կռիվան է այն հանգամանքը, որ Ղարաբաղի բնակչությունը ոչ թե աճ, այլ հետաճ էր արձանագրել, ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Ղարաբաղում ծավալված իրադարձությունների պատճառով: Հատկանշական է, որ արդեն 1832-1833թ. ցուցակագրությամբ Ղարաբաղի լեռնային հատվածում բնակչության թիվը կազմում էր մոտավորապես 26,1 հազ. մարդ, որից հայերը կազմում էին 21,9 հազ. մարդ (84%), թաթարները՝ 4,2 հազ. (16%)<sup>3</sup>:

Այս «պատմական փաստն» իրավամբ քննադատվել է նաև Եվ. Մանուկյանի կողմից. վերջինս վկայակոչում է 1979թ. համամիութենական մարդահամարի տվյալները, ինչի համաձայն՝ ԼՂԻՄ-ում բնակվում էր ընդամենը 123100 հայ, այսինքն՝ ստացվում էր, որ այդ ամբողջ պատմական ժամանակաշրջանում Ղարաբաղի բնակչությունը հետաճ էր արձանագրել<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Алиев И., *Нагорный Карабах: История. Факты. События*, Баку, 1989, с. 76-77, Карабах, НАН Азербайджана, Институт Археологии. *Этнография*, Баку, 2004, с. 88, Мурадян П., *История-память поколений*, Ереван, 1990, с. 101-118, Мельтюхов М., Тер-Саркисянц А., Трапезников Г., *Исторические фальсификации с политической подоплекой*, Москва, 1999, с. 15, Маммадов И., Мусаев Т., *Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество*, Тула, 2006, с. 20. Justin McCartney, *Armenian Terrorism: History as Poison and Antidote*, Ankara, 1984, p. 85-94

<sup>2</sup> Алиев И., *ibid.* աշխ., էջ 76

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, 51: Ցուցակագրությունների տվյալները շատ հաճախ չէին համապատասխանում իրականությանը, մասնավորապես, թաթար բնակչության թվի բարձր ցուցանիշները պայմանավորված էին նրանով, որ քոչվորական կենսակերպի հետևանքով վերջիններս հաշվառվում էին մի քանի անգամ: Մեկ այլ աղբբուրի համաձայն Ղարաբաղի գավառի ծխերի թիվը հասել էր 20546-ի՝ մոտավորապես 100 հազ. երկսեռ բնակչությամբ: Այս մասին տե՛ս Մուսայելեան Հ., *Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը (1813 թ. 12 հոկտ. -1913 թ. 12 հոկտ.)*, «Արարատ», թիւ 9, 1914, էջ 254

<sup>4</sup> Մանուկյան Եվ., *ibid.* աշխ., էջ 120



Փաստորեն, Լեռնային Ղարաբաղի բնակչության «եկվորության» և մահ-մեղական բնակչության «բնիկության» ադրբեջանական «պատմագիտական» տեսությունները հերթական անգամ դատապարտվում են ձախողման: Հայության համար շրջադարձային նշանակություն ունեցած պայմանագրերից հետո ծավալված ժողովրդագրական տեղաշարժերը մեծապես կեղծվում, խեղաթուրվում են ադրբեջանական պատմագրության կողմից, սակայն փաստերի անաչառ քննությունը վեր է հանում պատմական իրականությունը: Պատմական ճշմարտությունը միջազգային հանրությանը ներկայացնելու համար մեր խնդիրն է պայքարել ոչ միայն հայ, այլ նաև օտար գիտական և պարբերական մամուլի ճակատներից՝ այդպիսով պայմաններ ստեղծելով քաղաքական հարթակներում ընթացող պայքարում հաղթանակի համար:

*«Մերոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2014, էջ 30-39*

## ՀԻՆ ՇՈՒՇԻԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ

*Արևելյան Հայաստանի նշանավոր բերդաքաղաք Շուշիի պատմական զարգացման դինամիկան ըմբռնելու համար կարևոր է իմանալ նրա քաղաքական և տնտեսական զարգացման այն շրջանները, որոնք ընդգրկում են նրա ձևավորումից մինչև 1920թ. մարտն ընկած ժամանակաշրջանը:*

### **ա) Շուշին մինչև Ղարաբաղի խանության կենտրոն դառնալը**

Շուշին մինչև Ղարաբաղի խանության կենտրոն դառնալը գոյություն է ունեցել ոչ միայն որպես ամրոց, այլև արհեստավորական բնակավայր, որի մասին վկայում են հնագիտական պեղումների արդյունքները: Դատելով Շուշի քաղաքի պատմության թանգարանում ցուցադրվող մ.թ.ա. 12-10-րդ դդ. նյութերից՝ կարելի է եզրակացնել զարգացած խեցեգործության, պերճանքի առարկաների արտադրության, մետաղագործության, զինագործության և այլ արհեստների առկայության մասին: Վերջերս քաղաքի հարավարևելյան մասում հայտնաբերված 5-9-րդ դդ. թվագրվող վաղ քրիստոնեական գերեզմանոցի մոտ գտնվող դրյակը վկայում է այդ շրջանում որմնադիրության և քարտաշության զարգացած լինելու մասին: Դրյակի տիրոջ կյանքն ու գույքը պաշտպանող զինվորականության պահանջները բավարարելու համար, ըստ երևույթին, եղել են զինագործության, կաշեգործության և այլ արհեստներ:

12-13-րդ դարերում տարածքում զարգացած է եղել քարտաշությունը, որի մասին վկայում են բնակավայրի շրջակայքում հայտնաբերված շուրջ 7 խաչքարերի առկայությունը: 1428թ. թվագրվող տեր Մանուելի Ավետարանը վկայում է Շուշիի գրչության կենտրոն լինելու մասին: Պետք է ենթադրել, որ գիրքը գրելիս հեղինակն օգտագործել է տեղի արհեստավորների արտադրած ներկերն ու մշակած մագաղաթը:

Բնակավայրի բնակչությունը զբաղվել է նաև հողագործությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ:

**բ) Շուշիի հասարակական և տնտեսական կյանքը Ղարաբաղի խանության քաղաքական կենտրոն դառնալուց հետո**

XVIII դարի 50-ական թվականներին Շուշին տիպիկ միջնադարյան ամրոց-ավան էր, ամբողջապես շրջապատված պարիսպներով, խանդակներով և պաշտպանողական այլ կառույցներով և ուներ իր միջնաբերդը, որը 1826թ. դարձավ 42-րդ գնդի գնդապետ Ռեուտի շտաբը: Շուշին իր հզորությամբ մրցում էր այնպիսի քաղաքների հետ, ինչպիսիք էին Նուխին, Շամախին, Բաքուն, Գանձակը, Երևանը, Գյումրին, Թիֆլիսը, Գորին, Ախալցխան, Քութայիսը և շատ ուրիշներ:

Խանության ժամանակ Շուշին ուներ որոշ տարածությամբ ցանքեր, այգիներ, արոտավայրեր և որսատեղիներ: Գյուղատնտեսական հողահանդակները խիստ սահմանափակ տարածություն էին գրավում 1200-1500մ բարձրության սարավանդի գագաթին և գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար քիչ էին պիտանի:

Շուշիի բնակչության հիմնական զբաղմունքն արհեստն էր, իսկ հետագայում նաև՝ առևտուրը: Ինչպես վկայում են Հակոբ շուշեցի պատմիչն ու մահմեդական պատմագիր Միրզա Ջամալ Ջիվանշիրը իր «Ղարաբաղի պատմություն» գրքում, անընդհատ կառուցվող ու ընդարձակվող Շուշին պահանջում էր քարտաշներ, որմնադիրներ, աստղձագործներ և այլ արհեստավորներ, որոնք աշխատում էին բերդի շրջապատը, բուրգերը, պալատները, բնակելի տները, բաղնիքները, եկեղեցիները, մեչիդները, շուկաները կառուցելու համար: Բոլոր շինությունները կառուցվում էին բնակավայրի շուրջ անսահմանափակ տարածված քարհանքերից ստացվող քարով, ավազով, կավով ու կրով:

Ղարաբաղի խանության օրերին ամրոցի բնակչությունն ըստ երևույթին կազմված էր հետևյալ խմբերից.

1. Առաջին խմբի մեջ մտնում էին խանն ու նրա մերձավորները, խանական վարչության ծառայողները, զինվորականները, մելիքները, բեկերն ու աղալարները, ծառաները և այլն: Այս խումբը Շուշիի մշտական բնակչության զգալի մասը չէր, թեև երբեմն այն կարող էր աճել զգալի քանակությամբ (պատերազմական գործողությունների, արշավանքների օրերին և այլն):

2. Պաշտամունքի քրիստոնյա և մահմեդական սպասավորները կազմում էին անաշխատ բնակչության երկրորդ խումբը, որ նույնպես բազմամարդ չէր:

3. Շուշիի բնակչության մեծ մասը կազմում էին արհեստավորները՝ քարտաշներ, որմնադիրներ, ատաղձագործներ, փականագործներ, դարբիններ և այլն, իսկ ժամանակի ընթացքում ավելացած բնակչության բազում պահանջներին համապատասխան արհեստները դարձան բազմազան. կաշեգործներ, գլխարկագործներ, դերձակներ, պղնձագործներ, կլայեկչիներ, համետագործներ, ոսկերիչներ և այլն:

Բաֆֆու «Խամսայի մելիքությունները» աշխատության մեջ նշվում է Իբրահիմ խանի օրոք Շուշիում ապրած ոսկերիչ Մելքումի մասին, որն, ըստ երևոյթին, ոչ միայն խաների համար արծաթե և պղնձե դրամներ էր հատում, այլև պատրաստում էր պերճանքի առարկաներ ազնավազարմ տիկնանց համար: Նման ծավալուն գործունեություն ոսկերիչ Մելքումը կարող էր իրականացնել ոսկերիչների համքարության միջոցով:

Պատմաբան Լեոյի տվյալներով Շուշիի բնակչության մեջ կային կաթսաներ պատրաստող պղնձագործներ՝ դազանչիներ, որ եկել էին Շահկերտից, Ագուլիսից, Հին Ջուղայից և Մեղրիից: Արհեստավորներ կային նաև Շուշիի մահմեդական բնակչության մեջ:

Այսպիսով, մինչև XIX դարի սկիզբը Շուշին միջնադարյան արևելյան ամրոց էր, որտեղ պահպանված հին դասերի իրավունքների և արտոնությունների կողքին ծնվել և ուժեղանում էին հասարակական նոր խավեր: Բնակավայրն աստիճանաբար դառնում էր արհեստի և առևտրի կենտրոն՝ կարևոր դեր խաղալով նույնիսկ Ղարաբաղի խանության սահմաններից դուրս:

#### **զ) Հասարակական կյանքը և տնտեսությունը XIX դարի առաջին կեսում**

XIX դ. սկզբում Հայաստանի արևելյան մասը՝ Շուշի բերդավանի հետ մտցվեցին ռուսական կայսրության կազմի մեջ, որի արդյունքում դադարեցին եկվոր մահմեդական խաների կողմից հրահրվող անվերջ պատերազմական գործողությունները: Ղարաբաղում հաստատված խաղաղ կյանքը բարենպաստ պայմաններ ստեղծեց երկրի տնտեսական զարգացման համար:

Արդեն 1805թ. առևտրական կապիտալը Շուշիում խոշոր ուժ էր ներկայացնում: Մեսրոպը Թաղիդյանը 1821 թ. Եփրեմ կաթողիկոսի հետ գնտվելով Շուշի ամրոցում, գրել է բերդավանում բնակվող երկու վաճառաշահ տների մասին: Դրանցից մեկը Հախումյանների տունն էր, որը ռուսական կայս-

րության գանձարանում մոտ մեկ միլիոն ռուբլի փող ուներ և առևտուր էր անում Իրանի, Սիբիրի և Եվրոպայի քաղաքների հետ, ուներ մեծ քանակությամբ գործակատարներ: Երկրորդը, Թառումյանների տունն էր, ով արտոնություններ ուներ Կասպից ծովի ձկնորսության և նավագնացության մեջ: Թառումյանները Շուշիում կառուցել են Ագուլյաց եկեղեցին, թեև իրենք Շահկերտից էին:

Սակայն միլիոնատեր վաճառականները իրենց ընտանիքներով վերջնականապես հեռանում էին Շուշիից: Նրանց տեղը բռնում էին նոր եկվորները, որոնք գալիս են գյուղերից, արհեստներ սավորում, գործ սկսում և գնում նույն ճանապարհով, ինչպես և առաջինները:

Շուշին յուրահատուկ իջևան էր, որտեղ պատրաստվում էին այն տարրերը, որոնք այնուհետև ցրվում էին Ռուսաստան և այլ երկրներ: Նրանք Ղարաբաղի հայությունը հաղորդակից էին անում շահի և հարստանալու գաղափարին: Քանի որ առևտրա-արդյունաբերական կենտրոններն էին հարստանալու ասպարեզը, ուստի ծայր առած տարերային շարժումը դարձավ հոսանք և միմյանց հետևից Շուշիից սկսեցին գնալ և արհեստավորները, և երկրագործները, և մտավորականները: Լեռյի վկայությամբ, «Որտեղ հաց, այնտեղ կաց» չարչիական սկզբունքն աղետ դարձավ Ղարաբաղի համար:

XIX դ. կեսերին Շուշին դառնում է ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի խոշոր քաղաքներից մեկը: Այն 1846թ. կոչվում էր Կասպիական մարզի Ղարաբաղի գավառի քաղաք, իսկ 1852թ. Կովկասի օրացույցում կոչվում էր Շամախի նահանգի գավառական քաղաք: Իր բնակչության քանակով Շուշին 1852թ. Անդրկովկասի քաղաքների շարքում 4-րդ տեղն էր գրավում՝ զիջելով միայն Թիֆլիսին, Շամախուն և Նուխուն: Շուշին ուներ 12774 բնակիչ, որոնցից 6356 հոգին տղամարդ էին, իսկ 6418 հոգին՝ կանայք: Քաղաքում կային 1846 քարաշեն տներ, 576 խանութ, 11 սալուղիներով իրար հետ կապված փողոցներ, 6 հրապարակ, 4 քարե և 2 փայտե կամուրջներ:

Չնայած Շուշում լայնորեն զարգացած էին արհեստները, սակայն քաղաքը զուրկ էր խոշոր արդյունաբերական արտադրությունից: Քաղաքի ֆաբրիկաները տարեկան արտադրում էին հազար հատից ավելի մետաքսե և կիսամետաքսե կտորներ, որոնք կոչվում են «դարայի» և «կասաբի» և

վաճառվում էին տեղում: Շուշիում կար 4 հատ կաշվեգործական, դաբադ-խանա, 2 աղյուսի գործարան, 3 հատ ներկարաններ: Դրանք հումքը ձեռք էին բերում գավառում, իսկ արտադրանքը վաճառում քաղաքաբնակներին:

Արդյունաբերական արտադրանքը Շուշիում աննշան չափեր է ունեցել: Բնորոշ է, որ Ղարաբաղի ներսում հաղորդակցության ուղիների թույլ զարգացման պատճառով առևտուրն ընթանում է արտաքին առևտրի ուղիներով: Թավրիզից Շուշի էին ներմուծում բամբակամանվածքային հյուսվածքներ, մետաքսի կտորեղեն, մահուդ, թավշյա շալեր, դիպակ, (պարչա) Բաղդադից և Բուխարայից սմուշկաներ (նորածին գառան մորթի), ծխախոտ և այլն: Նիժնի Նովգորոդից ներմուծում էին մահուդներ, բամբակե և մետաքսե կտորեղեն, փոքր քանակությամբ ճենապակե և ապակե ամանեղեն, երկաթ, երկաթե և պղնձե շինվածքներ, սկյուռի մորթեղեն, ստեորինի մոմեր, թուղթ և այլն: Թիֆլիսից ներմուծում էին շաքար: Իրան արտահանում էին հնչեղ դրամ, Ռուսաստան՝ քիչ քանակությամբ մետաքս, աղվեսի և կզաքիսի մորթեղեն: Շուշիի բնակիչները, բացառությամբ արհեստավորների և ազնվական բեկերի, զբաղվում էին տարբեր տեսակի առևտրով: Հարուստ վաճառականները շրջանառության մեջ ունեին 100-200 հազար և ավելի ռուբլի արծաթե դրամ: Նրանք տրանզիտային առևտուր էին վարում Լայպցիգի, Կոստանդնուպոլսի և Թավրիզի միջև, և շատերը մետքասի առևտուր էին անում Մոսկվայի հետ:

Շուշիի վաճառականները առևտրի մեջ միջնորդի դեր էին խաղում, կուտակելով զգալի միջոցներ, որոնք շատ չնչին չափով էին հասկացնում քաղաքի կամ գավառի արտադրության լայնացման գործին:

#### **դ) Շուշիի տնտեսությունը և հասարակական կյանքը XIX դարի երկրորդ կեսին**

XIX դարի երկրորդ կեսին Շուշին շարունակում էր մնալ Անդրկովկասի ամենախոշոր քաղաքներից մեկը՝ 80-ական թվականներին իր բնակչությամբ զիջելով միայն Թիֆլիսին և Բաքվին: Շուշին նույնիսկ ավելի բնակիչներ ուներ, քան իր նահանգական կենտրոնը՝ Գանձակը (Ելիզավետպոլը):

Շուշիի բնակչության զգալի աճին զուգահեռ XIX դարի երկրորդ կեսին անկասկած տեղի է ունենում նաև նրա տնտեսության աճը: Ծավալվում են շինարարական աշխատանքները, կառուցվում են նոր ու բարեկեցիկ բնա-

կելի շենքեր, աճում է քաղաքային տնտեսությունը, անց է կացվում կոյուղի: Գնալով ընդարձակվում են քաղաքի առևտրական կապերը: Շուշիից խճուղի է անցկացվել մինչև Եվլախ երկաթուղային կայարանը, հաղորդակցության նոր ճանապարհներով կապվել Ջանգեզուրի, Նախիջևանի և Ղափանի հետ: Քարավանային ճանապարհի վրա նստած քաղաքը Նախիջևանից աղ և Ղափանից պղինձ էր ներմուծում: Շուշիում ստեղծվում էին բազմաթիվ խանութներ և առևտրական տներ:

Ինչպես երևում է Բաքվի արքունական պալատի գործից, առևտրի ընդհանուր ստուգման մատյանի համաձայն, սկսած 1877 թվականի դեկտեմբերի 3-ից և վերջացրած 1880թ. ապրիլի 12-ը, Շուշիի հիմնական մասում կար 371 առևտրական և արդյունաբերական ձեռնարկություն, իսկ մահմեդական մասում 581 ձեռնարկություն, միասին վերցրած 952 առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններ: Դրանց շարքերը ձգված էին սկսած Շուշիի Վերին դարպասից Երևանյան փողոցով դեպի ցած, փոստի մոտով դեպի Չերքիզենց խանութները, Թոփխանան, Ղափանը, Ղազանչեցոց և Ագուլյաց եկեղեցիները, այնուհետ դեպի քաղաքի մահմեդական մասը՝ Շեյթանբազարը, իսկ այդ շարքերի առանձին ճյուղերն անցնում էին դեպի հայկական թեմական դպրոցը, գնում ցած, անցնում Շուշիի քաղաքային դպրոցի մոտով և նորից մտնում մահմեդական թաղամասը: Դրանք աշխատում էին ոչ միայն քաղաքի համար, ապրանքները և արհեստավորների արտադրանքը գնում էին Ղարաբաղի գյուղացիները, ներառյալ նաև մահմեդական քոչվոր անասնապահները, որովհետև ամբողջ Ղարաբաղում չկար մի այլ քաղաք, որն ավելի մեծ արտադրություն կամ վաճառելու ապրանքներ ունենար և կարողանար բավարարել Ղարաբաղի բնակչության սպառողական պահանջները, քան Շուշին: Շուշիի ձեռնարկությունների ապրանքները վաճառվում էին նաև Ղարաբաղի սահմաններից դուրս (Ջանգեզուրում, Ղափանում) և նույնիսկ արտասահմանյան շուկաներում: Ղարաբաղի գյուղերում նույնպես բացվում էին մանուֆակտուրաներ և խանութներ, մանավանդ կենտրոնական գյուղերում, որտեղով անցնում էին քոչի ճանապարհները (Աղդամում, Բարդալում, Խաչենում (Առաջաձորում), Աղջաբաղիում և շատ այլ կետերում): Այդ վաճառական ձեռնարկություններ բացողը կամ նրանց ապրանքներ մատակարարողը հաճախ շուշեցի առևտրականներ էին:

Միաժամանակ Շուշին դառնում է համեմատաբար խոշոր արդյունաբերական արտադրության, մանավանդ մետաքսագործության կենտրոն: Ճիշտ է, մետաքսի թել քաշող և ոլորող գործարանները մեծ մասամբ տեղավորվում էին ոչ թե բուն Շուշի քաղաքում, այլ հայկական Խնձորեստան, Կրկժան, Քարին տակ, Սղնախ, Չանախչի, Ղշլաղ և այլ գյուղերում: Մետաքսագործական արդյունաբերական ձեռնարկությունների տերերը մեծ մասամբ շուշեցի կապիտալիստներ Հարունովները, Ներսեսովները, Տեր-Գրիգորյանները, Տեր-Սկրտչյանները և այլոք էին, ու ձեռնարկությունների վարչության կետերոնները գտնվում էին Շուշիում: 1915թ. հունվարի 1-ից մինչև 1916թ. հունվարի 1-ը Շուշիում գործում էին 22 գործարաններ: Նրանց արտադրանքն ուղարկվում էր Մոսկվա, Վարշավա, Մարսել և սպառվում էր տեղում: Մետաքսամանվածքի և մետաքսակարժային գործարանները հիմնվել են XIX դ. 80-ական թվականներին:

Շուշին XIX դ. վերջում ոչ թե ֆաբրիկա-գործարանային, այլ արհեստավորական արտադրության և առևտրի կենտրոն էր: Ըստ Բրոկհաուզ և Եֆրոնի հանրագիտական բառարանի. «Շուշին Կովկասում գորգագործության ամենախոշոր կենտրոնն էր, որի արտադրությունը սպառվում է նահանգի սահմաններից դուրս շատ հեռու և հասնում է Մոսկվա և Պետերբուրգ: Գորգերի արտադրությունը տնայնագործական էր: Գորգագործությամբ զբաղվում էին հայ և մահմեդական կանայք: Մետաքսի և գորգերի աշխույժ առևտուրը բացառապես գտնվում էր տեղի հայերի ձեռքին»:

XIX դարի վերջը Շուշի քաղաքի բնակչության և նրա տնտեսության ամենամեծ աճի ժամանակն էր, բայց և միաժամանակ նրա անկման շրջանի սկիզբը: Առևտրական խավը արգելակում էր քաղաքի վերածվելը արդյունաբերական կենտրոնի: Առևտրական կապերի նոր ուղիների հայտնվելը և ազգամիջյան ընդհարումներն արագացնում են քաղաքի անկումը, հասցնելով նրան աննշան քաղաքի կացություն:

### **ե) Շուշիի տնտեսական կյանքը և հասարակական վիճակը XX դարի առաջին երկու տասնամյակում**

XIX դ. վերջին և XX դ. 1-ին տասնամյակներում Շուշին աստիճանաբար կորցնում էր իր բնակչությունը, և Երևանը, Քուրայիսը, Բաթումը և այլ փոքր քաղաքներ իրենց բնակչությամբ առաջ են անցնում նրանից: Նրա աշխարհագրական դիրքն ընդարձակվելու հնարավորություն չէր ընձե-



ռում ոչ միայն խոշոր արդյունաբերական արտադրությանը, այլև բնակարանային շինարարությանը: Երկաթուղուց գուրկ և ջրային խիստ սահմանափակ ռեսուրսներ ունեցող Շուշին չկարողացավ դառնալ արդյունաբերական քաղաք: Մինչդեռ Բաքվին, Թիֆլիսին և Բաթումին երկաթուղիների մոտիկությունը ստեղծում էին ինդուստրացման պայմաններ: Շուշին՝ հեռու էր Բաքու-Եվլախ-Գանձակ-Թիֆլիս-Քութայիս-Բաթում, ինչպես նաև Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Նախիջևան-Ջուլֆա երկաթգծերից: Ամենից մոտ տեղադրված երկաթուղային կայանը՝ Եվլախը, ավելի քան 100 կմ հեռավորության վրա էր գտնվում, որտեղից ապրանքները խճուղով Շուշի էին տեղափոխվում ֆուրգոններով կամ գոմշի սայլերով: Չնայած Եվլախ երկաթուղային կայանը Շուշիի համար մեծ նշանակություն ուներ որպես փոխաբեռնման կետ, որի միջոցով քաղաքը կապվում էր Անդրկովկասի և Ռուսաստանի այլ երկաթուղային կայանների հետ, բայց և այնպես նրա տնտեսաաշխարհագրական դիրքն իր հարմարության տեսակետից չէր կարող արդեն մրցել երկաթուղիներ ունեցող Անդրկովկասի խոշոր քաղաքների հետ:

Ռուսաստանում ֆաբրիկա-գործարանային արտադրանքի զարգացումը լիակատար անկման հասցրեց Շուշիի արհեստավորական արտադրությունը: Մյուս կողմից քաղաքի, որպես առևտրական կենտրոնի, նշանակությունը նույնպես թուլացավ: Ղարաբաղի, Ջանգեզուրի, Ղափանի և Նախիջևանի հաղորդակցության առևտրական հիմնական ուղիների վրա նստած Շուշին աստիճանաբար կորցրեց նաև այդ դերը: Կառուցվեցին նար առևտրական խճուղիներ և սայլուղիներ, որոնք Թիֆլիսին ու Բաքվին կապեցին Ադրամ, Բարդա և Կարյազինո բնակավայրերը՝ դրանք վերածելով Ղարաբաղի մյուս բնակավայրերի համար պահեստային կետերի: Շնորհիվ XX դարի երկաթուղային նոր կառուցումների, Նախիջևանը, Ջուլֆան և Արաքսի հովտի այլ կետերը նոր առևտրական կապեր ստացան և ելք ստեղծեցին դեպի Անդրկովկասի կենտրոնները:

Բայց, Շուշի քաղաքի կատաստրոֆիկ անկումն, անշուշտ, կապված է այն քաղաքական դեպքերի և հայ ազգաբնակչության կոտորածների հետ, որոնք տեղի ունեցան 1905 և 1906 թվականների ամռանը, իսկ հետո 1918-20 թվականներին:

Քաղաքի տնտեսությանը լուրջ հարված հասցրեց 1905 թ. օգոստոսին հայ-ադրբեջանական պատերազմը, երբ մահմեդական զինյալները հրդեհեցին Ղազանչեցոց և Ագուլեցոց եկեղեցիների մինչև Ղանթար և Թոփխանայից ցած գտնվող թաղամասերի հայերի տներն ու արհեստանոց-խանութները: Ի պատասխան ադրբեջանական ազգայնականների այդ գործողությունների, հայ զինյալները հրդեհեցին ադրբեջանական թաղի մի հատված քաղաքի ստորին մասում և մի փոքր ադրբեջանական թաղ՝ քաղաքի վերին, ռուսական զորանոցի մոտ, որտեղ գնտվում էին կաթնավաճառ Նասիրի տունը և մի քանի այլ տներ: Այրվել էր մշակութային խոշոր կենտրոնի վերածված Խանդամիրյանի թատրոնի շենքը: 1906թ. ամռանը սկսված նոր արյունահեղ ընդհարումների հետևանքով Շուշիի բնակչության քանակը զգալի չափով պակասում է: Տեղական բուրժուազիան հեռանում և հաստատվում է այլ վայրերում, հեռանում է նաև չքավոր բնակչության մի մասը՝ աշխատանք և ապրուստ փնտրելու: Շուշիի այդ ողբերգական վիճակը եզրափակվեց խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին՝ 1920թ. մարտի 22-ին:

*«Շուշի-2017» տարեգիրք, Ստեփանակերտ, 2017, էջ 32-36*

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇՈՒՇԻՈՒՄ 1813-1917ԹԹ.

19-րդ դարի սկզբին անդրկովկասյան և, մասնավորապես, հայ ժողովրդի կյանքում տեղ գտած իրադարձությունները իրենց հերթին զգալի փոփոխություններ գրանցեցին նաև ժողովրդագրական գործընթացներում: Այս ամենից անմասն չմնաց նաև Արցախը, որը 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով միացվեց Ռուսական կայսրությանը: Իրեն միացված տարածքներում ցարիզմը սկսեց իր վարչաքաղաքական ու տնտեսական կյանքին համապատասխան փոփոխություններ իրականացնել: Այդ նպատակով նա սկսեց տեղեկություններ հավաքագրել իրեն ենթակա տարածքների վերաբերյալ՝ համապատասխան կամերալ ցուցակագրում-ներ, հաշվառումներ կատարելու միջոցով:

1822թ. Ղարաբաղի խանությունը վերակազմավորվեց Ղարաբաղի պրովինցիայի: 1823թ. ցարական կառավարությունը Մոզիլևսկու և Երմոլովի ղեկավարությամբ Ղարաբաղում բնակչության հաշվառում անցկացրեց, որի արդյունքներն ամփոփվեցին «Ղարաբաղի պրովինցիայի նկարագրության» մեջ: Այն ներկայացնում էր վիճակագրական տվյալներ բնակչության էթնոկրոնական կազմի մասին, համաձայն որոնց Շուշիում ապրում էր 8290 մարդ, ընդ որում հայերը կազմում էին 41% (3350 մարդ), թաթարները՝ 56% (4670), քրդերը՝ 3% (270)<sup>1</sup>: Թաթարների մեծ թվական տվյալներն առիթ են հանդիսացել աղբյուրների հեղինակների համար հերթական անգամ կասկածի տակ դնելու անցյալ ժամանակներում և հետագայում, մասնավորապես, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Շուշիի հայկական քաղաք լինելու հանգամանքը: Հարկ է նշել, որ 19-րդ դարի սկզբի պատկերը հետևանք էր դեռևս նախորդ դարի իրադարձությունների: Փանահի ժամանակներից սկսվել էր այլացեղ և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ, մասնավորապես Շուշի: Այդ կերպ թուրք խաներն իրենց համար հենարան էին ստեղծում: Թուրք ազգաբնակչության ներ-

<sup>1</sup> Описание Карабахской провинции, составленное в 1823г. Действительном статским советником Могилевским и полковником Ермоловым II, Тифлис, 1866

գաղթը Շուշի շարունակվեց նաև Իբրահիմ խանի օրոք: Միաժամանակ սկիզբ էր առել հայության մեծ արտագաղթ Արցախից, որը մեծ չափերի էր հասել, հատկապես Խամսայի մելիքությունների կործանումից հետո: Ինչպես Լեոն է նշում. «Մելիքների անհաջողություններն ու պարտությունները, միացած սովի և ժանտախտի հետ, քանդել և ավերել էին Ղարաբաղի մեծագույն մասը, փախցնելով հայ ժողովրդի խոշոր հատվածները զանազան ուղղություններով»<sup>1</sup>: Հօգուտ թուրքերի 1820-ական թթ. Շուշիի էթնիկ պատկերն ամբողջացավ 1823թ. Մեհտի Ղուլի խանի քաղաքում հաստատվելով: Վերջինս իր հետ տեղափոխեց նաև 3000 մահմեդական՝ հիմնականում թուրքական ընտանիքներ, որոք գլխավորապես հաստատվեցին Շուշիում:

Ըստ 1832-1833թթ. իրականացված բնակչության հաշվառման, որը փաստորեն, դարձավ Ղարաբաղում անցկացված բնակչության առաջին մարդահամարը, Շուշիում ավելացել էր հայերի տեսակարար կշիռը, կազմելով 52,8%, թուրքերինը նվազել՝ հասնելով 47,1%-ի: Ընդհանուր հաշվով քաղաքում ապրում էր 7304 մարդ<sup>2</sup>: Այն համարվում էր Անդրկովկասի խոշորագույն քաղաքներից մեկը, իսկ բնակչության թվով 5-րդը՝ Թիֆլիսից, Նուխիից, Երևանից ու Շամախուց հետո<sup>3</sup>: Շուշիի հայ բնակչության աճը պայմանավորված էր համեմատաբար խաղաղ զարգացման պայմանների ստեղծմամբ, որի հետևանքով էլ այն վերածվեց առաջավոր տնտեսական, մշակութային կենտրոնի: Արհեստների ու առևտրի զարգացումը մեծ թափ ստացավ, Շուշին դարձավ ապրանքաշրջանառության տարանցիկ կենտրոն: Պատահական չէ ժամանակաշրջանի գերմանական թերթը այն բնութագրել որպես «Կովկասյան Ջիբրալթար»: Աստիճանաբար ձևավորվեց առևտրական կապիտալը: Այս զարգացումների կրողը հայությունն էր:

Հաջորդ տասնամյակի թվական տեղեկությունները Շուշիի բնակչության վերաբերյալ հայտնի են դառնում եկեղեցական ծխական մատյաններից: 1841թ. Շուշիում ապրում էր 5453 հայ: 1854թ. դրությամբ քաղաքն ուներ 15194 բնակիչ, որի 51,1%-ը հայեր էին, 48,6%՝ թուրքեր, 0,3%

<sup>1</sup> Լեոն, *Երկերի ժողովածու*, 10 հատորով, հ. 4, *Ժամանակակից պատմություն (XIX դ. առաջին կես)*, Երևան 1984, էջ 28

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 51-52

<sup>3</sup>Саркисян Г., *Население Нагорного Карабаха за 100 лет (этнодемографическое исследование)*, стр. 65, [http://www.armeniaculture.am/images/menus/1324/Hamlet\\_Sargsyan.pdf](http://www.armeniaculture.am/images/menus/1324/Hamlet_Sargsyan.pdf)

ռուսներ<sup>1</sup>: Գերազանցելով Երևանին՝ բնակչության թվով տարածաշրջանում այն 4-րդն էր: 1860թ. քաղաքի բնակչությունը հասավ 17484 մարդու, որի 54,53%-ը հայեր էին, 45,47%-ը՝ թուրքեր, որոնք բնակվում էին համապատասխանաբար հայկական և թուրքական թաղամասերում: Պատմաբան Վ.Բալայանն իրավացիորեն անհավանական է համարում այլ ազգությունների բացակայությունը, պայմանավորելով այդ փաստը նրանց վերաբերյալ տվյալները հայերի և թուրքերի ընտանեկան կազմերում ընդգրկելու հնարավոր հանգամանքով<sup>2</sup>: 1873թ. Շուշիում անցկացված մարդահամարի տվյալների համաձայն՝ բնակչությունը հասնում էր 24552 մարդու, որից 13504 հայ (55%), 10804 թուրք (44%), 244՝ ռուս (1%): Ընդհանուր Շուշիի գավառում բնակչությունը հասել էր 80913-ի, որից 43502-ը հայեր էին, 37351-ը՝ թաթարներ<sup>3</sup>:

1886թ. քաղաքի ընտանեկան ցուցակների տվյալների հաշվառման արդյունքներով՝ այստեղ ապրում էր 26806 մարդ, որի 56,7%-ը՝ հայեր էին, 43,2%-ը՝ թուրք-թաթարներ, 0,07%-ը՝ ռուս, 2 հրեա: Բնակչության թվաքանակով Շուշին արդեն երրորդն էր՝ Բաքվից ու Թիֆլիսից հետո<sup>4</sup>: Ընդհանուր Արցախի բնակչության 84,8%-ը հայեր էին<sup>5</sup>: 1891թ. ժամանակի մամուլի տեղեկություններով Շուշի քաղաքում հայերի տեսակարար կշիռը կազմում էր 60%<sup>6</sup>:

1897թ. Համառուսական առաջին մարդահամարի արդյունքներով, Շուշիում՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գավառում, հայերը մեծամասնություն էին կազմում: Այսպես, քաղաքի 25881 բնակչից հայ ազգաբնակչությունը կազմում էր 55,7%-ը, թուրքերը՝ 41,6%, 1,5%-ը ռուսներ էին<sup>7</sup>: Ապրում էին նաև լեհեր, մոլդովացիներ, վրացիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնք փոքր տոկոս էին կազմում ընդհանուր բնակչության մեջ: Գրեթե նույն տեսակարար կշիռն ունեին հայերը նաև Շուշիի գավառում՝ 53,2%<sup>8</sup>:

<sup>1</sup>Բալայան Վ., *Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում*, Երևան 2017, էջ 340

<sup>2</sup>Բալայան Վ., *նշվ. աշխ.*, էջ 341

<sup>3</sup> *Статистические таблицы о народонаселении Кавказского края, сборник сведений о Кавказе, Т. VII, Тифлис, 1880, стр. XIII-XXV*

<sup>4</sup> *Ժողովուրդների տերիտորիական բաժանումները Անդրկովկասում*, «Գործ», հմ. 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, Բաքու, 1917, էջ 244

<sup>5</sup> Саркисян Г., *նշվ. աշխ.*, էջ 69

<sup>6</sup> *Անդրկովկասի քաղաքների հայ ազգաբնակչությունը*, «Արձագանք», N2, մարտ, Թիֆլիս, 1891, էջ 18

<sup>7</sup> Բալայան Վ., *նշվ. աշխ.*, էջ 342

<sup>8</sup> Ասոյան Լ., *Հայերի տեղաբաշխումը և ճճը Անդրկովկասում ըստ 1897թ. մարդահամարի տվյալների*, էջ 101, [http://raber.asj-oo.am/37/1/10\\_Asojan\\_L.A..pdf](http://raber.asj-oo.am/37/1/10_Asojan_L.A..pdf)

Բնակչության նվազումը պայմանավորված էր որոշակի գործոններով. 19-րդ դարի վերջին Շուշին աստիճանաբար կորցնում էր զարգացած տնտեսական և առևտրական կենտրոնի դերը, նավթարդյունաբերության զարգացման շնորհիվ Բաքուն դառնում է զարգացող արդյունաբերական կենտրոն, դեպի իրեն ձգելով բնակչության հոծ զանգվածների: Շուշիից տեղի էր ունենում ոչ միայն բնակչության, այլ նաև կապիտալի մեծ արտահոսք:

1904թ. դրությամբ էթնիկ պատկերը հետևյալն էր՝ 54,2% հայեր, 43,8% թուրքեր, 1,8% ռուսներ, 0,2% այլազգիներ հարաբերակցությամբ: 1906թ. հայերի թիվը պակասեց 5184-ով հասնելով 12798-ի<sup>1</sup>: Այս հանգամանքը գլխավորապես հետևանք էր հայ-թաթարական ընդհարումների, որի զոհ դարձան հարյուրավոր հայեր:

1914թ. տվյալներով Շուշին ունեցել է ընդամենը 42568 շունչ, որից հայեր՝ 22416 (52,3%), թուրքեր՝ 18865, ռուսներ՝ 1188, այլազգիներ՝ 99<sup>2</sup>: 1916թ. դրությամբ Շուշիի բնակչության 53,33%-ը կազմում էին հայերը<sup>3</sup>: Հետագա տարիներին հայ բնակչությունը մեծ կորուստներ ունեցավ՝ թուրքական բռնությունների հետևանքով:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ նշված ժամանակաշրջանում տեղի ունեցող բնակչության տեղաշարժերը, մասնավորապես էթնիկ բնույթի, պայմանավորված էին ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով և զարգացումներով: Քննարկվող ժամանակաշրջանում արցախահայությունը ուժերի գերլարումով պահպանում էր Շուշի քաղաքի հայկական դիմագիծը:

*«Գիտական Արցախ», Երևան, 2018, N1, էջ 81-84*

---

<sup>1</sup>Բալայան Վ., *նշվ. աշխ.*, էջ 345

<sup>2</sup>Կիսիբեկյան Ա., *Նուշեր*, Հ.1, Երևան 2011, էջ 291

<sup>3</sup>Ալեքսանյան Հ., *Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926թթ.*, Երևան 2007, էջ 116

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի  
նախորդ հատորների բովանդակությունը  
Ազգագրություն, Հատոր 1(1), Ստեփանակերտ, 2019

<i>Երկու խումբ</i> .....	3
<i>Ներածություն</i> .....	6
Լալայան Ե. <i>Վարանդա. Նյութեր արցախյան ուսումնասիրության համար</i> .....	50
Константинович <i>Шуши</i> .....	238
Григоров Н. <i>Село Саров Елисаветпольской губернии Джеванширского уезда</i> .....	244
Давидбеков И. <i>Село Гадрут Елисаветпольской губернии, Джебраильского уезда</i> .....	251
Израелов Г. <i>Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губернии</i> .....	279
Израелов Г. <i>Описание минерального источника Истису (Теплый ключ), Елисаветпольской губернии, Джеванширского уезда</i> .....	280
Погосов М. <i>Тамерлан по рассказам джеванширских армян</i> .....	282
<i>Промысловья занятия в некоторых населенных пунктах Закавказья</i> .....	285
Зедгенидзе Я., Захраб-беков С., Тер-Егiazаров А. <i>Город Шуши</i> .....	285
Ибрагимбеков Б. <i>Шушинский уезд: Агдамское общество</i> .....	338
Погосов М. <i>Шушинский уезд: селение Тут Шушинский уезд. Селение Мухренес</i> .....	343

Израелов Г. <i>Джеванширский уезд. Селение Касапет</i> .....	345
Давидбеков И. <i>Джебраильский уезд. Село Гадрут</i> .....	350
<i>Описание кавказского шелководства (Джеванширский уезд, Шушинский уезд, Джебраильский уезд)</i> .....	352
Израелов Г., <i>Село Касапет Джеванширского уезда Елисаветпольской губернии</i> .....	368
Мелик-Шахназаров Е. <i>Из древностей селения Ченахчи (Елисаветпольской губернии Шушинского уезда)</i> .....	379
Джейранов О. <i>Селение Чайкенд Елисаветпольского уезда той же губернии</i> .....	383
Осипов Г. <i>Селение Даш-Алты, Шушинского уезда, Елисаветпольской губернии</i> .....	409
Деконский А. <i>Экономический быт государственных крестьян в Шушинской и Джебраильской уездах Елисаветпольской губернии</i> .....	431
Хан-Агов А. <i>Экономический быт государственных крестьян Джеванширского уезда Елисаветпольской губернии</i> .....	568
Зелинский С. <i>Материалы по народной медицине у армян Ахалкалакского уезда Тифлисской губернии и Шушинского и Зангезурского уездов Елисаветпольской губернии</i> .....	644
Заварян С. <i>Экономические условия Карабаха и голод 1906-1907 гг.</i> .....	668



<i>Երկու խումբ</i> .....	3
Լիսիցյան Սո. <i>Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ)</i> .....	5
Лисициан С. <i>К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)</i> .....	149
Кочарян Г. <i>Нагорный Карабах</i> .....	159
Петрушевский И. <i>О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха</i> .....	243
Петров В. <i>Этноботаника Нагорного Карабаха</i> .....	286
Սեյրան Գ. <i>Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները (Տնտեսական աշխարհագրություն)</i> .....	388
Բարսե (Բարսեղյան)Ս. <i>Լեռնային Ղարաբաղ (Երկրագիտական համառոտ ձեռնարկ)</i> .....	461
Տեր-Փասպարյան Ռ. <i>Շուշի քաղաքը</i> .....	538
Վիսիբեկյան Ա. <i>Հուշեր</i> .....	631

<i>Երկու խուր</i> .....	3
Ղահրամանյան Մ. <i>Օջախի գիրք. Նշխարներ</i> .....	5
Մկրտչյան Ա. <i>Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX– начало XX в.)</i> .....	65
Թեր-Տարկիսյան Ա. <i>Армяне Нагорного Карабаха</i> .....	177
Բաղդասարյան Ն. <i>Վարչարարական և սոցիալ-տնտեսական կազմությունը Ղարաբաղում 1813-1867 թթ.</i> .....	455
Մախնազարյան Ն. <i>В тесных объятиях традиции: патриархат и война</i> .....	537

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Երկու խումբ</i> .....	3
Վ. Մելիք-Շահնազարեանց <i>Բուրդ գգելը և գորգ գործելը Ղարաբաղում</i> .....	4
Վ. Մելիք-Շահնազարեանց <i>Նիւթեր Ղարաբաղի հայ ազգագրութեան համար</i> .....	7
А. Вартапетов <i>Очерк жилищ и строительных кадров Нагорного Карабаха (Материалы поездки в Карабах летом 1933г.)</i> .....	19
Ռ. Տեր-Գաւազարյան <i>Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը</i> .....	45
Н. Авакян <i>Народная одежда армян Арцаха в XIX- начале XX в.</i> .....	59
А. Тер-Саркисянц <i>Современная семья у армян Нагорного Карабаха</i> .....	73
А. Тер-Саркисянц <i>Новое и традиционное в современном быту армян Нагорного Карабаха</i> ..	127
А. Тер-Саркисянц <i>Динамика уровня образования армян Нагорного Карабаха</i> .....	139
А. Тер-Саркисянц <i>Современные этнические процессы у армян Нагорного Карабаха</i> .....	150
А. Тер-Саркисянц <i>Некоторые тенденции этнокультурного развития армян Нагорного Карабаха</i> .....	211
А. Тер-Саркисянц <i>Сельская семья у армян Нагорного Карабаха: основные тенденции развития</i> .....	224

А. Тер-Саркисянц <i>Тенденции развития сельской семьи у армян Нагорного Карабаха в постсоветский период</i> .....	245
А. Тер-Саркисянц <i>Современная политическая и этнокультурная ситуация в Нагорном Карабахе</i> .....	254
А.Тер-Саркисянц <i>Этнографическая поездка в Нагорный Карабах</i> .....	289
Վ. Թաթևյան <i>Արցախի հատուկ խորհրդի մաստ արտահայտող ուղեգորգերը</i> .....	300
Ժ. Խաչատրյան <i>Խաղաղության (դիվանագիտության) «բուժումը» պարով</i> .....	302
Ս. Սարգսյան <i>Դիզակի աղբյուրները և դրանց կառույցների ճարտարապետությունը</i> ..	311
Б. Мирзоян <i>Нагорный Карабах</i> .....	318
Ս. Պողոսյան <i>Արցախի ավանդական տարազը և նրա էվոլյուցիան</i> .....	337
Л. Валесян, Ю. Мурадян <i>О некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха</i> .....	346
А. Марутян, Г. Саркисян, З. Харатян <i>К этнокультурной характеристике Арцаха</i> .....	368
М. Карапетян <i>Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г.</i> .....	387
Վ. Բալայան <i>Մետաքսագործությունը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը</i> .....	401

Վ. Բալայան	
<i>Սոցիալ-տնտեսական իրավիճակը Արցախում 19-րդ դարում</i> .....	409
Л. Аванесян	
<i>Связь изображений армянских ковров с погребальным обрядом</i> .....	420
Թ. Հայրապետյան	
<i>Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ</i> .....	435
Թ. Հայրապետյան	
<i>Խաչենագետի ներքնահովտի վերաբնակ հայության ենթաէթնիկ շերտերը. վերաձևկությանցման հարցեր</i> .....	447
Ա. Դարադյան, Մ. Գաբրիելյան	
<i>Շուշին 1992-2002 թթ.. հայերի վերադարձը ազատագրված քաղաք</i> .....	454
Հ. Պիկիչյան	
<i>Ավանդական հարսանեկան ծեսի երաժշտական կերտվածքը Ղաշտային Արցախում</i> .....	525
Լ. Գասպարյան	
<i>Հյուսվածքագործությունը Սյունիք-Արցախ տարազում</i> .....	527
Հ. Սարգսյան	
<i>Լեոնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը XIX դարում</i> .....	530
Ա. Բաղդասարյան	
<i>Արցախի ժողովրդական նվագարանային երաժշտության հարցեր</i> .....	539
Л. Варданян	
<i>Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX- начало XX вв.)</i> .....	550
Ա. Դարադյան	
<i>Շուշիի հասարակական կյանքն ըստ «Կովկասյան տարեգրքի»</i> .....	557

Ա. Թադևոսյան	
<i>Ղարբնի ծիսական կերպարի իմաստաբանությունը արցախցիների հավատալիքների համատեքստում (XIX-XX դդ.)</i> .....	561
Հ. Ալեքսանյան	
<i>Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926 թթ.</i> .....	565
Կ. Բազեյան	
<i>Շուշիի ասեղնագործական դպրոցը</i> .....	574
Ս. Մկրտչյան	
<i>Տոները դարաբաղցիների ավանդական կենցաղում</i> .....	580
Ս. Սուջյան	
<i>Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակը</i> .....	586
Ա. Պողոսյան	
<i>Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեալների մասին</i> .....	607
Ա. Պողոսյան	
<i>Հարթակարով ասեղնագործական մշակույթի ավանդույթների մասին</i> ..	615
Ա. Պողոսյան	
<i>«Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին</i> .....	626
Ա. Պողոսյան	
<i>Շուշին՝ գորգագործական մշակույթի կենտրոն</i> .....	642
Ա. Պողոսյան	
<i>Արցախյան գորգագործական ավանդույթների տարածման արեալների ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին</i> .....	652
Ա. Այվազյան	
<i>Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1720-ական թվականներին</i> .....	678

Լ. Հովհաննիսյան <i>Արցախի բնակչությունն ըստ 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների</i> .....	687
Լ. Հովհաննիսյան <i>Բռնի մահմեդականացված հայության բեկորները Ղարաբաղում</i> .....	691
Ա. Առստամյան <i>Ժողովրդագրական իրավիճակը և վերաբնակեցման քաղաքականությունը ԼՂՀ-ում (1991-2002թթ.)</i> .....	698
Հ. Հարությունյան <i>Շուշիի հայ երգարվեստի և երաժշտության անհայտ էջերից</i> .....	707
Հ. Աբրահամյան <i>Շուշիի համայնապատկերը</i> .....	716
Ն.Բաղդասարյան, Լ. Հովհաննիսյան <i>Ժողովրդագրական տեղաշարժերը Լեռնային Ղարաբաղում Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի կնքումից հետո. հայրենադարձություն, պարսկահայերի ներգաղթ, ադրբեջանական շահարկումներ</i> .....	732
Ա. Հարությունյան <i>Հին Շուշիի արհեստները</i> .....	744
Ն. Ավագիմյան <i>Ժողովրդագրական իրավիճակը Շուշիում 1813-1917 թթ.</i> .....	753

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏՈՐ 4(4)

*Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ., դոցենտ,  
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Ա. Յու. Մարգարյանի*

*Համակարգչային*

*Չարվածքը՝ Լիլյա Գրիգորյանի  
Մարիաննա Մարգարյանի  
Արմինե Արզումանյանի  
Էլլադա Մկրտումյանի*

*Տեխնիկական*

*խմբագիր՝ Լիլյա Գրիգորյան*



Ծավալը՝ 48 տպ. մամուլ:

Տպաքանակ՝ 150

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**  
Երևան, Բունատյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)



**EDIT PRINT**  
12 Toumanyán str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)